ՌՈՒԲԵՆ
ՍԱՀԱԿՅԱՆ

ՅԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

ԵՐԵՎԱՆ «ՀԱՅԱՍՏԱՆ» 1990

ԳՄԴ 63.3(2Հ)82
Ս 159

Գրախոս՝ պատմական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր
Վ. Ա. ԴԻԼՈՅԱՆ

Սահակյան Ռ. Գ.

Ս 150 Ցեղասպանության պատմությունից.— Եր.: Հայաստան, 1990— 367 էջ:

Գրքում լուսաբանվում են XX դարում մարդկության դեմ ուղղված ծանրագույն հանցագործություններից մեկի՝ հայերի ցեղասպանության պատմության մի շարք հանգուցային հարցեր: Քննական վերլուծության են ենթարկվում 1915-ի ցեղասպանության դրդապատճառների ու հետևանքների հարցում գոյություն ունեցող տեսակետներն ու գնահատականները:

Զգալի տեղ է հատկացված ժամանակակից թուրք պատմագրության կողմից այդ եղեռնի պատմության խեղաթյուրումների քննադատությանը:

Նախատեսված է պատմաբանների, արևելագետների և ընթերցող լայն շրջանների համար:

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Գրքում ի մի են բերված Հայոց եղեռնի պատմությանը վերաբերող հեղինակի ուսումնասիրությունները: Ժամանակագրական առումով դրանք հիմնականում ընդգրկում են առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին և պատերազմի տարիներին Հայաստանում ծավալված իրադարձությունները՝ հայ ժողովրդի 1915-ի ցեղասպանության դրդապատճառները վերհանելու տեսանկյունից:

Սուլթան Աբդուլ Համիդ II-ի հակահայկական ջարդարարական քաղաքականությունը դիտելով որպես երիտթուրքերի ցեղասպան քաղաքականության նախասկիզբ, հեղինակը քննության է առնում նաև այդ ժամանակաշրջանի իրադարձությունները:

Հայոց եղեռնի պատմության համակողմանի գիտական լուսաբանումը հույժ կարևոր և այժմեական խնդիր է, քանի որ ազգային-էթնիկական հողի վրա կատարվող հանցագործությունները շարունակվում են մեր մոլորակի տարբեր մասերում, ներառյալ նաև Խորհրդային Միության տարածքում, ուստի չափազանց հրատապ է վերստին անդրադառնալ ցեղասպանության, որպես մարդկության դեմ ուղղված ծանրագույն հանցագործության, բոլոր դրսևորումներին՝ քողարկված թե անքող, ուշադրություն հրավիրել այդ հանցագործության բուն պատասխանատուներին քողազերծ անելու և օրենքի ամբողջ խստությամբ դատապարտելու վրա: Այսօր արդեն գաղտնիք չէ, որ Սումգայիթի եղեռնագործության իսկական ոգեշնչողներն ու կազմակերպիչները շատ լավ

գիտեին, որ 1915-ի եղեռնի ամենագլխավոր պատասխանատուները մնացին անպատիժ, որ միջազգային չափանիշով նրանց չդատապարտեցին մարդկության դեմ գործած հանցագործության համար: Այստեղ պետք է հաշվի առնել նաև ցեղասպանության հանցագործության կանխամտածված բնույթը, որը նրան տարբերում է սովորական, կենցաղային հողի վրա, թեկուզ և բազմաթիվ մարդկանց սպանություններից: Հայտնի է, որ միջազգային-իրավական տեսակետից մարդկանց սպանությունները չեն դիտվում որպես ցեղասպանություն, եթե դրանք չեն հետապնդել կանխամտածված գործողությունների միջոցով էթնիկական կամ կրոնական որևէ խմբի իսպառ վերացմանը հասնելու նպատակ:

Հեղինակը զգալի տեղ է հատկացրել 1915-ի եղեռնի միջազգային արձագանքներին: Սա ևս չափազանց կարևոր է և խիստ այժմեական՝ խոր ըմբռնելու համար, որ մարդկության խիղճը մշտապես արթուն է, որ առաջադեմ է այն հասարակայնությունը, որը երբե՛ք և ո՛չ մի պայմաններում չի լռում և բողոքում է անմարդկային արարքների դեմ՝ դա գործադրված լինի իր, թե մեկ ուրիշ կառավարության կողմից:

Մեր ժողովուրդը, հատկապես երիտասարդ սերունդը, աղոտ պատկերացում ունի տարբեր երկրների՝ Ռուսաստանի, Ֆրանսիայի, Անգլիայի, Գերմանիայի, Բելգիայի, Շվեյցարիայի, Նորվեգիայի, Դանիայի, Ամերիկայի Միացյալ Նահանգների, Ուրուգվայի, Սիրիայի, Լիբանանի և այլ երկրների ազնիվ ու վսեմ այն մտավորականների մասին, որոնք ժամանակին, վախը հաղթահարելով, հանդես են եկել թուրք դահիճների հանցագործությունների դատապարտմամբ: Անատոլ Ֆրանս, Ֆրանց Վերֆել, Ժան Ժորես, Վալերի Բրյուսով, Սերգեյ Կիրով, Յոզեֆ Մարկվարտ, Արմին Վեգներ, Հերբերտ Ադամս Գիբոնս, Հենրի Մորգենթաու, Ջեյմս Բրայս, Առնոլդ Թոյնբի, Ֆրիտյոֆ Նանսեն, Ժակ դը Մորգան, Յոհաննես Լեպսիուս. այս և մի շարք այլ անուններ մենք պարտավոր ենք հիշել միշտ, առհավե՛տ, որպես մեր ժողովրդի արդար դատի պաշտպանների, մեր անկեղծ ու անշահախնդիր, հավատարիմ բարեկամների:

Հայոց եղեռնի բուն իրադարձությունները մեկնաբանելու հետ մեկտեղ, գրքում տրված են նաև հայ ժողովրդի

այդ մեծ ողբերգության հերոսական, լուսավոր էջերը՝ Մուսա լեռից մինչև Սարդարապատ: Ավելին, մենք նպատակահարմար գտանք բերել նաև մի քանի դրվագ կիլիկիահայության ազատագրական պայքարի պատմությունից՝ այս անգամ քեմալական ջարդարարների դեմ, որոնց կողմից 6 հազար հաճընցի հայերի տմարդի ոչնչացումը կարելի է որակել որպես երկրորդ ցեղասպանություն, քանզի նրանք փրկվելով 1915-ին, հերոսական մահով ընկան 1920-ին:

Հայոց եղեռնի պատմության հետ մեկտեղ գրքում որոշակի տեղ է հատկացված նրա պատմագրությանը, որն իր ծավալով, անշուշտ, անընդգրկելի է: 1915-ի եղեռնի վերաբերյալ առաջին ուսումնասիրությունները երևան եկան այդ նույն 1915-ին, ինչպես օրինակ, Անգլիայի արտաքին գործերի մինիստրության երիտասարդ աշխատակից, հետագայում հայտնի պատմաբան և աշխարհահռչակ փիլիսոփա Առնոլդ Թոյնբիի «Հայկական ջարդերը. ազգի սպանություն» խորագիրը կրող գիրքը, «Մի քանի փաստաթղթեր հայերի ճակատագրի մասին 1915-ին» ժողովածուն և այլն:

Անցած 75 տարում առանձին գրքով լույս տեսած աշխատությունները, ջարդերի անմիջական ականատեսների վկայությունները, դիվանագիտական նոր փաստաթղթերի ժողովածուները, ժամանակակիցների հուշերը և այլ նյութեր, որոնք տպագրվել են հայերեն, ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, իսպաներեն, իտալերեն, թուրքերեն, արաբերեն, չեխերեն և այլ լեզուներով, անցնում են հազարից: Իսկ նշված ժամանակաշրջանում տարբեր հանդեսներում ու գիտական պարբերականներում տպագրված հոդվածներն ու հաղորդումները տակավին լրիվ հաշվառման չեն վերցված, կարելի է ասել՝ փաստորեն հաշվարկման ենթակա չեն: Այսօրվա վիճակը պարտադրում է մեզ շարունակել մատենագիտական պրպտումները՝ կազմելու համար Հայկական հարցի և հայերի ցեղասպանության համապարփակ մատենագիտություն, որի ստեղծումը մնում է օրակարգում:

Հեղինակ

Գլուխ առաջին

ՀԱՅԵՐԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹՈՒՐՔԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ՄԵԾ ԵՂԵՌՆԸ

Անլուր տառապանքներ է կրել հայ ժողովուրդը թուրքական բիրտ լծի տակ ընկած իր հայրենիքում՝ Արևմտյան Հայաստանում: Ավելի քան երեք հարյուր տարի նա շատ մոտիկից զգացել է օսմանյան «ավազակային պետության» (Կ. Մարքս) բոլոր սարսափները, կեղեքվել է, ոտնահարվել, զանգվածային կոտուրներ տվել, անցել արյունարբու սուլթան Աբդուլ Համիդի նողկալի գազանությունների միջով, բայց այն, ինչ բաժին ընկավ նրան առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, իր նախադեպը չուներ ոչ միայն բազում ողբերգություններ ապրած մեր ժողովրդի անցյալում, այլև անմարդկային սարքերի ընդհանուր տարեգրության մեջ:

Երիտթուրքերը հպատակ ժողովուրդների գործուն աջակցության շնորհիվ տապալելով Աբդուլ Համիդին և անցնելով իշխանության գլուխ, շատ կարճ ժամանակում հաստատեցին այն ենթադրությունը, որ իրենք ավելին չարժեն, քան հին թուրքերը: «Հին ու նոր թուրքական կարգերը միավորվում էին միևնույն ատելության մեջ հայերի նկատմամբ»,— նշում է հայտնի ռուս միջազգայնագետ Անդրեյ Մանդելշտամը[1]:

Սակայն ինչո՞ւ էին հալածում հայերին Թուրքիայում՝ ժողովուրդների բանտում: Որովհետև նրանք չէին ցանկանում դավանափոխ լինել, չէին ուզում ուրանալ իրենց մայրենի լեզուն, գիրն ու գրականությունը, այլ կերպ ասած՝ չէին ուզում հրաժարվել իրենց ազգությունից ու կրոնից, կամավոր կերպով ընդառաջել թուրքացման ամենակուլ ծրագրին: Ուրիշ

պատճառներ էլ կային. «Թուրքերը նախանձով էին նայում իրենցից կուլտուրապես ու տնտեսապես ավելի ուժեղ այդ եռանդուն ժողովրդին»,— նկատել է անգլիացի պատմաբան Գոտլիբը[2]: Նախանձում էին, որովհետև հայերը շինարար ժողովուրդ էին, ստեղծագործական հանճարով օժտված, իսկ զայրանում էին այն բանի համար, որ նրանք համարձակվում էին հանդես գալ թեկուզ տարրական պահանջներով:

«Հայերի պահանջը իրենց երկրի և իրենց ազգի համար,— գրում է ֆրանսիացի հայտնի հայագետ Ֆրեդերիկ Մակլերը,— վերին աստիճանի համեստ էր: Մեզ, ֆրանսիացիներիս, դա երեխայական է թվում: Եվ իրոք, ի՞նչ էին նրանք պահանջում: Հասարակ բան՝ իրենց կյանքի, պատվի և ունեցվածքի ապահովություն: Նրանք պահանջում էին, որ իրենց երկրի բնական հարստությունները շահագործվեին ու արժեքների վերածվեին: Եվ քանի որ նրանք ունեին բազմաթիվ ինժեներներ, բժիշկներ, փաստաբաններ, և այլ մտավորականներ, այդ կրթված ու հմուտ մարդիկ ցանկանում էին, որ իրենց գիտելիքներն ու մտավոր կարողությունները ի վիճակի լինեն կիրառել արդյունաբերության, առևտրի ու հողագործության մեջ, դրանք ի սպաս դնել իրենց հայրենիքի ընդհանուր զարգացմանը: Թուրքական ղեկավարները կուրորեն դեմ դուրս եկան դրան, որովհետև նրանք ոչինչ չէին հասկանում նման կարգի պահանջներից»[3]:

Եվ այսպես, երիտթուրքական կառավարողները զգալի սառնասրտությամբ մշակեցին հայ ժողովրդի իսպառ բնաջնջման անմարդկային, հռետորական ծրագիրը՝ ամբողջացնելու համար Աբդուլ Համիդի անավարտ գործը: Պատեհ առիթը շուտով վրա հասավ: Բռնկվեց համաշխարհային պատերազմը՝ ավետելով թուրքական դահիճներին, որ պահը հարմար է հայերին տեղահանելու պատրվակով ապանդաշոց քշելու համար:

«Իրենց իշխանությունն ամրապնդելու համար,— գրում է հայկական ջարդերի ականատես, Պարտիզակի ամերիկյան դպրոցի ուսուցչուհի Անդա Չեմբերսը,— եղյալներ՝ Էնվերը, Թալեաթն ու Ջեմալը, օգտվեցին դիվային այդ պլանից, և արձակվեց թուրքական նացիոնալիզմի ճիչը՝ Թուրքիան

թուրքերի համար, որը նշանակում էր, թե բոլոր այլազգիներին հարկ է ոչնչացնել: Թուրքական թերթերում երևացին հոդվածներ այն մասին, որ իբր Թուրքիայի կենսական շահերը պահանջում են ունենալ միատարր բնակչություն, ուրեմն հայերին պետք է բնաջնջել: Այս ցնցող հետևությունը... չքննադատվեց և ո՛չ մի թուրք մտավորականի կողմից...»[4]:

Թուրք մտավորական չգտնվեց, բայց հայ մտավորականներ անպայման կգտնվեին, եթե դահիճները չտրորեին ազգի ծաղիկը: 1915-ի ապրիլի 24-ի գիշերը և նրան հաջորդող մի քանի օրերին նրանք ձերբակալեցին և գաղտնաբար ոչնչացրին 600-ից ավելի հայ մտավորականների՝ երևելի գրողների ու հրապարակախոսների, գիտնականների ու մանկավարժների, բժիշկների ու դերասանների: Չհանգեցին անգամ հանճարեղ բանաստեղծներ Վարուժանին ու Սիամանթոյին և իրենց իսկ մեջլիսի պարծանք, փայլուն հռետոր Գրիգոր Զոհրապին՝ վերստին մերկացնելով այսպես կոչված երիտթուրքական հեղափոխության իսկական իմաստը:

«... Իրենց հանցավոր ձեռքերի վրա հետքեր չթողնելու համար,— գրում է ջարդերի ականատես, գերմանական գրող Արմին Վեգները,— գերեվարողները, ժողովրդին իր առաջնորդներից ու պատգամավորներից զրկելուց հետո, քշեցին քաղաքներից դուրս... կողոպտեցին նրանց տները, կրակի տվեցին գյուղերը, եկեղեցիները քարուքանդ արեցին կամ մզկիթների վերածեցին, հափշտակեցին անասունները, բռնագրավեցին բոլոր սայլերը, հացը խլեցին իրենց զոհերի բերանից, հանեցին նրանց հագի շորերը, նրանց գլխի ոսկեղեն զարդերը պոկեցին... Նրանք քշեցին ամբողջ մի ժողովրդի՝ տղամարդկանց ու կանանց, ալեհեր ծերունիներին ու մանուկներին, հղի մայրերին ու ծննկեր երեխաներին դեպի արաբական անապատները՝ չունենալով այլ նպատակ, քան թողնել նրանց սովից տանջամահ լինելու...»[5]:

Երբ նրանք «երկար» էին դիմադրում մահվանը, թուրք դահիճները «ուղիղ» ճանապարհով էին լուծում հարցը:

«Հայերին խմբերով հեռացնում էին ու սպանում ամենադաժան եղանակով: Չէին խնայում ո՛չ հիվանդներին,

ո՛չ մանուկներին, ո՛չ էլ տարեց մարդկանց»,— վկայում է թուրք պաշտոնյա, աքսորյալ հայերի՝ Հալեպի կոմիտեի գլխավոր քարտուղար Նաիմ բեյը[6]:

«Նրանցից ոչ ոքի կենդանի չթողնեք, առանձնապես 5—7 տարեկանից բարձր երեխաներին, հակառակ դեպքում նրանք կարճ ժամանակում հասակ կառնեն և կփորձեն վրեժ լուծել»[7],— ազդարարում էր իր ժամանակի ամենամեծ մարդասպան Թալեաթ փաշայի հրամանը: Արդար վրեժի հանդեպ տածած վախն էր արյունախում այդ գազանին թելադրում «չխնայել անգամ օրորոցի երեխաներին», և նա գիշատչի աչքերով հսկում էր, որ հրաշքով փրկված երեխաներն անգամ չվրիպեն մահվան ճիրաններից:

Ահա այդ առիթով տրված նրա ծածկագիր հրամաններից մի քանիսը.

«Շարունակելով որբերի աքսորը նախատեսված ուղղությամբ դաժան սառնամանիքի պայմաններում, մենք նրանց հավերժական հանգիստը կապահովենք: Հետևաբար խընդրում ենք հաշվետվություն ներկայացնել մեզ կատարվածի մասին:

Ներքին գործերի մինիստր
Թալեաթ»[8]:

«Հալեպի նահանգապետին.

21 սեպտեմբերի 1915 թ.— Որբանոցի ոչ մի անհրաժեշտություն չկա: Ժամանակը չէ սենտիմենտալությանը անձնատուր լինելու և կերակրելու որբերին՝ երկարաձգելով նրանց կյանքը: Ջնջե՛ք բոլորին անապատ և տեղեկացրեք մեզ այդ մասին:

Թալեաթ»[9]:

«Հալեպի նահանգապետին.

Հավաքեք մի տեղում հայերի այն երեխաներին, որոնք պատերազմական նախարարության հրամանով հանձնված են զինվորական իշխանությունների խնամքին: Հեռացրեք նրանց այն պատրվակով, որ նրանց մասին հոգալու է տեղահանման կոմիտեն: Ոչնչացրեք նրանց և զեկուցեք:

Ներքին գործերի մինիստր
Թալեաթ»[10]:

Ահա այսպիսի եղանակով թուրք ցեղասպանիներին հաջողվեց ոչնչացնել անզեն ու անպաշտպան կանանց, երեխաներին, ալեհեր ծերունիներին: Դժվար չէր այդ կերպ վարվել այն բանից հետո, երբ թուրքական զինվորական իշխանությունները ենթգաբար դատաստան տեսան օսմանյան բանակում գտնվող տասնյակ հազարավոր հայ զինվորների ու սպաների հետ, որոնց նախօրոք զինաթափել էին և առանձնացրել աշխատանքային գումարտակներում:

«Հայերի թշնամիները,— գրում է հայ ժողովրդի անշահախնդիր բարեկամ, նորվեգական մեծ գիտնական Ֆրիտյոֆ Նանսենը,— ցանկանում էին նրանց ստորացնելու ապացույց տեսնել այն բանում, որ այդպիսի մեծ թիվ կազմելով հանդերձ, նրանք առանց դիմադրության թույլ տվեցին իրենց դեպի մահ առաջնորդել... Քանի որ աշխատունակ տղամարդկանց մեծ մասը արդեն կանչված էր զինվորական ծառայության, ինչպե՞ս կարող էին անզեն մարդիկ պաշտպանվել ոստիկանների, կանոնավոր զորքի ու բազմաթիվ «կամավորական» հրոսակների դեմ: Սակայն ամենուրեք, որտեղ դա հնարավոր էր, հայերը խիզախորեն դիմադրում էին, երբեմն որոշակի հաջողությամբ, ինչպես, օրինակ, Վանում ու Կիլիկիայի լեռներում...»[11]:

Ականատեսներն աշխարհին պատմեցին հայ ժողովրդի մեծագույն աղետի մասին: Պատերազմական իրավիճակը, ինչ խոսք, խանգարեց միջազգային հասարակայնությանը ժամ առաջ տեղեկանալու նոր դարաշրջանի առաջին ցեղասպանության մասին: Սակայն չեզոք երկրներից որոշ օտարերկրացիների այնուամենայնիվ հաջողվեց մուտք գործել անմեղ հայերի արյունով ներկված երկիրը և անձամբ ծանոթանալ հայկական սարսափներին»:

Վերադառնալով Եվրոպա, նրանք հրապարակեցին հազարավոր փաստաթղթեր, վկայություններ, լուսանկարներ և այլ կարգի նյութեր, մինչև վերջ մերկացնելով մեծ ոճրի հեղինակներին՝ երիտթուրքական դահիճներին, բացահայտելով հայերի տեղահանման բուն դրդապատճառները, վերհանելով թուրքական հայաջինջ քաղաքականության ավանդական բնույթը: Այսպես, ֆրանսիացի հայտնի պատմաբան ու հրապարակախոս Ռընե Պինոնը հաստատում է, որ հայ

կանանց, երեխաների ու ծերերի տեղահանումը խարդախորեն քողարկված մի մահապատիժ էր լոկ, և գալիս է այն եզրակացության, որ նրանց ոչնչացումը տեղում ավելի մարդասիրական կլիներ, որովհետև դա կազատեր մարդկանց սարսափելի տառապանքներից[12]: «Ես հավատացած եմ,— գրում է Թուրքիայում ԱՄՆ-ի նախկին դեսպան Հենրի Մորգենթաուն,— որ մարդկության ողջ պատմությունը չունի այնպիսի մի սարսափելի դեպք, ինչպես այս դեպքը: Անցյալի մեծ ջարդերն ու հալածանքները թվում են գրեթե աննշան 1915-ի. հայ ազգի կրած տառապանքների համեմատությամբ»[13]:

Եվ այսպես, երիտթուրքական հանցավոր կառավարողներին հաջողվեց իրականացնել իրենց վաղեմի ձգտումը՝ Թուրքիան մաքրել հայ ազգաբնակչությունից: Մոտ մեկ միլիոն 300 հազար զոհ տվեց մեր ժողովուրդը առաջին համաշխարհային պատերազմի տարիներին: Մոտ մեկ միլիոն հայեր ստիպված եղան սփռվել աշխարհով մեկ՝ ապաստան փնտրելով օտար երկնքի տակ: Հյուրընկալ շատ ժողովուրդներ կարեկցությամբ դիմավորեցին և պատսպարեցին տարագիր արևմտահայերին, որոնք անմարդկային տառապանքներ կրելուց հետո էլ վերստին հաստատեցին, թե ինչի է ընդունակ լավատես հայ ժողովուրդը: Սակայն ամենամեծ մխիթարությունը, որ կարող էր ստանալ թուրքական չարագործությունից փրկված սփոփուքահայությունը, դա նոր հայրենիքի՝ Խորհրդային Հայաստանի ստեղծումն ու գոյատևումն էր:

1965

ԵՂԵՌՆԻ ԴՐԴԱՊԱՏՃԱՌՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1915-ին երիտթուրքական կառավարության կողմից ձեռնարկված արևմտահայերի բռնագաղթն ու ջարդերը ներկայումս ճանաչելի են դառնում միջազգային հանապարհակայնությանը որպես XX դարի առաջին ցեղասպանություն, և որակվում որպես հանցագործություն՝ ուղղված մարդկության դեմ: Խոսելով XX դարի առաջին զանգվածային ցեղասպանության մասին, պետք է նշել, որ արյունարբու սուլթան Աբդուլ Համիդ II-ի գահակալության տարի-

ներին (1876—1909 թթ.) կազմակերպված հայկական կոտորածները դարձան 1915-ի ցեղասպանության նախերգանքը և այս առումով 1915-ի գեղասպանության արմատներից մի քանիսը թաքնված են հենց նախորդ ժամանակաշրջանում:

Այսպես, Հայկական հարցը արևմտահայերի բնաջնջման ճանապարհով լուծելու համիդյան քաղաքականությունը, որպես «ժառանգություն» փոխանցվեց երիտթուրքերին, ինչը կարելի է դիտել 1915-ի ցեղասպանության հիմնական պատճառներից մեկը:

Օսմանյան կայսրության մահմեդական ազգաբնակչության մեջ դեպի քրիստոնյա հայերը կրոնական մոլեռանդությունը բորբոքելը ծառայեց նույն այդ գլխավոր խնդրին՝ հայերի բռնի արտաքսմանը իրենց բնօրրանից՝ Արևմտյան Հայաստանից, ուր նրանք առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին կազմում էին հարաբերական մեծամասնություն՝ շուրջ 38,9 տոկոս ցանկացած մահմեդական ազգաբնակչության՝ թուրքերի, քրդերի, չերքեզների համեմատությամբ[1]:

Պատճառներից մեկն էլ տնտեսական բնույթի էր: Հայտնի է, որ արևմտահայ առևտրական բուրժուազիան, դրամատերերն ու արդյունաբերողները, շնորհիվ իրենց տաղանդի ու ձեռներեցության, նույնիսկ օսմանյան բռնատիրության ու կամայականությունների պայմաններում, կարողացել էին Թուրքիայում տեր դառնալ որոշակի հարստության, ստեղծել դրամական կուտակումներ, ի վերջո դրանք ծառայեցնելով հենց այդ երկրի զարգացման խնդիրներին: Եվ ահա բոլոր հայերի՝ առանց դասակարգային խտրականության ոչնչացումը երիտթուրքական մարդասպաններին հնարավորություն էր ընձեռում հափշտակել նրանց նյութական արժեքները, հիմնավորելով դա այն բանով, որ զոհված հայերը օսմանյան քաղաքացիներ են, ուստի նրանց ունեցվածքը, որպես ժառանգություն, պետք է անցնի թուրքական պետությանը: Որքան էլ այս փաստը նողկալի, ցինիկ և աներևակայելի թվա, այնուհանդերձ, հայտնի է, որ հենց նման մի առաջարկով է դիմել հայերի գլխավոր դահիճ Թալեաթը Թուրքիայում ԱՄՆ-ի դեսպան Հենրի Մորգենթաուին[2]:

1915-ի եղեռնի հիմնական պատճառներից մեկը կապված էր պանթուրքական ծրագրերի իրականացման հետ: Պանթուրքիզմի գաղափարախոսությունը ձևավորվել ու վերջնական տեսք է ստացել երիտթուրքերի միաձնյա իշխանության տարիներին, հատկապես 1912—13 թթ. Բալկանյան պատերազմներից հետո, երբ նրանք համոզվեցին, որ օսմանցիության տեսությունը չի կարող հանգեցնել թուրքահպատակ ժողովուրդների, հատկապես քրիստոնյաների, խաղաղ ձուլմանը: Մինչդեռ միջազգային հարաբերությունների սրումը, մոտալուտ համաշխարհային բախումը բորբոքում էին իթթիհատական ազգայնամոլ ղեկավարների երևակայությունը, հույս ներշնչում, որ հենց պատերազմի պայմաններում հնարավոր կդառնա իրականացնել «Մեծ Թուրանի» իրենց երազը՝ ստեղծելով հսկայածավալ մի կայսրություն՝ Բոսֆորից մինչև Ալթայ և միավորելով այդպիսով բոլոր թուրքալեզու ժողովուրդներին: Հիշյալ ծրագիրն ուներ զավթողական բնույթ և առաջին հերթին ուղղված էր Ռուսաստանի դեմ, իսկ դրանից առաջ՝ հայ ժողովրդի դեմ, որովհետև առաջին և ամենալուրջ խոչընդոտն այդ ճանապարհին հենց քրիստոնյա հայերն էին:

Հայերի ոչնչացումով, այդպիսով, պետք է վերանար, ըստ երիտթուրքերի, այն արգելքը, որը վաղուց ի վեր խոչացել էր թուրքերի առաջխաղացմանն ճանապարհին:

Այստեղ մենք ընդհատ մոտեցանք եղեռնի ևս մեկ պատճառին՝ հայերի դերը ռուս-թուրքական դարավոր մենամարտում: Թուրք պաշտոնական պատմագրությունը ինչպես անցյալում, այնպես էլ ներկայումս, հենց շեմքից մերժելով հայ ժողովրդի ազգային ազատագրական պայքարի իրավունքը, գործն այնպես է ներկայացնում, որ հատկապես XIX դարի ռուս-թուրքական պատերազմներում Թուրքիայի կրած ծանր պարտության մեղքը մի զգալի չափով ընկնում է հայերի վրա, քանի որ նրանք իրենց կամավորական ջոկատներով նպաստել են ռուսական զենքի հաղթանակին: Եվ ահա, բնաջնջելով հայերին, ըստ Էնվեր-Թալեաթ-Ջեմալ հանցագործ եռյակի, կդադարեր ինչպես հայերի օգնությունը ռուսներին, այնպես էլ վերջիններիս միջամտությունը Թուրքիայի ներքին գործերին:

Վերջապես, չպետք է անտեսել պատերազմական իրադրությունը և այն հանգամանքը, որ Թուրքիան մասնակցեց առաջին համաշխարհային պատերազմին գերմանա-ավստրիական խմբավորման կողմից՝ վստահ լինելով, որ հենց կայզերական Գերմանիայի հետ դաշնակցած ինքը կկարողանա հասնել իր պանթուրքական նվաճողական պլանների իրագործմանը:

Ինչ խոսք, խաղաղ պայմաններում թուրք կառավարողները կդժվարանային իրականացնելու իրենց դիվային ծրագիրը, մինչդեռ պատերազմը պատեհ առիթ էր ստեղծում այն դյուրությամբ և նվազ զգուշավորությամբ ի կատար ածելու:

«Հիմա պատերազմի մեջ ենք,— ասել է 1915-ի փետրվարին կայացած գաղտնի նիստում դոկտոր Նազըմը,— ասկե հարմար առիթ չի գտնվիր: Մեծ պետությանց միջամտությունը և թերթերու բողոքի ձայնը նկատելի իսկ չի կրնար ըլլալ. ըլլալու պարագային խնդիրը կատարված իրողություն մը կդառնա և կը փակվի»[3]:

Ի մի բերելով 1915-ի եղեռնի հիմնական պատճառների մասին մեր ասածը, հարկ է ընդգծել ամենակարևորը՝ հայկական ցեղասպանության կանխամտածված բնույթը և նախապես լավ մշակված պլանի առկայությունը, մի բան, որ ամենից շատ է այսօր անհանգստացնում թուրք պետական գործիչներին, դիվանագետներին, լրագրողներին, պատմաբաններին և ընդհանրապես ժամանակակից Թուրքիայի բոլոր այն ներկայացուցիչներին, ովքեր միջազգային այլևայլ ֆորումներում և հասարակական-քաղաքական հավաքներում ակամայից ստիպված են լինում պատասխանելու հենց այն հարցին, թե արդյո՞ք 1915-ի «հայկական սարսափները» սոսկ պատերազմական հանգամանքների արգասիք էին, թե՞ դրանք նախապես ծրագրավորված էին: Որովհետև հարցն այսպես է դրվում. եթե պատերազմի թոհ ու բոհի մեջ ծագած ազգամիջյան կռիվներում թուրքերի հետ մեկտեղ զոհվել է նաև մի քանի հարյուր հազար հայ, ապա դա գենոցիդ որակել չի կարելի, որովհետև, համաձայն միջազգային օրենքի, գենոցիդը (հունարեն գենոս—տոհմ, ցեղ և լատիներեն ցիդերե—սպանել բառերից) իրենից ներկայացնում է

գործողությունների մի շարք, որոնք կատարվում են կանխամտածված՝ ցանկանալով լրիվ կամ մասամբ ոչնչացնել ազգային, էթնիկական, ռասայական կամ կրոնական որևէ խմբի: Ըստ Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի կողմից 1948-ի դեկտեմբերի 9-ին վավերացված «Գենոցիդի հանցագործությունը կանխելու և այն պատժելու վերաբերյալ» կոնվենցիայի, նման գործողությունների շարքին են դասվում այդպիսի մի խմբի անդամների սպանությունը, այդ խմբի համար դիտավորյալ այնպիսի կենսապայմանների ստեղծումը, որոնք նպատակ ունեն նրա ամբողջական կամ մասնակի ֆիզիկական ոչնչացումը, միջոցառումներ, որոնց հետևանքով կանխվում է մանկածնությունը նման մի խմբի միջավայրում, այդ թվում տղամարդկանց երկպատև մեկուսացումը կանանցից և այլն[4]:

Ինչպես ակներև է դառնում գենոցիդի միջազգային չափանիշով ճանաչված սահմանումից, այն ամենը, ինչ տեղի է ունեցել արևմտահայության հետ 1915—16 թվականներին՝ խաղաղ բնակչության՝ կանանց, երեխաների ու տարեց մարդկանց բռնի տեղահանությունը իրենց դարավոր հայրենիքից և աքսորը Սիրիայի ու Միջագետքի անապատները, թուրքական բանակ զորակոչված հայ տղամարդկանց զինաթափումը և տմարդի ոչնչացումը, Դեր Զորի, Ռաքքայի, Համայի, Հոմսի և այլ համակենտրոնացման ճամբարներում կուտակված անզեն հայերի սպանդը, արևմտահայ մտավորականության, այսինքն՝ ազգի հոգևոր առաջնորդների քստմնելի բնաջնջումը և ջարդարարական մի շարք այլ քայլեր անառարկելիորեն վկայում են, որ հայերի նկատմամբ կատարվածը ոչ այլ ինչ էր, եթե ոչ իսկական մի գենոցիդ և դեռ ավելին՝ «օրինակելի գենոցիդ», ինչպես այն անվանում է «Հայաստանը 1915-ին» գրքի հեղինակ Ժան-Մարի Կառզուն[5]: Եվ հենց այդ որակումն է, որ լուրջ անհանգստություն է պատճառում թուրքական պաշտոնական շրջաններին, մղում նրանց դեպի ամեն կարգի պատմական խեղաթյուրումների և կոպիտ ու բացահայտ ներգափոխման՝ հայկական գենոցիդի իրողությունը ժխտելու և համաշխարհային հասարակական կարծիքը շփոթության մեջ գցելու համար:

Պետք է նշել, որ արևմտահայ ազգաբնակչության զանգվածային բռնագաղթն ու ջարդերը արդարացնելու նպատակին ուղղված առաջին պաշտոնական գործը դա 1916-ին Կ. Պոլսում թուրքերեն և ֆրանսերեն լույս տեսած «Ճշմարտություն հայկական հեղափոխական շարժման մասին և կառավարական միջոցառումները»[6] խորագիրը կրող գրքույկն էր, որին հետևեց 1917 թվականին հրատարակված ընդարձակ տարբերակը՝ «Հայկական կոմիտեների հեղափոխական ձգտումներն ու գործողությունները Օտոմանյան սահմանադրության հռչակումից առաջ և հետո»[7]: Ինչպես երևում է հիշված հրատարակությունների վերնագրերից իսկ, թուրքական պետական, պաշտոնական տեսակետը ավելի քան սպառված է: Հայերը ապստամբել են և թուրքերը ստիպված են եղել ճնշել այդ ապստամբությունները: Մի տեսակետ, որն անշնաև ձևափոխումներով կրկնվում է ահա 70 տարի, կրկնվում հայտնի ու անհայտ պատմաբանների անթիվ-անհամար գործերում, թուրք լրագրողների մեկնաբանություններում, դիվանագետների, քաղաքական ու ռազմական գործիչների հուշերում, նաև՝ պաշտոնական ելույթներում: Թուրքական ստահոդ ու շինծու այս վարկածի հետ է կապված նաև հայերի տեղահանության հարցը, որը թուրք հեղինակները փորձում են աշխարհին ներկայացնել, որպես պատերազմական իրավիճակից բխող պարզ մի «տեղափոխություն»:

Այսպես, առավել ճանաչված թուրք պատմաբաններից մեկը, պրոֆեսոր Յուսուֆ Հիքմեթ Բայուրը «Թուրքական հեղափոխության պատմությունը» վերնագրով բազմահատոր աշխատության մեջ համառորեն այն միտքն է անցկացնում, որ երիտթուրքական կառավարության կողմից ձեռնարկված «պատժիչ» միջոցառումները սոսկ հետևանք էին հայկական վիլայեթներում ծագած ապստամբությունների, և որ կառավարությունը առաջինն ինքը չի նախաձեռնել և մշակել ջարդերի ծրագիրը, այլ ստիպված է եղել դիմելու որոշ «պաշտպանական գործողությունների»[8]:

Շարունակելով խեղաթյուրել պատմական դեպքերը, թուրք պրոֆեսորը 1915-ի եղեռնը անվանում է «հայերի ապստամբության ճնշման մի ձև» և համեմատելով ֆաշիս-

տական Գերմանիայում հրեաների ոչնչացման փաստի հետ, եզրակացնում, որ հայերի դեմ կիրառված միջոցառումները, այսինքն՝ հայկական ջարդերը «այնքան էլ լայն չափերով չեն կատարվել»

Ինչպես Բայուրի, այնպես էլ թուրք մյուս պատմաբանների աշխատություններում ո՛չ մի խոսքով չեն հիշատակվում իթթիհատական կառավարության կողմից ընդունված գաղտնի որոշումներն ու տեղական իշխանություններին տրված բազմաթիվ գաղտնի հրահանգները, որոնցում ուղղակի ասված էր, որ հայերի ազգսորը պետք է հետևողականորեն օգտագործել նրանց իսպառ բնաջնջելու համար: Չի հիշատակվում հայերի ոչնչացման նպատակով ստեղծված «Հատուկ կազմակերպությունը», «Թեշքիլաթը մահսուսեն»՝ չարաբաստիկ բժիշկ Բեհաեդդին Շաքիրի գլխավորությամբ[10]: Ավելին, պաշտոնական այդ փաստաթղթերի, օրինակ, Թալեաթ փաշայի անունից ուղարկված ծածկագրերի վավերականությունը կասկածի տակ է առնվում և անվերապահորեն ժխտվում թուրք պատմաբանների ու պաշտոնական անձանց կողմից, թեև դրանց իսկությունը հաստատվել է տակավին 1921-ին՝ Բեռլինում կայացած դատավարության ժամանակ՝ գերմանական մի քանի հեղինակավոր էքսպերտների կողմից[11]:

Բացի դրանից, վաղուց ի վեր միջազգային հանրության սեփականությունն են դարձել Կ. Պոլսում գերմանական դեսպան Վանգենհայմի, ամերիկյան դեսպան Հենրի Մորգենթաուի և այլոց անհերքելի վկայությունները այն մասին, որ հայերի տեղահանությունը նրանց ոչնչացման սոսկ քողարկված ձևն էր: Եվրոպայի և Ամերիկայի հասարակայնությունը, առաջադեմ մտավորականության ներկայացուցիչները բողոքի իրենց ձայնը բարձրացրին ընդդեմ իթթիհատական ոճիրների, պահանջելով խստագույնս պատժել անմեղ ոճրի գլխավոր պատասխանատուներին: Ժակ դը Մորգանը գրեց «Ընդդեմ Արևելքի բարբարոսների» գիրքը, Հ. Ա. Գիբոնսը՝ «Ժամանակակից պատմության ամենասև էջը», Ս. Մ. Կիրովը հանդես եկավ «Թերեք» թերթում՝ մարդկայնությամբ և հայ ժողովրդի նկատմամբ սիրով ու կարեկցանքով լեցուն հոդվածներով[12]:

Պատերազմի ավարտից հետո, 1919-ի ապրիլ-հուլիսին Կ. Պոլսում տեղի ունեցած երիտթուրքական պարագլուխների դատավարությունը համաշխարհային հասարակական կարծիքի հետ հաշվի նստելու հենց այդ պահանջից էր ելնում, ինչպես և այն, որ Բեռլինի երդվյալների դատարանը 1921-ի հունիսի 3-ին մեղավոր չճանաչեց և ազատ արձակեց արյունարբու Թալեաթի անաբեկիչ ժողովրդական վրիժառու Սողոմոն Թեհլերյանին[13]:

Հայկական ցեղասպանության դատապարտման նոր պահը կապված էր եղեռնի 50-ամյակի հետ, երբ երկրագնդի մի շարք երկրներում նշվեց այդ տխուր տարեթիվը: Այդ ժամանակից ի վեր միջազգային հասարակայնությունը հանդես է գալիս 1915-ի ցեղասպանությունը, որպես մարդկության դեմ գործված հանցագործություն ճանաչելու և դատապարտելու պահանջով: Այդ նպատակին էին ուղղված մասնավորապես 1984-ին Փարիզում կայացած «Ժողովուրդների միջազգային դատարանի» նիստերը՝ նվիրված 1915-ի եղեռնի պատասխանատուների հասարակական դատավարությանը: Դրանց նյութերն ամփոփվեցին «Լռության հանցագործությունը» խորագրով գրքում, որը լույս տեսավ ֆրանսերեն, ապա անգլերեն[14]:

Եղեռնի մասին խոսելիս պետք է հիշել նաև այդ ողբերգության հերոսական էջերը, մանավանդ որ թուրքական կողմը և, ընդհանրապես, մեր ժողովրդի նկատմամբ, մեղմ ասած, ոչ բարեկամաբար տրամադրված անձինք շարունակում են կրկնել այն թյուր կարծիքը, թե իբր արևմտահայերը, առանց որևէ դիմադրության, թույլ են տվել իրենց մորթոտելու, ուրեմն նրանք ապրելու իրավունք չունեին: Դա հերյուրանք է հայ ժողովրդի հասցեին: Ճշմարտությունն այն է, որ չնայած ծանրագույն պայմաններին՝ զենք կրելու ունակ տղամարդկանց մեծ մասի տմարդի ոչնչացմանը, մահմեդական շրջապատին և այլն, ամենուրեք, որտեղ դա հնարավոր էր, հայերը դիմադրություն են ցույց տվել իրենց դահիճներին:

Հիշենք Վանը, Շատախը, Շապին-Կարահիսարը, Մուսա լեռը, Ուրֆան, Սասունը...

1966

Կարծես այս հարցին է փորձում պատասխանել ֆրանսուհի հրապարակագիր Էլենա դը լա Սուշեռը «Ռասիզմը 1000 պատկերներում» խորագիրը կրող գրքում[1]: Եվ հեղինակն իր շարադրանքով, իր հավաքած հազար զարհուրելի լուսանկարաներով ցավով ստիպված է հաստատել, որ ռասիզմը որքան որ հին է, նույնքան էլ նոր է՝ մեր տխուր ժամանակակիցը:

Ֆրանսուհի մարդասերն իր գրքում այն միտքն է անցկացնում, որ թեև ռասիզմը, որպես մարդատյաց ու ցեղասպան մի տեսություն, հանդես է եկել միայն XIX դարի վերջին, հղփացած կապիտալիզմի դարաշրջանում, սակայն, ըստ էության, այն ուղեկցել է մարդկությանը նրա պատմության ամենավաղ ժամանակներից, այն պահից, երբ մարդը մսուրում սկսել է հալածել, քշել այս ու այն կողմ, աքսոր ուղարկել, բոնի տեղահանել և, վերջապես, ոչ պատերազմական, խաղաղ պայմաններում անգամ՝ հրկիզել ու կախել, խաչել ու մորթոտել միայն այն բանի համար, որ մեկը մյուսի ցեղակիցը չէ: Փաստերից շարադրանքն ուղեկցելով նկարներով, հեղինակը քայլ առ քայլ հետևում է ռասիզմի դրսեվորումներին հին աշխարհում ու միջնադարյան խավարի պայմաններում, սակայն իրավացիորեն գտնում է, որ ռասիզմը աճավոր պատուհաս դարձավ մարդկության գլխին, երբ մշակված տեսք ընդունեց՝ ամփոփվելով առանձին մի տեսության մեջ: Դա 1884-ին էր, երբ Փարիզում լույս տեսավ կոմս դը Գոբինոյի «Անհարկ մարդկային ցեղերի անհավասարության մասին» գրքի առաջին հատորը: Ի՞նչ էր քարոզում զանգվածային մարդասպանության առաջին տեսաբանը: Սպիտակ ռասայի և նրա բարձրագույն ճյուղավորման՝ արիացիների բացարձակ գերիշխանություն:

«Դեմոկրատական ռեժիմների մեղքով,— գրում էր ֆրանսիացի ռասիստը,— պլեբեյական զանգվածների ցածրորակ արյունը պղծեց արիստոկրատիայի մաքուր արյունը և, ամենից առաջ, ֆրանսիական արիստոկրատիայի արյունը, որի ամեն մի կաթիլ հյուսիսային արիական ռասային է պատկանում»[2]: Գոբինոյի ռասայական տեսությունը որգեգրվեց ու

զարգացվեց նրա եվրոպացի հետևորդների կողմից, և արդեն XIX դարի վերջին «սարսափի տեսաբանները դարոց ստեղծեցին»[3]: Այդ նույն ժամանակ էլ ծայր են առնում հեղինակի արտահայտությամբ «սերիական ջարդերը»:

Գրքում կենտրոնական տեղ է հատկացված թուրքական, ապա և հիտլերյան ռասիստների կիրառած ցեղասպանության քաղաքականության դատապարտմանը: Հեղինակն օգտագործել է արևմտահայերի զանգվածային ջարդերի վերաբերյալ փաստաթղթերը, մեջ է բերել Ֆրիտյոֆ Նանսենի, Անդրեյ Մանդելշտամի, դոկտոր Լեպսիուսի, Ժան-Պիեռ Ալեմի և մյուսների գնահատականները: 25 նկարներով (որոնց մեծ մասը լուսանկարներ են) ուղեկցելով իր շարադրանքը, Է. դը լա Սուշեռը համառոտակի վեր է հանում լաւորդ դարի ընթացքում՝ 1894—1918 թվականներին սուլթանական ու երիտթուրքական բռնատիրության կողմից հայ ժողովրդի նկատմամբ կիրառված անթիվ չարագործությունները: «Կարմիր* սուլթան Աբդուլ Համիդը ձեռքերն ազատ արձակված զգաց իր ձևով հայկական հարցը լուծելու համար՝ հայերին պարզապես բնաջնջելով»:

Նկարագրելով համիդյան վայրագությունները, հեղինակը նշում է նաև Արևմտյան Հայաստանի մի շարք վայրերում հայերի ցույց տված հերոսական դիմադրությունը, համակրանքով է խոսում ժողովրդական հերոս Անդրանիկի մասին, որպես «իր ժողովրդի ազատության համար պայքարող հայ ամենահեղինակավոր մարտիկի»: Նա հիշատակում է 1901-ի Առաքելոց վանքի կռիվները, երբ «Անդրանիկը պարտության մատնեց թուրքական 13 գումարտակ»:

«1908-ի հուլիսի 11-ի լուսաբացին,— գրում է հեղինակը,— հայերն իմացան, որ Աբդուլ Համիդը գիշերը ստորագրել է հրովարտակ օսմանյան սահմանադրության վերականգնման մասին»: Ի՞նչ փոխվեց դրանով:

«Նշանակալից ոչ մի բան, համենայն դեպս՝ հայերի ճակատագրի բարելավման իմաստով: Ավելացավ մի բան. երիտթուրքերը շարունակեցին Աբդուլ Համիդի անավարտ գործը՝ լավ մշակված մեթոդով»: Այս կապակցությամբ հե-

---

* Ֆրանսիական մամուլի կողմից նրան տրված մականունը (Ռ. Ս.)

ղինակը մեջ է բերում հայ ժողովրդի մեծ բարեկամ Ֆրիտյոֆ Նանսենի խոսքերը. «Երիտասարդ թուրքերի և հին թուրքերի միջև եղած տարբերությունը հայերին հետապնդելու հարցում, այն էր, որ առաջինները գործում էին լավ մշակված ծրագրով: Երիտթուրքական կուսակցության շատ ղեկավարներ իրենց կրթությունը ստացել էին Պրուսիայում, ուր նրանք ուսումնասիրել էին ոչնչացման մեթոդը»:

«Եվ հենց Գերմանիայի աչքի առջև ու նրա պատասխանատվությամբ էր,— նշում է Սուշերը,— որ գրվեց արևմտահայերի պատմության ամենասև էջը»: «Ավելի ուշ,— ավելացնում է հեղինակը,— հենց գերմանացի Հիտլերը կարող էր բացականչել. «Ոչնչացրեք, ո՞վ է ներկայումս հիշում Հայաստանի ջարդերի մասին»:

Դատապարտելով երիտթուրքական կառավարողների կիրառած հայասպան քաղաքականությունը, հեղինակը, սակայն, չի սահմանափակվել ահավոր եղեռնի նկարագրություններով, այլև տեղ է հատկացրել հայ ժողովրդի մեծ ողբերգության հերոսական էջերին ևս, հիշատակելով Զեյթունի, Սասունի, Վանի և Մուսա լեռան ինքնապաշտպանական կռիվները:

Գրքում զետեղված է նաև արևմտահայերի զանգվածային տեղահանության ու ջարդերի քարտեզը, հեղինակի արտահայտությամբ՝ «հայկական զոհաբերությունների արյունոտ քարտեզը»:

Ի՞նչ եզրակացության է գալիս Էլենա դը լա Սուշերը:

«XX դարի արշալույսին հայերի ջարդը գլխավոր փորձն էր զանգվածային այն սպանությունների, որոնք շուտով բարձրացվեցին կառավարման արվեստի աստիճանին»[5]:

Պետք է ասել, որ հեղինակի այն միտքը, որ հայ ժողովրդի դեմ գործադրված գենոցիդը նախադեպ ծառայեց Հիտլերի համար, գնալով ավելի է գրավում ռասիզմի ու ցեղասպանության պատմությունն ուսումնասիրողների ուշադրությունը, որոնք միաժամանակ մատնանշում են, որ մեր դարի զանգվածային առաջին ցեղասպանության՝ հայերի բնաջնջման քաղաքականության ոչ պատշաճ դատապարտումը իր ժամանակին, ինչպես և հետագա տարիներին, համաշխարհային հասարակական կարծիքին զրկել է մարդ-

կության դեմ ուղղված այդ հանցագործության ապագա ապառնալիքի շուրջը խորհելուց: Եվ պատահական չէ, որ հայերի ցեղասպանության մասին իր զեկուցումը լիբանանցի իրավաբան Մուսա Փրենսը կարդացել է 1967-ի հուլիսի 10—14-ը Փարիզում կայացած հանցագործությունների կանխման երկրորդ միջազգային համաժողովում: Նույն թվականին հայ ժողովրդի արաբ բարեկամը Բեյրութում ֆրանսերեն լեզվով լույս ընծայեց իր մեծածավալ աշխատության առաջաբանը՝ «Անպատիժ մնացած ցեղասպանություն՝ հայասպանություն» խորագրով[6]:

Այդ հարցին անդրադառնալու շարժառիթներից է նաև թերևս այն, որ երիտթուրքական հանցագործները ի հարկին չեն դատապարտվել ինչպես անցյալում, այնպես էլ մեր օրերում: Հայտնի է, օրինակ, որ հայ ժողովրդի մեծ եղեռնից ավելի քան հիսուն տարի հետո Թուրքիայում գտնվում են պետական ու քաղաքական գործիչներ, որոնք հանդես են գալիս ահավոր ոճրի հեղինակների պաշտպանությամբ և ավելին՝ նրանց փառաբանմամբ: Ազգայնամոլ ու ցեղապաշտ քաղաքականության մունետիկները հիմնել են «Ազատության նահատակների ոգեկոչման միություն», որի կարևորագույն խնդիրը ազատության դահիճների հիշատակի հավերժացումն է, նրանց կենտրոնացումը «Ազատության նահատակների դամբարանում», ուր XX դարի մեծ ցեղասպան Թալեաթ փաշայի կողքին պետք է թաղվեն հայտնի մարդասպաններ Բեհաեդդին Շաքիրի, Ջեմալ Ազմիի, Հալիլ փաշայի և այլոց աճյունները: Այսպես. «Ենի Իսթանբուլ» թերթը 1967-ի մայիսի 9-ին հաղորդում էր, որ նախատեսվում է հիշյալ պանթեոնը փոխադրել 1922-ին Բեռլինում սպանված Բեհաեդդին Շաքիրի և երիտթուրքական մյուս հանցագործների աճյունները[7]:

Հայերի ցեղասպանությանը նվիրված բաժնին հաջորդում է նացիզմի հանցագործությունների մերկացմանը նվիրված գլուխը («Ցեղասպանությունը՝ դատապարտված Նյուրնբերգում»): Տասնյակ լուսանկարներով հեղինակը պատմում է ռասիզմի բարձրագույն դրսևորման՝ հիտլերյան ֆաշիզմի անմարդկային, բարբարոսական արարքների մասին, տասնյակ միլիոնավոր մարդկանց տառապալից ուղու մասին: Հեղի-

ճակի կողմից բերված փաստագրական նյութը գալիս է ժողովուրդներին հայտնելու ֆրանսուհի մարդասեր գրողի տագնապն ու անհանգստությունը մեր մոլորակի հետագա ճակատագրի հանդեպ, եթե ռասիզմի մարդատյաց տեսությունը այսօրվա պես վաղն էլ կիրառվի կյանքում:

1969

ԳԵՆՈՑԻԴԻ «ԴԱՍԱԿԱՆ» ՕՐԻՆԱԿ

«Պրոգրես» հրատարակչությունը «Ինչը ինչ է համաշխարհային քաղաքականության մեջ» խորագրի տակ 75 հազար տպաքանակով ռուսերեն լույս է ընծայել մի բառարան-ուղեցույց[1], որն ունի գործնական անժխտելի կարևորություն: Գրքում փորձ է արվում բնորոշում տալ արդի միջազգային պրակտիկայում գործածվող տնտեսական, գաղափարական, իրավաբանական և այլ հարյուրավոր այն հասկացողություններին ու տերմիններին, որոնք շրջանառության մեջ մտան գերազանցապես երկրորդ համաշխարհային պատերազմից հետո: Ընթերցողին հղելով դեպի այդ խիստ այժմեական հրատարակությունը, բավարարվենք մի քանի օրինակներով: Գրքի 91-րդ էջում կարդում ենք. «Գենոցիդ. գործողություններ, որոնք կատարվում են ազգային, էթնիկական, ռասայական կամ կրոնական որևէ խումբ, որպես այդպիսին, լրիվ կամ մասնակիորեն ոչնչացնելու մտադրությամբ. քրեական ծանրագույն հանցագործություն: Որպես գենոցիդ են որակավորվում հետևյալ գործողությունները. նման մի խմբի անդամների սպանությունը. նման խմբի անդամներին մարմնական լուրջ վնասվածքներ կամ խանգարումներ պատճառելը. որևէ խմբի համար կանխամտածված այնպիսի կենսապայմանների ստեղծումը, որոնք հանգեցնելու են նրա լրիվ կամ մասնակի ոչնչացմանը, միջոցներ, որոնց նպատակն է կանխել ծննդաբերությունը նման մի խմբի միջավայրում, երեխաների բռնի հանձնումը մարդկային մի խմբից մյուսին»[2]:

Անդրադառնալով գենոցիդի նախապատմությանը, հոդվածում ասվում է, որ XX դարում գենոցիդն ընդունեց խոշոր մասշտաբային, կանխամտածված և նպատակաուղղված

հանցագործության բնույթ, հանցագործություն, որն իրականացվում է պետական ապարատի կողմից՝ քաղաքական նպատակներով: «Գենոցիդի «դասական» օրինակ է հանդիսանում,— ասված է այնուհետև,— 1,5 մլն հայերի բնաջնջումը Օսմանյան կայսրության իշխանությունների կողմից, որոնք օգտվեցին առաջին համաշխարհային պատերազմի իրադրությունից»[3]: Հոդվածում նշվում է, որ գենոցիդը համարվում է հանցագործություն մարդկության և մարդկայնության դեմ, և պատժվում է, որպես այդպիսին, ինչը իր արտահայտությունն է գտել Նյուրնբերգյան դատավարության ու ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի որոշումներում և «Գենոցիդի հանցագործությունը կանխելու և դրա համար պատժելու» Հատուկ կոնվենցիայում, որն ընդունվել է ՄԱԿ-ի կողմից 1948-ի դեկտեմբերի 9-ին: Ճանաչված է նաև այն փաստը, որ գենոցիդի հանցագործությունը, որպես հանցագործություն մարդկության դեմ, ի թիվս այլ հանցագործությունների, վաղեմության ժամկետ չունի[4]:

Հետաքրքրական է և նոր տվյալներով հագեցած Եվրոպական պառլամենտին ներկայված հոդվածը:

Ինչպես հայտնի է, Եվրոպական պառլամենտը իր 1987-ի հունիսի 18-ի նիստում դատապարտել է հայկական ցեղասպանությունը, սակայն այդ կարևոր ակտը, ցավոք, չէր կարող տեղ գտնել հիշյալ բառարանում, քանի որ գիրքը ստորագրվել է տպագրության մինչ այդ: Ուստի հպատակահարմար ենք գտնում մեջբերել վերը հիշատակված որոշումը.

«Եվրոպական պառլամենտը... այն կարծիքին է, որ Օսմանյան կայսրության տարածքում հաստատված հայերի հետ կապված 1915—1917 թթ. ողբերգական դեպքերը իրենցից ներկայացնում են գենոցիդ՝ ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից 1948-ի դեկտեմբերի 9-ին հավանության արժանացած գենոցիդի հանցագործությունը կանխելու և դրա համար պատժելու կոնվենցիայի իմաստով»[5]:

Նոր, առավել հստակ ձևակերպումներ ու օրինակներ է պարունակում **նացիոնալիզմ** հոդվածը, որտեղ մասնավորապես ընդգծվում է այն միտքը, որ կապիտալիզմից իմպերիալիզմին անցնելու ժամանակաշրջանում երբեմնի առաջադիմական **բովանդակություն** ունեցող «նացիոնալիզմը վեր է

ածվում խտրականության գաղափարական հիմնավորման և ազգային փոքրամասնությունների հետապնդման, զավթողական պատերազմների և անեքսիաների, իսկ ֆաշիստական կամ ռազմական դիկտատուրայի պայմաններում ընդունում է **գենոցիդի** բնույթ (ֆաշիստական Գերմանիա, Թուրքիա, դարասկզբին՝ երիտթուրքերի օրոք, Գվատեմալա և այլն»)[6]:

Այժմեական հնչողություն ունի նաև **պանթուրքիզմ** տերմինի բնութագրումը՝ «թուրքական բուրժուազիայի հետադիմական շրջանների ագրեսիվ շովինիստական դոկտրինա»: «Պանթուրքիզմը,— շարունակում ենք կարդալ նույն հոդվածում,— հռչակում է միասնական թուրք ազգի գոյությունը և պրոպագանդում է Թուրքիայի գերիշխանության ներքո «Մեծ թուրանի պետության մեջ թուրքալեզու բոլոր ժողովուրդներին միավորելու գաղափարը (ընդգրկելով Ալբանիայի, Հարավսլավիայի, Բուլղարիայի, Կիպրոսի, ԽՍՀՄ-ի, Իրանի, Աֆղանստանի, Պակիստանի, Չինաստանի տերիտորիայի մի մասը)»[7]: Ճիշտ է ասված, որ պանթուրքիզմի դոկտրինան լայնորեն օգտագործվում է ֆաշիստական Գերմանիայի կողմից, իսկ բուն Թուրքիայում ընդհուպ մինչև 1944 թ. պանթուրքիստները ծավալել էին լայն գործունեություն, որն իր դրսևորումներն ունեցավ նաև ետպատերազմյան Թուրքիայում: Այսպես, 1960-ական թվականների վերջին պանթուրքական դոկտրինայի հիմքի վրա ստեղծվեց Ազգայնական շարժման կուսակցությունը՝ հռչակելով «100-միլիոնանոց Թուրքիայի ստեղծումը», որը կմիավորի «դրսի թուրքերին»[8]: Ավելացնենք, որ հիշյալ հոդվածում բերված փաստերն ու գնահատականները իրենց հաստատումն են գտնում բոլորովին վերջերս թուրքական մամուլում հրապարակված սանձարձակ նյութերում:

1988

ԱՑՍ ԱՊՐԻԼԸ

Նորից ապրիլի 24-ը, եղեռնի զոհերի հիշատակի օրը: Նորից, բայց նոր իրադրության մեջ: Առաջին անգամ մենք այդ տխուր տարեդարձի օրը դիմավորում ենք մեծ ու աճավոր երկրաշարժից հետո, որ մեր ժողովրդի գլխին պայ-

թած մի նոր ապրիլի 24 էր, այս անգամ տարերքի կույր ուժերի կողմից: Տասնյակ հազարավոր նոր զոհեր, որբացած անթիվ-անհամար մանուկներ, ավերված շեներ ու քաղաքներ: Այս ամենը մղում է մեզ առավել սթափ մոտենալու մեր ազգի ներկային ու ապագային:

Հիմնական հետևությունը, որ, ըստ իս, պետք է անել, դա այն է, որ մենք պետք է դադարենք ողբալ մեր ճակատագիրը, դուրս գանք հոգեբանական ծանր վիճակից և համախմբենք մեր ուժերը՝ մե՛ր ապագան մե՛ր ձեռքերով կերտելու համար: Որովհետև, որքան էլ ոգեշնչող լինեն երկրաշարժի առիթով ծագած համամարդկային համերաշխությունը և այդ նույն առիթով դրսևորված հայկական միասնությունը, բուն Հայաստանի ժողովուրդն է, որ պիտի անի գլխավորը՝ մնա՛ իր տեղում և վերականգնի իր փոքր, բայց սեփական հայրենիքի աղետյալ քաղաքներն ու գյուղերը:

Այս ապրիլի 24-ը ունի այն հուսադրող կողմը, որ առաջին անգամ այն պետականորեն է նշվում, և նշվում է որպես ցեղասպանության դատապարտման և նրա դեմ բողոքի օր, քանի որ Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության Գերագույն խորհուրդը իր 1988-ի նոյեմբերի 22-ի նիստում միաձայն ընդունել է օրենք «Օսմանյան Թուրքիայում 1915-ի հայերի ցեղասպանության դատապարտման մասին»[1]: Այս պատմական փաստաթղթի նշանակությունը դժվար է գերագնահատել, եթե մենք մի սրտի ետ նայենք և ժամանակագրական հաջորդականությամբ մեր հիշողության մեջ վերականգնենք վերջին մի քանի տասնամյակի հուզումնալի դեպքերը:

1965-ի ապրիլի 24: Երկրագնդի 23 երկրներում՝ ԱՄՆ, Ֆրանսիա, Անգլիա, Լիբանան, Սիրիա, Արգենտինա, Ուրուգվայ և այլն, լայնորեն նշվում է 1915-ի եղեռնի 50-ամյակը: Պաշտոնական անձինք՝ մինիստրներ, ներակուտականներ, պառլամենտի պատգամավորներ, անվանի գիտնականներ, հասարակական գործիչներ, տարբեր քաղաքական հոսանքների ներկայացուցիչներ, հանդես եկան 1915-ի հայկական եղեռնի դատապարտմամբ, պահանջելով այն դիտել, որպես մարդկության ու մարդկայնության դեմ ուղղված հանցագործություն: Հայկական ցեղասպանություն

հասկացությունը մուտք է գործում միջազգային ասպարեզ, հետզհետե դառնում հատուկ ուսումնասիրության առարկա: «Պրավդա» թերթի ապրիլի 24-ի համարում լույս է տեսնում «Ցեղասպանությունը՝ մարդկության դեմ ծանրագույն հանցագործություն» հոդվածը[2]: Երևանում տեղի են ունենում զանգվածային ցույցեր՝ մոռացության մատնված ոճիրը դատապարտելու արդարացի պահանջով: Օպերային թատրոնի շենքում գումարվում է սգո հանդիսավոր նիստ՝ նվիրված 1915-ի ցեղասպանության 50-ամյակին:

1965-ի հուլիսի 15: Հելսինկիում կայացած Խաղաղության կողմնակիցների համաշխարհային կոնգրեսը իր որոշման մեջ դատապարտելով բռնությունը, գաղութատիրությունը և ցեղասպանությունը՝ ընդունում է հետևյալ կետը. «Այս տարի հիսնամյակն է հայկական ջարդերի, որոնք կազմակերպվեցին օսմանյան Թուրքիայի կողմից՝ ազգային հարցը ամբողջ մի ժողովրդի բնաջնջման ճանապարհով լուծելու նպատակով: Այդ ցեղասպանությունը արժեցավ մեկուկես միլիոնից ավելի ազատասեր հայերի՝ այսինքն հայ ժողովրդի երկու երրորդի կյանքը»[3]:

1966-ին Երևանում, Հայաստանի գիտությունների ակադեմիայի հրատարակությամբ ռուսերեն լույս է տեսնում «Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում» փաստաթղթերի ստվարածավալ ժողովածուն:

1967 թվական: Երևանում, Ծիծեռնակաբերդի բարձունքի վրա, բացվում է 1915-ի ցեղասպանության զոհերի հուշարձանը:

1973 թվականի հուլիս: Միավորված ազգերի կազմակերպության մարդու իրավունքների հանձնաժողովը պաշտոնապես հանձնարարում է ռասիզմի ու ցեղասպանության կանխման ենթահանձնաժողովին՝ ուսումնասիրելու համապատասխան պատմական փաստաթղթերը՝ 1915-ի եղեռնը, որպես ցեղասպանության ակտ որակելու միտումով:

1974 թվականի մարտի 6: ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովը իր 39-րդ նիստում քննության է առնում «Ցեղասպանության կանխման և այն իրականացնելու համար պատժելու մասին» հուշագիրը, որի 30-րդ պարագրաֆում 1915-ի հայկական ջարդերը հիշատակվում էին որպես XX

դարի առաջին ցեղասպանության փաստ: Թուրքիայի ներկայացուցչի պահանջով փաստաթուղթը չի վավերացվում և վերադարձվում է «լրացուցիչ ուսումնասիրության»:

1975-ի ապրիլի 8: ԱՄՆ-ի Կոնգրեսի ներկայացուցիչների պալատն ընդունում է բանաձև, որով ճանաչվում է հայերի ցեղասպանության փաստը:

1975—77 թվականներ: Փարիզում լույս են տեսնում Ժան-Մարի Կառզուի «Օրինակելի ցեղասպանություն. Հայաստան, 1915» և Իվ Տերնոնի «Հայերը. մի ցեղասպանության պատմություն» արժեքավոր ուսումնասիրությունները:

1978-ի սեպտեմբեր: 1974-ի հուշագրի 30-րդ պարագրաֆը վերստին դրվում է քննարկման Մարդու իրավունքների հանձնաժողովում և դարձյալ մերժվում:

1984-ի ապրիլի 13—16: Փարիզում գումարվում է Ժողովուրդների մշտական ատյանի նիստ, որը հատուկ քննության է առնում 1915-ի ցեղասպանության հարցը և ընդունում որոշում այն մասին, որ համաձայն ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից 1948-ի դեկտեմբերի 9-ին ընդունված «Գենոցիդի հանցագործությունը կանխարգելելու ու դրա համար պատժելու» կոնվենցիայի՝ բոնի տեղահանումների ու զանգվածային սպանությունների եղանակով հայ ժողովրդի քնաջնջումը իրենից ներկայացնում է գենոցիդ, որի համար ժամանակի թուրքական կառավարությունը պատասխանատվություն է կրում: Միաժամանակ նշվում էր, որ հայերի ցեղասպանությունը միջազգային չափանիշի հանցագործություն էր, որի համար թուրքական կառավարությունը պատասխանատու է՝ անկախ այն բանից, որ հաջորդականություն չի եղել ժամանակի և ներկա թուրք պետության միջև[4]:

1985-ի հուլիս-դեկտեմբեր: ԱՄՆ-ի Կոնգրեսի վերին պալատը՝ ծերակույտը, անդրադառնալով հայկական ցեղասպանության հարցին, հանդես է բերում անհետևողականություն. հուլիսի 4-ին ընդունվում է որոշում հօգուտ հայկական բանաձևի, իսկ դեկտեմբերին համապատասխան օրենքի ընդունումը տապալվում է:

1985-ի օգոստոսի 27: ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովը նորից է քննարկում 1915-ի ցեղասպանու-

թյան հարցը և որոշ վերապահումներով ընդունում դրական որոշում:

1987-ի հունիսի 18: Ֆրանսիայի Ստրասբուր քաղաքում տեղի ունեցած Եվրոպական պառլամենտի հերթական նիստում ձայների մեծամասնությամբ ընդունվում է որոշում, որի երկրորդ կետն ազդարարում էր.

Եվրոպական պառլամենտն... այն կարծիքին է, որ Օսմանյան կայսրության տարածքի վրա հաստատված հայերի հետ 1915—1917 թթ. կատարված իրադարձությունները իրենցից ներկայացնում են ցեղասպանություն «Գենոցիդի հանցագործությունը կանխարգելելու և դրա համար պատժելու» այն կոնվենցիայի համաձայն, որը վավերացվել է Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի կողմից 1948-ի դեկտեմբերի 9-ին[5]:

Եվրոպական պառլամենտի հիշյալ որոշումը կարելի է դիտել, որպես հանրագումար բոլոր այն ջանքերի, որ համաշխարհային հասարակայնությունը, մասնավորապես մեր ժողովրդի ներկայացուցիչները՝ հայրենիքում թե սփյուռքում, գործադրեցին 1960—80-ական թվականներին՝ 1915-ի եղեռնը մարդկության դեմ ուղղված հանցագործությունների շղթայի մեջ ընդգրկելու, XX դարի առաջին զանգվածային ցեղասպանություն որակելու և այն դատապարտելու ուղղությամբ:

Թվում էր, որ գոնե Եվրոպական պառլամենտի մաս կազմող երկրների ներկայացուցիչները կհասնեն այն բանին, որ իրենց կառավարությունները պաշտոնապես ճանաչեն ու դատապարտեն հայերի գենոցիդը Օսմանյան կայսրությունում, որպես հանցագործություն մարդկության ու մարդկայնության նկատմամբ: Սակայն դա տեղի չունեցավ: Ավելին. ո՛չ մեկը այն պետություններից, որտեղ գոյություն ունեն հայկական հոծ համայնքներ (ԱՄՆ, Ֆրանսիա, Կանադա, Արգենտինա և այլն) արժանի չհամարեց հարցը հասցնել Միավորված ազգերի կազմակերպության քննարկմանը:

Ահա այս տեսանկյունից մոտենալով, մենք պիտի գոհունակությամբ նշենք, որ շնորհիվ մեր Հանրապետության լայն հասարակայնության, ամբողջ ժողովրդի բուռն ու հետևողական ջանքերի՝ ՀԽՍՀ Գերագույն խորհրդի կողմից 1988-ի նոյեմբերի 22-ին ընդունված օրենքը պաշտոնապես, պետա-

կանորեն կայացված այն կարևորագույն օրենսդրական ակտն է, որը, մեր համոզմամբ, սկիզբ կծառայի 1915-ի ցեղասպանությունը միջազգային մակարդակով ճանաչելու և պաշտոնապես դատապարտելու համար:

Հաջորդ քայլը, որը չափազանց կարևոր է այդ նպատակին հասնելու և, ընդհանրապես, հայ դատի հետագա ընթացքի տեսակետից, կարող էր դառնալ 1915-ի ցեղասպանության ճանաչումը Խորհրդային Միության Գերագույն խորհրդի կողմից:

Եվ հետո, կարծում եմ, վաղուց ժամանակն է, որ ԽՍՀՄ պատմության դպրոցական բոլոր դասագրքերում և բուհական ձեռնարկներում շիտակ ու բացորոշ գրվի 1915-ի հայկական ողբերգության մասին՝ վերացնելու համար այն անգիտությունը, որ հետևանք է ստալինյան ու բրեժնևյան ժամանակաշրջանի խեղաթյուրումների:

Այս ամենի անհրաժեշտությունը թելադրվում է ոչ միայն գենոցիդի հանցագործության շարունակական բնույթով, այլ բանով, որ ցեղասպան քաղաքականության դրսևորումները պարբերաբար կրկնվում են նաև մեր օրերում, այլև պատմական ճշմարտությունը վերականգնելու և մեր դարի քստմնելի ոճիրը դատապարտելու պահանջով: Նաև այն իրողությամբ, որ այսօր էլ գտնվում են, կա՛ն քաղաքական գործիչներ ու անազնիվ պատմաբաններ, որոնք փորձում են մեղմացնել կատարվածը և անգամ արդարացնել հայ ժողովրդի նկատմամբ կիրառված ցեղասպանությունը: Առանձնապես թուրք, ինչպես նաև մի շարք ամերիկյան պատմաբաններ, ենթագիտակցելով պատմությունը՝ հաճախ են վկայակոչում հայերի ռուսահպատակ դիրքորոշումը՝ «հիմնավորելու» համար 1915-ի բռնի տեղահանությունը, որը զանգվածային ցեղասպանության իրականացման եղանակ էր սոսկ: Բանն այնտեղ է հասել, որ թուրքական պաշտոնական շրջանները հայերի «դավաճանության» շինծու վարկածի հետ մեկտեղ իրենց գաղափարախոսների միջոցով փորձում են նոր արդարացումներ փնտրել նախկին հանցագործ ղեկավարներին ցեղասպանության մեղադրանքից զերծ պահելու համար: Վերջին տարիներին անգլերեն ու ֆրանսերեն տպագրվող և արտասահմանյան երկրներում տարած-

վող իրենց գրվածքներում թուրք հեղինակները ցեղասպանության որակումից խուսափելու համար նույնիսկ ընդունում են, որ առաջին համաշխարհային պատերազմի տարիներին արևմտահայությունը բազմաթիվ զոհեր է տվել, բայց ոչ թե թուրքական յաթաղանից, այլ... զանազան հիվանդություններից ու համաճարակներից: Բարեբախտաբար արտասահմանյան պատմաբանները իրենք փաստարկված պատասխան են տալիս նման աղավաղումներին, մերկացնում պատմության կեղծարարներին:

«Թուրք պատմագրությունը,— գրում է պրոֆ. Պիեռ Վիդալ-Նակեն,— որը փաստորեն պետական պատմագրություն է, ժխտման պատմագրության մի օրինակ է»[6]: Համաձայն այդ պատմագրության, ավելացնում է Իվ Տերնոնը, «հայերի ցեղասպանություն տեղի չի ունեցել, որովհետև եթե այն տեղի ունեցած լիներ, ապա հարկ կլիներ վերաշարադրել թուրքական պատմությունը»[7]:

Ապրիլյան եղեռնը հիշելիս մենք չպետք է մոռանանք մեր ժողովրդի ողբերգության հերոսական էջերը, այն անհնավասար, օրհասական կռիվները, որ հայոց քաջերը մղել են երիտթուրքական մարդասպանների դեմ Սասունում ու Վանում, Ուրֆայում ու Շապին-Կարահիսարում, Մուսա լեռան վրա և Սարդարապատում: Դա անհրաժեշտ է նաև այն պատճառով, որ ինչպես ցույց տվեցին երկրորդ համաշխարհային պատերազմի դեպքերը, հայկական հերոսամարտերի օրինակը ոգեշնչել է ֆաշիզմի դեմ պայքարող մարտիկներին:

Եվ վերջապես, մենք չպետք է մոռանանք, որ ապրիլի 24-ը պարտավորեցնող օր է, այսինքն՝ հիշեցնելով մեզ և աշխարհին մե՛ր կորուստների, մե՛ր անմեղ զոհերի, մե՛ր նահատակների մասին, այն միաժամանակ մեզ պետք է պայքարի մղի նո՛ր բռնությունների, նո՛ր անարդարությունների դեմ՝ հանուն մեր ժողովրդի լուսավոր գալիքի:

Գլուխ երկրորդ

ՀՈԴՎԱԾ-ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

ՆՈՐ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ 1915-Ի ԵՂԵՌՆՈՒՄ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԵՐԻ ՄԱՍԻՆ

Հայերեն թարգմանությամբ հրատարակվող «Հայկական հալածանքները» գլուխը վերցված է Կանադայի Էդմոնտոն քաղաքի Ալբերտայի համալսարանի պրոֆեսոր Ուլրիխ Տրումպեների «Գերմանիան և Օսմանյան կայսրությունը 1914—1918 թթ.» խորագրով գրքից*, որը լույս է տեսել անգլերեն ԱՄՆ-ի Պրինստոն քաղաքում 1968-ին: Պրոֆեսոր Տրումպեները, թերևս, առաջին հեղինակն է, որին հաջողվել է միաժամանակ օգտագործել և գիտական շրջանառության մեջ դնել Եվրոպայի մի քանի խոշոր պետական արխիվներում (Պոտսդամի—ԳԴՀ, Կոբլենցի և Բոննի—ԳՖՀ, Վիեննայի արտգործմինիստրության) պահվող բազմաթիվ փաստաթղթերը առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին ու պատերազմի տարիներին Թուրքիայի նկատմամբ կայզերական Գերմանիայի վարած քաղաքականության վերաբերյալ:

Հիշյալ արխիվներում գտնվող Կ. Պոլսի գերմանական ու ավստրիական դեսպանների գաղտնի զեկուցագրերը, նամակներն ու հեռագրերը, Էրզրումի ու Հալեպի հյուպատոսների ծածկագրերը և կայզերական Գերմանիայի ու Ավստրո-Հունգարիայի արտաքին քաղաքականության ղեկավարների գաղտնի ցուցումներն ու հրահանգները միաժամանակ լույս են սփռում գերմանա-թուրքական և ավստրո-թուրքական

քաղաքական, ռազմական ու տնտեսական հարաբերությունների զարգացման վրա, ընդհանրապես Եոյակ դաշինքի ներքին ծալքերի վրա:

«Հայկական հալածանքները» բաժինը արժեքավոր է ոչ միայն տակավին չհրապարակված պաշտոնական փաստաթղթերի, այլև վերջին տարիներին լույս տեսած կարևորագույն վավերագրական ժողովածուների, ինչպես նաև թուրքերեն ու եվրոպական լեզուներով առկա հարուստ գրականության ու պարբերական մամուլի ընդգրկումով:

Ի՞նչ նպատակի է ծառայեցնում հեղինակը իր կողմից օգտագործված մեծաքանակ վավերական աղբյուրներն ու գրականությունը:

Հիմնական խնդիրը, որին հետամուտ է լինում պրոֆեսոր Ճրումպեները իր գրքի ողջ շարադրանքում, դա Օսմանյան կայսրության ներքին կյանքում, նրա վարած ներքին ու արտաքին քաղաքականության մեջ կայզերական Գերմանիայի դերի ու ազդեցության հարցն է, որը, հեղինակի կարծիքով, ցայսօր էլ լիովին բացահայտված չէ պատմագիտական գրականության մեջ:

Պետք է ասել, որ հեղինակն այս և հանգուցային մի շարք այլ կարևոր հարցեր քննում է գիտական անաչառությամբ, թեև առանձին դեպքերում բացորոշ է նրա ձգտումը՝ մի փոքր նվազեցնել կամ մեղմացնել կայզերական Գերմանիայի անփառունակ դերը Օսմանյան կայսրության ու նրա ժողովուրդների ճակատագրում:

Հատկապես ուշադրության արժանի է հեղինակի այն եզրակացությունը, որ թուրքական քաղաքականության ղեկավարները, մասնավորապես Էնվերը, պատրաստ էին լայնորեն համագործակցել գերմանացիների հետ ռազմական ասպարեզում, սակայն նրանք վճռականորեն սաստում էին գերմանացիների միջամտությունը Օսմանյան կայսրության ներքին գործերին: Այդ հետևությանը նա հանգում է բազմաթիվ նոր արժանահավատ փաստաթղթերի ուսումնասիրման հիման վրա, որոնք վերստին հաստատում են պատմական այն իրողությունը, որ, ի տարբերություն Արևելքի մի շարք կիսագաղութային կամ կախյալ երկրների, Թուրքիան միշտ էլ հետևել է իր ուրույն, լավ մշակված քաղա-

քական գծին և երբեք չի եղել եվրոպական դիվանագիտության «անմեղ գաղը», կամ գերմանական իմպերիալիզմի «արբանյակը», ինչպես փորձում են ներկայացնել որոշ թուրքագետ-պատմաբաններ: Այս կապակցությամբ պրոֆեսոր Տրումպեները, բանավիճելով վերոհիշյալ տեսակետը պաշտպանող հեղինակների հետ, իրավացիորեն մատնանշում է գերմանա-թուրքական հարաբերությունների գնահատման հարցում տեղ գտած երկու ծայրահեղ մոտեցումները. «Այն ժամանակ, երբ որոշ գիտնականներ (Գ. Կորդտմեյեր, Ֆ. Ֆիշեր և այլն) պնդում են, որ առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին Գերմանիայի ունեցած ընդհանուր ազդեցությունը Օսմանյան կայսրությունում ամենևին էլ արտակարգ չէր, այլ նույնիսկ իր մայրամուտն էր ապրում, մյուսները (Վ. Գոտլիբ, Լ. Ռատման, Ա. Ֆ. Միլլեր և այլն) եզրակացնում են, որ 1914 թ. Օսմանյան կայսրությունը սոսկ Ռայխի արբանյակն էր»: Ապա եզրակացնում որ «թեև Լիման ֆոն Սանդերսի նոր ռազմական միսիայի ժամանումը հանգեցրեց Օսմանյան կայսրությունում Գերմանիայի ընդհանուր ազդեցության էական ուժեղացմանը, դա ամենևին չէր նշանակում, թե երկիրը (Թուրքիան— Ռ. Ս.), որպես Ռայխի հուսալի դաշնակից, դառնում էր սոսկ նրա անօգնական արբանյակը»:

Հեղինակը այստեղ այն միտքն է զարգացնում, որ Թուրքիան իր հերթին պետք էր Գերմանիային և զգալի նշանակություն ուներ վերջինիս համար, և որ այդ բանը քաջ գիտակցում էին երիտթուրքական կառավարողները և հմտորեն ծառայեցնում իրենց շահերին:

Երիտթուրքական պարագլուխների վարած քաղաքականության ինքնուրույն բնույթը (որը վեր են հանել խորհրդային որոշ պատմաբաններ, մասնավորապես պրոֆեսոր Ե. Ղ. Սարգսյանն իր «Թուրքիան և նրա նվաճողական քաղաքականությունն Անդրկովկասում» աշխատության մեջ) պրոֆեսոր Տրումպեների կողմից առավել ցայտուն երևան է բերված ստորև տպագրվող «Հայկական հարցաճանքները» գլխում, որն, ի դեպ, նրա մենագրության ամենաճոխ վայրն և նոր փաստարկներով հագեցված գլուխն է: Ինչպես հեղի-

Նակն ինքն է ճշում, նրա նպատակն է բացահայտել «Գերմանիայի դերը հայկական ողբերգության մեջ»:

Ի՞նչ նոր բան է ավելացնում պրոֆ. Տրումպեները հարցի լուսաբանման մեջ: Մեր կարծիքով, նորն այստեղ այն է, որ մինչ այդ անհայտ, բայց կասկած չհարուցող փաստաթղթերով, իթթիհատական առաջնորդների իսկ կողմից արված հատկանշական խոստովանություններով հեղինակը վեր է հանում նրանց հակահայկական, ցեղասպան քաղաքականության կանխամտածված ու ինքնուրույն բնույթը, չանտեսելով միաժամանակ գերմանական կառավարողների շահադիտական վարքագծի դերը այդ քաղաքականության հաջող ու անարգելք կիրառման գործում:

Հիրավի, արտասահմանյան, ինչպես և խորհրդային որոշ պատմաբանների աշխատություններում գործն այնպես է ներկայացվում, թե իբր գերմանական իմպերիալիզմի ջատագովներն են հղացել, մշակել և եռանդուն կերպով հրահրել հայերի իսպառ ոչնչացման ծրագիրը, և որ երիտթուրքական կառավարությունը իբր կարող էր չկիրառել այդ քաղաքականությունը, որ իբր Գերմանիան ուզում էր, որ հայ ազգը գլխովին բնաջնջվի և այլն: Նման պնդումները մնում են որպես անհիմն ենթադրություններ, մինչդեռ պատմական գրականության մեջ արդեն բացահայտված են հայկական եղեռնի բուն դրդապատճառները, հաստատված, որ հայասպան ծրագրերին երիտթուրքերը հետամուտ էին տակավին 1911—12 թվականներից, միայն հարմար առիթի էին սպասում՝ այն լայն մասշտաբներով ու արագ իրականացնելու համար: Եվ այդ առիթը առաջին համաշխարհային պատերազմն էր: Այստեղ կարևոր չէ, թե 1913-ին Պաուլ Ռորբախի հայտնած միտքը՝ հայերի տեղահանության նպատակահարմարության մասին ի՞նչ դեր խաղաց երիտթուրքերի հայաջինջ ծրագրերում: Օսմանյան կայսրության պատմությունն իսկ քանիցս ապացույցներ է տվել այն բանի, որ ամեն անգամ, երբ սուլթանական բռնակալները հղացել են հպատակ ժողովուրդների ստրկացման ու ոչնչացման բիրտ ծրագրեր, միշտ էլ գտնվել են դրանց իրականացման ձևերն ու եղանակները: Ջիներ տեղահանությունը, կոչնչացվեին տեղերում, քաղաքներից դուրս ու գյուղերում, տղամարդ-

կանց բանակում (ինչպես որ արվեց) և այլն: Մի՞թե այդպես չվարվեցին 1894—1896 թթ., խաղաղ պայմաններում ոչնչացնելով 300.000 արևմտահայերի: Ուրիշ խնդիր է, որ կայզերական Գերմանիան (ինչպես և Ավստրո-Հունգարիան), որպես Թուրքիայի դաշնակից, պատասխանատու է այն բանի համար, որ ելնելով իր շահադիտական նպատակներից, նա ըստ էության նպաստել է երիտթուրքերի հանցավոր քաղաքականության իրականացմանը, ուրեմն և մեղսակից է հայկական եղեռնին:

Պրոֆ. Տրումպեները գրում է, թե իբր «Բեռլինի ու Վիեննայի պետական գործիչները նողկում էին ու ցնցված էին թուրքերի դաժան քաղաքականությունից»: Այստեղ հնարավոր չէ համաձայնվել հեղինակի հետ, որովհետև Վիլհելմ II-ի և նրա կառավարության ազդեցիկ անդամների հայատյացությունն ու մոլի թուրքասիրությունը քաչ հայտնի են և ապացուցման կարիք չունեն: Եթե պրոֆեսոր Տրումպեները հիշատակեր այդ մասին, ապա միանգամայն հասկանալի կդառնար, թե ինչո՞ւ էին կայզերը, Բետման-Հոլվեգը և մյուսները լռելյայն հավանություն տալիս Թալեաթի ու Էնվերի անմարդկային արարքներին:

Խորհրդային ընթերցողին չի կարող համոզել նաև հեղինակի այն պնդումը, թե իբր Կ. Պոլսի գերմանական դեսպան Վանգենհայմը «համակված էր Թուրքիայի բուն իսկ գոյությանը սպառնացող հայկական ընդհատակյա աճռելի մի շարժման առկայության գաղափարով», ուստի և հայտնում է Բեռլին՝ հանդես չգալ Էնվերի հայասպան ծրագրի դեմ: Չի կարող համոզել, որովհետև Վանգենհայմը ոչ մի հիմք չուներ նման սին գաղափարով համակվելու, քանի որ նրան հասնող զեկուցագրերը այլ բան էին վկայում: Պրոֆեսոր Տրումպեներն ինքը հետագա շարադրանքում բերում է հենց Վանգենհայմի խոսքերն այն մասին, որ արևելյան նահանգներում սկսված տեղահանության թափն ու բնույթը այլևս կասկած չեն թողնում այն բանում, որ «Բարձր Դուռը (սուլթանական կառավարությունը —Ռ. Ս.) իսկապես ձգտում է ոչնչացնել հայ ցեղը թուրքական կայսրությունում»:

Տպագրվող գլխում կան մի քանի այլ անհամոզիչ մտքեր ու փաստարկներ: Այսպես, պրոֆ. Տրումպեների կարծիքով,

կայզերական Գերմանիայի զորքերը կարող էին Հայաստան մտնել «զուտ մարդասիրական նպատակներով՝ հայ ժողովրդի մնացորդներին փրկելու համար»: Այնուհետև, հեղինակը անտեղյակություն է հանդես բերում գրելով, թե իբր 1918-ին «թուրքական կանոնավոր զորքերը հավաքաբար ուղղակիորեն ներգրավված չէին Բաքվի մի քանի հազար հայերի կոտորածի մեջ», մինչդեռ նրանց մասնակցությունը Բաքվի մոտ 30.000 հայերի քստմնելի ջարդում հայտնի փաստ է:

Հասկանալի չէ նաև պրոֆեսոր Տրուպկենների պատրաստակամությունը՝ հավատալու տարագիր հայերին օգնելու Ջեմալի խոստման «անկեղծությանը»: Եվ, վերջապես, հեղինակը անհետևողականություն է հանդես բերում՝ բուն գլխում գերմանական ղեկավարների շահադիտական քաղաքականությունը քննադատելուց հետո վերջում ինչ-որ չափով փորձելով արդարացնել նրանց թուրքապաշտպան դիրքորոշումը:

Հեղինակի այս և մի քանի այլ դրույթներին ու փաստարկներին քննադատաբար մոտենալու դեպքում, ստորև տպագրվող գլուխը կարող է օգտակար լինել Թուրքիայի և հայ ժողովրդի նոր շրջանի պատմությամբ զբաղվող մասնագետներին ոչ միայն պարունակվող հարուստ վավերագրական նյութերով, այլև այդ նյութերի հետքերով գնալու և նոր փաստաթղթեր հայտնաբերելու հեռանկարներով:

Ստորև տպագրվող նյութը անգլերենից թարգմանել ենք Վ. Ա. Դիլոյանի հետ միասին:

«Նախորդ հարյուրամյակի ընթացքում իրենց անկախության համար բախկանյան տարբեր ժողովուրդների մղած բարեհաջող պայքարից հետո, Օսմանյան կայսրությունում 1914-ին մնացած ամենաստվար քրիստոնյա ազգությունը հայերն էին, որոնց մեծամասնությունը բնակվում էր Անատոլիայի արևելյան շրջաններում[1]: Դարերով հանդուրժելով օրինականացված խտրականությունը, տագնապներն ու բիրտ կառավարումը, որի համար նրանք «լոյալ

համայնքի» (Millet; sadika) կոչմանն էին արժանացել իրենց թուրք տերերի կողմից, Թուրքահայաստանի հայերից շատերը XIX դարի ընթացքում աստիճանաբար դարձել էին համառ և ազգայնականորեն տրամադրված: Քանի որ արդար կառավարման, համընդհանուր արդարության և տեղական ինքնավարության նրանց պահանջները բազմիցս մերժվել էին Բարձր Դռան կողմից, և քանի որ եվրոպական տերությունների դիվանագիտական ջանքերը նրանց օգտին հանգեցրել էին սոսկ թղթե ռեֆորմների, հայկական համայնքի որոշ տարրեր շրջվեցին դեպի «անկեգալ» և բոնի մեթոդները՝ թուրքական լուծը թոթափելու համար: 1860-ական թվականներից հետո առաջ եկան մի շարք հեղափոխական ընկերություններ ու կուսակցություններ, և 90-ական թվականների սկզբին հայ հեղափոխական շարժման ոադիկալացումը իր արտահայտությունը գտավ հնչակյան կուսակցության և հայ հեղափոխական միության կամ դաշնակցության ստեղծման մեջ: Այն ժամանակ, երբ հնչակը նպատակ էր դնում ստեղծել անկախ հայկական պետություն, դաշնակցությունը հետամուտ էր լինում արմատական քաղաքական ու սոցիալական ռեֆորմների՝ Օսմանյան կայսրության շրջանակներում: Երկու խմբերն էլ հույս ունեին ստանալու Եվրոպայի եռանդուն աջակցությունը հայկական հարցում, սակայն այդ հույսը պատրանք էր[2]: Երբ 1890-ական թվականների կեսերին սուլթան Աբդուլ Համիդ II-ը բարձրացող հայկական հուզումներին պատասխանեց հազարավոր հայերի ջարդով Կ. Պոլսում և ամենուրեք՝ կայսրության սահմաններում, եվրոպական տերությունները բավարարվեցին բազմաթիվ անարդյունավետ դիվանագիտական բողոքներով և մի քանի հայ խոովարարների պատըսպարմամբ[3]:

Աբդուլ Համիդի բռնակալական ռեժիմի տապալումը և սահմանադրական կառավարման ձևական վերականգնումը երիտթուրքերի կողմից 1908-ին, օսմանյան շատ հայերի կողմից սկզբում ողջունվեց, որպես նոր դարաշրջանի սկիզբ, սակայն շատ շուտով նրանց հույսերը խորտակվեցին: Թեև հայկական որոշ խմբեր ձգտում էին համագործակցել նոր ռեժիմի հետ, երիտթուրքերը շուտով հասկաց-

նել տվին, որ իրենք ամենևին մտադիր չեն կայսրության ոչ թուրք համայնքներին շնորհելու քաղաքական հավասարություն, ինչի որ նրանք ձգտում էին[4]:

1909-ին հազարավոր հայեր սրի քաշվեցին մահմեդական խուժանի կողմից այսպես կոչված Կիլիկյան ժամերգության ընթացքում: Թեև Կ. Պոլսի կենտրոնական կառավարությունը, հնարավոր է, ուղղակի կերպով մասնակից չէր այս նոր հանցագործությանը, հայերն այսուհետև այլևս դադարեցին հավատալ երիտթուրքերին[5]:

Հաջորդ մի քանի տարիների ընթացքում Բ. Դուռը պաշտոնապես հաստատեց հայերի օրինական ստատուսը և նրանց վրա տարածեց զինվորական ծառայության բոլոր պարտավորություններն ու արտոնությունները, սակայն շատ գավառներում հայ ազգաբնակչության նկատմամբ հալածանքների ավանդական ձևերն ու մերթընդմերթ կիրառվող գազանությունները (հատկապես քրդերի կողմից) ըստ էության շարունակվում էին, ինչպես նախկինում: Երկար բանակցություններից հետո Բարձր Դուռը 1914-ի փետրվարին Ռուսաստանի հետ կնքված պայմանագրում համաձայնվեց սկսել «ռեֆորմների» մի նոր շրջան հայկական նահանգներում, սակայն եվրոպական երկու գլխավոր-հրահանգիչներն էլ, որոնք պիտի վերահսկեին այդ ռեֆորմների գործադրումը, ժամանեցին ճիշտ այն պահին, երբ բռնկվեց առաջին համաշխարհային պատերազմը, և մինչ տարին կավարտվեր, Բարձր Դուռը առանց այլևայլության նրանց տուն ուղարկեց[6]:

Թեպետ Պոլսի հայ պատրիարքը և տարբեր այլ ներկայացուցիչներ պատերազմը սկսվելուց անմիջապես հետո հրապարակայնորեն հայտարարեցին, որ Օսմանյան կայսրությունում բնակվող հայերը լոյալ կերպով կպաշտպանեն կառավարությանը, միանգամայն պարզ էր, որ թուրքահպատակ շատ հայեր հավանություն չէին տալիս Բարձր Դռան իննտերվենցիոնիստական գծին կամ ուղղակի ապավինում էին Անտանտի հաղթանակին՝ թուրքերի նկատմամբ[7]:

Հակառակ շատ հեղինակների պնդումների, միանգամայն ակներև է այն, որ որոշ հայեր Օսմանյան կայսրու-

թյունում զբաղված էին խոովարարությամբ, լրտեսությամբ կամ անցնում էին ռուսների կողմը[8]: Մյուս կողմից հարկ է ընդգծել, որ օսմանյան հայերի ճնշող մեծամասնությունը ոչ մի ձևով ընդգրկված չէր որևէ բացահայտ անլոյալ գործողությունների մեջ, և բազմաթիվ թուրք հեղինակների այն պնդումը, թե իբր Անդրկովկասի թուրքական ճակատին մոտ ընկած հայկական նահանգները լի էին խռովություններով, բացահայտ սխալ է: Մի քանի գերմանական ապաներ, որոնք գտնվում էին այդ շրջանում պատերազմի առաջին ամիսներին, իրենց զեկույցներում հաստատում են, որ մինչև 1915-ի ապրիլը հայկական մարզերը ըստ էության հանգիստ էին[9]:

1915 ԹՎԱԿԱՆ: ՍԱՐՍԱՓՆԵՐԻ ՏԱՐԻ

Թուրքերի և հայերի միջև բացահայտ կռվի բռնկումը Վանում և մի քանի այլ վայրերում 1915-ի ապրիլին գնահատվել է թուրք հեղինակների մեծ մասի և արևմտյան որոշ հեղինակների կողմից, որպես հայ ազգաբնակչության ըմբոստության ապացույց, մի մեկնաբանություն, որը իրական անցքերի սոսկ պարզունակացված վարկածն է[10]: Ավելին, եթե նույնիսկ ճշմարիտ է, որ իսկապես եղել են հայկական առանձին «պրովոկացիաներ» դա հազիվ թե արդարացնի «հակամիջոցների» այն եղանակը, որ կիրառվեց օսմանյան իշխանությունների կողմից:

Իրականում, եղած ապացույցների մեծ մասը հանգեցնում է այն եզրակացության, որ հայ ազգաբնակչության սիստեմատիկ սպանությունները արևելյան նահանգներում արդեն իսկ ծրագրված էին «Իթթիհադի» ռեժիմի կողմից, և որ հուզումները Վանում և այլուր պարզապես հարմար առիթ ծառայեցին զանգվածային տեղահանությունների և ոչնչացման ծրագիրը մեծ մասշտաբով իրագործելու համար[11]:

Սարսափելի մանրամասները 1915 թվականի և հետագա տարիների հայկական «տեղահանությունների», որոնց ընթացքում, հավանական է, մեկ միլիոնից ավելի տղամարդիկ, կանայք ու երեխաներ զոհվեցին, քաջ հայտնի են և հետագա ոճրային ճշտումների կարիք ունեն միայն[12]: Մինչդեռ

Գերմանիայի դերը հայկական այս ողբերգության մեջ տակավին մնում է աշխույժ բանավեճերի առարկա և թարմ հետազոտության կարիք ունի:

Հակառակ ժամանակակից առանձին հեղինակների պնդման, օսմանյան հայերի հետապնդումը պատերազմի տարիներին ո՛չ հրահրվել, և ո՛չ էլ հավանության է արժանացել գերմանական կառավարության կողմից[13]: Սակայն, անշուշտ, կան ուրիշ ծանրակշիռ փաստարկներ, որոնք կարող են առաջ քաշվել ինչպես նրա, այնպես էլ ավստրո-հունգարական կառավարության դեմ: Կենտրոնական զույգ տերությունների պետական գործիչները և նրանց մի քանի ներկայացուցիչները Կ. Պոլսում մեղավոր էին երևույթների իրենց թյուր մեկնաբանման ու բարոյական անգթության համար և այն բանում, որ չափազանց մեծ անհանգստություն էին հանդես բերում այն ամենի նկատմամբ, ինչը քաղաքական տեսակետից շահավետ էր ներկա պահին կամ կարող էր այդպիսին լինել ապագայում:

Չնայած համոզիչ ապացույցներին, նրանք համաձայնեցին Բարձր Դռան կեղծ մեղադրանքներին, որ իբր վերջինիս հակաօսմանական քաղաքականությունը թելադրվում էր արևելյան նահանգներում հավանորեն տարածված խռովությունների առկայությամբ: Ավելին, նույնիսկ այն բանից հետո, երբ ակնհայտ դարձավ, որ թուրքական «անվտանգության միջոցառումները», ներառյալ ամբողջ նահանգների դաժան տեղահանությունը, մասն են կազմում կանխամտածված այն ջանքերի, որոնց նպատակն է ցրել և ոչնչացնել Փոքր Ասիայի հայ ազգաբնակչությունը, գերմանական և ավստրո-հունգարական կառավարությունները վճռականորեն հրաժարվեցին այդ ուղղությամբ որևէ գործնական քայլ անելու:

Թեև Բեռլինի ու Վիեննայի պետական գործիչները նողկում էին և ցնցված էին թուրքերի դաժան քաղաքականությունից և Բարձր Դռանն ուղղեցին բազմաթիվ նախազգուշացումներ ու բողոքներ, նրանք ավելի շատ շահագրգռված էին այն բանում, որ թուրքերը շարունակեն մնալ պատերազմական վիճակում, քան այն բանում, որ իրենցից վանեն Բարձր Դռանը, գործադրելով նրա վրա իրական, ուժեղ ճըն-

շում: Սակայն պետք է ավելացնել, որ կային մի շարք գերմանական ու ավստրո-հունգարական պաշտոնական անձինք, մասնավորապես դիվանագիտական ու հյուպատոսական, ովքեր հավանություն չէին տալիս նման շահագիտական քաղաքականությանը և որոնց ջանքերը՝ դադարեցնելու կամ մեղմացնելու հայերի դեմ ձեռնարկված բիրտ միջոցառումները, շատ ավելի համան էին, քան մինչ այդ կարծում էին:

Թեև թուրքերի ու հայերի միջև արևելյան որոշ վիլայեթներում ծագած առանձին «միջադեպերին» վերաբերյալ լուրերն ու հաղորդումները պատերազմի հենց սկզբից թափանցեցին Կ. Պոլիս, միայն 1915-ի մարտին էր, որ թուրք-հայկական հարաբերությունների վատթարացումը միանգամայն ակնհեն դարձավ Կ. Պոլսի գերմանական ու ավստրո-հունգարական դիտորդներին[14]:

Այն բանից հետո, երբ սառցվեցին հակասական տեղեկություններ հայկական որոշ շրջաններում վերջնաթաց հուզումների և Զեյթունում հայ «դասալիքների» ու կառավարական ուժերի միջև տեղի ունեցած զինված ընդհարման մասին, դեսպան Վանգենհայմը ապրիլի առաջին կեսին մի քանի անգամ դիմեց Բ. Դոանն ու հայ պատրիարքին՝ կոչ անելով հանգստություն և «փոխադարձ լավ հարաբերություններ պահպանել»[15]: Միաժամանակ, նա մշտական շփման մեջ մտավ Կ. Պոլսի զանազան հայկական կազմակերպությունների հետ և ունկնդրեց նրանց բողոքներին՝ թուրքական պրովոկացիաների ու չարագործությունների վերաբերյալ, բայց երբ նրանք ակնարկեցին այն մասին, որ Գերմանիան պաշտոնապես ապահովի հայ միլլեթի (համայնքի) «պաշտպանությունը» և լրացուցիչ հյուպատոսական պաշտոնյաներ նշանակի արևելյան վիլայեթներում, Վանգենհայմը մերժեց նրանց: Ինչպես նա բացատրում էր Բետմանհոլվեգին ապրիլի 15-ին, հայերի ցանկությունը ձեռք բերել Գերմանիայի պաշտոնական հովանավորությունը, անշուշտ, հասկանալի էր, հատկապես այն ժամանակից, երբ Անտանտի պետությունները այլևս ի վիճակի չէին աջակցել նրանց, սակայն, եթե Գերմանիան համաձայնվի բավարա-

րել հայերի խնդրանքները, նա անկասկած, կշահի Բարձր Դռան դժգոհությունը:

«Նման մի քայլ անելու համար պաշը խիստ անբնպատ է, որովհետև Բարձր Դուռը հենց նոր է սկսել վերջ դնել հովանավորելու իրավունքին, որը օտար այլ պետությունները փորձում են օգտագործել թուրքահպատակների հարցում: Ավելին. նա (Բարձր Դուռը) ստիպված է հաշվի նատել թուրք տարրերի ազգային զգացմունքների հետ, որոնք խիստ ուժեղացել են վերջին մի քանի տարիների ընթացքում տեղի ունեցած իրադարձությունների հետևանքով»:

Վանգենհայմը եզրակացնում է, որ ինքը չի կարող խորհուրդ տալ լրացուցիչ գերմանական հյուպատոսներ նշանակելու արևելյան վիլայեթներում: Այդ բանը, հավանական է, ոչ միայն կսրեր Գերմանիայի փոխհարաբերությունները Բարձր Դռան հետ, այլև «իշխանություններին ամբողջովին կշրջեր հայերի դեմ և, արդյունքում, կստացվեր բոլորովին հակառակը այն բանի», ինչ որ իրենք հայերն էին ուզում[16]:

Մինչ այս հաղորդումը կհասներ Բեռլին (այն ուղարկվել էր դիվանագիտական փոստով և տեղ հասել ապրիլի 22-ին), Վանում թուրք-հայկական արյունալի «բախումների» և արևելյան մի քանի այլ վիլայեթներում ծայր առած բռնությունների վերաբերյալ լուրերը սկսել էին թափանցել Կ. Պոլիս[17]:

Ապրիլի 24-ին Վանգենհայմը անձամբ հրավիրվում է թուրքական ներքին գործերի մինիստրություն և նրան խիստ գաղտնի հայտնվում է այն մասին, որ կանոնավոր ապրուստամբություն է բռնկվել Վանում և նրա շրջակայքում, և որ ձեռք են առնված համապատասխան հակամիջոցառումներ: Երբ դեսպանը հույս է հայտնում, որ կառավարական ուժերը կարգ ու կանոն կպահպանեն և կխուսափեն ամեն մի քայլից, որը «կարող է դիտվել, որպես քրիստոնյաների ջարդ», մինիստրության պաշտոնյաները կիսաբերան պատասխանում են, որ «Վանի կայազորը բաղկացած է վատ վարժեցված ջոկատներից և հազիվ թե հնարավոր լինի ամբողջովին խուսափել ծայրահեղություններից»[18]:

Հայկական որոշ շրջաններում խուժանի կողմից գործադրվող բռնությունների և հարաճուն լարված դրության վե-

րաբերյալ մի շարք նոր տեղեկություններ ստանալուց հետո, Վանգենհայմը ապրիլի 28-ին Էրզրումի գերմանական փոխհյուպատոս Մաքս ֆոն Շոյբներ-Ռիխտերին լիազորում է միջամտել «չարդերին» և այլ ծայրահեղություններին, որոնք կարող են բռնկվել իր շրջանում, սակայն, նախազգուշացնում է նրան՝ չստեղծել տպավորություն, թե «մենք ուզում ենք օգտագործել հայերին հովանավորելու իրավունքը կամ միջամտել իշխանությունների գործողություններին»[19]:

Այդ նույն ժամանակ Կ. Պոլսում ձերբակալվեցին հարյուրավոր հայեր, և նրանց մեծ մասին, որոնց մեջ կային բազմաթիվ մասնագետներ, հոգևորականներ, քաղաքական գործիչներ, գրեթե անմիջապես քշեցին Անատոլիայի խորքը: Մի քանի օր հետո Թալեաթը գերմանական դեսպանության առաջին թարգմանչին բացատրում է, որ այդ մարդկանց տարագրումը ամենից առաջ անվտանգության միջոցառում էր, թեև նա ընդունում է, որ Բարձր Դուռը բոլոր դեպքերում չէր կարող երկար հանդուրժել անջատ քաղաքական կազմակերպությունների գոյությունը կրոնական համայնքներից որևէ մեկի ներսում: Մինիստրը խոստովանում է նաև, որ հայ տարագիրներից շատերը, անկասկած, ոչնչում մեղավոր չեն, սակայն անմիջապես ավելացնում է, որ շուտով ուղղիչ քայլեր կձեռնարկվեն և որ օտար «միջամտությունն» ավելորդ և անցանկալի է[20]:

Վանգենհայմը ակնհայտորեն ի նկատի ուներ, որ չկան ապացույցներ այն մասին, որ նա որևէ բան ձեռնարկել է մայրաքաղաքից տարագրվողների օգտին: Նրա ավստրո-հունգարական կոլեգան որդեգրել էր նույն պասսիվ դիրքորոշումը: Երբ ամերիկյան դեսպան պարոն Մորգենթաուն վերջինիս խորհուրդ տվեց միջամտել Բարձր Դռան առջև տարագրվողների օգտին, Պալավիչինին հեռագրեց Վիեննա, որ ինքը ամենևին մտադիր չէ նման քայլի դիմելու: Ինչպես նա ինքն է արտահայտվում, քիչ հավանական է, որ Բարձր Դուռը համաձայնվեր նրա խորհրդին, նա միայն դժգոհ կմնար իր սեփական գործերին նման միջամտությունից[21]: Երկու օր հետո, սակայն, Պալավիչինին որոշում է, որ հայկական հարցը պահանջում է ինչ-որ քայլերի դիմել, քանի որ սկսել էին ստացվել գերմանական ու ավստրո-

հունգարական մի շարք հյուպատոսների հաղորդումները գավառներում ծայր առած բացահայտ ջարդերի վերաբերյալ.

«Նկատի առնելով քաղաքական այն նշանակությունը, որ հարցը սկսում է ստանալ ներկայումս (հեռագրում էր նա Վիեննա մայիսի 1-ին), ես կարծում եմ, որ շուտով հնարավորություն կունենամ թուրք պետական գործիչներին բարեկամաբար նախազգուշացնելու, թե ընդհանուր իրադրության վրա ինչ ազդեցություն կարող են ունենալ Թուրքիայի քրիստոնյաների դեմ ձեռնարկվող անմարդկային արարքները, քանի որ մեր թշնամիներին կտրվի մի նոր պատրվակ՝ իրենց ամբողջ ուժն ուղղելու Թուրքիայի դեմ»[22]:

Հավանաբար, «արձագանքները» իսկապես անհանգստացնում էին դեսպանին, որովհետև նա հնարավորություն գտավ նույն օրն իսկ հանդիպելու Թալեաթին: Բալաուսպլաց ուղարկված իր զեկուցագրում դեսպանը մատնանշել էր, որ հայկական խողովության ճնշումը պետք է խնամքով կատարվի և որ, մասնավորապես, պետք է խուսափել «կանանց ու երեխաներին հետապնդելուց»՝ Թուրքիայի հակառակորդներին պրոպագանդի լավ նյութ չմատակարարելու համար: Իր պատասխանում Թալեաթը ընդունում է, որ գավառներում զոհվել են հազարավոր մարդիկ, և ոչ միայն հայեր, սակայն ժխտում է կանանց ու երեխաների դեմ կիրառված որևէ դաժան արարքի գոյության փաստը: Վերջում մինիստրը շնորհակալություն է հայտնում դեսպանին «նախազգուշացման» համար և հավաստիացնում նրան, որ Բարձր Դուռը կհետապնդի միմիայն «մեղավորին»[23]:

Վերջին երկու շաբաթվա ընթացքում Բարձր Դուռը և արևելյան նահանգների իշխանությունները պարբերաբար հայտնաբերում էին պետության դեմ ուղղված հայկական դավադրությունները հաստատող ապացույցներ: Քանի դեռ կռիվը հայերի և կառավարական զորքերի միջև շարունակվում էր Վանում և այլուր, ինչպես գերմանացիները, այնպես էլ ավստրո-հունգարացիները հեշտությամբ համաձայնվում էին այն կարծիքի հետ, որ թուրքերն իրենց ձեռքում որպես փաստարկ ունեին բացահայտ ապստամբությունը: Մյուս կողմից, մայիսի կեսերից արևելյան նահանգների գերմա-

նական հյուպատոսների զեկուցագրերից գնալով ավելի պարզ էր դառնում, որ թուրքական «խաղաղեցման» ծրագիրը շատ շրջաններում չարդարացված դաժան բնույթ է ընդունել[24]: Մայիսի 18-ին Շոյբներ-Ռիխտերը Էրզրումից հեռագրում էր, որ տեղահանություններն իր շրջանում «սարսափելի թշվառության պատճառ են դարձել», քաղաքի շրջակայքում հազարավոր կանայք ու երեխաներ են կուտակվել առանց սննդի, և որ ինքը ուզում է միջամտել թուրք զինվորական հրամանատարության առջև՝ այդ «անխմաստ» տեղահանությունների հարցով: Վանգենհայմը անմիջապես նրան լիազորում է շարունակել նույն ոգով, սակայն, ըստ երևույթին, փորձ չի անում հարցը հասցնել Բարձր Դռանը: Ոչ էլ Պալավիչինին է հարմար գտնում այդ հարցին միջամտել, ինչպես նրան վերստին խորհուրդ էր տվել Մորգենթաուն[25]:

Մայիսի 24-ին բրիտանական, ֆրանսիական և ռուսական կառավարությունները հանդես եկան հրապարակային միացյալ նախազգուշացումով Բարձր Դռանը, այն է, որ իրենք Օսմանյան կայսրությունում վերջերս սկսված հայերի հալածանքներն ու զանգվածային սպանությունները դիտում են որպես «մարդկության ու քաղաքակրթության դեմ» ուղղված մի քաղաքականություն, որի համար նրանք անձնական պատասխանատվության կենթարկեն օսմանյան կառավարության «բոլոր անդամներին», ինչպես նաև նրանց ենթակա այն պաշտոնյաներին, ովքեր մեղավոր են այդ գործում[26]: Ի պատասխան դրան, հունիսի 24-ին Բարձր Դուռը, Վանգենհայմի հետ խորհրդակցելուց հետո, հանդես եկավ սուր լեզվով գրված հրապարակային հայտարարությամբ: Ամենևին չընդունելով կանխամտածված կամ կազմակերպված ջարդերի փաստը», Բարձր Դուռը հայտարարում էր, որ նա միայն օգտագործում է հեղափոխական շարժման դեմ ինքնապաշտպանվելու իր օրինական իրավունքը, և որ պատասխանատվությունը այն ամենի համար, ինչ-որ կատարվել է հայկական շրջաններում, ընկնում է բացառապես հենց իրենց՝ Անտանտի տերությունների վրա, որովհետև նրանք են առաջին հերթին կազմակերպել ու ուղղություն տվել հեղափոխական շարժմանը[27]:

Այս հայտարարությունը մամուլին հանձնելուց մի քանի օր առաջ Էնվերը տեղեկացնում է Վանգենհայմին, որ ինքը մտադիր է ուժեղացնել հակաապստամբական ծրագիրը մի շարք ճանապարհներով՝ փակելով հայկական շատ դպրոցներ, ճնշելով հայկական մամուլը, արգելելով հայերին օգտագործել փոստային թղթակցությունը, և բոլոր կասկածելի ընտանիքներին ապստամբության ներկա կենտրոններից տեղափոխելով Միջագետք: Էնվերը նաև հույս է հայտնում, որ Գերմանիան չի ձգտի միջամտել: Վանգենհայմը, տակավին համակված այն գաղափարով, թե իբր առկա է հայկական ընդհատակյա աուռելի մի շարժում, որը սպառնում է Թուրքիայի բուն իսկ գոյությանը, անմիջապես հայտնում է Վիլհելմշտրասե Էնվերի ծրագրի մասին, առաջարկելով հանդես չգալ դրա դեմ, թեև այն «անկասկած, մեծ փորձությունների կենթարկի հայ ազգաբնակչությանը»[28]:

Բեռլինի արտաքին գործերի մինիստրությունը, որը նախորդ շաբաթներին այնքան էլ մեծ հետաքրքրություն հանդես չէր բերել հայկական հուզումների նկատմամբ և հավանաբար միանգամայն գոհ կլիներ թողնելու, որ Կ. Պոլսի իր ներկայացուցիչը ինքը որոշի իր սեփական վարվելակերպը, համաձայնվում է Վանգենհայմի առաջարկին: Այդպիսին չէր Գերմանա-հայկական ընկերության և գերմանական «Orient Mission-ի» նախագահ դոկտոր Յոհաննես Լեպսիուսի դիրքը, որը մերձավոր կապեր ուներ Վիլհելմշտրասեի պաշտոնյաների հետ և ազատ մուտք ուներ՝ հայերի վերաբերյալ ստացվող հեռագրերին ծանոթանալու: Հենց որ Լեպսիուսը իմացավ Էնվերի վերջին պլանի մասին, նա եզրակացրեց, որ իրերի վիճակը բավականին հեռու է գնացել, և որ ինքը պետք է մեկնի Կ. Պոլիս՝ հայկական հարցը տեղում ուսումնասիրելու համար: Թուրքերի և հայերի միջև որպես միջնորդ հանդես գալու նրա պլանը հավանության արժանացավ Բեռլինի արտաքին գործերի մինիստրության կողմից, սակայն Վանգենհայմը չպետք է իմանար այդ մասին: Ինչպես վերջինս բացատրում էր Վիլհելմշտրասեին հունիսի 9-ին, Բարձր Դռան հակահայկական միջոցառումները արդեն լիովին իրագործվում էին, և քիչ հույս

կար, որ Լեպսիուսը կարողանար որևէ էական քայլ անել այդ ուղղությամբ և նրա հայտնվելը Կ. Պոլսում կարող էր միայն անհանգստություն պատճառել դեսպանությանը, քանի որ Բարձր Դուռը չէր ուզում, որ նա գա[29]:

Չնայած այդպիսի կտրուկ մերժմանը, Լեպսիուսը հրաժարվեց համակերպվել: Գերմանա-հայկական ընկերության և «Orient Mission-ի» ղեկավարների օգնությամբ, որոնց թվում էր հայտնի հրապարակախոս Պաուլ Ռորբախը, նա անհապաղ կրկնեց իր հարցումը՝ ուղևորության թույլտվություն ստանալու համար: Հունիսի 13-ին Ցիմերմանը հաղորդում էր Վաշինգտոնին, որ Լեպսիուսի ուղևորը կարող է օգտակար լինել և որ դեսպանությունը կհաղթահարի Բարձր Դռան ընդիմությունը[30]:

Այդ նույն ժամանակամիջոցում Էրզրումի, Հալեպի և Մոսուլի հյուպատոսություններից գերմանական դեսպանությանն հասան մի ամբողջ շարք հաղորդումներ տարբեր տեղերում հայերի ջարդի կամ նրանց նկատմամբ գործադրված դաժանությունների վերաբերյալ: Հունիսի 17-ին Վանգենհայմն, այնուամենայնիվ, իրեն ստիպված զգաց Բետման-Հոլվեգին տեղեկացնելու, որ զանգվածային անգութ տեղահանությունները արևելյան նահանգներում անկասկած այլևս «սոսկ ռազմական նկատառումներից» չեն բխում: Թալեաթը,— ավելացնում էր նա,— ընդունել է նույն բանը դեսպանության մի պաշտոնյայի հետ ունեցած վերջին զրույցի ժամանակ, իսկ հայկական պատրիարքը ներկայումս հաստատ համոզված է, որ Բարձր Դուռը նպատակադրվել է բնաջնջել ողջ հայ ազգաբնակչությանը: Երբ այս տագնապալի հեռագիրը հասավ Վիլհելմշտրասե, ինչ-որ մեկը ընդգծել էր հիմնական միտքը, սակայն դա ըստ էության այն ամենն էր, ինչ-որ արվեց այդ կապակցությամբ[31]:

Պատասխան չստանալով, թողնված սոսկ Բեռլինից եկող ընդհանուր ցուցումներին, Վանգենհայմը հունիսի մնացած օրերի ընթացքում, թվում է, քիչ էր զբաղված հայկական հարցով. նա ավելի շատ զբաղված էր արևելյան վիլայեթներից ստացվող հյուպատոսական սարսափելի զեկուցագրերի ընթերցումներով և հյուպատոսներին հրահանգելով, որ նրանք կարող են բողոքել գավառական իշխանությու-

ներին՝ նրանց շրջաններում կատարված հանցագործությունների կապակցությամբ: Միշտ է, մի դեպքում Վանգենհայմը հավաստիացրել է Էրզրումի հյուպատոսին, որ ինքը զուգահեռ ջանքերով կպաշտպանի վերջինիս բողոքները նահանգապետին, բայց արդյո՞ք նա հետևեց այդ բանին իրականում, դժվար է ասել: Այն, ինչ որ մեզ որոշակի հայտնի է, դա այն է, որ Վանգենհայմը ձեռք բերեց Բարձր Դռան պաշտոնական համաձայնությունը Լեպսիուսի Կ. Պոլիս մեկնելու վերաբերյալ, թեև Թալեաթը հասկանալի էր դարձրել, որ անցանկալի այցելուին թույլ չի տրվի մուտք գործել նահանգները[32]:

Գոյություն ունեցող ապացույցների համաձայն, Վանգենհայմի ավստրո-հունգարական կոլեգան ևս հայկական հարցում իր գործելակերպի վերաբերյալ որևէ հրահանգ չէր ստացել վերադաս ղեկավարներից: Ամեն ինչ գալիս է հաստատելու, որ նա ևս մնացել էր պասսիվ՝ հունիսի վերջին կեսի ողջ ժամանակամիջոցում: Ի վերջո, ամսի վերջին օրերին, երկու դեսպանները հանդիպում են և որոշում, որ իրենք, առանց համապատասխան մարմիններից հատուկ հրահանգներ ստանալու, ինչ որ բան պետք է անեն՝ հայկական շրջաններում իրենց ընդհանուր դաշնակցի կողմից անցկացվող տեռորի կապակցությամբ: Ինչպես ավելի ուշ բացատրում էր Վանգենհայմը Բետման-Հոլվեգին հասցեագրված հակասական զեկուցագրում, արևելյան նահանգներում սկսված տեղահանության թափն ու բնույթը այլևս կասկած չէին թողնում այն բանում, որ Բարձր Դուռը «իսկապես» ձգտում է «ոչնչացնել» հայ ցեղը թուրքական կայսրությունում, ուստի Գերմանիայի համար էական է արձանագրել, որ նա հավանություն չի տալիս այն բանին, ինչ որ անում են թուրքերը[33]:

Պալավիչինին առաջին քայլն արեց: Հուլիսի 1-ին նա հայտնեց Թալեաթին, որ առանց խտրության բոլոր տղամարդկանց ու երեխաների տեղահանությունները «թվում են դժվար արդարացուցիչ» և որ հակահարձակման ողջ ծրագիրը շատ վատ տպավորություն է ստեղծել[34]: Վանգենհայմը մի քայլով ավելի ուշ հանդես եկավ՝ հուլիսի 4-ին մեծ վեզիրին ներկայացնելով դիվանագիտական խոսքերով գրո-

ված, բայց բավականին բացահայտ մի «հուշագիր» հայկական հարցի վերաբերյալ, որի պատճենները նա ավելի ուշ ուղարկեց նաև օսմանյան արտաքին գործերի և ներքին գործերի մինիստրներին:

«Թեև գերմանական կառավարությունը որևէ առարկություն չուներ պատժիչ միջոցառումների դեմ,— ասված էր հուշագրում,— որոնք «թելադրված էին ռազմական նկատառումներով» և նպատակ ունեին ամրապնդել Օսմանյան կայսրության ներքին անվտանգությունը, նա չի կարող անտեսել «այն վտանգը», որ ստեղծվում է «մեղավորների և անմեղների դեմ ուղղված անխտրական միջոցառումներով և նրանց զանգվածային տեղահանությամբ, առանձնապես, երբ այդ միջոցառումները ուղեկցվում են դաժան արարքներով՝ ջարդերով ու թալանով»: Եվ քանի որ նման միջադեպերը չէին կանխվել «տեղական իշխանությունների կողմից», արտասահմանում, մասնավորապես Միացյալ Նահանգներում, շատ վատ տպավորություն է ստեղծվել և գերմանական կառավարությունը պարտավորված է զգում Բարձր Դռանը մատնանշելու, որ ամբողջ այդ հարցը կարող է վնասակար ազդեցություն գործել նրանց ընդհանուր շահերի վրա, ինչպես ներկայումս, այնպես էլ ապագայում: Ուստի գերմանական դեսպանությունը խիստ անհրաժեշտ է համարում, որ պարտադրիչ ցուցումներ տրվեն նահանգական իշխանություններին՝ արդյունավետ քայլերի դիմելու տարագրված հայերի կյանքն ու սեփականությունը պաշտպանելու համար, ինչպես փոխադրման ընթացքում, այնպես էլ նրանց նոր բնակավայրերում: Նա (դեսպանությունը) գտնում է նաև, որ խոհեմությունը պահանջում է միաժամանակ դադարեցնել մահվան դատավճռի կիրառումը այն հայերի նկատմամբ, ովքեր արդեն կանգնել են կամ պիտի կանգնեն զինվորական ատյանների առաջ մայրաքաղաքում կամ գավառներում, և ամենից առաջ Դիարբեքիրում ու Ադանայում:

Վերջապես, գերմանական դեսպանությունը խնդրում է, որ Օսմանյան կայսրությունը պատշաճ կերպով փոխհատուցի Գերմանիայի առևտրական ու բարեգործական հաստատությունների կրած վնասները այն նահանգներում, որտե-

ղից հայերի արտաքսումը ներկայումս արդեն ավարտվել է: Քանի որ վերջիններիս շտապ մեկնումը լուրջ վնաս է հասցնում այդ շրջաններին, դեսպանությունը իրեն պարտավորված կզգար, եթե Բարձր Դուռը առանձին դեպքերում երկարաձգեր տեղահանությունների ժամկետը և բարեգործական հաստատություններին աշձնակազմին պատկանողներին, ինչպես նաև սաներին, որբերին և կախյալ այլ անձանց թույլ տար մնալու իրենց տեղում, բացառությամբ, իհարկե, նրանց, ովքեր մեղավոր են ճանաչվել այնպիսի արարքներում, որոնք անհրաժեշտ են դարձնում նրանց տեղաշարժը»[05]:

Ո՛չ այս նոտան, ո՛չ էլ Պալավիչինիի բանավոր զգուշացումները որևէ ազդեցություն չունեցան Բարձր Դռան վրա: Հուլիսի 8-ին Պալավիչինին տեղեկացնում էր Ավստրո-Հունգարիայի արտաքին գործերի մինիստր կոմս Ստեֆան Բուրիանին, որ չնայած Թալեաթի նախորդ հավաստիացումներին, դաժան հալածանքները արևելյան նահանգներում շարունակվում են, ինչպես նախկինում: Դեսպանը եզրակացնում էր.

«Դժբախտաբար, այստեղ իշխանության գլուխ կանգնած մարդկանց չեք կարող հասկացնել հայերի դեմ ձեռնարկված նրանց քայլերի սխալականությունը և պետք է երկյուղ կրել, որ որքան նրանց արված նախազգուշացումները համան լինեն, այնքան գործը կվատանա»[36]:

Արևելյան հյուպատոսություններից ստանալով թարմ տեղեկուցագրեր նոր սպանությունների ու կողոպուտի վերաբերյալ[37], Վանգենհայմը հուլիսի 12-ին Բարձր Դռանը հղեց նոր նոտա, որտեղ նա կտրուկ կոչ էր անում «միջոցներ ձեռք առնել» Դիարբեքիրի վալի դոկտոր Ռեշիդ բեյի դեմ, որ պեսզի նրա դաժան քաղաքականությունը չհանգեցնի այդ շրջանի քրիստոնյաների գլխովին ոչնչացմանը[38]: Այս անգամ ևս Բարձր Դուռը պարզապես արհամարհեց անցանկալի խորհուրդը, և հուլիսի 16-ին Վանգենհայմը մատնանշում էր Բետման-Հոլվեգին, որ Բարձր Դուռը իր որդեգրած կուրսից ետ պահելու ապագա ջանքերը ևս՝ որևէ դրական արդյունքի չեն հանգեցնի, ուստի հայկական հալածանքների

հնարավոր բոլոր հետևանքների «պատասխանատվությունը» պետք է դրվի թուրքերի վրա:

Դա, անշուշտ, մի հնարավորություն է,— ավելացնում էր դեսպանը,— որ «մեր թշնամիները» հետագայում կփորձեն օգտագործել գերմանական կառավարությանը ևս հավասարապես պատասխանատու դարձնելու այն բանում ինչ-որ կատարվեց հայերի հետ: Սակայն նախորդ ամիսների նրա սեփական հաղորդումները կարող են այդ դեպքում հաջողությամբ օգտագործվել ցույց տալու համար, որ «Ռայխը միշտ էլ կտրուկ դատապարտել է» թուրքերի ծայրահեղությունները[39]:

Այս խորհուրդները ուղարկելուց շատ չանցած, Վանգենհայմը հիվանդության պատճառով մեկնում է Գերմանիա: (Պոմիանկովսկու հիշողությունների համաձայն, դեսպանը այդ ժամանակ արդեն բժշկական խնամքի խիստ կարիք ուներ, որովհետև սրտի լուրջ արատից ու ատերոսկլերոզից տառապելուց բացի, վերջում ավելացավ նաև «բացահայտ պաթոլոգիական բնույթի հիվանդությունը»)[40]: Վանգենհայմին ժամանակավորապես փոխարինող իշխան Հոհենլոե-Լանգենբուրգը ժամանեց Կ. Պոլիս հուլիսի 20-ին և ժամանակ չկորցրեց հայկական հարցը «վերաբացելու» համար:

Հայերի նկատմամբ Բարձր Դռան վարած քաղաքականության հարաճուն և բացահայտ քննադատությունը Հոհենլոեի կողմից և նրա «անդուլ» ջանքերը գավառներում զանգվածային սպանություններին վերջ դնելու ուղղությամբ, հաստատվել են մի շարք մարդկանց կողմից, ովքեր այդ ժամանակ Կ. Պոլսում էին գտնվում[41]: Միանգամայն այլ հարց է, թե հայերի նկատմամբ նրա հոգատարությունը ի՞նչ չափով էր բաժանվում Վիլհելմշտրասեի ղեկավար անձանց կողմից, որովհետև այն հրահանգները, որ նա ստանում էր Բեռլինից, սովորաբար ավելի շատ վերաբերում էին թուրքերի հասցրած պրոպագանդիստական վնասին, քան նրանց զոհերի տառապանքներին: Հիրավի, կարևոր ապացույց է, որ Վանգենհայմի հուլիսի 16-ի այն խորհուրդը, թե Գերմանիան պետք է հրաժարվի անօգուտ կոչեր անելու Բարձր Դռանը և դրա փոխարեն պատրաստվի պաշտպանելու մեղսակցու-

թյան մեղադրանքի դեմ, պարարտ հող գտավ Գերմանիայի կառավարական շրջանակներում: Ինչպես հաղորդում էր Ցիմերմանը Հոհենլոհեին օգոստոսի 4-ին, Անտանտը և «ոչ բարեկամաբար» տրամադրված չեզոք պետություններ չեն հապաղի օգտագործել այդ հաջող առիթը և կփորձեն հայկական հալածանքների պատասխանատվության մի մասը բարդել Բեռլինի վրա: Եվ քանի որ նման պնդումները կարող են անհանգստություն առաջ բերել բուն իսկ Գերմանիայում, մասնավորապես «եկեղեցական ու միսիոներական շրջանակներում», «մեր վերաբերմունքի հրապարակային արդարացումը» կարող է անհրաժեշտ դառնալ: Ուստի Կ. Պոլսի դեսպանությունը պետք է սկսի հավաքել փաստական ապացույցներ, որոնք վկայեն, որ Գերմանիան ջանացել է «կանխել հայերի նկատմամբ ծայրահեղորեն դաժան վարվելակերպը», չնայած այն բանին, որ Ցիմերմանը գրտնում էր, որ առավել կարևոր է հավաքել ապացույցներ այն մասին, որ օսմանյան հայերի մեջ գոյություն է ունեցել լայնորեն տարածված հեղափոխական շարժում և որ Անտանտը խրախուսել է նրանց «դավադրական գործողությունը»[42]:

Այդ նույն ժամանակ Լեպսիուսը, վերջապես, ժամանում է Կ. Պոլիս[43]: Տարբեր աղբյուրներից, ներառյալ ամերիկյան դեսպանությունից, հավաքելով տեղեկություններ հայերի վիճակի վերաբերյալ, Լեպսիուսը կարողացավ հասնել այն բանին, որ Էնվերն ընդունի իրեն: Վերջինիս հետ օգոստոսի 10-ին ունեցած երկար զրույցից Լեպսիուսը իմացավ, որ Բարձր Դուռը թույլ չի տա իրեն կամ որևէ այլ օտարերկրացու՝ օգնության ծրագրեր կազմակերպել հայ տարագրյալների օգտին, որ հակահայկական միջոցառումները պիտի շարունակվեն և որ ինքը Էնվերը մտադրություն չունի հակադրվելու այդ քաղաքականությանը: Ավելին, Էնվերը կարծես ընդունում էր, որ Բարձր Դռան իր ընկերակիցները ևս համամիտ են, որ «ներկայումս հայերին պետք է վերջ տալ»[44]:

Զինված զեկուցագրերով, գրավոր ցուցումներով և ամերիկյան հյուպատոսների զեկուցագրերից քաղված հյութերով, Լեպսիուսը կարճ ժամանակից հետո վերադարձավ Գերմանիա:

Սկսած այդ պահից, նա ո՛չ ժամանակ, ո՛չ էլ ջանք չի

խնայել, որպեսզի հասարակական կարծիքը ինչպես Գերմանիայում, այնպես էլ արտասահմանում ըմբոստանա Բարձր Դռան անմարդկային քաղաքականության դեմ:

Էնվերի հետ Լեպսիուսի ունեցած զրույցի անբավարար արդյունքը թերևս ուժեղացնում է Հոհենլոեի որոշումը՝ Բարձր Դռանն ուղղված մի այլ պաշտոնական ուղերձում արտահայտելու իր անհամաձայնությունը հայկական հալածանքների նկատմամբ: Ինչպես նախորդ ամսվա Վանգենհայմի ուղերձը, Հոհենլոեի «հուշագիրը» ևս, որը նա ամբողջությամբ հղեց Բարձր Դռանը օգոստոսի 11-ին, թելադրված չէր Վիլհելմշտրասեի կողմից: Վերջինս տեղյակ չէր դրանից և դեսպանը, անշուշտ, ռիսկի էր դիմում կտրուկ կերպով դատապարտելով հայերի նկատմամբ Բարձր Դռան վարած քաղաքականությունը: Իր ուղերձում մատնանշելով, որ Վանգենհայմի նախորդ պաշտոնական խնդրանքը ջարդերին և դաժան այլ արարքներին վերջ դնելու վերաբերյալ արհամարհվել է, և որ ներկայումս Բարձր Դուռը հարմար է նկատում ընդլայնելու հակահայկական միջոցառումների աշխարհագրական ընդգրկումը, Հոհենլոեն տեղեկացնում է թուրքերին, որ «... (իր) կառավարության կարգադրությամբ» նա «վերստին բողոքում է սարսափելի այդ արարքների դեմ և հրաժարվում է ամբողջ պատասխանատվությունից, որ կարող է առաջ գալ այդ արարքների հետևանքով»[45]:

Չնայած այն բանին, որ ինչպես Թալեաթը, այնպես էլ Հալիլը, այս ուղերձը ստանալուց հետո հավաստիացնում են դեսպանին, թե Բարձր Դուռը կձգտի սանձահարել «ստորադրյալ իշխանությունների» ծայրահեղությունները, դա չի համոզում Հոհենլոեին: Որպեսզի հայկական ջարդերը դադարեցնելու ուղղությամբ իր սեփական ջանքերը ապարդյուն չանցնեն, նա հաջորդ օրը հանձնարարում է Բետման-Հոլվեգին համապատասխան ճնշում գործադրել Բեռլինի թուրքական դեսպանության վրա, և որ գերմանական մամուլում կառավարությունը պաշտոնապես սահմանազատվի Բարձր Դռան քաղաքականությունից[46]:

Որ Հոհենլոեն հանդուգն է եղել ամբողջ այդ գործում, հաստատվում է Պալավիչինիի զեկուցագրով, որը նա ավելի ուշ ուղարկել էր Վիեննա[47]: Սակայն Վիլհելմշտրասեի մար-

դիկ, հեռու հայկական սարսափների թատերաբեմից, գրեթե չհասկացաև Հոհենլոեի խոցված զգացմունքները: Գրեթե ամեն օր ստանալով նոր լուրեր թուրքերի ջարդարարական քաղաքականության վերաբերյալ, Ցիմերմանը պատասխանեց Հոհենլոեի օգոստոսի 18-ի հեռագրին մի բացառիկ քաղցրախոս ոճով: Ինչպես նշում էր արտաքին գործերի մինիստրի տեղակալը, Հոհենլոեն պիտի արտահայտեր Գերմանիայի հույսն ու հավատը, որ գավառներում շարունակվող հակահայկական ծայրահեղությունները դեմ են Բարձր Դռան «մտադրություններին ու իրավունքներին»:

Ցիմերմանը շարունակում էր.

«Թուրքական կառավարության մեջ մեր բարեկամները, անկասկած, կհասկանան, որ մենք աշխույժ հետաքրքրություն ենք ճանդես բերում ծայրահեղությունների եռանդուն ճնշման հարցում, առավել ևս այն պատճառով, որ մենք մեղադրվել ենք դրանց հրահրողները լինելու մեջ:

Մարդկության ու կուլտուրայի բարձր զգացմունքը, որ բնորոշ է Թուրքիայի կողմից պատերազմը վարելու եղանակին, ի հակադրություն թշնամու կողմի, վստահություն է ներշնչում, որ մեր դաշնակիցը գիտի, որ այդ նույն սկզբունքները պիտի կիրառվեն նաև (Օսմանյան կայսրության) ներսում»:

Թեև Հալեպի գերմանական հյուպատոս Ռյոսլերը իր վերջին զեկուցագրում առաջարկում էր, որ Բեռլինը ինչ-որ վճռական քայլի դիմի՝ հայերի հալածանքների կապակցությամբ, Ցիմերմանը բավարար է համարում այն, որ դեսպանությունը փորձի «լուսավորել» հյուպատոսին, բացատրելով նրան, որ չնայած հայերի պախարակելի արարքներին, նրանց օգտին ջանքեր արդեն գործադրվել են[48]:

Չինված այս ոչինչ չարժեցող հրահանգներով, Հոհենլոեն հաջորդ երկու շաբաթվա ընթացքում շարունակում է նախազգուշացումներ ու բողոքներ ուղղել Բարձր Դռանը, սակայն թուրքերը շատ քիչ կամ բոլորովին ուշադրություն չեն դարձնում դրանց վրա: Թեև Թալեաթը օգոստոսի վերջին դեսպանին հավաստիացրել էր, որ հակահայկական ծրագիրը արդեն ավարտվել է, իսկ ավելի ուշ՝ նույնիսկ տրամադրել նրան ներքին գործերի մինիստրության կողմից գա-

վառական իշխանություններին ուղարկված անհրաժեշտ հրահանգների պատճենները, գերմանական մի շարք հյուպատոսներից ստացվող լուրերը վկայում էին, որ շատ շրջաններում հալածանքները շարունակվում էին, ինչպես նախկինում[49]:

Սեպտեմբերի 11-ին Հոհենլոհեն Բեռլինի ուշադրությունը հրավիրում է ստեղծված վիճակի վրա, սակայն Վիլհելմշտրասեն միայն մեկնակես շաբաթ հետո է պատասխանում, թեև այս անգամ, վերջապես, Ցիմերմանը հանձնարարում է դեսպանին «խիստ ձևով» նախազգուշացնել Բարձր Դռանը[50]:

Մինչ Վիլհելմշտրասեն շարունակում էր դիվանագիտական զսպվածություն հանդես բերել հայկական հարցում[51], այդ նույն ժամանակ Լեպսիուսը հուժկու կամպանիա սկսեց՝ Ռայխի կրոնական ու լրագրական շրջանակներին թուրքերի դաժան վարքագծին ծանոթացնելու համար: Ավելորդ է ասել, թե Գերմանիայի դաշնակցի չարագործությունների մասին նրա կտրուկ հայտարարությունները ինչպիսի անհարմար վիճակի մեջ դրեցին Բեռլինի արտաքին գործերի մինիստրությանը, սակայն վերջինիս կամ գերմանական կառավարության որևէ այլ գերատեսչության կողմից զարմանալիորեն քիչ բան արվեց՝ Լեպսիուսին հանգիստ պահելու համար:

Սեպտեմբերի 22-ին Բազելի գերմանական գլխավոր հյուպատոսը տեղեկացնում էր Բետման-Հոլվեգին, որ հայերի նկատմամբ Բարձր Դռան վարած քաղաքականության դեմ շվեյցարական մամուլում ծայր առած վերջին կամպանիան հավանաբար հրահրվել է Լեպսիուսի կողմից՝ Շվեյցարիա կատարած նրա այցելության ժամանակ, և որ Լեպսիուսը պարզորոշ կերպով հիշատակել էր այնտեղ, որ Վիլհելմշտրասեն գիտի այդ մասին, սակայն ի վիճակի չէ որևէ բան անելու թուրքերի այդ վարքագծի դեմ[52]:

Թեև այդ բանը բավականին շփոթեցրել էր Գերմանիայի արտաքին քաղաքականության ղեկավարներին, իրարանցումը, որ առաջ էր բերում Լեպսիուսը Ռայխում, ինքնին հաստատում էր հարցի կարևորությունը: Տարբեր կողմերից ստացվում էին հարցումներ այն մասին, թե ի՞նչ է մտադիր անելու Վիլհելմշտրասեն հայկական հարցի կապակցու-

թյամբ, իսկ գերմանական «Zeitungsverlag» թերթի խմբագիր դոկտոր Ֆաբերը ցանկանում էր իմանալ, թե ի՞նչ ձևով պետք է թերթերը մեկնաբանեն խնդիրը, որն առավել կարևոր էր դառնում այն պատճառով, որ կղերական որոշ շրջանակներ պահանջում էին հրապարակ հանել Հայաստանում կատարված իրադարձությունները:

Ջսպելով անձնական զգացմունքները Օսմանյան կայսրության հանդեպ (որոնք բարեկամական էին)[53], Ցիմերմանը հոկտեմբերի 4-ին հետևյալ պատասխանն է տալիս Ֆաբերին, օգտագործելով այնպիսի փաստարկներ, որոնք դարձել էին սովորական Բեռլինի կառավարության պաշտոնական հայտարարություններում ու բացատրություններում. «Առանց կարիք զգալու եկեղեցական շրջանակների հրահրմանը, արտաքին գործերի մինիստրությունը և կայզերական ներկայացուցչական հիմնարկները Թուրքիայում իրենց սեփական կամքով արդեն արել են այն ամենը, ինչ որ հնարավոր է դիվանագիտական միջոցներով՝ հայերի տառապանքները մեղմացնելու համար: Հայկական հարցի պատճառով խզել կապերը Թուրքիայի հետ մենք հարմար չենք գտել և չենք գտնում: Որքան էլ ցավալի է քրիստոնեական տեսանկյունից այն, որ անմեղ մարդիկ էլ պետք է տուժեն թուրքական միջոցառումներից, հայերը, վերջապես մեզ այնքան մոտ չեն, ինչքան մեր սեփական տղաներն ու եղբայրները, որոնց սրբազան, արյունալի պայքարը Ֆրանսիայում ու Ռուսաստանում անուղղակի կերպով պաշտպանություն է գտնում թուրքերի ռազմական օգնությամբ»:

Ցիմերմանը ընդգծում էր, որ օսմանյան հայերին բաժին ընկած ցավալի աղետներում իսկապես մեղավոր են նրանց մեջ եղած հեղափոխական տարրերը և նրանց բարեկամները Պետերբուրգում, որովհետև «հայկական ապստամբությունը» օսմանյան սահմանների մոտ օրինական գայրույթ է առաջ բերել կայսրության մահմեդականների շրջանում, առավել ևս այն պատճառով, որ այդ խռովության հետևանքով մի քանի օրում զոհվել են «ավելի քան 150 հազար մահմեդականներ»[54]:

Եթե Ցիմերմանի հայտարարության առաջին մասը ուշադրության արժանի է թեկուզ իր անկեղծության շնորհիվ,

այսպես ևվազ արդարացում կարելի է գտնել, երբ նա մատնանշում է, թե իբր սպանվել են 150000 մահմեդականներ: Նրանց մահվան պատմությունը կապված է Բարձր Դռան այն հայտարարության հետ, որը Վանի վիլայեթի մշտական շատ բնակիչներ հաշվի չէին առնված մինչև այդ շրջանի գրավումը ռուսական բանակի կողմից՝ 1915-ի գարնանը: Սակայն, քանի որ թուրքերը միաժամանակ առաջարկում էին առնվազն երեք տարբեր վարկած այն մասին, թե ի՞նչ է կատարվել այդ վիլայեթում[55], Ցիմերմանը չպետք է այնքան միամիտ լիներ, որ մահմեդական ազգաբնակչության կոտորածը ներկայացներ որպես կատարված փաստ: Հաջորդ ամիսներին Լեպսիուսը ամեն ինչ արեց թուրքական մեղադրանքները հերքելու համար, սակայն որքան էր այդ նրան հաջողվել, դժվար է ասել, քանի որ բազմաթիվ այն գերմանացիները, ովքեր լսել են նրա դասախոսությունները կամ կարդացել նրա բրոշյուրները, գտնում են, որ նա ծայրահեղորեն կանխակալ է թուրք-հայկական հարաբերությունների իր մեկնաբանություններում:

Լեպսիուսի կծու ոճի և նրա հանդես բերած դիմադրության մասին փաստեր կարելի է քաղել OHL-ի գրաքննչական բյուրոյի հաշվետվությունից, որը վերաբերում է Լեպսիուսի կողմից 1915-ի հոկտեմբերի սկզբին Բեռլինում կազմակերպած գերմանական մամուլի ղեկավարների հանդիպմանը: Լեպսիուսը բացում է միտինգը երկար մի ճառով, որում նա կտրուկ կերպով դատապարտում է ինչպես թուրքերի հակահայկական արարքները, այնպես էլ այն երկչոտությունը, որ հանդես բերեց գերմանական կառավարությունը՝ այնքան ուշացումով արձագանքելով իր դաշնակցի տմարդի վարվելակերպին: Զտտիպելով Բարձր Դռանը հրաժարվելու իր հակահայկական քաղաքականությունից,— հայտարարում էր Լեպսիուսը, Գերմանիան դրանով ոչ միայն հնարավորություն էր տալիս ոչնչացնելու իր սեփական տնտեսական ու կուլտուրական ազդեցությունը Օսմանյան կայսրությունում, այլև իրեն ենթարկում էր արտասահմանի պրոպագանդիստական հարձակումներին, որոնք ավելի վնասակար կարող էին լինել, քան այն ամենը, ինչ որ ասվել էր Գերմանիայի վարվելակերպի մասին՝ Բելգիայում:

Հարցի էությունն այն է, որ իրեն «Թուրքիայի տերը» դարձնելու փոխարեն, ինչի որ կհասներ Անգլիան նման պարագաներում, գերմանական կառավարությունը, իր անշնորհքության պատճառով, ներկայումս դարձել էր Բարձր Դռան «ծառան»: Նման վիճակը կարելի է շտկել,— եզրակացնում էր Լեպսիուսը,— եթե Գերմանիան ստանար անվտանգ անցում Կ. Պոլիս՝ Սերբիայի վրայով, և այն ժամանակ Բեռլինը կհամոզվեր, որ առնվազն թուրքական կայսրության հյուսիսային կեսում Գերմանիան կարող է վերահսկող ազդեցություն ձեռք բերել: Կայսրության մնացած մասը, «անկասկած», այսպես թե այնպես, կընկներ բրիտանական տիրապետության տակ[56]:

Լեպսիուսի հայտարարությունները մեծ իրարանցում առաջ բերեցին Վիլհելմշտրասեում (որն իր ներկայացուցիչն էր ուղարկել այդ հանդիպմանը): Ավելին, մամուլի ղեկավարներից մի քանիսը նույնպես անբարյացակամ վերաբերվեցին Լեպսիուսի ճառին:

Մի հրատարակիչ, սոցիալիստ Մաքս Գրյունվալդը, հայտարարեց, որ Լեպսիուսի փաստարկները համոզիչ չեն, ինչպես Մարքսն է սովորեցնում, պատմական զարգացումն ընթանում է իր սեփական օրենքներով, ուստի Եվրոպայի բարոյական ու քաղաքական նորմերի կիրառումը Օսմանյան կայսրության իրադարձությունները քննելիս, բոլորովին տեղին չէ: Երբ Լեպսիուսն, այնուհետև, ընդունեց, որ հարցը, թերևս պետք է քննարկել նրա քաղաքական ու տնտեսական պայմանների առնչությամբ, Բերնհարդը՝ «Ullstein Publishing House-ի» դիրեկտորը, անմիջապես համաձայնեց և հայտարարեց, որ իրեն, իհարկե, անհանգստացնում է հայկական հալածանքների տնտեսական հետևանքների հարցը: Թուրքերը, հաստատել էր նա, բոլորովին տաղանդ չունեն տեխնիկական ու տնտեսական ասպարեզներում և վերացնելով շատ ընդունակ հայկական տարրը, նրանք ստեղծեցին մի այնպիսի վիճակ, որը վնասակար ազդեցություն կունենա Գերմանիայի սեփական շահերի վրա: Լրացնելով այս զավեշտական բանավեճը, մի այլ սոցիալ-դեմոկրատ հրատարակիչ, Յուլիուս Կալիսկին, կրկնեց Բերնհարդի այն մեղադրանքը, թե Լեպսիուսը հայերի վի-

ճակը ներկայացրել է ծայրահեղ մռայլ գույներով: Դեռ ավելին. Կալիսկին ավելացրեց, որ լավ է, որ հայերի գործարար ունակությունները կարող են հաջողությամբ փոխարինվել հրեականով[57]:

Լեպսիուսին ուղղված այն մեղադրանքը, թե նա չափազանցրել է հայերի թշվառությունները, նույնությամբ կըրկընվեց հաջորդ օրը կայացած պրեսկոնֆերանսի ժամանակ՝ Բեռլինի արտաքին գործերի մինիստրության ներկայացուցչի կողմից: Թմբկահարելով այն փաստարկները, որոնք արդեն օգտագործվել էին Ցիմերմանի կողմից դոկտոր Ֆաբերին ուղղված նրա նամակում, նա ավելացրեց, որ հայկական հալածումների բարոյական պատասխանատվությունը կրելու են Անտանտի բոլոր երեք տերությունները: Թեև թուրքական հակամիջոցառումները իսկապես «կոպիտ ու դաժան» էին,— շարունակում է նա,— առավել ցավալի կլիներ, եթե մեր միսիոներական կազմակերպությունները և մեր մամուլը թույլ տային, որ հայկական հարցում իրենց օգտագործեն «որպես կռվող խոյերի»: Քանի որ օսմանյան հայերի ճակատագիրը թեթևացնելու ուղղությամբ դիվանագիտական ջանքեր միշտ էլ գործադրվել են, գերմանական կառավարությունը չի ցանկանում ռիսկի դիմել վատթարացնելու, առավել ևս, խզելու իր կապերը Բարձր Դռան հետ՝ մարտնչելով հայերի գործի համար: Եթե Անտանտը փորձի գործ սկսել Գերմանիայի դեմ, նա շատ հեռու չի գնա,— եզրակացնում է դիվանագետը,— որովհետև նրա սեփական քայլերը լի են անբարոյական արարքներով, ուստի միանգամայն նախապատվելի կլիներ, որ գերմանական մամուլը «առժամանակ» խուսափեր հայկական հարցի շուրջ որևէ մեկնաբանություն տալուց[58]:

Վիլհելմշտրասեն գնալով ավելի էր անհանգստանում այն ուժեղ քննադատությունից, որի առարկան էր դարձել Գերմանիան արտասահմանում՝ հայկական հալածանքների կապակցությամբ: Տարբեր երկրներում, մասնավորապես Մեծ Բրիտանիայում, մեղադրանքներ էին հարուցվում Բեռլինի դեմ այն բանի համար, որ նա է հրահրել Բարձր Դռան հակահայկական ծրագիրը, և որ գերմանական պաշտոնյաները ուղղակիորեն ներգրավվել են հայկական ջարդում:

Հոկտեմբերի 8-ին Ցիմերմանը գալիս է այն հետևության, որ սուկ Գերմանիայի ներքումը հազիվ թե բավարար լինի աշխարհին համոզելու համար, որ այդ մեղադրանքները տեղին չեն: Ուստի նա գրում է Վանգենհայմին, որն այդ ժամանակ վերադարձել էր Կ. Պոլիս իր պաշտոնի ի, թե իսկական ժամանակն է, որ Բարձր Դուռը հրապարակայ նորեն հայտարարի, որ գերմանական ներկայացուցիչները Օսմանյան կայսրությունում միշտ էլ ջանքեր են գործադրել հայերի օգտին[59]: Ավելորդ է ասել, որ Բեռլինի այս խընդրանքը թուրքերն ընդունեցին մեծ տհաճությամբ, և չնայած Վանգենհայմի մի շարք նախազգուշացումներին, որ Բեռլինը ինքը այդ հարցի շուրջ միակողմանի հայտարարություն կանի, եթե Բարձր Դուռը չհրապարակի պահանջվող հերքումը, Հալիլը հրաժարվեց այդ բանն անելու: Մոտ մեկ շաբաթ Վանգենհայմին սպասեցնել տալուց հետո, թուրքական արտաքին գործերի մինիստրը հոկտեմբերի 21-ին հայտնեց դեսպանությանը, որ եթե Բեռլինը իրականում հանդես գա սեփական հայտարարությամբ, դրանով ի չիք կդառնան բոլոր այն ջանքերը, որ նա գործադրելու է հայերի օգտին, որովհետև թուրքական հասարակական կարծիքը խիստ բացասաբար կընդունի Օսմանյան կայսրության ներքին գործերին «օտար» միջամտության նման լուրերը[60]:

Բոլորովին այլ հարց է, թե օբյեկտիվորեն որքանով էր արդարացի Բեռլինի երկյուղը: Գլխավորն այն է, որ այդ երկյուղը որոշակիորեն առկա էր և նոր սնունդ էր առնում այն զեկուցագրերից, որ այդ շրջանում Վիլհելմշտրասեն ստանում էր: Հոկտեմբերի 15-ին Վանգենհայմը հաղորդեց, որ իր վերջին բողոքները Միջագետքի նոր ջարդերի կապակցությամբ կտրուկ կերպով մերժվել են Թալեաթի կողմից[61] իսկ հոկտեմբերի 26-ին՝ Վանգենհայմի մահից մի քանի օր հետո, Նեթմանը նպատակահարմար գտավ Բեռլինին նախազգուշացնելու, որ թեև թուրքերը հիվանդագին են ընդունում այն ամենը, ինչ որ նվազագույն չափով անգամ առնչվում է նրանց ներքին գործերին միջամտելու հետ, այնուհանդերձ, պետք է հնարավորին կարճ ժամանակում իրականացնել գոնե հայկական տեղահանության ժամանակ փրկվածներին օգնելու գերմանական մասնավոր բնույթ ունեցող ծրագիրը[62]:

Լեպսիուսի ջանքերի շնորհիվ, հենց այդ ժամանակ Որբանոցը[63] և գերմանական «Orient Mission-ի» և Գերմանա-հայկական ընկերության ակտիվ այլ դեմքեր, մեծ թվով գերմանական բողոքական հոգևորներ, համալսարանական պրոֆեսորներ և ուրիշներ մաքուր խղճով գործի անցան: Հոկտեմբերի 15-ին, այդ բողոքականներից մոտ 50-ը, ներառյալ կրոնական բարձր դիրք գրավող մի քանի հոգևորականներ, դիմեցին Բետման-Հոլվեգին պաշտոնական մի նամակագրությամբ, որտեղ նրանք իրենց նողկանքն էին արտահայտում հայերի «տխրահռչակ» հաղածանքների նկատմամբ և գերմանական կառավարությանը կոչ անում շտապ քայլերի դիմելու՝ Բարձր Դռան այդ քաղաքականությանը վերջ դնելու և այն փոխելու համար: Մասնավորապես, հնարավոր բոլոր ջանքերը պետք է գործադրել ամենից առաջ. 1 Կանխելու համար տեղահանությունները այն շրջաններից (Կ. Պոլիս, Զմյուռնիա, Հալեպ և այլն), որոնց հայ ազգաբնակչությունը ներկայումս դեռ խնայվել է. 2. Ապահովել արդեն աքսորված հայերի կյանքը և գերծ պահել նրանց հետագա չարդերից. 3. Հնարավորություն ստեղծել, որ «այլ երկրների քրիստոնյաները» օգնություն հատկացնեն և պայմաններ ստեղծեն տառապող աքսորյալների համար: Ավելին, կառավարությունը պատերազմի ավարտից հետո պետք է հետևի, որ «ներկայումս բռնի կերպով մահմեդականացված քրիստոնյաները կարողանան վերադառնալ քրիստոնեական կրոնին, և որ անհրաժեշտ երաշխիքներ ապահովվեն Թուրքիայում քրիստոնյա փոքրամասնությունների խաղաղ ու օրինական զարգացման, ինչպես նաև քրիստոնյաների բարեգործական և կուլտուրական գործն Արևելքում անխափան շարունակելու համար»[64]: Երկու շաբաթ անց պրելատ Վերտմանը և Կենտրոնի կուսակցության երկու երևելի դեմքեր՝ Մատիաս Էրցբերգերը և Կառլ Բախեմը դիմեցին Բետման-Հոլվեգին նույնանման, բայց ոչ խիստ բառերից կազմված կոչով: Խոսելով «Գերմանիայի կաթոլիկների գլխավոր ասամբլեայի կենտրոնական կոմիտեի միսիոներական բաժնի» կողմից, նրանք կայսերական կառավարությունից պահանջում էին անել այն

ամենը, «ինչ որ կարելի է անել առանց վտանգելու ռազմական դաշինքը» օսմանյան հայերի դրության բարելավմանը հասնելու համար[65]:

Բետման-Հոլվեգը երկու խնդրագրերին էլ պատասխանեց նոյեմբերի 12-ին՝ «Deutsche Evangelische Missionshilfe-ի» ղեկավար Շրայբերին և Էրցբերգերին ուղղված համամանման դիմումներով, տեղեկացնելով նրանց, որ ինքը կանի «ամեն ինչ, ինչ որ իր ձեռքում է», հայկական հարցը իրեն հայտնված ցանկություններին համապատասխան լուծելու համար: Միաժամանակ կանցլերը բողոքականների ու կաթոլիկների ներկայացրած խնդրագրերի պատճեններն ուղարկեց Կ. Պոլսի դեսպանությանը՝ գործերի հավատարմատար Նեյրատին հրահանգելով շարունակել հայերի օգտին ազդեցիկ կոչեր ուղղել Բարձր Դռանը և, «մասնավորապես», ստանալ վերջինիս հավաստիացումը, որ թուրքական պատժիչ միջոցները չեն տարածվի կայսրության մյուս քրիստոնեական խմբերի վրա[66]:

Բետման-Հոլվեգի ուշացած հրահանգները Նեյրատին միանգամայն ավելորդ էին, քանի որ գործերի հավատարմատարն ինքը արդեն ոմբակոծել էր Բարձր Դռանը հակահայկական ծրագիրն ընդարձակելու դեմ ուղղված բազմաթիվ ցուցումներով ու «նախազգուշացումներով»:

Ինչպես հետագայում հիշում է Մորգենթաուն, թուրքական վայրագությունների նկատմամբ Նեյրատի զայրույթն այն աստիճան խորն էր, որ «Թալեաթի ու Էնվերի հետ նրա խոսակցությունների լեզուն դառնում էր գրեթե ոչ դիվանագիտական»: Սակայն այդ ամենը ոչինչ էր նոր նշանակված գերմանական դեսպան Վոլֆ-Մետերնիխի այն խրատների համեմատությամբ, որ նա կարդացել էր թուրքերին՝ Կ. Պոլիս ժամանելու օրերին[67]:

Պետական քարտուղար Յագովի հատուկ հրահանգներով զինված, Վոլֆ-Մետերնիխը հայկական հարցը բարձրացնում է մեծ վեզիրի և կառավարության մյուս անդամների առաջ, հասկացնելով, որ ինքը նողկանք է տածում դեպի այն դաժան վարվելակերպը, որ դրսևորել են կառավարությունը և նրա մարդ պաշտոնյաները: Ինչպես արդեն նշվեց, թուրքերը երբեք չեն մոռացել և չեն ներել

նրան: Եթե նրանք իմանային, թե ի՞նչ էր նա հաղորդել Բեռլին հաջորդ շաբաթների ընթացքում, նրանք, թերևս, կպնդեին, որ Վոլֆ-Մետերնիխը ետ կանչվեր շատ ավելի շուտ, քան այդ բանն արվեց[68]:

Որոշ ստույգ տեղեկություններ այն մասին, թե ինչ արհամարհական ձևով էր Վոլֆ-Մետերնիխը վարվում թուրքերի հետ, տալիս են Պալավիչինիի թղթակցությունները, որի սեփական ջանքերը հայերի օգտին ավելի քան «ոչ հարձակողական» և անջատ բնույթ ունեին:

Հիրավի, մի քանի փաստեր վկայում են, որ ավստրո-հունգարական դեսպանությունը սեպտեմբեր-հոկտեմբերի ընթացքում շատ դժվար էր տեղից շարժվում հայկական հարցում: Միայն այն ժամանակ, երբ Պալավիչինին վերադարձավ Կ. Պոլիս՝ Վիեննա կատարած կարճատև ուղևորությունից հետո, նա վերսկսեց իր զգույշ կազմված նախազգուշացումներն ուղղել Բարձր Դռանը: Նոյեմբերի առաջին երկու շաբաթների ընթացքում նա մի քանի անգամ զրուցել է մեծ վեզիրի և Հալիլ բեյի հետ՝ Բարձր Դռան հակահայկական քաղաքականության «վտանգավոր հետևանքների» շուրջ, հայտնելով նրանց կենտրոնական տերությունների վճռականությունը՝ թողնել, որ թուրքերն իրենք միայն ամբողջովին պատասխանատու լինեն իրենց արարքների համար: Սակայն, ինչպես նա ավելի ուշ տեղեկացնում էր Բուրիանին, քիչ հույս կար, որ նկատողություններն օգտակար լինեին: Նրա բացատրությամբ, թեև Սայիդ Հալիմն ու Հալիլը կարծես ազդվել էին նրա փաստարկներից, Թալեաթը և Իթթիհաթի մյուս պարագլուխները բացահայտորեն փորձում էին հայկական հարցը «լուծել» իրենց սեփական եղանակով: Քանի դեռ նահանգապետների (վալիների) և տեղական այլ պաշտոնյաների մեծ մասը շարունակում էր հրահանգներ ստանալ ավելի շատ կուսակցության կենտրոնական կոմիտեից, քան կառավարությունից, դժվար կլիներ վերջ դնել հակահայկական ծրագրին[69]:

Մինչ Ծոյքներ-Ռիխտերը Էրզրումից և զանազան այլ հաղորդատուներ շարունակում էին զեկուցել արևելյան նահանգներում հայերի նկատմամբ գործադրվող բռնություն-

ների մասին, դեռ ավելին՝ թուրք ազգաբնակչության շրջանում լայնորեն տարածված այն լուրերի մասին, թե իբր Գերմանիան այդ հարցում Բարձր Դռան թիկունքին է կանգնած, Յահովը նոյեմբերի վերջին Վոլֆ-Մետերնիխին ներշնչում է Բարձր Դռանը նախազգուշացնելու, որ վերջինս պետք է հայտարարի, թե Գերմանիան ներգրավված չէ այդ գործում և հայկական հարցը կարգավորի տրված «խորհրդին» համապատասխան: Լեպսիուսի կողմից զգուշացվելով, որ թուրքերը վերսկսել են հայերի տարագրումը Կ. Պոլսից, Յիմերմանը մի քանի օր հետո մինչև վերջ հասցրեց իր հրահանգները, որպեսզի Վոլֆ-Մետերնիխը կարողանա եռանդուն կերպով բողոք հայտնել դրա դեմ:

Դեկտեմբերի 7-ին դեսպանը պատասխանում է[70], որ ինքը մի քանի անգամ և չափազանց կտրուկ լեզվով արտահայտել է Գերմանիայի ընդդիմությանը շարունակվող հակահայկական կամպանիային, սակայն ո՛չ Էնվերը, և ո՛չ էլ Հալիլը հակված չեն հարցը քննարկելու: Քանի որ բողոքները, հավանաբար, «անօգուտ» են, շարունակում էր դեսպանը, նպատակահարմար կլիներ Գերմանիայում նախաձեռնել մամուլի կամպանիա՝ հայկական հալածանքների դեմ, մասնավորապես, ներկայումս տեղին կարող էր լինել մի կիսապաշտոնական հայտարարություն Բեռլինի կառավարության ավանդական ձայնափողը հանդիսացող «Norddeutsche Allgemeine Zeitung» թերթում, այն իմաստով, որ գերմանական կառավարությունը ցավում է հայ ժողովրդի տառապանքների համար և վերստին ստիպված է «պահանջելու», որ Բարձր Դուռը ուղղիչ քայլեր ձեռնարկի «խորապես ցավալի հետագա դեպքերը» կանխելու համար: Անկասկած,— եզրակացնում էր Վոլֆ-Մետերնիխը,— ընման հրապարակային դատապարտումը կսրի Գերմանիայի քաղաքական փոխհարաբերությունները Թուրքիայի հետ, սակայն ռիսկը, թե վերջինս կարող է խզել դաշինքը, այնքան մեծ չէ, որքան թվում է Բեռլինին, որովհետև խիստ անհավանական է, որ Անտանտի տերությունները և, հատկապես, Բրիտանիան, ցանկանան գործ ունենալու այն մարդկանց հետ, ովքեր տվյալ պահին ղեկավարում են օսմանյան կառավարությունը[71]:

Ինչպես Ցագովը, այնպես էլ Ծիմերմանը գտավ, որ Վոլֆ-Մետերնիխի առաջարկը որոշ արժեք ունի, բայց քանի որ ինքը դեսպանը պահանջում էր նրա իրականացումը հետաձգել մինչև որ «հայկական հալածանքների ոգեշնչող» Թալեաթը վերադառնա նահանգներից և հնարավորություն ունենա իր վերաբերմունքը ցույց տալու, ծրագիրը հետաձգվեց մինչև այդ ժամանակը[72]:

Թեև ակնհայտ էր, որ իր նախորդ ջանքերը անարդյունավետ էին, Վոլֆ-Մետերնիխը դեկտեմբերի 9-ին շարունակում է իր խնդրանքները Բարձր Դռանը՝ այս անգամ իր քննադատության օբյեկտ ընտրելով մեծ վեզիրին: Ինչպես հետագայում դեսպանը բացատրում էր Բեթման-Հոլվեգին, Սայիդ Հալիմն անկարող էր որևէ բան անել հայկական հալածանքների հարցում, այնուհանդերձ, օգտակար կլիներ մեծ վեզիրի ձեռքը տալ փաստարկներ, որոնք նա կարող էր ապագայում օգտագործել իր պաշտոնակիցների դեմ: Ըստ Վոլֆ-Մետերնիխի, կասկած չկար, որ Սայիդ Հալիմն անձամբ հակադրվում էր այն բանին, ինչ-որ նրանք անում էին: Ավելին, որոշ փաստերից երևում էր, որ Ջեմալ փաշան ևս ամոթ էր զգում հայերի նկատմամբ կիրառված դաժան վերաբերմունքի համար և ներկայումս որոշ հաջողության էր հասնում կենտրոնական կառավարության կողմից թելադրված միջոցառումները փոփոխելու գործում[73]:

Մոտ մի շաբաթ հետո, Թալեաթը տեսչական շրջագայությունից վերադարձավ Կ. Պոլիս: Դեկտեմբերի 18-ին Վոլֆ-Մետիրնիխը կանչվեց նրա մոտ՝ հայերի վիճակի «հիմնավոր» քննարկման համար: Ի զարմանս դեսպանի, մինիստրը խոստովանում է, որ վերջին կես տարվա ընթացքում ձեռնարկված հակահայկական «անվտանգության միջոցառումներից» տուժել են անմեղ շատ մարդիկ, ավելացնելով նաև, որ ծրագիրը ներկայումս մոտենում է իր վախճանին, և որ ամեն ինչ արվել է՝ տարագրված ընտանիքներին հետագա բռնություններից, քաղցից և այլ դժբախտություններից պաշտպանելու համար: Դեռ ավելին, Թալեաթի ասածի համաձայն, նահանգական բոլոր իշխանություններին կարգադրված է հրապարակել այն փաստը, որ գերմանական կառավարությունը բոլորովին անմեղա-

կից է համաձայնական պայմանագրերում, և որ Բարձր Դուռը իր վրա է վերցրել դրանց ողջ պատասխանատվությունը: Թեև Վոլֆ-Մետերնիխը անձամբ էլ համոզված չէր, որ Բարձր Դուռը արդեն փոխել է իր վարքագիծը դեպի լավը, նա որոշում է առժամանակ հավատալ Թալեաթի հավաստիացումներին և սպասել դեպքերի հետագա զարգացմանը: Ինչպես նա գրում էր Վիլհելմշտրասե և Բեթման-Հոլվեգին, թերևս լավագույն քայլը կլիներ մի հայտարարություն հրապարակել «Norddeutsche Allgemeine Zeitung-ում» և առժամանակ ետ կանգնել դիվանագիտական քայլերից, հատկապես, մինչև որ հաճախ կրկնվող բողոքները ուղղակի կորցնեին իրենց սրությունը[74]:

Վոլֆ-Մետերնիխի որոշումը՝ Բարձր Դռանը առիթ տալ իր բարի մտադրությունները ապացուցելու համար, լրիվ փոփոխվեց, քանի որ Թալեաթի հանգստացնող հայտարարություններից ուղիղ հինգ օր հետո գերմանական դեսպանությունն ստացավ Բարձր Դռան նոտան՝ հայկական հարցի վերաբերյալ գերմանացիների կողմից երբևիցե ստացված միակ գրավոր հաղորդումը: Հիշատակելով անցած վեց ամիսների ընթացքում գերմանացիների կողմից ձեռնարկված պաշտոնական քայլերը, Բարձր Դուռը «ամենից առաջ» նշում էր, որ հայերի նկատմամբ քաղաքականությունը իր ներքին գործն է, ուստի չի կարող արտաքին դիվանագիտական միջամտության առարկա դառնալ, բացի այն դեպքերից, երբ այն ուղղակիորեն վերաբերում է օտարերկրյա շահերին: Բայց քանի որ հակահայկական միջոցառումները ձեռնարկվել են ռազմական նկատառումներով և հեղաշրջման փորձերի դեմ ուղղված օրինական պաշտպանության մի միջոց են լոկ, օսմանյան կառավարությունը չի կարող իր վրա որևէ պատասխանատվություն վերցնել Գերմանիայի տնտեսական շահերին վնաս հասցնելու համար, առավել ևս այն պատճառով, որ «կասկածելի անձանց» տեղահանությունը պատշաճ կերպով կարգավորվել է «ժամանակավոր օրենքի» համաձայն: Գերմանական հայտարարությունները, այդպիսով, անընդունելի են,— ասվում էր նոտայի վերջում[75]:

Գերմանական կառավարական գործերում ոչ մի հետք չկա այն մասին, որ Վիլհելմշտրասեն թեկուզ փորձել է պատասխանել հիշյալ նոտային: Ընդհակառակը, Բարձր Դռան վատ քողարկված այն պահանջը, որ գերմանացիները զբաղվեն իրենց սեփական գործերով, թվում է, հաստատում է Գերմանիայի քաղաքականության ղեկավարների տեսակետը՝ Բետման-Հոլվեգից սկսած մինչև ստորադաս գործիչները, այն է՝ որ իրենք մեծ ռիսկի էին դիմում՝ հայերի օգտին իրենց խնդրանքներով: Հաջորդ ամիսներին Բեռլինի նախազգուշացումներն ու բողոքները գնալով դառնում էին ավելի սակավ և դժգույն: Դեռ ավելին: Վոլֆ-Մետերնիխի վերադասների կողմից հանդես բերված երկչոտությունն ու պասսիվությունը, թվում է, ազդեցություն ունեցան նրա տեսակետի և անգամ վարքագծի վրա: Կ. Պոլսում գտնվելու մնացած ամբողջ ժամանակամիջոցում Վոլֆ-Մետերնիխի հայանպաստ ջանքերը նկատելիորեն նվազ եռանդուն էին:

1916-ի սկզբին հայ ազգաբնակչության զանգվածային տեղահանությունը Արևելյան Անատոլիայի վիլայեթներից դեպի Միջագետքի ու Սիրիայի անապատներն ու համակենտրոնացման ճամբարները լրիվ ավարտված էր: Օսմանյան հայերի մեծամասնությունն արդեն զոհվել էր զանգվածային սպանություններից, ճանապարհին կրած բիրտ վերաբերմունքից, սովից ու ծարավից, սակայն տեղահանման ծրագրի իրականացումից հետո վերապրողներն անգամ կանգնած էին մոայլ ապագային դեմ-հանդիման: Հակառակ կրկնվող թուրքական հավաստիացումներին, շատ քիչ բան կամ ոչինչ չէր արված տարագրվածներին սննդով, հագուստով ու ապաստանով ապահովելու և նրանց ֆիզիկական բռնություններից պաշտպանելու համար: Բացի դրանից, մի քանի շրջաններում, մասնավորապես այն վայրերում, որտեղից հայերի «էվակուացիան» դեռ լրիվ չէր ավարտվել, տեղական և նահանգային իշխանությունների կողմից ուղղակի կամ անուղղակի ճնշում էր գործադրվում՝ նրանց իսլամի դավանանքի «փոխանցելու» համար»[76]:

1916-ի հունվարին Վոլֆ-Մետերնիխը նոր փորձեր արեց Բարձր Դռանը ցույց տալու իր երկյուղը՝ շարունակ-

վող հալածանքների կապակցությամբ, սակայն շատ քիչ բանի հասավ։ Նրա բողոքները կամ դիտվում էին որպես հիմքից զուրկ կամ մի կողմ դրվում դատարկ այն հավաստիացումով, թե Բարձր Դուռը կքննի հարցը։ Վիլհելմշտրասեն, որը կանոնավոր կերպով տեղեկություն էր ստանում կարուսակվող անկարգությունների մասին, հատկապես Հալեպի հյուպատոս Ռյոսլերից, բացարձակապես ոչինչ չարեց, ոչ էլ իրեն ձեղություն տվեց որևէ ցուցում տալ Կ. Պոլսի դեսպանությանը[77]։ Իրականում միայն 1916-ի փետրվարի երկրորդ կեսին էր, որ Բեռլինի արտաքին գործերի մինիստրությունը դուրս եկավ ինքնախաբեության վիճակից։ Ստիպված լինելով պատասխանել նոր կազմակերպված «Swiss Hilfswerk 1915 für Armenien-ի» այն հարցին, թե կարո՞ղ է վերջինս ակնկալել Բեռլինի պաշտոնական օգնությունը՝ տարագրված հայերի օգտին բարեխնամ աշխատանք տանելու գործում, Ցիմերմանը փետրվարի 26-ին գրում էր, որ Վիլհելմշտրասեն «հաճույքով» կօգնի այնքանով, որքանով հնարավոր կլինի չգրգռել թուրքերին[78]։ Հայկական հարցի կապակցությամբ Բարձր Դռանը որևէ անախորժություն չպատճառելու Բեռլինի որոշումը առավել բացորոշ դրսևորվեց, երբ Վաշինգտոնի գերմանական դեսպանությունը խոսք բացեց այն մասին, որ ԱՄՆ-ի կառավարությունը, հնարավոր է, շուտով կդիմի Բարձր Դռանը՝ հայկական հալածանքների վերաբերյալ մի կոչով։ Ցիմերմանը անմիջապես հրահանգեց Վոլֆ-Մետերնիխին՝ Բարձր Դռանը նախազգուշացնելու կատարվածի մասին և առաջարկելու նրան հաշտեցնող պատասխան տալ ամերիկյան նոտային, սակայն, որ դեսպանն ինքը որևէ «առարկություն» չունի իր կողմից[79]։

Հավանաբար Վոլֆ-Մետերնիխին արված այս նախազգուշացման կարիքը իրականում չէր զգացվում։ Այս ժամանակաշրջանի նրա թղթակցությունը որոշակի տպավորություն է թողնում, որ թուրքերի վրա ազդեցություն ներգործելու նրա ջանքերը գնալով ավելի ու ավելի անփույթ էին դառնում։ Բետմանն-Հոլվեգին հասցեագրված նրա նամակներից մեկը ստիպում է զարմանալ, թե արդյոք նա չէ՞ր դառնում Վիլհելմշտրասեի զգուշության և նպատակահար-

մարության քաղաքականության հաստատել նորանկոչին։ Ոչ վաղուց, փետրվարի 14-ին, նա գրում էր կանցլերին, թե Հալիլը ակնարկել է իրեն, որ Գերմանիայի կողմից Թալեաթին շքանշան շնորհելու ձախողումը որոշ շրջաններում դիտվել է իբրև արհամարհական քայլ, մանավանդ որ առավել փոքր դիրք գրավող թուրքերը դրանից շատ առաջ արժանացել էին նման պատվի։ Ի նկատի ունենալով Թալեաթի աչքառու դերը «հայկական տեղահանության» նախաձեռնման գործում, շարունակում էր դեսպանը, ինքը և իր նախորդները մինչև այժմ աննպատակահարմար էին գտնում որևէ հանրային պատվի արժանացնել մինիստրին, քանի որ դա կարող էր մեկնաբանվել իբրև նշան այն բանի, որ Գերմանիան հավանություն է տալիս Բարձր Դռան վարած քաղաքականությանը հայկական հարցում։ Հիմա, սակայն նման կշռադատումները «այլևս» տեղ չունեն։ Ընդհակառակը, քանի որ Թալեաթը Բարձր Դռան «ամենաազդեցիկ մինիստրն է», Եռյակ դաշինքի «համոզված աջակիցը» և Էնվերի ու Հալիլի հետ միասին առանձնապես է նպաստում «Իթթիհադ վե թերաքքը» կուսակցության մեջ անտանտոֆիլ տարրերին երկյուղի մեջ պահելուն, շատ տեղին կլինի նրան շնորհել (պրուսական) Կարմիր արծվի առաջին կարգի շքանշան։ Թվում է, որ Բեռլինում Վոլֆ-Մետերնիխի վերադասները այս անգամ իսկական կասկածներ ունեին։ Միայն 1917-ին էր, այն բանից հետո, երբ Թալեաթը դարձավ օսմանյան կառավարության պաշտոնական գլուխը, կայզերը քաղաքականապես անհրաժեշտ համարեց շնորհելու նրան գերմանական շքանշան։

Մոտ վեցամսյա ձգձգումներից հետո էր միայն, 1916-ի մարտի սկզբներին, որ Բարձր Դուռը վերջապես պաշտոնապես ծանուցեց, թե Գերմանիան «թելադրել» կամ որևէ այլ կերպ ներգրավված է եղել օսմանյան հայերի դեմ հարուցված արարքներին։ «Ճշմարտությունը հայկական հեղափոխական շարժումների և կառավարական միջոցառումների մասին» խորագիրը կրող երկարաշունչ դեկլարացիայում Բարձր Դուռը ընդգծում էր, որ ինքը «բնականաբար», թույլ չի տվել ոչ մի օտար «միջամտություն ինչ ձևով էլ այն լինի, իր ներքին գործերին», և որ դա որպես

կանոն վերաբերում է ինչպես իր «բարեկամներին ու դաշնակիցներին», այնպես էլ մյուս օտարերկրյա կառավարություններին[81]:

Մինչ Վիլհելմշտրասեն, անկասկած, բավարարված էր, որոշ պրոհայկական խմբակցություններ Գերմանիայում և Ավստրո-Հունգարիայում, ընդհակառակը, անմիջապես առարկեցին Բարձր Դռան այն պնդմանը, թե իր ներքին քաղաքականությունը իր սեփական գործն է: Մարտի 3-ին Էրցբերգերը, որ Կոստանդնուպոլիս իր վերջին այցելության ընթացքում փորձել էր համոզել և՛ Էնվերին, և՛ Թալեաթին ետ կանգնելու իրենց հակահայկական քաղաքականությունից, հուշագիր ուղարկեց Վիլհելմշտրասե, թվարկելով նրանում մի շարք մինիմալ պահանջներ, որոնք Բեռլինը «միանգամից» պետք է պարտադրեր թուրքերին: Բացի հայերի կրոնական հիմնարկությունների և առանձնաշնորհումների վերականգնումից, Էրցբերգերը կոչ էր անում արդյունավետ նյութական օգնություն ցույց տալ տեղահանվածներին, ապահովել նրանց «աստիճանական» հայրենադարձությունը և «վերաբնակեցումը» Փոքր Ասիայում՝ Մալթայի ասպետների օրդենի հովանավորության ներքո, դադարեցնել Բարձր Դռան լիկվիդացիոն օրենքը, այնքանով որքանով դա վերաբերում էր հայերի սեփականությանը և զանազան այլ քայլեր՝ կոչված բնականոն դարձնելու հայերի կացությունը ընդհանրապես և նրանց մեջ եղած հռոմեադավան կաթոլիկներինը՝ մասնավորապես[82]:

Կարճ ժամանակ անց այն բանից հետո, երբ Էրցբերգերը իր կոչն ուղարկեց Վիլհելմշտրասե, Պրագայի և Վիեննայի արքեպիսկոպոսները՝ Լեոն ֆոն Սկրբենսկի-Հրիստիեն և Ֆ. Գ. Փիֆլը Բալհաուզպլաց ուղարկեցին համանման նոտա: Հանդես գալով «ավստրիական ողջ եպիսկոպոսապետության անունից», երկու կարդինալները կոչ էին անում Կենտրոնական զույգ տերությունների կառավարություններին վերջ տալ «սահմռկեցուցիչ» կացությանը, որի մեջ գտնվում էին «Թուրքիայի քրիստոնյա հայերը կամ, ավելի ճիշտ, այդ ազգի դեռևս հարատևող մնացորդները»: Համոզվելու համար, որ Բարձր Դուռը փոխել է իր քաղաքականությունը, անմիջապես պետք է ստեղծվեր թուրք,

ավստրո-հունգարացի և գերմանացի անդամներից կազմված խառն հանձնաժողով՝ «հսկելու համար» հայ ժողովրդի վերաբնակեցումը և բավարար մատակարարումը, ինչպես նաև նրա «կրոնական ազատության» վերականգնումը։ Ավելին, Բարձր Դռանը պետք է ստիպողաբար հիշեցվեր, որ նա պարտավոր է փոխել իր քաղաքականությունը ոչ միայն հանուն մարդասիրության, այլև հանուն այն քրիստոնյա տերությունների, որոնք իր դաշնակիցներն են[83]։

Ոչ Վիլհելմշտրասեն և ոչ էլ Բալհաուզպլացը նպատակահարմար չհամարեցին հաշվի առնել այս անցանկալի հանձնարարականները։ Գերմանիայի պետական գործիչների գլխացավանքը էլ ավելի մեծացավ, երբ և՛ շվեյցարական «Hilfswerk-ը» և՛ գերմանական կազմակերպությունների մի փաղանգ՝ «Orient Mission-ը», «Das Notwendige-ն», «Liebeswerk», և Հայ-գերմանական ընկերությունը տեղահանված հայերին օգնություն և օժանդակություն հասցնելու ծրագրերի կոնկրետ պահանջներով մտան Վիլհելմշտրասե։ Այն դեպքում, երբ շվեյցարական աջակիցները կամենում էին իրենց օգնությունն իրականացնել հյուպատոս Ռյոսլերի և արդեն Սիրիայում ու Միջագետքում հաստատված մյուս գերմանացի պաշտոնյաների միջոցով, գերմանական խմբերը առաջարկում էին կանոնավոր էքսպեդիցիա ուղարկել Օսմանյան կայսրություն[94]։

Վիլհելմշտրասեն, շատ լավ իմանալով, որ թուրքերը անբարյացակամորեն կընդունեն նման «էքսպեդիցիայի» հայտնվելը, մի քանի շաբաթ կասեցրեց առաջարկությունը, նախքան Կոստանդնուպոլիս ուղարկելը։ Ինչ վերաբերում է շվեյցարական «Hilfswerk-ի» պլանին, ապա այն ճիշտ ժամանակին փոխանցվեց հյուպատոս Ռյոսլերին (և արժանացավ նրա ջերմ հավանությանը), բայց նրա լավատեսական վերաբերմունքը Վոլֆ-Մետերնիխը չբաժանեց։ Ինչպես նա հաղորդում էր Բետման-Հոլվեգին մարտի 21-ին, թուրքերը վերջերս Կայսրության տարբեր մասերում ձեռնարկել էին նոր հակահայկական միջոցառումներ և չնայած ինքն արդեն արտահայտել էր իր երկյուղները Բարձր Դռանը, բայց դեռ խիստ վաղ է ասել, թե որքանով

դա լավ էր[85]։ Վեց օր անց դեսպանը հաղորդում էր Բեռլին, որ օգնության շվեյցարական ծրագիրը հաջողության շատ քիչ հնարավորություններ ունի, քանի որ «չնայած բոլոր հակառակ հավաստիացումներին, ավելի ու ավելի ակնհայտ է դառնում..., որ Բարձր Դուռը այժմ պատրաստվում է մնացյալ տեղահանվածներին էլ ոչնչացնել...»[86]։

Չնայած նրա կասկածները հաջորդ շաբաթների ընթացքում լիուլի հաստատվեցին զանգվածային կոտորածների, նոր «իսլամացման» ու տարբեր վայրերում տեղահանությունների վերաբերյալ զեկուցագրերով, և՛ Վիլհելմշտրասեն և՛ Բալհաուզպլացը լուռ մնացին։ Այնպես է երևում, որ Բարձր Դուռը զգում էր գերմանական և ավստրո-հունգարական կառավարական շրջանների ամաչկոտ վարվելակերպը, որովհետև, երբ գերմանական «Orient Mission-ի» և մյուս գերմանական կազմակերպությունների մշակած օգնության նախագիծը վերջապես ապրիլի վերջերին հանձնվեց նրա ուշադրությանը, Բարձր Դուռը կտրականապես հրաժարվեց համաձայնել դրա հետ։ Ինչպես Վոլֆ-Մետերնիխն էր բացատրում Բեռլինին ապրիլի 28-ին, թուրքերն այնպիսի դիրք են գրավել, որ նրանք չեն կարող հայերին արտաքին օգնության որևէ ծրագրեր թույլատրել, ինչ ձևի էլ որ դա լինի, քանի որ հակառակ դեպքում արտասահմանից օգնություն ստանալու հայերի «հույսերը» կրկին կարող են մեծանալ[87]։

Չնայած Վոլֆ-Մետերնիխի, Ռոսլերի և մյուս դիտորդների պարբերական զեկույցներին շարունակվող հակահայկական հանցագործությունների մասին[88], հաջորդ չորս ամիսների ընթացքում Բեռլինը ըստ էության լուռ էր մնում։ Չունենալով ոչ մի հատուկ հրահանգ ղեկավարվելու համար, Վոլֆ-Մետերնիխը պարբերաբար նախազգուշացումներ էր ուղարկում Բարձր Դռանը, որոնք, իհարկե, ոչ մի ազդեցություն չէին գործում։ Ավելի բախտավոր չեղավ OHL*-ն, երբ նա իր երկյուղներն արտահայտեց հայկական աշխատանքային խմբերի Բաղդադի երկաթուղու շրջանից տեղահանելու կապակցությամբ, մի թուրքական

* Գերմանական բանակի բարձր հրամանատարությունը։

միջոցառում, որը հանգեցրեց սոսկ շինարարական աշխատանքների միակատար դադարեցմանը ինչպես Ամանոսի, այնպես էլ Տավրոսի շրջանների անավարտ հատվածներում[89]:

Թեև Վոլֆ-Մետերնիխը Բեռման-Հոլվեգին բացահայտորեն նախազգուշացրեց, որ «արևելյան նահանգներում հայկական հալածանքները մոտ են իրենց «վերջնական ծիրը», ոչ մի պատասխան կամ նոր հրահանգներ չստացավ Բեռլինից[90]: Վիեննայում նույնպես մեռյալ լռություն էր տիրում: Երբ Բալհաուզպլացը օսմանյան դեսպանատնից նամակ ստացավ այն մասին, թե հունգարական պառլամենտում որոշ կղերական շրջաններ, ըստ տեղեկությունների, ծրագրում են հայկական հարցը բարձրացնել պառլամենտում, և որ Հունգարիայի առաջնորդ կարդինալ Յանոշ Չեռնոկը կողմ է նախագծին, Բուրիանը շտապեց գրել պրեմիեր Տիսային և հիշեցնել նրան, որ «ներկայումս նման հարցադրումը խիստ անժամանակ կլինի»[91]: Բուրիանը կարիք չուներ անհանգստանալու, քանի որ կարդինալ Չեռնոկը իսկույն ժխտեց, թե ինքը երբևէ մտածել է հանձն առնել նման քայլ: Նա բացատրեց Տիսային, որ ինքը ընդունակ չէ նման «անտակտության», որ օսմանյան դեսպանությանը պետք է հավաստիացնել, որ «ես անկեղծորեն ցանկանում եմ աջակցել հունգարա-թուրքական բարի հարաբերություններին և հույս ունեմ, որ թուրքական կառավարությունը իր հպատակներից ոչ որի չի հալածում նրանց կրոնական համոզմունքների համար, այլ պաշտպանում է նրանց մոլեռանդությունից»[92]:

Մինչ այդ Լեպսիուսը ավարտել էր իր ծավալուն աշխատանքը հայկական հալածանքների ետնախորքի, ընթացքի և արդյունքների վերաբերյալ: Տպված ձեռագրի իրավունքով և տիտղոսաթերթի վրա նշված իբրև «խիստ գաղտնի», այդ գիրքը՝ «Bericht über die Lage des Armenischen Volkes in der Türkei» 1916-ի ամռանը Գերմանիայում բաժանվեց հազարավոր մարդկանց, և 20000 օրինակ տարածվելուց հետո միայն Պոտսդամում բողոքական «Tempelverlag-ի» կողմից պարզվեց, որ թուրքերն իմացել են Լեպսիուսի տրակտատի մասին: Վիլհելմշտրասեն

սեպտեմբերի 9-ին պաշտոնական պատճառը ստացավ դեսպան Հաքքիից վերջ դնել Լեպսիուսի «քշնամական ագիտացիային» և կանխել նրա խիստ «տեղեկատվական» գրքույկի հետագա տարածումը: Հավանաբար, ի հետևանք դրա, գերմանական գրաքննությունը պաշտոնապես արգելեց Bericht-ի հետագա օրինակների տպագրությունը և տարածումը[93]:

Վիլհելմշտրասեի համաձայնությունը օսմանյան դեսպանության պահանջի հետ հավասարազոր էր, քանի որ Լեպսիուսի գրքույկը պարունակում էր մանրամասն և մերկացնող ճշմարտություններ այն ամենի, ինչ որ բաժին էր ընկել օսմանյան հայերին պատերազմի սկզբից ի վեր: Ավելին, չնայած այն պարզ նախազգուշացմանը, որ արվում էր նախաբանում, թե Bericht-ի հայտնությունները չպետք է օգտագործվեն քաղաքական պրոպագանդայի նպատակներով, հենց միայն նախաբանը բավականաչափ քաղաքական պայթուցիկ էր պարունակում՝ կատր-կատր խզտտակելու ողջ գերմանա-օսմանյան դաշնակցությունը:

«Քրիստոնյա ամենամիծ ազգը,— հայտարարում էր Լեպսիուսը իր ընթերցողներին,— քանի որ ապրում է թուրքական տիրապետության տակ, կանգնած է ոչնչացման սպառնալիքի առջև: Հայ ժողովրդի $^{6}/_{7}$-ը թալանվել, զրկվել է իր ունեցվածքից, վտարվել է տուն ու տեղից և, բացի նրանցից, ովքեր ընդունել են իսլամը, սպանվել է կամ տարագրվել անապատները: Միայն ժողովրդի մեկ չորրորդն է խուսափել տեղահանումից... Ավելին. ասորի նեստորականները և, մասամբ, քրիստոնյա հույները ևս տառապում են հալածանքներից»[94]:

Այս փաստերը,— շարունակում էր Լեպսիուսը,— հայտնի էին գերմանական կառավարությանը, որն արեց «ինչ որ կարող էր» կասեցնելու բռնություններ: Իր Bericht-ի նպատակն է, ասում էր նա, պարզապես առաջ քաշել օգնության «արդյունավետ» ծրագիր հայերի հարատևության համար, մի ծրագիր, որը լիակատար աջակցություն է գտնում Բեռլինի կառավարության կողմից՝ համաձայն նրա իսկ սեփական հայտարարությունների:

Բոլոր քրիստոնյա ազգերի մեջ մեզ՝ գերմանացիներիս վրա է դրված տարաբախտ (հայերի) ընկատմամբ կատարելու սամարացու ծառայությունը: Մենք ի վիճակի չեղանք կանխելու այդ ազգի կեսի բնաջնջումը: Մեր խիղճը պահանջում է փրկել մյուս կեսը: Մինչև հիմա ոչինչ չի արվել կարիքի մեջ գտնվողների համար: Այժմ որևէ բան պետք է արվի:

Մենք հաց ենք խնդրում սովյալ կանանց ու երեխաների համար, օգնություն հիվանդների ու մահացողների համար: Այրիների և որբերի մի ժողովուրդ մեկնել է իր ձեռքը գերմանական ժողովրդին, որպես միակին, որը ի վիճակի է օգնելու նրան: Մյուս քրիստոնյա ազգերի համար, որոնք կկամենային օգնել, ճանապարհը փակ է դեպի տարաբախտ (հայերը):

Մենք հայցում ենք ոչ թե ժամանակավոր, այլ մշտական օգնություն: ... Մենք գիտենք, թե ճիգերի ինչպիսի լարում է պահանջվում նրանցից, ովքեր մնացել են տանը և պարտավոր են կատարել ամենահրատապ պահանջները, որ դրել է նրանց առջև պայքարը հայրենիքի համար: Բայց սա նույնպես բարոյական պարտք (Ehrenpfliht) է դնում մեր ժողովրդի վրա, և (մենք պետք է տանք) ապացույցն այն բանի, որ ինքնապահպանման և հաղթանակի մեր փնտրտուքի մեջ մենք չենք կարող մերժել մարդասիրության և քրիստոնեական խղճի թելադրանքը»[95]:

Այն գերմանացիների մեջ, որոնց «քրիստոնեական խղճին» այդպես սուր կերպով ուղղված էին Լեպսիուսի ջանքերը, գտնվում էր մեծ դքսուհի Լուիզ Բադենցին, որը շտապ գրեց Բետման-Հոլվեգին, հարցնելով թե ի՞նչ է արված հայկական սարսափների կապակցությամբ: Սեպտեմբերի 9-ին կանցլերը գաղտնի գրությամբ պատասխանեց Բադենի արքունիքում Պրուսիայի ներկայացուցչին, հրահանգելով մատնանշելու մեծ դքսուհուն, որ ողջ հայկական հարցը անչափ նուրբ խնդիր է: Ինչպես Բետման-Հոլվեգն էր բացատրում.

«Հայերի տեղահանության ընթացքում, որը իբրև այդպիսին հավանաբար անհրաժեշտ էր, անշուշտ սարսափելի բաներ են պատահել, իսկ մեր շարունակական և ազ-

դեցիկ քայլերը Բարձր Դռան մոտ սոսկ աննշան հաջողություն են ունեցել։ Բանակռիվը այս հարցի շուրջը, սակայն, ներկա պահիս միայն վնաս կարող է բերել։ Թուրքական որոշ շրջաններում արդեն իսկ գոյություն ունեցող հակատրամադրությունները մեր դեմ (իսկ Թուրքիայի դաշինքը մեզ հետ այժմ հատկապես առանձնահատուկ նշանակություն ունի մեզ համար) էլ ավելի կուժեղանան, մինչդեռ հայերն իրենք ոչ մի օգուտ չեն ստանա։ Ընդհակառակը, հարցի հասարակական քննարկումը կդրդի մուսուլմաններին դիմելու նոր հալածանքների, որոնց դեմ մենք գրեթե անզոր կլինենք»[96]։

Լեպսիուսի ստեղծած աղմուկից շփոթված, Վիլհելմշտրասեն սեպտեմբերի վերջերին միջոցներ ձեռք առավ արտասահմանյան ուղևորությունների իր բոլոր թույլտվությունները վերացնելու համար։ Ինչպես պարզվեց, Լեպսիուսին Գերմանիայում պահելու որոշումը խիստ ուշ եղավ, որովհետև ուղիղ երկու շաբաթ դրանից առաջ նա օրինականորեն անցել էր դանիական սահմանը և բնակություն հաստատել Հոլանդիայում[97]։

Գերմանական «Orient Mission-ի» և Գերմանա-հայկական ընկերության Լեպսիուսի համախոհները, թվում է, նախապես վճռել էին հետևել Bericht-ին նոր պամֆլետներով և թերթիկներով՝ հայերի դրության վերաբերյալ, սակայն Էռնստ Ջաքի համոզիչ պատճառաբանությունների շնորհիվ նրանք հրաժարվեցին այդ մտադրությունից։ Սեպտեմբերի 15-ին տեղի ունեցած մի հուզիչ միտինգի ժամանակ Ջաքը համոզեց Ռորբախին և Գերմանա-հայկական ընկերության մյուս երկու ղեկավար դեմքերին (պաստոր Շտիերին և դոկտոր Ջեյմս Գրինֆիլդին), որ հայերի օգտին տարվող շարունակական քարոզչությունը նրանց ավելի շատ վնաս, քան օգուտ կարող է բերել, որ տեղահանվածների ճակատագիրը կարելի է շատ ավելի արդյունավետ կերպով բարելավել գերմանական կառավարության կողմից դիվանագիտական հարցապնդումների և օգնության ծրագրերի միջոցով։ Հաջորդ օրը Ռորբախը, Շտիերը և Գրինֆիլդը հայտնեցին Ջաքին, որ իրենք կկամենային դադարեցնել իրենց պրոպագանդիստական ջանքերը, եթե Բեռլինը հնա-

րավոր ամեն բան անի հայերին օգնելու համար: Նրանք ավելացնում էին նաև, որ Լեպսիուսին կամ որևէ այլ մեկին ուղղված այսուհետև լուռ մնալու կոչը քիչ հաջողություն կունենա, քանի դեռ բոլոր մերկացուցիչ պատմությունները օսմանյան հայերի մասին չեն անհետանա գերմանական մամուլի էջերից, ինչպես նաև հանգիստ չեն մնա նրանք, ովքեր հենց հայերին են մեղադրում նրանց կրած անհանգստությունների մեջ[98]:

Լիովին պարզ չէ, թե արդյո՞ք Ջաքը հրավիրեց Վիլհելմշտրասեի ուշադրությունը այդ qoid pro quo*'-ի վրա, սակայն հազիվ թե պատահական զուգադիպում էր այն, որ մոտ մեկ շաբաթ անց Ցիմերմանը հանդես եկավ իր խստագույն հայտարարությամբ հայկական հարցի վերաբերյալ: Օգտվելով Հալիլ բեյի ներկայությունից Բեռլինում, նա օսմանյան արտաքին գործերի մինիստրի երեսին ասաց, որ եթե նախկինում որոշ տեղահանություններ կարելի էր համոզիչ կերպով արդարացնել այն ժամանակ տիրող ռազմական կացությամբ, ընթացիկ «պլանավորված միջոցառումները կանանց ու երեխաների դեմ, որոնք կազմում են հայ ժողովրդի տխուր մնացուկները, ոչ մի կերպ չեն կարող արդարացվել կամ ներվել»[99]:

Ինչպես նախապես հիշատակվեց, այդ ժամանակամիջոցում Բարձր Դուռը հաջողեցրել էր, որպեսզի Վոլֆ-Մետերնիխը ևս կանչվի: Հաջորդ վեց շաբաթների ընթացքում գերմանական շաղերը Կ. Պոլսում ներկայացնում էր դեսպանատան խորհրդական Ռադովիցը: Իբրև ժամանակավոր հավատարմատար, Ռադովիցը ակնհայտորեն նպատակահարմար չէր գտնում չափից դուրս ներքաշվել պոտենցիալ կերպով պայթուցիկ հայկական գործերի մեջ և բավարարվեց այդ նյութի վերաբերյալ Բեռլինի իր գերադասներին պարբերաբար զեկուցագրեր ուղարկելով[100]: Լույսի միակ ճառագայթը, գերմանական պասսիվության այս մոայլ ներկայացման մեջ, անցկացրեց Լիման ֆոն Սանդերսը, որը եռանդուն կերպով միջամտեց Զմյուռնիայից հայերին տեղահանելու նախաձեռնության դեմ: Օգ-

*' Փոխոխություն, թյուրիմացություն (լատ.):

տագործելով իր հեղինակությունը իրրև հինգերորդ բանակի հրամանատար (նրա որոշ զորամասեր տեղակայված էին Զմյուռնիայում), Լիմանը նոյեմբերի 10-ին հայտնեց Բահրանգի վաղիին, որ հայերի զանգվածային տեղաշարժումը խանգարում է պատերազմական ապահովության պահանջներին, և որ ինքը զորքեր կօգտագործի կասեցնելու համար ոստիկանությանը, եթե վերջինս շարունակի հայերին շուրջկալել։ Երբ վալին մատնանշեց Լիմանին, որ տեղահանումները անցկացվում են կենտրոնական կառավարության հրամանով, գեներալը կրկնեց իր վետոն և առաջարկեց վալիին նոր հրահանգներ ստանալ Կոստանդնուպոլսից[101]։

Վիլհելմշտրասեում Լիմանի անողոքափառ միջամտությունը օսմանյան դաշնակցի «ներքին գործերին» ողջունվեց, և Ռադովիցը հրահանգներ ստացավ աջակցել գեներալին նպատակահարմար քայլեր առնելու Բ. Դռան մոտ։ Մի շարք ցուցմունքներ կան, սակայն, որ Վիլհելմշտրասեի ղեկավարները իրականում քիչ հույս ունեին, որ թուրքերը գործնականում ձեռք կքաշեն իրենց նախնական ծրագրից, քանի որ նոյեմբերի 15-ին Յագովը հարցում էր արել Կոստանդնուպոլսի դեսպանությանը, թե հնարավոր չէ՞ արդյոք Զմյուռնիայի հայերին Գերմանիա ուղարկել։ Կյուլմանը, որը մինչ այդ ժամանել էր Կոստանդնուպոլիս գլխավորելու դեսպանությունը, երկու օր անց հեռագրել էր Գերմանիա, որ դժվար թե կարելի լինի Բարձր Դռանը առաջարկել տեղահանված հայերին Գերմանիա տեղափոխել, առանց թարմ «կասկածներ» հարուցելու թուրքերի մոտ, և որ ինքը ամեն ինչ կանի կայունացնելու վիճակը Զմյուռնիայում։ Հազիվ թե նա գործնականում այդ հարցը բարձրացրեց Բարձր Դռան մոտ, քանի որ դիվանագիտական ձեռնարկման կարիք այլևս չզգացվեց, քանի որ դրանից կարճ ժամանակ անց Զմյուռնիայի տեղահանությունը պաշտոնապես խափանվեց[102]։

Միացյալ Նահանգների կառավարության և գերմանական կողմնակից շրջանների վերսկսված դիմումներին դեմ հանդիման, Վիլհելմշտրասեն նոյեմբերի 14-ին և վերստին

ծննդյան տոնի օրը հրահանգեց Կոստանդնուպոլսի իր դեսպանությանը մատնանշելու Բարձր Դռանը, որ նրա հակահայկական քաղաքականության մեղմացումը ուշացել է[103]։ 1917-ի հունվարի 4-ին դեսպանության խորհրդական Գյոպերտը դրա հիման վրա նոտա ներկայացրեց Հալիլիին, որով կրկին գերմանական կառավարության կողմից ցավ և դժգոհություն էր հայտնվում շարունակվող «բռնության ակտերի» և «նահանգներում» հայերի բռնի կրոնափոխությունների կապակցությամբ։ Հետագա տեսակցության ժամանակ օսմանյան արտաքին գործերի մինիստրը համաձայնեց աշխատել բռնի կրոնափոխություններն անմիջապես դադարեցնելու ուղղությամբ, բայց հայտարարեց, որ անհնարին է և անգործնական ի չիք դարձնել այն, ինչ արդեն կատարված է այդ ասպարեզում, քանի որ դա հավանաբար ծայր կտա «նոր կրոնափոխությունների»։ Հենց որ պատերազմը վերջանա, մխիթարել էր նա Գյոպերտին, հակառակ իրենց կամքի բռնի կրոնափոխ եղածները որոշակիորեն հնարավորություն կստանան վերադառնալ քրիստոնեական հավատին ճիշտ այնպես, ինչպես եղել է հալածանքներից հետո՝ Աբդուլ Համիդ II-ի ժամանակաշրջանում[104]։

Չնայած այն բանին, որ Թալեաթի ղեկավար դերը նախորդ տարիների հայկական հալածանքներում բացահայտորեն ակնհայտ էր բոլոր նրանց համար, ովքեր գիտեին, թե ինչ էր կատարվում Բարձր Դռան ներսում, 1917-ի փետրվարի 4-ին նրա բարձրացումը մեծ վեզիրի պաշտոնին առաջինը ողջունվեց Կյուլմանի կողմից իբրև մի իրադարձություն, որը կարող է վճռական բարելավում բերել օսմանյան հայերին։ Նրա բավական միամիտ հակազդեցությունը գլխավորապես հիմնված էր փետրվարի 15-ին պառլամենտում արտասանած Թալեաթի բացման ճառի վրա, որում նա հայտնել էր իր կաբինետի մտադրությունը՝ «ամեն մի օսմանցու օժտել սահմանադրությամբ նրան շնորհված բոլոր իրավունքներով և, այդպիսով, ապահովել օրենքի տիրապետությունը երկրում»։ Կյուլմանի խանդավառ տրամադրությունը բարձրացնելու նպատակով, Թալեաթը փետրվարի 24-ին անձնական հարցազրույցի ժա-

մանակ հավաստիացրեց նրան, որ ինքը «մտադիր է բոլոր հարցերում հետևել նոր կուրսի»։ Ինչ վերաբերում է ոչ թուրք ազգություններին, ինքը արդեն տեղեկացրել է հայկական հարանվանությունների ղեկավարներին, որ անցյալ երկու տարիների պատերազմական միջոցառումները պետք է վերացվեն[105]։

Ինչպես և շատ հաճախ նախկինում, Բարձր Դռան հավաստիացումներն անարժեք դուրս եկան։ Չնայած շատ վիլայեթներում հետագա տեղահանություններ չկային, շատ քիչ բան էր փոխվել թշվառության մեջ գտնվող տեղահանված զանգվածների կանխամտածված անտեսման քաղաքականության մեջ։ Ավելին, մի շարք վայրերում հայերի բռնի իսլամացման ջանքերը շարունակվում էին նախկին ուժգնությամբ[106]։

Միջագետքում և Սիրիայում վերապրած հայ տարագիրների անհույս կացության մասին կարելի է տեղեկություններ հավաքել մի շարք հետազոտություններից, որոնց Հալեպի, Բեյրութի, Դամասկոսի և Մոսուլի գերմանական հյուպատոսարանները ձեռնարկել են 1917-ի գարնանը։ Հալեպի շրջանում հյուպատոս Ռյոսլերը գտել էր շուրջ 45000 տարագիրներ, որոնցից 25000-ը գտնվում էին «ծայրահեղ կարիքի մեջ, շատերը սովամահության եզրին»։ Բեյրութի շրջանում դրությունը նվազ ճգնաժամային էր, թեև լայն տարածում ուներ իսլամի դավանանքի «ընդունումը»։ Դամասկոսի հյուպատոսարանի հաշվումներով, իր իշխանության շրջանակներում մոտ 30000 հայեր տակավին կենդանի էին, որոնցից շատերը գտնվում էին «ողբալի վիճակում»։ Հայ տարագիրների թիվը Մոսուլի շրջանում, համաձայն հյուպատոս Վուստրովի, հաշվվում էր մոտ 8000, «մեծ մասամբ կանայք ու երեխաներ»։ Նա հաստատում էր, որ բացի դրանից, ուրիշ շատ կանայք և աղջիկներ ապրում էին «կիսաստրուկ վիճակում» անապատային ու լեռնային որոշ ցեղախմբերի մոտ[107]։

Թեև արևելյան նահանգների գերմանական հյուպատոսարանների մեծ մասը այս ժամանակաշրջանում ակտիվորեն ներգրավված էր մասնավոր կերպով ֆինանսավորվող բարեգործական զանազան ծրագրերում, որոնք դրամ էին

տանում գերմանական, շվեյցարական, ամերիկյան և այլ աղբյուրներից, հայ տարագիրներին կենդանի պահելու այդ ջանքերը միայն մասամբ էին հաջողակ: Տեղական և նահանգական պաշտոնյաները բազմաթիվ դեպքերում պասսիվ կամ ակտիվ դիմադրություն էին ցույց տալիս, թեև մի շարք շրջաններում օսմանյան իշխանությունները բավականաչափ լավ համագործակցում էին և թույլ էին տալիս բաժանել պարենամթերք և այլ օգնության միջոցներ[108]:

1917-ի օգոստոսին սիրիական նահանգների նահանգապետ ծովային մինիստր Ջեմալ փաշան եկավ Բեռլին գերմանական կառավարության հրավերով: Քանի որ Էնվերը և Բարձր Դռան մյուս խոշոր դեմքերը գնալով ավելի ու ավելի էին կասկածում Ջեմալի վրա, որ նա դավեր է նյութում իրենց դեմ, այցելությունը ի վերջո մասամբ կարգադրվել էր նրան ժամանակավորապես օսմանյան մայրաքաղաքից հեռացնելու նպատակով (ուր նա հայտնվել էր հակառակ Էնվերի և Թալեաթի ցանկության): Բեռլինում եղած ժամանակ Ջեմալը ընդունեց գերմանական Evangelische Missionshilfe-ի դիրեկտորներից մի քանիսին, որոնք խնդրեցին, որ նա օժանդակի իրենց բարեգործական գործունեությանը հայերի մեջ: Ջեմալը պատրաստակամությամբ խոստացավ օգնել իր իշխանության ոլորտում՝ Սիրիայում և հավաստիացրեց նրանց, որ ինքը կփորձի դրական ազդեցություն ներգործել նաև մյուս շրջաններում: Հիմք կա հավատալու Ջեմալի առաջարկի անկեղծությանը, բայց քանի որ մի քանի ամիս անց նա թողեց սիրիական հրամանատարությունը, համաձայնությունը խիստ փոքր պտուղներ բերեց[109]:

Ռուսական Կովկասյան բանակի քայքայմամբ 1917-ի աշնանը, և կրակի դադարեցման բոլշևիկյան պահանջով, հուզող «Հայկական հարցը» նոր ծավալ ընդունեց, քանի որ հարյուր հազարավոր հայեր, ներառյալ Օսմանյան կայսրությունից փախածները, նստած էին փոշիացող ռուսական ճակատի ետևում:

Բրեստ-Լիտովսկի զինադադարի կնքումից քիչ առաջ Թալեաթը «գաղտնի» հաղորդեց Բեռլին, որ Բարձր Դուռը մտադիր է ընդհանուր ներում շնորհել և ֆինանսական օգ-

նություն տրամադրել հայերին, «եթե սեպարատ հաշտություն կնքվի Ռուսաստանի հետ»: Թեև որոշակիորեն սա քարի լուր էր, Ռայխում կային որոշ շրջաններ, որոնք ամենևին հակված չէին հավատալու, թե թուրքական քաղաքականության մեջ որևէ արմատական փոփոխություն կկատարվի: Դեկտեմբերի 31-ին Deutsche Fraktion-ից Ռայխստագի դեպուտատ Ռաձիարդ Մումը ձևականորեն դիմեց Վիլհելմշտրասե՝ հավաստիանալու համար, որ ռուսների կողմից էվակուացվող շրջանների հայերը թուրքերի զոհը չեն դառնա: Եթե օսմանյան բանակը շարժվելու է դեպի այդ շրջանները, նա առաջարկում էր, որ գերմանական սպաները և հյուպատոսարանների պաշտոնյաները ուղեկցեն նրան և այդպիսով աչք պահեն թուրքերի վրա: Մի շաբաթ անց, Ռորբախը և Գերմանա-հայկական ընկերության մյուս ղեկավարները դիմեցին նոր կանցլեր կոմս Գեորգ ֆոն Հերտլինգին է'լ ավելի հետուն գնացող առաջարկով: Նրանք պահանջեցին համապատասխան գերմանական հովանավորություն երբեմնի ռուսական տերիտորիաների հայերի նկատմամբ, ինչպես նաև դրական աջակցություն՝ ստեղծելու համար հայկական ինքնավարություն: Քանի որ թուրքերը հետամուտ են պանիսլամիզմի ծրագրին, էական էր, որպեսզի Գերմանիան հոչակեր իր քրիստոնեական համերաշխությունը հայերի հետ[110]:

Բրեստ-Լիտովսկի զինադադարին հաջորդած շաբաթների ընթացքում դրությունը Անդրկովկասում վերին աստիճանի անկայուն էր: Մի շարք վայրերում տեղի ունեցան բազմաթիվ ընդհարումներ հայկական զինված խմբերի և մահմեդական ազգաբնակչության միջև: 1918-ի փետրվարի սկզբներին նորությունների օսմանյան Milli Agence գործակալությունը մի երկարաշունչ հայտարարություն հրապարակեց զինադադարի գծից այն կողմ ընկած շրջաններում հայերի կողմից կատարվող կոտորածների վերաբերյալ: Գերմանիայում որոշ պրոհայկական կազմակերպությունների պահանջով, որոնք կասկածում էին, որ գործակալության զեկուցագիրը պետք է ծառայի իբրև նախաբան թուրքական «հակամիջոցների» նոր ալիքի համար, փե-

տրված 8-ին Վիլհելմշտրասեն հրահանգեց Բեռնսդորֆին՝ հաստատակամորեն ահազանգելու Բարձր Դռանը՝ խուսափել խտրական հալածանքները վերակենդանացնելուց։ Քանի որ նրանք վերադառնալու են կայսրության ռուսական գրավման տակ եղած մասը, ասում էր ենթաքարտուղար Հելմար ֆոն դեմ Բուշեն, թուրքերը պետք է չպահպանեն «խստագույն կարգապահություն, ձեռնպահ մնան բոլոր պատժիչ միջոցառումներից» և դատական հետապնդում սկսեն բացառապես այն հայերի դեմ, ովքեր իրականում «մասնակցել են մահմեդական բնակչության դեմ կատարված հանցագործություններին»։ Բեռնսդորֆը պատասխանեց մի շարք վերահամոզող ուղերձներով, նշելով, որ գեներալ ֆոն Սեկտը աչք է պահում Էնվերի վրա և որ Հալիլը հավաստիացրել է իրեն, որ օսմանյան զորքերը խստագույն հրամաններ են ստացել չներգրավվել ռեպրեսիաների մեջ[111]։

Փետրվարի 14-ին, երկու օր անց այն բանից հետո, երբ օսմանյան զորամիավորումները սկսեցին անցնել անդրկովկասյան դեմարկացիոն գիծը, Վիլհելմշտրասեն Բեռնսդորֆին ուղարկեց գերմանական Evangelische Missions Ausschuss-ի պետիցան, որը կոչ էր անում ստիպողական քայլեր առնել կանխելու հայերի դեմ թուրքական վայրագությունների կրկնությունը։ Երկու շաբաթ անց Բուշեն անձամբ հրահանգում էր Բեռնսդորֆին ներշնչել Թալեաթին, Էնվերին և թուրքական մյուս ղեկավարներին, որ որոշակիորեն նրանց սեփական շահերից է բխում՝ ցուցադրել ամբողջ աշխարհին, որ օսմանյան կառավարությունը մտադիր է «հավասար, մեղմ ու արդարացի վերաբերմունք» ցույց տալ այժմ կրկին վերագրավվող նահանգների ամբողջ բնակչության նկատմամբ։ Բուշեի կարծիքով, Բարձր Դռան համար լավ սկիզբ կլիներ ընդհանուր ներում շնորհել հայերին, ներառյալ նրանց, ովքեր մինչև հիմա զենք են կրել։

«Բոլորովին մի կողմ թողած այն փաստը, որ հետագա, հավանաբար դժվարին պայքարից այդպիսով կարելի կլինի խուսափել, (ներումը) կլինի միակ կենսունակ մեկնակետը՝ հայերին, որոնք ազգաբնակչության անհրաժեշտ և արժեքավոր մի տարրն են նահանգներում, վերստին դարձ-

ձելու Թուրքիայի լոյալ հպատակները:... Ցանկալի կլինի նաև քննարկման ենթարկել այն հայերի հայրենադարձության հարցը, որոնք տարագրված են կայսրության ներքին շրջանները»:

Ի պատասխան դրան, Բեռնսդորֆն իսկույն հեռագրեց, որ «ամիսներ շարունակ» ինքը նման մի ծրագիր է առաջ քաշում, թեև ոչ առանձնապես մեծ հաջողության: Սակայն, երևում է, որ Բարձր Դուռը աստիճանաբար ավելի արձագանքող էր դառնում, քանի որ Թալեաթը կրկին անգամ խոստացել է, որ շուտով ներում չհոչակվի[112]:

Թեև վերագրավված օսմանյան նահանգների դրության մասին հավաստի քիչ տեղեկություններ էին հասնում արտաքին աշխարհին, Վատիկանը որոշեց մարտի սկզբներին պաշտոնապես դիմել ինչպես Ռայխի կառավարությանը, այնպես էլ Բարձր Դռանը՝ Անդրկովկասի հայերի վերաբերյալ: Չորս օր հետո Պաչելին նման դիմում հանձնեց Վիլհելմշտրասե, իսկ մոնսինյոր Դոլչին՝ Կոստանդնուպոլսում պապական ներկայացուցիչը, տեղեկացրեց Բեռնսդորֆին, որ ինքը շուտով նման բնույթի նոտա է հանձնելու Բարձր Դռանը: Դեսպանը իսկույն հեռագրեց Բուխարեստ (որտեղ Ռումինիայի հետ հաշտության բանակցություններ կապակցությամբ գտնվում էին ինչպես Կյուլմանը, այնպես էլ Թալեաթը) և համոզեց, որպեսզի հաճախ խոստացված թուրքական ներման դեկրետը կամ որևէ այլ հանդարտեցուցիչ կոչ հրապարակվի անհապաղ: Թալեաթը հրաժարվեց «շտապելուց», բայց վերջնականապես հավաստիացրեց Կյուլմանին, որ Կոստանդնուպոլիս վերադառնալուց հետո որոշակիորեն կգործի այդ ուղղությամբ:

Գերմանիայում կանցլեր Հերտլինգը այդ միջոցին կազմել էր բավական խուսափողական պատասխան Վատիկանի դիմումին: Նա նշում էր, որ Գերմանիան միշտ էլ հակված է եղել կանխելու թուրք-հայ անախորժությունները, բայց ավելացնում էր, որ հայկական զինված խմբերի գոյությունը Անդրկովկասում և նրանց վայրագությունները մահմեդական բնակչության նկատմամբ դժվարացնում են իրադրությունը վերահսկելու գործը: Իհարկե, եթե Վատիկանն իսկապես կամենում է օգնել, պետք է համոզի Ան-

տանտի կառավարություններին պաշտպանելու իրենց ագիտացիոն ճառերի մեջ[113]:

Մարտի 18-ին, քիչ անց այն բանից հետո, երբ Խորհուրդների համագումարը Մոսկվայում պաշտոնապես վավերացրեց Բրեստ-Լիտովսկի հաշտությունը, գերմանական Ռայխստագը ձեռնամուխ եղավ պայմանագրի քննարկմանը: Մինչ աջ և կենտրոնի կուսակցությունները բացահայտորեն ցնծում էին, որ արևելքում խաղաղություն է ձեռք բերվել իրենց իսկ պայմաններով, մեծամասնության սոցիալիստները և, է՛լ ավելի մեծ աղմուկով անկախ սոցիալիստները (SPD) կատաղի կերպով քննադատում էին համաձայնագիրը: Մարտի 19-ին Vergewaltigungsfrieden-ի վրա կատարած մի կատաղի հարձակման ժամանակ, որը բարդվեց բոլշևիկների վրա, SPD-ի դեպուտատ Գեորգ Լեդեբուրը հանդես եկավ Կարսի, Արդահանի և Բաթումի շրջանները de facto թուրքերին զիջելու դեմ: Ազգագրական առումով, շեշտեց նա, թուրքերը ոչ մի իրավունք չունեն այդ շրջանների վրա, և քանի որ նրանք են մտել, նրանք, հավանաբար, կոչնչացնեն «հայ և վրացի ազգաբնակչությանը» ճիշտ այնպես, ինչպես նրանք «գրեթե ոչնչացրին» Անատոլիայի հայերին նախորդ տարիների ընթացքում: Նոր ջարդերը կանխելու համար Բեռլինը և Վիեննան պետք է արգելեն հիշյալ երեք շրջանների գրավումը օսմանցիների կողմից և, եթե դա անհրաժեշտ է, միջոցներ ձեռք առնեն տեղական ազգաբնակչության պաշտպանության համար՝ չեզոք զորքերի միջոցով, ինչպես շվեդական կամ շվեյցարական: Քանի որ որոշակի կասկածներ կան վերսկսված հայկական ջարդերը կանխելու Ռայխի կառավարության անհրաժեշտ վճռականության վերաբերյալ, ուստի Լեդեբուրը եզրակացնում էր, որ այժմ Ռայխստագը պետք է հոգ տանի, որպեսզի համապատասխան քայլեր ձեռք առնվեն «այդ սարսափահար եղած ժողովուրդների պաշտպանության» համար[114]:

Հավանաբար ի պատասխան այս մարտահրավերի, Վիլհելմշտրասեի աշխատակիցները մի երկարաշունչ հուշագիր կազմեցին հայկական հարցի վերաբերյալ, որը Բեռնշեն հաջորդ օրերին օգտագործեց Ռայխստագի [illegible]

հետ ունեցած զրույցների ժամանակ: Բնորոշելով արտաքին գործերի միևիստրության տեսակետը, հուշագիրը նշում էր, որ 1) ամեն հնարավոր բան արված է արգելելու համար հայկական հալածանքների վերսկսումը. 2) Բարձր Դուռն ինքը քանիցս նշել է իր բարի մտադրությունները, և 3) խաղաղության և կարգուկանոնի վերահաստատումը հայկական շրջաններում վերջին հաշվով կախված կլինի հայերի իսկ պատրաստակամությունից՝ հրաժարվել «անկախության իրենց թաղձանքից և պատասխանել թուրքերի հաշտության առաջարկին»: Անկասկած, Բեռլինի պաշտոնական շրջանները՝ կանխելու Անդրկովկասում դեպքերի դժբախտ զարգացումը, լավագույն կերպով պաշտպանվելին, «եթե գերմանացի հայասերները օգտագործեին իրենց ազդեցությունը սանձազերծելու հայերին, որ դիմադրությունը գոյ է, հավասար ինքնապաշտպանության», և դրա փոխարեն հորդորեին նրանց բանակցել թուրքերի հետ՝ նրանց հնազանդվելու հարցով»[115]:

Թեև այս պաշտոնական հայտարարությունը կարծես ազդեց Ռայխստագի Գլխավոր կոմիտեի անձնական մեծամասնության վրա՝ նրա վերջնական որոշման մեջ՝ չպահանջել օտարյան զորքերի հեռացումը Կարսի, Արդահանի և Բաթումի շրջաններից, ֆինանսական կոմիտեում արտահայտությունները շատ ավելի հետևեսական էին: Համաձայն նրա անդամներից մեկի՝ Հանս Փ. Հանսենի նոթերի, իր ընկերակիցներից մի քանիսը ի հայտ բերեցին խորին աճհանգստություն վերսկսվելիք թուրքական վայրագությունների կապակցությամբ, մինչդեռ Գուստավ Շտրեզեմանը զգուշորեն հույս հայտնեց, որ Բարձր Դուռը փոխել է իր գործելակերպը: Միակ բանախոսը, որ փորձեց պաշտպանել թուրքերին, ըստ Հանսենի, դա Mitteleuropa-ի կողմնակից Ֆրիդրիխ Նաումանն էր[116]:

Երբ մարտի 22-ի պլենար նիստում Ռայխստագը ամփոփում էր վիճաբանությունները, USPD-ն կրկին անգամ սուր քննադատության ենթարկեց Բրեստ-Լիտովսկի պայմանագրի անդրկովկասյան հոդվածը: Հուգո Հասազեն հիշեցրեց պալատին այն զանգվածային ջարդերը, որոնք թուրքերը կատարել էին նախորդ տարիներին և կրկին

շեշտեց, որ USPD-ն երբեք պատասխանատվություն չի վերցնի իր վրա «Բարձր Դռան ձեռքը տալու հայկական ազգաբնակչություն ունեցող տերիտորիաներ»: Այն բանից հետո, երբ Շտրեզեմանը հակահարված տվեց, ասելով, որ օսմանյան հայերի անախորժությունները մեծ մասամբ հետևանք էին նրանց իսկ «վարվելակերպի սահմանամերձ շրջաններում, համաշխարհային պատերազմի առաջին ամիսներին», և որ Գերմանիան միջոցներ կամ իրավունք չուներ իր կամքը թելադրելու օսմանյան դաշնակցին, Հասազեն կրկնեց իր հայտարարությունը, որ Ռայխը չպետք է «հայերի նոր խմբեր հանձնի» թուրքերին, այլ էլ «անձնասիաների քաղաքականության» միջոցով: Նրա բողոքը ուժգին պաշտպանություն գտավ Լեդեբուրի կողմից, որը հայտարարեց, թե Բրեստ-Լիտովսկի պայմանագրի «ամոթը» ոչ մի բանում այնքան ակնհայտ չէ, որքան Անդրկովկասին վերաբերող հոդվածներում:

Քանի որ USPD-ն մշտապես կասկածի տակ էր, նրա բողոքներն անտեսվեցին: Այն բանից հետո, երբ Գլխավոր կոմիտեի պաշտոնական բանախոսը հավաստիացրեց պալատին, թե կառավարությունը հաստատուն գրավականներ է ստացել Բարձր Դռնից նոր հակահայկական վայրագությունները կանխելու վերաբերյալ, անցան պայմանագրի մյուս մասերի քննարկմանը: Բրեստ-Լիտովսկի պայմանագրի վավերացման վերջնական քննարկման ժամանակ միայն USPD-ն դեմ քվեարկեց, մինչդեռ մեծամասնության սոցիալիստները ձեռնպահ մնացին[117]:

Մինչ ներքին օպոզիցիան Կարսի, Արդահանի և Բաթումի շրջանների զիջման վերաբերյալ շատ հեշտությամբ հաղթահարվեց, Վիլհելմշտրասեն կրկնապատկեց իր ջանքերը՝ զուսպ պահելու թուրքերին: Մարտի 24-ին Բուսշեն հիշեցրեց Բեռնսդորֆին, որ նա պետք է ամեն հնարավոր բան ի գործ դնի՝ կանգնեցնելու համար Անդրկովկասի հայերի դեմ օսմանյան մամուլի շարունակական ելույթները: Ապրիլի 3-ին հետևեցին նրա հրահանգները դեսպանին, որ վերջինս պետք է ճնշում գործ դնի Բարձր Դռան վրա և հավաստիացում ստանա, որ [illegible] Անդրկովկաս ընթացող օսմանյան զորքերի հրամանատարներին «կրկին խստորեն

հիշեցնեն, պահպանել խստագույն կարգապահություն և ցույց տալ «մեղմ վերաբերմունք խաղաղ բնակչության նկատմամբ»[118]։

Թեև Վիլհելմշտրասեն այժմ որոշակիորեն ամեն ինչ անում էր, ինչ կարող էր անել դիվանագիտորեն հիշեցնելու թուրքերին նրանց պարտավորությունների մասին, Գերմանիայում որոշ շրջաններ պարզապես համոզված չէին նման միջոցառումների արդյունավետության մեջ։ Ապրիլի 8-ին Քյոլնի արքեպիսկոպոս կարդինալ Ֆելիքս ֆոն Հարտմանը անձնական հորդորանք հղեց Հերտլինգին պաշտպանելու Անդրկովկասի հայերին և մի գերմանացի սպա նշանակելու այդ տերիտորիայում՝ հսկողության նպատակով։ Ապրիլի 13-ին կանցլերը պատասխանեց, որ Բարձր Դուռը արդեն համաձայնել է առել հետևելու խելամիտ քաղաքականության, բայց բավական դժվար կլինի կանխել բոլոր դժբախտ պատահարները այն հին թշնամության առկայության պայմաններում, որ գոյություն ունի Անդրկովկասի տարբեր էթնիկական խմբերի միջև[119]։

Դեռ նոր էր Հերտլինգը ուղարկել այս բավական հոռետես պատասխանը, երբ Բեռլինում ստացվեցին երկու ռադիոգրամներ խորհրդային արտաքին գործերի մինիստր Գ. Վ. Չիչերինից և Մոսկվայի «Հայկական ազգային խորհրդից», որոնք մեղադրում էին օսմանյան Կովկասյան բանակը ջարդարար վայրագությունների մեջ և պահանջում էին գերմանական արագ միջամտություն։ Վիլհելմշտրասեն կարգադրեց Բեռնսդորֆին ստուգել բոլշևիկյան մեղադրանքները և բողոք ներկայացնել Բարձր Դռանը, եթե դրանք ճիշտ դուրս գան։

«Մենք պետք է պնդենք,— հետագրում էր Բուսշեն,— որպեսզի Թուրքիան արդարացի վերաբերմունք ունենա քրիստոնյա բնակչության նկատմամբ և ամեն կերպ հարգի նրանց իրավունքները։ Մենք նաև իրավունք ունենք պահանջելու, որ թուրքերը տեղյակ պահեն վերոգրյալ տերիտորիաներում բոլոր դեպքերի զարգացման մասին։ Ձերդ գերազանցությունը այդ ոգով պետք է խոսի մեծ վեզիրի և արտաքին գործերի մինիստրի հետ և հիշեցնի Թալեաթին իր այն խոստումը, թե Բուխարեստից վերադառնալուց հե-

տո շուտով պետք է հայերին ներում շնորհող մանիֆեստ հրապարակվի»[120]:

24 ժամվա ընթացքում Բեռնսդորֆը պատասխանեց, որ ինքը «համատացած է», որ Մոսկվայի մեղադրանքները կեղծ են և նշում էր, որ Սեկտը և մի քանի այլ գերմանացի պաշտոնյաներ ներկայումս Էնվերի հետ գտնվում են Անդրկովկասի ճանապարհին: Վիլհելմշտրասեն, կասկածելով վատթարագույնը, այդ միջոցին կապվել էր նաև OHL-ի հետ և պահանջել մի քանի «ազդեցիկ» գերմանացի սպաներ ուղարկել Անդրկովկաս՝ աչք պահելու այնտեղ օսմանյան զորքերի հրամանատարների վրա: Այս առաջարկը OHL-ի սրտովն էր, բայց ավելի ուշ այն փոխեց իր կարծիքը, երբ Սեկտը հասկացնել տվեց, որ Վեհիբ փաշան ամենևին տանել չի կարողանում, երբ որևէ գերմանացի իր քիթը խոթում է նրա հրամանատարության տակ եղած տերիտորիան[121]:

Բեռնստորֆից ավելի քաջալերիչ լուրեր ստացվեցին ապրիլի 25-ին: Նա հաղորդեց Թալեաթի իրեն արված հավաստիացման մասին, որ «խաղաղասեր հայերի համար ներում ալյուս-ֆինանսական վարկեր և տան վերադառնալու թույլտվություն» կհռչակվի շուտով, և որ Բեռլինը կարող է հրապարակել այս պլանները, եթե կամենում է: Մանրամասները հաղորդելու Բուշեի պահանջին դեսպանը պատասխանեց, որ ընդհանուր ներումը կվերաբերվի միայն այն հայերին, որոնք արդեն ապահով կերպով օսմանյան հսկողության տակ են, մյուսներին ետ բերելը, քան Թալեաթի, շատ վտանգավոր կլինի: Ինչ վերաբերում էր «վերադարձվող» հայերին տրվելիք ֆինանսական օգնությանը, Բարձր Դուռը ի նկատի ուներ փոխհատուցում տալ նրանց, ովքեր «կորցրել էին իրենց ունեցվածքը»[122]:

Մեկ անգամ ևս Բարձր Դռան հայտարարությունները անիմաստ դուրս եկան: Թեև պաշտոնական «մեծահոգության» որոշ օրինակներ եղան, ինչպես օրինակ գերված հայ զինվորների արձակումը Բաթումում, հայ տարագիրներին իրենց հին տներում վերաբնակեցնելու խոստումը երբեք չիրականացվեց, և ոչ էլ որևէ նկատելի բարելավում կար տարագիրների մեծ մասի նկատմամբ վերաբերմունքի

և հոգատարության մեջ: Ավելին, նոր օկուպացված որոշ շրջաններում թուրքերի գազանությունների մասին լուրերն ու չհաստատված զեկուցագրերը շարունակում էին հասնել Բեռլին[123]:

Դեմ հանդիման կանգնելով Անդրկովկասյան ֆեդերատիվ պետության արագ մանրատման փաստին, մայիսի 26-ին Կյուլմանը հրահանգեց Բեռնսդորֆին հիշեցնել Բարձր Դռանը, որ Գերմանիան դեմ է Անդրկովկասում օսմանյան հետագա առաջխաղացմանը և սպասում է, որ բոլոր դեպքերում պատշաճ վերաբերմունք կլինի դեպի հայերը «թուրքական գրավման տակ եղած բոլոր տերիտորիաներում»: Մի քանի օր անց պետական քարտուղարը հարցում էր անում Կոստանդնուպոլիս, թե ինչո՞ւ է հապաղում խոստացված ներումը. քանի որ Բեռլինն արդեն հայտարարել է թուրքական մոտակա քայլի մասին, ճիշտ ժամանակն է, որպեսզի Բարձր Դուռը գործի: Թալեաթը կանխատեսորեն չպատասխանեց[124]:

Այդ ժամանակամիջոցում նորաստեղծ Հայկական Հանրապետությունը Բեռլինում բացեց դիվանագիտական առոր որոշ ստատուս ունեցող մի գրասենյակ: Բժիշկ Հ. Օհանջանյանի կողմից գլխավորվող «Հայկական Հանրապետության այս պատվիրակությունը» աշխույժ գրագրություն ձեռնարկեց Վիլհելմշտրասեի հետ՝ նոր պետությունը Ռայխի կողմից հովանավորելու վերաբերյալ և հաջողացրեց բազմիցս զրույցներ ունենալ Կյուլմանի գրասենյակի հետ: Հունիսի 15-ին և կրկին անգամ հուլիսի 2-ին պատվիրակությունը երկարաշունչ հուշագիր ներկայացրեց Վիլհելմշտրասե՝ Անդրկովկասում գերմանական հրատապ միջամտության վերաբերյալ: Ըստ հուլիսի 2-ի նոտայի, 600 000 հայեր Անդրկովկասի նախկին ռուսական շրջաններից, ինչպես նաև օսմանյան լծից փախստականներ, խույս տալով առաջ շարժվող թուրքերից, կուտակվել են Հայկական Հանրապետությունում: Ընդհանուր տնտեսական քաոսը, սովը և համաճարակները կանխելու համար անհրաժեշտ էր բոլոր այդ փախստականներին վերադարձնել իրենց նախկին տները, բայց դա կարելի կլիներ կենսագործել միայն այն դեպքում,

եթե թուրքերը ետ քաշվեին Բրեստ-Լիտովսկով նախատեսված սահմանները: Այսպիսով, մեծապես ողջունելի կլիներ գերմանական ճնշումը թուրքերի վրա[125]:

Հուլիսի 10-ին Թիֆլիսում գեներալ Կրեսը աջակցեց հայկական կառավարության դատին, մանավանդ որ նա հենց նոր առաջին ձեռքից՝ Երևանի թեմական Մեսրոպ եպիսկոպոսից տեղեկություն էր ստացել Հայաստանում տիրող ճգնաժամային կացության վերաբերյալ: Կասկած չի կարող լինել, հաղորդում էր Կրեսը Վիլհելմշտրասե, որ թուրքերը մտադրվել են «սովամահ անել ողջ հայ ժողովրդին՝ մեկուսացնելով նրան ամբողջովին»: Իր բոլոր ջանքերը՝ ապահովելու հայ փախստականների վերստին մուտքը թուրքական գրավման տակ եղած տերիտորիաները, զուր են անցել, ուստի «Կենտրոնական տերությունների հզոր ներգործությունը» Բարձր Դռան վրա «մարդասիրության և քաղաքականության հրատապ պատվիրանն է»: Հաջորդ օրը Կրեսը ուղղակի գրեց կանցլեր Հերտլինգին, շտապեցնելով նրան օգտագործել ամեն մի հնարավոր միջոց՝ հարկադրելու Բարձր Դռանը փոխելու իր քաղաքականությունը և ապահովելու հետևյալ զիջումները.

«[Օսմանյան կառավարությունը] անհապաղ ետ է քաշում իր զորքերը Հայաստանից, թույլ է տալիս փախստական հայերին վերադառնալ իրենց հայրենիքը, երաշխավորում է, որ հայերը կարող են հավաքել բերքը առանց որևէ արգելքի կամ սպառնալիքի նրանց կյանքին ու ունեցվածքին, իսկ այն հայերը, ովքեր աշխատանքային գումարտակներ են ուղարկված հարկադրաբար, միանգամից ազատ կարձակվեն և կվերադառնան հայրենիք»[126]:

Մինչ այս ուղերձները Թիֆլիսից կհասնեին Բեռլին, վրացական, հայկական և ադրբեջանական կառավարությունների մի քանի ներկայացուցիչներ մեկնեցին Կոստանդնուպոլիս՝ մասնակցելու Բարձր Դռան հրավիրած կոնֆերանսին: Մինչ թուրքերը նախապես մատնանշում էին, որ կամենում են քննարկել, հավանաբար նաև վերանայել, հունիսի 4-ի Բաթումի պայմանագրերը, Թիֆլիսից, Երևանից ու Ելիզավետպոլից գումարված պատվիրակությունները հասկացան, որ Բարձր Դուռը իրականում չէր

շտապում նրանց հետ լուծել հարցերը[127]: Եթե գերմանական զորքերի պաշտպանության տակ գտնվող վրացական կառավարությունը կարող էր հանգիստ սպասել, Երևանի մեկուսացված հայկական կառավարությունը մեծապես անհանգստացած էր թուրքերի ձգձգումների տակտիկայից: Ի պատասխան գերմանական աջակցությունն ստանալու նրա դիմումների և գեներալ Կրեսի նախապես հիշատակված զեկուցագրերի, OHL-ը հուլիսի 15-ին առաջարկեց Վիլհելմշտրասեին շարունակական ջանքեր գործադրել՝ Անդրկովկասում որոշ քաղաքական կայունություն ապահովելու համար: Մասնավորապես, ցանկալի կլիներ «մի որոշ չափով» ընդհանուր հարաբերություններ սահմանել Կենտրոնական տերությունների բլոկի և Հայկական ու Ադրբեջանական հանրապետությունների միջև, որոնց ստատուսը դեռևս բավական անորոշ էր: Միաժամանակ Լյուդենդորֆը հրապարակեց OHL-ի ցանկությունը՝ այսուհետև կենտրոնանալ սոսկ անդրկովկասյան պրոբլեմի «ռազմական ասպեկտների» վրա, մինչդեռ Վիլհելմշտրասեն պետք է իր ձեռքն առնի դրան վերաբերող բոլոր քաղաքական հարցերը: Ինչ վերաբերում է Հայկական Հանրապետության պաշտպանությանը հնարավոր թուրքական բռնություններից, Լյուդենդորֆի կարծիքով նպատակահարմար էր այդ գործը թողնել դուալիստական միապետությանը: Ճիշտ այնպես, ինչպես Ռայխն էր վարվել Վրաստանի նկատմամբ, Ավստրո-Հունգարիան կուղարկեր մի քանի գումարտակ և մարտկոցներ Հայկական Հանրապետություն՝ պաշտպանելու բնակչությանը «թուրք-թաթարական ջարդերից»: Ի լրացումն, OHL-ը ցանկալի էր համարում, որ հայկական զինված ուժերը կազմակերպվեն իբրև արդյունավետ մարտնչող գործիք[128]:

Մինչ Լյուդենդորֆը հակված էր թողնելու Հայաստանի պաշտպանության գործը ավստրիացիներին և իրենց՝ հայերին, Բեռլինի արտաքին գործերի մինիստրությունը շարունակում էր հետաքննել գերմանական զորքերը դեպի Երևան շարժելու հնարավորությունը: Սա մի հարց էր, որը, ամենայն հավանականությամբ, խորհրդային կառավարության հետ նոր բարդությունների տեղիք կտար, թեև Վիլ-

հերմշտրատի մի շարք պաշտոնյաներ հույս ունեին, որ Մոսկվան կընդունի գերմանական զինվորների ներկայությունը Հայաստանում, եթե հասկացվի, որ նրանք զուտ մարդասիրական խնդիր ունեն՝ «փրկելու հայ ժողովրդի մնացորդներին»: Այս հարցի քննարկումը դեռ շարունակվում էր, երբ Բեռնսդորֆը հեռագրեց, որ հայկական կառավարության պատվիրակները Կոստանդնուպոլսում դիմել են իրեն, պահանջելով, որ «ավստրիական կամ գերմանական ոստիկանական զորքեր» ուղարկվեն Հայաստանի Հանրապետություն: Մի շաբաթ անց դեսպանը մի եռանդուն ուղերձ հղեց, որտեղ նշում էր, որ գերմանական կամ ավստրիական զորքեր ուղարկելու հայերի դիմումները ավելի ու ավելի հաճախ են դառնում[129]:

Այդ միջոցին Փիֆլիսից գեներալ Կրեսը ռմբակոծում էր Վիլհելմշտրասե՝ պահանջելով շտապ որևէ բան անել ամեն ինչից զուրկ հայ փախստականների հայրենադարձության համար, այլ է՝ հարկադրել Բարձր Դուռը թույլատրել նրանց վերադառնալու իրենց տները: Հուլիսի 27-ին պետական քարտուղար Հինցեն, ելնելով դրանից, հրահանգեց Բեռնսդորֆին «ուժեղ ներկայացումներ» անել Բարձր Դռանը: Երկու օր անց ֆելդմարշալ Հինդենբուրգը օժանդակեց Հինցեի պահանջին՝ ռեձնական ուղերձով դիմել Էնվերին: Կես միլիոն եղբայրակից քրիստոնյաներ, ընդում էր Հինդենբուրգը, կանգնած են ոչնչամատնության դեմ առ դեմ, եթե օսմանյան իշխանությունները թույլ չտան նրանց վերադառնալ իրենց տները. «այժմ, երբ Դուք ինձանից տեղեկացաք հայերի կացության մասին, ես համոզված եմ, որ Ձերդ գերազանցությունը ոչ մի րոպե չի տատանվի խիստ հրաման տալու [թույլատրել հայրենադարձությունը] և հետևել դրա կատարմանը»[130]:

Հաջորդ օրը Բեռնսդորֆը հայտնեց Բեռլին, որ Բարձր Դուռը վերջապես պատրաստակամություն է ցույց տալիս պարզության մեջ մտցնելու անդրկովկասյան հարցում և այժմ կամենում է, ի բացառյալ Էնվերի առարկությունները, թույլ տալ հայ փախստականների ընտրովի հայրենադարձություն: Ինչ վերաբերում է Վրաստանի և Հայաստանի կողմից ակնկալվող սահմանների վերահայմանը, Բարձր Դուռը

արդեն ցույց է տվել «լիակատար անհաջող վերաբերմունք, ուստի և հետագա դիվանագիտական ճնշումը արդյունավետ անօգուտ էր»: Երբ Գերմանիան չի կամենում ընդունել գոյություն ունեցող վիճակը, եզրակացնում էր Բեռնադոթը, մնում է միայն մեկ հնարավոր դեղամիջոց, այն է՝ «ավելի շատ [գերմանական] զորքեր ուղարկել Հայաստան և Վրաստան»[131]:

Բեռնադոթի զեկուցագրի հետ միաժամանակ Վիլհելմշտրասեն արաբագիտական նոտա ստացավ Բեռլինի հայկական պատվիրակությունից, որով կրկին անգամ Գերմանիայից ռազմական օգնություն էր հայցվում: Դեպի հայկական տերիտորիայի խորքերը թուրքերի մշտական շարժումը համընթաց, ճշված էր նոտադում, թշվառությունը փախստականների մեջ լեռնանում է: Միակ լուծումը «թուրքերի կողմից մեր տերիտորիայի անհապաղ էվակուացումն է և գերմանական զորքերի ուղարկումը», որոնց խնդիրը պետք է լինի պաշտպանել բնակչությանը թուրքերից և «կազմակերպել ու հսկել փախստականների վերադարձը իրենց տները»[132]:

Ինչպես արդեն ճշվեց, OHL-ը չէր կամենում գերմանական զորքեր ուղարկել Հայաստան և այդպիսով փոքրիշատե լուծել խնդիրը: Մյուս կողմից, Հինդենբուրգը և Լյուդենդորֆը արդեն հասկացնել էին տվել, որ իրենք կողմ են հայ փախստականների արագ հայրենադարձությանը և ապաստում են, որ Էնվերը կգործի դրան համապատասխան: Շուտով հրամանք տեսան, որ նախկին գլխավոր հրամանատարը ամենևին մտադիր չէր հարգել իրենց խնդրանքը:

Հինդենբուրգի դիմումին տված երկչոտաշունչ պատասխանում Էնվերը մատնանշում էր, որ լայն մասշտաբի հայրենադարձություն հնարավոր չէ, քանի որ, այլապես, օսմանյան բանակի թիկունքում ընկած տերիտորիաներում նոր անկարգություններ կծագեն: Միայն այն վայրերում, որտեղ նախկինում ոչ մի «սպայքար չի գնացել մահմեդականների ու հայերի միջև», կարելի կլիներ խաղաղություն և կարգուկանոն հուսալ փախստականների վերադարձից հետո: Մյուս վայրերում նոր արյունահեղություններ հաստատապես տեղի կունենային և կճարկադրեին օսմանյան

բանակին տրամադրել իր ուժերը խաղաղեցման խնդիրներին: Արդյունքը կլինի բոլոր տեսակի ռազմական գործողությունների հարկադրյալ դադարեցումը, «մեր ռազմական ջանքերը կանդամալուծվեն», մի բան, որն անշուշտ OHL-ը չի կամենում: Ինչ վերաբերում է Բաքվի հայերին, եզրահանգում էր Էնվերը հեգնանքով, ինքն ուրախ կլինի պարտավորեցնել Գերմանիային և աջակցել նրանց անցնելու Հայաստանի Հանրապետության տերիտորիան, քանի որ դրանով կհեշտանա թուրքերի գործը՝ հասկացության գալու նավթաքաղաքի մնացյալ ռուսական տարրերի հետ[133]:

Մինչ OHL-ը և Վիլհելմշտրասեն, այսպիսով, վերստին կանգնեցին մերժման առջև, գեներալ Կրեսը և նրա ավստրո-հունգարացի պաշտոնակիցը Թիֆլիսում՝ բարոն Ֆոն Ֆրանկենշտայնը, այդ ժամանակամիջոցում գործը վերցրել էին իրենց ձեռքը և հայտնվել էին երերացող Հայկական Հանրապետության մայրաքաղաքում: Գնացքով ճանապարհորդելով «թուրքական գրավման տակ եղած տերիտորիայով, առանց լուրջ նեղության», նրանք հուլիսի 30-ին ժամանել էին Երևան և հաջորդ 24 ժամը անցկացրել հուզումնալից խորհրդակցություններում և բանկետներում՝ Հանրապետության քաղաքական և եկեղեցական առաջնորդների շրջապատում: Մինչ Կրեսի հետագա զեկուցագրերը Բեռլին վկայում էին, որ նրա համակրանքը դեպի հայերը ամրապնդվել էր նրանով, ինչ նա տեսել էր և լսել: Նա քաղաքականորեն ճիշտ չէր համարել մնալ Երևանում՝ հայկական պառլամենտի բացմանը: Ինչպես նա բացատրում էր Հերտլինգին Թիֆլիս վերադառնալուց հետո, իր անձնական ներկայությունը այդ հանդիսավոր ակտին հայերի մեջ կարող էր կեղծ հույսեր արթնացնել Գերմանիայից օգնություն ստանալու վերաբերյալ և, վերջապես, ինքն էլ չգիտեր, թե ինչպիսի՞ն է Բեռլինի «հայկական քաղաքականությունը»: Մի բան, սակայն, որոշակի էր,— շարունակում էր նա,— դա Հայաստանում զանգվածային սովի սպառնալիքն էր, եթե կենտրոնական տերությունները չմիջամտեին և չստիպեին թուրքերին թուլացնել հեղձուցիչ օղակը: Ավելին, անհրաժեշտ էր կենտրոնական տերություններից հատուկ պատվիրակ ուղարկել Հայաստան, գերադասաբար, համա-

ձայն Կրեսի, թուրքերի համար նախատեսված պաշարներից, քանի որ վերջիններս էին պատճառել բոլոր դժվարությունները, առաջին հերթին նրանով, որ արգելել էին հայերին հավաքել բերքը:

«Այն հարցին, թե ի՞նչ պետք է արվի, որպեսզի Հայաստանը դառնա մի կենսունակ պետություն և ի վիճակի լինի ունենալ անկախ գոյություն՝ հարելով (unter Anlehnung) կենտրոնական տերություններից մեկին, ես հետևյալը կասեի. Հայաստանը պետք է ստանա Բրեստ-Լիտովսկի պայմանագրով նախատեսված սահմանները և թուրքերին չպետք է թույլատրվի սահմանների իրենց ցանկացած վերանայումը: Իրականում այդ սահմանների վերանայումը կզրկի Հայաստանին իր լավագույն սահմանամերձ շրջաններից: Եթե այդ տերիտորիաները գիջվեն թուրքերին, դրանց արտադրողականությունն իսկույն կընկնի, որովհետև թուրքերը տնտեսական առումով անկարող են և այդպիսով դրանք կկորսվեն գերմանական շուկայի համար»:

Մինչ Կրեսը ամեն ինչ անում էր Բեռլինի ուշադրությունն ուղղելու դեպի Հայկական Հանրապետության դժվարին կացությունը, օգտագործելով տնտեսական նկատառումները բարի նպատակով, Երևանի կառավարության ներկայացուցիչները շարունակում էին ոմբակոծել և՛ Բեռլինը, և՛ Վիեննան՝ պահանջելով ռազմական օգնություն և, որ ավելի կարևոր է, Հայաստանի սուվերենության դիվանագիտական ճանաչումը: Օգոստոսի 10-ին Բուրիանը տեղեկացնում էր Վիլհելմշտրասե, որ ինքը հակված է դիվանագիտական ներկայացուցիչ ուղարկել Երևան և կարծում է, որ Գերմանիան էլ այդպես պետք է վարվի: Նախորդ որոշումներից ելնելով, Վիլհելմշտրասեն քաղաքավարի կերպով հրաժարվեց: Համաձայն ներքին պաշտոնական հուշագրի, կազմված ի ղեկավարություն Հինցեի, Վիեննայի առաջարկությանը համաձայնվելը Բարձր Դռան և Մոսկվայի հետ ունեցած հարցերի շուրջը նոր անախորժությունների տեղիք կտար, քանի որ Բրեստ-Լիտովսկի պայմանագրով Գերմանիան հանձն էր առել չաջակցել նախկին Ռուսական կայսրությունում եղած անջատողական ձգտումներին: Սակայն, եթե Վիեննան ինչպես ռազմական

օգնություն, այնպես էլ դիվանագիտական ներկայացուցիչ ուղարկի Երևան, Գերմանիան չի խանգարի: Հինցեն համաձայնեց այդ պատճառաբանությանը և այդ մասին համապատասխանորեն Վիեննան տեղյակ պահվեց[135]:

Խուլ մնալով հանդերձ Հայաստանի դիվանագիտական ճանաչման պահանջներին, Վիլհելմշտրասեն շարունակում էր ուղիներ որոնել, որոնք ի վիճակի կլինեին մեղմացնել հայերի ֆիզիկական դժվարին կացությունը: Բացի ավստրիացիներին քաջալերելուց՝ զորքեր ուղարկելու Երևան, օգոստոսի 14-ին Բեռլինը առաջարկեց Կրեսին, որ բնակչության գերբեռնվածությունը Հայկական Հանրապետությունում կրճատվի՝ փախստականների հոսքը ուղղելով «դեպի հյուսիս»՝ Վրաստան: Վեց օր անց Հինցեն հարցում արեց Կրեսին, թե արդյո՞ք Հայաստանի համար հացահատիկի ուղարկումը Վրաստանի վրայով քաղաքականորեն ճնարավոր կլինի այն փաստի առկայության դեպքում, որ «մենք իրենց վրացիներին կարող ենք ավելի փոքր չափով մատակարարել, քան նախապես խոստացված էր»[136]:

Դեմ հանդիման կանգնելով Կրեսի պահանջներին, որպեսզի Բեռլինը որևէ բան անի թուլացնելու Հայաստանի շուրջը ձգված թուրքական խեղդիչ օղակը, օգոստոսի 22-ին Հինցեն հրահանգեց Բեռնսդորֆին կրկին անգամ դիմել Բ. Դուանը, որպեսզի սա փոխի իր քաղաքականությունը: Համաձայն բոլոր առկա վկայությունների, Անդրկովկասում օսմանյան ռազմական իշխանությունները ձգտում էին ենթարկում ջոկովի հայրենադարձության պաշտոնական ծրագիրը, ուստի Բեռնսդորֆը պետք է ազդեր, ուղղելու համար դրությունը: Ավելին, «դուք պետք է հարցնեք թուրքական կառավարությանը... կրկին անգամ քննարկելու, թե արդյո՞ք կան ծանրակշիռ պատճառներ Բրեստի սահմանագծով ամբողջ տերիտորիան բացելու [հայերի] հայրենադարձության համար»: Որ Հինցեն իրականում որևէ շոշափելի արդյունք չէր սպասում այս նոր դիվանագիտական ջանքից, երևում է Կրեսին ուղարկված նրա հետագա նոտայից, որում նա հաղորդում էր, թե տիրող քաղաքական և ռազմական իրադրությունը հազիվ թե բարենպաստ է Բարձր Դռնից զիջումներ կորզելու համար:

Օգոստոսի 28-ին, ռուս-գերմանական լրացուցիչ պայմանագրերի կնքումից մի օր անց Բեռնհադորֆը հաղորդում էր Բեռլին, որ Կոստանդնուպոլսում գտնվող հայկական պատվիրակությունը Վրաստանի անկախության մոտակա ճանաչումը Գերմանիայի կողմից աղետալի հարված է հասարում իր երկրին, քանի որ դրանով այն ամբողջովին մեկուսացվում էր Ռուսաստանից և դյուրին պատառ դառնում թուրքերի համար: Այս մասիացու վտանգից և Հայաստանի ապագա ստատուսը հաստատելու Բարձր Դռան հրաժարումից ելնելով, Կոստանդնուպոլսում գտնվող հայկական պատվիրակությունը այժմ լրջորեն շահագրգռված էր սերտորեն միավորելու իր երկիրը Վրաստանի հետ: Ճակատագրական հարցն այն էր, թե արդյո՞ք վրացիները կկամենային նման միաձուլում[138]:

Երևում է, որ Բեռնհադորֆը համակրում էր հայկական այս ծրագրին, սակայն Բեռլինի նրա գերադասները շատ ավելի քիչ էին ոգևորված: Ինչպես Հինցեն էր հիշեցնում դեսպանին՝ ո՛չ Հայաստանի դիվանագիտական ճանաչումը և ո՛չ վիրա-հայկական միաձուլմամբ ակնկալող օգնությունը համատեղելի չէին Գերմանիայի պայմանագրային պարտավորություններին դեպի խորհրդային կառավարությունը, բոլորովին մի կողմ թողած այն փաստը, որ Թալեաթը, վերջին ռուս-գերմանական պայմանագրի կապակցությամբ, արդեն իսկ բավականաչափ կատաղած էր[139]:

Մինչ այդ գեներալ Կրեսը և նրա ավստրո-հունգարական պաշտոնակիցը Թիֆլիսում՝ Ֆրանկենշտայնը մեկ անգամ էլ էին ուղևորվել Երևան, այս անգամ Էնվերի հորեղբայր գեներալ Հալիլ փաշայի ընկերակցությամբ, որն այդ միջոցին փոխարինել էր Վեհիբ փաշային իբրև «Արևելյան զորաբանակի» հրամանատար: Հայաստանի մայրաքաղաք Հալիլի այցելության պաշտոնական նպատակը քաղաքավարական այցն էր, բայց Կրեսը ամեն ինչ արեց, որպեսզի օգտագործի այդ առիթը «լուսավորելու» օսմանյան գեներալին Հայաստանում տիրող ճշմարիտ դրության հարցում: Մասնավորապես, նշում էր Կրեսը Բեռլին ուղարկած իր զեկուցագրում, նա փորձեց ցուցադրել Հալիլին, որ հայերը ոչ մի իրական վտանգ չեն ներկայացնում օսման-

յան բանակի համար, որ լիովին հնարավոր է նրանց հայրենադարձության կապակցությամբ ավելի լիբերալ քաղաքականություն անցկացնել: Դժբախտաբար, շարունակում էր Կրեսը, Հալիլի հետ ունեցած ակնհայտ հաջողությունը հնարավոր է, որ ի դերև է եղել. «Կովկասում գտնվող թուրքական զորքերը, բանակի հրամանատարներից սկսած մինչև վերջին լեյտենանտը... այնքան շատ են գրգռված ինչպես հայերի, այնպես էլ գերմանացիների դեմ այդ վայրի գազան Վեհիբ փաշայի կողմից, որ ըստ երևույթին, բավական երկար ժամանակ կպահանջվի, նախքան Հալիլ փաշան, որը շատ ավելի խելամիտ է, կհաջողեցնի թելադրել իր կամքը: Համաձայն Կրեսի, Հալիլի հրամանատարության տակ եղած փաստորեն ամեն մի թուրք գեներալ ավելի կամ պակաս չափով դեմ է նրա չափավոր քաղաքականությանը, և նրանցից մեկը՝ Շեվքի փաշան, արդեն բողոքել է Հալիլի բանակային խմբի ոլորտում ենթադրյալ գերմանական ազդեցության վերականգնացման դեմ»: Դրությունը բարդացնելու նպատակով, նշում էր Կրեսը, հայկական «չարագործությունների» և հրոսակային կոիվների վերաբերյալ կեղծ զեկուցագրերի մի ամբողջ հեղեղ է ուղարկվել Կոստանդնուպոլիս այդ գեներալների կողմից և ցավալիորեն ակներև է, որ գեներալ Սեկտին մշտապես խաբել են Անդրկովկասի անցուդարձերի վերաբերյալ: Նրա ակընհայտ համաձայնությունը Էնվերի հետ, որ խիստ վտանգավոր կլիներ թույլատրել հայերի հոծ զանգվածների բնակվելը օսմանյան զորքերի թիկունքում, հիմնված էր կեղծ նախադրյալների վրա, քանի որ այդ զանգվածները համարյա ամբողջովին բաղկացած էին ծերունիներից, կանանցից և երեխաներից. «թուրքերն ու թաթարները խորապես համոզված են, որ հազիվ թե զենք կրելու ընդունակ տղամարդկանց թույլատրվի հայրենադարձվել»: Ինչ վերաբերում է գեներալ Անդրանիկի ղեկավարած հայկական մեկ խմբի գործողությանը, որի գոյությունը, անկասկած, միայն թուրքական երևակայության արդյունք չէ, Երևանի կառավարությունը նրա հետ գործ չունի և անգամ առաջարկել է իր օգնությունը զինաթափելու այդ խումբը[140]:

Հավանաբար, իբրև հետևանք Կրեսի պատճառաբանությունների, Հալիլ փաշան գերությունից ազատեց մի քանի հարյուր հայ գերիների հաջորդ շաբաթների ընթացքում, որոնց մեծ մասը ուղարկվեց Երևան: Այս դրական քայլը բնորոշ չէր, քանի որ սեպտեմբերի կեսերին գերմանացիները դեմ հանդիման կանգնեցին հակահայկական բռնությունների մի նոր ալիքի՝ Նուրիի իսլամական բանակի կողմից Բաքուն գրավելու ընթացքում և հետո: Թեև թուրքական կանոնավոր զորքերը հավանաբար ուղղակիորեն ներգրավված չէին Բաքվի մի քանի հազար հայերի կոտորածի մեջ, Նուրին և մյուս օսմանյան սպաները շատ քիչ բան արին կասեցնելու տեղական մահմեդական բնակչությանը և ադրբեջանական զինվորներին: Գեներալ Հալիլի շտաբի պետ գերմանական փոխգնդապետ Պարակենի ջանքերը՝ կարգուկանոնը վերականգնելու քաղաքում, մեծ մասամբ զուր էին և ի վերջո հանգեցրին տաք վիճաբանության նրա և Նուրիի միջև: Երկու օր անց Հալիլը անսպասելիորեն ազատեց Պարակենին իր պաշտոնից և ետ ուղարկեց Կոստանդնուպոլիս[141]:

Ահազանգում ստանալով Պարակենից Բաքվի անկարգությունների և վտանգավոր դրության մասին, որը ստեղծվել էր անգամ տեղի գերմանացիների համար, գեներալ Կրեսը անհապաղ բողոքներ հղեց Թիֆլիսում օսմանյան և ադրբեջանական դիվանագիտական ներկայացուցիչներին և անձամբ Նուրիին: Վերջինիս ուղարկված հեռագրում Կրեսը պահանջում էր ավելին, որ իսկույն թույլ տրվի գերմանական մի գումարտակ տեղափոխել Բաքու, որպեսզի այն կարողանա «ապահովել» բոլոր գերմանացիների կյանքը և ունեցվածքը: Հինգ օր հետո Նուրին պատասխանեց, որ Բաքվում կատաղի անկարգությունների և արյունահեղության վկայակոչումները մեծ մասամբ անհիմն են, ուստի և գերմանական զորքերի ուղարկումը անիմաստ է[142]:

Որպես հետևանք Նուրիի ընդդիմության, գերմանական զորքերը բնավ չմտան Բաքու: Թուրքերն իրենք քաշվեցին այդ քաղաքից և Անդրկովկասի մնացած բոլոր վայրերից Մուդրոսի զինադադարին հաջորդած շաբաթների ընթացքում. էվակուացիան մեծ մասամբ ավարտվեց դեկտեմբերի

սկզբներին. նոյեմբերի 17-ին բրիտանական ուժերը օկուպացրին Բաքուն և դեկտեմբերին տարածվեցին Անդրկովկասի մյուս վայրերում[143]:

Հենց որ օսմանյան անկոչ հյուրերը հեռացան, Երևանում դաշնակցական կառավարությունը տերիտորիալ պահանջներ ներկայացրեց ինչպես Վրաստանին, այնպես էլ Ադրբեջանին: Ավելի նշանակալից էր, որ 1918—1919 թվականների ձմռանը հայկական զորքերը հետապնդեցին նահանջող թուրքերին և Բրիտանիայի հավանությամբ օկուպացրին Արևելյան Անատոլիայի որոշ շրջաններ[144]: 1919-ի մայիսին Երևանի կառավարությունը պաշտոնապես հռչակեց Օսմանյան կայսրության նախապատերազմյան որոշ նահանգների անցումը «Միացյալ Հայաստանին», սակայն, բացի դաշնակիցների որոշ համակրանքից դեպի հայկական հարցը, այս հաղթանակը ատելի թուրքերի վրա շատ կարճ կյանք ունեցավ[145]:

1920-ի սեպտեմբերին քեմալականները մտան Հայաստան և վեց շաբաթվա ընթացքում հարկադրեցին Երևանի կառավարությանը հանձնել այն տերիտորիայի մեծ մասը, որը նա գրավել էր 1918-ի վերջերից[146]:

1921-ի մարտին կնքվեց Մոսկվայի պայմանագիրը, որով Թուրքիայի հյուսիս-արևելյան սահմանը տեղաշարժվեց դեպի 1877-ի գիծը և անգամ այն կողմ, բացառությամբ հյուսիսային բաժնեհատվածի՝ Բաթումի շրջանի[147]: Մոտավորապես 25000 քառակուսի կիլոմետր նախկինում ցարական տերիտորիա պաշտոնապես ձեռք բերելով, քեմալականները փաստորեն յուրացրին ավելի շատ անդրկովկասյան, մասնավորապես հայկական հողեր, քան «Իթթիհաթ վե թերաքքի» ռեժիմը ձեռք էր բերել Բրեստ-Լիտովսկի թելադրած հաշտությամբ՝ երեք տարի առաջ:

Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում տեղի ունեցած հայկական ողբերգությունը հետևյալ եզրակացություններն է թելադրում. առաջին, օսմանյան հայ բնակչության ոչնչացումը 1915—1918 թվականներին ֆիզիկական բռնության, քաղցի և հիվանդությունների միջոցով դժբախտ մի կողմնակի հետևանք չէր, հակառակ օրինական ապահովության ծրագրի, այլ արդյունք էր «Իթթի-

հայթ վե թերաքքիի» ռեժիմի որոշակի ջանքերի՝ Անատոլիայի սրտում ազատվելու քաղաքականապես անբարեհույս էթնիկական խմբից: Եթե Կովկասյան ճակատի թիկունքում կային որոշ շրջաններ, որտեղ տեղահանությունը և այլ նախազգուշական միջոցառումները ռազմականապես արդարացված էին, Բարձր Դռան հակահայկական ծրագրի աշխարհագրական ընդգրկման շրջանակները և դրա անխտիր կիրառումը տղամարդկանց, կանանց և երեխաների նկատմամբ միաժամանակ վկայում է, որ դա քաղաքականորեն ներշնչված մի փորձ էր հասնելու Անատոլիայում հայկական հարցի «վերջնական լուծմանը»: Թեև այս մեկնաբանությունը դեռևս վիճարկվում է թուրք պատմաբանների մեծ մասի կողմից, բայց և այնպես նրանցից ոմանք ընդունում են, որ պատերազմական ժամանակի «տեղահանությունները» ուղեկցվել են արտակարգ վայրագություններով[148]:

Երկրորդ, պարզ է, որ գերմանական կառավարությունը ո՛չ հրահրել է, և ո՛չ էլ հավանություն տվել հայկական հալածանքներին Օսմանյան կայսրությունում, թեև նա չի առարկել կանոնավոր և ռազմական տեսանկյունից անհրաժեշտ տեղափոխումների դեմ: Ավելին, քաղաքական նպատակահարմարության նկատառումներով Բեռլինի (ինչպես նաև Վիեննայի) պետական գործիչները հետևողականորեն հրաժարվել են հորդորանքներից և դիվանագիտական բողոքներից այն կողմն անցնել՝ շեղելու համար Բարձր Դռանը իր վայրագ քաղաքականությունից: Անկասկած, առանց Օսմանյան կայսրության մեջ որոշ գերմանական պաշտոնյաների, ինչպես և Լեպսիուսի նման մասնավոր անհատների մշտական խայթոցների, Բեռլինի ջանքերը՝ ապահովելու հայկական հալածանքների սահմանափակումը, հավանաբար, է՛լ ավելի ամոթխած կլինեին: Կասկածից բոլորովին դուրս է, որ է՛լ ավելի եռանդուն բողոքներ պետք է ներկայացվեին թուրքերին՝ վերջ տալու նրանց հակահայկական ծրագրին: Հայերի ուղղակի հովանավորությունը Գերմանիայի ուժերից վեր էր, հակառակ երբեմն եղած պնդումների: Ջարդերի բարձրակետին, 1915-ին, փաստորեն գերմանական զորքեր չկային Օսմանյան

կայսրության մեջ, և գերմանացի անհատ սպաների մեծ մասը, որոնք տեղավորված էին արևելյան նահանգներում, որևէ հրամանատարական ֆունկցիա չունեին[149]:

Գերմանիայի և Ավստրո-Հունգարիայի ղեկավարների որոշումը՝ հայերի պատճառով ռիսկի չդիմել խզելու կապերը Բարձր Դռան հետ, անշուշտ պետք է դիտվի և դատվի կոնտեքստում: Ջարդերը տեղի ունեցան պատերազմի կեսին: Օսմանյան հետագա մասնակցությունը պատերազմին զույգ կենտրոնական տերություններն էլ էական էին համարում: Ժամանակակից պատմությունը չի արձանագրում և ո՛չ մի օրինակ, որտեղ մարդասիրական նկատառումները հարկադրեին պատերազմող երկրին ձեռք քաշել իր դաշնակցի գործուն աջակցությունից՝ վերջինի ներքին հանցագործությունների պատճառով:

Գնահատելով Բեռլինի և Վիեննայի վարքագիծը, վերջնականապես պետք է նշվի, որ շատ այլ երկրների պետական գործիչները ևս դժկամում էին վճռական գործողությունների դիմել հայկական խնդրում: Միացյալ Նահանգներում պրեզիդենտ Վիլսոնը արտոնեց դիվանագիտական և բարեգործական գործունեություն հօգուտ օսմանյան հայերի, բայց բնավ չհակվեց «Իթթիհաթ վե թերաքքի» ռեժիմը ներգրավելու Ամերիկայի հայտարարված թշնամիների թվում: Փաստորեն, եթե Բարձր Դուռը նախաձեռնություն չվերցներ [գերմանական ճնշման տակ] և չխզեր հարաբերությունները Միացյալ Նահանգների հետ 1917-ի ապրիլին, հավանաբար Վիլսոնի կառավարությունը կշարունակեր կանոնավոր դիվանագիտական շփումը օսմանյան կառավարության հետ ընդհուպ մինչև պատերազմի ավարտը[150]:

1970

ՎԿԱՅՈՒՄ ԵՆ ՆՈՐԱՀԱՅՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Փարիզի «Ֆլամարիոն» հրատարակչությունը վերջերս ֆրանսերեն վերահրատարակել է Օսմանյան կայսրությունում 1913—1916 թթ. ամերիկյան դեսպան Հենրի Մորգենթաուի հուշերը՝ նոր փաստաթղթերի մի հավելվածով[1]:

Հ. Մորգենթաուի բուն հուշերն առաջին անգամ լույս են տեսել 1918 թ. Նյու Յորքում անգլերեն, 1919-ին Փարիզում՝ ֆրանսերեն, իսկ Կ. Պոլսում՝ հայերեն: Հայկական ջարդերին վերաբերվող բաժինը անգլերեն վերահրատարակվել է Բեյրութում 1967-ին: Արդ, ի՞նչ անհրաժեշտություն կա վերըստին հրապարակ հանելու պատմության քաջ հայտնի փաստերն ու իրողությունները: Այս հարցին մասամբ պատասխանում է Ժերար Շալյանը գրքի առաջաբանում.

«Հենրի Մորգենթաուի «Հուշերի» վերահրատարակումն, անկասկած, չէր ձեռնարկվի, չնայած հետաքրքիր շարադրանքին ու պարզությանը, եթե թուրքական պետությունը համառությամբ չշարունակեր ժխտել ցեղասպանության իրողությունը՝ վերստին բազմապատկելով իր պրոպագանդիստական հրապարակումները»[2]: Սա հարցի մի կողմն է: Մյուսը՝ դա գրքի այժմեական հնչողությունն է, քանի որ ամերիկյան նախկին դեսպանի նկարագրած բռնություններն ու չարագործությունները ոչ պակաս դաժանությամբ գործադրվում են նաև մեր օրերում, ինչպես Թուրքիայում, այնպես էլ աշխարհի տարբեր մասերում:

Այդուհանդերձ, առավել ուշագրավն ու արժեքավորը գրքին կցված պաշտոնական փաստաթղթերն են, քանի որ դրանք հրապարակվում են առաջին անգամ, թեև այդ փաստաթղթերի առկայության մասին հիշատակվել է տակավին 1961-ին: Հավելվածը պարունակում է 17 փաստաթուղթ՝ բոլորն էլ հանված ԱՄՆ-ի պետական դեպարտամենտի արխիվից:

Առաջին փաստաթուղթը թվագրված է 1915 թ. ապրիլի 30-ին, վերջինը՝ նույն թվականի նոյեմբերի 9-ին: Դրանցից հինգը դեսպանի խիստ գաղտնի հեռագրերն են՝ հասցեագրված ԱՄՆ-ի պետական քարտուղարին, իսկ՝ Հալեպում, Կոնիայում ու Տրապիզոնում ամերիկյան հյուպատոսների զեկուցագրերը իրենց դեսպանին, մնացածը պաշտոնական այլ անձանց հաղորդումներն ու զեկույցներն են:

Ի՞նչ նոր բան են ավելացնում հիշյալ դիվանագիտական վավերագրերը արդեն իսկ հայտնի գերմանական,

ռուսական, անգլիական, ֆրանսիական և այլ փաստաթղթերին:

Նախ, բերվող փաստաթղթերի անվիճելի վավերականության հետ մեկտեղ, կարևոր է այն հանգամանքը, որ դրանց հեղինակները չեզոք պետության ներկայացուցիչներ են: Եվ, այնուհետև, այդ փաստաթղթերը ստեղծվել են դեպքերի ու իրադարձությունների անմիջական ընթացքին զուգընթաց՝ նույն 1915-ին:

Ահա առաջին փաստաթուղթը: 1915-ի ապրիլի 30-ին, ցերեկվա ժամը 4-ին, Մորգենթաուն հեռագրում է Վաշինգտոն՝ պետական քարտուղարին, որ «Կայսրության որոշ շրջաններում հայերի հալածանքների, թալանի ու կոտորածների վերաբերյալ զեկուցագրերը չեն դադարում ստացվելուց... Հայ պատրիարքը, Իտալիայի դեսպանը, Բուլղարիայի դեսպանորդը և ես վճռականորեն միջամտեցինք...»: Նույն փաստաթղթից երևում է, որ ամերիկյան դեսպանը ինչ-որ չափով վստահություն էր տածում իթթիհաթական բարձր ղեկավարության խոստումների հանդեպ: «Մեծ վեզիրը, պատերազմական նախարարը և ներքին գործերի նախարարը խոստացան, որ տեղի չեն ունենա ո՛չ համընդհանուր ջարդ, ո՛չ էլ ծայրահեղություններ...»:

«Հալեպի հյուպատոսից այսօր ստացված մի զեկուցագրից հայտնի դարձավ,— ասվում էր այնուհետև,— որ թուրքական իշխանությունները անհավատալի դաժանությամբ են վերաբերվում Զեյթունի ու Մարաշի հայ ազգաբնակչությանը. հիմնվելով մի քանի դասալիքների արարքների վրա, նրանք տեղահան են անում և ցրում անմեղ բնակչության մի զգալի մասը»[3]: Իսկ Մորգենթաուի մայիսի 25-ին ուղարկած զեկուցագրից երևում է, որ նա տակավին անգիտանում էր, թե ի՛նչ չափեր կարող էին ընդունել սկսված տեղահանություններն ու «մասնակի բռնությունները»: Միաժամանակ որոշակի է, որ դեսպանը լավ բան չէր սպասում թուրք կառավարողներից՝ ելնելով անցյալում կատարվածից:

«Պատիվ ունեմ Ձեզ տեղյակ պահելու,— գրում էր դեսպանը ԱՄՆ-ի պետական քարտուղարին,— հայ համայնքի նկատմամբ ներկա կառավարության որդեգրած

քաղաքականության մի քանի կողմերի մասին: Թուրքական հեղափոխությունից ի վեր նրա նկատմամբ ցուցաբերվող վերաբերմունքը, որն արդեն իսկ դրսևորվել է բիրտ եղանակներով, առավել անբարենպաստ ընթացք է ստացել պատերազմի առկայության պայմաններում: Հիրավի, ներկայիս օտոմանյան կառավարությունը հայերին այլևս չի դիտում որպես իր հավատարիմ հպատակների...» Այնուհետև փաստաթղթում ասվում էր, որ հայ ազգաբնակչության զանգվածային տեղահանություններով հետապնդվում է առավել հետևողական քաղաքականություն՝ անցյալի համեմատությամբ: Միաժամանակ դեսպանը ուշադրություն էր հրավիրում այն բանի վրա, որ «կառավարությունը աննախադեպ կերպով ժխտում է փաստաթղթերը կամ դրանք ամբողջովին աղավաղում»: «Ստեղծված իրադրությունը,— եզրակացնում էր դեսպանը,— կարող է հեշտությամբ հանգեցնել ամենալուրջ և ամենացավալի հետևանքների»[4]: Եվ իրոք, հուլիսի 10-ին ուղարկված իր խիստ գաղտնի հեռագրում Մորգենթաուն, հիմնվելով ամերիկյան հյուպատոսներից ստացված զեկուցագրերի վրա, արդեն այն կարծիքն էր հայտնում, որ երիտթուրքերի կառավարությունը նպատակ է դրել «արմատախիլ անել խաղաղ հայ ազգաբնակչությանը՝ կամայական ձերբակալությունների, սարսափելի տանջանքների, կայսրության մի ծայրից մյուսը զանգվածային արտաքսումների ու տեղահանության միջոցով...», քայլեր, որոնք հաճախ ուղեկցվում են «բռնությամբ, կողոպուտով, սպանություններով, և որոնք ընդունում են կոտորածների բնույթ...» Տակավին անտեղյակ լինելով Իթթիհադի ղեկավարության գաղտնի նիստերի որոշումներին, դեսպանը իր զեկուցագրում մեջ է բերում Խարբերդի ամերիկյան հյուպատոս Լեսլի Դեյվիսի հետևյալ կռահումը. «Թվում է, թե գոյություն ունի անշեղ մի պլան, որի նպատակն է ջախջախել հայ ցեղը»[5]:

Հետաքրքրական է Մորգենթաուի կարծիքը Թուրքիայի դաշնակից կայզերական Գերմանիայի դիրքորոշման վերաբերյալ: «Այստեղ ներկայացված միակ դեսպանությունը, շարունակում է նա,— որը հնարավորություն ունի միջամտելու՝ այդ գազանություններին վերջ դնելու համար, գեր-

մանական դեսպանություն է: Սակայն ես կարծում եմ, որ նա կբավարարվի իր կարծիքը հայտնելով և ձևական մի բողոք ներկայացնելով, հավանական է արխիվների համար նախատեսված, և որը նրան ապագայում կարողանա ծառայել որպես քող՝ պատասխանատվությունից հետո մնալու հարցում»: Զեկուցագրի վերջում դեսպանը տեղեկացնում էր պետական քարտուղարին. «Թուրքական իշխանություններն ինձ հասկացնել տվեցին ամենապարզ ձևով, որ ես իրավունք չունեմ միջամտելու իրենց ներքին գործերին»[6]:

Դեսպան Մորգենթաուի վերջին զեկուցագիրը, որ նա հղել է պետական քարտուղարին 1915-ին, կրում է նոյեմբերի 9-ի ամսաթիվը: Այս անգամ դեսպանը իր զեկուցագրին կցել էր երկու փաստաթուղթ. մեկը ազգությամբ շվեդուհի, գերմանական միսիոներ Ալմա Յոհանսոնի՝ դեպքերի անմիջական ականատեսի վկայությունն էր Բիթլիսում ու Մուշում տեղի ունեցած կոտորածների մասին, մյուսը ազգությամբ գերմանացի Վիլֆրեդ Պոստի 1915-ի հոկտեմբերի 17-ի թվակիր նամակն էր Կոնիայի հայերի հետ կատարվածի մասին: Կցելով հիշյալ փաստաթղթերը իր պաշտոնական զեկուցագրին, դեսպան Մորգենթաուն ավելացնում է. «Ես կշարունակեմ Ձեզ ուղարկել նման վկայություններ առանց որևէ մեկնաբանության, ի նկատի ունենալով, որ դրանք ինքնին բավականաչափ խոսուն են»: Հիրավի, առաջին փաստաթղթի հեղինակն, օրինակ, նկարագրելով Մուշ-Բիթլիսի հայության բարբարոսական ոչնչացումը, եզրակացնում է. «Սա մի պատմություն է, գրված արյունով»: Իսկ բժիշկ Վ. Պոստը իր նամակում ընդգծում է. «Այս ազգի (հայերի— Ռ. Ս.) նկատմամբ կիրառվում է դաժան և մշակված մի մեթոդ. սիստեմատիկ ոչնչացման ճանապարհով նրա թիվը նվազեցնել, և նրա իսպառ բնաջնջումը միայն ժամանակի հարց է»[7]:

Մյուս փաստաթղթերում, հատկապես Մորգենթաուին հասցեագրված ամերիկյան հյուպատոսների զեկույցներում, բացի կոնկրետ փաստերից, կան նաև գնահատականներ և ընդհանրացումներ, որոնք թույլ են տալիս եզրակացնելու, որ տեղերում բռնագաղթի տեսարաններին ականատես

ամերիկյան դիվանագիտական ներկայացուցիչները ժամանակին հասկացել են, որ զանգվածային տեղահանություններ բուն նպատակն էր գլխովին բնաջնջել արևմտահայությանը: Այսպես, Հալեպում ամերիկյան հյուպատոս Ջ. Ջեքսոնը հունիսի 5-ին տեղեկացնում է Մորգենթաուին և միաժամանակ պետական դեպարտամենտին, որ «կառավարությունը ստացել է դիմումներ զանազան ճանաչված և նույնիսկ իշխանություն ունեցող անձանցից՝ վերջ դնելու ստեղծված իրավիճակին, որն, անկասկած, կարող է նրա դեմ առավել մեծ պարսավանք ու քննադատություն առաջ բերել, սակայն բոլոր այս դեմարշները ապարդյուն անցան»[8]:

«Խոսքը գնում է, անկասկած,— եզրակացնում է Ջեքսոնը,— խնամքով մշակված մի պլանի մասին, որի նպատակն է հայկական ցեղի լիակատար ոչնչացումը»[9]:

Իսկ Տրապիզոնի ամերիկյան հյուպատոս Օսկար Հայզերը, Մորգենթաուին ուղղված հուլիսի 28-ի նամակում նկարագրելով Տրապիզոնի հայերի տեղահանության հանգամանքները, բերում է գերմանական հյուպատոսի հետևյալ խոսքերը. «Գերմանական հյուպատոսն ինձ ասաց, որ ինքը համոզված չէ, թե հայերին կարող են թույլ տալ վերադառնալ Տրապիզոն նույնիսկ պատերազմի ավարտից հետո»[10], խոսքեր, որոնք կարծես կրկնում էին գերմանական դեսպան Վանգենհայմին, որը տեղահանությունը դիտում էր մահվանը հավասարազոր մի քայլ:

1915-ի հոկտեմբերի 16-ի թվակիր գրությամբ Ջեքսոնը տեղեկացնում էր Խարբերդի հայերի տեղահանության մասին: Այս փաստաթուղթը, ի թիվս այլ հյուպատոսների կողմից բերված տվյալների, օգտագործվել է Մորգենթաուի հուշերում:

Ամբողջությամբ վերցրած, առաջին անգամ հրապարակվող այս փաստաթղթերը գալիս են լրացնելու անցած տասնամյակներում լույս տեսած առավել արժանահավատ ու անաչառ վկայությունների այն ամբողջությունը, որը մարդկությանը հիշեցնում է առաջին համաշխարհային իմպերիալիստական պատերազմի տարիներին հայ ժողովրդի դեմ գործադրված զանգվածային ցեղասպանու-

թյան փաստը, որն այսօր էլ դեռ փորձում են վիճարկել կամ այլարզապես ժխտել իթթիհաթական մարդասպանների ջատագովներն ու պաշտպանները:

Ֆրանսիական «Յումանիտե» թերթը, անդրադառնալով Մորգենթաուի հուշերին և նոր փաստաթղթերի հրապարակմանը, ընդգծում է. «Ներկա թուրքական կառավարությունը համառորեն ժխտում է ցեղասպանության իրողությունը, որի զոհը դարձան հայերը՝ սկսած 1915 թվականից: Ոչ մի լուրջ պատմաբան չի բաժանում նրա պնդումները»[11]:

Այնուհետև «Յումանիտեն» շարունակում է. «Այս գրքին ավելանում են ԱՄՆ-ի պետական դեպարտամենտի արխիվներում պահված այն զեկուցագրերը, որոնք մինչև այժմ երբեք չեն հրապարակվել: Ամբողջը միասին կազմում է ճնշող մի թղթապանակ, որը, ինչպես էլ որ այն փորձեն մեկնաբանել, ո՛չ մի կասկած չի թողնում այն բանում, որ ցեղասպանությունը իսկապես տեղի է ունեցել»:

Հոդվածի վերջում նշվում է հետևյալը. «Հենրի Մորգենթաուի «Հուշերը» և նորերս հրապարակվող փաստաթղթերը մասամբ լույս են սփռում ժամանակակից պատմության մեծագույն ողբերգություններից մեկի մութ ծալքերի վրա:

Անշուշտ գոյություն ունեն այլ վկայություններ, այդ թեմային են նվիրված բազմաթիվ հետազոտություններ: Սակայն այստեղ առկա է իր վավերականությամբ յուրօրինակ ինչ-որ մի բան, որը չի կարելի անտեսել»[12]:

1985

ՀԱՅԿԱԿԱՆ ԵՂԵՌՆԸ ՀՈՒՆԳԱՐԱԿԱՆ ԱՄՍԱԳՐԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅԱՄԲ

Հունգարիայի Ժողովրդական Հանրապետության մայրաքաղաքում՝ Բուդապեշտում լույս տեսնող «Ինտերպրես մագազին» հանրածանոթ ամսագիրը իր 1985-ի օգոստոսի համարում զետեղել է հունգարացի լրագրող Շանդոր Նովոբատսկու «Մուսադաղը 70 տարեկան է» խորագիրը կրող հոդվածը՝ հայկական ջարդերն արտացոլող մի ցնցող լուսանկարով[1]: Հոդվածը հիմնականում նվիրված է 1915-ի եղեռնին և նպատակ ունի հունգար մասսայական ընթերցողին տեղյակ պահել հայ ժողովրդի վերապրած

մեծագույն ողբերգությանը, այդ աղետի դրդապատճառներին: Միաժամանակ հեղինակը փորձում է բացահայտել այն կապը, որ գոյություն ունի ժամանակակից հայկական ահաբեկչության և եղեռնի պատասխանատուների դատապարտման հարցի միջև: Այս առումով ևս հոդվածը որոշակի հետաքրքրություն է ներկայացնում, թեև ոչ բոլոր հարցերի գնահատականներն են համոզիչ ու հիմնավորված: Այսպես, հեղինակը գրում է, որ իբր սուլթան Մահմուդ II-ի (1808—1839) գահակալության տարիներին հայերն ապրում էին հանգիստ ու հավասարակշռված կյանքով, թե իբր XIX դարի առաջին կեսը Օսմանյան կայսրությունում «ազգային հանգստության դարաշրջան էր»: Այնուհետև հոդվածագիրը գրում է, թե իբր «հետպատերազմյան թուրքական պատմագրությունը չի ժխտում այն փաստը, որ հայերի հետ անարդարացի են վարվել»: Սա արդեն նշանակում է ցանկալին իրականության տեղ ընդունել, որովհետև հատուկենտ հեղինակների վերապահություններով լեցուն խոստովանությունները հատկանշական չեն հայկական ցեղասպանության պատմությունը ներգափոխող թուրք հեղինակների հարյուրավոր հետազոտությունների համար: Դժվար է կիսել հեղինակի այն ենթադրությունը, թե ժամանակակից թուրք կառավարությունը իբր «չի կարող կողմնակից լինել 1915-ի թուրքական կառավարության գործողություններին», որովհետև փաստերը հակառակն են վկայում. թուրք կառավարողները համառորեն ժխտում են հայկական ցեղասպանության փաստը և փորձ իսկ չեն անում դատապարտելու երիտթուրքական պարագլուխների հանցավոր արարքները:

Եվ, վերջապես, խիստ նվազեցված է 1894—96 թթ. և 1915—16 թթ. ջարդերի ընդհանուր թիվը՝ համապատասխանորեն 100 հազար և 500 հազար՝ 300 հազարի և 1,5 միլիոնի փոխարեն: Ստույգ չէ նաև ներկայումս ամբողջ աշխարհում բնակվող հայերի ընդհանուր թիվը՝ 4,5 մլն 7,5 միլիոնի փոխարեն:

Նշված և մի քանի այլ թերություններով հանդերձ, ներկայացվող հոդվածը գալիս է լրացնելու 1915-ի եղեռնի ուսումնասիրության էջերը՝ իր համեստ նպաս-

տը բերելով մարդկության դեմ ուղղված այդ ծանրագույն հանցագործության միջազգային չափանիշով ճանաչման ու դատապարտման գործին։

Հոդվածը հունգարերեն բնագրից թարգմանել է ՀԽՍՀ գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտի գիտաշխատող Կրայչիր Պիրոշկան։

«... Հայաստանը հանդիսանում է Եվրոպայի և Ասիայի ամենահին պետություններից մեկը։ Հայերը քրիստոնեություն են ընդունել այն ժամանակ, երբ հունգարացիների նախորդները դեռ որսորդությամբ էին զբաղվում Ուրալի շրջակայքում։ Միջին դարերի վերջին Հայաստանը դադարեց գոյություն ունենալ, որպես անկախ պետություն։ Թուրքիան ու Պարսկաստանը իրար միջև բաժանեցին նախկինում ծաղկուն այդ պետությունը։ Ավելի ուշ, Հյուսիսային Հայաստանի մի մասն անցավ ցարական Ռուսաստանին։ Սկսած XVI դարից հայերն ընտելանում են անտուն ու անհայրենիք մարդկանց ճակատագրին, սովորում գաղթել, թաքնվել, հաշտվել այլ երկրներում հիմնավորվելու անհրաժեշտության հետ։ Հենց այդ ձևով հայերը հայտնվեցին հեռավոր երկրամասերում, իմիջիայլոց և Հունգարիայում, Տրանսիլվանիայում, XVII դարում՝ Սամոշույվարի և Էրժեբեթվարոշի շրջաններում։ Նրանցից մի քանի հազարը վերջնականապես հաստատվեցին և հետագայում ձուլվեցին հունգարացիների հետ, թեև նրանք աշխատում են պահպանել իրենց հավատը, լեզուն ու սովորույթները, ինչպես նաև հայկական ինքնագիտակցությունը։ Անցյալ դարի առաջին կեսին, սուլթան Մահմուդ II-ի (1808—1839 թթ.) գահակալության շրջանում հայերը ապրում էին հանգիստ, հավասարակշռված կյանքով Թուրքիայի տարածքում. ի տարբերություն նախորդ ժամանակաշրջանների, XIX դարի առաջին կեսը դարձավ ոսկե դարաշրջան տաղանդավոր ու աշխատասեր, ինչպես արվեստների, այնպես էլ առևտրի մեջ հաջողակ հայերի համար։ Այդ շրջանը Թուրքիայում հանդիսացավ ազգային հանգստության դարաշրջան։ Միջերկրական ծո-

վի ափին հուլները, բակկաններում սեֆարի հրեաները, իսկ երկրի ներսում հայերը ստեղծեցին ծաղկող առևտրական ու արդյունաբերական կյանք։ Սուլթանի կողմից հրապարակված ազգային օրենքը իրականացնում էր երկրում ժամանակակից եվրոպական սկզբունքների վրա հիմնված հասարակության պահանջները։ Թվում էր թե «Եվրոպայի հիվանդ պետությունը», այսինքն Թուրքիան, ոտք է դնում առաջադիմության և մարդկային ու ազգային իրավունքների իրականացման ուղին։ Շրջադարձը կատարվեց 1877—78 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո։ Օսմանյան կայսրությունը կորցրեց Ռումինիան, Չեռնոգորիան, Բուլղարիայի մի մասը, այնուհետև Կիպրոսը, Թունիսն ու Եգիպտոսը։ Գահ բարձրացավ Աբդուլ Համիդ II-ը, որն ընտրեց ազգային հարցի լուծման պարզ ձև։ Նա այն կարծիքին էր, որ ամեն կարգի անկարգությունները երկրում քրիստոնյա ազգային փոքրամասնությունների անջատողական ձգտումների հետևանք են։ Իր մակիավելիական քաղաքականությամբ նա գրգռում էր հայերի դեմ հարևան քրդական քոչվոր ցեղերին՝ նրանց տալով ձեռքերի լրիվ ազատություն։

Դժվար չէ պատկերացնել, թե վայրենի ու հետամնաց լեռնային ցեղերը ի՞նչ էին հասկանում «ձեռքերի ազատության» տակ։ Սովորական դարձան ամբողջ գյուղերի հրկիզումները, կանանց առևանգումները, ընտանիքների կողոպուտը։ Սակայն այդ բոլորը ոչինչ էր այն իրադարձությունների համեմատությամբ, որոնք տեղի ունեցան 1896-ին։ Մոտ 100 հազար հայ զոհ դարձավ զանգվածային ջարդին, որը կազմակերպվեց Ստամբուլում և մի քանի այլ քաղաքներում։ Դրա հետևանքով հայերը զանգվածաբար դուրս եկան երկրից, գնալով Ռուսաստան, Ամերիկա, Ֆրանսիա և իրենց նկատմամբ ավելի հանդուրժող արաբական երկրներ։ 12 տարի հետո երիտթուրքական շարժման դրոշի ներքո 1908 թ. թուրք երիտասարդ մտավորականության 200 ներկայացուցիչներ հաղթանակ տարան իշխանության համար մղվող պայքարում։ Սուլթանին ստիպեցին հրաժարվել գահից, ու թեև նրա եղբայրը՝ Մեհմեդ V-ը դարձավ սուլթան, երկրի հիմնական կառավարողները դարձան

երիտթուրքերը: Հայերը կարծում էին, որ եկել է նոր դարաշրջան, որ բարբարոսական ֆեոդալիզմի փոխարեն այսուհետև իշխելու են խաղաղությունը, երիտթուրքերի կողմից հռչակված եղբայրության, հավասարության ու ազատության գաղափարները: Երիտթուրքերը սակայն յուրովի էին մեկնաբանում Թուրքիայի մոդեռնացումը: Էնվեր, Թալեաթ ու Ջեմալ փաշաները (չարաբաստիկ երիտթուրքական եռյակը) հռչակեցին նոր սահմանադրություն, սակայն նրանք ձգտում էին Թուրքիայի վերածննդին հասնել երկրի լրիվ ռազմականացման և ազգային բոլոր փոքրամասնությունների թուրքացման ճանապարհով:

Նորից գործի դրվեցին ջնդաևոթները: Առաջին և երկրորդ բալկանյան պատերազմներին Թուրքիան մասնակցություն ունեցավ մեծ ամբարտավանությամբ, սակայն վերջ ի վերջո ընդմիշտ կորցրեց իրեն ենթակա բալկանյան հողերը՝ բացառությամբ Արևելյան Թրակիայի: Հայկական փոքրամասնությունը, որն այդ ժամանակ հաշվվում էր երկու և կես միլիոն մարդ՝ երկրի 23 միլիոն բնակչությունից, գենքը ձեռքին կռվում էր Թուրքիայի կողմում, չնայած այն բանին, որ 1909-ին թուրքերը Ադանայում կազմակերպել էին հայերի զանգվածային ջարդ: Հայերը վստահում էին երիտթուրքերին:

1914-ի աշնանը երիտթուրքերը որոշեցին, որ եկել է ժամանակը վերականգնելու թուրքական մեծ կայսրությունը: Սակայն նրանք սխալվեցին, կապվելով Կենտրոնական պետությունների հետ՝ Գերմանիայի գլխավորությամբ: Եվ առաջին հաջողություններից հետո, նրանք ինչպես Կովկասյան, այնպես էլ Արևմտյան ճակատներում, Բալկաններում ու Սուեզի ջրանցքի մոտ պարտություն կրեցին:

Ռազմական այդ անհաջողություններն օգտագործելով, թուրքական կառավարությունը հորինեց լեգենդ Թուրքիայի քրիստոնյա փոքրամասնության դավաճանության վերաբերյալ: Հայտարարվեց, որ Հյուսիսում հայերը, իսկ Միջերկրականի ափերին հույները գործում են թշնամիների հետ համատեղ և նախապատրաստում են երկրի կործանումը:

Գուցե և այն հայերը, որոնք ապրում էին Սև ծովի և Անդրկովկասի շրջանում, հոգեպես ռուսների կողմն էին՝ տառապելով թուրքական ջարդերից: Բայց եթե նույնիսկ նրանք իրենց սրտի խորքում փայփայում էին նման զգացմունքներ, այդ բանը իր արտահայտությունը չգտավ ո՛չ սաբոտաժի, և ո՛չ էլ ապստամբությունների մեջ: Ճիշտ է, որ սահմանի մյուս կողմում ռուսական գերիշխանության ներքո ապրում էին մեկնկես միլիոն հայեր, որոնք երազում էին իրենց ազգի ազատության մասին, սակայն դա ևս բավարար պատճառ չէր այն սարսափելի արարքների համար, որոնց դիմեց թուրքական կառավարությունը:

Թալեաթ փաշան, որն այդ ժամանակ ներքին գործերի մինիստր էր, հայտարարեց «Բեռլիներ տագեբլատի» թղթակցին. «Հայաստանում տխուր դեպքեր կատարվեցին, բայց հիմա ես կարող եմ հանգիստ քնել: Մեզ մեղադրում են այն բանում, որ մենք տարբերություն չէինք դնում հանցավոր և անմեղ հայերի միջև: Դա պարզապես անհնարին էր, քանի որ նա, ով այսօր անմեղ է, վաղը կարող է դառնալ հանցագործ»[2]: Առնոլդ Թոյնբին, անգլիական հայտնի և առավել անաչառ պատմաբաններից մեկը, նշում է, որ հայերի զանգվածային ոչնչացումը տեղի ունեցավ երեք էտապներով, որոնք չափազանց նմանվում են նացիստների կողմից հրեաների դեմ 30 տարի հետո կիրառված մեթոդներին[3]:

Առաջին հերթին բանակ զորակոչվեցին հայ տղամարդիկ, որոնց բանակում զինաթափ արեցին և քշեցին երկրի խորքը՝ ճանապարհային շինարարական աշխատանքներ կատարելու: Այնուհետև ճանապարհին նրանց բոլորին ոչնչացրեցին:

Երկրորդ. հայ բնակչությանը ստիպեցին հանձնելու զենքերը, մի բան, որ հնարավորություն տվեց խուզարկություններ կատարել, թալանել ու հաշվեհարդար տեսնել: Այդ նույն ժամանակ քշեցին քաղաքի ու գյուղերի համբավավոր քաղաքացիներին, որոնք այլևս ետ չվերադարձան: Երրորդը, որը հանդիսացավ ողբերգության վերջին արարը, հայերին հավաքեցին քաղաքների ու գյուղերի հրապարակներում, որտեղից էլ սկսվեց բռնագաղթը:

Ի պատասխան միջազգային կազմակերպությունների ու չեզոք դիվանագետների հուզումնալից բողոքների, Ստամբուլի իշխանությունները հայտարարեցին, որ հայերի դեմ ձեռնարկված գործողությունները բացատրվում են պետության անվտանգությունը պաշտպանելու անհրաժեշտությամբ:

Իսկ բռնագաղթը (դեպորտացիա) դա հայ ազգաբնակչության տեղափոխությունն է բնակության մի այլ վայր: Ներքին գործերի միհիստր Թալեաթը հեռագրում էր Հալեպի նահանգապետին. «Նախկինում ձեզ հայտնվել է, որ թուրքական կառավարությունը, Ջեմիեթի կարգադրությամբ, որոշել է իսպառ բնաջնջել Թուրքիայում բնակվող բոլոր հայերին: Նրանք, ովքեր կհակադրվեն այդ հրամանին և որոշմանը, չեն կարող մնալ կայսրության պաշտոններում: Նրանց (հայերի—Ռ.Ս.) գոյությանը պետք է վերջ դնել, որքան էլ որ հանցավոր լինեն միջոցները, հաշվի չառնելով ո՛չ տարիքը, ո՛չ էլ սեռը և խղճի ձայնը»[4]:

Եթե հաշվի չառնենք ջարդերը տեղերում, ապա բռնագաղթի «նորմալ» ընթացքը հետևյալն էր. իշխանության ներկայացուցիչը և ոստիկանները հայտնվում էին հայկական քաղաքներում ու գյուղերում, բնակչությանը թողնելով շատ կարճ ժամանակ անձնական իրերը հավաքելու համար, և այնուհետև նրանց քշում էին՝ առանց նախապես հայտնելու, թե ո՛ւր են տանում: Վերջնական հանգրվանն էր Միջագետքի անապատը՝ Դեր Զորը:

Տեղահանվածները ամբողջ ճանապարհն ստիպված էին անցնել ոտքով, ոտաբոբիկ, քարքարոտ ճանապարհներով կիզիչ արևի տակ, առանց նորմալ սննդի: Հասկանալի է, որ մեծ մասը չհասավ վերջնակետին: Իսկ նրանք, ովքեր հասան, ցնցոտիների մեջ էին, գրեթե մերկ, մինչև ոսկորները հյուծված: Ճանապարհին զոհվածների դիակները գցում էին գետը կամ թողնում անթաղ, որի հետևանքով տիֆի համաճարակ բռնկվեց: Տեղահանվածների ճակատագիրը սարսափելի էր: Ով չմեռավ ժանտախտից, նրան սպանեցին, կամ իրենք վերջ տվեցին իրենց կյանքին, կամ քաղցից մահացան: Ժամանակակիցների կողմից բերված բոլոր փաստաթղթերը վկայում են, որ շատերը կորցնում

էին գիտակցությունը՝ մարդկային տառապանքներից, իրենց ետում Եփրատ գետը և այլն։

Շատերն են գրել անապատի սարսափների մասին, բայց գերադասելի է խնայել մեր ընթերցողները և չվերականգնել այդ սարսափները։ Բավարարվենք մի քանի տվյալներով։ Սըվասից տեղահանված տասնյակ հազար հայերից միայն 150-ը հասավ Հալեպ։ Խարբերդից աքսորված 5000 ծոգուց Հալեպ հասավ 213 մարդ։ Ամենից շատ տառապում էին կանայք ու երեխաները, ոչ միայն այն պատճառով, որ նրանք թողնվել էին անպաշտպան, բախտի քմահաճույքին, քանի որ տղամարդկանց նախապես զինակոչել էին և այնուհետև տարել հարկադիր աշխատանքների, այլև այն պատճառով, որ քրդերը հաճախ առևանգում էին նրանց, իսկ նրանց երեխաներին թողնում էին բախտի քմահաճույքին։ Մանավանդ հարեմներում, քաղաքներում հայ կանանց ցուցադրում էին վաճառքի նպատակով։ Թուրքերը կարող էին նրանց ազատ ընտրել իրենց հարեմի համար, և կանայք ու երեխաները ստիպված էին ընդունել մահմեդականություն...

Հայկական հարցը Թուրքիայում այսպիսով «վճռվեց»։

Զոհերի մասին տարբեր աղբյուրներ տարբեր թվեր են նշում, սակայն նույնիսկ թուրք պատմաբան Հիքմեթ Բայուրի կարծիքով, որը բացահայտորեն վարդագույն ձևով էր գրել այդ մասին, զոհվածների թիվը կես միլիոն էր։

Փաստերը ինքնին խոսում են իրենց մասին։ Մինչև առաջին համաշխարհային պատերազմը Թուրքիայում ապրում էին մոտ երկու միլիոն հայեր։ Ներկայումս պաշտոնական վիճակագրությունը ցույց է տալիս 65 հազար։ Հետպատերազմյան թուրք պատմագրությունը չի ժխտում այն փաստը, որ հայերի հետ վարվեցին անարդարացի։ Սակայն, հայ ազգի զանգվածային ջարդերի ու բնաջնջման փաստը չափազանց ծանր էր նրանց խոստովանության համար։ Այնուամենայնիվ, պետք էր հաշվետվություն տալ աշխարհի առաջ կատարված դեպքերի համար։ Դա պատճառ դարձավ այնպիսի տեսությունների համար, ինչպես վերը նշված Հիքմեթ Բայուրինն է, որն իր «Թուրքական հեղափոխության պատմությունը» աշխատության մեջ գրում է. «Թուրքական իշխանությունները քիչ թե շատ կոռեկտ վարվեցին

տեղահանման հարցում..., սակայն հետավոր նահանգներում քրդերի ու օժանդակ ջոկատների կողմից թույլ տրված ծայրահեղությունների, տիֆի, հոգնածության և սննդի բացակայության պատճառով տեղի ունեցավ հայերի զանգվածային կորուստ»: Պետք է ասել, որ չնայած մի քանի երջանիկ բացառությունների, տերությունները չօգնեցին հայերին: Պատմությունը մարդասպանների աջակիցը դարձավ:

1915-ին Անգլիան, Ֆրանսիան, Ռուսաստանը դիվանագիտական հարաբերություններ չունեին Թուրքիայի հետ և այդպիսով չկարողացան հանդես գալ հայերի շահերի պաշտպանությամբ:

Գերմանիայում ու Ավստրո-Հունգարիայում հասարակական կարծիքը դատապարտեց թուրքական կառավարության կողմից ընդունված միջոցառումները, սակայն իրենց դիվանագիտական շահերից ելնելով նշված երկրների կառավարությունները չկամեցան հակադրվել իրենց դաշնակցին:

Գերմանական թերթերում երբեմն տպագրվում էին հոդվածներ հայերի զանգվածային ջարդի մասին, սակայն դրանք չէին մեկնաբանվում, թեև գերմանական մարդասերները, կրոնական ու աշխարհիկ մարդիկ դիվանագետի կամ միսիոների պաշտոնում ականատես լինելով դեպքերին (օրինակ, աստվածաբան դոկտոր Լեպսիուսը[5], Հալեսի գերմանական հյուպատոս դոկտոր Ռոսլերը և ուրիշներ), մանրամասն նկարագրեցին այդ սարսափելի իրադարձությունը: Այդ փաստաթղթերը երկար ժամանակ արգելված էր հրապարակել: Չեզոք երկրները (1915-ին դրանց թվին էր պատկանում նաև ԱՄՆ-ը) փորձում էին փրկել հայերին, սակայն Ստամբուլի կառավարող շրջանները մնացին անդրդվելի:

Ամերիկյան դեսպան Մորգենթաուի հուշերը վկայում են, որ նա բազմիցս ընդունելության է հանդրել Էնվերի ու Թալեաթի մոտ, որպեսզի նրանց համոզի փոխել իրենց վերաբերմունքը հայերի նկատմամբ: Թալեաթը հարցրել է նրան. «Ի վերջո, ինչո՞ւ եք դուք այդքան անհանգստանում հայերի համար, չէ՞ որ դուք հրեա եք, իսկ այդ ժողովուրդը՝

քրիստոնյա: Մահմեդականներն ու հրեաները միշտ էլ իրար լավ են հասկացել: Ինչո՞ւ համար եք դուք բողոքում, ինչո՞ւ չեք թողնում, որ մենք վարվենք քրիստոնյաների հետ, ինչպես որ ցանկանանք»: Մորգենթաուն գրանցեց իր օրագրում հետևյալ միտքը. «Հաճախ եմ ես նկատել, որ թուրքերը բոլոր հարցերին մոտենում են գործնականորեն: Նրանք հասկանում են, որ հրեան օգնում է հրեային, իսկ քրիստոնյան քրիստոնյային, բայց արդարության ու ազնվության հասկացողությունները բոլորովին հեռու են նրանցից»: Խմիչքից դեսպանն այսպես է պատասխանել Թալեաթին. «Ես եկել եմ Ձեզ մոտ ոչ թե որպես հրեա, այլ որպես Ամերիկայի դեսպան: Իմ հայրենիքում ապրում են 97 միլիոն քրիստոնյաներ և ընդամենը երեք միլիոն հրեաներ: Ես Ձեզ դիմում եմ ոչ թե որևէ ազգի կամ կրոնի անունից, այլ հանուն մարդասիրության... հետևաբար եթե Ձեր համար մարդասիրական կողմը նշանակություն չունի, գործին նայեք նյութական կորուստների տեսանկյունից: Հայերի մեջ կան շատ առևտրականներ, գործարար մարդիկ, նրանք արդյունաբերության բոլոր ճյուղերում են, վճարում են հարկերը: Ինչի՞ կվերածվի երկրի տնտեսական կյանքը առանց նրանց»: Միհիստրը պատասխանել է այսպես. «Մեզ չեն հետաքրքրքրում առևտրական կորուստները: Մենք դրանով չենք զբաղվում: Պարզապես մենք թույլ չենք տա, որ հայերն ապրեն Անատոլիայում: Նրանք կարող են ապրել ամենուրեք, բայց ոչ մի դեպքում որևէ այլ վայրում...»

Թուրքական կառավարության պարզ ու ցինիկ ստրատեգիան նրա ձգտումն էր մինչև պատերազմի ավարտը հաշվեհարդար տեսնել հայերի հետ: Նա ցանկանում էր ստեղծել կրոնական տեսակետից միատարր երկիր և մինչև պատերազմի վերջը, որի հաղթանակին նրանք ավելի ու ավելի քիչ էին հավատում, ավարտել գործը՝ միջազգային հասարակական կարծիքը դնելով կատարված փաստի առջև:

Չէ՞ որ այն, ինչ որ կատարվեց, ոչ ոք չի կարող փոխել (այդ փիլիսոփայությունը մեզ ծանոթ է): Հիտլերը ծրագրելով հրեաների զանգվածային բնաջնջումը, պատաս-

խաճել է առարկողներին. «Ո՞վ է այսօր տակավին հիշում հայերի ոչնչացման մասին»[6]:

Փաստաթղթերը հստակ կերպով տարբերություն են դնում թուրք մոլեռանդ ղեկավարների, նահանգապետների, ոստիկանների և հայերի նկատմամբ թուրք ժողովրդի կողմից դրսևորված վերաբերմունքի միջև: Ասիական հետամնաց պայմաններում ապրող թուրք աղքատ բնակչությունը զարմանքով էր նայում հայերի մահվան երթին: Նա խղճում էր դժբախտներին ու կարեկցում նրանց: Սակայն ո՛չ թուրք ժողովուրդը կարողացավ ժամանակին կանգնեցնել դեպքերի ընթացքը, ո՛չ էլ ներկայիս կառավարությունը կարող է կողմնակից լինել թուրք կառավարության գործողություններին 70 տարի սրանից առաջ: Պետք է նշել, որ 1915-ին թուրք-արաբական տերիտորիայի վրա (Սիրիայում և Միջագետքում շատ արաբներ ապրում էին թուրքական գերիշխանության ներքո) շատերը չհամաձայնվեցին հայերի ոչնչացման վերաբերյալ պետական հրամանի հետ: Ջելալ բեյը՝ Հալեպի նահանգապետը պատասխանեց հետևյալ կերպ. «Ես այս նահանգի նահանգապետն եմ և չեմ կարող նրա դահիճը դառնալ»: Նրան անմիջապես ազատեցին պաշտոնից: Դեր Զորի նահանգապետի տեղակալը նույնպես մտադիր էր թեթևացնել տեղահանվածների ճակատագիրը, և նա նույնպես պաշտոնազուրկ արվեց՝ փոխարինվելով դաժան մի պաշտոնյայով: Հայերի տառապանքները կարեկցանք էին առաջ բերում արաբ բնակչության մեջ, շատերը թաքցնում էին հայ երեխաներին, թեև դրա համար պատիժ էր հասնում, նույնիսկ մահապատիժ:

Թուրք քաղաքագետների ու հասարակական գործիչների մեջ նույնպես գտնվեցին մի քանիսը, որոնք համարձակվեցին իրենց բողոքի ձայնը բարձրացնել այդ հրամանի դեմ: Ընդդիմադիր լիբերալ կուսակցության ղեկավար Շերիֆ փաշան հայտարարեց շվեյցարական թերթին. «Երբ որ մի ժողովրդի, որը կարող էր թուրքական կայսրության վերածննդի երաշխիքը հանդիսանալ, ոչ միայն կեղեքում են, այլև ոչնչացնում, նույնիսկ անզգա մարդու սիրտը կտոր-կտոր է լինում: Ես ցանկանում եմ արտահայտել իմ

զայրույթը դահիճների դեմ և իմ կարեկցանքը՝ մեռնող ժողովրդին»: Ազատամիտ կուսակցության մյուս ղեկավարը՝ Իսմայիլ Հաքքըն հայտարարեց Սալոնիկում լույս տեսնող թուրքական թերթին. «Ամեն մի հալածանք, անկախ այն բանից, թե բնակչության որ խավի դեմ է այն ուղղված, աններելի հանցագործություն է: Անտարբեր անցնել դրա կողքով, նշանակում է հանցագործության մեղսակիցը դառնալ: Հեռավոր ծայրամասերում սպանում են հայերին: Ամբողջ սրտով ես կարեկցում եմ մեր աղետյալ հայրենակիցներին»: Նույնիսկ պառլամենտում գտնվեց մի մարդ, որը դատապարտեց հայերի բնաջնջումը և փորձեց պաշտպանել նրանց: Պառլամենտի նախկին նախագահ Ահմեդ Ռիզայի ելույթը բուռն վեճերի առարկա դարձավ, սենատի շատ անդամներ բաժանեցին Ռիզայի կարծիքը, սակայն Թալեաթը խուսափեց պատասխանից: Դրա փոխարեն նա չկարողացավ խուսափել իր ճակատագրից: Երիտասարդ մի հայ (խոսքը Սողոմոն Թեհլերյանի մասին է— Ռ. Ս.) գնդակահարեց նրան Բեռլինում: Նույն ձևով ավարտեց իր կյանքը Ջեմալ փաշան: Իսկ Էնվեր փաշան սպանվեց ռազմաճակատում (հակախորհրդային բասմաչական շարժումը գլխավորելիս— Ռ.Ս.):

Շատ քիչ հայեր կարողացան խուսափել ճակատագրից: Նրանք ովքեր ապրում էին հյուսիսում, հնարավորություն ունեցան ռուսական բանակի հարձակման պահին փախչել հարևան երկիրը (Անդրկովկաս— Ռ. Ս.): Ստամբուլում արյունոտ հանցագործությունները կատարվում էին հնարավորին չափ գաղտնի պայմաններում: Միջազգային հասարակական կարծիքը և մամուլի արտասահմանյան օրգանները չափազանց մոտ էին գտնվում: Չնայած դրան, հսկայական երկրում, սկսած Սև ծովից մինչև Միջերկրական ծովը և Մարմարա ծովից մինչև Եփրատ գետը, հազիվ թե մի տեղ մնաց, ուր հայերը կարողանային խուսափել մահվանից:

1933-ին ավստրիական գրող Ֆրանց Վերֆելը Պրագայից բերեց Վիեննայում գտնվող Ժոննայի-Ֆերլագ հրատարակչություն «Մուսադաղի 40 օրը» վեպնագիրը կրող վեպի ձեռագիրը: Վեպը անգնահատելի ծառայություն մատուցեց

աշխարհին՝ հայերի հարցում: Թեև վեպի նյութը նվիրված է 1915-ի հայ ժողովրդի ողբերգությանը, գիրքը մի բողոք է ժամանակակից բարբարոսության, ռասիզմի դեմ, և գործողության է կոչում: Գրքի լույս ընծայման տարում նացիստները եկան իշխանության և շուտով ձեռնարկեցին հրեաների մտածված ու մեխանիզացված ոչնչացմանը: Այսպիսով Վերֆելի վեպը մի մարգարեություն դարձավ:

Թերևս այդ է պատճառը, որ շատերը մտածում են, որ վեպում նկարագրված պատմությունը մի ալեգորիա է, երևակայության արգասիք: Սակայն գրողը օգտվել է փաստաթղթերից, առաջին հերթին Լեպսիուսի զեկուցագրերից: Վեպում պատմվում է, թե ինչպես էր հայկական մի փոքր գյուղի բնակչությունը դիմադրում տեղահանությանը, և թե ինչպես ի վերջո նա փրկվեց ֆրանսիական մի հածանավի օգնությամբ:

Ինչպիսի՞ ճակատագրի արժանացան եղեռնից փրկված հայերը:

Այդ հարցին պատասխանենք վիճակագրական տվյալներով: Թվերը մոտավոր են, որովհետև միայն Խորհրդային Միությունում է, որ հայերը ապրում են իրենց սեփական հանրապետությունում, մնացած վայրերում նրանք ապրում են, որպես ազգային փոքրամասնություն, կամ որևէ մի երկրի հայախոս քաղաքացիներ, կամ միայն պահում են իրենց հայկական ծագման մասին հիշողություններ:

Խորհրդային Միությունում ապրում է երեք և կես միլիոն հայ, որոնցից երկու երրորդը Հայկական ԽՍՀ-ում, մնացածները Վրաստանում, Ադրբեջանում և Միության մյուս մասերում: Սիրիայում ու Լիբանանում ապրում է մոտ երկու հարյուր հազար հայ, Իրանում նրանց թիվը 15 տարի առաջ կազմում էր 130 հազար: Թուրքիայում մնացել է 65 հազար հայ: ԱՄՆ-ում բնակվում է 500 հազար հայ, մեծ մասամբ Կալիֆոռնիայում, հատկապես Ֆրեզնո քաղաքում: Ֆրանսիայում գոյություն ունի բավականին ուժեղ հայկական գաղութ՝ մոտ 300 հազար մարդ: Աշխարհի շատ երկրներում կան ոչ մեծ հայկական համայնքներ, ընդամենը

մի քանի հազար հոգուց բաղկացած: Ամբողջ աշխարհի հայ ազգաբնակչությունը հաշվում է չորս և կես միլիոն:

Շատ երկար ժամանակ կպահանջվեր թվարկելու համար հայկական ծագում ունեցող ականավոր անձանց: Բավական է թվել նրանցից մի քանիսին. Գոհար Գասպարյան, Շառլ Ազնավուր, Վիկտոր Համբարձումյան, Արամ Խաչատրյան, Անաստաս Միկոյան, Գալուստ Գյուլբենկյան, Վիլյամ Սարոյան: Հունգարահայերի թվում նույնպես նշենք ամենահայտնիներին. Յանոշ Յեց, Էլեմեր Բանյան (Զուբոյ), Տերյու Մալի, Շտեֆանիա Մոլդովան, Բելլա Իշեկուտ, Գերգի Չիկլ, Լասլո Գորովե և ուրիշներ:

Աշխարհը շատ շուտ է մոռանում: Սա հայկական ողբերգությունից արվող հետևություններից մեկն է: XX դարում դա միակ զանգվածային բնաջնջումը չէր, սակայն բոլոր եղածների մեջ ամենախաղաղն էր: Պատմությունը փակեց հայկական ողբերգության էջը...»:

1988

Գլուխ երրորդ

ԴԱՏԱՊԱՐՏՈՒՄ ԵՆ ԹՈՒՐՔ ՑԵՂԱՍՊԱՆՆԵՐԻՆ

ՀԱՑԵՐԻ ԳԵՆՈՑԻԴԸ ԵՎ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ

Հայերի զանգվածային ջարդերը Թուրքիայում առաջին համաշխարհային պատերազմի տարիներին զայրույթի ու բողոքի ալիք առաջացրեցին եվրոպական և համաշխարհային հասարակայնության մեջ։ Տարբեր ազգության ու քաղաքական համոզմունքների մարդիկ ցասումնալի կերպով դատապարտեցին երիտթուրքական կառավարողների հրեշավոր չարագործությունները Թուրքիայի հայ ազգաբնակչության նկատմամբ։ Ռազմական իրադրության քողի տակ և Թուրքիայի գլխավոր դաշնակից կայզերական Գերմանիայի թողտվությամբ երիտթուրքական պարագլուխները իրականացրեցին խնամքով մշակված իրենց ծրագիրը՝ հայկական հարցը լուծել արևմտահայության իսպառ բնաջնջման եղանակով, որի հետևանքով ամբողջ Օսմանյան կայսրության տարածքում (Արևմտյան Հայաստան, Կիլիկիա և այլն) այդ ժամանակ բնակվող 2,3 միլիոն հայ ազգաբնակչությունից փրկվեց մոտ 800 հազար մարդ։ Պատերազմական իրավիճակը և թթիհաթական վերնախավի կողմից ձեռնարկված հատուկ միջոցառումները, անշուշտ, խանգարեցին, որ համաշխարհային հասարակական կարծիքը օր առաջ տեղեկանա XX դարի առաջին ցեղասպանության մասին, սակայն արդեն 1915-ի վերջին հրապարակվեցին առաջին տեղեկությունները, բրոշյուրներ

և ջարդերի անմիջական ականատեսների վկայությունները[1]։ 1916-ին լույս տեսավ անգլիական պետական գործիչ և պատմաբան Ջեյմս Բրայսի ու Առնոլդ Թոյնբիի կազմած փաստաթղթերի ստվարածավալ ժողովածուն[2] և գերմանական արևելագետ, հումանիստ Յոհաննես Լեպսիուսի «Հաղորդում հայ ժողովրդի վիճակի մասին Թուրքիայում» մեծարժեք աշխատությունը[3]։ Նույն տարին անգլերենից թարգմանվեց ռուսերեն և հրատարակվեց Պետրոգրադում հայկական ջարդերի ականատես, ամերիկյան հայտնի իրավաբան դոկտոր Հերբերտ Ադամս Գիբոնսի «Նորագույն պատմության ամենասև էջը» հայտնի գիրքը[4]։

Հայկական ջարդերը Թուրքիայում դատապարտեցին Սերգեյ Կիրովը, Մաքսիմ Գորկին, Վալերի Բրյուսովը, Յուրի Վեսելովսկին և ուրիշներ Ռուսաստանում, Անատոլ Ֆրանսը, Անտուան Մեյեն, Ժակ դը Մորգանը, Ֆրեդերիկ Մակլերը, Ռընե Պինոնը Ֆրանսիայում, Կարլ Լիբկնեխտը, պրոֆեսոր Յոզեֆ Մարկվարտը, գրող Արմին Վեգները, դոկտոր Լեպսիուսը Գերմանիայում, և շատ ուրիշներ։

Հիշյալ և մի շարք այլ ականավոր անձինք իրենց գրքերում ու հոդվածներում, ինչպես նաև հրապարակային ելույթներում մերկացնում էին իթթիհատական կառավարողների ազգայնամոլ քաղաքականությունը, մասնավորապես արևմտահայերի դեմ նրանց ձեռնարկած անմարդկային քայլերը։

«Նույնիսկ տխրահռչակ թուրքական սահմանադրությունը,— գրում էր Յուրի Վեսելովսկին,— որը պետք է, ինչպես ենթադրում էին, երաշխավորեր օրենքի առաջ Օսմանյան կայսրության բոլոր հպատակների հավասարությունը և, ընդհանրապես, հաստատեր օրինականության ու կրոնական հանդուրժողության թագավորություն, սկիզբ դներ կուլտուրային ու առաջադիմությանը, արմատապես չփոխեց իրերի քարացած կարգը։ Արդեն իսկ այն փաստը, որ նոր ռեժիմի պայմաններում կարող էին, թեև սակավ դեպքերում, բայց տեղի ունենալ, ինչպես նախկինում, Աբդուլ Համիդի օրոք, ջարդեր Ադանայի նման՝ մեկը առավել ար-

յունահեղ ջարդերից, պերճախոս կերպով վկայում էր, թե ինչ անպտուղ զբաղմունք է նոր գինին հին տիկերի մեջ լցնելը, թե որքան անզգույշ քայլ է հույս դնել վերացական սկզբունքների վրա, երբ պետական օրգանիզմի ընդհանուր ոգին ու համակարգը մնում են անփոփոխ»[5]:

Ականավոր արևելագետ Յոզեֆ Մարկվարտը նույնպես մատնանշում էր, որ թուրքական սահմանադրության հռչակումից հետո տիրապետող վերնախավի քաղաքականության հիմնական կարգախոսը նույնն էր. «երբ որ հայեր չեն լինի, չի լինի նաև հայկական հարցը»: «Ադանայի սարսափելի ջարդը ցույց տվեց,— շարունակում է հեղինակը,— որ երիտթուրքերը, որոնք տարօրինակ կերպով Եվրոպայի հասարակական կարծիքի առջև լիբերալների համբավ էին ձեռք բերել, իրենց ինքնակամ դաժանությամբ ոչնչով չեն զիջում մեծ դահիճ Աբդուլ Համիդին»[6]:

Հիրավի, ընդամենը մի քանի ամիս պահանջվեց, որ երիտթուրքական հեղափոխությունը, Վ. Ի. Լենինի բնորոշմամբ կիսատ-պռատ ու մակերեսային այդ հեղափոխությունը, դրսևորեր իր իսկական էությունը: Արդեն 1908 թվականի սեպտեմբերին երիտթուրքերը վերանայեցին իրենց օգոստոսյան ծրագիրը, արմատական բոլոր կետերը փոխարինելով չափավոր ու անորոշ խոստումներով: Գյուղացիներին հող տալու պահանջը փոխարինվեց մի ձևակերպումով, որտեղ ասված էր. «ապահովել հնարավորություն», որ գյուղացիները կարողանան ձեռք բերել հողակտորներ՝ «առանց հողակտորների իրավունքները սահմանափակելու» և այլն:

Ինչ վերաբերում է ազգային հարցին, այստեղ երիտթուրքերը շուտով հրաժարվեցին օսմանիզմի ձախողակ վարդապետությունից, այն փոխարինելով պանթուրքիզմով:

«Թուրքական ազգայնականությունը և պանիսլամիզմի գաղափարը,— նշում էր Լեպսիուսը,— բացառում էին կայսրության տարբեր ազգությունների միջև որևէ հավասարություն և որպես դավանանություն էին որակում ամեն մի շարժում, որը կայսրության փրկությունը տեսնում էր նրա ապակենտրոնացման և տարբեր մասերին ինքնավարություն տալու մեջ: Ազգայնական ու կենտրոնաձիգ

միտումները ուղղված էին ոչ միայն ոչ մահմեդական ազգությունների՝ հույներ, հայեր, ասորիներ, հրեաներ, այլև ոչ թուրք ժողովուրդների՝ արաբների, սիրիացի մահմեդականների, քրդերի, ինչպես և շիիթների դեմ: Պանթուրքիզմը դարձավ յուրատեսակ մի կուռք, և ամենադաժան միջոցներ ձեռնարկվեցին բոլոր ոչ թուրք տարրերի դեմ»[7]:

Կայսրության քրիստոնյա ժողովուրդների թուրքացման և մահմեդական ժողովուրդների բոնի ձուլման իրենց քաղաքականության մեջ երիտթուրքերը հատուկ տեղ էին հատկացնում հայերին, որպես դժվար տարրալուծվող ազգի, միաժամանակ դիտելով նրանց որպես հիմնական խոչընդոտ «մեծ Թուրանի» ճանապարհին: Եվ այսպես, որոշվեց սկսել հայերից: Այդ հարցը հատուկ քննության առարկա դարձավ երիտթուրքական կուսակցության կենտրոնական կոմիտեի գաղտնի նիստում, որտեղ «հիմնավորվեց» հայ ժողովրդի ոչնչացման անհրաժեշտությունը: Ահա թե ինչ էր ասել այդ նիստում իթթիհադական կուսակցության տեսաբան դոկտոր Բեհաեդդին Շաքիրը.

«Մենք՝ հեղափոխականներս, հանուն թուրք ազգի և օսմանյան պետության ազգային իդեալների ստեղծեցինք Իթթիհադի իշխանությունը: Մեր ազգային մշակույթում մենք կարող ենք հանդուրժել միայն թուրքական սերմի ծաղկումը: Մենք պարտավոր ենք մեր հայրենիքը մաքրել անցյալից մնացած ազգերից, արմատախիլ անել նրանց, ինչպես մոլախոտերի: Սա՛ է մեր հեղափոխության նշանաբանն ու նպատակը»[8]:

Համաշխարհային պատերազմի բռնկումը երիտթուրքական կառավարողներին հնարավորություն ընձեռեց իրականացնելու արևմտահայության բնաջնջման այդ ծրագիրը:

«Թուրքիայի գոյությունն ապահովելու պատրվակով,— գրում է դեպքերի ականատես, Պարտիզակի ամերիկյան դպրոցի ուսուցչուհի Անա Զեմբերսը,— կառավարող կլիկը ձեռնամուխ եղավ հայերի ազգային անարգմանն ու հալածանքներին: Պատերազմը դրա համար միայն հնարավորություն էր և ոչ թե պատճառ: Նա մերկացրեց թուրքական կառավարության խորագույն գաղտնիքները»: «Թուրքական թերթերում,— վերհիշում է հեղինակը,— երևացին հոդված-

ներ այն պնդումով, որ Թուրքիայի բարձրագույն շահերը պահանջում են միատարր բնակչություն և ուրեմն հայերը պետք է ոչնչացվեն...»[9]:

Կառավարության առաջին միջոցառումը՝ բարբարոսական այդ պլանի ճանապարհին դա թուրքական բանակ զորակոչված հայ ռազմիկների զինաթափումն ու տմարդի ոչնչացումն էր: 1915-ի փետրվարի 27-ին բոլոր բանակային հրամանատարներին հղվեց ռազմական մինիստր Էնվեր փաշայի ծածկագիր հեռագիրը, որը պահանջում էր ձերբակալել ու իրենց գնդերի զորանոցներում փակել ազգությամբ հայ սպաներին, ինչպես նաև քշել մեկուսացված վայրեր, «կողմնակի աչքից հեռու և այնտեղ գնդակահարել կայսերական բանակներում ծառայող բոլոր հայերին»:

«Զինվորական ծառայության մեջ գտնվող հայերը,— գրում է Լեպսիուսը,— նրանք, որոնք ռազմական մինիստրի վկայությամբ խիզախորեն մարտնչել էին ո՛չ միայն Դարդանելում, այլև Կովկասյան ճակատում՝ Ռուսաստանի դեմ, զինաթափվեցին և օգտագործվեցին բանակի կարիքների համար, որպես բեռնակիրներ կամ ճանապարհների վերականգնման նպատակով: Գրեթե բոլոր գավառներից տեղեկություններ ստացվեցին այն մասին, որ մեկուսացված վայրեր քշվեցին և իրենց մահմեդական զինակիցների կողմից սպանվեցին ո՛չ միայն պարտադիր աշխատանքում գտնվող հայերը, այլև ամբողջ ջոկատներ, բաղկացած 80, 100 և ավելի մարդկանցից, որոնց գնդակահարում էին թուրք զինվորներն ու ոստիկանները՝ իրենց սպաների հրամանով»[10]:

Համընդհանուր բռնագաղթին նախորդող երկրորդ էտապ հանդիսացան հայ մտավորականության հազարավոր ներկայացուցիչների և երևելիների գաղտնի ձերբակալություններն ու սպանությունները: Ստամբուլի հայ մտավորականության ձերբակալությունից երեք օր առաջ իշխանությունները ձեռնամուխ եղան հայ երևելիների ձերբակալություններին ու աքսորին Անատոլիայի ողջ տարածքում:

«Հայերի այս հազարավոր ձերբակալությունները,— նշում է Լեպսիուսը,— հարգարժան ու կրթված մարդկանց՝

պատգամավորների, հրապարակախոսների, բանաստեղծների, իրավաբանների, փաստաբանների, նոտարների, պետական ծառայողների, բժիշկների, առևտրականների, բանկիրների և բոլոր ազդեցիկ և ունևոր մարդկանց, տեղի ունեցան **առանց որևէ դատական քննության**: Երբե՛ք, ո՛չ մի դեպքում նրանց ներկայացվել մեղադրանք այն բանում, որ նրանք մասնակցել են պետության դեմ ուղղված որևէ ակտում, կամ նման մի բան կանխամտածված կատարելու մեջ: Պարզապես նրանք ուզում էին գրկախառնել հայ ժողովուրդը՝ մինչև որ կձեռնարկեին նրա առանձին հատվածների բաժան-բաժան անելուն»[11]:

Նախնական այս միջոցառումներից հետո, որոնք զգալիորեն հեշտացրին կանխամտածված պլանի իրականացումը, երիտթուրքական կառավարությունը 1915-ի մայիսի 14 (27)-ին հրապարակեց դեկրետ այսպես կոչված տեղահանությունների՝ Արևմտյան Հայաստանի և այլ վայրերի հայ ազգաբնակչությունը Սիրիայի ու Միջագետքի անապատները բռնի գաղթեցնելու մասին: Դրա պաշտոնական փաստարկումը մինչև վերջը շինծու այն վարկածն էր, որ հայերին ռուս-թուրքական սահմանին մոտ թողնելը սպառնալիք է երկրի անվտանգությանը: Անհիմն ու կեղծ այս վարկածը մերկացվել է օտարերկրյա ականատեսների ու դեպքերի ժամանակակիցների կողմից: Բերենք նրանցից մի քանիսի կարծիքը:

«Չի կարելի լուրջ համարել տեղահանությունը հիմնավորող փաստարկները,— գրում է Լեպսիուսը:— Բացառությամբ Վանի շրջանի, որը զերծ մնաց տեղահանությունից, քանի որ այն գրավվել էր ռուսական զորքերի կողմից, և երկու-երեք այլ վայրերի, որտեղ հայերը դիմադրություն ցույց տվեցին (Զեյթուն, Շապին-Կարահիսար), մնացածները այնքան հեռու են ճակատամարտ գոտուց, որ կայսրության տարբեր մասերում ցրված 1,5 միլիոն բնակիչների արտաքսումը նույնիսկ պատերազմի թատերաբեմից շատ հեռու ընկած շրջաններից ո՛չ մի կերպ չի կարելի արդարացնել ռազմական նկատառումներով»[12]:

«Տեղահանության իսկական նպատակը,— նշում է Թուրքիայում ԱՄՆ-ի նախկին դեսպան Հենրի Մորգենթաուն,— ոչ թե ռազմական անհրաժեշտությունն էր, այլ ցանկությունը ոչնչացնելու հայ ազգաբնակչությունը, որպեսզի հնարավոր լինի հայերի հողերը տալ մուսուլմանական ներգաղթյալներին»[13]:

թաուն,— թալանն ու ոչնչացումն էին. այն փաստորեն իրենից ներկայացնում էր բնաջնջման նոր եղանակ: Երբ օսմանյան իշխանությունները արձակում էին տեղահանության հրամանը, նրանք բացահայտորեն կայացնում էին ամբողջ մի ազգի մահավճիռը: Նրանք այդ բանը լավ էին հասկանում և մեզ հետ զրույցների ժամանակ չէին փորձում թաքցնել այդ փաստը»[13] (ընդգծումն իմն է— Ռ.Ս.):

Ֆրանսիացի հայտնի պատմաբան Ռընե Պինոնի կարծիքով, հայերի՝ կանանց, երեխաների ու ծերերի տեղահանությունը խարդախորեն քողարկված մահվան դատավճիռ էր: «Կոտորածը տեղում,— գտնում է հեղինակը,— ավելի մարդկային կլիներ: Համենայն դեպս նա մարդկանց կազատեր սարսափելի տառապանքներից»[14]:

«Տեղահանության նպատակը,— գրում էին Հալեպի գերմանական ռեալական դպրոցի դասատուները գերմանական ժողովրդի պաշտոնական ներկայացուցիչներին ուղղված իրենց դիմումի մեջ,— ողջ հայ ժողովրդի գլխովին ոչնչացումն է: Այդ մտադրությունը պարզորոշ կերպով երևում է այն փաստից, որ կառավարությունը սիստեմատիկ կերպով խոչընդոտներ է հարուցում երկրում գտնվող այն միսիոներներին, գթության քույրերին և այլ եվրոպացիներին, որոնք փորձում են միջամտել՝ հայերին օգնություն ցույց տալու համար: Ծվեյցարացի մի ինժեներ զինվորական ատյանին հանձնվեց տեղահանված հայերի քարավանին հաց բաժանելու համար»[15]:

Թալեաթ փաշայի սպանության կապակցությամբ 1921-ի հունիսի 2—3-ին Բեռլինում կայացած դատավարության ժամանակ վերը հիշատակված դոկտոր Լեպսիուսը հայտարարեց, որ Թալեաթի կողմից ստորագրված հրամանում կային հետևյալ խոսքերը. «Տեղահանությունը նշանակում է ոչնչացում», և որ ամեն ինչ տեղի էր ունենում համաձայն այդ հրամանի: Արևմտյան Հայաստանից և Արևելյան Անատոլիայից տեղահան արված հայ ազգաբնակչության միայն 10 տոկոսը հասավ աքսորավայր, մնացած 90 տոկոսը սպանվեցին ճանապարհին կամ մահացան քաղցից ու հյուծվածությունից՝ բացի այն դեռատի կանանցից ու

օրիորդներից, որոնց վաճառել էին ոստիկաններին, կամ որոնք առևանգվել էին քրդերի կողմից:

Ինչ վերաբերում է Արևմտյան Անատոլիայից, Կիլիկիայից ու Հյուսիսային Միջագետքից դեպի անապատ քշված հայերին, ապա նրանք հավաքվում էին համակենտրոնացման ճամբարներում և ոչնչացվում սիստեմատիկ քաղցի և պարբերական ջարդերի եղանակով: Երբ որ ճամբարները լցվում էին աքսորյալների նոր խմբերով և մարդկանց համար այլևս տեղ չէր մնում, նրանց քշում էին խոշոր խմբերով անապատի խորքը և այնտեղ սպանում: «Թուրքերը հայտարարում էին,— վկայում է Լեպսիուսը,— որ համակենտրոնացման ճամբարների գաղափարին նրանք եկան անգլիացիների օրինակով, որոնք նույն ձևով էին վարվում բուրերի հետ Հարավային Աֆրիկայում»[16]:

Ինչպես երևում է բերված փաստերից, հայերի զանգվածային բռնագաղթը դեպի Սիրիայի անապատները ոչնչացման մի նոր ձև էր, առավել դաժան ու անխիղճ, քան արյունոտ սուլթան Աբդուլ Համիդի ժամանակներում:

Վերը հիշատակված օտարերկրյա հեղինակներից շատերը ընդգծում են երիտթուրքերի քաղաքականության այս «առավելությունը». ոչնչացման լավ մշակված մեթոդի առկայությունը:

«Հայերի հետապնդման իրենց քաղաքականության մեջ երիտասարդ թուրքերի և հին թուրքերի միջև միակ տարբերությունն այն է,— նշում է նորվեգացի մեծ գիտնական ու հումանիստ Ֆրիտյոֆ Նանսենը,— որ առաջինները հետևում էին լավ մտածված պլանին և այդ պատճառով չափազանց վտանգավոր էին: Երիտթուրքական կուսակցության շատ պարագլուխներ իրենց կրթությունը ստացել էին Պրուսիայում, որտեղ ուսումնասիրել էին ոչնչացման մեթոդը»[17]:

«Երբ ուշադիր կարդում ես հայկական ջարդերին վերաբերող փաստաթղթերը,— գրում է «Արևելքի բարբարոսների դեմ» գրքում ֆրանսիացի հայտնի գիտնական Ժակ դը Մորգանը,— զարմանում ես այն շրջահայեցությանն ու հմտությանը, որոնցով երիտթուրքական կառավարությունը կազմակերպել էր այդ սարսափները: Ամեն ինչ նախա-

տեսված է. զոհերի զինաթափում, դիմադրության ընդունակ երիտասարդ տարրի հեռացում, զանգվածային տեղահանություն ու ճանապարհի տառապանքներ, տղամարդկանց հետ աքսորի ճանապարհին հաշվեհարդար տեսնելը, կանանց ու օրիորդների ընտրությունը իսլամի կրոնին դարձնելու նպատակով և, վերջապես, փրկվածների ոչնչացումը քրդերի և ուղեկցող ոստիկանների կողմից Քեմախ Բողազում: Նախազգուշական ձեռնարկներով գոմեշներով լծված սայլերը սպասում էին այդ անիծյալ վայրում՝ դիակները տեղափոխելու և Եփրատ գետը նետելու համար: Այս սարսափները հիշողության մեջ վերակենդանում են Նամուտում, Լիոնում և Ֆրանսիայի այլ քաղաքներում զանգվածային հաշվեհարդարները մեր պատմության ամենամոայլ ժամանակներում»[18]:

Այդ մասին 1916-ին գրել է նաև վերը հիշատակված Ֆրանսիացի պատմաբան Ռընե Պինոնը.

«Մի բան, որ առավել զարմացնում է ականատեսների պատմածներում, դա կանոնավոր ու սիստեմատիկ ջարդի կազմակերպումն է: Սա այն դեպքը չէ, երբ տարբեր ազգության պատկանող տեղի բնակիչները հարձակվում են իրար վրա, վայրենի անարխիայի մոլուցքի պահին: Գործողությունը սկսվում է կառավարական դեկրետից, որը փակցվում է գյուղերում: Հրահանգները գալիս են Կոստանդնուպոլսից՝ բարձրաստիճան պաշտոնյաներին, իսկ նրանց միջոցով՝ կատարողներին: Հեռախոսը խաղում է հսկայական դեր այդ մոայլ դրամայում... Ամեն ինչ անցնում է կարգին, չեն սպանում քաղաքներում համաճարակից խուսափելու նպատակով...

Այստեղ սխալվել անհնարին է. հետապնդվող նպատակն է հայ ժողովրդի գլխովին ոչնչացումը սպանության կամ բռնի կերպով իսլամի կրոն պարտադրելու ճանապարհով: Նրանցից (հայերից— Ռ. Ս.) հետո հալածանքների կենթարկվեն քրիստոնյա այլ ժողովուրդներ... Նրանց հերթը կհասնի, հենց որ պահը բարենպաստ թվա թուրքական կառավարության համար»[19]:

Մեթոդիկ կերպով կազմակերպելով արևմտահայերի ջարդերը, երիտթուրքական դահիճները նույն մեթոդիկ

եղանակով փորձում էին քողարկել իրենց հանցագործությունների հետքերը: Հալեպի նահանգապետին ուղղված ծածկագիր հեռագրում Թալեաթ փաշան հրահանգում էր. «Առժամանակ ձևացնել, որ [հայերի] հետ քաղաքավարի եք վարվում, և սովորական միջոցառումները անցկացրեք հարմար վայրերում»[20]: Մի այլ հեռագրում հրամայում էր ձերբակալել և ոչնչացնել, որպես վտանգավոր անձանց, հայկական թերթերի թղթակիցներին, որոնք ձեռք էին բերել «որոշ հանցավոր ակցիաներ պատկերող»[21] տեղեկություններ ու լուսանկարներ, մեկ այլ հեռագրում նա խորհուրդ է տալիս ի տես չցուցադրել սպանված հայերի դիակները, որպեսզի դաշնակից բանակի սպաները չլուսանկարեն դրանք[22] և այլն:

Դեռ ավելին. երիտթուրքական ղեկավարները չքաշվեցին հայկական ջարդերի պատասխանատվությունը բարդել զոհերի վրա: 1916-ին Ստամբուլում լույս տեսավ ֆրանսերեն, ապա նաև թուրքերեն մինչև վերջը շինծու մի գիրք, որը վերնագրված էր «Ճշմարտություն հայկական հեղափոխական շարժման և կառավարության կողմից ձեռնարկված միջոցառումների մասին»[23], ուր զետեղված էին սարքված փաստաթղթեր, որոնք պիտի վկայեին, «հայկական համընդհանուր ապստամբության» վտանգի առկայությունը և «մերկացուցիչ» այլ փաստաթղթեր: Սակայն երիտթուրքական կառավարությանը չհաջողվեց հասնել իր նպատակին՝ շփոթության մեջ գցել համաշխարհային հասարակական կարծիքը: Ջարդերի անմիջական ականատեսների և ժամանակակիցների վկայությունների հիման վրա Արևմուտքում տպագրված փաստաթղթերի ժողովածուները մինչև վերջը մերկացնում էին չարամիտ այն կեղծիքը, որն իրենից ներկայացնում էր վերոհիշյալ հրատարակությունը: Առավել արժեքավոր էին վերը հիշատակված դոկտոր Լեպսիուսի «Գաղտնի տեղեկագիր հայ ժողովրդի վիճակի մասին Թուրքիայում», անգլիացի պատմաբան Առնոլդ Թոյնբիի «Հայկական ջարդերը», անգլիական պառլամենտի անդամ Ջեյմս Բրայսի հետ միասին վերջինիս կազմած փաստաթղթերի ստվարածավալ ժողովածուն և այլն:

Ահա ինչ էր գրում Լեպսիուսի գրքի մասին հայտնի ռուս իրավաբան-միջազգայնագետ Անդրեյ Մանդելշտամը.

«Լեպսիուսի ժողովածուն, որտեղ հրապարակված են գերմանական հյուպատոսների բոլոր զեկուցագրերը, վըճռականորեն հերքում է երիտթուրքերի կողմից շրջանառության մեջ դրված ամեն կարգի լեգենդներն ու կեղծիքները, որոնց նպատակն է ժխտել կամ նվազեցնել իրենց պատասխանատվությունը:

Իմիջիայլոց, այս ժողովածուն ջախջախեց հայկական ապստամբության վերաբերյալ թուրքական պաշտոնական լեգենդը: Մինչև տեղահանության սկիզբը եղել է ընդամենը երեք աննշան ընդհարում ոստիկանների և այսպես կոչված խռովարարների միջև (Մուշում, Զեյթունում և Վանում): Ջարդը սկսվելուց հետո, առանձին վայրերում՝ Վանում, Շապին-Կարահիսարում, Ուրֆայում և Սուեդիայում հայերը միայն զինված դիմադրություն են ցույց տվել մարդասպաններին...

Գերմանական հյուպատոսների զեկուցագրերը,— շարունակում է հեղինակը,— միաժամանակ հերքում են թուրքերի կողմից հայերին վերկայացված մի այլ մեղադրանք, այն է, որ իբր վերջիններս նախապատրաստվում էին համընդհանուր ապստամբության կայսրության մեջ»[24]:

«... Բոլոր այս հանցագործությունները հայերի դեմ կատարվել են առանց նվազագույն իսկ մարտահրավերի նրանց կողմից... Օսմանյան կառավարությունը ի վիճակի չէ թաքցնելու իր հանցագործությունը նախազգուշական միջոցառումների ետևում...»[25],— գրում է Թոյնբին տակավին 1915-ին:

Այդ նույն առիթով հայկական ջարդերի ականատես, գերմանական գրող Արմին Վեգները ԱՄՆ-ի պրեզիդենտ Վուդրո Վիլսոնին ուղղած բաց նամակում գրում է հետևյալը.

«Ամեն ոք, ով ծանոթ է Անատոլիայում տեղի ունեցող պատերազմական դեպքերին, ով աչալուրջ կերպով հետևել է այդ ազգի ճակատագրին, գիտի, որ հայ ժողովրդի դեմ ուղղված խարդախ մեղադրանքները ոչ այլ ինչ են, եթե ոչ նողկալի զրպարտություն՝ հորինված միջոցների մեջ խտրու-

թյուն չդնող բռնակալների կողմից, որոնք նպատակ են հետապնդում իրենց գերծ պահել անհոգի ու դաժան գործողությունների հետևանքներից և քողարկել իրենց սեփական անկարողությունը՝ անկեղծության ու մարդկայնության ոգու ձգտման մեջ»[26]:

Եվրոպայի ու Ռուսաստանի առաջադեմ հասարակայնությունը դատապարտել է նաև կայզերական Գերմանիային նրա թողտվության, երիտթուրքական կառավարության հանցագործ արարքները խրախուսելու համար: Հայտնի է, որ գերմանական դիվանագիտական ու հյուպատոսական ներկայացուցիչները ժամանակին տեղեկացրել են իրենց կառավարությանը երիտթուրքերի մտադրությունների մասին: Այսպես, Էրզրումում գերմանական հյուպատոս Շոյբներ-Ռիխտերը 1915-ի հուլիսի 28-ի իր զեկուցագրում նշել է, որ տեղահանության կողմնակիցները բացեիբաց խոստովանում են, որ հայերի դեմ ձեռնարկված իրենց գործողությունների վերջնական նպատակն է այդ ժողովրդի ոչնչացումը Թուրքիայում: «Պատերազմից հետո Թուրքիայում այլևս հայեր չեն լինի»,— բառացիորեն ասել էր նրան թուրք հեղինակավոր գործիչներից մեկը[27]: Իսկ Ստամբուլում գերմանական դեսպան Վանգենհայմը 1915-ի հուլիսի 7-ին գրում էր կանցլեր Բետման-Հոլվեգին, որ «... կառավարությունն իսկապես նպատակ է հետապնդում ոչնչացնել հայ ազգը թուրքական կայսրությունում»[28]: Այդ պաշտոնում նրան փոխարինած Վոլֆ-Մետերնիխը 1916-ի հուլիսի 10-ի իր հեռագրում հաղորդում էր, որ թուրքական կառավարությունը չի հրաժարվել կյանքում իրականացնելու իր ծրագիրը՝ հայկական հարցը լուծել ամբողջ հայ ազգի բնաջնջման ճանապարհով: «Այժմ նա մտադիր է բաժուն-բաժան անել և ցրել հայերի վերջին խմբերին, որոնք փրկվել են առաջին տեղահանություններից հետո»[29]:

«Գերմանական ժողովրդի պաշտոնական ներկայացուցիչներին» իր դիմումում դոկտոր Մարտին Նիպագեն զուր էր կոչ անում իր կառավարությանը՝ միջամտել կես միլիոն կանանց ու երեխաների մահը կանխելու համար:

«Կարելի է խորապես սխալվել, ենթադրելով, որ թուրքական կառավարությունը, առանց գերմանական կառավա-

րության կողմից գործադրված ուժեղ ճնշման, կամավոր կերպով կհրաժարվի այդ կանանց ու երեխաներին ոչնչացնելուց...»[30]:

Սակայն կայզերի կառավարությունը հեռու էր հայերի օգտին միջամտելու մտադրությունից: Նա լոկ հոգ էր տանում, որ երկրի հասարակայնությունը ոչինչ չիմանա «հայկական սարսափների» մասին:

1919-ի փետրվարին Բեռլինում արտասանած իր հրապարակային ճառում ականավոր գերմանացի գիտնական արևելագետ Յոզեֆ Մարկվարտը մերկացրեց Գերմանիայի կառավարող շրջանների խարդախ դերը, ցույց տվեց, որ կայզերի կառավարությունը պարբերաբար խլացնում էր այն ամբողջ ինֆորմացիան, որը նպատակ ուներ վերհանելու այն, ինչ տեղի էր ունենում Հայաստանում:

«Մինչև 1919-ի հոկտեմբերը,— գրում է Մարկվարտը,— կառավարությունը խստիվ արգելել էր հրապարակել տեղեկություններ, որոնք բարենպաստ կլինեին հայերի համար, լինի դա բրոշյուրի թե հոդվածի ձևով, արգելել էր այն ամենը, ինչը կարող էր հասարակայնության աչքերը բաց անել իրական դեպքերի հարցում: Հայերի նկատմամբ գազանությունների վերաբերյալ մերթընդմերթ ներթափանցող տեղեկությունները ներկայացվում էին որպես մեր թշնամիների չարամիտ հորինվածքներ»[31]:

Մարկվարտը հրապարակեց գերմանական մամուլին զինվորական գրաքննության կողմից կարգադրված վարքագիծը[32], ինչպես նաև վեր հանեց Ռայխստագի անփութությունը[33]:

Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից հետո, երբ երիտթուրքական պարագլուխները, Թուրքիայի կրած խայտառակ պարտությունից հետո, ապաստան գտան Գերմանիայում, առաջադեմ հասարակայնության ներկայացուցիչները հանդես եկան հայկական ջարդերի գլխավոր կազմակերպիչներին դատի տալու պահանջով: Առաջիններից մեկը իր ձայնը բարձրացրեց պրոֆեսոր Յոզեֆ Մարկվարտը՝ գերմանական ժողովրդին կոչ անելով կառավարությունից պահանջել «հանձնել Էնվերին ու Թալեաթին՝

զանգվածային սպանությունների մեղավորներին, այն հաշվով, որ նրանց դատի միջազգային դատարանը...»[34]:

Օտարերկրյա հեղինակները իրենց գործերում նկարագրել են հայ ժողովրդին բաժին ընկած աննախադեպ տառապանքները: Դեսպան Մորգենթաուն, օրինակ, հետևյալ համեմատություններն է անում. ալբիգոյցիների ջարդը Ֆրանսիայում XIII դարի սկզբին արժեցավ 60 հազար մարդու կյանք, Բարդուղիմեոսյան գիշերվա ընթացքում սպանվել է մոտավորապես 20 հազար մարդ, Սիցիլիական ժամերգության ժամանակ զոհվել է 8 հազար մարդ, Իսպանիայում ինկվիզիցիայի տարիներին՝ Տորկվեմադայի 18-ամյա տիրապետության ընթացքում մահապատժի են ենթարկվել 8 հազարից ավելի հերետիկոսներ: Պատմության մեջ միակ դեպքը, որը ինչ-որ չափով կարող է հիշեցնել հայերի տեղահանությունը, դա հրեաների արտաքսումն է Իսպանիայից Ֆերդինանդի ու Իզաբելլայի գահակալության տարիներին, XV դարի վերջին, երբ 160 հազար հրեաներ քշվեցին իրենց օջախներից և ցրվեցին Հյուսիսային Աֆրիկայով ու Եվրոպայով մեկ: «Սակայն բոլոր այս հալածանքները,— գրում է հեղինակը,— ոչինչ էին հայերի ճակատագրի համեմատությամբ, որոնք զոհաբերեցին ամբողջ մեկ միլիոն մարդկային կյանք»[35]:

Անցել է 50 տարի մեր դարի առաջին ցեղասպանությունից: Այդ տարիներին մի շարք երկրների հասարակայնության ներկայացուցիչներ, մասնավորապես գիտական ու ստեղծագործական մտավորականությունը, դատապարտել է Թուրքիայի նախկին կառավարողների հայասպան քաղաքականությունը: Շատերը, բայց ոչ թուրք մտավորականության ներկայացուցիչները: Բավական է նշել, որ դեմոկրատական կուսակցության կառավարման տասնամյակում լույս է տեսել զգալի գրականություն, ուր անսանձ կերպով գովաբանվում են անցյալի պետական ու ռազմական այն գործիչները, որոնք աչքի են ընկել իրենց ոճրամոլ գործունեությամբ: Այսպես, 1955-ին Ստամբուլում լույս տեսավ հակախորհրդային ոգով ներծծված Ջեմալ Քութայի «Էնվեր փաշան Լենինի դեմ» գրքույկը, որի հեղինակը անվերապահորեն արդարացնում էր իր հերոսին Միջին Ասիա-

յում 1921—1922 թթ. նրա ծավալած հակախորհրդային արարքների համար[36]: 1956-ին լույս տեսավ նշված հեղինակի մի այլ գործը՝ «Ինչպես Կարաբեքիրը ոչնչացրեց Հայաստանը», որի վերնագիրը արդեն իսկ խոսում է իր մասին: 1958-ին Ստամբուլում երկրորդ հրատարակությամբ լույս տեսան «Թալեաթի հուշերը»[38], 1962-ին նշվեց Էնվեր փաշայի «հերոսական մահվան» 40-ամյակը[39] և այլն:

Ահա թե ինչու մեր օրերում էլ անհրաժեշտ է դատապարտել ցեղասպանության քաղաքականությունը: «Երեկ զոհ դարձան «միայն» հայերը, այսօր «միայն» հրեաները, ինչպես նաև լեհերն ու եվրոպական այլ ժողովուրդները, իսկ վա՞ղը»,— իրավացիորեն հարցնում է Ջոզեֆ Գուտմանը «Գենոցիդի սկիզբը»[40] խորագրով բրոշյուրում:

Որպեսզի չլինի այդպիսի վաղվան օր, մենք այսօր դատապարտում ենք ցեղասպանության քաղաքականության ամեն մի դրսևորում: Այս խնդրի այժմեականությունը լավ է վերհանել «Յումանիտե» թերթը, 1965-ի ապրիլի 23-ի համարում զետեղելով հատուկ հոդված, նվիրված հայկական ջարդերի հիսնամյակին: Հիշեցնելով այն մասին, որ գենոցիդի առաջին հանցագործությունը կատարվել է հայ ժողովրդի դեմ Թուրքիայում 1914—1918 թթ., թերթը գրում է. «Եթե խաղաղության շարժումը պայքարում է այն բանի համար, որպեսզի վաղեմության ժամկետ չլինի մարդկության դեմ կատարված հանցագործությունների համար, ապա դա արվում է այն հաշվով, որպեսզի ապագայում սարսափի այդ ակտերը չկարողանան անգամ ծնվել որոշ խելագարների ուղեղներում:

Այդ գործը արդար է և այն պետք է հաղթանակի:

Ահա թե ինչու ենք մենք հիշում հայերի ջարդի մասին»[41]:

1965

ՑՈՂԵՖ ՄԱՐԿՎԱՐՏԸ ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԻ ԳԵՆՈՑԻԴԻ ՄԱՍԻՆ

Մեծ եղեռնը լայն արձագանք գտավ երկրագնդի մարդասեր հասարակայնության մեջ: Տարբեր ազգության ու դավանանքի, տարբեր զբաղմունքի ու քաղաքական հայացքների տեր մարդիկ իրենց բողոքի ձայնը բարձրացրին երիտթուրքական հանցավոր ղեկավարների

ձեռնարկած հայասպան գործողությունների դեմ, ամբողջ արևմտահայության իսպառ բնաջնջման անմարդկային հրեշավոր ծրագրի իրականացման դեմ:

Հայ ազգի տխուր ճակատագիրը առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, նրա ապրած մեծագույն ողբերգությունը առանձնապես խոր ցավ պատճառեց առաջավոր այն մտավորականներին, որոնք մոտիկից ծանոթ էին հայոց բազմադարյան պատմությանը, փառավոր մշակույթին, գրականության ու արվեստի գոհարներին: Նրանք չէին կարող անտարբեր դիտել մեր ժողովրդի և նրա նյութական ու հոգևոր արժեքների բարբարոսական ոչնչացումը թուրքական վայրագ կառավարողների կողմից: Չնայած պատերազմական իրավիճակի առկայությանը, իմպերիալիստական նպատակներ հետապնդող բոլոր մեծ տերությունների փոխադարձ ոչնչացման մոլուցքին, Եվրոպայի ու Ռուսաստանի մի շարք հայագետներ ու մշակույթի գործիչներ արդար բողոքի իրենց խոսքն ասացին ի պաշտպանություն անլուր տառապանքների ենթակա հայ ժողովրդի: Այդ շրջանում առանձին հոդվածներով ու գրքերով հանդես եկան ֆրանսիացի անվանի հայագետ-արևելագետներ Անտուան Մեյեն[1], Ժակ դը Մորգանը[2], Ֆրեդերիկ Մակլերը[3], Ռընե Պինոնը, Վիկտոր Բերարը, անգլիացի հայտնի պատմաբան-միջազգայնագետ Առնոլդ Թոյնբիհ[4], ռուս ականավոր գործիչներ՝ փայլուն բանաստեղծ ու գիտնական Վալերի Բրյուսովը[6], բանաստեղծ ու գրականագետ Յուրի Վեսելովսկին[7], ճանաչված իրավաբան-միջազգայնագետ Անդրեյ Մանդելշտամը[8] և շատ ուրիշներ:

Երիտթուրքական կառավարության կողմից անցկացվող արևմտահայերի գենոցիդի քաղաքականության դեմ դատապարտող ելույթներ ունեցան նաև գերմանական ժողովրդի առաջավոր ներկայացուցիչները, մի պետության, որն իր հրաբիրիչ ու թուրքապաշտպան դիրքորոշումով մեծապես նպաստեց բովանդակ արևմտահայության ոչնչացման զարհուրելի ծրագրի իրականացմանը: Դրանցից հատկապես արժանի են հիշատակության հայտնի հումանիստ դոկտոր Յոհաննես Լեպսիուսը[9], առաջադեմ գրող ու հրապարակախոս Արմին Վեգները[10], դոկտոր Մարտին Նիպագեն[11] և,

առանձնապես, ականավոր հայագետ, արևելագետ, մեծ հումանիստ Յոզեֆ Մարկվարտը:

Պրոֆեսոր Մարկվարտն այն ազնվագույն մտավորականներից էր, որոնք երբեք չեն դադարեցնում իրենց անհաշտ ու հետևողական պայքարը ամեն մի անարդարության ու բռնության դեմ: Նույնիսկ պատերազմի տարիներին, երբ Թուրքիայի մերձավորագույն դաշնակցի երկրում՝ կայզերական Գերմանիայում, արգելված էր ամեն մի խոսք հօգուտ հայերի, Մարկվարտը բազմիցս հանդես է եկել նրանց պաշտպանությամբ, դատապարտելով ինչպես երիտթուրքական, այնպես էլ գերմանական կառավարությանը հայկական կոտորածներում:

Առաջին համաշխարհային պատերազմում կայզերական Գերմանիայի ու օսմանյան Թուրքիայի կրած խայտառակ պարտությունից հետո, 1919-ի փետրվարին Մարկվարտը Բեռլինում հրապարակ հանեց իր «Հայ ժողովրդի ծագումն ու վերականգնումը» աշխատությունը:

Հիշյալ գրքում Մարկվարտը մերկացնում է սուլթանական ու երիտթուրքական հայահալած քաղաքականությունը, բացահայտում արևմտահայերի գենոցիդի բուն դրդապատճառները, վերհանում թուրքական հայաջինջ քաղաքականության ավանդական բնույթը:

«Ոչինչ այնքան սխալ չէ, այնքան անհարիր ճշմարտությանը,— գրում է Մարկվարտը,— որքան հաճախ կրկնվող այն պնդումը, որի համաձայն, հայերը թուրքական գերիշխանության ներքո մինչև 1878-ը իրենց շատ լավ էին զգում և թուրքերի հետ հաշտ էին ապրում: Բավական է մի հայացք ձգել հայ վարդապետ Առաքել Դավրիժեցու պատմության վրա, գաղափար կազմելու համար, թե ինչ ձևով էին վարվում օսմանցիները հայերի և ընդհանրապես քրիստոնյաների հետ տակավին XVII դարում»[12]:

Վերլուծելով հպատակ քրիստոնյա ժողովուրդների և, առաջին հերթին, հայերի իրավիճակը օսմանյան բիրտ կարգերի օրոք իրենց հայրենիքում՝ Արևմտյան Հայաստանում, Մարկվարտը գալիս է այն եզրակացության, որ միայն գերմարդկային ճիգերի շնորհիվ է, որ վերջիններիս հաջողվել է պահպանել իրենց գոյությունը Թուրքիայում:

«Գրեթե որպես հրաշք պետք է դիտել այն իրողությունը,— գրում է Մարկվարտը,— որ չնայած թուրք պաշտոնյաների կամայականությանը, կյանքի, պատվի ու ունեցվածքի ապահովության կատարյալ բացակայությանը, XIX դարում դեռ կարելի է հանդիպել հայերի, որոնք կենդանի են մնացել»[13]:

Առավել ծանր փորձությունների ենթարկվեցին արևմտահայերը արյունարբու սուլթան Աբդուլ Համիդի օրոք, երբ առաջին անգամ թուրքական կառավարող շրջանները մշակեցին արևմտահայությանը գլխովին ոչնչացնելու ծրագիրը՝ պարբերաբար կազմակերպվող զանգվածային ջարդերի միջոցով: Անդրադառնալով այդ շրջանում հայերի նկատմամբ կիրառվող սուլթանական քաղաքականությանը, Սան-Ստեֆանոյի պայմանագրին ու հայկական հարցի քննարկմանը Բեռլինի վեհաժողովում և դրանց հաջորդող իրադարձություններին, Մարկվարտը միևչև վերջը մերկացնում է քրդական անկանոն հեծելազորի՝ «համիդիեների» կազմակերպման դերը Արևմտյան Հայաստանում նախատեսվող բարեռորոգումները խափանելու, հայ ժողովրդին բնաջնջելու, նրա ազգային ազատագրական պայքարը կասեցնելու ու արյան մեջ խեղդելու գործում:

«Խորամանկ Աբդուլ-Լայինը (Աբդուլ Համիդը),— նշում է անվանի գիտնականը,— հորինեց մի շատ արդյունավետ միջոց՝ կազմակերպելով քրդերին համիդյան հեծելազորում: Այդ եղանակով պաշտոնապես հիմք դրվեց քրիստոնյաների առավել դաժան ճնշմանը»[14]: Այս առիթով Մարկվարտը սուր քննադատության է ենթարկում եվրոպական բոլոր մեծ տերությունների թողտվությունն ու աճապոր փարիսեցիությունը, նրանց խարդախ դիվանագիտական խաղերը, որոնք քիչ վնաս չհասցրին բազմատանջ արևմտահայությանը: Հիշատակելով այն մասին, թե ինչպիսի զանգվածային ջարդերով Աբդուլ Համիդը պատասխանեց բարեռորոգումների իրականացման մեծ տերությունների փորձերին, նա գրում է.

«Այո, մեզ հարկ եղավ տեսնելու, ամոթն ու զայրույթը մեր սրտերում, թե ինչպես քրիստոնյա ողջ Եվրո-

պայում և ոչ մի ձեռք չբարձրացավ՝ պատժելու հանար այդ հանցագործությունները, որոնց սրձագանքը մինչև երկինք էր հասնում»[15]:

Միաժամանակ Մարկվարտը անողոքաբար մերկացնում է իր սեփական՝ գերմանական կառավարության գրաված դիրքը 1894—1896 թթ. հայկական կոտորածների ժամանակ: «Գերմանական կառավարությունն իր վրա անջնջելի ամոթի մի հետք կթողնի այն բանի համար, որ նա այդ պահին արգելեց հանգանակություն անցկացնելու սպանդի զոհերի օգտին... Այդ իրադարձություններից անմիջապես հետո,— շարունակում է Մարկվարտը,— Վիլհելմ Կալիգուլան իր նկարն ուղարկեց իր բարեկամ կարմիր սուլթանին»[16]:

Ավելի հանգամանորեն Մարկվարտը վեր է լուծում երիտթուրքական «Միության և առաջադիմության» կուսակցության գլխավորած կառավարության քաղաքականությունը հայերի նկատմամբ:

1908-ի հուլիսին տեղի ունեցավ այսպես կոչված երիտթուրքական հեղափոխությունը, որը շատ չանցած, 1909-ի ապրիլին գաղընկեց արեց սուլթան Համիդին: Բազում ճառեր արտասանվեցին այդ ամիսներին ազատության, հավասարության ու եղբայրության մասին, խոսում էին անգամ ֆրանսիական մեծ հեղափոխության վեհ գաղափարները թուրքական հողում արմատավորելու և նույնիսկ զարգացնելու, ուրիշ շատ բարի մտադրությունների մասին: Երթիհադական ղեկավարները փարիսեցիորեն ողջագուրվում էին այլազգիների և, հատկապես, քրիստոնյա ժողովուրդների ներկայացուցիչների հետ, նոր դարաշրջանի գալուստը ազդարարում, սակայն աշխարհում քիչ կգտնվեն հեղափոխություններ, որոնք այնքա՜ն կարճ ժամանակում մերկացնեին իրենց իսկական իմաստն ու էությունը, որքան երիտթուրքական հեղափոխությունը:

«Նույնիսկ «Սահմանադրության» հռչակումից հետո,— նշում է Մարկվարտը,— օսմանյան քաղաքականության նշանաբանը մնում էր նույնը՝ «երբ հայեր այլևս չեն լինի, չի լինի նաև հայկական հարց»: Առանձին սարսափելի կոտորածները ցույց տվեցին, որ երիտթուրքերը, որոնք այն-

քան տարօրինակ ձևով Եվրոպայի հասարակական կարծիքի առջև իրենց համար ազատամիտ գործիչների համբավ էին ստեղծել, իրենց կամայական դաժանությամբ ոչնչով չէին զիջում մեծ դահիճ Աբդուլ Համիդին»[17]:

Բավական է նշել, որ նույն 1908-ի սեպտեմբերին արդեն իթթիհատական կոմիտեն վերանայեց իր օգոստոսյան ծրագիրը՝ նախկին լայնախոստում նախագծերը փոխարինելով խիստ չափավոր ու անհավանական միջոցառումներով: Գյուղացիներին հող տալու պահանջն, օրինակ, վերածվեց կալվածատերերի իրավունքները պահպանելով հանդերձ, նրանց հողակտորներ ձեռք բերելու հնարավորություն ստեղծելու հին խոստումով:

Ինչ վերաբերում է կնճռոտ ազգային հարցին, այստեղ ևս իթթիհատականները շատ կարճ ժամանակում դրսևորեցին իրենց. հրաժարվելով օսմանցիության հեղհեղուկ դրույթից, նրանք այն փոխարինեցին պանթյուրքիզմի վայրենի քարոզով, արձակելով «Թուրքիան թուրքերի համար» մարդատյաց ու մոլի ազգայնական կոչը: Հետաքրքրական է այն բացատրությունը, որ տալիս է երիտթուրքերի ներքաղաքական այս նոր դիրքորոշմանը անցնելուն իթթիհատական կուսակցության «տեսաբաններից» մեկը՝ դոկտոր Բեհաեդդին Շաքիրը՝ կոմիտեի գաղտնի նիստում արտասանած իր ճառում. «Մենք, հեղափոխականներս, հանուն թուրք ազգի օսմանյան պետությունը ազգային սկզբունքների վրա հիմնելով, «Միության և առաջադիմության» իշխանությունը հաստատեցինք... Մենք «Իթթիհատ վե թերաքքիի» իշխանությանը «Նոր Թուրքիայի կառավարություն» անվանումը տվինք և օսմանցի անվան արժեքը զրոյի իջեցրինք: Արդարև, ի՞նչ իմաստ կարող էր ունենալ օսմանցի բառը... ի՞նչ կարող է ավելանալ Օսմանի անվան հետ կապված պետության մշակույթում: Դերվիշների նման, զանազան ազգությունների թափառականները ապավինելով Օսմանի անվանը, տարօրինակ մի խառնուրդ են կազմել: Տեսականորեն ու գիտականորեն սրան չի կարելի պետություն անվանել, այն նմանվում է Օսմանից իր զավակներին ժառանգած ընդարձակ մի կալվածքի: Զանազան տարրերից բաղկացած օսմանյան խառնուրդը չի կարելի

ընդունել որպես ազգային մարմին, այն հիշեցնում է մի ագարակի մեջ հավաքված ընտանի կենդանիների: Հույն, հայ, բուլղար, պոմակ, սերբ, ալբանացի, քուրդ, չերքեզ, արաբ, վրացի, լազ, այս զանազան տարրերը օսմանցի ասվող տակ իբր թե մի զանգված են կազմել: Անհրաժեշտ է փոխել այս համոզումը: Ինչպես որ մի ագարակում սագը, բադը, հավը, ոչխարը, այծը, կովը, եզը, գոմեշը, ձին մնացել են նույնը, առանց տեսակը փոխելու, նույն ձևով էլ մեր հայրենիքում մնացել են հույնը, հայը, բուլղարը, պոմակը, սերբը, ալբանացին, չերքեզը, վրացին, արաբը, քուրդը՝ պահպանելով իրենց ազգությունն ու լեզուն: Առիթը ներկայանալուն պես նրանք աշխատվել են՝ փշրելով թուրքին ու գրավելով նրա երկիրը: Անհավասիկ ռումինացիները, սերբերը, բուլղարները և ամենավերջինը՝ ալբանացիները... Եթե Մովսեսի նման մի թշվառական, Հիսուսի նման մի վտարված, Մահմեդի նման մի որբ այս աշխարհում հիմնել են առանձին մեծագույն կրոններ, ինչո՞ւ մեզ պես կամքի տեր մտավորական մարդիկ չընդհանրացնենք ու չտարածենք «Թուրանի» կրոնն ու գաղափարը»[18]:

Օսմանյան կայսրության այլազգի բոլոր ժողովուրդներին բռնի կերպով դավանափոխելու և ասիմիլյացիայի ենթարկելու իրենց ձգտումն իրականացնելիս երիտթուրքերը հայերին «առաջնակարգ» տեղ հատկացրին, որովհետև վերջիններս առավել դժվար տարրալուծվող ազգերից էին և հազիվ թե հոժարակամ ընդառաջ գնային թուրքացման ամենակուլ ծրագրին: Մի հանգամանք ևս. «թուրքերը նախանձով էին նայում իրենցից կուլտուրապես ու տնտեսապես ավելի ուժեղ այդ եռանդուն ժողովրդին: Նրանց զայրացնում էր հայերի կապը Պետրոգրադի ու Փարիզի հետ, ինչպես և այն, որ վերջիններս հրաժարվում էին խռովություններ հրահրել Կովկասում»[19],— նկատել է անգլիացի առաջադեմ պատմաբան Գոտլիբը:

Եվ ահա վերահաս պատերազմը հանդիսացավ այն պատեհ առիթը, որը երիտթուրքական հանցավոր ղեկավարները չհապաղեցին օգտագործել՝ արևմտահայերին հիմնովին բնաջնջելու իրենց ձգտումն իրականացնելու համար:

«Ոչ մի կասկած չկա,— գրում է Մարկվարտը,— որ օսմանյան կառավարությունը համաշխարհային պատերազմի մոտեցումը գնահատեց որպես առավել բարենպաստ մի պահ՝ երկար ժամանակ իր փայփայած նախագիծը կյանքում կիրառելու համար: Ջիհադը՝ ի պատիվ ալլահի կատարվող սպանությունն ու կողոպուտը, մեղմ ձևով կոչված այդ «սրբազան պատերազմը», որը Թուրքիան հայտարարեց գերմանական կառավարության հրահրմամբ կամ համենայն դեպս նրա հավանությամբ..., միայն այն հետևանքն ունեցավ, որ թուրքերին հնարավորություն ընձեռեց ավելի հեշտությամբ իրականացնելու իրենց ծրագիրը՝ Արևելքի բոլոր քրիստոնյաների և, հատկապես, հայերի գրեթե լրիվ ոչնչացումը»[20]:

Ազնիվ ու արդար մարդու անաչառությամբ երևելի գիտնականն անխնա կերպով վեր է հանում ու դատապարտում կայզերական Գերմանիայի կառավարող շրջանների բռնած դիրքը, կիսապաշտոնական մամուլի և գաղափարական ներգործման այլ մարմինների անմաքուր ու ամոթալի դերը հայկական կոտորածների լուսաբանման գործում:

«Արդարացնելու համար մահմեդականների (թուրքերի— Ռ. Ս.) կողմից ձեռնարկած սատանայական միջոցառումները հանդեպ մի ժողովրդի, որի միակ մեղքն այն էր, որ նա չէր ցանկանում հօգուտ իսլամի հրաժարվել իր ազգությունից ու իր նախնիների քրիստոնեական հավատքից,— գրում է Մարկվարտը,— գերմանական մամուլը անտեղյակ քաղքենուն հեղեղեց զրպարտիչ լուրերով, որոնք մասամբ գալիս էին թուրքական աղբյուրներից, մասամբ էլ այդ նույն մամուլի հորինած կեղծիքն էին: Հայերը,— շարունակում է Մարկվարտը,— ներկայացվում էին ամենամոապ գույներով, սոսկ որպես չարչիների ու ըմբոստ վաշխառուների մի խառնամբոխ, մինչդեռ «օսմանյան փառապանծ դաշնակիցները», ինչպես Բալկանյան պատերազմների ժամանակ, երկինք հանվեցին իրենց կարծեցյալ խիզախության համար»[21]:

Գիտնականը մերկացուցիչ փաստերով բացահայտում է գերմանական կառավարության իսկական դիրքը աճավոր եղեռնի տարիներին: Հայտնի է, որ Գերմանիայի դիվանա-

գիտական ներկայացուցիչները ժամանակին իրենց կառավարությանը տեղյակ էին պահել արևմտահայերի տեղահանման ու աքսորի իրական շարժառիթների մասին: Այսպես, Թուրքիայում գերմանական դեսպան Վանգենհայմը 1915-ի հուլիսի 7-ին հաղորդում էր հետևյալը գերմանական կանցլեր Բետման-Հոլվեգին. «... կառավարությունն իրականում նպատակ է հետապնդում բնաջինջ անել հայ ազգը թուրքական կայսրությունում»[22]: Ահա և Վանգենհայմին փոխարինած նոր դեսպանի՝ Վոլֆ-Մետերնիխի զեկույցը նույն կանցլեր Բետման-Հոլվեգին 1916-ի հուլիսի 10-ին:

«Հայերի հետապնդումը արևելյան նահանգներում թևակոխել է իր վերջին փուլը: Իրականացնելով իր ծրագիրը՝ հայկական հարցը վերացնել հայ ցեղի ոչնչացման ճանապարհով, թուրքական կառավարությունը չարձագանքեց ո՛չ մեր դիմումներին և ամերիկյան դեսպանության ու Վատիկանի պատվիրակի դիմումներին, ո՛չ էլ Անտանտի տերությունների սպառնալիքներին, և առավել նվազ չափով հաշվի նստեց Արևմտյան Եվրոպայի կարծիքի հետ: Այժմ նա մտադիր է անդամատել ու վերացնել հայերի վերջին խմբերին, որոնք կենդանի էին մնացել առաջին տեղահանությունից հետո...»[23]:

Մարկվարտը ցույց է տալիս, որ կայզերի կառավարությունը լավատեղյակ լինելով թուրքական դահիճների կողմից տարագիր արևմտահայերի նկատմամբ գործադրվող վայրագություններին, ջանք չէր խնայում դրանք խնամքով քողարկելու, երկրի հասարակական կարծիքը ճշմարտությունից հեռու պահելու համար:

«Մինչև 1918 թվականի հոկտեմբերը,— նշում է Մարկվարտը,— կառավարությունը խստիվ արգելել էր հայանպաստ ամեն մի տեղեկություն՝ լիներ դա առանձին հոդվածների ձևով մամուլում կամ բրոշյուրներում, թուրքական ներկայուրանքների ամեն մի ուղղում, որը կարող էր հասարակայնության աչքերը բացել և ցույց տալ, թե ինչ է կատարվում իրականում: Հայերի նկատմամբ կիրառվող գազանությունների վերաբերյալ երբեմն ներթափանցող լուրերը,— վերհիշում է Մարկվարտը,— ներկայացվում էին

որպես մեր թշնամիների չար դիտավորություններ»[24]։ «Քյոլնիշե Ցայտունգ» թերթը,— գրում է Մարկվարտը,— նույնիսկ լկտիություն ունեցավ պարզապես ժխտելու դոկտոր Մարտին Նիպագեի[25] գոյությունը, որը հանդես էր եկել «Գերմանական ժողովրդի ներկայացուցիչներին ուղղված դիմումով»։

Մարկվարտը բերում էր գրաքննության կողմից այդ առթիվ տրված հրահանգը, որը հրապարակվել էր 1917-ի սկզբին լույս տեսած գրաքննության հատուկ գրքում.

«Հայերի նկատմամբ կատարվող գազանությունների մասին,— գրված էր հիշյալ գրքում,— պետք է ասել հետևյալը. ներքին վարչությանը վերաբերող այդ հարցերը ո՛չ միայն չպետք է վտանգի ենթարկեն մեր բարեկամական հարաբերությունները Թուրքիայի հետ, այլև անհրաժեշտ է, որ դժվարին հանգամանքներում մենք հրաժարվենք դրանք քննելուց։ Ներկա պահին մեր պարտքն է լռել։ Հետագայում, եթե արտասահմանն ուղղակի մեղադրի Գերմանիային մեղսակցության մեջ, հարկ կլինի քննել այդ հարցը՝ զուսպ ձևով ու մեծագույն զգուշությամբ, և մշտապես հայտարարել, որ հայերը վտանգավոր եղանակով գրգռում էին թուրքերին՝ դրդելով իրենց դեմ (sic!)։ Իսկ ավելի լավ է հայկական հարցում լռություն պահպանել...»[26]։

Ահա նման պայմաններում էր, որ գերմանական կառավարությունը արգելեց հանգանակություն անցկացնել աքսորյալ հայերի օգտին։ Ինչպես նշում է Մարկվարտը, թույլ չտվեցին անգամ հանձնաժողով ուղարկել աղետալի վիճակում գտնվող հայերին օգնություն ցույց տալու համար, և դա լոկ այն պատճառով, որ թուրքերը թշնամաբար էին վերաբերվում նման կարգի միջոցառումներին։

Մարկվարտը սուր քննադատության է ենթարկել նաև Ռայխստագին, որի բռնած դիրքը նույնպես պատիվ չէր բերում Գերմանիային։

«Ռայխստագի վրա ընկնող պատասխանատվությունը նվազ ծանր չէ,— գրում է անվանի գիտնականը.— բրոշյուրներով ու բանավոր հաղորդումների միջոցով նա ստույգ տեղեկություն ուներ այն մասին, թե ինչ էր տեղի ունե-

նում իրականում և ցանկացած պահին կարող էր կառավարությունից լրացուցիչ բացատրություն պահանջել: Չնայած այդ բանին, բացառությամբ երեք անկախ սոցիալիստների՝ Լիբկնեխտի, Լեդեբուրի և Հաազեի ելույթների, Ռայխստագը համառ լռություն պահպանեց»[27]:

Առաջին համաշխարհային պատերազմում Օսմանյան կայսրության կրած պարտությունից հետո, երբ իթթիհատական մարդասպանները խայտառակ փախուստի դիմեցին, Յոզեֆ Մարկվարտը առաջիններից էր, որ հրապարակայնորեն հանդես եկավ երիտթուրքական հանցագործ առաջնորդներին միջազգային մասշտաբով պատժելու պահանջով[28]: Մարդասեր գիտնականը դիմում է գերմանական ժողովրդին հետևյալ կոչով.

«Այժմ մենք պետք է ազնվորեն հետևություն անենք վերստերից և եռանդուն կերպով գործի անցնենք՝ մեր ուժերի ներածին չափով քավելու դաժան հանցագործությունները, որ մենք օգնել ենք կատարելու:

Ամենից առաջ պետք է գերմանական կառավարությունից պահանջել, որ նա անհապաղ հանձնի Էնվեր փաշային ու Թալեաթ-փաշային՝ զանգվածային սպանությունների հեղինակներին... Նրանք պետք է հանձնվեն ոչ թե թուրքական նոր կառավարությանը, այլ Հայկական Հանրապետությանը կամ Անտանտին այն հաշվով, որ նրանց դատի միջազգային դատարանը»[29]:

Պետք է ասել, որ գտնվեցին նաև մարդկային խիղճը կորցրած գործիչներ, որոնք այլևայլ ձևերով փորձեցին «հիմնավորել» կատարվածը և անգամ արդարացնել արևմտահայերի զանգվածային ջարդերը: Նման մարդատյացներից էր պանիսլամիզմի մոլեռանդ պաշտպան Մարտին Հարտմանը, որը, ինչպես գրում է Մարկվարտը, գտել էր ցինիկ մի արտահայտություն՝ «Հայերի գրեթե լրիվ անհայտացումը (Մեծ Հայքից, Փոքր Հայքից, Կիլիկիայից, Հյուսիսային Սիրիայից) պարզեցրեց դրությունը»: Մարկվարտը ցասումնալից կերպով բողոքում է նման նողկալի ելույթների դեմ.

«Հանուն մարդկայնության, արդարության, քաղաքակրթության ու առաջադիմության, մարդու իրավունքների բո-

լոր պաշտպանները պետք է ամենաեռանդուն կերպով բողոքեն նման որոշման դեմ»:

«Թուրքասեր քաղաքականության ներկայացուցիչները,— գրում է Մարկվարտը,— նորմալ են համարում XX դարում՝

1. Բազմաթիվ քրիստոնյաների մահմեդականություն պարտադրել. ոչնչացնել կամ մզկիթների վերածել քրիստոնեական հարյուրավոր եկեղեցիներ ու վանքեր:

2. Անարգել հազարավոր քրիստոնյա կանանց ու աղջիկների և վաճառել նրանց թուրքական հարեմներին:

3. Քարուքանդ անել հազարավոր տներ ու քրիստոնեաբնակ գյուղեր, կողոպուտի ու թալանի տալով բնակիչների սեփականությունը և բռնագրավելով նրանց հողերը՝ մահմեդականներին հանձնելու համար:

4. Սպանել առանց տարիքն ու սեռը հաշվի առնելու մեկ միլիոն 300 հազարից ավելի քրիստոնյաների. ոչ թե սովորական կռվում ընկած թշնամիների կամ ժողովրդական հուզումների ժամանակ սպանված խռովարարների, այլ զոհերի, որոնց կառավարության հրամանով ու նախօրոք կազմած ծրագրի համաձայն սառնասրտությամբ կոտորել են, մյուսներին քշել դեպի անապատ՝ այնտեղ քաղցից ու հիվանդություններից մահանալու: Եվ այս ամենը լոկ այն բանի համար, որ նրանք քրիստոնյա էին և ամենևին չէին ցանկանում դառնալ թուրք կամ մահմեդական...»[30]:

Հայ ժողովրդի անշահախնդիր բարեկամ, ականավոր գիտնական ու մեծ մարդասեր Յոզեֆ Մարկվարտի խոսքերը չեն կորցրել իրենց նշանակությունը նաև մեր օրերում, երբ դեռ գտնվում են պետական գործիչներ ու հեղինակավոր անձնավորություններ, որոնք նորմալ են համարում գենոցիդի քաղաքականությունը և անգամ փորձում են մերթընդմերթ կիրառել այն՝ կարծես հիշեցնելու համար ժողովուրդներին, որ նրանք դեռ լավ չեն յուրացրել պատմության դասերը:

1965

ՅՈՀԱՆՆԵՍ ԼԵՊՍԻՈՒՍԸ ԵՎ ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԻ ՃԱԿԱՏԱԳԻՐԸ

Գերմանական արևելագետ ու հասարակական գործիչ Յոհաննես Լեպսիուսի (1858—1926) բազմաբեղուն գործունեության մեջ առանձնահատուկ տեղ է գրավում նրա անխոնջ մարդասիրական գործունեությունը ի նպաստ արևմտահայության: Այդ ազնիվ նպատակին Յ. Լեպսիուսը հատկացրել է ավելի քան 30 տարի՝ իր կյանքի մոտ կեսը: Պրոպագանդիստական ու հրապարակախոսական ակտիվ ելույթներին զուգընթաց Օսմանյան կայսրությունում հայերի հետապնդման դեմ մղած իր պայքարը դոկտոր Լեպսիուսը շարունակել է նաև իր բազմաթիվ գիտաքաղաքական հրապարակումներով:

Պետք է նշել, որ դոկտոր Լեպսիուսի հայանպաստ գործունեությունը բավարար չափով ուսումնասիրված չէ և ըստ արժանվույն չի գնահատվել, թեև այն մասնակիորեն իր արտացոլումն է գտել ԽՍՀՄ-ի և ԳԴՀ-ի պատմաբան-թուրքագետների աշխատություններում[1]:

Բավականին արժեքավոր և հետաքրքրական է թվում մեզ խորհրդային ու գերմանական հեղինակների համագործակցությունը դոկտոր Լեպսիուսի հարուստ արխիվային ժառանգությունը ուսումնասիրելու և հրատարակության պատրաստելու գործում, մի ժառանգություն, որում, արդեն մեզ ծանոթ փաստաթղթերից դատելով, զգալի տեղ են գրավում հայկական հարցին նվիրված նյութերը:

Սույն հոդվածի նպատակն է Յոհաննես Լեպսիուսի հիմնական աշխատությունների քննական վերլուծության հիման վրա վերհանել դրանց նշանակությունը հայերի ցեղասպանության ճանաչման ու դատապարտման գործում:

1896-ի վերջին դոկտոր Լեպսիուսը հրապարակ բերեց իր առաջին գործը, որի վերնագիրը՝ «Հայաստանը և Եվրոպան: Մեղադրանք մեծ տերությունների դեմ և կոչ քրիստոնեական Գերմանիային»[2] ինքնին պարզ էր դարձնում հեղինակի առաջադրած խնդիրը: Սույն աշխատությունն անմիջապես թարգմանվեց ֆրանսերեն ու անգլերեն[3] և լայն արձագանք գտավ եվրոպական հասարակայնության մեջ, բացի Գերմանիայից, որի պաշտոնական ղեկավարները

ամեն ինչ անում էին թաքցնելու համար ճշմարտությունը Հայաստանի ու հայ ժողովրդի վիճակի վերաբերյալ: Այսօր, դոկտոր Լեպսիուսի հիշյալ գիրքը լույս տեսնելուց մոտ հարյուր տարի հետո, առանց չափազանցության կարելի է ասել, որ այն զարմանալի կերպով պահպանում է իր այժմեականությունը փոքր ժողովուրդների նկատմամբ մեծ տերությունների վարած քաղաքականությունը մերկացնելու խնդրում: Ինչ վերաբերում է Արևմտյան Հայաստանում թուրքական գազանությունները մերկացնելու ու դատապարտելու խնդրին, ապա այստեղ ևս հարկ է հաստատել, որ Լեպսիուսի կողմից բերված փաստագրական աղբյուրները ց'այսօր էլ չեն կորցրել իրենց այժմեականությունը շնորհիվ բերված փաստերի հավաստիության ու ճշմարտացիության:

Ի՞նչ հիմնական հարցեր է բարձրացնում Յոհաննես Լեպսիուսը «Հայաստանն ու Եվրոպան» գրքում և ի՞նչ հետևությունների է նա հանգել:

Գրքում հստակ կերպով ցույց է տրվում այն կապը, որ գոյություն է ունեցել արևմտահայ ազգաբնակչության դեմ գործադրված անմարդկային արարքների և բարձրաստիճան պաշտոնյաների ու սուլթանական կամակատարների հրամանների միջև:

«Երբ որևէ ապա ոգևորում է նրանց (ամբոխին— Ռ. Ս.) գոռալով՝ «Մա՛հ հայերին, դա սուլթանի կամքն է», կամ երբ որ վալին (նահանգապետը— Ռ. Ս:)՝ նրանց դիմում է. «Եղեք ակտիվ, չդադարեք սպանել, թալանել և աղոթել սուլթանի համար» բառերով, ապա ինչո՞ւ պետք է նրանք խուլ մնան նման հրահանգներին»,— գրում է հեղինակը[4]:

Յոհաննես Լեպսիուսը փաստեր է բերում ջարդարարների գազանությունների վերաբերյալ, ցույց տալիս, որ նրանք չէին խնայում կանանց ու մանուկներին «թեև սուլթանը հրամայել էր սպանել միայն յոթ տարեկանից բարձր քրիստոնյաներին»[5]: Այս կապակցությամբ հեղինակը փաստեր է բերում բռնի կերպով իսլամական կրոնին դարձնելու, ինչպես նաև հայ հոգևորականներին ֆիզիկապես ոչնչացնելու վերաբերյալ:

«Մեր առջև են 559 գյուղերի ցուցակներ, որոնց բնակչությունը իսլամի դավանանքին էր պարտադրվել հրով ու սրով. 568 եկեղեցի լրիվ թալանված և հիմնավորապես քանդված. 282 եկեղեցի՝ մզկիթի վերածված. 21 բողոքական քարոզիչներ և 170 առաքելական քահանաներ, որոնք հրաժարվել էին դավանափոխ լինել, սպանվել են, հաճախ աննկարագրելի խոշտանգումներից հետո»[6]:

Հատուկ բաժնում դոկտոր Լեպսիուսը քննում է հայկական ջարդերում օսմանյան քաղաքացիական ու զինվորական իշխանությունների մասնակցության հարցը: Այստեղ ցույց է տրվում, որ զինվորական իշխանությունները զենք էին փոխանցում խուժանին, քրդական ու չերքեզական ավազակախմբերին, իսկ իրենք միջամտում էին միայն այն դեպքերում, երբ հայերը կատաղի դիմադրություն էին ցույց տալիս:

«Քաղաքացիական իշխանությունների խնդիրը,— գրում է Լեպսիուսը,— մի այլ կերպ բարդ էր, քանի որ նրանք մի կողմից պետք է ջարդերի հրահրեին մահմեդական բնակչությանը, նախապատրաստեին նրան և ապահովեին նրան անպատժելիություն ցանկացած հանցագործության համար, մյուս կողմից՝ քրիստոնյաների և, մասնավորապես, հյուպատոսների առջև այդ իշխանությունները պետք է ճնարավորին չափ անտեղյակություն խաղային, հովանավորության կեղծ խոստումներով զսպեին զոհերին՝ մինչև սպանդի նշանակված օրը, և ուխտադրուժ միջոցներով նրանց հանկարծակիի բերեին այն դեպքում, երբ որ հարվածը անսպասելի հասցվեր»[7]: Հեղինակը թվարկում է այն քաղաքների անունները, ուր թուրքական կանոնավոր զորքերը մասնակցություն են ունեցել հայկական ջարդերում. Տրապիզոն, Էրզրում, Բայբուրդ. Խարբերդ, Մալաթիա, Արաբկիր, Երզնկա, Սեղերդ, Մեզրա, Սըվաս, Թոքատ, Մարզվան, Ամասիա, Դիարբեքիր, Ուրֆա, Մարաշ, Ենիջե-Կալե, Բիրեջիք, ինչպես նաև բազմաթիվ գյուղական վայրեր[8]:

Բազմաթիվ հավաստի փաստերի հիման վրա Լեպսիուսի արված հետևությունները տրամաբանական են ու ճշմարիտ.

1. Քաղաքացիական ու զինվորական իշխանությունները չեն խանգարել հայ ազգաբնակչության ջարդի նախապատրաստմանը:

2. Նրանք իրենք մասնակցել են ջարդի նախապատրաստությանը, սիստեմատիկ կերպով քրիստոնյա բնակչությունից խլելով նրա մոտ եղած զենքերը և միաժամանակ զինելով մահմեդականներին:

3. Այդ իշխանությունները, նույնիսկ ամենաբարձրաստիճան նրանց ներկայացուցիչները, ուղղակի և անձնական մասնակցություն են ունեցել կոտորածներին, թալանին, ինչպես նաև քրիստոնյաներին բռնի կերպով մահմեդականության պարտադրելու գործում:

4. Քաղաքացիական իշխանությունները փորձել են ջարդերից հետո թաքցնել կամ արդարացնել կատարվածը՝ հայ երևելիներին ստիպելով բանտ նետվելու սպառնալիքի տակ կեղծ ցուցումներ տալ այն մասին, թե իբր նրանց հայրենակիցները հրահրիչ գործունեություն են ծավալել, նաև արգելելով հայերին էմիգրացիայի դիմել, իսկ արտասահմանցիներին՝ շփվել նրանց հետ:

5. Իշխանությունները ոչ մի քայլի չդիմեցին ջարդի ու կողոպուտի աղետալի հետևանքները մեղմացնելու համար: Նրանք նույնիսկ խանգարել են եվրոպական մի շարք երկրներում ստեղծված օգնության կոմիտեների գործունեությանը:

6. Ոչ մի միջոց չի ձեռնարկվել կանխելու համար ջարդերը այն շրջաններում, որոնց հաջողվել էր խուսափել դրանցից: Ընդհակառակը, 1896 թվականի վերջին ջարդերը Վանում, Տրապիզոնում, Քղիում և այլ վայրերում, հայ ժողովրդի ոչնչացումը շարունակվում է անարգելք կերպով:

7. Զանգվածային ջարդերի, կողոպուտների ու բռնի դավանափոխության հեղինակներն ու մասնակիցները մնացել են անպատիժ[9]:

Թուրքական կեղծիքը: Այսպես է հեղինակը վերնագրել այն բաժինը, որտեղ մերկացվում է այսպես կոչված հայկական սադրանքների վերաբերյալ սուտը: Դիվանագիտական ու հյուպատոսական զեկուցագրերի հիման վրա Լեպսիուսը մերկացնում է այն ահավոր կեղծիքն ու խեղաթյու-

թումները, որոնց դիմում էին թուրքական իշխանությունները ջարդերի համար ողջ պատասխանատվությունը իրենց իսկ զոհերի վրա բարդելու նպատակով: Հեղինակը փաստեր է բերում, թե ինչպիսի դաժան միջոցներով էին տեղական իշխանությունները ստանում իրենց բաղձալի կեղծ ցուցումները, ինչպես էին զոհերին ստիպում ստորագրել զանազան կեղծ փաստաթղթեր: Սուլթանական պաշտոնյաների ցինիզմը հասնում էր այնտեղ, որ նրանք ազդեցիկ հայերին և նույնիսկ հոգևորականության ներկայացուցիչներին ստիպում էին շնորհակալական նամակներ հղել սուլթանին: Երբ թուրքական մի փաշա իր մոտ է կանչում հայ համայնքի առաջնորդին և սպառնալից կերպով պահանջում նրանից երախտագիտության հեռագիր ուղարկել սուլթանին, նա հարցնում է. «Բայց ինչի՞ համար եք դուք ուզում, որ մենք շնորհակալություն հայտնենք»: Փաշան պատասխանում է. «Դա ձեզ չի վերաբերում, վարվեք այնպես, ինչպես մյուսները»: Ինչպես գրում է Լեպսիուսը, այդ կեղծ հեռագիրը ստորագրելուց հրաժարվելու համար հայ երևելին բանտ է նետվում[10]: Հեղինակն այնուհետև նկարագրում է, թե ինչպիսի տանջանքների ու խոշտանգումների էին ենթարկվում չհնազանդվող հայերը[11]:

Սակայն լինում էին նաև այլ դեպքեր: Լեպսիուսը մեջ է բերում մի հատված այն նամակից, որ հայերից մեկը ուղարկել էր իր եղբորը 1895-ի դեկտեմբերի 29-ին: Այնտեղ ասվում էր. «... Այս ամբողջ գործում առավել ցինիկը այն է, որ՝ բավական չէ այն, ինչ որ մենք մեր վրա կրեցինք, մեզ դեռ ստիպում են շնորհակալական նամակներ ստորագրել սուլթանին: Մեզ նույնիսկ ստիպում են ասել, որ իբր մենք՝ հայերս ենք պատճառ դարձել կատարվածի համար... Մի՞թե Եվրոպան այնքան բութ է, որ արդեն ամոթ չէ խաբել նրան նման կոպիտ միջոցներով»[12]:

«Դիվանագիտական փաստաթղթերից հետևում է նաև,— եզրակացնում է Լեպսիուսը,— որ ամեն անգամ, երբ տեղեկություններ էին ստացվում ջարդի մասին, թուրքական կառավարությունը շտապում էր հայերին մեղադրել դրանք հրահրելու մեջ»[13]:

Սակայն ո՞ւմ համար էին նախատեսված այդ հանգստացուցիչ հեռագրերը, սուլթանին հասցեագրված շնորհակալական նամակները և այլն,— հարցնում է հեղինակը: Առաջին հերթին Եվրոպային ու նրա դիվանագետներին քնացնելու համար, քանի որ վերջիններս անհանգստացած էին իրենց հանգիստը խանգարելու համար, քանի որ նրանք շահագրգռված էին անդորրն ու կարգ ու կանոնը պահպանելու մեջ: Հանգստություն ամեն գնով, սա է հեղինակի եզրակացությունը:

Դոկտոր Լեպսիուսը հերքում է այն ժամանակ տարածված այն կեղծիքը, թե իբր թուրքական իշխանությունները անզոր էին որևէ բան ձեռնարկել խուժանի ու քրդերի դեմ:

«Ճշմարտությունն այն է,— գրում է հեղինակը,— որ ամենուրեք, որտեղ իշխանություններն իրենք չէին մասնակցում արյունահեղությանը, նրանք հանդես էին գալիս, որպես ջարդի ու կողոպուտի հանդիսատեսներ: Միևչդեռ բավական էր ձեռքի մի շարժում՝ սպանդը դադարեցնելու համար»[15]: Ըստ որում ջարդարարները լավ գիտեին, որ իրենք գործում են ոչ թե երկրորդական պաշտոնյաների հրահանգներով, որոնք նրանց երաշխավորում էին անպատժելիություն, այլ սուլթանի հրամանով ու նրա անունից[16]:

Առանձնահատուկ տեղ է հատկացնում Յոհաննես Լեպսիուսը «քրիստոնեական տերությունների» պատասխանատվության հարցը քննարկելուն: Մասնավորապես, նա քննադատում է Անգլիային այն բանի համար, որ հենց նրա առաջարկով էր Սան-Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածը փոխարինվել Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածով, և Սան-Ստեֆանոյի հոդվածներն այդպիսով չէին իրականացվել կյանքում, միևչդեռ դրա դիմաց Անգլիան ստացավ Կիպրոս կղզին[17]:

«Այսպիսով մենք հայտնաբերում ենք,— գրում է Լեպսիուսը,— որ իրենց շուրթերին մշտապես ունենալով Հայաստանը և նրա բողոքները, Բեռլինի դաշնագիրը ստորագրած տերությունները երբեք լրջորեն չեն էլ մտածել նույնիսկ մատը շարժելու, որպեսզի Բարձր Դռանը ստիպեն

կատարել այդ քաղցր խոստումները, պահանջել կատարել իր պարտավորությունները»[18]:

Լեպսիուսի կարծիքով, հենց եվրոպական տերությունների նման վարքագիծը հանգեցրեց աճավոր ջարդերին 1895—1896 թվականներին ինչպես Արևմտյան Հայաստանում, այնպես էլ կայսրության այլ վայրերում և նույնիսկ մայրաքաղաքում՝ Կոստանդնուպոլսում: Միշտ է, Բեռլինի կոնգրեսից հետո մեծ տերությունները 1880-ի սեպտեմբերի 7-ին Բարձր Դռանը ներկայացրեցին կոլեկտիվ նոտա, որը ոչ մի ազդեցություն չունեցավ սուլթան Աբդուլ Համիդի վրա: Ինչպես նշում է Լեպսիուսը, այդ տերությունները 15 տարվա ընթացքում փաստորեն անտեսում էին այն փաստը, որ «թուրքական վարչական մեքենան քրիստոնյա ազգաբնակչության նկատմամբ վարվում էր այնպես, ինչպես «ծղոտը տալիս են քամուն»:

Մինչդեռ քրիստոնյա մեծ տերությունների ներկայացուցիչները հիանալի գիտեին,— շարունակում է Լեպսիուսը,— որ հայկական նահանգներում տիրող անարխիայի պահպանումը կարող էր հանգեցնել քրիստոնյա ազգաբնակչության լրիվ ոչնչացմանը[19]:

Ընդհանրացնելով հայկական հարցում XIX դարի 80—90-ական թվականներին եվրոպական մեծ տերությունների դիրքորոշումը, Յոհաննես Լեպսիուսը գալիս է այն եզրակացության, որ Հայաստանը նրանց քաղաքականության զոհը դարձավ, որ «Հայաստանում բարենորոգումների վերաբերյալ դիվանագիտական ողջ գրագրությունը ոչ այլ ինչ է, եթե ոչ անարժան մի ֆարս»[20]:

Եվ Սասունի ջարդը պարզորոշ կերպով վերհանեց բնաջնջման այն քաղաքականությունը, որը օսմանյան կառավարությունը կիրառում էր Արևմտյան Հայաստանում:

Եվ այսպես, «Ի՞նչ բան է կոտորածը Հայաստանում»,— հարցնում է Լեպսիուսը և տալիս հետևյալ պատասխանը. «Դա Բարձր Դռան կողմից ընդունված վարչական այն միջոցառումն է, որի միակ շարժառիթն ու նպատակն է վերջնականապես հրաժարվել բարենորոգումների անցկացումից՝ հայ ազգը ոչնչացնելու նանապարհով»[21]:

Բռնությունների ու ջարդերի հետևանքով, Լեպսիուսի

հաշվումներով, զոհվել են ավելի քան 100 հազար սրևմտահայեր: Սակայն պետք է նկատի ունենալ, որ գիրքը գրելու պահին, հեղինակն իր տրամադրության տակ չուներ վերջնական թվերը, որոնց համաձայն 1894—1896 թվականներին սպանվել կամ քաղցից, ցրտից ու զանազան հիվանդություններից մահացել է շուրջ 300 հազար մարդ:

Լեպսիուսի գրքի երկրորդ բաժնում, որը վերնագրված է «Ջարդեր», բերվում են դիվանագիտական փաստաթղթեր՝ հյուպատոսների զեկույցները իրենց դեսպաններին, ջարդերի անմիջական ականատեսների պատմածները, ինչպես նաև «Քոնթեմփորարի ռիվյու» ամսագրում 1895-ի օգոստոսին տպագրված իռլանդական իրավաբան-միջազգայնագետ Էմիլ Դիլոնի հոդվածը: Որոշակի արժեք է ներկայացնում գրքի հավելվածը՝ ցուցակներ խաղաղ հայ ազգաբնակչության նկատմամբ ըստ վիլայեթների գործադրած բռնությունների, մարդկային կորուստների և նյութական վնասի վերաբերյալ թվական տվյալներ և այլն:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ դոկտոր Լեպսիուսի առաջին գիրքը, նվիրված հայ ժողովրդի վիճակին Օսմանյան կայսրությունում, մեծ տերությունների երկդիմի քաղաքականության մերկացման հետ մեկտեղ որոշակի դրական դեր խաղաց արևմտահայության իրական դրությունը լայն հասարակայնությանը ներկայացնելու գործում: Միաժամանակ Լեպսիուսի այս աշխատությունը օգնում է առավել խորն ըմբռնելու առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Թուրքիայում ծավալված իրադարձությունները:

Այդ ժամանակաշրջանի դեպքերին է նվիրված Յոհաննես Լեպսիուսի մի այլ աշխատությունը՝ «Հաղորդում հայ ժողովրդի դրության վերաբերյալ Թուրքիայում»[22], որը պատրաստվել էր կայզերական Գերմանիայում պատերազմի ժամանակ տիրող խստագույն ռազմական գրաքննության պայմաններում: Այդ գիրքը, որ մի քանի հրատարակություն ունեցավ արևմտաեվրոպական լեզուներով, ինչպես նաև թարգմանվեց հայերեն, հետազոտողի ուշադրությունն է գրավում ամենից առաջ իր բարձր հավաստիությամբ: Հենվելով դեպքերի անմիջական ականատեսների վկայությու-

ների վրա՝ գերմանական ծառայողներ, միսիոներներ, չեզոք պետությունների դիվանագիտական ներկայացուցիչներ և այլն, դոկտոր Լեպսիուսը քննական վերլուծության ենթարկելով այդ վկայություններն ու օբյեկտիվ այլ աղբյուրներ, տալիս է անաչառ պատկերը այն ողբերգության, որ հայ ժողովուրդն ապրեց Թուրքիայում հատկապես 1915—1916 թթ., պատկերը ցեղասպանության այն քաղաքականության, որ երիտթուրքերը անց էին կացնում բռնի տեղահանությունների ու զանգվածային ջարդերի ճանապարհով: «Հաղորդման» մեջ բերված աղյուսակները արևմտահայերի կորուստների վերաբերյալ ցույց են տալիս, որ 1915-ին բռնագաղթվել և գաղթի ճանապարհին կամ համակենտրոնացման ճամբարներում զոհվել է 1 միլիոն 396 հազար 350 մարդ:

Հիշյալ գրքի առաջին մասում, որը վերնագրված է «Փաստեր», Լեպսիուսը մեջ է բերում չեզոք տերությունների, հիմնականում Ամերիկայի Միացյալ Նահանգների դիվանագիտական ներկայացուցիչների զեկուցագրերից քաղվածքներ, որոնք վեր են հանում հայերի զանգվածային տեղահանության բուն նպատակը, երիտթուրքական ղեկավարության մեթոդիկ պլանի առկայությունը:

«Նախորդ ժամանակաշրջաններում կիրառվող ուղղակի հարձակումների ու ջարդերի մեթոդը,— գրում է Լեպսիուսը,— այսօր մի փոքր մոդիֆիկացիա է կրել. իրենց երկրից տեղահանում են մեծ քանակությամբ տղամարդկանց ու պատանիների, որոնք անհայտանում են ճանապարհին: Այնուհետև նրանց հետևում են կանայք ու մանուկները»,— հաղորդում էր Հալեպի ամերիկյան հյուպատոսը 1915-ի օգոստոսի 3-ին[23]:

Հեղինակը ցույց է տալիս, թե ինչ նպատակ էին հետապնդում արագ պաշտոնազրկումը, բանտարկությունն ու տեղահանությունը հայ մտավորականության այն ներկայացուցիչների, որոնք կարող էին բողոքի իրենց ձայնը բարձրացնել կատարվող անօրինականությունների դեմ: Դա համընդհանուր միջոցառում էր,— ընդգծում է Լեպսիուսը,— որը նպատակ ուներ հայ ժողովրդին զրկել իր ղեկավարներից և մամուլի իր օրգաններից այն հաշվով, որ

բռնի տեղահանությունը ընթանար անաղմուկ և առանց որևէ դիմադրության[24]: Խոսելով հայ ազդեցիկ ու երևելի անձանց ձերբակալության մասին (օսմանյան պառլամենտի անդամներ, հրապարակախոսներ, գրողներ, իրավաբաններ, բժիշկներ, առևտրականներ և այլն), դոկտոր Լեպսիուսը ընդգծում է այն փաստը, որ «ձերբակալությունները տեղի ունեցան առանց որևէ դատաքննության, որը կնախորդեր կամ կհաջորդեր այդ ձերբակալություններին»[25]:

Նույն ձևով էին թուրքական իշխանությունները վարվում նաև գավառի երևելի անձնավորությունների, հայկական համայնքների ներկայացուցիչների հետ Արևմտյան Հայաստանի բոլոր վիլայեթներում: Յոհաննես Լեպսիուսը հավաստի փաստեր է բերում դիվանագիտական ու հյուպատոսական ներկայացուցիչների զեկուցագրերից, որոնցում արդեն այն ժամանակ այն միտքն էր հայտնվում, որ տեղահանությունների բուն նպատակը հայ ժողովրդի ոչնչացումն է Թուրքիայում:

Այսպես, Տրապիզոնում ամերիկյան հյուպատոս Օսկար Հայզերը իր 1915-ի հուլիսի 28-ի թվակիր զեկուցագրում տեղեկացնելով քաղաքի հայ ազգաբնակչության բռնագաղթի մասին, գրում էր. «Գերմանական հյուպատոսն ասաց ինձ, որ ինքը չի կարծում, որ հայերը կարող են վերադառնալ Տրապիզոն նույնիսկ պատերազմի ավարտից հետո»[26]:

Իսկ Խարբերդի ամերիկյան հյուպատոսը տեղեկացնելով իր դեսպանին տեղի հայերի բռնագաղթի մասին, հաղորդում էր, որ թուրքական ժանդարմները Խարբերդից ոչ հեռու գազանաբար ոչնչացրել են մոտ 800 հայերի, այդ թվում անվանի անձանց: «Երբեք նրանց դեմ որևէ մեղադրանք չի հարուցվել,— ավելացնում էր հյուպատոսը: Նրանք բոլորը ձերբակալվեցին ու սպանվեցին միայն այն պատճառով, որ կառավարության գլխավոր պլանի համաձայն պետք էր ձերբազատվել հայ ազգից»[27]:

Յոհաննես Լեպսիուսը այս աշխատության մեջ տալիս է հայերի տեղահանության պատկերը ըստ վիլայեթների: Հեղինակի կողմից բերված փաստերը, թվերն ու կոնկրետ

տվյալները չեն կորցրել իրենց արժեքը և կարևորությունը մեր օրերում:

Չափազանց այժմեական է դոկտոր Լեպսիուսի կողմից բարձրացված հարցը այսպես կոչված «համընդհանուր հայկական ապստամբության մասին», որը իբր պատճառ դարձավ տեղահանությունների: Թուրքական կառավարության պաշտոնական այս վարկածը, որն այն ժամանակ լայն տարածում գտավ, նպատակ էր հետապնդում արդարացնել արևմտահայության բռնագաղթն ու ֆիզիկական ոչնչացումը: Պատմության կողմից մերժված այս կեղծ վարկածը այսօր էլ օգտագործվում է թուրք պաշտոնական պրոպագանդայի կողմից, ինչպես նաև պատմագրության մեջ՝ ցեղասպանության քաղաքականությունը արդարացնելու համար:

Դոկտոր Լեպսիուսը համոզիչ կերպով ցույց է տալիս թուրքական այդ վարկածի ողջ սնանկությունը, հայերի «դավաճանության» մասին թուրքական պնդումների պրովոկացիոն բնույթը:

«Այսպես կոչված Վանի ապստամբությունը,— գրում է Լեպսիուսը,— օրինական պաշտպանության սովորական մի ակտ է, մի էպիզոդ ջարդի պատմության մեջ, բայց ո՛չ մի դեպքում դավաճանություն: Դա հաստատվում է նաև պաշարմանը ներկա գերմանացիների կողմից»[28]: Հեղինակը ցույց է տալիս, որ Վանի հայ ազգաբնակչությունը կազմակերպեց ինքնապաշտպանություն խուսափելու համար այն ճակատագրից, որը բաժին ընկավ թուրքական իշխանությունների խոստումներով խաբված և իրենց կյանքը զոհաբերած հայրենակիցներին:

Քննելով ռուսական զորքերի՝ քաղաքի ապստամբ բնակիչներին օգնության գալու հարցը, հեղինակը ընդգծում է. «Երկու իրադարձություն — Վանի հայերի օրինական ինքնապաշտպանությունը՝ նրանց սպառնացող ջարդի դեմ հանդիման և ռուսների առաջխաղացումը իրար հետ ո՛չ մի կապ չունեն, և չեն կարող դիտվել, որպես պատճառ և հետևանք... Իրենց ինքնապաշտպանությամբ Վանի հայերը լոկ նպատակ էին հետապնդում փրկել հարազատների կյանքը»[29]:

Հարցը քննելով ավելի լայն առումով՝ հումանթուրքական մասշտաբով, Լեպսիուսը գալիս է այն հետևության, որ կառավարության դեմ ուղղված կանխամտածված որևէ շարժում չի եղել: «Կանխամտածված էին միայն այն հայածանքները, որոնք իրականացվում էին մեթոդիկ կերպով»[30],— եզրակացնում է հեղինակը:

«Հաղորդման» երկրորդ մասը վերնագրված է՝ «Պատասխանատվության հարցը», այսինքն՝ պատասխանատվություն երկրի օրինական քաղաքացիների բռնի տեղահանման, նրանց ունեցվածքի ապօրինի զավթման և, վերջապես, բռնության բացահայտ ակտերի համար: Պատասխանատվություն՝ տեղերում, գաղթի ճանապարհին և աքսորյալների կենտրոնացման վայրերում, այսինքն՝ համակենտրոնացման ճամբարներում նրանց կազմակերպված ջարդի համար: Ընդ որում Լեպսիուսը մատնանշում է, որ երիտթուրքերը այդ ճամբարների գաղափարը վերցրել էին անգլիացիներից, որոնք նույն ձևով էին վարվում բուրերի հետ Հարավային Աֆրիկայում:

«Մեր կողմից բերված փաստերից,— գրում է Լեպսիուսը,— անվիճելիորեն հետևում է, որ տեղահանությունների և դրանց իրականացման մասին հրամանի պատասխանատվությունը ընկնում է Կոստանդնուպոլսի կենտրոնական կառավարության վրա»[31]:

Հայ ժողովրդի դեմ Թուրքիայում գործադրված բոլոր անօրինական գործողությունների և հանցագործությունների համար հիմնական պատասխանատու է դիտում Լեպսիուսը «Միություն և առաջադիմություն» կոմիտեն և նրա ակումբները գավառներում: Հեղինակը մասնավորապես նկատում է, որ երիտթուրքական ակումբները իրենց ձեռքում էին պահում թուրքական բանտերից ազատ արձակված քրեական տարրերից կոմպլեկտավորված բանդաների կազմակերպման գործը[32]:

Այնուհետև Յոհաննես Լեպսիուսը վերլուծում է տեղահանության ու ջարդերի կապակցությամբ «թուրքական բացատրությունները», ցույց տալով դրանց ողջ կեղծավորությունն ու անհանկությունը:

«... Կայսրության բոլոր մասերում ցրված մեկնակես մի-

վիոն բնակիչների տեղահանությունները,— գրում է Լեպսիուսը,— ո՛չ մի կերպ չի կարելի արդարացնել ռազմական նկատառումներով։ Միակ բացատրությունը, որը թույլ չի տալիս կառավարական այս միջոցառման մեջ տեսնել անբնական մի ակտ, դա այն է, որ խոսքը գնում էր ներքին քաղաքականության մի պլանի մասին, որը նպատակ էր հետապնդում նախապես մտածված ու սառնասրտորեն հաշվարկված եղանակով բնաջնջել հայ էթնիկական տարրը»[33]։

Դոկտոր Լեպսիուսը եվրոպական հեղինակների մեջ առաջիններից մեկն էր, որն ուշադրություն դարձրեց այն անմիջական կապի վրա, որ գոյություն ուներ երիտթուրքերի հակահայկական քաղաքականության և նրանց պանթուրքական զավթողական ձգտումների միջև։

«Պանթուրքիզմը դարձավ յուրօրինակ մի կուռք և ամենախիստ միջոցները ձեռնարկվեցին բոլոր ոչ թուրք տարրերի դեմ»[34]։

«Հաղորդման» երրորդ մասում Յոհաննես Լեպսիուսը քննում է իրենց հարազատ վայրերից հայերի արտաքսման ու ոչնչացման տնտեսական հետևանքների հարցը։ Հետևությունը, որին հանգում է հեղինակը, խիստ հատկանշական է. «Հայ ազգաբնակչության ոչնչացումը չի նշանակում միայն Անատոլիայի բնակչության 10—25 տոկոսի կորուստը, այլև քաղաքակրթության տեսակետից առավել արժեքավոր ու տնտեսապես առավել զարգացած տարրերի ոչնչացումը»[35]։

Լեպսիուսի գրքի վերջին բաժինը նվիրված է հայկական հարցում գերմանական մամուլի վարքագծի քննադատությանը։ Հեղինակը ցույց է տալիս, որ Թուրքիայի դաշնակից կայզերական Գերմանիայի մեծ մամուլը կամ լռության էր մատնում կատարվածը, կամ առանց որևէ մեկնաբանության արտատպում էր թուրքական թերթերի այն կեղծ ինֆորմացիան, որի համաձայն թուրքական իշխանությունների ընդունած միջոցառումները իբր «խաղաղ» բնույթ էին կրում։

Ամփոփելով Լեպսիուսի այս երկրորդ աշխատության վերաբերյալ մեր ասածը, հարկ է նշել, որ հիմնված լինե-

լով հավաստի և մանրակրկիտ կերպով ստուգված փաստաթղթերի ու ցյութերի վրա, նա Ջեյմս Բրայսի ժողովածուի հետ[36] դարձավ այն արժեքավոր հրապարակումը, որը մերկացնելով արևմտահայության բնաջնջման խարդախ մեթոդներն ու եղանակները, ցույց տվեց, որ ծավալված ողբերգության գլխավոր պատասխանատուն երիտթուրքական կլիկն էր: Եվ այս գիրքն էլ մեղադրական մի փաստաթուղթ է Իթթիհաթ կուսակցության ու նրա գլխավորած կառավարության դեմ:

Վերջապես, դոկտոր Լեպսիուսի երրորդ արժեքավոր հրապարակման մասին՝ «Գերմանիան և Հայաստանը» դիվանագիտական փաստաթղթերի մեծածավալ ժողովածուն, որը լույս տեսավ արդեն պատերազմի ավարտից հետո՝ 1919 թվականին[37]:

Հիշյալ գիրքը չլինելով գիտական հետազոտություն, այսինքն Լեպսիուսի կողմից գրված աշխատություն, այլ միայն նրա կազմած փաստաթղթերի ժողովածու, նվազ կարևոր ու արժեքավոր չէր իր նշանակությամբ, թեև գերմանական կառավարության հետապնդած նպատակը միանգամայն այլ էր. ցույց տալ կայզերական Գերմանիայի լրիվ «անմեղսակցությունը» հայերի բնաջնջման գործում:

Լեպսիուսի կողմից ընտրված փաստաթղթերը համաշխարհային հասարակայնության առջև վեր էին հանում Թուրքիայի բարեկամ ու դաշնակից կայզերի կառավարության իսկական դեմքը: Գերմանական դեսպանների, հյուպատոսների, դիվանագիտական ու զինվորական այլ ներկայացուցիչների գաղտնի և խիստ գաղտնի զեկուցագրերը, մատչելի դառնալով, անհերքելիորեն վկայում էին, որ տեղահանության իսկական նպատակը հայ ազգի ոչնչացումն էր թուրքական պետության մեջ, նաև այն, որ գերմանական կառավարությունը բացահայտորեն հանդես չէր եկել իթթիհաթականների հայասպան գործողությունների դեմ:

Դժվար է գերագնահատել «Գերմանիան և Հայաստանը» փաստաթղթերի ժողովածուի նշանակությունը պատմության թուրք կեղծարարների ստահոդ պնդումները մերկացնելու գործում, բոլոր այն պատմաբանների ու քաղա-

քագետների, որոնք այսօր էլ փորձում են ժխտել հայերի գենոցիդը՝ XX դարի այդ քստմնելի հանցագործությունը՝ ուղղված մարդկության ու մարդկայնության դեմ:

1987

ԵՂԵՌՆԻ ԴԱՏԱՊԱՐՏՄԱՆ ՀԱՐՑԸ ԵՎ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ

Ֆրանսիական առաջադեմ հասարակայնության ներկայացուցիչները միշտ էլ հանդես են եկել հայ ժողովրդի արդար դատի պաշտպանությամբ, իրենց բողոքի ձայնն են բարձրացրել արևմտահայության դեմ կիրառված անլուր հալածանքների ու բռնության դեմ:

Արյունարբու սուլթան Աբդուլ Համիդի և երիտթուրքերի կառավարման տարիներին ձեռնարկված հայերի զանգվածային ջարդերն ու 1915-ի ահավոր եղեռնագործությունը ցասումնալից կերպով դատապարտվել են Ֆրանսիայի արժանավոր զավակների կողմից: Մեր ժողովուրդը չի կարող մոռանալ, որ ծերունազարդ Անատոլ Ֆրանսը գլխավորում էր համիդյան ջարդերի հետևանքով որբացած բազմահազար հայ մանուկներին օգնություն հասցնելու հանգանակության գործը[1], իսկ աշխարհահռչակ արևելագետ Ժակ դը Մորգանը հանդես էր գալիս իթթիհատական մարդասպաններին միջազգային ատյանին հանձնելու և խստագույնս պատժելու արդարացի պահանջով[2]:

Մեր օրերում, երբ թուրք պատմաբաններն ու քաղաքական գործիչները, և անգամ կառավարական առավել բարձրաստիճան անձինք փորձում են այս կամ այն պատրվակով կամ «պատճառաբանությամբ» վիճարկել իրենց նախորդների ցեղասպան քաղաքականությունը, պաշտպանության տակ առնել թուրքական դատարանի իսկ կողմից ժամանակին դատապարտված հանցագործներին, երկրագնդի առաջադեմ մարդիկ վերստին անդրադառնալով 1915-ի եղեռնին, պահանջում են, որ հայկական ցեղասպանությունը դատապարտվի պաշտոնապես՝ միջազգային չափանիշով, որպես մարդկության ու մարդկայնության դեմ ուղղված հանցագործություն:

Այս առումով ուշադրության արժանի են այն քայլերը,

որոնք վերջին տարիներին կատարվել են Ֆրանսիայի քաղաքական ու հասարակական շրջանակներում՝ ձախ ուժերի կողմից: Այս հարցում հետևողական գիծ է վարում ֆրանսիական կոմունիստական կուսակցությունը՝ հանձինս իր ներկայացուցիչների Ֆրանսիայի Ազգային ժողովում, սենատում և այլուր:

Տակավին 1965-ի ապրիլին, Մեծ եղեռնի 50-ամյակի նախօրեին, ֆրանսիական պառլամենտի՝ Ազգային ժողովի կոմունիստ պատգամավորները հարցապնդում արեցին կառավարությանը, պահանջելով դատապարտել 1915-ի ցեղասպանությունը միջազգային չափանիշով, որպես մարդկության դեմ ուղղված հանցագործություն, և փոխհատուցում տալ հայերին:

Իսկ 1977-ի հունիսին ֆրանսիական կոմունիստական կուսակցության գլխավոր քարտուղար Ժորժ Մարշեն պատասխանելով Մարսելում ֆրանսերեն լույս տեսնող «Արմենիա» ամսագրի հարցին, մասնավորապես նշեց հետևյալը. «... Սկսած 1920 թվականից, ֆրանսիական կոմունիստական կուսակցությունը պարզ ու հստակ դիրքորոշում է ընդունել՝ արտահայտվելով ի նպաստ հայ ժողովրդի դատի արդարացի լուծման, հայտարարելով, որ մոռացությունը դառնում է հանցագործություն այն պահից, երբ հարցը վերաբերում է 1915-ի ջարդերի քողարկմանը, ամբողջ մի ժողովրդի ոչնչացմանը՝ իր սեփական տարածքում...»[3]: Այնուհետև, կոմունիստ պատգամավորները 1982—86 թթ. ընթացքում բազմիցս գրավոր հարցապնդումներ են արել երկրի բարձրագույն օրենսդրական մարմիններում: Այսպես, Ազգային ժողովի փոխնախագահ Գի Դյուկոլոնեն 1985 թ. դեկտեմբերին 35 կոմունիստ պատգամավորների անունից հանդես եկավ գրավոր առաջարկով՝ ընդունել օրենք և ճանաչել «ցեղասպանությունը, որի զոհը դարձավ հայ ժողովուրդը 1915-ին»[4]: Հիշյալ օրինագծում մասնավորապես ասված էր.

«Իր անկումն ապրող Օսմանյան կայսրությունում հայ ժողովուրդը 1915—1922 թթ. զոհ դարձավ նոր ժամանակների առաջին ցեղասպանությանը: 1915-ին թուրքական կառավարությունը կազմակերպում է հայ ժողովրդի բռնա-

գաղթ, քանի որ այդ ժողովրդի ազգային գիտակցությունը դեմ էր առնում բարձրացող թուրքական ազգայնականությանը: Հայկական աղբյուրների համաձայն, մեկնկես միլիոն հայեր սպանվեցին կամ անհետացան աքսորի ճամբարներին, կամ տեղահանության վայրերում: Միայն վեց հարյուր հազար հոգի փրկվեց, որոնց մեծ մասը գաղթեց, միանալով XIX դարի սկզբին տեղի ունեցած առաջին գաղթի ալիքին...

Կոմունիստ պատգամավորները միշտ էլ ճանդես են եկել հայերի ցեղասպանության ճանաչման օգտին: Ճամբարչել այն, նշանակում է գործնականորեն հանդես գալ այն բանի օգտին, որ այդ հանցագործությունը հիշվի ու դառ ծառայի՝ խանգարելով նրա կրկնությանը»[5]:

Փաստաթղթում այնուհետև ասվում էր, որ 1915-ից մինչև օրս հայկական գենոցիդը պաշտոնապես չի ճանաչվել, իսկ թուրքական կառավարությունը ոչ միայն չի ընդունում այն, այլև ձգտում է ոչնչացնել հայկականության հետքն իսկ Թուրքիայի հայկական հողերում:

«Վերջին տարիների ընթացքում,— կարդում ենք նույն փաստաթղթում,— բարձրաստիճան պաշտոնական անձինք հանդես են եկել այդ հանցագործությունը դատապարտող հայտարարություններով, սակայն կառավարական կամ օրենսդրական որևէ ակտով դրանք չեն հաստատվել: Ահա թե ինչու առաջարկվում է օրենսդրական տեքստով վավերացնել գենոցիդի ճանաչումը Ֆրանսիայի կողմից, նախատեսել նրա նշումը և ձեռնարկել կառավարական քայլեր՝ միջազգային չափանիշով»[6]:

Հիշյալ օրինագծի վերջում մատնանշվում էր, որ Ֆրանսիայի ազգային ժողովի կոմունիստ պատգամավորների խումբը նախկինում բազմիցս հանդես է եկել հայկական գենոցիդը ճանաչելու և պաշտոնապես դատապարտելու առաջարկությամբ, այդ իսկ պատճառով այս վերջինը պետք է դիտել, որպես նրա հաստատուն ու հետևողական դիրքորոշման մի նոր վկայություն:

Օրինագիծն ուղարկվում է Ֆրանսիական Հանրապետության տարմանադրական, օրենսդիր ու վարչական օրենքնե-

րի ճանաչումը», որը հարցին համապատասխան ընթացք չի տալիս:

Կոմունիստ պառլամենտականները սակայն շարունակում են հարցը պահել օրակարգում: 1986-ի ապրիլի 23-ին նրանք կրկին հանդես եկան Ազգային ժողովում՝ նոր առաջարկով. «Ֆրանսիական Հանրապետությունը, ճանաչելով ցեղասպանությունը, որին զոհ դարձավ հայ ժողովուրդը 1915-ին օսմանյան կառավարության կողմից, հանձն է առնում ապահովել այդ տարեթվի ամենամյա նշումը ազգային չափանիշով և աշխատել միջազգային հասարակայնությանը ճանաչել տալ մարդկության դեմ ուղղված այս հանցագործությունը»[7]: Պատասխանելով այս հարցադրմանը, արտաքին գործերի միևիստր Ժան-Բեռնար Ռեմոնը ըստ էության հրաժարվեց ընթացք տալու կոմունիստ պատգամավորների պահանջին:

«Մեր երկիրը,— հայտարարեց նա,— չի կարող թուրք ժողովրդին ու այսօրվա թուրքական կառավարությանը պատասխանատվության կանչելու հարց հարուցել հայերի կոտորածի համար, որոնք տեղի են ունեցել սրանից 71 տարի առաջ, և ավազագույն չափով իր աջակցությունը բերել այն պահանջներին, որոնք սպառնում են Թուրքական Հանրապետության ամբողջականությանը»[8]:

Չնայած նման դիմադրությանը, նույն հետևողական դիրքն են գրավում ֆրանսիական կոմունիստները նաև Եվրոպական պառլամենտում: Այսպես, 1985-ի նոյեմբերի 26-ին Եվրոպական պառլամենտի անդամ Պիեռ Պլանշերը անդրադառնալով հայկական ցեղասպանության ճանաչման ու դատապարտման հարցին, նշեց, որ «հայկական ազգային տարածքի $^4/_5$-րդը, որն այսօր էլ գտնվում է Թուրքիայի սահմաններում, ամբողջովին դատարկվել է հայ ազգաբնակչությունից»:

«Այն ժամանակ երբ Եվրոպական պառլամենտում քննարկվում էին բյուջետային հարցեր,— ավելացրեց նա,— իմ խումբը պահանջեց օրինագծի ուղղում, որպեսզի թուրքական ռեժիմին հատկացվելիք վարկերը առժամանակ դադարեցվեին», մինչև որ Թուրքիայում ամբողջովին չվերահաստատվեին դեմոկրատական կարգերը: «Ես պիտի

ճշտում,— ավելացնում է հռետորը,— որ վերադարձ դեմոկրատիային մեզ համար նշանակում է ո՛չ միայն վերջ տալ մեզ դեպի իրավունքների ոտնահարմանը երկրի ներսում, այլև ճանաչել հայերի ցեղասպանության փաստը»[9]:

Եվրոպական պառլամենտը, սակայն, աջ ուժերի ճնշման ներքո մերժում է ֆրանսիական կոմունիստ պատգամավորների հիշյալ առաջարկը և որոշում կայացնում վերականգնել դրամական վարկի հատկացումը Թուրքիային այն հաշվով, որ վերջինս ապագայում «վերադառնա դեմոկրատիային»:

Պաշտոնական ելույթներին զուգընթաց, վերջին ժամանակներս Ֆրանսիայում որոշակի ակտիվություն են հանդես բերում նաև հասարակական կազմակերպությունները: Հատկապես կարևոր է նշել «Հայերի ցեղասպանության ճանաչման ֆրանսիական կոմիտեի» ստեղծման փաստը 1985-ի դեկտեմբերին, ընդ որում հիշյալ կոմիտեի կազմում զգալի թիվ են կազմում նացիզմի ու ֆաշիզմի դեմ պայքարած, մահվան ճամբարներն անցած նախկին դիմադրականները, ինչպես նաև գաղութային պատերազմների դեմ ըմբոստացած մարտիկներն ու խաղաղության պաշտպանները, օրինակ, Անրի Ալլեգը և ուրիշներ:

Ինչպես տեսնում ենք, այս փաստն ինքնին ընդգծում է այն կապը, որ գոյություն ունի բռնության տարբեր դրսևորումների (ռասիզմ, ցեղասպանություն, նացիզմ, ֆաշիզմ, գաղութականություն և այլն) դեմ պայքարի միջև, պայքար, որն այսօր ստանում է համամարդկային ինչողություն, դառնում կենսական պահանջ ու անհրաժեշտություն:

Հիշյալ կոմիտեի նախագահն է Գի Դյուկոլոնեն, որն այդ կազմակերպության հիմնադրման առթիվ ասաց հետևյալը. «Մեր երկրի վերապրած ծանր պահերին դրսևորելով հրմտություն և ավանդ ներդնելով իրենց բնակության վայրերի տնտեսական ու մշակութային զարգացման գործում, հայերն իրենց նպաստն բերեցին Ֆրանսիայի պաշտպանությանը, նացիստական գրավման դեմ պայքարին ու Ֆրանսիայի ազատագրությանը: Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտի 40-րդ տարեդարձի այս օրերին պե՞տք է արդյոք հիշեցնել, որ Խորհրդային Միության ավելի քան 300

հազար հայեր զոհվել են կռվի դաշտում հանուն ազատության ու Եվրոպայի ազատագրության:

Այսօր ոչ ոք չի կարող վիճարկել նրանց տեղը մեր ազգի մեջ: Այդ է պատճառը, որ հայերն իրավունք ունեն ակընկալելու Ֆրանսիայից հատուկ ուշադրություն՝ հանդեպ իրենց պատմությունն ու մշակույթը, որի կրողներն են նրանք»:

Հարկ է նշել, որ զուտ ֆրանսիական հասարակական կազմակերպությունների հետ մեկտեղ Հայ դատի պաշտպանության ու 1915-ի ցեղասպանության պաշտոնական ճանաչման ու դատապարտման ուղղությամբ հետևողական գործունեություն են ծավալել ֆրանսահայ մի շարք կազմակերպություններ. «Հայ դատի պաշտպանության կոմիտեն» (CDCA), «ֆրանսահայ մշակութային միությունը» (UCFAF), «ֆրանսահայ երիտասարդաց միությունը» (JAF), «ֆրանս-հայկական համերաշխությունը» (SFA) և այլն, գործունեություն, որն իրավամբ արժանի է հատուկ ուսումնասիրության ու գնահատման:

1986

ՄՈՒՍՏԱՖԱ ՔԵՄԱԼԻ ՄԻ ՀԱՐՑԱԶՐՈՒՑՅԻ ԱՌԻԹՈՎ

Ամերիկյան «Լոս Անջելես իգզամինըր» օրաթերթը 1926-ի օգոստոսի 1-ի համարում «Քեմալը խոստանում է ավելի շատ կախաղան հանել իր քաղաքական հակառակորդներին Թուրքիայում» խորագրի տակ զետեղել էր Թուրքական Հանրապետության նախագահ Մուստաֆա Քեմալ փաշայի (Աթաթյուրք) հարցազրույցը շվեյցարական լրագրող Էմիլ Հիլդերբրանդի հետ[1]:

Հիշյալ հարցազրույցում, որը տեղի էր ունեցել Անկարայում նույն թվականի հունիսի 22-ին, Մ. Քեմալը, անդրադառնալով իր դեմ կատարած մահափորձին, ասել էր հետևյալը.

«Երբ մենք հաղթեցինք մեր արտաքին թշնամիներին, կամ այն թշնամիներին, որոնք որոշակիորեն համակրանք էին տածում օտարերկրյա ինտրիգանների հանդեպ, մեր ազգաբնակչության գրեթե բոլոր դասակարգերն ու խավերը խանդավառությամբ և նույնիսկ մոլեռանդությամբ համա-

խմբվեցին՝ փրկելու համար ազգը բազմաթիվ օտար լծերից: Բայց հազիվ էր ազգը իր ով լինելը ապացուցել օտար-երկրյա զրպարտիչներին, երբ որոշակի տարբեր, որոնք սկսվել էին քաղաքական ինտրիգների հին դպրոցից, սկսեցին ցույց տալ իրենց մագիլները: Մենք կանգնած էինք հանրապետության կյանքին սպառնացող երկու տարրերի դեմ հանդիման:

Մեկը դա այն խումբն էր, որը կրոնական մոլեռանդությունն ու տգիտությունը զուգակցում էր քաղաքական անմտության հետ, և որն անցյալում, տարբեր սուլթանների իշխանության ներքո, փորձում էր հավատացնել, թե պետությունը մի օրգանիզմ է, որը կարելի է շահագործել անառակության ու անպող կաշառակերության միջոցով՝ իրենց անձնական նպատակների համար:

Ես վերջ դրեցի կառավարման այս չարագուշակ ու դատապարտելի տեսությանը՝ վերացնելով խալիֆին ու սուլթանին: Ես աքսորեցի այն անձանց, ովքեր մարմնավորում էին այդ տեսությունը...»[2]:

«Երկրորդ տարրը,— շարունակում է Մ. Քեմալը,— որի դեմ ես անխնա պայքար եմ մղում, դա մարդկանց այն խումբն է, որը նախահանրապետական շրջանում աշխարհին հայտնի էր երիտթուրքերի միության կոմիտե անվան տակ: Այդ տարրի շարքերը հավաքագրված էին քաղաքական բախտախնդիրների կասկածելի ամուշներից, կիսագրագետ առաջադիմականներից և սանձարձակ սովորույթների տեր մարդկանցից: Այն օրերին, երբ մենք պայքարում էինք մեր հակառակորդների դեմ՝ ներսից մինչև դուրսը, այս տարրերը մեզ միացան և կովեցին մեր շարքերում: Չնայած դրան, ես առաջին իսկ օրից հավատ չունեի նրանց մղումների հանդեպ: Սակայն ես ցանկանում, հույս էի տածում և աղոթում, որ երբ մեր երկիրը ազատվի օտար լծից, այս տարրը ուղղի իր մեթոդները՝ ներշնչվելով հայրենասիրական զգացումներով: Շուտով ես հաստատեցի, սակայն, որ իմ հույսերը դատապարտված էին հիասթափության, և որ իմ մաղթանքները մնացին անպատասխան: Ես համբերությամբ սպասում էի, աչքս չհեռացնելով նրանց գործունեությունից»:

Այնուհետև ասվում է, որ երբ այդ ուժերը ձևավորվեցին որպես քաղաքական ընդդիմադիր կողմ, ինքը Քեմալը, «չհավակնելով լինել դիկտատոր», հակված էր հանդուրժելու նրանց, բայց երբ նրանք քաղաքական ընդդիմության քողի տակ սկսեցին խռովություններ կազմակերպել, «կառավարման մեքենայի ղեկի մոտ կանգնած անձանց սրբազան պարտականությունը դարձավ ճնշել նրանց և ճնշել օրինակելի դաժանությամբ...»[3]:

Անդրադառնալով այնուհետև իր հակառակորդների անցյալի գործունեությանը, Մ. Քեմալն իր հարցազրույցում մատնանշում է.

«Նախկին երիտթուրքական կուսակցության այդ մնացորդները, կուսակցություն, որը պետք է պատասխան տար մեր միլիոնավոր քրիստոնյա հպատակների կյանքի համար, որոնք անգթորեն քշվեցին զանգվածաբար իրենց բնակավայրերից և ոչնչացվեցին, այդ մնացորդները շարունակում էին համառել հանրապետական կառավարման օրոք: Նրանք մինչև օրս էլ շարունակում էին ապրել կողոպուտի, թալանի ու կաշառակերության միջոցով, թշնամաբար վերաբերվելով օգտակար աշխատանքի մեջ ներգրավվելու և իրենց ապրուստը արդար քրտինքով վաստակելու ամեն մի գաղափարի:

Ընդդիմադիր կուսակցության քողի տակ, այս տարրը, որը ժողովրդի կամքին հակառակ երկիրը ներքաշեց մեծ պատերազմի (առաջին համաշխարհային պատերազմի—Ռ.Ս.) մեջ և պատճառ դարձավ, որ թուրք երիտասարդության արյան գետեր հոսեն՝ Էնվեր փաշայի հանցավոր փառասիրությանը հագուրդ տալու համար, այդ տարրը փոքրոգի եղանակով փորձեր կատարեց իմ, ինչպես և իմ կառավարության անդամների կյանքի դեմ»[4]: Որպես օրինակ Մ. Քեմալն իր հարցազրույցում մատնանշում էր 1926-ի հունիսի կեսերին Իզմիրում իր դեմ ձեռնարկված մահափորձը, որը ձախողվեց, իսկ այդ մահափորձին ուղղակի կամ անուղղակի մասնակցած նախկին երիտթուրքական գործիչները դատապարտվեցին մահվան՝ կախաղանի միջոցով: Դրանց թվում էր իթթիհաթական կուսակցության

գաղափարախոս դոկտոր Նազըմը, որը Կ. Պոլսի ռազմական ատյանի կողմից 1919-ի հուլիսի 5-ին կայացված դատավճռով, ի թիվս երիտթուրքական մյուս հանցագործների, հեռակա կարգով դատապարտվել էր մահվան[5]: Եվ եթե ժողովրդական վրիժառուները ի կատար ածեցին արդար դատավճիռը Թալեաթի, Ջեմալի, Սայիդ Հալիմ փաշայի, Բեհաեդդին Շաքիրի, Տրապիզոնի հայերի դահիճ Ջեմալ Ազմի բեյի նկատմամբ, ապա դոկտոր Նազըմին հաջողվեց խույս տալ դատաստանից և նա 1923-ին Բեռլինից վերադարձավ Թուրքիա: Հարելով Մուստաֆա Քեմալին ընդդիմադիր քաղաքական խմբավորմանը, նա մասնակցություն ունեցավ վերը նշված դավադրությանը՝ կախաղան բարձրացվելով հենց Մ. Քեմալի կարգադրությամբ:

Ինչ վերաբերում է երիտթուրքական կուսակցության ու կառավարության քաղաքականությանը Մ. Քեմալի տված գնահատականին, մասնավորապես Թուրքիայի քրիստոնյա ազգաբնակչության ոչնչացման հարցում, ապա պետք է ասել, որ այդ գնահատականը, որքան որ արդարացի էր ու իրականությանը համապատասխան, նույնքան էլ թելադրված էր ժամանակավոր ու անձնական նկատառումներով, իր քաղաքական հակառակորդների հետ դաժան հաշվեհարդար տեսնելու ձգտումներով: Դրա ապացույցն են Մ. Քեմալի ինչպես միևնույն նշված հարցազրույցը, այնպես էլ դրանից հետո արված հայտարարությունները:

Այսպես, 1919-ի դեկտեմբերի 31-ին Անկարայի երևելիների հետ ունեցած հանդիպման ժամանակ Մ. Քեմալը ասել էր հետևյալը:

«Հիրավի, մեր պետությունը, մեր ժողովուրդը դեռ ամենահին ժամանակներից արել է այն ամենը, ինչ որ անհրաժեշտ էր ոչ մահմեդական տարրերի կյանքի և ունեցվածքի ապահովման, նրանց իրավունքների ու հնարավորությունների զարգացման համար... Այն լայն արտոնությունները, որոնցից օգտվում էին ոչ մահմեդական տարրերը Կոստանդնուպոլսի գրավումից հետո մինչև այսօր, անհերքելիորեն ապացուցում են, որ մեր ժողովուրդը ամբողջ աշխարհի ամենահանդուրժող, ամենամեծահոգի ժողո-

վուրդն է ինչպես քաղաքական, այնպես էլ կրոնական հարցերում»[6]:

Իսկ բերված հարցազրույցից մեկ տարի հետո՝ 1927-ի հոկտեմբերի 15—23-ը տեղի ունեցած ժողովրդա-հանրապետական կուսակցության երկրորդ համագումարում արտասանած իր հայտնի ճառում անդրադառնալով 1919—20 թթ. Կիլիկիայում, մասնավորապես Մարաշում ծավալված դեպքերին, որոնք, ինչպես հայտնի է, այդ երկրամասի քրիստոնյա ազգաբնակչությանը և, մասնավորապես, հայերին, տասնյակ հազարավոր նոր զոհեր արժեցան, Մ. Քեմալը ճամարտակում էր այն մասին, թե իբր «հայկական ջարդերի վերաբերյալ պնդումներն անկասկած չէին արտացոլում իրերի իսկական վիճակը...»: Վերջացնում էր Մ. Քեմալը իր ամբաստանությունը պատմական դեպքերի անաչառ ենթագիտությամբ՝ հայտարարելով, թե իբր «հենց հայերն էին կերտողները այդ վայրենության, որն իր նախադեպը չուներ պատմության մեջ»[7] (ընդգծումն իմն է— Ռ. Ս.):

Այնուհանդերձ, 1926-ի Մ. Քեմալի տված հարցազրույցը, որպես պատմական փաստ, ինքնին հետաքրքրական է և ուշադրության արժանի: Միաժամանակ, այն չբխելով 1915-ի դեպքերի գնահատման հարցում Մ. Քեմալի սկզբունքային, անաչառ դիրքորոշումից, ծառայություն չմատուցեց պատմությանը, քանի որ երիտթուրքերի դատապարտելի ազգային քաղաքականությունը այս կամ այն եղանակով որդեգրվեց թե՛ իր՝ Մ. Քեմալի, թե՛ նրա հետնորդների կողմից: Ուստի պատահական չէ, որ ժամանակակից թուրք պատմագրությունը, մասնավորապես Մ. Քեմալի հիմնադրած «Թուրքիայի պատմության ընկերությունը», ամենևին էլ չի առաջնորդվում Մ. Քեմալի կողմից երիտթուրքերի քաղաքականությանը տրված գնահատականով, ընդհակառակը, նշված ընկերության մեջ մտնող «հեղինակավոր» պատմաբանները այս կամ այն ձևով փորձում են ժխտել 1915-ի հայկական ցեղասպանության փաստը և ապակողմնորոշել համաշխարհային հասարակական կարծիքը:

Գլուխ չորրորդ

ԴԻՄԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՐԴԱՍՊԱՆՆԵՐԻՆ, ՆՆՋՆԱՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԿՈՒՎՆԵՐ

ՄՈՒՍԱ ԼԵՌԱՆ ԳՈՅԱՄԱՐՏԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԴԱՄԲԸ

Մուսա լեռան հերոսամարտը՝ 1915-ի հուլիս-սեպտեմբերին, թուրքական բռնապետության դեմ հայ ժողովրդի մղած դարավոր ազատագրական պայքարի առավել փայլուն ու լուսավոր էջերից է: Մուսալեռցի հայերի պատմական սխրանքը իր ուրույն ու անփոխարինելի տեղն ունի հայոց հազարամյա տարեգրության մեջ: Միաժամանակ, անցած տասնամյակների ընթացքում Մուսա լեռան հերոսամարտը ընկալվեց իր ողջ իմաստով ու նշանակությամբ, իր ընդհանրացնող ուժով, իր արտասովոր օրինակով: Ժամանակը հաստատեց այն ճշմարտությունը, որ ի վերջո ոչինչ չի մոռացվում և ոչ ոք չի մոռացվում և Մուսա լեռան գոյամարտն ու նրա հերոսները իրենց արժանի տեղը գրավեցին և՛ մեր ժողովրդի պատմության, և՛ մարդկության հիշողության մեջ:

Սակայն նախքան քաջարի մուսալեռցիների մղած օրհասական կռվի պատմական դասերին անցնելը փորձենք գծել այդ հերոսամարտի ընդհանուր պատկերը, նրա ընթացքն ու վախճանը:

Մուսա լեռը (Ջաբալ Մուսա, Մովսեսի լեռ) մտնում էր պատմական Անտիոքի գավառակի մեջ, որն իր հերթին Հալեպի վիլայեթի մասն էր կազմում: Մուսա լեռան շուրջը,

Նրա փեշերին, վաղուց ի վեր ծվարել էին վեց հայկական գյուղեր՝ Քեբուսիե, Վագրֆ, Խտրբեկ, Յոգունոլուկ, Հայչի Հաբիբլի, Բիթիաս, շրջապատի մահմեդական բնակչության մեջ կղզիացած: Յոթերորդ հայաբնակ գյուղը՝ Քեսապը կտրված էր սրանցից, գտնվում էր 18 կիլոմետր հեռավորության վրա: Հայկական այս գյուղերը, թեև կտրված բնօրրանից՝ Արևմտյան Հայաստանից, ապրում էին լիարժեք ազգային կյանքով, ունեին իրենց դպրոցները, եկեղեցիները:

Պետք է ասել, որ Սուեդիայի հայությունը նախկինում էլ աչքի է ընկել իր ըմբոստ, ազատատենչ ոգով, չի խոնարհվել թուրքական յաթաղանի առաջ և անհրաժեշտության դեպքում դիմադրություն է ցույց տվել ջարդարարներին: Այսպես, համիդյան ջարդերի ժամանակ Սուեդիայի հայությունը 1895-ին դիմեց ինքնապաշտպանության և խիզախորեն մարտնչեց թուրքական կանոնավոր զորքերի դեմ: 1909-ի ապրիլին Կիլիկիայում և այլուր կազմակերպված ջարդերի ժամանակ դարձյալ չընկրկեց, արիաբար դիմադրեց, իսկ Հաջի-Հաբիբլի գյուղի մոտ փախուստի մատնեց թուրքական հրոսակախմբերին ու զինված խուժանին:

Պալթեց առաջին համաշխարհային իմպերիալիստական պատերազմը, որին Օսմանյան կայսրությունը մասնակցեց Կենտրոնական տերությունների՝ կայզերական Գերմանիայի ու Ավստրո-Հունգարիայի կողքին: Պատերազմական առիթը երիտթուրքական կուսակցության ու կառավարության ղեկավարներին լայն հնարավորություն ընձեռեց վերջապես իրականացնել իրենց դիվային ծրագիրը՝ արևմտահայության զանգվածային, գլխովին ոչնչացումը բռնի տեղահանության (դեպորտացիայի) քողի տակ:

Տեղահանության մասին հրամանն արձակվեց 1915-ի մայիսի 14 (27)-ին, թեև մարտի վերջին և ապրիլի սկզբին արդեն բռնի տարագրության էր ենթարկվել Զեյթունի և շրջակա գյուղերի հայ ազգաբնակչությունը: Այդ տխուր լուրը մուսալեռցիներին հասցրեց Զեյթունի հայ ավետարանական համայնքի հոգևոր հովիվ, ծագումով յողունօլուկցի Տիգրան Անդրեասյանը, որին հաջողվել էր խույս տալ

բռնագաղթից և բազմաթիվ դժվարություններ հաղթահարելով հասնել իր հարազատ վայրերը:

Հուլիսի 29-ին վերը նշված հայկական գյուղերի երեսփոխանները հավաքվեցին Յողուճօլուկում ընդհանուր խորհրդակցական ժողովի, որն անցավ լարված մթնոլորտում: Հանուն պատմական ճշմարտության պետք է ասել, որ յեռ բարձրանալու և զինված դիմադրություն ցույց տալու գաղափարը սկզբում հավանություն գտավ ոչ բոլորի կողմից: Ներկաների մի մասը դիմադրության որևէ փորձ խենթություն համարեց՝ վկայակոչելով զենքի, ռազմամթերքի ու պարենի սակավությունը: Հիրավի, սուեդահայերն իրենց տրամադրության տակ ունեին 140 սովորական և մի քանի հարյուր հասարակ, փողաբերանի կողմից լցվող հրացան, 11 «Մաուզեր» տիպի ատրճանակ՝ յուրաքանչյուրի համար 100—120 փամփուշտով և որոշ քանակությամբ վառոդ՝ դատարկ փամփուշտները լցնելու համար: Սակայն ի վերո հաղթահակեցին զգաստ բանականությունն ու մարդկային արժանապատվության զգացումը՝ եթե զոհվել, ապա «իմացյալ մահով» զոհվելու գաղափարը: Մուսալեռցիների հիմնական զանգվածը ժամանակին կանխագուշակեց իթթիհաթական պարագլուխների արձակած բռնագաղթի հրամանի թաքնված իմաստը, այսինքն տեղահանություն՝ անէացում, մահ:

«Ես այստեղ ծնվել եմ, այստեղ էլ կմեռնեմ, բայց գաղթական չեմ դառնա»: Ահա այս երդումն էր, որ տվեց քաջարի մուսալեռցիների ճնշող մեծամասնությունը: Իսկ մնացածնե՞րը: Նրանք, ունկնդրելով Բիթիաս ու Քեբուսիե գյուղերի քահանաներին ու հարուստներին, բռնեցին գաղթի կործանարար ճամփան և հիմնականում ոչնչացան աքսորի ճամփաներին ու Դեր Զորի անապատում:

Պետք է ասել, որ տատանվողների ու պահպանողականների մի մասն էլ միացավ մեծամասնությանը, երբ հասկացվեց, որ կառավարությունը ոչ մի բացառություն չի անում և տեղահանության հրամանը տարածվում է և իրենց վրա: Այդ հրամանը, ստորագրված Անտիոքի գավառակի կայմակամ Մարուֆի կողմից, հուլիսի 30-ին տարածվեց հայկական գյուղերում թուրք ոստիկանների միջոցով:

Հուլիսի 31-ից գյուղացիներն արդեն սկսեցին աստիճանաբար լեռ բարձրանալ և մի քանի օրվա ընթացքում Յողունօլուկ, Խտրբեկ և Վագրֆ գյուղերն իրենց շրջակայքի բնակիչներով դատարկվում են: Հաջի-Հաբիբլիի և Բիթիասի բնակիչների մեծ մասը հետևում է մյուսներին օգոստոսի 4-ին, իսկ Քեբուսիե գյուղից Մուսա լեռ է բարձրանում ընդամենը 17 ընտանիք: Ինչ վերաբերում է քեսապցիներին, նրանց համոզելու ճիգերն արդյունք չեն տալիս և գյուղի բոլոր բնակիչները բոնում են աքսորի ճամփան՝ արժանանալով շատ տխուր ճակատագրի:

Եվ այսպես, 1915-ի օգոստոսի սկզբին շուրջ 5 հազար հայեր՝ մոտ հազար ընտանիք, մեծ մասը կանայք ու երեխաներ, արդեն իսկ հաստատվել էին Մուսա լեռան վրա և նրանց միայն մի քանի օր էր տրամադրված լեռը ինչպես բնակավայրի, այնպես էլ իսկական ռազմական ճամբարի վերածելու համար: Ժողովուրդը գործի լծվեց օր ու գիշեր: Անտառապատ լեռը հնարավորություն տվեց ծառեր կըտրատել և տնակներ կառուցել՝ խոնավությունից ու տեղացող անձրևներից պատսպարվելու համար: Միաժամանակ ստեղծվեց զինվորական հատուկ մարմին, որը լուրջ ուշադրություն դարձրեց շատ կարճ ժամանակում պաշտպանված դիրքերի, պատնեշների ու խրամատների կառուցմանը: Ռազմիկների թիվը 600-ից չէր անցնում: Նրանք բաժանվեցին տասնյակների, ղեկավարներ կարգվեցին, եղած զենքերը բաշխվեցին: Զինվորական պատասխանատվությունը իրականացնում էին մի քանի հոգի՝ Եսայի Յաղուբյան, Պետրոս Տմլաքյան, Պետրոս Թութագլյան և ուրիշներ, որոնց մեջ հատկապես աչքի ընկավ իր անձնական հերոսությամբ ու հմտությամբ Եսայի Յաղուբյանը: Սակայն չմոռանանք ընդգծել, որ ինքնապաշտպանության գործի ընդհանուր ղեկավարության մեջ առանձնանում էր վերը նշված Տիգրան Անդրեասյանը, որն անձամբ մեծ դեր է խաղացել սուեդահայերի դիմադրական կորովի ամրապնդման գործում[1]:

Հազիվ էր ժողովուրդը ուշքի եկել իր հարազատ պապենական օջախները լքելուց հետո, երբ նա ստիպված եղավ արդեն օգոստոսի 7-ին առաջին մարտը տալ թուրքական

կանոնավոր զորքերի մի ջոկատի, թվով երկու հարյուր ասքյար, որոնք հարձակման էին անցել Սուեդիայի մյուդիր Խալիդի առաջնորդությամբ: Վեց ժամ տևող առաջին մարտական մկրտությունը պսակվեց լեռան պաշտպանների հաղթանակով: Երեկոյան թշնամին նահանջեց, իր հետ տանելով 5—6 սպանված և ավելի մեծ թիվ կազմող վիրավորների: Առաջին հարձակումը միաժամանակ պարտադրեց արագացնել պաշտպանական դիրքերի կառուցման աշխատանքները, կովող ուժերի կազմակերպումն ու դասավորումը: Տասնապետներ կարգվելու հետ մեկտեղ առանձնացվում է շուրջ 40 քաջամարտիկների մի խումբ, բաղկացած զինվորական որոշ փորձառություն ունեցող կամ վարպետորեն զենք գործածելու ունակ երիտասարդներից: Իսկ ծերերն ու պատանիները կազմում էին օժանդակ ուժը, որին հանձնարարված էր երկրորդական պաշտպանությունը:

Անցավ ընդամենը 3 օր, և ահա թշնամին, համալրելով ուժերը, օգոստոսի 10-ի վաղ առավոտյան անցավ նոր հարձակման անհամեմատ ավելի մեծ ուժերով՝ մոտ 5 հազար զինվոր ու սպա: Այս անգամ թուրքական զորքերը, պաշտպանված լեռնային խոշոր թնդանոթներով, առաջ էին շարժվում յոթ թուրք հազարապետների և գերմանացի սպայի ղեկավարությամբ:

Տեղի տալով ուժերի բացահայտ գերակշռությանը, հայ մարտիկները ստիպված եղան նահանջել իրենց դիրքերից, և թուրքերը, ինչպես գրում է ականատեսը, «հրճվանքի վայրագ բացականչություններով օդը թնդացրին»: Ճակատամարտը սակայն նոր էր սկսվում: Լեռան խորքերը քաշվող հայ մարտիկները նոր դիրքեր գրավելով սկսում են դիպուկ կրակոցներով դիմավորել գրոհող հակառակորդին՝ ստիպելով նրան՝ դադարեցնել առաջխաղացումը: Այս երկրորդ ճակատամարտը, որը տևեց 12 ժամ, ավարտվեց թշնամու նահանջով և նույնիսկ փախուստով: Բազմաթիվ հայորդիներ՝ Պետրոս Գալուստյանը, Սարգիս Գասպարյանը և ուրիշներ աչքի ընկան իրենց քաջագործություններով: Ականատեսները հիշում են հատկապես Հակոբ Կարապետյանին, որին ժողովուրդը Լիոն՝ առյուծ է կոչել: Սուրալով դիրքից դիրք, նա գոտեպնդում էր կովողներին և իր

մահասփյուռ գնդակները տեղում հարձակվող թշնամու գլխին: Մահացու վիրավորված, նա դիմում է իր զենքի ընկերներին, հետևյալ խոսքերով. «Կաղաչեմ, ինձնով մի զբաղիք: Ես արդեն ինչ որ պիտի ըլլամ, եղած եմ, դուք գացեք ու թշնամիին դիմադրեցեք: Մանավանդ մի տարակուսիք վերջնական հաղթանակի վրա: Մերը պիտի ըլլա ան»[2]: Համառ ու օրհասական այս կռիվները ստիպում են հակառակորդին ևահանջել՝ կովի դաշտում թողնելով 100-ից ավելի սպանված և մոտ 300 վիրավոր:

Երկրորդ ճակատամարտը, թեև ավարտվեց մուսալեռցիների հաղթանակով, սակայն այն վերհանեց նաև պաշտպանության խոցելի տեղերը, ստիպելով ճակատները կրճատել և ուժերը կենտրոնացնել, նաև առավել լուրջ ուշադրություն դարձնել պարենավորման կազմակերպմանը: Որոշվում է ժողովրդին կենտրոնացնել չորս շրջաններից միայն մեկում՝ Դամլաջըքում, որն ուներ մի բացահայտ առավելություն՝ Միջերկրական ծովը միշտ դիմացն էր, և փրկության հույսը մեծ չափով կապվում էր ծովից ակնկալվելիք օգնության հետ, քանի որ անգլիացիներին պատկանող Կիպրոս կղզին գտնվում էր ոչ այնքան մեծ հեռավորության վրա և նրա նավահանգիստներում խարիսխ գցած ռազմանավերը դեգերում էին Միջերկրականի ջրերում:

Այդ ժամանակ էլ կազմվում է ընդհանուր վարչական մարմին՝ Տիգրան Անդրեասյանի նախագահությամբ, որը պիտի հետևեր կարգ ու կանոնին, զբաղվեր պարենավորման հետ կապված հարցերով, ապահովեր թիկունքի պահակախմբերի անխափան աշխատանքը և այլն: Ելնելով երկու ճակատամարտերի փորձից, որոշվում է ստեղծել երեք չեթեական շարժուն ջոկատներ՝ 33 մարտիկներից, որոնք պիտի ապահովեին կապը առաջապահ դիրքերի և զորանոցի միջև, ժամանակին տեղեկացնելով հակառակորդի հարձակման մասին այս կամ այն ճակատում: Ստեղծվում են նաև գործավորական վաշտեր, կազմված ալևորներից ու զենք չունեցողներից, որոնք ի վիճակի չէին կռվելու առաջապահ դիրքերում: Սրանց պարտավորությունն էր խրամատներ փորել և դիրքերի առջև որոշ հեռավորության վրա ծառերը կտրատել, որպեսզի թշնամին հեռվից նշմար-

վեր: Ռազմական որոշ կետերում նրանք նաև փակում էին ճամփաները խոշոր քարերով ու ժայռաբեկորներով՝ թշնամու առաչխաղացումն արգելելու նպատակով:

Օգոստոսի 15-ի արշալույսին թուրքական 5 հազարանոց բանակը նոր գրոհ ձեռնարկեց, իր հետ ունենալով նաև մոտ 4 հազար բաշիբոզուկներ: Ընդհանուր հրամանատարն էր Ֆահրի փաշան: Այս անգամ թուրքերը դիմել էին ռազմական խորամանկության՝ ուժերը բաժանելով երկու մասի, որոնցից մեկն ուղղվեց դեպի Թաթար Ալանկ, իսկ մյուսը արևմտյան ուղղությամբ մի փոքր առաջանալով, դարանակալ կանգ առավ անտառում: Թշնամու երկու թնդանոթները անդադար ռմբակոծում էին Մուսա լեռան պաշտպանների դիրքերը: Ամբողջ օրը մղվող կռիվների ընթացքում թուրքերին չհաջողվեց մեկ քայլ իսկ առաջանալ՝ շնորհիվ քաջարի մուսալեռցիների զանգվածային հերոսության ու անձնազոհության: Այդ և հաջորդ օրվա մարտերին իրենց մասնակցությունը բերեցին կանայք, պատանիներն ու ծերերը: «Ոմանք զինված էին հասարակ հրացաններով, կանայք ու պատանիները՝ փայտի կտորներով, քարերով և իրենց եղունգներով»[3],— կարդում ենք հերոսամարտի տարեգրության էջերում: Այնուհանդերձ, մի շարք տեղերում հայերը ստիպված էին տեղի տալ, և թշնամին գիշերվա մթությունից օգտվելով, գրավեց դաշտը: Մուսալեռցիներն այդ օրը տվեցին 11 զոհ և մի քանի վիրավոր:

Հաջորդ օրը՝ օգոստոսի 16-ին կռիվը վերսկսվեց առավել կատաղի ուժով: Կեսօրին թուրքերին հաջողվում է խորտակել պաշտպանական գծերը, ստիպելով մուսալեռցիներին դիմելու անկարգ նահանջի: Դրա հետևանքով թշնամին արդեն համազարկի տակ է առնում կենտրոնական բանակատեղին՝ Դամլաջըքը: Մի պահ գերիշխում է հուսահատությունը և սկսվում է խուճապը: Անզեն կանանց ու երեխաների թափորը Աբրահամ քահանա Տեր-Գալուստյանի գլխավորությամբ ուղղվում է դեպի ծով՝ ալիքների մեջ փրկելու հայ կնոջ պատիվը դաժան ոսոխի ոտնձգություններից: Սակայն թուրքերի կայծակնային հարձակման հետևանքով առաջացած խուճապը երկար չի տևում: Մի պահ հուսալքված, ոչ մեծաթիվ մարտիկների խումբը, ոգևորվելով ան-

վեհեր մարտիկներ Եսայի Յաղուբյանի, Ջաբրա Խեյոյանի, Վաղես Խոջենյանի, Մարտիրոս Հաբեշյանի, Մովսես Յապամաղյանի, Պետրոս Գալուստյանի, Մարտիրոս Ջանըզյանի (Գալենտեր), Մանուկ Գրլըճյանի, Պողոս Գապայանի, Պետրոս Արամացյանի, Հակոբ Խեչոնյանի, Սարգիս Շանճագյանի, խիզախ կանանց՝ Շուշան Գապայանի, Վարդեր Ջեյթլյանի, Մանուշակ Մանուկյանի, Եղիսաբեթ Սրգայանի օրինակով, հավաքում է իրեն, նոր շունչ առնում, վերադառնում դիրքերը և շարունակում օրհասական կռիվը, որն այդ օրը ի վերջո պսակվեց մուսալեռցիների հաղթանակով:

«Մուսա լեռան հերոսամարտի ժողովրդական բնույթը որևէ ժամանակից ավելի այս ճակատամարտում է, որ ի հայտ եկավ»[1],— գրում է դեպքերի ուշադիր հետազոտող մուսալեռցի դոկտոր Մարտիրոս Գուշաքչյանը: Հիրավի, համարձակորեն շրջանցելով իր հաջողությունից արբեցած թշնամուն, լեռան քաջարի պաշտպանները վերցնում են նրան կիսաշրջանակ օղակման մեջ, որին հաջորդում է ուժեղ մի համազարկ: Եվ այդ պահին, Եսայի Յաղուբյանի թելադրանքով, հակառակորդի երկու կողերը բռնած քաջամարտիկները սկսում են բարձրաձայն գոռալ հյուշյում (ի գրոհ), որն անակնկալի է բերում թուրքական զորքերին՝ ստիպելով նրանց կանգ առնել մի պահ: Հենց այդ ժամանակ էլ հայ քաջամարտիկները սկսում են սեղմել պաշարման օղակը՝ թիրախ դարձնելով թշնամու խիտ շարքերը: Գործի են դրվում նաև դեռ 1895-ի կռիվներից մնացած մի քանի ժանգոտած ռումբեր, որոնց հանած մեծ աղմուկը սաստկացնում է թուրքերի մեջ ծայր առած շփոթությունը՝ վերջիններիս կարծել տալով, թե հայերին թարմ ուժեր են եկել օգնության: Դրան հետևած խուճապային նահանջի հետևանքով թուրքական զորքերը «ինչ արագությամբ որ առաջացել էին, կրկնակի արագությամբ սկսում են ետ քաշվել», թողնելով բազմաթիվ սպանվածներ, զենք ու զինամթերք (7 մաուզեր, 300 փամփուշտ), ուտելիքի պաշար, դեղորայք, նաև թուրք հրամանատարի անձնական սուրն ու կոշիկները: Երկու օրվա մարդկային կորուստներն էին՝ թուրքերի կողմից 600—700 սպանված ու վիրավոր, հայերի կողմից 14 սպանված և 6 վիրավոր:

Պետք է ասել, որ այս երրորդ ճակատամարտի ընթացքում մուսալեռցի ժողովրդի հանդես բերած անօրինակ սխրանքի տպավորությունն այնքան մեծ էր, որ թուրք հրամանատարը ստիպված էր խոստովանել իր ենթակա սպային հետևյալը. «Եթե ես իմ հինգ հազարի փոխարեն հրամանատարությանս տակ ունենայի 500 այսպիսի քաջեր, կտեսնեիք, թե ինչ հրաշքներ կգործեի»[5]:

Այս անհաջողությունից հետո թուրքերը որոշում են առժամանակ դադարեցնել հարձակումները, պաշարել լեռը և պաշտպաններին սովամահ անել: Այդ նպատակով լեռան շուրջը կենտրոնացվում է 15 հազար զորք: Մինչդեռ, մուսալեռցիները ամենևին նախապատրաստված չէին երկարատև պաշարման: Սպառվելու վրա էին զինամթերքը, պարենը, և նրանք ստիպված էին օգնության դիմել:

Ինքնապաշտպանության ղեկավարները նախապես ծրագրել էին որևէ կապ հաստատել դաշնակից տերությունների հետ: Հիմնական ակնկալությունը կապված էր Միջերկրականի ջրերում մարտանավի երևալու հետ: Առաջին անգամ սեպտեմբերի 2-ին հորիզոնում նշմարվեց «փրկարար» մի նավ, որը սակայն անցավ-գնաց մարելով ժողովրդի մեջ ծայր առած խանդավառությունը: Այնուհանդերձ, կենտրոնական մարմինը հմուտ լողորդ Աբրահամ Գոճանյանին նրա երկու ընկերների հետ ուղարկում է Ալեքսանդրետի ուղղությամբ՝ թիթեղյա տուփերի մեջ պահված երկու աղերսագրերով:

Միաժամանակ, լեռան ծովահայաց մի բլրի վրա բարձրացվում է երկու սպիտակ «դրոշակ», որոնցից մեկը պարզապես մի խոշոր պաստառ էր՝ մեջտեղում կարմիր խաչ, իսկ մյուսի վրա անգլերեն գրված էր. «Քրիստոնյաներն աղետի մեջ են»: Դրանց շուրջը վառվում էին խարույկներ՝ անցնող նավերի ուշադրությունը գրավելու համար: Այդ երկու դրոշակների մոտ մշտական պահակախումբ էր կարգված, որի պարտականությունն էր նավ նշմարվելու պարագայում եռանդուն կերպով ծածանել դրանք: Եթե մարտանավը նկատեր և ուղղություն վերցներ դեպի ծովափ, ապա փորձված լողորդներից մեկը (նախատեսված էին Մովսես

Գըրգյանը, Պապուշյանը կամ Չլաթյանը) ծով ճեռվելով պիտի լողար դեպի փրկարար նավը՝ նավապետին հանձնելով անգլերեն գրված մի կոչ, որտեղ մասնավորապես ասված էր հետևյալը.

«Անգլիական, ֆրանսիական, իտալական, ռուսական և ամերիկյան բոլոր ծովակալներուն, նավապետներուն և իշխանությանց, որոնց կրնա ներկայանալ սույն աղերսագիրը՝ դիմում կընենք մենք հանուն Աստուծո և մարդկային եղբայրության, դիմում կընենք հանուն Քրիստոսի և քրիստոնեության... Տեր, մենք հոս ապաստանած ենք թուրքական բարբարոսութենեն, խժդժություններեն, կոտորածեն և մահեն, մանավանդ մեր կիներուն պատիվին բռնաբարումեն զերծ մնալու համար: Տե՛ր, վստահ ենք, որ դուք տեղյակ եք թուրքին ներկա բնաջնջման քաղաքականության, զոր ան կգործադրե մեր խեղճ ցեղին վրա... Մեկ խոսքով, որոշ գիտենք թե, ինչպես որ ամերիկացի տոքթոր մը ըսած է, թուրք կառավարությունը որոշած է բնաջնջել թրքահայերը և մեծ կորովով կը գործադրե իր ծրագիրները: Հիմա, Տեր, մենք դարերով հալածված ժողովրդի մը մնացորդներն ենք: Թուրք կառավարությունը ասկե 40 օր առաջ իմացուց մեզի մեր ամբողջ ժողովուրդը գաղթեցնելու իր որոշումը, և մենք հոս քաշվեցանք մեր կյանքն ու պատիվը փրկելու համար, քանզի որոշ գիտենք, թե գաղթել ներկա պայմաններու ներքև կնշանակե ոչնչացում, սարսափ, տանջանք և անպատվություն: Ուստի մենք որոշեցինք մեռնել կովելով, քան մեր իսկ աչքերով տեսնել մեր կիներուն պատվին անարգվիլը և հետո, իբր վախկոտներ, անշուշտ չարչարանքներով մահվան դիմել»:

Այնուհետև ասվում էր, որ թեև հայերը հաղթանակող են դուրս եկել հակառակորդի դեմ մղած ճակատամարտերից, սակայն այնպես վստահ չեն, թե կկարողանան դիմադրել շատ քիչ մնացած զենքերով ու ռազմամթերքով, «մանավանդ որ սովը շատ մոտեցած է մեզի»:

Դիմումի վերջում ասվում էր.

«Տեր, դիմում կընենք Ձեզի, հանուն աստուծոյ և մարդկային եղբայրության, հանուն Քրիստոսի, հանուն քաղաքակրթության, ընդդեմ քաղաքակրթության այս ոսոխին և

կխնդրենք, որ ազատեք մեր կյանքն ու պատիվը: Հաճեցեք, Տեր, փոխադրել զմեզ Կիպրոս կամ ուրիշ ազատ երկիր մը: Մեր ժողովուրդը ծույլ չէ. կրնա իր ապրուստը ճարել, եթե գործ տրվի իրեն: Եվ կամ, եթե այսքանը կարելի չէ, հաճեցեք փոխադրել գոնե մեր կիները, ծերերը ու մանուկները, և պարենավորեցեք մեզ զենքերով և ռազմամթերքով, ուտելիք տվեք մեզի, որ ձեզի հետ կողք-կողքի կռվինք թրքական ուժերուն դեմ: Կը խնդրենք, Տեր, մի թողուք որ սովամահ ըլլանք, մի՛ թողուք, որ ոչնչանանք, ազատեցե՛ք մեր կյանքը, ազատեցե՛ք մեր պատիվը, քանի դեռ ուշ չէ:

Ձեր խոնարհ ծառան
Ի դիմաց տեղվույս բոլոր քրիստոնյաներուն

Տիգրան Ամդրեասյան
1915 օգոստոս 20/2 սեպտեմբեր»[6]:

Սակայն հորիզոնում մարտանավ չէր երևում, իսկ թուրքական հրամանատարությունն այդ ընթացքում մի քանի անգամ փորձեց դիմել Մուսա լեռան խիզախ պաշտպաններին՝ զենքը վայր դնելու և անվերապահ անձնատուր լինելու առաջարկով: Մուսալեռցիները վճռականորեն մերժեցին թուրքական բոլոր վերջնագրերը և պահպանելով իրենց դիրքերը շարունակեցին փրկության այլ ուղիներ որոնել: Սուրհանդակներ ուղարկվեցին Հալեպ և Ալեքսանդրետ դաշնակիցների հետ շփման մեջ մտնելու նպատակով: Վերջապես, սեպտեմբերի 5-ին, կիրակի պայծառ մի օր, երբ մշուշն ու ամպերը իսպառ չքացել էին, և ժողովուրդը մի ինչ-որ բնազդական կանխազգացումով խռնվել էր ծովահայաց բարձունքի վրա՝ հուսաբեր ծովին նայելով, հանկարծ լսվում են աղաղակ-բացականչություններ՝ «վափաուր մը կուգա», այսինքն «նավ է գալիս»: Պահակները անմիջապես սկսում են եռանդուն շարժումներով թափահարել դրոշակները: Քիչ հետո «փրկարարից»՝ ֆրանսիական «Գիշեն» հածանավից ծով է իջեցվում մի մակույկ, որն արագընթաց մոտենում է ծովեզրին և վերցնելով ֆրանսերեն խոսող Խաչեր Թումասյանին և մի քանի այլ ժամապահների, վերադառնում է հածանավ: Այստեղ արժե հիշատակել

նաև ծերունազարդ խիզախ լողորդ Մովսես Գրըգյանին, որն արդեն իսկ նետվել էր ծովը և բավականին մոտեցել նավին: Մի ուրիշ նավակ նրան հասցնում է մինչև «Գիշեն» հածանավը, որը գտնվում էր ֆրանսիական ծովակալ Դարտիժ դյու Ֆուրնեի հրամանատարության ներքո, իսկ նավապետն էր II կարգի կապիտան Բրիսոնը, որին և հանձնվում է վերը նշված դիմումը: Վերջինս, ուշադիր կարդալով այն «իր հիացմունքն է հայտնում հանդեպ ըմբոստ մուսալեռցիները և ընդհանրապես հայ ժողովուրդը»: Նրա պահանջով նավ է հասցվում նաև Պետրոս Տմլաքյանը՝ լրացուցիչ տեղեկություններ տալով թուրքական զորքերի տեղաբաշխման մասին: Տեղեկացնելով դեպքի մասին իր բարձր հրամանատարությանը, կապիտան Բրիսոնը իր անձնական պատասխանատվությամբ հածանավը խարսխել է տալիս ծովափի մոտ և հրամայում ոմբակոծել Քեբուսիե գյուղի եկեղեցին, որը թուրքերը վեր էին ածել ռազմամթերանոցի: Այս ոմբակոծությունը նյութական մեծ վնասներ է հասցնում թուրքերին՝ պատճառելով նաև լուրջ մտահոգություն նրանց հրամանատարությանը: Հարցը նրանում է, որ թուրքերի համար ստեղծվում էր սպառնալիք Միջերկրականի կողմից, այսինքն թիկունքից, ուստի թուրք զինվորական հրամանատարությունը որոշում է համախմբել ուժերը և մինչև դաշնակիցների նոր նավերի երևալը վերջ դնել մուսալեռցիների «ըմբոստությանը»: Եվ այսպես, սեպտեմբերի 7-ին թուրքերն անցնում են նոր հարձակման, սակայն մինչև երեկո տևած մարտերում նրանք ոչ մի հաջողության չեն հասնում: Այս անգամ մուսալեռցիները կռվում էին առանձնահատուկ քաջությամբ և խանդավառությամբ: Ականատեսները պատմում են, որ լեռան պաշտպանները «երգելով ու իրար հետ կատակելով էին մարտնչում կատաղած թշնամու դեմ»: Այդ նույն ժամանակ, որպես փրկության լաստ, ֆրանսիական մի քանի մարտանավ իրար ետևից մոտենում են ափին, որոշ ժամանակ կանգ առնում, իսկ այնուհետև հեռանում դեպի բաց ծովը, մի բան, որ հոգեբանական տեսակետից դրական ներգործություն էր ունենում դիմադրողների վրա: Ամենամեծ նավը՝ «Ժաննա

դ'Արկ» հածանավը, մոտենալով, ընդունում է վարչական մարմնի անդամներին՝ Տիգրան Անդրեասյանի գլխավորությամբ: Վերը հիշված ծովակալ Դարտիժ դյու Ֆուրնեն հավաստիացնում է, որ ո՛չ մի դեպքում նա չի լքի նրանց: Միաժամանակ նա խնդրում է կապիտան Բրիսոնին ճշտել պաշարված հայերի ընդհանուր թիվը:

Այս շփումներին հետևող թշնամին, նախքան նոր հարձակման անցնելը, դիմում է խորամանկության՝ սեպտեմբերի 9-ին վաղ առավոտյան նամակատարներ ուղարկելով ապստամբներին: Իրարից որոշ չափով տարբերվող երեք նամակների բովանդակությունը նույնն էր. անհապաղ և անվերապահ հանձնվել թուրքերի գթությանը . ըստ որում պատասխանի համար տրվում էր ընդամենը երկու ժամ: Կենտրոնական վարչական մարմինը, քննելով հարցը, որոշում է, ժամանակ շահելու նպատակով, խնդրել 24 ժամ՝ պատասխանի համար: Թուրքերը, սակայն, չսպասեցին դրան և պատասխան նամակը հազիվ տեղ հասած՝ անցան հարձակման: Հայ մարտիկները, գտնվելով իրենց դիրքերում, ձևացնում են, թե իբր լքել են դրանք և հեռացել՝ թույլ տալով թշնամուն հասնել մինչև ամրացված կիրճը: Այստեղ մուսալեռցիները ուժեղ համազարկ են բացում թուրք ասքյարների ու տարբեր տեղերից խմբված խուժանի վրա: Անակնկալի եկած թշնամին սկսում է խուճապահար նահանջել, իսկ հայերը՝ հետապնդել նրանց: Թուրք սպաների ճիգերը կանգնեցնելու զինվորների գահավեժ նահանջը հաջողություն չեն ունենում: Հայերը վերադառնում են իրենց դիրքերը, տալով երկու սպանված և մեկ վիրավոր (Հաբեթ Վանայան), որը վախճանվում է ֆրանսիական նավի վրա:

Սեպտեմբերի 9-ի ճակատամարտում իրենց խիզախությամբ աչքի ընկան Մարտիրոս Հաբեշյանը, Մարտիրոս Ջանոյանը, Եսայի Յաղուբյանը, Պետրոս Տլմաքյանը, Պետրոս Գալուստյանը, Սեդրակ Բուրսալյանը, Հաբեթ Վանայանը, Պետրոս Հավաթյանը, Հովհաննես Լուրջյանը, Մովսես Յարամաղյանը, և, հատկապես, Պետրոս Սրզուանն իր ընտանիքով՝ կինը, չորս տղաներն ու աղջիկը:

Հատկանշական է, որ մուսալեռցիների այս նոր հաջողությունն իր դերն է խաղացել ֆրանսիական հրամանա-

տարության կողմից կայացրած որոշման մեջ: Այսպես, երբ հաջորդ օրը, սեպտեմբերի 10-ին, «Գիշեն» և «Դեզե» մարտանավերը խարիսխ են ձգում փրկության ափին, նրանց հրամանատարները շտապում են տեղեկանալ նախորդ օրվա ճակատամարտի մասին: Ափը հսկող պահակները հայտնում են նրանց, որ կռիվն ավարտվել է հայերի հաղթանակով: «Երեկ դուք կատարեցիք ձեր պարտականությունը, այսօր հերթը մերն է»,— լինում է պատասխանը[8]: Քիչ անց թնդանոթները հիշյալ նավերից սկսում են ուժեղ ռմբակոծություն, թիրախ դարձնելով թուրքական զորանոցը և ռազմական կարևորություն ունեցող այլ կետեր, ինչպես նաև թուրքական Բարաքլը գյուղը, որը վեր էր ածվել ռազմական կենտրոնի: Հայ մարտիկները, օգտվելով թշնամու բանակում առաջացած իրարանցումից, անցնում են հարձակման՝ փախուստի մատնելով թուրքերին: Վերջապես սեպտեմբերի 10-ի երեկոյան ֆրանսիական 3-րդ նաւախմբի հրամանատարությունը հայտնում է իր որոշումը. նպատակահարմար չէ զենք ու ռազմամթերք տրամադրել հայ ապստամբներին կռիվը շարունակելու համար և ոչ էլ նոր ճակատ բացել Միջերկրականի այդ մասում. նրանք պատրաստ են բոլորին փոխադրել ապահով մի վայր: Բայց ո՞ւր, դեռ հայտնի չէր:

Պետք է ասել, որ անգլիական իշխանություններն առանձնապես մեծ հոանդ չեն ցուցաբերել Մուսա լեռան քաջարի պաշտպաններին ապաստան տալու հարցում: Այսպես, երբ ֆրանսիական ծովակալ Դարտիժ դյու Ֆուրնեն հատուկ մեկնում է Կիպրոսի Ֆամագուստա նավահանգիստը և դիմում այդ հարցով կղզու անգլիական նահանգապետին, վերջինս պատասխանում է, թե ինքը «տրամադրելիք տեղ չունի», իսկ Եգիպտոսի բարձր կոմիսարն էլ հայտնում է, թե դիմել է Լոնդոն, բայց պատասխան դեռ չկա: Եվ ահա, ֆրանսիական վեհանձն ծովակալ Դարտիժ դյու Ֆուրնեն, չունենալով դեռ ոչ մի դրական պատասխան, այդ թվում և իր կառավարությունից, իր անձնական պատասխանատվությամբ հրամայում է ժողովուրդին տեղափոխել նավերը: Ֆրանսիական հինգ մարտանավ՝ «Գիշեն», «Դեզե», «Ֆուդր», «Լ'ամիրալ Շարնե» և «Դ'Էստրե» սեպ-

տեմբերի 12-ին մոտենում են ծովափին, խարիսխ ձգում և մակույկներ իջեցնելով ձեռնարկում փրկարար աշխատանքներին, որոնք տևում են երեք օր: Այդ դժվարին գործի ղեկավարությունն իր վրա է վերցնում «Դեզե» հածանավի վրա ծառայության մեջ գտնվող ֆրանսիական ծովային սպա Տիրան Թեքեյանը, վեհանձն ու մարդասեր մի հայորդի, որը հետագայում էլ չափազանց մեծ հոգատարություն է հանդես բերել գաղթական իր հայրենակիցների նկատմամբ:

Վերջապես, սեպտեմբերի 14-ին Մուսա լեռան պարպումն ավարտված էր: Ամենավերջինը իրենց դիրքերը լքում և նավ են բարձրանում լեռան քաջարի պաշտպանները՝ զենքը ձեռքներին:

Ահա թե ինչպես է նկարագրում այդ անմոռանալի պահը վերոհիշյալ Տիրան Թեքեյանը:

«Երբ կիներեն, ծերունիներեն և տղաներեն վերջինը նավ դրված էր, հայկական 20 զորախմբերը, միաժամանակ ձգելով իրենց լեռնային դիրքերը, զանազան կողմերեն ծովափ եկան, և ես ան ատեն տեսա, որ ձորերեն ծայր կուտային, խմբակ առ խմբակ, հուժկու և խրոխտ պատերազմիկներ՝ կուրծքերնին փամփշտակալներով զարդարված»[9]:

Փրկվածների ընդհանուր թիվն էր 4058, որոնցից 1563-ը երեխաներ էին, իսկ 2495-ը՝ կանայք ու տղամարդիկ: Փրկարար նավերն ուղղություն են վերցնում դեպի եգիպտական Պորտ-Սաիդ նավահանգիստը, ուր մուսալեռցիներին սպասում էր վրանաբնակ կյանք՝ ընդհուպ մինչև համաշխարհային պատերազմի ավարտը: Մինչ այդ, սակայն, փրկված մուսալեռցիների միջից զգալի թվով խիզախ երիտասարդներ (մոտ 600 հոգի) ցանկություն են հայտնում շարունակելու պայքարը թուրք ցեղասպանների դեմ՝ մըտնելով Արևելյան լեգեոնի մեջ: 1918-ի սեպտեմբերի 19-ին հայ լեգեոնականները փառքով իրենց պսակեցին Պաղեստինի Արարա բարձունքի վրա տեղի ունեցած հայտնի ճակատամարտում, իրենց անձնազոհ խիզախությամբ մեծապես նպաստելով ձեռք բերված հաղթանակին:

Առաջին համաշխարհային պատերազմում Օսմանյան կայսրության կրած խայտառակ պարտությունը արաբական երկրներին հնարավորություն ընձեռեց թոթափել թուրքական

դարավոր լուծը: Մասնավորապես Սիրիան, որի տարածքում էր գտնվում Սուեդիան իր հայկական գյուղերով, անցավ Ֆրանսիային, որպես մանդատային տերիտորիա և բոլոր մուսալեռցիները 1919-ի հուլիս-նոյեմբերի ընթացքում վերադարձան իրենց բաղձալի պապենական լեռնաշխարհը: Ցավոք, միայն 20 տարի տևեց նրանց խաղաղ ու շինարար աշխատանքը հարազատ վայրերում: 1939-ի հունիսի 23-ին Փարիզում կնքված Ֆրանս-թուրքական համաձայնագրով Ալեքսանդրետի սանջաքն անցավ Թուրքիային և, բնական է, որ մուսալեռցիները հրաժարվեցին վերադառնալ թուրքական տիրապետության տակ: Նրանց այլևս ոչինչ չէր մնում, քան նորից բռնել գաղթականության ճամփան: Նույն թվականի հուլիս-օգոստոսին հայաբնակ գյուղերի ողջ բնակչությունը՝ շուրջ 5 հազար մարդ, փոխադրվեց Լիբանան, Այնճար անունը կրող ընդարձակ բացատը, ուր մուսալեռցիները լծվելով շինարար աշխատանքի, կարճ ժամանակում կյանքի կոչեցին իրենց նոր բնակավայրը: Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո, 1946—1947 թթ. մուսալեռցիների մի զգալի մասը՝ ավելի քան 650 ընտանիք, ներգաղթեց Խորհրդային Հայաստան, բնակություն հաստատելով Երևանում և Էջմիածնի շրջանում: Այստեղ գտնվող Գիհնեվետ ավանը 1972-ին վերանվանվեց Մուսալեռ, ուր վեր է խոյանում Մուսա լեռան հերոսամարտի հոյակապ հուշարձանը (ճարտարապետ Ռաֆայել Իսրայելյան):

Խոսելով Մուսա լեռան հերոսական ինքնապաշտպանության մասին, այսօր չափազանց կարևոր է հիշատակել նրա պատմական որոշ դասերը, նրա այժմեական հնչողությունն ու հրատապ արդիականությունը, որովհետև ազգայնամոլ այն ուժերը, որոնք երեկ փորձում էին վերջ դնել մուսալեռցի հայերի և ընդհանրապես հայ ժողովրդի գոյությանը, այսօր էլ կենսունակ ու վտանգավոր են:

Այս տեսանկյունից դիտելով առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Օսմանյան կայսրությունում ծավալված իրադարձությունները՝ Հայկական եղեռնը, արևմտահայերի ինքնապաշտպանական մարտերը, Արևմտյան տերությունների դիրքորոշումը և այլն, մենք պիտի արձա-

նագրենք, որ մուսալեռցիների օրինակը տակավին մնում է որպես մի կանխազգուշացում և զգոնության ահազանգ՝ ուղղված համայն աշխարհին, ահազանգ, որին ինչպես գրում է Լենինգրադում լույս տեսնող «Զվեզդա» ամսագիրը, «աշխարհը ժամանակին չանսաց» և չուզեց հասկանալ, որ հայերի ցեղասպանությունը, որի դեմ ընդվզեցին քաջարի մուսալեռցիները, «ընդամենը նախերգանքն էր եվրոպական մի շարք ազգերի ու ազգությունների բնաջնջման»: Մինչդեռ նման եզրակացության էր հանգել «Մուսա լեռան քառասուն օրը» անմահ վեպի հեղինակ, մեծ հումանիստ Ֆրանց Վերֆելը, որն «իր ժամանակակիցներից շատ առաջ կանխագուշակեց, թե ինչ աղետներ կբերի գերմանացի ժողովրդին խաբած ու նրան իր կամքին ենթարկած մի խումբ բախտախնդիրների դիկտատուրան: Ի դեմս Հիտլերի, Հիմլերի, Գյորինգի ու Գեբելսի,— կարդում ենք նույն ամսագրում,— նա ճանաչեց Էնվերի, Թալեաթի, Ջեմալի ու Նազըմի բնավորությունները և մարդկությանը կոչ արեց ի սեր բարության զինված մենամարտի մեջ մտնել չարության դեմ»[10]:

Մուսալեռցիների մյուս դասը այն է, որ ազատությունը խեղդողների դեմ պետք է պայքարի ելնել թեկուզ փոքրաթիվ ուժերով, նույնիսկ այն դեպքում, երբ այդ պայքարը խիստ անհավասար է: Հիրավի, կարող է հարց ծագել, արդյո՞ք արկածախնդրություն չէր հայերի լեռ բարձրանալը: Ժամանակը պատասխան տվեց այդ հարցին. ո՛չ, արկածախնդրություն չէր, այլ միակ ճիշտ ելքը ստեղծված պայմաններում: Ընդհակառակը, արկածախնդրություն կլիներ հազարավոր մարդկանց իթթիհատական մարդասպանների գթությանը թողնելը, բռնագաղթի ճամփան բռնելը, սիրիական անապատների ավազուտներին կուլ գնալը: Ճիշտ է, մուսալեռցիները չմեռան, շնորհիվ իրենց անկոտրում կամքի, կազմակերպվածության ու անսովոր խիզախության, մասամբ նաև երջանիկ պատահականության դիմակայեցին թուրքական բազմահազար զորքերին ու թնդանոթներին, բայց միևնույնն է, եթե նույնիսկ նրանք զոհվեին անհավասար կռվում, նման մահը գերադասելի կլիներ այն

տանջալի մահվանից, որին արժանացան իրենց աքսորյալ հայրենակիցները:

Պատմական ճշմարտությունն, այսպիսով, այն պարզ իրողությունն է, որ բռնություններին ու հալածանքներին, ջարդերին ու տեղահանություններին օրինաչափորեն ու անխուսափելիորեն հակադրվում են և պիտի հակադրվեն հուզումներն ու ապստամբությունները, պայքարն ու ինքնապաշտպանությունը: Այլ կերպ ասած՝ չլինեին ջարդն ու տեղահանությունը, չէր լինի և մուսալեռցիների ընդվզումը: Միայն այսպես, և ոչ թե հակառակը, ինչպես փորձում են ներկայացնել պատմության թուրք կեղծարարները:

Իմիջիայլոց, հին ու նոր բռնությունների անմիջական կապը շատ հաջող է բացահայտել ռուս ականավոր բանաստեղծ Միխայիլ Դուդինը Ֆ. Վերֆելի «Մուսա լեռան քառասուն օրը» վեպի ռուսերեն թարգմանության փայլուն առաջաբանում: Խոսելով արևմտահայերին «իրենց հայրենիքից, դարավոր բնօրրանից բռնի ուժով տեղահանելու և մահաշունչ վայրեր քշելու» մասին, ուր նրանք «սովի ու անապատային անողոք տանջանքների մեջ դատապարտված էին մահվան», հեղինակն այնուհետև ավելացնում է. «Այդ նույն ձևով, քառորդ դար անց Հիտլերի հրամանով էսէսականներն էին հրեաներին ու լեհերին, ռուսներին ու գնչուներին և բոլոր անցանկալիներին քշելու Օսվենցիմ, Ռավենսբրուկ և Կլոոգ, քշելու էին դեպի գազախցիկները, հորերը, գնդակահարելու էին կանանց, երեխաներին, ծերերին, և ողջ Եվրոպայի օդը հագենալու էր մարդկային մազերի խանձահոտով»:

Զուգահեռ անցկացնելով թուրքական ու ֆաշիստական մարդասպանների միջև, Մ. Դուդինը իրավացիորեն ընդգծում է 1915-ի ողբերգության հերոսական, լուսավոր էջերը, որոնցից մեկն էր մուսալեռցիների սխրանքը: Նա մատնանշում է, որ «Ֆրանց Վերֆելն իր գրքում անդրադարձել է ոչ այնքան զոհերին, որքան հերոսներին, ոչ թե դաժանությանը կրավորաբար հնազանդվելուն, այլ դիմադրությանը, դահիճների ոճրագործությանն ակտիվորեն դիմադրելուն»: Մանավանդ, ավելացնենք, որ Մուսա լեռան ինք-

նապաշտպանությունը ձեռք է բերել համամարդկային հրնչողություն, նպաստել ֆաշիզմի դեմ մղվող պայքարին:

«Այդօրինակ համառությամբ քառորդ դար ևից կմաքառեն Բրեստի և Գանգուտայի, Աջիմուշկայի և Օդեսայի պաշտպանները, Լենինգրադի և Մոսկվայի պաշտպանները,— գրում է ռուս բանաստեղծը:— Քաջության բոլոր եղբայրները մարդկային արժանապատվության համար մղվող ճակատամարտի բոլոր հերոսները»[11]:

Մուսալեռցիների քաջագործությունը ոգևորել է նաև հարավսլավական պարտիզաններին, որոնք շրջապատած լինելով Սլովենիայի Ռոգ լեռան վրա 1942 թ., և շնորհիվ Ֆրանց Վերֆելի վեպի ծանոթ լինելով մուսալեռցիների սխրանքին, կոչ են արձակել՝ «Հայրենիքի համար կռվել այնպես, ինչպես կռվում էին հայերը Մուսա լեռան վրա»: Երեք ամիս դիմադրելով գերմանա-իտալական զորքերին, նրանք ճեղքել են պաշարման շղթան ու փրկվել, և այդ օրվանից Ռոգ լեռը կոչվում է Սլովենիայի Մուսա լեռ:

Մի այլ օրինակ: Լեհ կին գրող Քրիստինա Ժիվուլսկան՝ հիտլերյան մահվան ճամբարների նախկին բանտարկյալը, «Օսվենցիմի դժոխքը» հայտնի գիրք-ողբերգության հեղինակը, նշում է, որ Ֆրանց Վերֆելի վեպի հերոս Գաբրիել Բագրատյանը իր համար դարձել էր պայքարի միակ ճիշտ ձևի խորհրդանիշ, «երբ ինքը կանգնած է եղել կործանման դեմ հանդիման»:

«Ցավոք,— ավելացնում է նա,— հիտլերյան մահվան ճամբարները հնարավորություն չէին տալիս հավաքվելու Մուսա լեռան նման բարձունքի վրա, այնտեղից թշնամուն հարվածելու համար: Դաժանության աստիճանը նույնն էր մնացել, կատարելագործվել էր միայն մարդասպանության տեխնիկան: Բարձր լարվածության էլեկտրական հոսանքին միացած փշալարերի ետևում, Օսվենցիմ կոչվող այդ անհծյալ հողակտորի վրա փակված, ես քանի-քանի անգամ եմ Մուսա լեռ երազել...»

Այսպիսով, մուսալեռցիների պատմական սխրանքի վեհությունն առավել ըմբռնելի է դառնում, երբ մենք գիտակցում ենք, որ Մուսա լեռան գոյամարտի պատմությունը ոգեշնչում է ազատության մարտիկներին՝ ամեն կարգի բռնության դեմ մղվող նրանց պայքարում:

ՍԱՐԴԱՐԱՊԱՏԸ՝ ՖՐԱՆՍԱՀԱՑ ՊԱՏՄԱԲԱՆԻ ՀԱՑԱՑՔՈՎ

Հայ ժողովրդի հազարամյակներ հաշվվող պատմության առավել բախտորոշ, ճակատագրական շրջադարձերի շարքում Սարդարապատն, անշուշտ, գրավում է և կպահի իր առանձին, անկրկնելի տեղը: Եվ որքան էլ տարօրինակ թվա, սակայն փաստ է, որ այդ հերոսամարտի մասին քիչ է գրվել, իսկ նրա շատ հերոսներ տակավին սպասում են իրենց ճշմարտացի գնահատմանը: Ուստի, ողջունելի է ամեն մի նոր գործ, որն օգնում է ամբողջացնելու մեր պատմության այդ փառավոր էջը և հավերժացնելու այդ վսեմ պահը: Նման գրքերից է ֆրանսագիր հայագգի պատմաբան Սերժ Աֆանասյանի ծավալով ոչ մեծ, սակայն վերին աստիճանի բարեխիղճ ուսումնասիրությունը «Սարդարապատի հաղթանակը: Հայաստան, 21—29 մայիս, 1918» վերտառությամբ[1]: Հարցին նվիրված սակավաթիվ գործերի մեջ հիշյալ ֆրանսերեն գիրքն աչքի է ընկնում իր համակողմանի ընդգրկումով: Հեղինակը, տիրապետելով մի շարք լեզուների, ուշադիր կերպով ծանոթացել և լայնորեն օգտագործել է արտասահմանյան, այդ թվում խորհրդային պատմաբանների, ռազմական գործիչների, թուրքագետների աշխատությունները, փաստաթղթերի ժողովածուները, հայ և ռուս մամուլում ժամանակին տպագրված դեպքերի ականատեսների, մասնակիցների ու ժամանակակիցների հուշերն ու գրառումները: Գրքում բազմաթիվ մեջբերումներ կան Խորհրդային Միության մարշալ Հովհաննես Բաղրամյանի «Իմ հիշողությունները» գրքից, պատմաբաններ Աշոտ Հարությունյանի, Երվանդ Սարգսյանի և այլոց ուսումնասիրություններից: Գրքի մյուս արժանիքը խորհրդային հետազոտողին անմատչելի վավերագրերն ու փաստերը գիտական շրջանառության մեջ դնելն է: Պատմաբանը պրպտումներ է արել Ֆրանսիայի արտաքին գործոց ու ռազմական մինիստրությունների արխիվներում, Ստրասբուրգի համալսարանի թուրքագիտական հետազոտությունների ինստիտուտի, Արևելյան լեզուների ինստիտուտի, Քաղաքական գիտությունների դպրոցի գրադարաններում, Փարիզի Նուպարյան մատենադարանում և

այլուր: Եվրոպական լեզուներով լույս տեսած գրականությունից հեղինակն իրավացիորեն առանձնացնում է հերոսամարտի մասնակից հայազգի Ժակ Կայալոֆի 1973-ին անգլերեն տպագրված «Սարդարապատի ճակատամարտը» գիրքը[2]:

Ահա աղբյուրագիտական այս կուռ հիմքի վրա է ծավալում հեղինակը իր հետազոտությունը: Գրքում հիմնականում ճիշտ է բնութագրվում 1918-ի փետրվարին ձեռնարկված թուրքական հարձակման բուն նպատակը: «Էնվեր փաշան գտնում էր,— գրում է Ս. Աֆանասյանը,— որ հասել է ժամանակը իրականացնելու համար պատերազմի սկզբին ձախողված իր երազանքը՝ ոտքի հանել Ռուսական կայսրության մուսուլմանական ազգաբնակչությունը և իր համար ճանապարհ հարթել դեպի «թուրքական» Կենտրոնական Ասիա: 1918-ի փետրվարի 12-ին նա երրորդ բանակին հրաման է արձակում անցնել 1917-ի դեկտեմբերի 5-ին սահմանված դեմարկացիոն գիծը: Առիթը, որն այսուհետև կդառնա դասական,— ավելացնում է հեղինակը,— պերճախոս է. խոսքը գնում է «հայերի կողմից կեղեքվող մահմեդական բնակչության պաշտպանության մասին»[3]: Մինչև 1914-ի ռուս-թուրքական սահմանին հասնելը, թուրքական զորքերը գրավում են Արևմտյան Հայաստանի այն ողջ տարածքը, որն ազատագրվել էր ռուսական զորքերի և հայ կամավորական գնդերի համատեղ ջանքերով:

Գրքում վեր է հանվում ժողովրդական հերոս, ռուսական բանակի գեներալ-մայոր Անդրանիկի ռազմական հմտությունն ու կորովը: Ունենալով միայն երեք հազար հետևակային, 400 հեծյալ և ութ թնդանոթ, Անդրանիկը կարողացավ կազմակերպել Էրզրումի պաշտպանությունը՝ դիմակայելով Կարաբեքիրի եռապատիկ գերակշռություն ունեցող զորքերին: Եվ միայն շրջապատման վտանգը ստիպեց քաջ զորավարին նահանջել՝ գաղթականների երթը դեպի Անդրկովկաս ապահովելուց հետո միայն:

Հեղինակն իրավացիորեն քննադատում է ժամանակակից թուրք պատմաբաններին, ռազմական ու քաղաքական գործիչներին, որոնք երկար պատմություններ են գրիրում թուրքական զորքերի՝ Կովկասյան ճակատում տարած

երևակայական հաղթանակներին, լռության մատնելով Սարդարապատում, Բաշ-Ապարանում և այլուր կրած խայտառակ պարտությունները: Որպես դեպքերի ուշադիր հետազոտող, հեղինակը իր զարմանքն է հայտնում, թե ինչո՞ւ անդրկովկասյան հրամանատարությունը հրաման չէր տվել Էրզրումի ռազմամթերքի պահեստները նախապես ոչնչացնելու մասին և այդ նույն սխալը կրկնել էր Սարիղամիշում, Կարսում և Ալեքսանդրապոլում, երբ Արևմտյան Հայաստանը ետ գրավելուց հետո թուրքերը ներխուժեցին Արևելյան Հայաստանի տարածքը:

Կարսի անկման կապակցությամբ պատմաբանը նշում է, որ թեև հայ մարտիկները լի էին քաղաքը պաշտպանելու վճռականությամբ, սակայն «նրանք դարձան թուրքերի ռազմաքաղաքական դիվանագիտության և անդրկովկասյան կառավարության անմիաբանության զոհը»[4]: Եվ հենց այդ կառավարությունն էր,— ավելացնում է հեղինակը,— Ա. Չխենկելու գլխավորությամբ, համառորեն պնդում, որ թուրքերը Կարսից դենը չեն գնա, կանգ կառնեն Արփաչայի ափին, այլ ժամանակ երբ զորավար Անդրանիկը Կովկասյան բանակի գլխավոր շտաբ ուղարկած իր հաղորդագրության մեջ զգուշացնում էր, որ «թուրքերի հարձակումն անխուսափելի է»:

Գրքում բերվում են ուշագրավ փաստեր Սարդարապատի ճակատամարտի նախօրյակին ստեղծված ծանր իրավիճակի մասին: Այսպես, զորավար Սիլիկյանը, որի հրամանատարական կետը գտնվում էր Գևորգյան ճեմարանի շենքում, տեղեկացնում էր գլխավոր շտաբին, որ «դրությունը ողբերգական է», և որ ինքը «կորցրել է հեղինակությունը զորքերում»: Հաջորդ օրը՝ մայիսի 19-ին նա այցելում է Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ V-ին և առաջարկում նրան տեղափոխվել առավել անվտանգ վայր՝ Սևանա լճի շրջան, որին հետևում է արժանապատվությամբ լեցուն մի պատասխան. «Եթե հայկական ուժերն ի վիճակի չեն պաշտպանելու այս սրբազան վայրը, ապա ես ինքս կանեմ այդ, հոգ չէ, թե կզոհվեմ հազարամյա Մայր տաճարի շեմին»: Եվ պատմաբանն իրավացիորեն եզրակացնում է.

դրությունն այնպիսին էր, որ նահանջելն անմտություն կլիներ, «պետք էր հաղթել կամ մեռնել»[5]:

Գրքում տրվում է ինքնապաշտպանության առանձին կազմակերպիչների ու անմիջական ղեկավարների անաչառ գնահատականը: Այսպես, 1915-ի, Վանի ինքնապաշտպանության ղեկավար Արամ Մանուկյանի մասին ասված է հետևյալը. «Ողբերգական այդ ժամերին Արամը, ինչպես երբեմնի Վարդանը Ավարայրի ժամանակ, ի հայտ բերեց այդ հիշարժան էպոպեային վայել քաջություն: Նրա անհողդողդ վճռականությունը՝ ամեն գնով պաշտպանելու քաղաքը (Երևանը— Ռ.Ս.), փոխանցվեց Սիլիկյանին, և այս վերջինը, որ դեռ նախօրյակին տատանման մեջ էր, իր տեղակալ Վեքիլովի հետ միասին մշակեց գործողության պլանը, որի իրականացումը վստահվեց ռուսական բանակի գեներալ Դանիելբեկ Փիրումյանին և նրա օգնական, ծագումով էլզասցի կապիտան Շնեուրին»[6]:

Շարադրելով թուրք զավթիչների դեմ հայ ժողովրդի մղած այդ դյուցազնամարտի պատմությունը, հեղինակը հիշատակում է Խորհրդային Միության մարշալ Հովհաննես Բաղրամյանի մասնակցության մասին՝ հենվելով նրա «Հիշողությունների» վրա: Նկարագրվում են նաև գնդապետ Պավելբեկ Փիրումյանի, հետևակային 5-րդ գնդի կազմում մարտնչող ղարաբաղցի հայ զինվորների, արքեպիսկոպոս Գարեգին Հովսեփյանի, Իգդիրի ու Խնուսի հայերից կազմված խմբերի, գնդապետ Սալիբեկյանի հրամանատարության ներքո կռվող գեյթունցի հեծյալների, կապիտան Խորեն Իգիթխանյանի մարտկոցի, փոխգնդապետ Վ. Պերեկրեստովի կամավորների, կապիտան Ամիրխանյանի հատուկ ջոկատների և շատ ուրիշների քաջագործությունները:

Հենց նրանք էին, որ մայիսի 22-ին շոշափելի հարված հասցրին ներխուժողներին: Այդ օրը թշնամին ճակատի դաշտում թողեց 500 սպանված ու վիրավոր և իր ամբողջ շարժական կազմը: «Որոշ թուրք սպաներ,— գրում է հեղինակը,— ձեռքերը վեր բարձրացրած թողություն էին հայցում, գոռալով, որ իրենք ծագումով Թրակիայից են և մասնակցություն չեն ունեցել հայկական ջարդերին»[7]:

Պատմաբանը փորձում է անաչառ վերլուծության ճա-

ձապարհով ի հայտ բերել դեպքերի անմիջական ականատեսների հուշերում, ինչպես նաև դրանք հետազոտողների գործերում արտահայտված այս կամ այն կարծիքի ու գնահատականի ճշմարտացիությունը: Այսպես, հեղինակը նշում է, որ հայկական զինված ուժերը, բաժանվելով երկու մասի, գործնականորեն բաց էին թողել դեպի Երևան տանող ճանապարհը: «Արդյո՞ք դա արված էր թուրքերին ծուղակի մեջ գցելու նպատակով,— հարցնում է հեղինակը:— Եթե դա այդպես է, ապա նման տակտիկան զերծ չէր ռիսկից. կարելի է պատկերացնել, թե ինչ ճակատագիր էր սպասելու Երևանին ու Էջմիածնին, եթե թուրքերը չպարտվեին»[8]: Սակայն կապիտան Կլիչի մարտկոցը շարքից հանում է քրիստոնյա կայանը՝ թուրքական զորքերին զրկելով միակ աղբյուրից, և նրանք, կրակի տակ վերցվելով կապիտան Ցաճատ Հովակիմյանի 6-րդ վաշտի գնդացիրների կողմից, դիմում են խուճապահար փախուստի: Մայիսի 22-ի երեկոյան հետևակային V գնդի առաջապահ մարտիկները՝ Վարդան Ջահինյանի ու Միքայել Օհանջանյանի ղեկավարությամբ և փոխգնդապետ Վասիլի Պերեկրեստովի կամավորները ազատում են Սարդարապատ գյուղն ու կայարանը: Հինգ ժամվա ընթացքում թուրքերը նահանջում են 15—20 կիլոմետր, բայց քանի որ նրանց չեն հետապնդում, կարողանում են ամրանալ Թյուլքի-թեփե և Ջիմնի Գիր բարձունքներում՝ Արաքս կայարանից դեպի հյուսիս-արևելք մի քանի կիլոմետր հեռավորության վրա: Իսկ այդ ընթացքում եզդի-քրդերը Ջհանգիր աղայի գլխավորությամբ դուրս են գալիս Արաքսի շրջանում ամրացած մահմեդական անկանոն հրոսակներին: Գլխավոր շտաբի մայիսի 24-ի հաղորդագրության մեջ ասված էր. «Հաջողություն Երևան—Սարդարապատ ճակատում: Թշնամին հետապնդվեց մինչև Արաքս կայարանը: Զորավար Սիլիկյանը տեղեկացնում է, որ զորքերի բարոյական ոգին գերազանց է: Դասալիքները տարերայնորեն զենքերը ձեռքներին վերադառնում են իրենց միավորումները: Ջինվորները պատրաստ են առաջ շարժվելու»: Մեջ բերելով այս փաստաթուղթը և անդրադառնալով այն հարցին, թե ինչպիսի՞ տակտիկա պետք էր կիրա-

ռել Սարդարապատի հաղթանակից հետո, հեղինակը գըտնում է, որ հայ ռազմիկների մարտական ոգին այն աստիճան բարձր էր, որ կարելի էր գնալ Ալեքսանդրապոլի վրա և ազատագրել այն թուրքերից: Այդ էր պահանջում զորավար Դ. Փիրումյանը, սակայն զորավար Թովմաս Նազարբեկյանն արգելում է այդ քայլն անել՝ բավարարվելով աչքի ընկած ռազմիկներին պարգևատրելով: Տեղեկանալով այդ մասին, Դ. Փիրումյանը բացականչում է. «Ես չեմ կարող փոխանցել այդ կործանարար հրամանը հաղթանակած իմ մարտիկներին և ստիպել նրանց նահանջելու այն հողից, որ նրանք նվաճել են իրենց արյունով: Նահանջը նրանց լրիվ կբարոյալքի: Գնացեք ինքներդ կատարեք այդ նողկալի գործը»[9]:

Հեղինակն այն հետևությունն է անում, որ Սիլիկյանի ու Վեքիլովի մշակած պաշտպանական պասսիվ ծրագիրը ի վերջո հանգեցրեց հաղթանակած հայկական բանակի բարոյալքմանը՝ չբերելով ո՛չ մի քաղաքական հաղթանակ: «Ամեն գնով հաշտություն կնքելու ձգտումը՝ մարդկային զոհերից խուսափելու համար,— գրում է Ս. Աֆանասյանը,— ստիպեց չափազանց թանկ վճարելու, քանի որ այն հանգեցրեց այլ արժեքների ոչնչացման, արժեքներ, որոնք նվազ անհրաժեշտ չեն մի ազգի համար, որն ուզում է գոյություն ունենալ և խուսափել կործանումից: Սարդարապատի հաղթանակից հետո հայկական զորքերի մարտունակությունը թերևս կարող էր թույլ տալ ազատագրել Ալեքսանդրապոլը: Հենվելով թուրքական աղբյուրների վրա,— գրում է Ս. Աֆանասյանը,— որոշ հեղինակներ պնդում են, որ օսմանյան շատ սպաներ շտապում էին թողնել քաղաքը և նույնիսկ բարձրանում էին գնացքները»:

«Ամեն դեպքում,— եզրակացնում է ֆրանսագիր պատմաբանը,— հայերի վճռականությունը հասկացնել տվեց թուրքերին, որ այս ժողովուրդը այլևս չի խոնարհվի կատաղի ու դաժան հակառակորդի առջև»[10]:

Գրքում ցույց է տրվում, թե հաղթանակի լուրը ինչպիսի ոգևորություն էր առաջ բերել ամենուր՝ Էջմիածնից մինչև Երևան: Կաթողիկոսը Մայր տաճարում հանդիսավոր պատարագով ոգեկոչեց հիշատակը և փառքը Սարդարապատի

բոլոր հերոսների: Երևանում «բնակչության խանդավառությունն աննկարագրելի էր: Ահել ու ջահել, կին թե երեխա, բոլորը շտապում էին կայարան, որը ձեռքին մի կտոր հաց, որը՝ շաքար ու թեյ, որը՝ ծխախոտ կամ գավաթներով թարմ ջուր՝ մարտիկներին հասցնելու համար: Երիտասարդների խմբերն առաջնորդվում էին դեպի Անգլիական կոչվող պուրակը (ներկայիս Կոմայգի)՝ կամավոր գրվելու համար»:

Ճիշտ է վարվել հեղինակը, համառոտակի կանգ առնելով Բաշ-Ապարանի և Ղարաքիլիսայի ճակատամարտերի վրա և ընդգծելով դրանց նշանակությունը Հայաստանի գոնե արևելյան մասը թուրքական ստրկացումից զերծ պահելու գործում: Որովհետև, պատմական ճշմարտությունը վերհանելու հետ մեկտեղ, մեր ժողովրդի մղած դարավոր ազատագրական ընդվզումներին անդրադառնալը, օտարերկրյա ամեն կարգի զավթիչների դեմ տարած հաղթանակներն ու մեծագործությունները ունեն անժխտելի այժմեականություն՝ հայրենասիրական դաստիարակության առումով, նաև՝ որպես համոզիչ պատասխան պատմության այն կեղծարարներին, ովքեր այսօր էլ դեռ շարունակում են կրկնել, թե իբր հայ ժողովուրդը երբեք չի կարողացել մաքառել իր անկախության համար և այդ իսկ պատճառով երբեք չի ունեցել իր անկախ պետականությունը: Կարծես նման վայ-պատմաբաններին հակահարված տալու նպատակ է հետապնդում հեղինակը՝ մեջբերելով թուրք զորահրամանատար Մեհմեդ Վեհիբ փաշայի հետևյալ խոստովանությունը.

«Բեյլի-Ահմեդում, Կարսում, Ալեքսանդրապոլում, Ղարաքիլիսայում ու Սարդարապատում հայերը ստոիկ կերպով դիմադրեցին... **Սարդարապատում մենք ջախջախվեցինք...»**[11] (ընդգծումն իմն է— **Ռ.Ս.**):

Ամփոփելով մեր խոսքը Սերժ Աֆանասյանի «Սարդարապատի հաղթանակը» արժեքավոր աշխատության մասին, տեղին ենք համարում ավարտել այն հեղինակի եզրափակումով.

«Սարդարապատը խորհրդանիշն է պատվի ու ազատության համար մղված պայքարի, մի պայքարի, որը սահմանչում էր ինքնահրաժարում ու գերմարդկային զոհաբերություններ, մի հրաշք, պայմանավորված ամբողջ մի ժողո-

վըրդի կամքով ու վճռակամությամբ՝ մեռնել զենքը ձեռքին Արարատյան դաշտում, Էջմիածնի պատերի տակ, բայց թույլ չտալ, որ բարբարոսությունն ամբողջացնի իր գործը։ Այդ հաղթանակը անսպառ ոգևորության աղբյուր է։ Նա ապացուցում է, որ այս մարտիրոսացած ժողովրդի երակներում տակավին հոսում է, ինչպես 15 դար առաջ Ավարայրում, արյունն այն հերոսների, ովքեր ստեղծել են նրա պատմության աստեղային ժամերը...»[12]։

1987

ՀԱՃԸՆԻ ՄԱՀՎԱՆՈՒՄՆ ՈՒ ԱՆԿՈՒՄԸ

Լեռնային Կիլիկիայի հինավուրց քաղաքներից մեկը՝ Հաճընը, համաշխարհային առաջին պատերազմից առաջ ուներ 30—35 հազար ազգաբնակչություն[1], բացառապես հայեր, որոնք 1915-ի աճավոր եղեռնի ժամանակ կեղծիքի ու մատնության զոհը դառնալով[2], զինաթափվեցին ու աքսորվեցին Դեր-Զորի անապատները, ուր նրանց մեծ մասը ոչնչացավ։

1918-ի հոկտեմբերի 30-ի Մուդրոսի զինադադարից հետո, դաշնակից տերությունների քաղաքական ու զինվորական պատասխանատու անձինք շոայլ խոստումներ էին տալիս եղեռնը վերապրած կիլիկիահայերին։ 1919-ին Հաճընն այցելած ֆրանսիացի գնդապետ Նորմանը «հավաստիացնում» էր, որ «ասկե ետք ամեն հայ ազատ պիտի ապրի և ոչ ոք պիտի չկրնա վնասել անոր»[3]։

Հավատալով նման սին խոստումներին, Դեր Զորի սպանդանոցներից փրկված ազատասեր ու քաջարի հաճընցիները Հալեպից, Ադանայից, Սսից ու այլ վայրերից միանում են իրենց հարազատ քաղաքը՝ այն ավերակների միջից բարձրացնելու, հայրենի օջախները վերակենդանացնելու համար։ 1919-ի վերջին Բրեմոնի տվյալներով, Հաճընում վերահաստատվել էին 6 հազար հայեր[4]։

Վերապրող հաճընցիները շատ կարճ ժամանակամիջոցում ոտքի կանգնեցրին հրդեհված ու ավերված իրենց քաղաքը, որտեղ միայն ազգային վարժարանի շենքն էր պահպանվել։ Շինարար ու ստեղծագործ ժողովուրդը վերստին դրսևորեց իր անընկճելի կամքը։ Այրված ու քա-

թուքանդ արված տների տեղը նորերը բարձրացան, դրպրոցներ բացվեցին, որքանոց հիմնվեց և այլն: Սակայն կարճ տևեց հաճընցիների այդ խանդավառ աշխատանքը: Մարաշի հաջողությունից քաջալերված, քեմալական սպաներն ու բազմաթիվ լրտեսներ տենդագին գործունեություն են ծավալում նոր չեթեներ կազմակերպելու և Հաճընը պաշարելու ուղղությամբ:

Վերահաս վտանգը հաճընցիները որոշում են դիմավորել կազմակերպված, զենքը ձեռքներին: Հաճընի ինքնապաշտպանության գործը ղեկավարելու համար ստեղծվում է զինվորական բարձրագույն մարմին՝ ազգային հերոս Անդրանիկի նախկին զինվոր Սարգիս Ճեպեճյանի գլխավորությամբ, որն ընտրվում է զինված ուժերի ընդհանուր հրամանատար:

Սարգիս Ճեպեճյանի հրամանով զորակոչի են ենթարկվում 16—50 տարեկան բոլոր տղամարդիկ: Զինված ուժերը բաժանվում են չորս վաշտերի, որոնք կանոնավոր մարզվում են: Զինվորական խիստ կարգապահություն է սահմանվում: Կարգավորվում է պարենավորման գործը, փորվում են խրամատներ և այլն[5]: Սակայն զենքի խիստ կարիք էր զգացվում. ութը հարյուր կովողներից միայն երեք հարյուրը իրենց անձնական զենքն ունեին[6]:

1920-ի փետրվարի վերջերին Հաճընի դրությունը սպառնալից է դառնում: Զինված ուժերի հրամանատար Սարգիս Ճեպեճյանը փետրվարի 22-ին գումարում է ինքնապաշտպանության կոմիտեի ժողով, և տեղեկացնում, որ «այս առավոտ Էվերեկի կողմերեն քաղաք հասած է բարեկամ քուրդի մը զավակը, որ հայտնեց, թե Կեսարիո, Էվերեկի և Ազիզիեի մեջ թուրքերը կհավաքվին շրջակա գյուղերը, կզինվին և կսպասեն ձյունհալին՝ Հաճընո վրա հարձակվելու համար»[7]:

Երկար խորհրդակցելուց հետո ժողովը որոշում է երեք հոգուց բաղկացած մի պատվիրակություն ուղարկել Ադանա գնդապետ Բրեմոնի մոտ՝ Հաճընի վիճակը, շրջակա թուրքերի պատրաստություններն ու ծրագրերը ներկայացնելու և օգնություն խնդրելու համար[8]: Պատվիրակությունը, որի կազմում էին Հաճընի առաջնորդ արքեպիսկոպոս Պետրոս

Սարաճյանը, Հարությունը Խաչատրյանը և Ազգային վարժարանի տնօրեն Օմսալոն Փոսթոյանը, ժողովի կողմից հետևյալ առաջադրանքն էր ստացել.

Առաջին. Անձամբ երթալ և տեսնել ֆրանսիական իշխանության ներկայացուցիչ գնդապետ Բրեմոնին և հանուն Համբնի խնդրել զինվորական և նյութական օգնություն, այսինքն՝ զինվոր, զենք, ռազմամթերք և դրամ։

Երկրորդ. Ի հարկին անձամբ նաև հանդիպելու հանդնցիներին և այլ փափագողներին կամավորական խումբեր կազմել և ղրկել Համբնի։

Երրորդ. Այս ընդհանուր դիմումներու հաջողումի կամ անհաջողումի պարագային հեռագրով հրահանգ տալ Համբնին՝ դիմադրելու կամ անհանձնելու[9]։

Նույն օրը՝ փետրվարի 22-ին, հիշյալ պատվիրակությունը, յոթ ոստիկանների ուղեկցությամբ ճանապարհ է ընկնում և հաջորդ օրը հասնում Սիս, որտեղ նա ստիպված է լինում մնալու մեկ շաբաթ՝ ճանապարհների անանցանելիության պատճառով։ «Անիրողջ դաշտը չեթեներով լեցուն էր,— գրում է իր հուշերում Պ. Սարաճյանը,— ոչ միայն ճամփորդները կկողոպտեին, այլ նաև այն թուրք գյուղերը, որ չեթեներուն չէին միանար, կթալանվեին ու կհրկիզվեին»[10]։

Փետրվարի 24-ին Սսի մայրավանքում պատվիրակության անդամները տեսնվում են քաղաքի ֆրանսիական կառավարիչ կապիտան Թայարդալի հետ և հայտնում նրան իրենց առաքելության նպատակը։ Վերջինս հայտարարում է, որ «գնդապետ Պրեմոն կգրի զենք ու ռազմամթերք տալու, սակայն երբեք մի սպասեք, որ կրնանք զինվոր տրամադրել Համբնի պաշտպանության համար կամ զենքի տեղափոխման համար»[11]։

Պատվիրակությունը, այնուամենայնիվ, որոշում է հասնել Ադանա և փորձել օգնություն կազմակերպել թուրքական հրոսակների կողմից օղակվող Համբնին։

Մարտի 4-ին, Սսից Տարսոն փոխադրվող ֆրանսիական մի ջոկատի ընկերակցությունից օգտվելով, պատվիրակությունը շարունակում է իր ուղին և մարտի 5-ի երեկոյան հասնում Ադանա։ Մարտի 7-ին Համբնի պատվիրակու-

թյունը Միհրան Տամատյանի հետ ներկայանում է գնդապետ Բրեմոնին, որը, ըստ էության, նույն պատասխանն է տալիս, ինչ որ Թայարդան, միայն խոստանում է զենք և պարեն հայթայթել, եթե հայերից կազմվեն կամավորական խմբեր՝ Հաճընն գնալու համար: Մարտի 9-ին 200 երիտասարդներ պատրաստ էին մեկնելու, սակայն զինվորական իշխանությունները, հակառակ Բրեմոնի խոստման, հրաժարվում են նրանց զենք տալ պատճառաբանելով, որ նրանք պետք է հասնեն Սիս և այնտեղ միայն զինվեն, թեև նրանց քաջ հայտնի էր, որ ամբողջ Չուքուր-օվան լի էր քեմալական չեթեներով: Հետևյալ օրը, մարտի 10-ին, Հաճընի պատվիրակության անդամները կրկին այցելում են Բրեմոնին, որը հավաստիացնում է նրանց, թե կատարվածը «թյուրիմացություն է եղած, թող 200 երիտասարդները մեկնեն այս իրիկուն, ես կպարզեմ հարցը»[12]: Նույն օրը հայտնի է դառնում, որ այն զենքն ու ռազմամթերքը, որ ֆրանսիական զինվորականները խոստանում էին Սսում տրամադրել հայ կամավորներին, ամբողջությամբ ընկել է թուրք չեթեների ձեռքը: Արդեն հիշատակված Սսի կառավարիչ Թայարդան, սսեցի և հաճընցի 80 երիտասարդների (ժանդարմներ և կամավորներ) հանձնարարում է մեծ քանակությամբ հրացան, փամփուշտ և պայթուցիկ նյութեր փոխադրել Հաճընն, սակայն ոչ թե սովորական ճանապարհով, այլ Յաղբասանի վրայով, ուր թուրքական գյուղերն ավելի շատ էին: Վերջիններս, սակայն, խոհեմություն հանդես բերելով, որոշում են գնալ ճիշտ հակառակ կողմից՝ լեռների միջով, առավել ապահով և կարճ ճանապարհով, սակայն մեկնելու պահին Թայարդան տեղեկանում է նրանց մտադրության մասին և խստիվ հրամայում գնալ իր կողմից նախընտրած ճանապարհով: Քեմալական բազմաթիվ ջոկատներ հենց դրան էին սպասում. նրանք շրջապատում են հայ կամավորներին և կատաղի կռվում ոչնչացնում նրանց մեծ մասին: Միայն 18—20 հոգու, վիրավոր վիճակում, հաջողվում է ազատվել: 40 բեռ ռազմամթերք ընկնում է չեթեների ձեռքը[13]:

Ահա այսպիսի վախճան ունեցավ ֆրանսիական զինվորական իշխանությունների «օգնությունը» Հաճընին: Մի

քանի օր հետո՝ մարտի 14-ին Բրեմոնը Պետրոս արքեպիսկոպոս Սարաճյանին և Միհրան Տամատյանին ավելի բացորոշ և կտրուկ կերպով արտահայտեց այդ նույն զինվորականության բռնած դիրքը. «Ավելորդ և ապարդյուն է դժվարին լեռներով Հաճընին օգնություն ուղարկել, կամ կամավորական գնդեր ղրկել. զինվոր ղրկելու մասին խորհել անգամ ավելորդ է...»[14] (ընդգծումն իմն է— Ռ. Ս.):

Այսպիսով, Ֆրանսիայի պաշտոնական ներկայացուցիչը Կիլիկիայում, «մոռանալով» իր կառավարության կողմից հայերին տրված «երաշխիքները», հայտարարում էր, որ ո՛չ մի ֆրանսիացի զինվոր չի ուղարկվելու հաճընցիներին պաշտպանելու համար[15], նաև գտնում, որ ավելորդ է հայ կամավորական գնդեր ուղարկել Հաճընի[16]:

Ի՞նչ էր մնում անելու նման պարագայում, երբ ռազմական ոչ մի օգնություն չէր հասցվելու Հաճընին, իսկ այնտեղից նույն օրը՝ մարտի 14-ին ստացված հեռագրում (որը Հաճընից ուղարկված վերջին հեռագիրը եղավ) աղերսագին ասվում էր, որ եթե «օգնություն չը փութաք, գիտցեք, որ Հաճընն ջնջված է երկրի վրայեն»:

Երկու ընտրություն կար.

կազմակերպված ճահճանջել Սիս, քանի դեռ Հաճընը լրիվ օղակված չէր քեմալական հրոսակների կողմից, կամ մնալ և ընդունել անհավասար կռիվը, ավելի ճիշտ, գիտակցորեն մահվան դատապարտել Հաճընի վեց հազարից ավելի ազգաբնակչությանը, այդ թվում կանանց և երեխաներին:

Բանականությունը թելադրում էր նախընտրել առաջինը և ճահճանջել: Այդպես էին մտածում հաճընցիները և Ադանա ուղարկված ներկայացուցիչները: Մարտի 14-ին էլ Հաճընի պատվիրակության ղեկավար Պետրոս արքեպիսկոպոս Սարաճյանի ստորագրությամբ հեռագիր է ուղարկվում Հաճընը՝ անհապաղ ճահճանջելու խորհրդով: Հեռագիրը հասնում է Հաճընը[17]:

Սակայն այլ մոտեցում ուներին Հաճընի պաշտպանության հարցին Կիլիկիայի Ազգային խորհրդի ազդեցիկ անդամները՝ Միհրան Տամատյանի գլխավորությամբ: Ինչպես գրում է իր հուշերում «Հաճընի օգնության արշավախմբի արտակարգ հանձնախումբի» ատենադպիր Կարապետ Ոզ-

միրլյանը, «Կիլիկիայում բարձր քաղաքականություն ընողները հաճընցիներուն ճահճնջը կնկատեին ո՛չ միայն ճվաստություն, այլև այդ շրջանին նկատմամբ ազգային իրավունքներու ժխտում»[18]: Նույն օրը, մարտի 14-ին Մ. Տամատյանը, խաբվելով գնդապետ Բրեմոնի՝ իրեն հասցեագրված 1920-ի մարտի 14-ի թվակիր նամակում արտահայտած այն կարծիքով, թե հաճընցիների «ամբողջական մեկնումը առանց կովի Եվրոպայի առաջ իրենց համար պիտի ըլլա վնասակար», և որ «Հայաստանի բարձր համբավին տեսակետովը անհրաժեշտ է, որ այդ ճահճնջը չկատարվի»[19], հետևյալ հեռագիրն է ուղարկում Հաճընն.

«Հաճընն. Հայ Ազգային Միություն:

Գաղթը ազգային արժանապատվության դեմ է: Դուք հայու վայել և հաճընցիի քաջությամբ կռիվը շարունակեցեք, քանի մը օրվան մեջ ձեզի 1200 հոգինոց օգնական ուժ պիտի հասնի: Օդանավ ալ պիտի ղրկենք: Ս. Սարգիսի բլուրին վրա ճերմակ խաչ մը շինեցեք, որպեսզի ծրարները հոն նետե:

14 մարտ 1920:

Մ. Տամատյան
Հարաւվաճառական պետեր
Հաճընի Հայր. Միություն»[20]:

Այսու օրը՝ մարտի 15-ին, Մ. Տամատյանը հրավիրում է Ազգային միության և միջկուսակցական խառը ժողով՝ Հաճընի խնդիրը քննության առնելու համար: Հիշյալ ժողովում նա տեղեկացնում է, որ Բրեմոնը Սահ ֆրանսիական կառավարիչ կապիտան Թալարդայի միջոցով հեռագրական հրաման է տվել Հաճընի տեղակալ (կայմակամ) Կարապետ Չալլանին, որ «պատրաստվին հանձնել կիները, մանուկները և ծերերը, գոյս դիմավորելու և ապահով կերպով Սիս հասցնելու համար ֆրանսիական իշխանությունը մինչև որոշ վայր մը զինվոր պիտի ղրկեր, իսկ զենք բռնող տղամարդիկ պետք է Հաճընն մնան և զայն պաշտպանեն, որուն ի պատասխան Հաճընի տեղակալը հեռագրած է, թե Հաճընի տղամարդիկ իրենց կիներու, ծնողներու և զավակներու մեկնումն վերջ չեն ուզեր Հաճընն մնալ, միայն Հաճընի ապերասկները պաշտպանելու համար, ուստի որոշած

ևն ամբողջովին ևահանջել»[21]: Միաժամանակ Տամատյանը հայտնում է այն մասին, որ գնդապետ Բրեմոնը իրեն հանձնարարել է «համոզել հաճընցիները, որ բարձրագույն հրամանին համեմատ շարժին»: Բրեմոնի հրամանը՝ Հաճընցի մասնակի ևահանջի վերաբերյալ, երկար վիճաբանությունների նյութ է ծառայում հիշյալ ժողովում, որն ի վերջո որոշում է «հրահանգ տալ Հաճընցի, որ չը ևահանջեն և ամբողջությամբ հոն մնան, և թե պետք եղած նյութական ու զինվորական օգնությունը շուտով պիտի հասնի»: Ժողովը նաև որոշում է, որ այդ հեռագիրը Հաճընց ուղարկվի Պետրոս եպիսկոպոս Սարաճյանի ստորագրությամբ, չիմանալով այն մասին, որ Հաճընցի առաջնորդը նախօրյակին՝ մարտի 14-ին հեռագրել էր հաճընցիներին՝ անհապաղ Սիս ևահանջելու: Տեղեկանալով այդ մասին, ժողովը, որոշ տատանումներից հետո, որոշում է, որ Պ. Սարաճյանը նոր հեռագիր ուղարկի հաճընցիներին, որ նրանք չևահանջեն, այլ մնան քաղաքում[22]: Սարաճյան սրբազանը հրաժարվում է ևահանջի հեռագիրը հերքող նոր հեռագիր ուղարկել, սակայն ժողովը հաշվի չի առնում նրա կարծիքը և Միհրան Տամատյանը, իր անձնական պատասխանատվությամբ հեռագրում է Հաճընց՝ «չը ևահանջել, դիմադրել և օգնության սպասել»[23]:

Իմանալով այդ մասին, Պ. Սարաճյանը հայտարարում է, որ ճակատագրական սխալ է թույլ տրվել, և հանձնարարում է պատվիրակության անդամ Ծ. Փոսթոյանին անհապաղ Հաճընց ուղարկել հետևյալ հեռագիրը.

«Երեկվան հեռագիրս կհաստատեմ, կետ առ կետ գործադրեցեք, առանց ուրիշներուն մտիկ ընելու»[24]:

Ի մեծ դժբախտություն հաճընցիների, այս վերջին հեռագիրը Հաճընց չի հասնում, որովհետև նախօրյակին հեռագրաթելը Վահկայի և Հաճընցի միջև խզվել էր, և պաշարված հաճընցիները այլևս ոչ մի հեռագիր չստացան արտաքին աշխարհից: Այսպիսով, վերջին հեռագիրը, որ ստացան չեթեների կողմից օղակված հաճընցիները, դա Մ. Տամատյանի վերը բերված հեռագիրն էր, որն, իսկապես, ողբերգական հետևանքներ ունեցավ քաղաքի 6 հազար հայ ազգաբնակչության համար: Եվ այդ բանը հայտնի դարձավ

Հաճընի անկումից հետո միայն, երբ պաշարման շղթան ճեղքած և մահից փրկված Հաճընի ինքնապաշտպանության կոմիտեի անդամներից մի քանիսը պատմեցին եղելությունը. մարտի 14-ին ստանալով Պ. Սարաճյանի հեռագիրը, հաճընցիները ժողովի են հավաքվում, որոշում ունկնդրել իրենց առաջնորդին, և նահանջի պատրաստություններ են տեսնում, սակայն մարտի 15-ին ստանալով Մ. Տամատյանի հեռագիրը, եզրակացնում են, որ քաղաքականությունը փոխվել է, օգնության հույս կա, և ամիսներով սպասում վերջինիս խոստացած օգնությանը[25], որը նրանք այդպես էլ չստացան: Այստեղ պետք է ասել, որ եթե նույնիսկ ֆրանսիական զինվորական իշխանությունները մեծ քանակությամբ զենք և ռազմամթերք տրամադրեին քաջարի հաճընցիներին, միևնույն է, վերջիններս ի վիճակի չէին լինի երկար ժամանակ պաշարված վիճակում պաշտպանական կռիվներ մղելու քեմալական կանոնավոր զորքերի դեմ, որոնց թիվը օրըստօրե բազմապատկվում էր: Առանց Հաճընի ռազմական գրավման հնարավոր չէր պաշտպանել քաղաքը քեմալական հրոսակներից: Մինչդեռ, ինչպես վերը տեսանք, ֆրանսիական իշխանությունները Կիլիկիայում ամենևին էլ մտադիր չէին զորք ուղարկել Հաճընի, թեև նրանք հայտարարում էին, որ «այդ քաղաքը և նրա տերիտորիան, անկասկած, ֆրանսիական օկուպացիայի և վարչության գոտու մասն են կազմում»[26]:

Այսպիսով, Ֆրանսիայի իմպերիալիստական շրջանների և Մերձավոր Արևելքում նրանց ծրագրերն իրականացնող զինվորականության խարդախ, հայերի համար աղետաբեր քաղաքականությունը մի կողմից, և կիլիկիահայության բախտի տնօրինումը ստանձնած հայ ազգային մի քանի ղեկավարների անհեռատես քայլերը՝ մյուս կողմից, հնարավորություն ընձեռեցին Անկարայի ղեկավար շրջաններին՝ շարունակելու երկիրը հայերից մաքրելու թուրքական ավանդական քաղաքականությունը, Մարաշից հետո սրի քաշելով Հաճընի վեց հազար հայությունը, որը, 8-ամսյա խիզախ դիմադրությունից հետո, բնաջնջվեց քեմալական հրոսակների կողմից:

Մեր խնդրից դուրս է հանգամանորեն լուսաբանելու

Հաճընի հերոսական ինքնապաշտպանության պատմությունը, որն ի մի է բերվել այդ հերոսամարտի մասնակից Սոկրատ Թերզյանի կողմից[27], սակայն հարկ է այստեղ անդրադառնալ այդ պայքարի առանձին դրվագներին:

Ինչպես ասվեց, 1920-ի մարտի 15-ից Հաճընը լրիվ շրջապատված վիճակում էր, իսկ հեռագրային կապը արտաքին աշխարհի հետ՝ խզված: Սակայն տեղեկանալով հաճընցիների ինքնապաշտպանական միջոցառումների մասին և ծանոթ լինելով նրանց դիմադրական կորովին, Կիլիկիայի ետգրավման քեմալական բանակի հրամանատար Կոզան օղլու Դողանը կռվի առաջին օրերին փորձ է անում կեղծիքի ու խորամանկության օգնությամբ հանդուգն հաճընցիներին դադարեցնելու կռիվը և անձնատուր լինելու: Մարտի 17-ին նա Հաճընի ինքնապաշտպանության կոմիտեին նամակ է ուղարկում՝ «իրարհասկացողության գալու և վեճերն ու պատակտիչ հարցերը հարթելու» կեղծ առաջարկությամբ և 12 օր բանակցություններ վարում վերջինիս հետ:

Մարտի 28-ին ուղարկված Դողանի խարեպատիր վերջին նամակը արդեն վերջնագրի բնույթ էր կրում.

«Հաճընցիներ, թուրք կայսրությունը ճիշտ հոչակած է: Անատոլուի բազմացեղ բնակչությունը անխտիր, ազգային գերապանծ դրոշին տակ համախմբված, կկռվի արիաբար, հանուն թուրք ազգի ազատության: Ցավալի է, որ մեր ազգային շարժումին տարբեր նկատումներ կվերագրեք: Մեր նպատակն է 18 ամիսներեն ի վեր կապիտուլյատ Ֆրանսայի արյունաթաթախ դրոշին ներքև հեծող մեր թուրք ազգակիցները ազատագրել և վտարել մեր սրբազան հողեն անոր վայրագ զորքերը: Ձեր ներքին պատրաստությունները, որքան ալ անպարտելի նկատվին, անկարող են մեր բանակին դեմ երկու ժամ դիմադրելու: Արդ, անմիջապես պետք է հանձնեք ֆրանսացիներուն կողմե բաժանված զենքերն ու ռազմամթերքները, որոնք ապերախտ Ֆրանսան մեզմե գրավեց:

Բացեք մեր ճամփան, որ շարունակենք իրագործելու շերիաթի հրամանը, որ է՝ զոհել ամեն բան, փրկելու համար Անատոլուի ընդհանուր հողամասը՝ Կիլիկիան:

Եթե մեր պահանջները չընդունիք, ձեր «օլուխ-չոճուխ-ներուն մեղքը վիզերնիդ ըլլա»[28]։

Այս նամակին Հաճընի ինքնապաշտպանության կոմիտեն հետևյալ պատասխանն է տալիս.

«Եթե ձեր նպատակը Ֆրանսան վտարելն է Կիլիկիայեն, ոտ որևէ ֆրանսական սպա և զորք չկա. թուրքերը լավ գիտեն այս պարագան։

Ահա Ֆրանսան և դուք։ Հաճընը Կիլիկիո ճանապարհը չէ և ոչ ալ անոր պատվարը։ Ատանա քանի որ Կիլիկիո մայրաքաղաքն է, առաջին առթիվ պետք է զայն գրավեք։ Այդ պարագային մենք սիրով կհամակերպինք թրքական վարչության վերահաստատումին։ Ատանան գրավվելու պարագային հանձնախումբ մը կուգա և անոր որոշումները սիրով կընդունինք։ Որքան այտեն Ատանա և Սիս կմնան ֆրանսական իշխանության տակ, անկարելի է, որ զինադադար ըլլանք։

Վեց հարյուր տարիներե ի վեր թուրք գերիշխանության լուծին տակ ապրեցանք որպես ստրուկներ՝ ամեն հարցուտահարության տոկալով։ Ահա Հաճընը։ Ո՞ւր են պալատանման մեր տուները։

Թողեք պարոններ, մեզ ազատ, որպեսզի խաղաղ կյանք մը ապրինք։

Այո, գիտենք ձեր ծրագրին ներքին ծալքերը. ջարդել, քանդել ու մոխրի վերածել, ինչ որ հայկական է...

Մենք չենք հնազանդի այն պայմաններուն, որոնք հակառակ են մեր շահերուն։ Թողեք մեզ ազատ, որ կարենանք Մաղարայի թուրքերուն հետ պապենական բարեկամությունը անվրեպ պահել»[29]։

Հաջողության չհասնելով, Դողան-բեյը դիմում է մի այլ խորամանկության՝ անուղղակի բանակցությունների, Հաճընը տպարկելով քաղաքի արվարձաններից մեկում՝ Գրտեթում գտնվող ամերիկյան որբանոցի միսիոներուհի տիկին Իրինի[30]։ Հաճընցիները, սակայն, անցյալի դառը փորձից իմաստնացած, հրաժարվում են հանձնել իրենց զենքերը, ասելով, որ դրանք բացառապես ինքնապաշտպանության համար են և ուրիշ նպատակի չեն ծառայելու։

Ապրիլի 16-ին թուրքերի կողմից Հաճընն են ուղարկվում

անգլիական նպաստամատույցի ներկայացուցիչ պարոն Իպին և Գրտեթի ամերիկյան որբանոցի տնօրենուհի տիկին Քոլտը, իրենց հետ բերելով Դողանի հետևյալ պայմանները.

«1. Թրքական դրոշակ պարզել:

2. Ֆրանսական կառավարության կողմե տրված զենքերն ու ռազմամթերքները հանձնել ամբողջությամբ:

3. Հաստատել Հաճընի մեջ թրքական ազգային կառավարություն, որ իրավասու ըլլա հայ ըմբոստներուն արդար պատիժը տնօրինելու»[31]:

Այս պայմանները, բնականաբար, չէին կարող ընդունվել հաճընցիների կողմից: Ինքնապաշտպանության կոմիտեն քննության է առնում Դողան-բեյի «նոր» առաջարկները և «նկատի ունենալով, որ ներկայացված պայմանները Հաճընի ժողովուրդին կյանքին ու ինչքին վստահություն չեն ներշնչեր, և որ վեց հազար հայության գոյության դեմ խորհրդավոր դավ մը թագնված է երեք առաջարկներուն մեջ», մերժում է դրանք[32]:

Հաճընցիների համառությունից կատաղած՝ թուրքական հրամանատարությունը նոր ուժեր է կենտրոնացնում Հաճընի շուրջը և ուժեղ ռմբակոծության ենթարկում քաղաքը: Ապրիլի 30-ին թուրքերն անցնում են հարձակման, սակայն հարյուրավոր զոհեր տալով, ստիպված են լինում ետ նահանջել: Հակահարձակման ժամանակ հաճընցիների ձեռքն ընկած մի փաստաթղթից հայտնի է դառնում, որ Դողանբեյը, որը Էվերեկից, Վահկայից, Կեսարիայից և Ագիգիեից մի շարք երևելի թուրքերի հրավիրել էր Հաճընի անկման «հարսանիքին» մասնակցելու, անհաջողություն կրելով, հետևյալ հեռագիրն էր ուղարկել Անկարա՝ Մուստաֆա Քեմալին.

«Մեր հարձակումներն ապարդյուն անցան: Հաճընը գրավել անկարելի է: Պիտի ապասեմ, որ անոթութենե ոժաս-պառ՝ անձնատուր ըլլան: Արդեն քանի մը ամսվան բավելիք ուտելիք ունին»[33]:

Հիրավի, շուտով Հաճընի վիճակը առավել ծանր դարձավ: Քաղաքի քաջարի պաշտպանները հատկապես նեղվում էին զինամթերքի պակասից: Մայիսի 30-ին Հաճընից Ադանա հասած երկու սուրհանդակները հայտնում են, որ

ամեն մի հրացանի համար ընդամենը 15 փամփուշտ էր մնացել[34]:

Սակայն հաճընցիներին հասցված ամենածանր հարվածը 1920-ի մայիսի 30-ին կնքված ֆրանս-քեմալական զինադադարն էր, որի համաձայն ֆրանսիական զորքերը լքեցին Սիսը և նահանջեցին Ադանա՝ իրենց հետ տանելով քաղաքի հայ ազգաբնակչությանը և անչափ դժվարացնելով Հաճընին օգնության փութացող հայ կամավորների ջանքերը: Միաժամանակ, «Սսի պարպումով,— նշում էր այդ ժամանակ Կիլիկիայում գտնվող Զապել Եսայանը,— դաշտային Կիլիկիան իր բոլոր դռները կբանար թշնամիին առաջ՝ առանց այլևս ունենալու որևէ ռազմական հենակետ»[35]:

1920-ի հունիսի 14-ին Մ. Տամատյանը իր մոտ հրավիրելով Հաճընի Հայրենակցական միության անդամներին և մի քանի հաճընցիների, հայտնում է նրանց, որ պաշարված Հաճընի ժողովրդի ֆիզիկական գոյությունը փրկելու միակ ելքը այևս մնում է հաշտվել թուրքերի հետ և կռիվը դադարեցնել, ուստի, նա առաջարկում է, որ Հաճընի Հայրենակցական միությունը այդ մասին մի նամակ ուղարկի հաճընցիներին՝ իր ծառայությունը բերելու պատրաստ ամերիկյան միսիոներ դոկտոր Տատի միջոցով[36]: Հաճընի ղեկավարները, ի վերջո համաձայնություն են տալիս Մ. Տամատյանի առաջարկին, պայմանով, որ հաշտության պայմանները սահմանվեն վերջինիս կողմից: Նույն օրը Մ. Տամատյանը, հաճընցիների ներկայությամբ և նրանց հետ խորհրդակցելով, իր ձեռքով գրի է առնում ապագա հաշտության պայմանները.

Հաճընցիները պետք է ճանաչեն թուրքական կառավարությունը և դրոշակը, չհանձնելով սակայն իրենց զենքերը:

Քաղաքի ապահովության համար խառը ոստիկանություն պիտի ստեղծվի:

Գ-դիների փոխանակություն պիտի կատարվի հայերի և թուրքերի միջև և այլն[37]:

Վերջապես, Հաճընի Հայրենակցական միության 1920-ի հունիսի 14-ի թվակիր նամակը պատրաստ էր: Նամակի վերջում ասված էր. «Անհեթեթություն պիտի լիներ ասել

ուղղություն տալ Ձեզ, որով առաջադրված կետերը ձեզի կը ներկայացվին թելադրական ձևով և անտարակույս, եթե դուք ալ հարմար տեսնեք, ինչ որ ներկա կացության առջև տրամաբանական է, Ձեզ ուզած և կարելի ձևով կը կարգադրեք զայն երկու չարյաց փոքրագույնը...»[38]: Հիշյալ նամակը, Հաճընի Հայրենակցական միության կնիքով կնքված և նրա անդամների կողմից ստորագրված, հանձնվում է Մ. Տամատյանին՝ օդանավով Հաճըն ուղարկելու համար, սակայն մի քանի օր հետո ետ է վերադարձվում այն առարկությամբ, թե օդանավով հնարավոր չի եղել հասցնել Հաճըն:

Պետք է ասել, որ դեպքերի ականատեսներից ու մասնակիցներից և ոչ մեկի հուշերում չի նշվում, թե ինչո՞ւ, այնուամենայնիվ, հիշյալ նամակը Հաճըն չհասցվեց: Չէ՞ որ օդանավից բացի, ուրիշ շատ միջոցներ կային, այն կարելի էր ուղարկել հաճընցի սուրհանդակներից մեկի միջոցով (որոնք ինչպես այդ ժամանակ, այնպես էլ ավելի ուշ, լուրեր էին բերում Հաճընի դրության մասին), դոկտոր Տատի կամ մեկ ուրիշ ամերիկյան միսիոների՛միջոցով և այլն:

Սակայն վերը հիշատակված Կ. Իզմիրլյանը իր հուշերում մատնանշում է, որ Հաճըն ուղարկվելիք նամակի լուրը տարածվելուն պես մեծ դժգոհություն ծայր առավ նրա բովանդակության շուրջ: Քննադատում էին առաջ քաշված պայմանները հետևյալ պատճառաբանություններով.

«Թրքական դրոշը և կառավարությունը ընդունիլ պրատ մըն է, և մահ կը նշանակե: Այս ակտը Կիլիկիո հայության սրտին մխված դաշույն մըն է: Մեր իրավունքները մեր իսկ կամքովը ջնջել է: Այլևս բան մը պահանջելու իրավունք պիտի չունենանք, Հաճնո հաշտությենեն դրական օգուտ մը սպասել անհեթեթություն է, հետևաբար նամակը քաջաբար կռվող հաճընցիներուն կորովը ջլատելե զատ ոչինչ կը ծառայե: Ամոթ մըն է, որ Ատանայի մեջ գտնվող այնքան հայությունը Հաճընը լքե: Ազգը, եթե ուզե, ամեն բան կարելի է, Հաճըն կարելի է ուժ դրկել, ազգը պետք է ոտքի ելլե»[39]:

Բերված փաստերից կարելի է ենթադրել, որ նամակը Հաճըն չուղարկելու հիմնական պատճառը, թերևս, եղել է

Ադանայում բնակվող հաճընցիների[40] դժգոհությունը: Այդ է վկայում նաև հունիսի 27-ին Ադանայի Աբգարյան վարժարանի բակում հրավիրված բազմահազարանոց միտինգը, որի բուն նպատակը,— ինչպես նշում է իր հուշերում Կ. Իզմիրլյանը,— գրված նամակին դեմ բողոքելը, «և ժողովուրդը՝ Հաճընը ազատելու համար կամավոր արձանագրվելու հրավիրելն էր»: Հիշյալ միտինգի մասնակիցները գալիս են այն եզրակացության, որ «հերոս Հաճընը պետք չէ որ հաշտություն խնդրե, թուրքին ձեռքը համբուրե: Ազգը անոր կռնակն է, պատրաստ է երթալու...»[41]:

Հաճընի Հայրենակցական միությունը գործի է անցնում. կազմվում է «Հաճընի օգնության արշավախմբի արտակարգ հանձնախումբ», ստեղծվում են զինվորական հավաքի, դրամահավաքի և զինահավաքի գործը կազմակերպող ենթահանձնախմբեր և այլն: 1920-ի հուլիս-օգոստոս ամիսների ընթացքում, սակայն, հաջողվում է հավաքագրել և Ախարճայում կենտրոնացնել ընդամենը 300 կամավորների, գրեթե ամբողջովին հաճընցիներից բաղկացած, այն դեպքում, երբ միայն Ադանայում 100 հազարից ավելի հայեր կային:

Ինչո՞վ էր բացատրվում նման անտարբերությունը մարտընչող Հաճընի ճակատագրի հանդեպ: Մեր կարծիքով, մի շարք պատճառներից հիմնականներն էին.

1. Անվստահությունը ձեռնարկված գործի հաջողության հանդեպ.

2. Հուսալքումը և հիասթափությունը՝ ֆրանսիական կառավարության և զինվորական շրջանների գրաված դիրքից, հատկապես Սևրի պայմանագրից հետո, որի համաձայն Կիլիկիան մնում էր Թուրքիայի գերիշխանության ներքո.

3. Յուրաքանչյուրի ձգտումը առաջին հերթին օգնել իր անմիջական հայրենակիցներին և անտարբերությունը՝ մյուս վայրերից իրենց հայրենակիցների ճակատագրի նկատմամբ (Զապել Եսայանը գրում է, որ «կամավորները շատ կամայական տրամադրություն ունեին. հաճընցիները կուզեին Հաճընը երթալ, զեյթունցիները՝ Զեյթուն և այլն»[42]):

Այս և մյուս պատճառները խանգարեցին ժամանակին կազմակերպելու և մինչև վերջը հասցնելու Հաճընի օգնու-

թյան գործը, որի հաջողությունը, թերևս, հնարավորություն տար պաշարված հաճընցիներին կամավորական ուժերին միացած՝ ճեղքել շղթան և ազատվել բնաջնջումից:

Սակայն մեծ դժվարությամբ կազմված հայ կամավորների փոքրաթիվ ջոկատն անգամ չկարողացավ Հաճընն մեկնել: Օգոստոսի 10-ին կնքված Սևրի պայմանագիրը, որն այնքան սին պատրանքներ ստեղծեց ու չարդարացված ոգևորություն առաջ բերեց համայն աշխարհի հայության մեջ, անսքող կերպով ազդարարում էր, որ Ֆրանսիան Կիլիկիան «զիջում» է Թուրքիային: Եվ Սևրի պայմանագրի անմիջական հետևանքներից մեկը արդեն մի քանի օր հետո երևան եկավ այն բանում, որ ֆրանսիական իշխանությունները Կիլիկիայում փորձ արեցին ցրելու Հաճընի օգնության արշավախմբի պատրաստ ուժերը՝ պահանջելով նրանց ուղարկել Միսիսի, Ինջիրլիկի և Ախարճայի շրջանները՝ բերքը հավաքելու պատրվակով: Եթե այդ հրահանգը չկատարվեց օգոստոսին, ապա սեպտեմբերի 22-ին, երբ շուրջ 300 հաճընցիներից կազմված կամավորական խումբը պատրաստվում էր Հաճընին օգնության գնալ, ֆրանսիական զորքերը շրջապատում են Ախարճան, զինաթափ անում հայ կամավորներին և արտաքսում նրանց Կիլիկիայից[43]:

Ահա այսպիսի տխուր վախճան ունեցավ Հաճընին օգնության հասնելու նպատակով առաջ եկած կամավորական շարժումը՝ կործանման դատապարտված հերոս Հաճընի հույսի վերջին աղբյուրը: Եվ քաջարի հաճընցիները, 8-ամսյա դաժան կռվից հետո, ընկան անհավասար մարտում:

Հոկտեմբերի 15-ին քեմալական զորքերը անցնում են հարձակման բոլոր ուղղություններով և հրետանային կրակով խորտակելով պաշտպանության գծերը, ներխուժում քաղաք:

Մինչև վերջ քաջարի հաճընցիները կռվեցին անարգ թշնամու դեմ՝ անօրինակ սխրանքներ կատարելով: Գրավելով Հաճընը, քեմալական հրոսակները հրկիզեցին այն և գազանաբար ոչնչացրին քաղաքի ողջ ազգաբնակչությունը՝ մոտ վեց հազար հայերի[44], այդ թվում կանանց ու երեխաներին, ծերերին ու վիրավորներին[45]: Միայն 387 հոգուց

քաղկացած մի ջոկատի՝ Արամ Կայծակի գլխավորությամբ հաջողվում է ճեղքել թուրքերի պաշարման գիծը և անընդհատ մարտեր մղելով հետապնդող թշնամու դեմ՝ հասնել Ջիհան, իսկ այնուհետև՝ Ադանա[46]:

Օտարերկրյա ականատեսները պատմեցին աշխարհին Հաճընի վրա արշավող զորքերի դաժանության մասին: «Մարդկային խիղճը խորթ էր նրանց»,— գրում է ամերիկյան միսիոներ Դ. Իթին... Միսիոներները հուսով էին, որ թուրքերը թնդանոթներ չեն կիրառի պաշտպանվող հայերի դեմ, բայց երկրորդ գիշերը նրանք շրջեցին իրենց թնդանոթները հաճընցիների վրա»[47]:

«Ներխուժելով քաղաք,— շարունակում է ականատեսը,— թուրքերը մահվան գոտեմարտի մեջ մտան խիզախ պաշտպանների հետ: Կոտորածը սարսափելի էր: Ինչո՞ւ վերհիշել նրա ահավոր ու ցնցկալի մանրամասները...»[48]:

Ինչպե՞ս են լուսաբանվում Հաճընի դեպքերը պատմագրության մեջ:

Խորհրդային թուրքագետներից Ա. Դ. Ժելտյակովը իր հոդվածներից մեկում հիշատակում է այն փաստը, որ «Հաճընի ազգաբնակչությունը անխնա սրի քաշվեց քեմալական զորքերի կողմից»[49]: Ն. Էֆենդիևան Կիլիկիայի իրադարձություններին նվիրված գրքում հարկ չի համարում նշելու այդ փաստը[50], իսկ պրոֆեսոր Ա. Մ. Ծամսուտդինովը ըստ էության աղավաղում է իրականությունը, գրելով հետևյալը. «Մարաշի, Ուրֆայի ու Այնթափի բնակիչներից հետո ֆրանսիական զավթիչների դեմ պայքարի ելավ նաև Կիլիկիայի մյուս վայրերի բնակչությունը: Տարսուսի, Ադանայի, Պոզանթիի, Սսի, Օսմանիեի, Մերսինի, Հաճընի շրջակայքում համառ պայքար ծավալվեց»[51] (ընդգծումն իմն է — Ռ.Ս.): Այսպիսով, ստացվում է, որ Հաճընի ազգաբնակչությունը ևս, այսինքն՝ հայերը, պայքարել են ոչ թե քեմալական, այլ ֆրանսիական զորքերի դեմ:

Թուրք պատմաբանների գերակշռող մասը գերադասում է չանդրադառնալ «Հաճընի դեպքին», քանի որ, ինչպես խուստովանում էր թուրքական «Ադանա փոսթասը» թերթը տակավին 1920-ի նոյեմբերի 4-ին, «Հաճընի դեպքը աղետալի ձևով մը եղած է», և այն «աշխարհի ամեն կողմն գեշ

արձագանք պիտի տա...»[52]: Իսկ այն հեղինակները, որոնք իրենց գործերում տեղ են հատկացրել Հաճընի կռիվներին, նպատակ են հետապնդում քողարկել կամ արդարացնել 6 հազար հաճընցիների քստմնելի բնաջնջումը՝ մեղքը բարդելով վերջիններիս վրա: Այսպես, Ալի Սաիպը հաճընցիներին անվանում է «ավազակներ», «չեթեական հրոսակներ», որոնք իբր թուրք ազգաբնակչությանը «հալածում ու կեղեքում էին»[53]: Նա միաժամանակ գովաբանում է Հաճընի պաշարումն ու գրավումը անմիջականորեն ղեկավարած Թուֆան բեյին[54]՝ հաճընցիների դահճին:

Ոչ անհայտ զորավար և քաղաքական գործիչ Ալի Ֆուաթ Ջեբեսոյը ևս չարամտորեն խեղաթյուրում է իրականությունը, գրելով թե «Հաճընի հայերը չորս դին այրում-ավերում էին և վայրագ հարձակումներ գործում ժողովրդի վրա»[55]: Հաճընի հայ ազգաբնակչության դեմ քեմալական կանոնավոր զորքերի կողմից «նախատեսված գործողությունների նպատակն էր,— գրում է հեղինակը,— ազատել Սսում և Հաճընում հարձակման ենթարկվող մեր եղբայրներին, որոնք զենքի էին դիմել իրենց օրինական իրավունքները պաշտպանելու համար»[56]: Հեղինակը գոհունակությամբ է նշում այն փաստը, որ հաճընցիների «մի փոքր մասը միայն կարողացավ փախչել, իսկ մնացածները ոչընչացվեցին»[57]:

Ինչ վերաբերում է ֆրանսիական հեղինակներին, նրանք, գրեթե բոլորն էլ, հիշատակելով հանդերձ Հաճընի հերոսական ինքնապաշտպանության մասին, տարբեր փաստարկներով ու պատճառաբանություններով փորձում են արդարացնել Ֆրանսիայի կառավարող շրջանների և զինվորականության քաղաքականությունը, լռության մատնում նրանց մեղսակցությունը կիլիկիահայերի, մասնավորապես հաճընցիների, ողբերգական ճակատագրում: Այսպես, գընդապետ Բրեմոնը պնդում է, որ «Հաճընին օգնելու ուղղությամբ բոլոր հնարավոր միջոցները ձեռնարկվել էին գեներալ Դյուֆիոյի կողմից»[58], թեև Հաճընի պաշարման ամբողջ ժամանակամիջոցում ֆրանսիական մի ինքնաթիռ ընդամենը երկու անգամ թռիչք էր կատարել Հաճընի վրա, դրանցից մեկի ժամանակ քաղաքի պաշտպաններին հասցնելով մեկ

արկղ փամփուշտ[59]: Ֆրանսիական պատմաբան Պոլ դյու Վեռնե ևս շեշտում է, թե իբր «Դյուֆիոն նյութական միջոցներ չուներ» հաճընցիներին օգնելու համար[60], իսկ Պիեռ Ռըդաբը, ընդունելով որ «Հաճընի պաշտպանությունը մեծաքանակ հրետանիով զինված հակառակորդի դեմ պատմության գեղեցիկ էջերից մեկն է», նույնպես մատնանշում է այն փաստը, որ «Ֆրանսիացիները կարողացան մեկ ինքնաթիռ ուղարկել Հաճընն»[61]:

Պետք է ասել, որ ինչպես թուրք, այնպես էլ ֆրանսիական իշխանությունների վարած քաղաքականությունը ժամանակին քննադատվել է սփյուռքի մի շարք անվանի մտավորականների կողմից: Այսպես, ֆրանսահայ ականավոր գրող և հասարակական գործիչ Արշակ Չոպանյանը 1921-ի հունվարին գտնվելով Բեյրութում, որպես հայ ազգային պատվիրակության անդամ, ֆրանսիական գերագույն կոմիսարին հասցեագրված նամակում այն միտքն է հայտնում, որ հաճընցիները, ինչպես և Կիլիկիայի մյուս քաղաքների հայ ազգաբնակչությունը, փաստորեն դարձան ֆրանսիական քաղաքականության զոհը: Նամակում միաժամանակ վճռականորեն հերքվում էր թուրքական իշխանությունների կողմից տարածվող այն կեղծիքը, թե իբր հաճընցիների հետ համաձայնագիր է կնքվել և նրանք բոլորը ողջ-առողջ են մնացել[62]: «Այդ ամենը բացարձակ սուտ է,— գրում էր Ա. Չոպանյանը:— Քրիստոնյաների նկատմամբ հանդես բերված մարդասիրության վերաբերյալ կանխակալ լուրերը, ավա՜ղ, ամենևին չհաստատվեցին փաստերով...»[63]:

Եվ այսպես, ինչո՞ւ ընկավ Հաճընը: Փաստերի ուսումնասիրությունը հանգեցնում է մեզ հետևյալ եզրակացությունների.

1. Մեծ եղեռնի տարիներին տեղահանված ու զանգվածային ջարդից փրկված հաճընցիների մնացորդները իրենց հարազատ օջախները վերադարձան այն հույսով, որ Կիլիկիան գրաված ֆրանսիական զորքերը կապահովեն իրենց անվտանգությունն ու խաղաղ կյանքը: Կիլիկիայի հայությունը, այդ թվում և հաճընցիները, չկարողացան հասու լինել Ֆրանսիայի մերձավորարևելյան քաղաքականության իմպերիալիստական ու գաղութատիրական էությանը, մի

հանգամանք, որը զգալիորեն թուլացրեց նրանց զգոնությունը, խանգարեց սեփական ուժերով հոգ տանելու իրենց անվտանգության մասին:

3. Հաճընցիների ապավինումը «ամենազոր» Ֆրանսիայի հովանավորությանը, հանգեցրեց թուրքերի ոազմունակության թերագնահատմանը, անտեսել տալով այն փաստը, որ նրանք զինված էին նաև Օսմանյան կայսրության հպատակ ժողովուրդների ազատագրական պայքարը ճնշելու դարավոր փորձով:

3. Քեմալականների ուժի թերագնահատումը, որոնք ֆրանսիական զավթիչների դեմ մղած պայքարում հմտորեն օգտագործում էին Կիլիկիայում հիմնավորված երիտթուրքական քաղաքական կազմակերպությունները, ուղեկցվում էր հայ ազգային պարագլուխների կողմից իրենց սեփական ուժերի բացահայտ գերագնահատմամբ:

4. Հաճընի անկման մեջ մեծ է ֆրանսիական գաղութային ու զինվորական շրջանների պատասխանատվությունը, որոնց գրգռիչ վարվելակերպը ըստ էության խրախուսում էր թուրքերին՝ Հաճընի դեմ ձեռնարկված թշնամական գործողություններում:

5. Հաճընի դեպքերը՝ քաղաքի պաշարումը, գրավումը և նրա խաղաղ բնակչության կոտորածը, վերհանեցին քեմալական քաղաքականության ազգայնամոլ բնույթը, մերկացնելով նաև այն կեղծիքը, թե իբր նրանց պայքարն ուղղված էր ֆրանսիացիների դեմ, այն դեպքում, երբ Հաճընում չկար և ոչ մի ֆրանսիական զինվոր:

6. Վեց հազար հաճընցիների տմարդի ոչնչացումը քեմալական կանոնավոր զորքերի կողմից կարելի է որակել, որպես երկրորդ ցեղասպանություն, որն իրականացվեց 1915-ի եղեռնը վերապրած հայերի նկատմամբ երիտթուրքերի ջարդարարական քաղաքականությունը որդեգրած քեմալականների կողմից:

7. Հաճընի հերոսական ինքնապաշտպանությունը իր մնայուն տեղն ունի ոչ միայն կիլիկիահայերի, այլև հայ ժողովրդի ազգային ազատագրական դարավոր պայքարի չխամրող տարեգրության մեջ:

1985

Գլուխ հինգերորդ

ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Մ. Ն. ԱՆԴՐՅՈՒԽԻՆԻ «ԳԵՆՈՑԻԴԸ ԻՄՊԵՐԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ» ԲՐՈՇՅՈՒՐԻ ԱՌԹԻՎ

Միութենական «Գիտելիք» հրատարակչությունը լույս է ընծայել իրավաբանական գիտությունների թեկնածու Մ. Ն. Անդրյուխինի «Գենոցիդը իմպերիալիստական պետությունների քաղաքականության մեջ» խիստ այժմեական բրոշյուրը[1]:

«Համաշխարհային պատմությունը չգիտի մարդկային բարոյականության հիմքերին հակասող, ողբերգական ու հրեշավոր մի որևէ այլ բան, քան գենոցիդն է»,— իրավացիորեն նշում է հեղինակը:

Հարկ է ընդունել, որ հեղինակի կողմից գենոցիդ հասկացողությանը տրված սահմանումը բավականին լայն է ու ճշգրիտ:

«Գենոցիդը,— գրում է Մ. Անդրյուխինը,— հանցագործություն է: Այն իրենից ներկայացնում է գործողությունների մի շարք, ուղղված ազգային, տնտեսական ռասայական կամ կրոնական որևէ խմբի լրիվ ու մասնակի ոչնչացմանը, ինչպես նաև այդ խմբերի զարգացման դեմ պայքարին այնպիսի միջոցառումներով, որոնք թույլ չեն տալիս մանկածնություն և հալածվող ազգին զրկում են իր ազգային մշակույթն ու լեզուն զարգացնելու հնարավորությունից»[2]: Գրքույկում տրվում է գենոցիդի ծագման պատմությունը,

նշվում է, որ «գենոցիդը ռասիստական գաղափարախոսության անցկացման առավել սուր և ծայրահեղ ձևն է», մերկացվում են մարդատյաց այդ տեսության ջատագովները Ֆրանսիայում, Անգլիայում, Գերմանիայում և Ամերիկայի Միացյալ Նահանգներում, դատապարտվում գենոցիդի քաղաքականությունը կիրառողների հանցագործությունները ինչպես անցյալում, այնպես էլ մեր օրերում։

Թվում էր, թե հեղինակը կլուսաբանի նաև գենոցիդի թուրքական քաղաքականությունը, որի զոհը դարձան հայերը ինչպես իրենց հայրենիքում՝ Արևմտյան Հայաստանում, այնպես էլ Օսմանյան կայսրության ողջ տարածքում, քանի որ տասնամյակների ընթացքում սուլթան Աբդուլ Համիդ II-ի և իթթիհատական կառավարողների կողմից կիրառվող քաղաքականությունը հենց գենոցիդի քաղաքականություն էր։

Սակայն մեզ անհայտ պատճառներով, հեղինակն ամբողջովին շրջանցել է այդ հարցը՝ ստեղծելով թերի տպավորություն գենոցիդի հանցագործության շուրջ։

Դժվար է հավատալ, որ խորհրդային իրավագետ Մ. Ն. Անդրյուխինը գիտակցորեն լռության է մատնում թուրք ազգայնամոլ-ցեղապաշտների չարագործությունները, որոնց զոհը միայն 1915—1922 թթ. դարձան 1,5 միլիոնից ավելի հայեր։

Անցյալի իրադարձություններին նման մոտեցումը, իմ կարծիքով, ոչնչով չի կարելի արդարացնել։ Չէ որ քաջ հայտնի է, որ երիտթուրքական ղեկավարների հայասպան գործողությունները նախադեպ են ծառայել Հիտլերի համար, որը 1939-ի օգոստոսի 22-ին՝ ֆաշիստական զորքերի լեհաստան ներխուժելուց մի քանի օր առաջ, իր գեներալներին տեղեկացրել է այն մասին, որ նա էսէսական միավորումներին հրամայել է մեկնել լեհական ճակատ և «առանց խղճահարության ու կարեկցանքի ոչնչացնել լեհական ծագում ունեցող ու լեհական լեզվի պատկանող տղամարդկանց, կանանց ու երեխաների։ Միայն այս ձևով մենք կարող ենք ձեռք բերել մեզ անհրաժեշտ կենսական տարածությունը։ Ո՞վ է, ի վերջո, այսօր խոսում հայերի ոչնչացման մասին»[3];

Օսմանյան Թուրքիայում հայերի դեմ գործադրված ցեղասպանության վերաբերյալ գոյություն ունի հսկայական փաստագրական ու մեմուարային գրականություն, հարյուրավոր անվիճելի վավերագրեր ռուսերեն ու արևմտաեվրոպական լեզուներով, չհաշված հայերեն, թուրքերեն, արաբերեն և այլ լեզուներով առկա աղբյուրները, որոնց գոնե մի մասին պիտի ծանոթ լիներ գենոցիդի հարցը քննող հեղինակը: Նրան հայտնի էր նաև, որ եղեռնի 50-ամյակը լայնորեն նշվել էր ամբողջ աշխարհում, որ «Պրավդա» թերթը 1965-ի ապրիլի 24-ին զետեղել էր Հայկական ԽՍՀ ԳԱ ակադեմիկոս Մ. Ներսիսյանի և պրոֆեսոր Ն. Ուշակովի հոդվածը «Գենոցիդը ծանրագույն հանցագործություն է մարդկության դեմ» խորագրով, որտեղ մասնավորապես նշվում էր, որ XX դարում գենոցիդի քաղաքականությունն առաջինը սկսեց անցկացնել երիտթուրքական կառավարությունը[4]: Այդ օրերին ֆրանսիական կոմունիստների օրգան «Յումանիտե» թերթը գրում էր. «... Անհնարին է մի քանի խոսքով վերապատմել այդ սարսափելի իրադարձությունները, որոնց ընթացքում ավելի քան մեկկիսկես միլիոն հայեր, առանց սեռի ու տարիքի խտրականության, գազանաբար ու մեթոդիկ կերպով սրի քաշվեցին այն ժամանակվա թուրքական կառավարության լավ մշակված պլանի հետևանքն: Բավական է ասել, որ իր տարածքի վրա ապրող ժողովրդի դեմ գործադրված գենոցիդի առաջին հանցագործությունը կատարվել է XX դարի սկզբին՝ 1914—1918 թթ. պատերազմի ժամանակ»[5]:

Վերջապես, 1966-ին Հայաստանի գիտությունների ակադեմիայի հրատարակությամբ ռուսերեն լույս տեսավ «Հայերի գենոցիդը Օսմանյան կայսրությունում» փաստաթղթերի ու նյութերի ստվարածավալ ժողովածուն:

Մ. Ն. Անդրյուխինը չպետք է անտեսեր առկա ողջ գրականությունը և շրջանցեր հայերի ցեղասպանության փաստը:

Երիտթուրքական կառավարության ազգայնամոլ-հայատյաց քաղաքականությունն անհրաժեշտ է դատապարտել նաև այն պատճառով, որ ինչպես անցյալում, այնպես էլ մեր օրերում Թուրքիայում քայլեր են արվում արդարացնելու

համար այդ քաղաքականությունը և նրա անմիջական կիրառողներին: Ավելին: Նրանց մեծարում են, որպես ազգային հերոսների: Այսպես, մեծ հանցագործ Թալեաթ փաշայի աճյունը, որը 1942-ին հիտլերյան Գերմանիայից փոխադրվել է Թուրքիա, վերաթաղվել է Ստամբուլում, Ազատության Նահատակների բլրի վրա: «Ենի Իսթանբուլ» թերթը 1967-ի մայիսի 9-ին տեղեկացնում էր, որ ծրագրվում է այդ նույն Պանթեոնը փոխադրել Բեռլինից իթթիհատական կուսակցության տեսաբան, մարդասպան բժիշկ Բեհաեդդին Շաքիրի և երիտթուրքական մյուս հանցագործների աճյունները[6]:

Վերոհիշյալ հանցագործները, ինչպես և Էնվեր ու Ջեմալ փաշաները, Տրապիզոնի հայերի դահիճ Ջեմալ Ազմի բեյն ու դոկտոր Նազըմը Ստամբուլի ռազմական դատարանի կողմից 1919-ի հուլիսի 5-ի դատավճռով մահվան են դատապարտվել, իսկ նրանց արարքները 1915—16 թթ. որակվել են որպես մարդկության դեմ ուղղված հանցագործություն: Մի շարք երկրների՝ Ռուսաստանի, Ֆրանսիայի, Շվեյցարիայի, Մեծ Բրիտանիայի, ԱՄՆ-ի, Նորվեգիայի և նույնիսկ Թուրքիայի դաշնակից կայզերական Գերմանիայի հումանիստները բողոքել են թուրք ցեղասպանների անմարդկային արարքների դեմ: Այդ շրջանում հրապարակային ելույթներով ու հոդվածներով հանդես են եկել Սերգեյ Կիրովն ու Կարլ Լիբկնեխտը, Մաքսիմ Գորկին ու Անատոլ Ֆրանսը, Վալերի Բրյուսովն ու Ֆրիտյոֆ Նանսենը, Յոհաննես Լեպսիուսն ու Առնոլդ Թոյնբին, Հերբերտ Գիբոնսն ու Ջեյմս Բրայսը և շատ ուրիշներ: Ականավոր արեվելագետներ Յոզեֆ Մարկվարտն ու Ժակ դը Մորգանը հանդես են եկել զանգվածային սպանությունների գլխավոր մեղավորներին միջազգային ատյանին հանձնելու պահանջով:

Ուստի իրավացի չէ Մ. Ն. Անդրյուխինը պնդելով, թե իբր «գենոցիդի հանցագործության համար պատասխանատվության հարցը ծագել է երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին»:

Այսպիսով, Մ. Ն. Անդրյուխինը թեմային մոտեցել է մակերեսորեն, իր գրքույկից դուրս թողնելով XX դարի քաղա-

ձելի հանցագործությունը՝ հայերի ցեղասպանությունը իրենց բնօրրանում՝ Արևմտյան Հայաստանում:

Մեզ թվում է, որ հեղինակը հաշվի կառնի ճշված դիտողությունները, քանի որ 1915-ի ցեղասպանությունը հարկ է ճանաչել ու դատապարտել ճիշտ այնպես, ինչպես մենք դատապարտում ենք հիտլերյան նացիստների հանցագործությունները Բուխենվալդում ու Օսվենցիմում, Մայդանեկում ու Օրադուրում:

1968

ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Հայ ժողովրդի ծանր վիճակը Օսմանյան կայսրությունում և դրա հետևանքը հանդիսացող արևմտահայ ազգային ազատագրական շարժումները միշտ էլ զբաղեցրել են Ֆրանսիայի առաջադեմ հասարակայնության ներկայացուցիչներին, մղել նրանց հանդես գալու թուրքական բռնությունների դատապարտմամբ՝ ի պաշտպանություն անլուր տառապանքների դեմ ընդվզող արևմտահայության:

Եթե հիմք ընդունենք Փարիզի Նուպարյան մատենադարանի նախկին տնօրեն, իրավագիտության դոկտոր Ա. Սալմասյանի «Հայկական մատենագիտությունը»[1], որն ընդգրկում է մինչև 1960-ական թվականների կեսերը լույս տեսած գրականությունը, կարելի է հաստատել, որ 1900—1960-ական թվականներին միայն Ֆրանսիայում լույս է տեսել շուրջ 400 անուն գիրք, նվիրված Արևմտյան Հայաստանի պատմությանը, հայկական ազատագրական շարժումներին, ջարդերին և, վերջապես, 1915-ի աճավոր ոճրին:

Արևմտյան Հայաստանի ու Կիլիկիայի հայ ազգաբնակչության զանգվածային տեղահանությունների ու ջարդերի անմիջական արձագանքն են հանդիսանում տակավին առաջին համաշխարհային պատերազմի տարիներին տպագրված աշխարհահռչակ հնագետ-արևելագետ Ժակ դը Մորգանի[2], պատմաբաններ Ռընե Պինոնի[3], Էմիլ Դուրկհեյմի[4], բանասեր ու արվեստաբան Ֆրեդերիկ Մակլերի[5], ֆրանսիական մեծ գրող Անատոլ Ֆրանսի[6], լրագրող Անրի Բարբյուսի[7] և շատ ուրիշների գործերը[8]: Այս շրջանում լույս տեսած գրքերի մեծ մասը նկարագրական բնույթի է. հեղի-

նակներն ընթերցողին ծանոթացնում են Օսմանյան կայսրությունում և, առաջին հերթին, իր դարավոր հայրենիքում՝ Արևմտյան Հայաստանում բնակվող հայության նկատմամբ կիրառված ջարդարարական քաղաքականության հետևանքներին՝ չխորանալով դրանց սոցիալ-տնտեսական ու քաղաքական բուն դրդապատճառների մեջ: Առավել գերիշխում է գերմանատյաց ուղղությունը, կատարված ոճրի հիմնական մեղքն օսմանյան Թուրքիայի դաշնակից կայզերական Գերմանիայի դեմ ուղղելու միտումը:

Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից հետո և 1920-ական թվականների սկզբին լույս տեսած գրականության մեջ, երբ առաջին անգամ Փարիզում հրապարակվեցին երիտթուրքական կոմիտեի և կառավարության գաղտնի փաստաթղթերը[9], փորձ է արվում հայկական եղեռնի փաստը քննել առավել լայն չափանիշով: Ընդ որում, մի քանի անվանի մտավորականներ հանդես են գալիս հայկական ջարդերի գլխավոր պատասխանատուներին միջազգային ատյանին հանձնելու պահանջով[10]:

Սրանց հակադրվում են թուրքասեր ուղղության ներկայացուցիչները՝ հանդես գալով այսպես կոչված հայկական համընդհանուր ապստամբության շինծու վարկածով, փորձելով կատարվածի մեղքը բարդել հենց իրենց՝ զոհերի վրա[11]:

Երկու համաշխարհային պատերազմների միջև ընկած ժամանակաշրջանում լույս տեսած գրականությունը սահմանափակ է: Փաստական նոր նյութերի ընդգրկմամբ և շատ դեպքերում անաչառ գնահատականներով աչքի են ընկնում Պոլ դյու Վեուի, Ռեմյուզայի, Ռ. Գոնտո-Բիրոնի, Է. Նիկոլի, Միշել Պայառեսի, Պիեռ Ռըդանի և այլոց աշխատությունները[12]: Հայ-թուրքական հարաբերությունների և, մասնավորապես, 1915-ի եղեռնի պատմությունը շարունակում են կեղծել Պիեռ Լոտին, Պիեռ Լիոտեն[13], ինչպես նաև ֆրանսիական բուրժուական մի քանի թերթերում տպագրվող բացահայտ թուրքասեր այլ հեղինակներ:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո և, հատկապես, 1960-ական թվականների կեսերից, երբ աշխարհի 23 երկրներում, այդ թվում և Ֆրանսիայում, նշվեց 1915-ի

ցեղասպանության 50-ամյակը, Ֆրանսիայում լույս տեսած պատմագիտական գրականության մեջ, ինչպես և հրապարակախոսական գործերում, հայկական եղեռնը արժեքավորվում է առավել լայն չափանիշով. այն քննվում է մարդկության ու մարդկայնության դեմ գործադրված հանցագործությունների շղթայում և որակավորվում, որպես XX դարի առաջին զանգվածային ցեղասպանություն:

Հատկապես արժեքավոր են 1970—80-ական թվականների հրատարակությունները, որոնցում փորձ է արվում մերկացնել ժամանակակից թուրք պատմագիտության միտումնավոր մոտեցումը, պատմական փաստերի ու թվական տվյալների բացահայտ աղճատումը և, միաժամանակ, դատապարտել ժամանակակից թուրք կառավարողների ժխտողական դիրքը եղեռնի փաստի ճանաչման հարցում:

Սույն հոդվածը նվիրված է 1960—80-ական թվականներին Ֆրանսիայում լույս տեսած աշխատությունների քննական վերլուծությանը:

Նշված ժամանակաշրջանում Ֆրանսիայում լույս տեսան մի շարք աշխատություններ, որոնցում ամբողջությամբ կամ այս կամ այն չափով լուսաբանվում են հայկական եղեռնի հետ առնչվող հարցերը[14]: Այնուհետև գալիս են հայ ժողովրդի պատմությանը նվիրված ընդհանուր բնույթի աշխատությունները[15] և, վերջապես, Օսմանյան կայսրության, թուրքերի և հանրապետական Թուրքիայի պատմությանը նվիրված գործերը, որոնցում նույնպես լուսաբանվում է խնդրո առկա հարցը[16]:

Պետք է նշել նաև, որ եղեռնի պատմության առանձին հարցեր արտացոլված են առաջին համաշխարհային պատերազմին[17], դիվանագիտության պատմությանը[18], ռասիզմին ու ազգային փոքրամասնություններին նվիրված գործերում[19], ինչպես նաև ֆրանսիական քաղաքական ու ռազմական գործիչների ու դիվանագետների հուշերում[20]:

Ի տարբերություն նախապատերազմյան հրատարակությունների, որոնք հիմնականում կրում էին նկարագրական բնույթ, 1960—80-ական թվականներին լույս տեսած աշխատություններում առկա է դեպքերի ու պատմական իրադարձությունների կոնկրետ վերլուծություն, տրվում է երիտ-

թուրքական կառավարող վերնախավի կիրառած ցեղասպան քաղաքականության ճշմարիտ գնահատականը, ինչպես նաև քննադատական խոսք է ասվում իմպերիալիստական մեծ տերությունների, մասնավորապես Անգլիայի ու Ֆրանսիայի՝ Հայկական հարցում վարած քաղաքականության մասին:

Ժամանակակից ֆրանսիական հեղինակների աշխատությունների մյուս առանձնահատկությունն այն է, որ դրանցում օգտագործված են նաև խորհրդային փաստագրական հրատարակությունները, ինչպես նաև Հայաստանի ու Թուրքիայի պատմությանը նվիրված առանձին խորհրդային պատմաբանների ու թուրքագետ-արևելագետների ուսումնասիրությունները:

Դրական կողմերից է նաև որոշ պատմաբանների կողմից արխիվային, չհրապարակված դիվանագիտական փաստաթղթերի օգտագործումն ու գիտական շրջանառության մեջ ընդգրկումը:

1960—80-ական թվականներին լույս տեսած աշխատություններում ֆրանսիական հեղինակները փորձում են պատասխան տալ այն հարցին, թե ինչո՞ւ տեղի ունեցավ իր նախադեպը չունեցող հայկական ցեղասպանությունը, խաղաղ բնակչության հրեշավոր ջարդը, փորձում են վերհանել եղեռնի կանխամտածված բնույթը և այդ հանցագործության մեջ երիտթուրքական կոմիտեի ու կառավարության մեղսակցության աստիճանը՝ դիտելով կատարվածը, որպես հանցագործություն մարդկության ու մարդկայնության դեմ:

Առավել հանգամանորեն 1915-ի իրադարձությունները հետազոտում են Իվ Տերնոնը և Ժան-Մարի Կառզուն: Առաջինը 1915-ի ցեղասպանությունը հետազոտում է իր մի քանի աշխատություններում: Արևմտահայության գենոցիդին նվիրված հատուկ գրքում, որը կրում է «Հայերը. մի ցեղասպանության պատմություն» խորագիրը, հեղինակը վերլուծում է երիտթուրքական կուսակցության գաղափարական կոնցեպցիաները և գալիս այն եզրակացության, որ «Միություն և առաջադիմություն» կոմիտեն, այն բանից հետո, երբ համոզվեց, որ օսմանիզմի վարդապետությունն

անհրաժեշտ է, իր գաղափարական զենքը դարձրեց թուրքիզմը, որը դարձավ «կոլեկտիվ մանիա»:

«Գաղափարախոսությունը փոխվեց,— եզրակացնում է հեղինակը,— և հայերը դատապարտվեցին»: Նա իրավացիորեն նշում է, որ ցեղասպանության ծրագիրն իրականացնելու ճանապարհով երիտթուրքերը փորձեցին «վերջնականապես լուծել Հայկական հարցը»:

Հեղինակը հանգամանորեն քննության է առնում հայերի ոչնչացման հրեշավոր ծրագիրը և դրանում «Հատուկ կազմակերպության» դերը, մի կազմակերպություն, որը ստեղծվել էր 1914-ի օգոստոսին՝ առաջին համաշխարհային պատերազմի բռնկման առաջին իսկ օրերին: Հավաքագրված մահվան դատապարտված քրեական հանցագործներից, որոնք ազատ արձակվել էին կայսրության բանտերից, հիշյալ կազմակերպությունը, ինչպես մատնանշում է հեղինակը, «զգալի գումարներ էր ստանում Իթթիհաթի սև դրամարկղից՝ նրա մասնակիցներին հանդերձավորելու ու զինավարժելու համար»[21]:

Հիմնվելով 1919-ին Ստամբուլում կազմակերպված երիտթուրքերի հայտնի դատավարության փաստաթղթերի վրա, հեղինակը մերկացնում է Իթթիհաթի այդ հանցավոր կազմակերպության գործունեությունը: «Հրահանգները հաղորդվում էին բանավոր՝ կուսակցության պատասխանատու անձանց, պատգամավորների կամ մարզային մասնաճյուղերի գլխավոր քարտուղարների միջոցով»: Կազմակերպության անդամները ցանկացած ժամանակ կարող էին վալիից կամ այլ պաշտոնյաներից պահանջել, որ նրանք կուրորեն հպատակվեին իրենց: Նրանք նույնիսկ լիազորված էին հրաժարվելու կամ խուսափողական դիրք գրավելու դեպքում փոխարինել կամ պատժել այդ պաշտոնյաներին: «Այդ հատուկ կազմակերպության ստեղծումը,— եզրակացնում է հեղինակը,— ապացուցում է, որ Իթթիհաթի կենտրոնական կոմիտեն համաշխարհային պատերազմի հայտարարումից հետո և մինչև կառավարությունը կորոշեր Թուրքիայի մասնակցությունն այդ կոնֆլիկտին, ձեռնամուխ եղավ պանթուրքական ծրագրի իրականացմանը»:

Հեղինակի կարծիքով, այդ ծրագիրը ներառում էր տար-

բեր կողմեր և մի քանի փուլ: Սակայն հենց այդ պահին է, որ Իթթիհաթի կենտկոմը որոշում է ընդունում այն մասին, որ «բոլոր խոչընդոտները այդ առաջնային նպատակի իրականացման ճանապարհին անխնա կերպով կվերացվեն»:

Հեղինակը այն միտքն է հայտնում, որ «Հատուկ կազմակերպության» ստեղծումով Իթթիհաթը նպատակ էր դրել օգտագործել այն՝ Հայկական հարցը կարգավորելու համար: Միաժամանակ նա գտնում է, որ «պանթուրքիզմի գաղտնի բանակը հանդիսացող» այդ կազմակերպության հետ երիտթուրքական կոմիտեն կապում էր շատ ավելի ընդարձակ պլաններ, քան «պարզապես» հայերի ոչնչացումը[22]:

Քննելով այն հարցը, թե ե՞րբ է վերջնական որոշում ընդունվել Օսմանյան կայսրության տարածքում բնակվող անխտիր բոլոր հայերի ոչնչացման մասին, հեղինակը նշում է, որ այդ հարցին ճշգրիտ պատասխան տալ անհնարին է, քանի որ երիտթուրքական կուսակցության կենտկոմի նիստերի արձանագրությունները չեն պահպանվել: Կարելի է միայն ենթադրել, որ կենտկոմի որոշումը պետք է կայացած լիներ 1915-ի հունվարի վերջին կամ փետրվարին, «քանի որ անհրաժեշտ էր նվազագույնը երկու ամիս՝ այդ դիվայինի պլանի իրականացումը նախապատրաստելու համար»[23]:

Վերլուծելով «ոչնչացման գլխավոր պլանը», Իվ Տերնոնը նշում է, որ ընդունելով արևմտահայության իսպառ բնաջնջման որոշում, Իթթիհաթի կենտրոնական կոմիտեն պետք է պատասխան տար այն հարցին, թե ինչպե՞ս ազատվել նրանից: Այդ պատասխանը, գրում է հեղինակը, գտնվեց. հայերից ազատվել ամբողջությամբ, հնարամտորեն, աննկատելի կերպով, առանց որևէ ռիսկի և կորուստների:

Հանգամանորեն շարադրելով զանգվածային տեղահանությունների ու ջարդերի պատմությունը հեղինակը գալիս է այն եզրակացության, որ հայկական եղեռնը «XX դարի առաջին ցեղասպանությունն էր, առաջին կոլեկտիվ սպանությունը՝ իրականացված նախապես մշակված պլանի համաձայն և ժամանակակից միջոցներով, որոնք գտնվում էին տոտալիտար պետության տրամադրության տակ»[24]:

Հեղինակի մյուս եզրակացությունն այն է, որ հայերի ցեղասպանությունը հետևանք էր վերընթաց գծով չարգացող թուրքական ազգայնականության: «Հայերի անհետացումով,— գրում է հեղինակը,— վերացվում էր թուրքիզմի դեմ Օսմանյան կայսրությունում կանգնած խոչընդոտը և, միաժամանակ, պանթուրքիզմի դեմ ծառացած խոչընդոտը, պանթուրքիզմի, որը հավակնում էր միավորել Օսմանյան և Ռուսական կայսրությունների թուրքերին»[25]:

Ընդհանրացնելով իր խոսքը, հեղինակը զուգահեռ է անցկացնում երիտթուրքերի ու նացիստների հանցագործությունների միջև. «Ինչպես նոր ժամանակների բոլոր մեծ հանցագործությունները, հայկական ցեղասպանությունը ծավալվում էր նևրոզով բռնված տրամաբանական պրոցեսի համաձայն: Հենց այդ բանում նա նմանվում էր նացիոնալ-սոցիալիստների կողմից կիրառվող հրեաների, սլավոնների ու գնչուների գենոցիդին»[26]:

Գենոցիդի պատմության մի այլ հետազոտող՝ Ժան-Մարի Կառզուն, ուշադրություն է դարձնում այն հանգամանքի վրա, որ 1915-ի ցեղասպանությանը նախորդել էին այսպես ասած տեղական նշանակություն ունեցող բազմաթիվ փաստեր և իրադարձություններ, որոնց ուշադիր քննությունը կարող է բերել այն մտքին, որ փոթորիկը մոտենում է, որ Թուրքիայի քրիստոնյա ազգաբնակչության և, առաջին հերթին, հայերի կյանքը մշտական վտանգի տակ է, մի փաստ, որի մասին ասվում էր 1913—14 թթ. տարբեր երկրների դիվանագիտական և հյուպատոսական ներկայացուցիչների բազմաթիվ զեկուցագրերում[27]: Նրա գրքում, որը շատ բնորոշ վերնագիր ունի՝ «Օրինակելի ցեղասպանություն: Հայաստան, 1915 թվական» ցույց են տրվում ամբողջ մի ժողովրդի ոչնչացման ծրագրի նախապատրաստման տարբեր փուլեր՝ բանակ զորակոչված հայ տղամարդկանց զինաթափումը, աշխատանքային գումարտակներում որպես քարշուժ օգտագործումը և, այնուհետև, տմարդի ոչնչացումը, ազգի մտավոր և հոգևոր առաջնորդների ձերբակալությունը, ոչնչացումը և այլն:

Հեղինակը, քննելով հայ ազգաբնակչության բռնի տեղահանման հարցն այսպես կոչված հայկական ապստամ-

թության առնչությամբ, ընդգծում է, որ թուրքական կառավարության այն պնդումը, թե հայերի բռնագաղթը թելադրված էր նրանց կողմից երկրի անվտանգությանը սպառնացող վտանգով, զուրկ է որևէ հիմքից: Այդ վարկածը, որն իր ձևակերպումը գտավ 1917-ին օսմանյան կառավարության կողմից հրատարակված պաշտոնական գրքում, լայնորեն օգտագործվեց և հետագայում չարաշահման առարկա դարձավ: Թուրքական պաշտոնական այդ կեղծ վարկածը Ժ. Մ. Կառզուն հերքում է մի շարք հավաստի փաստերով, որոնք վկայում են, որ հայերի բռնի տեղահանությունը սկզբունքորեն վճռված էր երիտթուրքական վերնախավի կողմից Վանի դեպքերից առաջ, և որ այդ դեպքերը սոսկ պատրվակ ծառայեցին՝ թուրքական ծրագրի իրականացման համար: Հեղինակը մասնավորապես քաղվածքներ է բերում Թուրքիայում Գերմանիայի դիվանագիտական ներկայացուցիչների գաղտնի զեկուցագրերից այն մասին, որ «հայերի տեղահանությունը թելադրված չէ ռազմական նկատառումներով», որ «այն եղանակը, որով իրագործվում է տեղահանությունը, վկայում է, որ կառավարությունն իսկապես նպատակ է հետապնդում գլխովին ոչնչացնել հայ ազգը թուրքական սահմաններում», որ «գոյություն չունի ո՛չ մի ապացույց, որը հայերը կանխամտադրվել ու իրականացրել են խռովություն»[28]: Հեղինակը վկայակոչում է նաև Թուրքիայում ԱՄՆ-ի դեսպան Հ. Մորգենթաուի զրույցը ներքին գործերի մինիստր Թալեաթի հետ, որի ժամանակ վերջինս հայտարարել էր, թե «Միություն և առաջադիմություն» կոմիտեն հանգամանորեն քննել է հարցը, և այն քաղաքականությունը, որը կիրառվում է ներկայումս, հանդիսանում է կառավարության պաշտոնական քաղաքականությունը, ընդսմին ավելացնելով, որ չպետք է հավատալ այն բանին, թե տեղահանումների վերաբերյալ հարցը վճռվել է հապճեպորեն: Ընդհակառակը, ավելացրել էր Թալեաթը, այդ տեղահանումները հետևանք են երկարատև ու լուրջ քննարկումների[29]:

Վերլուծելով արևմտահայերի տեղահանության կանխամտածված քայլի բոլոր հետևանքները, հեղինակը եզրակացնում է. «Այս տեղահանությունը ոչ այլ ինչ է, եթե ոչ

գենոցիդի կիրառումը կյանքում, վիթխարի մի գործողություն, որում պարտադիր կարգով իրենց մասնակցությունն էին ունեցել պետության բոլոր պաշտոնական անձինք՝ ինչպես քաղաքացիական, այնպես էլ զինվորական»[30]:

1915-ի հայկական ողբերգության պատճառների ու հանգամանքների համակողմանի ուսումնասիրության հիման վրա հեղինակը գալիս է այն եզրակացության, որ XX դարի առաջին այդ ցեղասպանությունը պարունակում էր բոլոր այն բաղադրիչ մասերը, որոնք բնորոշում են գենոցիդի ընդհանուր հասկացությունը, որպես մի հանցագործության, ուղղված մարդկության և մարդկայնության դեմ:

Ֆրանսիական պատմաբան Արթուր Բեյլերյանը «Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը ֆրանսիական արխիվներում. 1914—18 թվականներ» խորագիրը կրող դիվանագիտական փաստաթղթերի արժեքավոր ժողովածուի առաջաբանում քննության է առնում մի շարք հարցեր, որոնք առնչվում են ազգային հարցում երիտասարդ թուրքերի վարած այն քաղաքականությանը, որն ավարտվեց հայերի զանգվածային բնաջնջման վերաբերյալ երիտթուրքերի կայացրած որոշումով: Սույն հեղինակը ևս քննության է առնում այն հարցը, թե ե՞րբ է կայացվել հայերի ոչնչացման մասին որոշումը: Այս կապակցությամբ նա ֆրանսախոս ընթերցողին ծանոթացնում է մի շատ կարևոր փաստաթղթի հետ, որն ինքը հայտնաբերել է Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի մինիստրության արխիվում: Այդ փաստաթղթում ասվում է, որ 1915-ի հունվարի սկզբին տեղի է ունեցել խիստ գաղտնի մի ժողով, որին մասնակցել են ընդամենը 5 հոգի՝ Թալեաթը, դոկտոր Բեհաեդդին Շաքիրը, Կոստանդնուպոլսի պրեֆեկտ Խմայիլ Ջանփոլադը, դոկտոր Նազըմը և ռազմական մինիստրության քաղաքական բաժնի փոխտնօրեն գնդապետ Սեյֆին: Երկար քննարկումից հետո ժողովն ընդունել է «10 հրահանգ».

1. «Միություն և առաջադիմություն» կոմիտեի երրորդ և չորրորդ հոդվածների հիման վրա արգելել բոլոր հայկական միությունները, ձերբակալել այն հայերին, ովքեր հակակառավարական գործունեություն են ծավալել, աքսորել նրանց

այնպիսի գավառներ, ինչպես Բաղդադ կամ Մոսուլ, և ոչնչացնել նրանց ճանապարհին կամ նշանակման վայրը հասնելուց հետո:

2. Բռնագրավել զենքերը:

3. Գրգռել մահմեդական հասարակությանը այն մեթոդներով, որոնք կիրառվել են այնպիսի նահանգներում, ինչպես Վանը, Էրզրումը կամ Ադանան, որտեղ հայերը իրենց դեմ հարուցեցին մահմեդականների ատելությունը, և առաջ բերել կազմակերպված ջարդ...

4. Այդ բանն իրականացնելու համար հիմնվել Էրզրումի, Վանի, Մամուրեթ-ուլ-Ազիզի (Խարբերդի— Ռ. Ս.) և Բիթլիսի նահանգների բնակչության վրա և օգտագործել կարգի պահպանության զինված ուժերը (ինչպես, օրինակ, ոստիկանությունը) այն հաշվով, որ դա կրի ջարդը դադարեցնելու բացահայտ բնույթ և, ընդհակառակը, այդ նույն ուժերը ներգրավել մահմեդականներին ակտիվ օգնություն ցույց տալու համար այնպիսի նահանգներում, ինչպես Ադանան, Սըվասը, Բրուսան, Իզմիդը և Իզմիրը:

5. Միջոցներ ձեռնարկել ոչնչացնելու համար մինչև 50 տարեկան բոլոր տղամարդկանց, քահանաներին և դպրոցական ուսուցիչներին. թույլ տալ օրիորդներին ու երեխաներին ընդունելու իսլամի դավանանքը:

6. Տեղահանել այն ընտանիքներին, որոնց մեծերին կհաջողվի փրկվել և այսպիսով խզել նրանց բոլոր կապերը հայրենի երկրի հետ:

7. Վկայակոչելով այն, որ հայ ծառայողները կարող են լրտեսներ լինել, հեռացնել նրանց բոլոր պաշտոններից ու դիրքերից և բացարձակապես հեռացնել նրանց բոլոր այն հիմնարկություններից, որոնք ենթարկվում են պետական վարչությանը:

8. Հարմար մեթոդներով ոչնչացնել բանակում ծառայող բոլոր հայերին՝ հանձնարարելով այդ գործը զինվորականներին:

9. Ամենուրեք օպերացիան սկսել միաժամանակ, այն հաշվով, որ ժամանակ չտրվի պաշտպանական միջոցներ ձեռնարկելու համար:

10. Հետևել այդ հրահանգների խիստ գաղտնի բնույթին, որոնք չպետք է հայտնի լինեն ավելի քան երկու կամ երեք անձանց»[31]:

Անդրադառնալով արևմտահայերի տեղահանության բուն նպատակին, հեղինակը մեջ է բերում մի նոր փաստաթուղթ. դոկտոր Բեհաեդդին Շաքիրի 1915-ի ապրիլի 21-ի ծածկագիր հեռագիրը՝ հասցեագրված Խարբերդում իթթիհատական կոմիտեի պատասխանատու ներկայացուցիչ Ռեսնելի Նազըմ բեյին[32]: Նշված հեռագիրն առաջին անգամ բերվել է դատավարության մեղադրական արձանագրության մեջ և հրապարակվել «Թաքվիմի վաքայի» թուրքական պաշտոնաթերթում՝ 1919-ի մայիսի 5-ին: Այդ փաստաթղթում ասվում էր հետևյալը. «Վերացվա՞ծ են Ձեր գավառից տեղահանված հայերը: Այդ վտանգավոր անձինք, որոնց տեղահանման մասին դուք մեզ տեղեկացրել եք, գտնվո՞ւմ են արդյոք ոչնչացման պրոցեսում: Թե՞ նրանք պարզապես տեղահանվել են մի այլ շրջան: Տեղեկացրեք մեզ ավելի պարզ, եղբայր իմ»[33]:

Այս փաստաթղթերի հիման վրա հեղինակն իրավացիորեն եզրակացնում է, որ Բեհաեդդին Շաքիրի հեռագիրը մերկացնող մեղադրական մի փաստաթուղթ է Թալեաթ փաշայի հետմահու հուշերում տեղ գտած այն կեղծիքի դեմ, թե իբր օսմանյան կառավարությունը հայերին տեղահանելու մասին որոշում կայացրեց ռուսական զորքերի Վան մտնելուց հետո :

Ի տարբերություն արևմտյան մի շարք հեղինակների, որոնք լռության են մատնում Անտանտի տերությունների խարդախ ու երկդիմի քաղաքականությունը արևմտահայերի նկատմամբ, Ա. Բեյլերյանը փաստարկված քննադատության է ենթարկում մասնավորապես Անգլիայի քաղաքականությունը, որն ազատ արձակեց հայկական եղեռնի մեղսակից 67 երիտթուրքական գործիչների[34]:

Ֆրանսիական որոշ հեղինակներ գտնում են, որ հնարավոր չէ ապացուցել հայերի ոչնչացման պլանի առկայությունը քանի որ առաջին համաշխարհային պատերազմի ժամանակաշրջանի թուրքական պաշտոնական արխիվները մատչելի չեն հետազոտողներին: Սակայն նրանք ավե-

լացնում են, որ չնայած այդ հանգամանքին, գոյություն ունի համապատասխան ապացույցների հսկայական մի քանակություն, որն ամփոփված է այնպիսի հրատարակություններում, ինչպես Ջեյմս Բրայսի ժողովածուն՝ «Կապույտ գիրքը»[35], դոկտոր Լեպսիուսի «Հաղորդումը»[36], նրա իսկ կազմած «Գերմանիան և Հայաստանը» խորագրով դիվանագիտական փաստաթղթերի ժողովածուն[37] և այլն։ Ժան-Պիեռ Մահեն մատնանշում է, որ բացի նշված հրատարակություններից, պահպանվել են երիտթուրքական կառավարության և, մասնավորապես, Թալեաթ փաշայի պաշտոնական ծածկագիր-հեռագրերը, որոնք բերված են Նայիմ բեյի հուշերում[38]։ Այդ պաշտոնական փաստաթղթերը այնուհետև հրապարակվեցին անգլիական «Դեյլի տելեգրաֆ» թերթում՝ 1922-ի մայիսի 29-ին։ Մեջբերելով Թալեաթի այդ հեռագրերից մի քանիսը, Ժան—Պիեռ Մահեն եզրակացնում է, որ 1916-ի վերջին հայկական ցեղասպանությունը գործնականորեն ավարտված էր, թեև ջարդերը տեղ-տեղ շարունակվում էին նաև 1917-ին։

Հիշատակելով 1919-ի Կ. Պոլսի սուլթանական կառավարության կողմից ձեռնարկված երիտթուրքերի դատավարությունը, հեղինակը գտնում է, որ այն ամենևին չէր նշանակում, որ հայկական ցեղոցիդը ճանաչվում էր և դատապարտվում։ Ավելի շուտ դա մի խորամանկ քայլ էր, որը նպատակ ուներ ձերբազատվել հակառակորդներից և, միաժամանակ, բարերար ազդեցություն թողնել Անտանտի տերությունների վրա այն պահին, երբ սկսվել էին հաշտության բանակցությունները[39]։

Մի շարք հեղինակներ, դատապարտելով հայ խաղաղ ազգաբնակչության բարբարոսական ոչնչացումը, վեր են հանում նաև 1915 թվականի ողբերգության լուսավոր էջերը խոսելով Սասունում, Շատախում, Վանում, Շապին-Կարահիսարում, Ուրֆայում, Մուսա լեռան վրա և այլուր հայերի ցույց տված հերոսական դիմադրության մասին։

Այսպես, օրինակ, «Ռասիզմը հազար պատկերներում» հետաքրքիր գրքի հեղինակ Էլենա դը լա Սուշերը[40], շարադրելով այդ փաստերը, միաժամանակ փորձ է անում պատասխանելու այն հարցին, թե ինչո՞ւ, այնուամենայնիվ,

թույլ էր դիմադրությունը ջարդարարներին: Պատճառներից մեկը, ըստ հեղինակի, Կոստանդնուպոլսի հայ մտավորականության, ներառյալ օսմանյան պառլամենտի պատգամավորների— բոլոր նրանց, ովքեր կարող էին բողոքի ձայն բարձրացնել, քստմնելի ձերբակալությունն ու ոչնչացումն էր: Այնուհետև, թուրքական բանակում ծառայող հայ զինվորների ու սպաների մեկուսացումը, զինաթափումն ու տմարդի ոչնչացումը և այլն:

«XX դարի արշալույսին հայերի ջարդը գլխավոր մի փորձ էր զանգվածային այն սպանությունների, որոնք շուտով բարձրացվեցին կառավարման արվեստի աստիճանին»[41],— եզրակացնում է հեղինակը, նկատի ունենալով նացիզմի ու ֆաշիզմի հանցագործությունները:

Որոշ հեղինակներ, անդրադառնալով իթթիհատական պարագլուխների պանթուրանական ծրագրերին՝ ցեղասպան քաղաքականության առնչությամբ, ընդգծում են տվյալ գործոնի գերակշռությունը կրոնականի նկատմամբ: Այսպես, Լ. Շաբրին և Ա. Շաբրին գրում են, որ թեև հայերի ոչնչացման իրենց ծրագրի իրականացման նպատակով երիտթուրքերը շահագործում ու հրահրում էին կրոնական հակամարտությունը՝ ցեղասպանությունը քողարկող «սրբազան պատերազմի դիմակի տակ», իրականում, սակայն, հայերի ոչնչացումը պայմանավորված էր թուրքական էթնոսը պետության մեջ գերակշռող դարձնելու ցանկությամբ. «Հենց ռասայական գաղափարը և ոչ թե կրոնի պաշտպանությունը դարձավ ջարդի ամենահիմնական պատճառը. իսլամի պաշտպանությունը երկրորդական նշանակություն ուներ»[42]:

Վերը նշվեց, որ ժամանակակից Ֆրանսիայում, ինչպես և նախկինում, առկա է թուրքասիրական տրամադրություններ ունեցող հեղինակների մի խումբ (պատմաբաններ, դիվանագետներ, լրագրողներ և այլն), որը թուրք-հայկական հարաբերությունների պատմությունը լուսաբանում է ոչ օբյեկտիվորեն, աչառու, ժամանակակից թուրք պաշտոնական պատմագրության դրույթներից ելնելով: Այսպես, օրինակ, ֆրանսիական հայտնի թուրքագետ Պոլ Դյումոնը փաստորեն համաձայնվում է երիտթուրքական կառավարության և ժամանակակից թուրք հեղինակների այն կեղծ վարկածի

հետ, որ հայերի տեղահանությունը «ստիպողական բնույթ ուներ»: Չթաքցնելով այն փաստը, որ այդ տեղահանությունները խլեցին հարյուր հազարավոր մարդկային կյանք, հեղինակն այնուհետև գրում է. «Թուրքիայի հայկական համայնքների վերացումը իր սկզբունքով նպատակ ուներ դյուրացնել ռուսական ներխուժմանը դիմադրություն կազմակերպելը»[43]:

1915—16 թթ. իրադարձություններն առավել կոպիտ կերպով են աղավաղում Ժան Լյարոշը և Պիեռ Մոզերը: Առաջինը գտնում է, որ «գազանային ռեպրեսիաները սոսկ պատասխան էին զայրույթի պոռթկումին (հայերի կողմից— Ռ.Ս.)»[44]: Չանալով արդարացնել թուրքական բոլոր վարչակարգերի չարագործությունները հպատակ ժողովուրդների նկատմամբ, հեղինակը պնդում է, թե իբր «բոլոր պատմաբանները հաստատում են, որ թուրքերն իրենցից ներկայացնում են գերիշխող ժողովրդի գրեթե եզակի մի օրինակ, որը հանդես է բերել կատարյալ հանդուրժողականություն պարտված ժողովուրդների կրոնների նկատմամբ նույնիսկ միջնադարում»[45]:

Սակայն առավել անընդող կերպով է արդարացնում թուրք կառավարող շրջանների ազգային քաղաքականությունը Պիեռ Մոզերը՝ Ֆրանսիայում անհայտ մի հրատարակչության միջոցով լույս աշխարհ հանած «Հայերը. որտե՞ղ է ճշմարտությունը» վերնագրով իր գրքում[46]:

Ո՞րն է, ըստ հեղինակի, պատմական ճշմարտությունը: Այն, որ առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ «հայերը, խռովություն բարձրացնելով, առաջինը դիմեցին ջարդի և այդ ժամանակից ի վեր տեղի ունեցած իրադարձությունները կրում էին ներքին պատերազմի բնույթ»[47]:

Շարունակելով, հեղինակը առանց որևէ փաստարկման պնդում է, որ «թուրքեր սպանվեցին նույնքան, որքան և հայեր», և եզրակացնում, որ «իրադարձություններն իսկապես երկու կողմից էլ ցավալի էին, բայց անարդարացի կլիներ միակողմանի կերպով թուրքերին մեղադրել ցեղասպանության մեջ»[48]:

Պատմության այդ կոպիտ ենթագիտումը ընկած է հեղինակի աշխատության հիմքում: Նրա գրվածքում և ո՛չ մի

թեզ և ո՛չ մի փաստ, ո՛չ մի պնդում հիմնված չէ սրատմական աղբյուրների վրա: Այսպես, անդրադառնալով ցեղասպանության հասկացության բնորոշմանը, հեղինակը գրում է, որ թուրք կառավարողներին չի կարելի մեղադրել հայկական ցեղասպանության մեջ, քանի որ «թուրքերը երբեք իրենց չեն պարտադրել Օսմանյան կայսրության հպատակ ժողովուրդներին. Բարձր Դուռը նույնիսկ փորձ չի արել նրանց ձուլելու»[49]:

Գրքի վերջում բերված եզրակացություններում Պ. Մոզերը վերստին փորձում է ժխտել փաստերը և ըստ էության արդարացնել հայ ժողովրդի դեմ կատարված հանցագործությունը. «Այսպես կոչված ցեղասպանությունը պատմականորեն երբեք չի ապացուցվել: Միջազգային բարձր մարմինները միշտ էլ մերժել են ճանաչել այն»[50]: Ավելին: Հեղինակը պնդում է, որ հայերի զանգվածային սպանություն չի եղել: Համեմատության դեպքում կարող է պարզվել, ավելացնում է նա, որ զոհված թուրքերի թիվը գերազանցում է հայկական կորուստների վերաբերյալ բոլոր տվյալները[51]: Բարեբախտաբար Ֆրանսիայում լույս տեսած այս արտառոց հորինվածքը եզակի մի նմուշ է, որը անկասկած, դատապարտված է մոռացության:

Ֆրանսիական պատմաբանները քննում են նաև հայկական ցեղասպանության համար պատասխանատվության հարցը: Ի տարբերություն նախապատերազմյան հրատարակությունների, որտեղ գերիշխում էր այն տեսակետը, թե կատարվածի համար երիտթուրքերից հետո պատասխանատվություն է կրում Գերմանիան, որպես Թուրքիայի դաշնակից, 1960—80-ական թվականներին լույս տեսած գործերում այս գնահատականը վերանայվում է, նույնիսկ քննադատվում: Առավել հստակորեն պատասխանատվության հարցը քննում է վերը հիշատակված Իվ Տերնոնը՝ մերժելով ֆրանսիական հայտնի պատմաբան Ռընե Պինոնի այն կարծիքը, որ հիմնական պատասխանատվությունը Թուրքիայի հետ հավասարապես կիսում է Գերմանիան: Տերնոնը առաջ է քաշում բոլոր մեծ տերությունների պատասխանատվության հարցը: «Հիրավի,— գրում է հեղինակը,— տե-

րությունններից յուրաքանչյուրը փնտրում էր իր անմիջական շահը և դաշնակից տերությունների վարքագիծը, որոնք իրար մեջ բաժանեցին ավարը՝ ի վնաս հայերի, ամենևին էլ փայլուն չէ»[52]: Միաժամանակ նա ընդգծում է, որ իր այդ պնդումն ամենևին չի արդարացնում Գերմանիային, որն իր պասսիվության համար մեղքի իր բաժինն ուներ: Արևմտյան տերությունների կոնկրետ քայլերի վերլուծության հիման վրա հեղինակը ցույց է տալիս, որ միջազգային իմպերիալիզմն անհետացող հայ ժողովրդին դիտում էր իր սեփական գործերը կարգավորելու տեսանկյունից, այդ իսկ պատճառով, չնայած Անտանտի տերությունների 1915-ի մայիսի 24-ի բողոքի նոտային, որով հայերի զանգվածային ջարդերի անձնական պատասխանատվությունը դրվում էր երիտթուրքական կառավարության անդամների վրա, այդ տերությունները «միաժամանակ համաձայնվեցին կատարված փաստի հետ՝ Հայաստան առանց հայերի»[53]: Այնուհանդերձ, հեղինակը իրավացիորեն ընդգծում է, որ հայերի ցեղասպանության հիմնական պատասխանատու պետք է ճանաչել Թուրքիային, որը գործում էր, ելնելով բացառապես իր սեփական շահերից[54]:

Իր մի այլ գրքում, որ Իվ Տերնոնը գրել է Ժերար Շալյանի հետ միասին, նա ընդգծում է այն միտքը, որ «առաջին անգամ պատմության մեջ կառավարող կուսակցության անդամները ո՛չ միայն չքավարարվեցին կոլեկտիվ հանցագործությանը հավանություն տալով, այլև հենց իրենք կարգավորեցին դրա իրականացման եղանակները՝ ընդհուպ մինչև ամենափոքր մանրամասները»[55]: Ժան-Մարի Կառզուն ևս գտնում է, որ երիտթուրքական կառավարող վերնախավը հայկական ցեղասպանության գործողությունն իրականացրեց միանգամայն ինքնուրույն կերպով, չհարցնելով իր դաշնակցի՝ կայզերական Գերմանիայի կարծիքը[56]:

Վերջին տարիների հրատարակություններից հիշատակության արժանի են «Հայկական ցեղասպանության արդարադատը. Թեհլերյանի դատավարությունը»[57], «Լռության հանցագործությունը. հայերի ցեղասպանությունը»[58] և «Հայկական ցեղասպանության արխիվները»[59] գործերը:

Առաջին գրքում ամբողջությամբ վերարտադրված են

1921-ի հունիսի 2—3-ին Բեռլինի նահանգային դատարանում կայացած դատավարությունը (որը, ինչպես հայտնի է, անվերապահորեն արդարացրեց Թալեաթի ահաբեկիչ, ժողովրդական վրիժառու Սողոմոն Թեհլերյանին), ինչպես նաև 1919-ի ապրիլ-հուլիսին Կոստանդնուպոլսում կայացած իթթիհաթական ղեկավարների դատավարության փաստաթղթերը, այդ թվում մեղադրական ակտը և 1919-ի հուլիսի 5-ին կայացված դատավճիռը, որով հայկական ցեղասպանության հիմնական պատասխանատուները (Էնվեր, Թալեաթ, Ջեմալ, դոկտոր Նազըմ) հեռակա կարգով դատապարտվում էին մահվան:

Երկրորդ գիրքն արժեքավոր է ամենից առաջ այն տեսակետից, որ նրանում ի մի են բերված «Ժողովուրդների մշտական դատարանի» 1984-ի ապրիլի 13—16-ը Փարիզում կայացած նիստերի սղագրությունները և այլ փաստաթղթեր:

Վերջին գրքում ֆրանսերեն թարգմանությամբ տրված են 1919-ին Բեռլինում լույս տեսած դոկտոր Յո. Լեպսիուսի «Գերմանիան ու Հայաստանը» հայտնի ժողովածուից քաղված դիվանագիտական այն փաստաթղթերը, որոնք անմիջականորեն վերաբերում են 1915—18 թթ. հայկական ջարդերին:

Այսպիսով, 1960—80-ական թվականներին Ֆրանսիայում լույս տեսած պատմագիտական հրատարակություններում ընդհանուր առմամբ ճիշտ են լուսաբանվում 1915-ի հայկական ցեղասպանության հետ կապված իրադարձությունները, բացառությամբ մի քանի գործերի: Ուստի դրանք կարող են իրենց նպաստը բերել մարդկության դեմ ուղղված այդ հանցագործությունը միջազգային մակարդակով ճանաչելու և այն դատապարտելու շնորհակալ գործին: Միաժամանակ այդ աշխատությունները լավագույն պատասխան են ժամանակակից թուրք պատմագիտության ստահոդ պնդումներին և պատմական ճշմարտության աղավաղման բացահայտ փորձերին:

1988

ԹՈՒՐՔ ՑԵՂԱՍՊԱՆՆԵՐԻ ՓԱՍՏԱԲԱՆԸ

Անցած յոթանասուներեք տարիների ընթացքում միայն Ֆրանսիայում լույս են տեսել շուրջ 400 անուն գիրք և անթիվ-անհամար հոդվածներ, որոնք ամբողջովին կամ մասնակիորեն նվիրված են հայ ժողովրդի աննախադեպ ողբերգությանը՝ 1915-ի ցեղասպանությանը:

Եվ ահա 1988-ին Փարիզի «Լանոր» հրատարակչությունը լույս աշխարհ բերեց ֆրանսիացի փաստաբան Ժորժ դը Մալվիլի «1915-ի հայկական ողբերգությունը» խորագրով գիրքը[1], որի հեղինակը ըստ էության փորձում է հերքել ինչպես վերը հիշատակված, այնպես էլ անցած ողջ ժամանակաշրջանում աշխարհի տարբեր երկրներում լույս տեսած հարյուրավոր այն հատորները, որոնք հաստատում են պատմական անառարկելի փաստը՝ 1915-ի հայկական ցեղասպանությունը:

Հետաքրքրական է այն, որ իր.են «ամբողջովին անկախ դիտորդ» ներկայացնող հեղինակը հանդես է բերում լրիվ կախվածություն թուրք պաշտոնական դիրքորոշումից և թուրքական աչառու աղբյուրներից, իսկ այդ կանխակալ մոտեցումը մերժող բոլոր ֆրանսիական և այլազգի պատմաբաններին նա որակում է որպես «թուրքերի նկատմամբ թշնամաբար տրամադրված հեղինակների»: Ընդ որում, անաչառ դիտվելու միտումով Ժորժ դը Մալվիլը գրքին կցված «Քննական մատենագիտության մեջ» հիշատակում է մի քանի օտար հեղինակների (Յոհաննես Լեպսիուս, Քրիստոֆըր Ուոքըր, Ժերար Շալիան, Իվ Տերնոն) աշխատությունները, չօգտագործելով սակայն դրանցում բերված փաստերը: Միաժամանակ նա լռության է մատնում մի շարք օտար այլ հեղինակների (Թոյնբի, Մորգենթաու, Գիբոնս, Նաիմ բեյ, Մեվլան զադե Ռիֆաթ, Ժակ դը Մորգան, Մարտին Նիպագե և այլն) վկայությունները: Այսպիսով, հեղինակի բոլոր հիմնական դրույթները խարսխված են թուրք պատմաբանների (Շիմշիր, Սոնմեզ, Գյուրյուն, Օրել, Յուջա և այլն) խիստ միտումնավոր տեսակետների ու եզրահանգումների վրա: Որո՞նք են դրանք.

1. Հայ ժողովուրդը դարեր շարունակ ապրել է Օսման-

յան կայսրությունում խաղաղ, ապահով ու բարեկեցիկ կյանքով: Սակայն 1828-ի ռուս-թուրքական պատերազմի ժամանակ գեներալ Լորիս-Մելիքովի գլխավորած ռուսական բանակի կազմում առաջին անգամ երևացին հայ կամավորներ, որոնք Էջմիածնի կաթողիկոսի կողմից հրահրվելով, սկսեցին մոլեռանդորեն տեռորի ենթարկել մահմեդական ազգաբնակչությանը՝ արևմտահայերին կոչելով զինված ապստամբության:

«Նույն սցենարը,— պնդում է հեղինակը,— անվրդով կերպով վերարտադրվում էր 90 տարիների ընթացքում,— ամեն անգամ, երբ ռուսական բանակները ճեղք էին գրտնում թուրքական տարածք ներթափանցելու համար...»[2]:

Անտեսելով արևմտահայության ստրկական վիճակը Օսմանյան կայսրությունում, հեղինակը սոսկ այդ միջամտությամբ է բացատրում հայկական բոլոր հուզումներն ու ընդվզումները, որոնք նա որակում է, որպես կայսրությունը կործանելու դիտավորություններ: Որպես կոնկրետ «փաստ» հեղինակը վկայակոչում է Վան քաղաքի հայ ազգաբնակչության զինված ինքնապաշտպանությունը, այն անվանելով դավաճանություն հայրենիքի հանդեպ:

Պատմության կողմից հերքված այս շինծու վարկածի հիման վրա հեղինակը հայտարարում է, որ «1915-ի փետրվարին հայկական համայնքները ամբողջ Արևելյան Անատոլիայում ապստամբության մեջ էին»: Ուստի նա միանգամայն օրինաչափ է համարում արևմտահայ ազգաբնակչության համատարած տեղահանությունը, բացառություն չանելով նույնիսկ կանանց, ծեր մարդկանց ու մանուկների համար:

2. Արևմտահայության զանգվածային տեղահանությունը, ըստ հեղինակի, կրում էր ժամանակավոր բնույթ. պատերազմի ավարտից հետո բոլոր հայերը պետք է վերադառնային իրենց բնակավայրերը: Որպես ապացույց հեղինակը, արհամարհելով Թուրքիայի այն ժամանակվա ներքին գործերի մինիստր և Իթթիհադի պարագլուխ Թալեաթ փաշայի տասնյակ ծածկագրերը հայերին բնաջնջելու վերաբերյալ, վկայակոչում է թուրք նախկին դիվանագետ Քյամուրան Գյուրյունի մեջբերած այն ծածկագրերը, որոնք տե-

դական իշխանություններին պարտավորեցնում էին «զբաղվել հայերի կյանքի ու գույքի ապահովությամբ, նրանց սննդի մատակարարմամբ և նրանց հանգստի հարցերով՝ ողնորության ողջ ընթացքում» (ընդգծումն իմն է—Ռ.Ս.)։ Կարծես գիտակցելով բերված փաստաթղթերի ողջ անլրջությունը, հեղինակն ավելացնում է. «Նվազագույն իսկ հիմք չկա կասկածի տակ առնելու այս հրահանգների անկեղծությունը, քանի որ դրանք ծածկագրված էին և նախատեսված էին գաղտնի մնալու»[3], թեև նա չի կարող չխմանալ, թե ժողովրդի բախտը տնօրինող բռնակալները ինչքա՞ն փաստաթղթեր են ստեղծել պատմության համար՝ ապագա սերունդների աչքում իրենց հանցագործություններն արդարացնելու նպատակով։

Ընդհանրապես պետք է նկատել, որ ֆրանսիացի փաստաբանի անբարեխղճությունը ուղղակի աչքի է զարնում։ Հայերի բռնի տեղահանության բուն նպատակը հաստատող և ո՛չ մի հավաստի վկայություն տեղ չի գտել նրա գրքում։ Ոչ իր հայրենակից պատմաբան Ռընե Պինոնի տակավին 1916-ին արված այն եզրակացությունը, որ «հայերի՝ կանանց, ծերերի ու երեխաների տեղահանությունը կեղծավորաբար քողարկված մահվան դատավճիռ էր»[4], ո՛չ թուրքերի հավատարիմ բարեկամ գերմանական դեսպան Վանգենհայմի 1915-ի հուլիսի 7-ին Բեռլին ուղարկած այն ծածկագիրը, թե տեղահանության միջոցով «կատավարությունը իսկապես նպատակ ունի բնաջնջել հայ ազգը թուրքական պետության մեջ»[5], ո՛չ Թուրքիայում ամերիկյան դեսպան Հենրի Մորգենթաուի վկայությունները[6] և ո՛չ էլ բազմաթիվ այն փաստաթղթերը, որոնք բերված են վերը հիշատակված և այլ աղբյուրներում։

3. Հայերի տեղահանության մասին որոշումը միանգամայն օրինական էր, սակայն դրա իրականացումը՝ կործանարար ու դրամատիկ։

«Հայերի դեմ 1915-ի մայիսին ձեռնարկված միջոցների հետևանքները սարսափելի էին»[7],— մեծահոգաբար համաձայնվում է հեղինակը։ «Ամեն մի անաչառ դիտող,— շարունակում է նա,— պետք է դա ընդունի։ Ինքը Թալեաթը խոստովանել է այդ բանը «Միության և առաջադիմու-

թյուն» կուսակցության վերջին համագումարում 1918 թվականի նոյեմբերի 1-ին»[8]:

Եվ այսպես, տեղահանությունը սարսափելի էր աքսորյալ հայերի համար: Ուրեմն ի՞նչ, հեղինակը դատապարտո՞ւմ է երիտթուրքերի հանցագործությունը՝ 1915-ի ցեղասպանությունը: Ամենևին ո՛չ: Նա միայն «ցավում» է, որ պատերազմական հանգամանքներում տեղի է ունեցել հայերի ողբերգություն: Բայց ի՞նչ մեղք ունի դրանում ժամանակի թուրքական կառավարությունը, եթե ապիկար տեղական պաշտոնյաներն ու ոստիկանները չեն կատարել Թալեաթի ու Էնվերի «անկեղծ» հրահանգներն ու կարգադրությունները:

Ընթերցողը կարող է չհավատալ, որ 1915-ի եղեռնից յոթանասուներեք տարի հետո կարող են նման պարզունակ ձևով աղավաղել իրականությունը: Մի այլ մեջբերում հեղինակից.

«Կառավարությունը նախատեսել էր,— գրում է դը Մալվիլը,— որ հայերի անձի ու գույքի անվտանգությունը կապահովվի նրանց տեղափոխման ժամանակ: Նա կարգադրություն էր արել, որ ինչպես ճանապարհին, այնպես էլ նշանակված վայրերը հասնելուց հետո նրանց սնունդ մատակարարվի և որ վերաբնակեցման համար անհրաժեշտ նյութական միջոցները նրանց տրվեն անվճար:

Ոչ մի բան չարվեց. դեպի հարավ գնացող հայերի շարասյուները սրի քաշվեցին կա՛մ քայլելու, կա՛մ նրանց կանգառի պահին, և համեմատաբար նվազ թիվ կազմող այն վերապրողները, որոնք հասան Միջագետք, որտեղ ոչինչ չէր արված նրանց ընդունելու համար, տեղավորվեցին հանպատրաստից ստեղծված ճամբարներում, գետերի ափին, ուր նրանց առողջի մի քանակություն անմիջապես մեռավ սովից ու հյուծվածությունից»[9]:

Ինչպես տեսնում ենք, հեղինակն ամենայն լրջությամբ շարունակում է ընթերցողին համոզել, որ թուրքական կառավարությունը ոչ միայն չէր ծրագրել հայկական հարցի լուծումը հայերին բնաջնջելու ճանապարհով, այլև հոգ էր տարել, մի կողմ թողնելով պատերազմող Թուրքիայի ծանր կացությունը, լրջորեն զբաղվել հայերի «ապահով ու ան-

վտանգ» ճանապարհորդության հարցերով: Եվ հեղինակը չի հապաղում եզրակացնելու, որ եթե հայերը զոհվել են ոչ թե կառավարության, այլ անպատասխանատու պաշտոնյաների մեղքով, ուրեմն տեղի ունեցած ողբերգությունը ո՛չ մի դեպքում չի կարելի անվանել գենոցիդ: Ի՞նչ փույթ, թե սկսած Ֆրանսիայի պրեզիդենտ Ֆրանսուա Միտերանից և վերջացրած Փարիզում կայացած երիտթուրքերի հասարակական դատավարությունով ու Եվրոպական պառլամենտի որոշումով, միջազգային հասարակությունն այսօր ճանաչում և դատապարտում է 1915-ի ցեղասպանությունը, որպես հանցագործություն մարդկության դեմ:

Այսպիսով, ֆրանսիական փաստաբանը, գիտակցորեն շրջանցելով իրականությունը, փորձում է հանդես գալ ժամանակակից թուրք պատմաբանների կողմից համառորեն պրոպագանդվող հակապատմական կոնցեպցիայի պաշտպանի ու ջատագովի անփառունակ դերում, իթթիհադական ցեղասպանների բարբարոսական արարքներն արդարացնողի դերում:

Բարեբախտաբար, նման հեղինակները Ֆրանսիայում եզակի են և նրանց անհիմն ու փաստազուրկ գործերը դատապարտված են մոռացության:

1988

ՀԱՅԵՐԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՆԳԼԻԱԿԱՆ ՊԱՏՄԱԲԱՆՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

1960—1980-ական թթ. Անգլիայում լույս տեսան հայ ժողովրդի պատմությանը նվիրված մի քանի կարևոր աշխատություններ, որոնցում զգալի տեղ է հատկացված հայկական հարցին ու հայկական ջարդերին: Դրանցից ուշադրության արժանի են հայտնի կովկասագետ, Լոնդոնի համալսարանի պրոֆեսոր Դեվիդ Մարշալ Լանգի երկու գրքերը՝ «Հայաստանը քաղաքակրթության օրրան» և «Հայերը աքսորյալ ժողովուրդ»[1] և Քրիսթոֆըր Ուոքըրի «Հայաստան. ազգի գոյատևումը» վերնագրով աշխատությունը[2], Ջոզեֆ Հելլերի և այլոց հոդվածները[3]:

Առավել հանգամանորեն XIX դարի վերջի և XX դարի սկզբի իրադարձությունները Թուրքիայում հետազոտում

է երիտասարդ պատմաբան Ք. Ուոքըրը վերոհիշյալ իր գրքում, որն աչքի է ընկնում սկզբնաղբյուրների ու մասնագիտական գրականության լայն ընդգրկումով: Հեղինակը գիտական շրջանառության մեջ է դնում Անգլիայի արտաքին գործերի մինիստրության՝ Ֆորին օֆիսի արխիվում պահվող մի շարք արժեքավոր փաստաթղթեր:

Ծարադրելով 1915-ի գենոցիդի նախապատմությունը, հեղինակը մերկացնում է ազգային հարցում սուլթանական կառավարության վարած խարդախ քաղաքականությունը, ցույց տալիս, թե ինչպիսի միջոցներ էր նա գործադրում Արևմտյան Հայաստանում հայ ազգաբնակչության միատարրությունը վերացնելու, երկիրը բաժան-բաժան անելու գործում: Հենվելով Մուշ քաղաքում անգլիական հյուպատոս Բրանտի զեկուցագրի վրա, որտեղ ասվում էր, որ «ամբողջ Մշո դաշտում մահմեդական գյուղացիությունը ո՛չ մի տեղ միախառնված չէ հայերի հետ», Ուոքըրը ցույց է տալիս, թե ինչպիսի հետևողականությամբ էր սուլթանական իշխանությունը նոսրացնում Արևմտյան Հայաստանի հայ ազգաբնակչությունը, այնտեղ տեղափոխելով թուրքերին, քրդերին ու թուրքմեններին և մահմեդականներին հրահրելով քրիստոնյա հայերի դեմ[4]:

Անգլիական որոշ պատմաբաններ, հենվելով թուրքական պաշտոնական տեսակետի վրա, արևմտահայության վիճակը ներկայացնում են որպես համատարած բարեկեցություն, փաստարկելով, թե հայ վաճառականներն ու դրամատերերը հույների և հրեաների հետ միասին իրենց ձեռքում էին պահում կայսրության մայրաքաղաքի՝ Կոստանդնուպոլսի ողջ առևտուրն ու ֆինանսները: Այս վարկածի օգտին մյուս փաստարկն այն է, որ հպատակ բոլոր ժողովուրդներից հենց հայերն էին Թուրքիայի կողմից արժանացել «հավատարիմ ազգի» (միլլեթի սադըքա) կոչմանը: Այսպես, Ժոան Հոսլիպը պնդում է, որ «ինչպես Աբդուլ Համիդը, այնպես էլ նրա անմիջական նախորդները հայերի նկատմամբ վարվում էին հանդուրժողականությամբ և արդարամտորեն»[5]:

Եվ ահա,— շարունակում է հեղինակը,— այդ այսպես կոչված հավատարիմ ազգը, հրահրվելով ոուս գործակալնե-

րի և ամերիկյան միսիոներական դպրոցների կողմից, պահանջում է անկախություն՝ Բեռլինում իրեն ներկայացնելով որպես հալածվող ժողովուրդ[6]:

Ջարգացնելով այս միտքը, հեղինակը ամբողջովին ժխտում է արևմտահայության ազգային ազատագրական շարժման ինքնաբուխ բնույթը և օբյեկտիվ օրինաչափությունը, կրկնելով «խռովահույզ ոգին» դրսից ներդնելու վերաբերյալ հին կեղծիքները:

«Ամբողջ շարժումը,— պնդում է հեղինակը,— հեղափոխական պրոպագանդի հետևանք էր, և դրա համար սուլթանը նախատում էր ո՛չ միայն Եվրոպային, այլև Ամերիկային, այն միսիոներներին, որոնց նրա պապը՝ Մահմուդը մեծահոգի կերպով թույլատրել էր դպրոցներ ու քոլեջներ բացել կայսրության տարբեր մասերում»[7]:

Հենց դրա համար էր Աբդուլ Համիդը նախատում Եվրոպային, մեղադրում նրան այն բանում, որ սովորաբար խաղաղասեր հայերին այդ պրոպագանդը մղում էր հակամարտության իրենց բռնակալ քուրդ հարևանների դեմ, բարձրացնում զինված ելույթների: Փորձելով արդարացնել Աբդուլ Համիդի չարագործությունները, հեղինակը վկայակոչում է այն կասկածամտությունն ու մշտական վախը, որոնք ուղեկցում էին սուլթանին:

«Աբդուլ Համիդը հայկական հարցին մոտենում էր ոչ թե որպես նորմալ մարդ, այլ որպես մի անձնավորություն, որը վախի ազդեցության տակ խելագար է դարձել...»[8]:

Մյուս «մեղմացուցիչ» հանգամանքը հեղինակը համարում է Աբդուլ Համիդի ծայրահեղ հավատացյալ լինելը, նրա մոլեռանդ ևվիրվածությունը մահմեդական գաղափարին, առանձնապես նրա պատասխանատվության զգացումը որպես խալիֆի՝ բոլոր մահմեդականների կրոնական առաջնորդի, որը պատասխանատու է ամեն մի մահմեդականի կյանքի համար: Որպես ապացույց իր այս պնդման, հեղինակը բերում է հետևյալ օրինակը: Երբ անգլիական դեսպանը փորձում է ուշադրություն հրավիրել հայկական մի գյուղի արու ազգաբնակչության նկատմամբ թույլ տրված անարդարության վրա՝ գյուղի բոլոր տղամարդիկ խոշտանգվել էին և բանտ նետվել միայն այն բանի համար, որ

սպանվել էր մի մահմեդական, Աբդուլ Համիդը նայել էր դեսպանի վրա սառը աչքերով և ասել. «Բայց դուք հասկանո՞ւմ եք, չէ՞ որ մահմեդական է սպանվել»[9]: Միևնույն ժամանակ Ժ. Հոսլիպը բերում է օրինակներ, թե որքան հիվանդագին էր ընդունում Աբդուլ Համիդը քրիստոնյաների օգտին ամեն մի միջամտություն: Այսպես, անգլիական թագուհի Վիկտորյայի փորձին՝ միջամտելու հայերի օգտին համիդյան ջարդերի ժամանակ, սուլթանը հայտարարել է, որ «ինքը ցավում է, որ Նորին Մեծությունը և անգլիական ժողովուրդը այդքան վատ են տեղեկացված այն մասին, թե իրականում ինչ է տեղի ունենում Հայաստանում»[10]:

Շարունակելով «կարմիր սուլթանի» փառաբանումը, Հոսլիպը, հենվելով մոլեռանդ թուրքասեր Ա. Վամբերիի կարծիքի վրա, գրում է, որ Աբդուլ Համիդը ապրել է նաև խղճի խայթի պահեր, երբ նա զղջացել է այն խիստ միջոցների համար, որ ինքը ստիպված է եղել կիրառել: Սակայն սկզբից մինչև վերջ նա հավատացած է եղել, որ այդ միջոցառումներն անհրաժեշտ էին և որ «հայկական հարցը վերացնելու միակ ուղին հենց հայերի վերացումն է»[11]:

Թուրքագիտական գրականության մեջ հիմնականում արդեն տրված է Աբդուլ Համիդ II-ի ջարդարարական քաղաքականության գնահատականը, և վերը բերված Ժ. Հոսլիպի գովասանքները նրա հասցեին ամենևին բնորոշ չեն անգլիական պատմաբանների մեծամասնության համար: Միշտ հակառակը: Մի շարք հեղինակներ, որոնց մեջ աչքի է ընկնում Ռ. Ուոքերը, փորձում են փաստագրական նոր նյութերի հիման վրա վեր հանել համիդյան ազգայնամոլ քաղաքականության այս կամ այն կողմը: Նշված պատմաբանը, հենվելով իր իսկ կողմից հայտնաբերված արխիվային նոր փաստաթղթերի վրա, ընդգծում է աբդուլհամիդյան պանիսլամիզմի և «Համիդիե» հեծելազորի դերը հայերի բնաջնջման գործում: Նրա կարծիքով, ձևականորեն դա արվում էր քրդերին կարգուկանոն ներարկելու և Թուրքիայի հզոր հարևանի՝ Ռուսաստանի դեմ պաշտպանական գիծը ուժեղացնելու, իսկ փաստորեն՝ հայերին ոչնչացնելու նպատակով: Նրա բերած փաստերից երևում է, օրինակ, որ 1892 թվականի դեկտեմբերի կեսերին, Կոստանդնուպոլսում

բրիտանական կցորդի տվյալներով, գոյություն ուներ 33 «Համիդիե» գունդ՝ յուրաքանչյուրում 500 մարդ, իսկ 13 նոր գունդ կազմավորման ընթացքի մեջ էին[12]:

«Համիդիե» հեծելազորի ստեղծումը,— եզրակացնում է հեղինակը,— «բաժանիր և տիրիր» օրենքի առավել նուրբ ու էֆեկտիվ ճմուշներից մեկն էր...»[13]:

Վերլուծելով 1894-ի Սասունի ջարդի պատճառները, հեղինակը, վկայակոչելով Մեծ Բրիտանիայի դիվանագիտական ու հյուպատոսական գործակալների զեկուցագրերը, վեր է հանում ջարդերի հետաքննության նպատակով 1895 թվականին Մուշում ստեղծված քննչական հանձնաժողովի կողմից արված այլևայլ գործարքները: Այդ հանձնաժողովի նախագահը և անդամներն իրենք էին հուշում ջարդի անմիջական ականատեսներին, թե ի՞նչ ասել և ինչպե՞ս ասել դատարանում: Ծեծիկ գյուղից Մուշ եկած մի հայ գեղջուկ դատարանում ասել էր, որ նա «ստիպված է այն ամենում, ինչ որ կատարվել է, մեղադրել քրդերին, բայց ոչ զինվորներին»[14]: Բայց եթե կոտորածների ականատեսները հանդես էին գալիս իշխանությունների կամ զորքերի դեմ ցուցմունքներով, նման դեպքերում հարցաքննությունը ընթանում էր անկանոն ձևով, այն հաշվով, որ նրանց բռնեն հակասությունների մեջ՝ մանրամասներում[15]:

Սակայն չի կարելի համաձայնվել հեղինակի հետ, երբ նա խոսելով հայկական ջարդերի արձագանքների մասին Եվրոպայում, պնդում է, որ իբր «Մեծ Բրիտանիան այժմ միակ տերությունն էր, որը պատրաստ էր դրական ու ռեալիստական քայլեր ձեռնարկել, և որպես պատճառաբանություն նա բերում է այն փաստը, որ այն ժամանակ Գերմանիան, Ավստրիան և Իտալիան կորցրել էին հետաքրքրությունը Արևմտյան Հայաստանում բարենորոգումների ընկատմամբ, իսկ Ռուսաստանի արտաքին քաղաքականությունն էլ գտնվում էր անդրդվելի արիստոկրատ-հետադիմական իշխան Լոբանով-Ռոստովսկու ձեռքում, որը վախենում էր, որ հայկական կոմիտեների գործողությունները կարող են տարածվել իր սեփական կայսրությունում[16]: Մինչդեռ ճշմարտությունն այն է, որ **բոլոր** մեծ տերությունները, առանց բացառության, հետապնդում էին իրենց

սեփական շահը Օսմանյան կայսրությունում, և եթե Անգլիան այդ շրջանում որոշ «հայանպաստ» ակցիաներ էր ձեռնարկում, ապա դա ամենևին էլ չի վկայում նրա անկեղծության: Հատկանշական է, որ ինքը՝ հեղինակը մատնանշում է, որ չնայած լորդ Սոլսբերիի միջամտությանը՝ նրա նամակին սուլթանին, որտեղ ասվում էր, որ թուրքական իշխանությունները և զորքերը խրախուսում էին ջարդարարներին, «նամակների փոխանակման ընթացքում և դրանից հետո էլ ջարդերը շարունակվում էին առանց դադարելու»[17]:

Անգլիական առանձին պատմաբաններ պանիսլամիզմի հետ մեկտեղ փորձում են վերլուծել հետադիմական մյուս հոսանքի՝ թուրքիզմի գաղափարական ակունքները: Այսպես, Դեվիդ Քուշները «Թուրքական ազգայնականության վերելքը 1876—1908 թթ.» խորագրով իր գրքում նշում է, որ արդեն Աբդուլ Համիդի շրջանում, թուրքական մամուլի էջերում սկսել էր տարածվել թուրքական Անատոլիայի կոնցեպցիան, և անհրաժեշտություն էր դարձել ընդգծել այն միտքը, որ Անատոլիան, բացի թուրքերից, որևէ այլ ժողովրդի չի պատկանել: Այդ գիծը տարվում էր հատկապես Արևելյան ճգնաժամից հետո, երբ Օսմանյան կայսրությունը Բալկաններում զգալի տարածքներ կորցրեց[18]:

«Երբ «Թերջումանը հաքիքաթ» թերթը մեկնաբանում էր նոր Հայաստանի գաղափարը,— գրում է հեղինակը,— նա ընդգծում էր Անատոլիայի բնակչության բազմատարր կազմը, նշելով միաժամանակ, որ ճիշտ է, երբեմնի այդ երկրամասը իր մեջ ընդգրկում էր հայկական մի պետություն, սակայն այդ իմաստով նա միաժամանակ բազա էր հանդիսանում մի շարք այլ ժողովուրդների ու պետությունների համար»[19]: Հեղինակը եզրակացնում է, որ 1930-ական թվականներին ստեղծված թուրք պաշտոնական պատմական կոնցեպցիան ընդգծում էր թուրք ժողովրդի հնագույն արմատները Անատոլիայում, թուրքական ցեղի մեջ ներառելով այնպիսի ժողովուրդների, ինչպես խեթերը: «Դրա նպատակն էր,— ավարտում է իր միտքը հեղինակը,— հասնել այն բանին, որ թուրքերը Անատոլիան դիտեն որպես անվիճելի թուրքական վաթան»[20]:

Իսկ վերը հիշատակված Ջ. Ուորքերը, համեմատելով սյանթուրքիզմը և ռասիզմը, գալիս է այն եզրակացության, որ զույգ այդ տեսություններն էլ պաշտպանում են բարձրագույն ռասայի հասկացողությունը և հանդես են գալիս այդ ռասային չպատկանող բոլոր անձանց ոչնչացնելու պահանջով[21]:

1915 թվականի դեպքերը քննելիս մի քանի անգլիական պատմաբաններ շրջանառության մեջ են դնում Անգլիայի արտաքին գործերի մինիստրության չհրապարակված փաստաթղթերը[22]: Պրոֆեսոր Լանգը, անդրադառնալով արևմտահայ ազգաբնակչության տեղահանությանը, մատնանշում է, որ դրան նախորդել էին թուրքական բանակ զորակոչված հայ տղամարդկանց զինաթափումն ու տմարդի ոչնչացումը: Սակայն,— գրում է հեղինակը,— «առավել ողբերգական ու սարսափելի էր քաղաքացիական հայ ազգաբնակչությանը վիճակված ճակատագիրը: Երեխաները բռնի կերպով խլվել էին իրենց ընտանիքներից և ուղարկվել «որբանոցներ», որոնք ըստ էության գետնի մեջ փորված փոսեր էին, ուր ողջ-ողջ ձգտում էին մանուկներին: Կանանց ու ծերունիներին հավաքում էին քարավաններում, ստիպելով ոտքով քայլել հարյուրավոր մղոններ Հալեպում և Սիրիայում կազմակերպված համակենտրոնացման կետերի ուղղությամբ: Ճանապարհին նրանց սպասում էին մարդասպանները, որոնց կառավարությունը ձեռքերի ազատություն էր տվել... մոտ մեկնկես միլիոն արևմտահայ ֆիզիկապես ոչնչացվեց ընդհանուր երեք միլիոնից, որ ապրում էր Թուրքիայում պատերազմից առաջ»:

«Անկարելի է ժխտել,— եզրակացնում է հեղինակը,— որ բնաջնջումը կանխապես ծրագրված էր և իրականացված երիտթուրքական խունտայի հրամանով: Թալեաթ փաշայի գաղտնի հրահանգները հայտնաբերվել էին կենտրոնական ու գավառական գրասենյակներում առաջին համաշխարհային պատերազմից հետո: Նրանցում տրվում էին ամենաստույգ ու մանրամասն հրամաններ բոլոր հայերին ոչնչացնելու վերաբերյալ: Այդ փաստաթղթերում, իհարկե, օգտագործվում էին այնպիսի այլաբանություններ, ինչպես «բնակչության տեղափոխում», «անձնականազմի վերադասա-

վորում» և այլն, ինչպես դա արվում էր հիտլերյան ռեժիմի պայմաններում հրեաներին ոչնչացնելու ժամանակ»[23]:

Համառոտակի շարադրելով հայերի ցեղասպանության պատմությունը Բրայսի, Թոյնբիի, Լեպսիուսի, Ռաֆայել դե Նոգալեսի և այլ հեղինակների մեջբերված փաստերի հիման վրա, պրոֆեսոր Լանգը գալիս է հետևյալ եզրակացության. «Զանգվածային սպանությունների կամպանիան մեծ չափով գործնական հետևանքն էր բացահայտ ցեղապաշտ գաղափարախոսության, որը երիտթուրքական կառավարողները իրենց զենքը էին դարձրել պատերազմի տարիներին: Այդ խումբայի անդամները և նրանց ռասիստական քաղաքականությունը,— գրում է հեղինակը,— արժանացել էին Ադոլֆ Հիտլերի հիացմունքին, չնայած նրա վերջնական ստորացուցիչ պարտությանը»[24]: Հեղինակը նշում է, որ մահվան դատապարտված (հետևակ կարգով) թուրք հանցագործ ղեկավարներից չորսը՝ Էնվերը, Թալեաթը, Ջեմալը և դոկտոր Նազըմը կարողացան խույս տալ արդարադատությունից[25]:

Ք. Ուոքերը իր առջև խնդիր է դնում պարզաբանելու, թե հայերի դեմ ձեռնարկված գործողությունները ե՞րբ են առաջին անգամ ձեռնարկվել: Հենվելով Թուրքիայի ռազմական միհիստրության պատմության բաժնի պետ Ազիզ Սամիհի հոդվածի վրա, որը տպագրվել էր «Քուոուն» թերթում 1935 թվականին, հեղինակը գրում է, որ առաջին անգամ պատերազմը սկսվելուց հետո հայկական գյուղերի վրա հարձակվելու հրամանները տրվել են 1914 թ. հոկտեմբերի 29-ից մինչև նոյեմբերի 5-ը ընկած ժամանակամիջոցում: Ինչպես նշում էր Սամիհը, դոկտոր Բեհաեդդին Շաքիրը արդեն 1914-ի դեկտեմբերի սկզբին գտնվում էր օսմանյան 34-րդ դիվիզիայի շտաբում՝ Մուշ քաղաքում: Հեղինակը եզրակացնում է. «Կուսակցական գլխավոր գաղափարախոսի և քաղաքացիական անձնավորության ներկայությունը բանակային կենտրոնատեղիում դժվարություն է հարուցում պատկերացնելու, որ Փարիզում իր կրթությունը ստացած այդ բժիշկն ու մտավորականը, եղել է ջարդի գլխավոր կազմակերպիչը»[26]:

Սակայն, հեղինակի կարծիքով, վերջնական որոշումը կայացվել է 1915-ի փետրվարի կեսին: «Դրանից հետո տեղի ունեցած դեպքերից, որոնք մանրակրկիտ հաստատված էին փաստաթղթերով, մենք կարող ենք եզրակացնել,— գրում է հեղինակը,— թե ինչ միջոցառումներ էին դրանք. պարզապես Հայաստանում օսմանյան հայերի բնաջնջումը: Նման որոշումը բնականաբար բխում էր 1910 թվականից հետո իր զարգացումն ապրած թուրքական ռասիզմից: Թուրքական նացիոնալիզմը, և դրան գումարած պանթուրքիզմի ամբիցիաները՝ «Թուրքիան դեմքով դեպի Արևելք», նշանակում էր, որ Հայաստանը պետք է մաքրվի հայերից... պատերազմը նպաստավոր հնարավորություն էր ընձեռում երիտթուրքերին գործել անպատիժ կերպով»[27]: Ջուգահեռ անցկացնելով 1895 և 1915 թվականների ջարդերի միջև, հեղինակը գրում է. «Պատասխանը պիտի կայանա նրանում, որ 1915—1916 թվականների գաղափարական մոլեռանդությունը և ծայրահեղ դաժանությունը, որը չէր մեղմացվել կրոնական որևէ արգելքներով, ծառայում էին սպանությունները ընդարձակելու ագրեսիվ վճռականությանը: Աբդուլ Համիդը փորձեց իր կայսրությունը պահել իրեն ծանոթ պարզ եղանակով, որը նրա նախորդները հաճախ էին օգտագործում: Երիտթուրքերը, ընդհակառակը, ներծծված էին ռասայական գիտակցությամբ, որը XX դարի գիտակցություն էր՝ իր դաժանությամբ և այն բանով, որ բացառում էր բոլոր այլ նկատառումները»[28]: Հենց դա, հեղինակի կարծիքով, «միանգամայն օգտագործելի է դարձնում գենոցիդ բառը, թեև այդ տերմինը մինչև 1944 թվականը չէր հայտնագործվել»:

«Երիտթուրքերը,— շարունակում է հեղինակը,— կանխամտածված փորձ արեցին բնաջնջելու բոլոր հայերին Թուրքահայաստանում և Կենտրոնական Անատոլիայում... Հայերի գենոցիդը 1915 թվականին հիրավի XX դարի երևույթ է՝ ռասիզմի ու ռացիոնալիզմի իր խառնուրդով...»[29]:

Թալեաթ փաշայի հեռագրերի կապակցությամբ հեղինակը «զարմանալի» է համարում այն տեսակետը, որ հայտնել են ամերիկյան պատմաբաններ Ստենֆորդ և Էզել Կուրալ Շոու ամուսինները, այն է. «Բանակին տրվել էին

հատուկ հրահանգներ հայերին պաշտպանել քոչվորների հարձակումներից և նրանց տալ բավարար քանակությամբ մթերք ճանապարհին և բնակության վայրերում իրենց կարիքները բավարարելու համար: Օսմանյան զինվորական ղեկավարները զգուշացվել էին, որ իրենք պարտավոր են որոշակիորեն հասկացնել տալ, որ ո՛չ քրդերը, ո՛չ էլ ուրիշ մահմեդականներ չեն կարող իրադրությունն օգտագործել վրեժխնդրության նպատակով՝ ի դիմաց երկարամյա հայկական տեռորիզմի: Հայերը պետք է պաշտպանվեն և հոգատարությամբ շրջապատվեն այնքան ժամանակ, մինչև որ նրանք կվերադառնան իրենց տները պատերազմից հետո»[30]:

«Ի պաշտպանություն իրենց այս անմիտ պնդումների,— գրում է Ուոքըրը,— հեղինակները վկայակոչում են թուրքական պաշտոնական աղբյուրները»: Իսկ թե ի՞նչ են իրենցից ներկայացնում թուրքական վիճակագրությունը և պաշտոնական աղբյուրները, Ուոքըրն այդ բանը պարզաբանում է Չարլզ Էլիոտի «Թուրքիան Եվրոպայում» վերնագրով գրքից բերված մի մեջբերումով. «Եթե որևէ մեկը որպես հիմք ընդունի օրենքները, վիճակագրությունը և բյուջեն այն տեսքով, ինչպես որ նրանք հրապարակվել են, ապա հեշտ է ապացուցել, որ Օսմանյան կայսրությունը իրեն հավասարը չունեցող ծաղկուն մի պետություն է: Կյանքն ու սեփականությունը պաշտպանված են, բոլորն օգտվում են կատարյալ ազատությունից ու հանդուրժողականությունից, հարկերն աննշան են, բալանսը լայն է, առևտուրը՝ բարգավաճող: Եվ նրանք, ովքեր անձամբ լավ ծանոթ չեն Թուրքիային, կարող են նման գնահատականներին նայել կասկածանքով և համարել դրանք խիստ կերպով գունազարդված, սակայն նրանց դժվար է պատկերացնել, որ ողջ այս պաշտոնական գրականությունը բացարձակ ֆիկցիա է և գործնական նպատակներով այն արժանի չէ ո՛չ մի ուշադրության»[31]: Դառնալով հայերի ընդհանուր զոհերի թվին, հեղինակը տվյալներ է բերում «Գերմանիան ու Հայաստանը» փաստաթղթերի հայտնի ժողովածուից՝ մեկ միլիոն սպանված, որոնցից կեսը կանայք ու երեխաներ, ողջ մնացած 600 հազար հայերից 200 հազարը իսլամացված:

Այնուհետև ասվում է, որ Անդրկովկաս թուրքական ներխուժման շրջանում՝ 1918-ի մայիս-սեպտեմբերին զոհվել են 50—100 հազար հայեր, իսկ 250 հազար էլ 1919—1922 թթ. ընթացքում, երբ վերապրած հայերը վերադարձան իրենց օջախները[32]:

Անգլիացի մյուս պատմաբանները 1915-ի դեպքերը քննում են հարևանցիորեն և առանց նոր արխիվային փաստաթղթեր ընդգրկելու: Այսպես, պրոֆեսոր Մ. Անդերսոնը, որը հայկական հարցը դիտում է նրա պատմական զարգացման մեջ՝ Արևելյան հարցի հետ սերտ առնչությամբ, այս դեպքում սահմանափակվում է սոսկ հիշատակումով այն մասին, որ 1915—1916 թվականներին թուրքերի կողմից կազմակերպված նոր ջարդերի ու տեղահանությունների հետևանքով ոչնչացվել է Փոքր Ասիայի հայ ազգաբնակչության մեծ մասը[33]:

Մի այլ հեղինակ՝ լորդ Քինռոսը նույնպես ճիշտ է գնահատում երիտթուրքերի վարքագիծը, թեև նա բացահայտորեն նվազեցնում է զոհված հայերի թիվը: Հեղինակը նշում է, որ Գալիպոլիում անգլիական զորքերի կրած անհաջողությունը երիտթուրքական եղյակին հնարավորություն ընձեռեց, չվախենալով արտաքին միջամտությունից, հետևելու նախապես մշակված քաղաքականությանը՝ հայ ազգի վերջնական լիկվիդացիային: «Նրա մոտիկությունը ռուսներին կամ Կովկասյան ճակատին,— գրում է Քինռոսը,— հարմար առիթ հանդիսացավ հալածանքների համար այնպիսի մասշտաբներով, որոնք մեծապես գերազանցում էին Աբդուլ Համիդի գազանությունները, և դա արվեց մեկ միլիոն հայերի տեղահանության միջոցով, որոնց կեսը զոհվեց»[34]:

Պետք է առանձնահատուկ նշել Թուրքիայի մասնագետ, լրագրող և պատմաբան Էնդրյու Մանգոյի գործերը: Թուրքիային նվիրված իր գրքում նա լռությամբ է մատնում 1915 թվականի դեպքերը, իսկ 1982-ին տպագրված «Հասկանալ Թուրքիային» վերնագիրը կրող իր հոդվածում նա քննադատում է թուրք և արևմտյան հեղինակներին այն բանի համար, որ նրանք քննադատորեն չեն օգտագործում թուրք պաշտոնական վիճակագրությունը[35]: Այդ կապակցությամբ

նա հատկապես անդրադառնում է վերը նշված Շոու ամուսինների գրքին, մատնանշելով, որ «օսմանյան և ավելի ուշ շրջանի թուրքական օրենքներին և հրամանագրերին պետք է մոտենալ անվստահությամբ, մի բան որ արված չէ Շոուի աշխատության մեջ»[36]:

Սակայն իր մեկ այլ հոդվածում՝ «Հիշելով փոքրամասնություններին», Է. Մանգոն ամեն կերպ փառաբանելով իսլամական հանդուրժողությունը, բացահայտորեն պաշտպանում է սուլթանական և երիտթուրքական քաղաքականությունը Օսմանյան կայսրության քրիստոնյա ժողովուրդների նկատմամբ: Անդրադառնալով 1915-ի դեպքերին, նա չափազանցված է համարում մեկնկես միլիոն՝ զոհված հայերի թիվը, որը բերվում է ամերիկյան հեղինակներ Գևորգ Բարդակչյանի և Հակոբ Բարսումյանի կողմից[37]: Նրա համար առավել ստույգ են ամերիկյան պրոֆեսոր Ջ. Մաքարթիի տվյալները. 1912-ին Անատոլիայում բնակվել է 1.465000 հայ, իսկ տասը տարի հետո փրկվածների թիվը կազմել է 881 հազար: Այս թվերի հիման վրա հեղինակը եզրակացնում է, որ զոհերի թիվը «տարբեր պատճառներից» կազմել է ընդամենը 584 հազար[38]: Հեղինակը փաստորեն պաշտպանության տակ է առնում երիտթուրքական ղեկավարությանը, մեջբերելով թուրք դիվանագետ Ք. Գյուրյունի այն խոսքերը, թե իբր «հայերի սպանությունները չէին կատարվում կառավարության հրամանով»[39]: Նա արդարացնում է նաև հայկական ջարդերը այն հիման վրա, որ օսմանյան կառավարությունը, երկյուղ կրելով նրանց համընդհանուր ապստամբությունից, լուրջ հիմք է ունեցել հայերին տեղահանելու համար, կրկնելով, այդպիսով, թուրք պաշտոնական տեսակետը[40]:

Վերջերս Է.Ընդրյու Մանգոն հանդես եկավ «Փոքրամասնություններ և մեծամասնություններ» պատմագրական բնույթի հոդվածով, որտեղ նա անդրադառնում է 80-ական թվականներին արտասահմանի տարբեր երկրներում, հիմնականում Անգլիայում ու ԱՄՆ-ում, լույս տեսած հայազգի պատմաբանների գրքերին ու հոդվածներին: Չնայած առանձին ճիշտ դատողություններին, հոդվածը հիմնակա-

նում անհաչաո չէ, գրված է թուրքանպաստ կողմնորոշումով։ Այսպես, խոսելով ամերիկահայ պատմաբան և փիլիսոփա Վահագն Դադրյանի աշխատությունների մասին, Է. Մանգոն կասկածի տակ է առնում 1919-ի Կ. Պոլսում կազմակերպված երիտթուրքական պարագլուխների դատավարությունը, մասնավորապես մեղադրական ակտը, գրելով, որ պարտադիր չէ, որ այն ակնհայտորեն ճիշտ լինի, որ այդ դատավարությունը կազմակերպվել է մեղադրյալների քաղաքական հակառակորդների կողմից։ Փաստորեն հեղինակն այստեղ պաշտպանության տակ է առնում հայկական ցեղասպանության հիմնական պատասխանատուներին՝ Թալեաթ, Էնվեր, Նազըմ, Բեհաեդդին Շաքիր և այլ հանցագործներին, վիճարկում նրանց նկատմամբ կայացված մահավճիռը, որից հետո հեղինակը «մեծահոգաբար» ընդունում է, որ «մեծ թվով հայեր սպանվել են»։ Անդրադառնալով, սակայն զոհվածների թվին, հեղինակը նորից վկայակոչում է վերը նշված Ջ. Մաքարթիին, որ 1912—1922 թթ. «բոլոր պատճառներից» մահացել են մոտ 600.000 հայեր՝ Անատոլիայի հայ ազգաբնակչության 40 տոկոսը։ Ճիշտ է նաև,— գրում է նա,— որ այդ նույն ժամանակաշրջանում մահացել են 2,5 միլիոն անատոլիական մահմեդականներ, և որ հենց հայ հեղափոխականներն են ներարկել քաղաքական տեռորիզմը Անատոլիայում[41]։

Հայերի ցեղասպանության արդարացման փորձ է նաև հեղինակի այն պնդումը, թե իբր «հայկական ավերիչ շարժումը գոյություն ուներ տեղահանություններից առաջ»[42]։ Ինչպես տեսնում ենք, հեղինակն այստեղ կրկնում է թուրքական պաշտոնական տեսակետը հայերի բռնի տեղահանության բուն դրդապատճառների մասին։

Անգլիական հեղինակները քննում են նաև 1915 թվականի հայկական ողբերգության մեջ մեծ տերությունների պատասխանատվության հարցը։ Պրոֆեսոր Լանգը, խոսելով այդ հանցագործությանը դաշնակից տերությունների մեղսակցության մասին, գտնում է, որ Գերմանիայի թողտվությունը այս հարցում վիճարկելի է։ Հեղինակն ի նկատի ունի այն փաստը, որ գերմանական առանձին սպաներ և հյուպատոսական ներկայացուցիչներ բողոքել են և փորձել փրկել

դատապարտվածների գոնե մի մասին, սակայն նրանց ջանքերը զրոյի էին հավասարեցվել դեսպան Վանգենհայմի, գեներալ Լիման ֆոն Սանդերսի և Բեռլինի կառավարության կողմից[43]: Միաժամանակ հեղինակը մատնանշում է, որ գերմանական մամուլում պարունակվող ջարդերի մասին ինֆորմացիան չեզոքացվում էր գրաքննության կողմից, թեև հումանիստ Լեպսիուսը և արևելագետ Մարկվարտը հրաժարվում էին լռել[44]: Ք. Ուոքերը անդրադառնալով գենոցիդի համար պատասխանատվության հարցին, փաստորեն խուսափում է իր կառավարության մեղքի չափը որոշելուց: Այդ հարցը շոշափում է Ջոզեֆ Հելլերը «Բրիտանիան և հայկական հարցը 1912—1914 թթ.» հոդվածում, որտեղ նա փորձում է վերանայել Անգլիայի դիրքորոշումը հայկական հարցում: Հեղինակը փաստորեն արդարացնում է իր կառավարության քաղաքականությունը, գտնելով, որ այն հիմնված էր «ռեալպոլիտիկի» սկզբունքների վրա:

«Իր վարքագծով,— գրում է հեղինակը,— նա (Անգլիան— Ռ.Ս.) կիսում է պատասխանատվությունը 1915—1916 թթ. դեպքերի համար: Վերջնական ողբերգությունը, սակայն, չէր կարող ժամանակին նախատեսվել բրիտանական որևէ պետական գործչի կամ դիվանագետի կողմից»[45]:

Անգլիական մի քանի հեղինակներ անդրադառնում են առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, մասնավորապես հայկական ջարդերից հետո, հայ ժողովրդի համար Անդրկովկասում ստեղծված իրավիճակին: Ք. Ուոքերը, նկարագրելով Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո Անդրկովկասում ստեղծված իրավիճակը, նշում է հետևյալը.

«Թուրքերը լավ հասկացան այն երկընտրանքը, որի առջև կանգնած էր Անդրկովկասը, և գիտեին իրենց շանսը՝ վերջնականապես անջատել Անդրկովկասը Ռուսաստանից (արագացնելով նրա դիվանագիտական ճանաչումը) և երբ որ Անդրկովկասը կդառնա անկախ, հրաժարվել իրենց այն խոստումներից, որ նրանք տվել էին՝ վերջինիս անկախության մղելու նպատակով: Եվ այդ դեպքում անցնել սահմանը և շարժվել դեպի արևելք, դեպի Թուրքեստան, Բուխարա և դենը: Պանթուրքական երազանքը կարող էր դառնալ

իրականություն»[46]: Թուրք ներխուժողների ճանապարհին, սակայն,— մատնանշում է հեղինակը,— կանգնեց հայ ժողովուրդը, որը նրանց հակահարված տվեց Սարդարապատում 1918 թ. մայիսի 22—26-ին: Հեղինակը ըստ արժանվույն է գնահատում հայկական բանակի այդ հաղթանակը՝ Հայաստանի և հայ ժողովրդի հետագա ճակատագրի համար.

«Հայերի համար ամենասուր այդ ճգնաժամի պահին նրանք, առաջին անգամ Երզնկայի տխուր էվակուացիայից հետո, խարխլեցին թուրքերին և կասեցրին նրանց առաջխաղացումը, հասան հաջողության և ետ շպրտեցին նրանց: Բավական է, որ հայերը անհաջողություն կրեին, և Հայաստան բառը, միանգամայն հավանական է, կարող էր սոսկ հին աշխարհագրական տերմին մնալ, ինչպես Կապադովկիան»[47]:

Պրոֆեսոր Դ. Լանգը նույնպես ընդգծում է Սարդարապատի տակ հայ ժողովրդի տարած հաղթանակի նշանակությունը: Նա հիշատակում է նաև թուրքական երկրորդ, այս անգամ քեմալական, ագրեսիայի մասին, որն ավարտվեց Հայաստանից Կարսի մարզի բռնագրավումով[48]:

Այս հարցը շոշափում է նաև լորդ Կինրոսը Քեմալ Աթաթյուրքին նվիրված իր մենագրության մեջ: Հեղինակի կողմից բերված փաստերը հաստատում են այն կարծիքը, որ քեմալականները երիտթուրքերի նման վճռականորեն հանդես էին գալիս Օսմանյան կայսրության ոչ թուրք ժողովուրդների, հատկապես հայերի, ազգային ինքնորոշման դեմ: Հեղինակը նշում է, որ Մ. Քեմալը հարձակվում էր մեծ վեզիր Դամադ Ֆերիդ փաշայի վրա այն բանի համար, որ նա համաձայնվել էր հայկական ինքնավարության սկզբունքին[49]: Լուսաբանելով, սակայն, 1920-ի քեմալական արշավանքի հետ կապված դեպքերը, լորդ Կինրոսը անճշտություն է թույլ տալիս գրելով, թե իբր Քեմալը որոշում կայացրեց հարված հասցնել Հայաստանին 1920-ի օգոստոսին Մոսկվայում կայացած խորհրդա-թուրքական բանակցություններից հետո: Մինչդեռ հայտնի է, որ տակավին 1920-ի ապրիլի 24-ին Մ. Քեմալը հայտարարեց Թուրքիայի Ազգային ժողովում, որ Թուրքիայի նոր սահմանները իրենց մեջ

պիտի ընդգրկեն Կարսը, Արդահանն ու Բաթումը[50]: Եվ փաստորեն այդ ժամանակից սկսած թուրքական զորքերը, հենց Մուստաֆա Քեմալի կարգադրությամբ, սկսեցին նախապատրաստվել Հայաստանի Հանրապետության դեմ հարձակմանը՝ հայկական պետականությանը վերջ դնելու նպատակով, ինչի մասին բացահայտորեն գրում են ժամանակակից թուրք պատմաբաններն ու նախկին ռազմական գործիչները:

Անգլիական պատմաբաններից միայն Ք. Ուոքերն է տեղ հատկացնում կիլիկիահայերի ազատագրական պայքարի լուսաբանմանը Կիլիկիայի ֆրանսիական գրավման շրջանում՝ 1919—1921 թթ.: Ընդ որում, համառոտակի շարադրելով հայերի հերոսական ինքնապաշտպանությունը Հաճընում, Մարաշում, Զեյթունում և այլ քաղաքներում, հեղինակը շրջանառության մեջ է դնում մի շարք նոր փաստաթղթեր: Նա անաչառ է ինչպես թուրքական, այնպես էլ ֆրանսիական քաղաքականության գնահատման հարցում: Հիմնավոր և համոզիչ է հեղինակի այն եզրակացությունը, որ 1915-ի գենոցիդից փրկված հայերը ոչ թե կամավոր, այլ ստիպված լքեցին իրենց հարազատ վայրերը և հեռացան Կիլիկիայից:

«Հայերը հասկացան ֆրանսիական քաղաքականության ուղղությունը,— գրում է հեղինակը,— և եկան այն եզրակացության, որ իրենց համար միակ երկրընտրանքը երկրից հեռանալն է: Թուրքերը, դառնալով դրության տերը, մի քանի ոչինչ չարժեցող հավաստիացումներ տվեցին նրանց, ովքեր մտածում էին մնալու մասին, սակայն վերջնական արդյունքը բոլորի համար մնում էր նույնը. տագնապ, կեղեքում և գույքի բռնագրավում, և այդ բոլոր ամրացված սառն ու անմարդկային բյուրոկրատիայով... Բացի ֆրանսիացիների դավաճանությունից,— շարունակում է հեղինակը,— կային նաև այլ գործոններ, որոնք ստիպեցին հայերին գնալ, դրանց մեջ առաջին հերթին թուրքական անգութ ոսոխզմը»[51]:

Ամփոփելով մեր խոսքը 1960—80-ական թվականներին Անգլիայում լույս տեսած հայկական թեմատիկայով աշխա-

տությունների մասին, կարելի է եզրակացնել, որ Հայաստանի և հայ ժողովրդի նոր շրջանի հիմնական սկզբունքային հարցերը, մասնավորապես 1915-ի եղեռնի պատմությունը անգլիական պատմաբանների կողմից մեկնաբանվում են գիտական անաչառությամբ, պատմականության դիրքերից, և միայն առանձին հեղինակների գործերում է, որ առկա է աչառու, միտումնավոր մոտեցում, չհիմնավորված պնդումներ և եզրակացություններ:

1988

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԽԵՂԱՐԿՈՒՄԱՆ ՆՈՐ ՓՈՐՁԵՐ

Ժամանակակից արտասահմանյան պատմագրությունը, ի թիվս Խորհրդային Միության այլ ժողովուրդների պատմության, զգալի ուշադրություն է նվիրում նաև հայ ժողովրդի հատկապես նոր շրջանի պատմության հարցերին: Առավել բազմաքանակ են այն գործերը, որոնք լույս են տեսել 1970—1980-ական թվականներին Թուրքիայում, ԱՄՆ-ում և Ֆրանսիայում: Նախորդ հրատարակությունների համեմատ նորը դրանցում այն է, որ առաջին հերթին թուրք պատմաբանները, իրենց հակագիտական պնդումները, պատմական անվիճելի փաստերը շրջանցող տեսակետներն ու դրույթները ընթերցողին պարտադրելու փորձերում մեծ տեղ են հատկացնում «տեռորիզմի գործոնին»: Թուրքիայում և նրա սահմաններից դուրս հրատարակվող գործերում անցյալում օսմանահպատակ ազգերի ու ժողովուրդների մղած ազգային ազատագրական շարժումները, սուլթանական բիրտ լուծը թոթափելու ընդվզումները ներկայացվում են սոսկ որպես տեռորիստական գործողությունների մի շղթա: Թուրք պաշտոնական պատմագրությունը նման եղանակով փորձում է շփոթության մեջ գցել, ապակողմնորոշել միջազգային հասարակական կարծիքը, որը [.նչպես հայտնի է, դատապարտում է ժամանակակից տեռորիզմը՝ իր բոլոր դրսևորումներում:

Տեռորիզմի վտանգը հակակոմունիստական գաղափարախոսությանը ծառայեցնելուն էր ուղղված 1984-ին Անկարայում կայացած միջազգային սիմպոզիումը, որն ընթացավ ընդգծված հակախորհրդային ու հակառուսական

մթնոլորտում: «Միջազգային տեռորիզմը Ռուսաստանի՝ կապակցությամբ» վերնագրով իր զեկուցման մեջ Տեխասի (ԱՄՆ) տեխնոլոգիական համալսարանի պրոֆեսոր ազգությամբ թուրք Մեթին Թամքոչը պնդում էր, թե իբր «անարխիստական ու տեռորիստական կազմակերպությունները իրենց զենքը վերցնում են բոլշևիկյան հեղափոխության գինանոցից», որ «ժամանակակից տեռորիզմի ակունքները առնչվում են հենց խորհրդային երկրի հետ»[1]:

Եվ ահա, չբավարարվելով հակագիտական հրատարակություններով, հակախորհրդային շինծու գիտաժողովներով, Թուրքիայի պրոպագանդիստական ապարատը վերջերս ձեռնարկել էր պատմության կոպիտ նենգափոխման մի արտառոց «միջոցառման»՝ հեռուստատեսային 10-սերիանոց ֆիլմի ցուցադրմանը՝ «Արյունը պատի վրա» վերնագրի տակ: Ձևականորեն ֆիլմը նվիրված է Օսմանյան կայսրության նախկին մեծ վեզիր և ներքին գործերի մինիստր Թալեաթ փաշայի սպանության և դրա հեղինակի՝ ժողովրդական վրիժառու Սողոմոն Թեհլերյանի՝ 1921-ի հունիսին Բեռլինում կայացած դատավարության հանգամանքներին[2]: Մինչդեռ դա փաստորեն մի նոր փորձ է վարկաբեկելու հայությանն ու հայ ժողովրդին, հայերին ներկայացնելու, որպես գազանաբարո արարածներ, անմեղ մարդկանց արյունը թափող տեռորիստներ:

Սա իրողությունը խեղաթյուրող գաղափարական պրոպագանդայի թերևս ամենավտանգավոր ձևն է, քանի որ հասցեագրված է մեծ մասամբ պատմական ճշմարտությանը անտեղյակ բազմամիլիոն մարդկանց, հատկապես երիտասարդությանը:

1921-ի իրադարձությունները ներկայացնելով միանգամայն աղավաղված ձևով, նկարում փորձ է արվում արհեստական, շինծու կապ ստեղծել 1921-ի և 1970—80-ական թթ. հայկական ահաբեկչական գործողությունների միջև:

1986-ի դեկտեմբերի 11-ին, վերջին, 10-րդ սերիան ցուցադրելուց առաջ, կլոր սեղանի շուրջ հանդես եկած ֆիլմի սցենարի հեղինակ դոկտոր Միմքեմալ Էքեն և ֆիլմի տնօրեն Բաքքալը ճգնում էին հեռուստադիտողներին համոզել, որ Թեհլերյանի կողմից իրականացված վրիժառությունը «մեր

օրերում հայ աճաբեկիչների կիրառած մարդասպանությունների շղթայի առաջին և գլխավոր օղակն էր», որ իբր «Բեռլինի դատավարության այդ անարդար վերաբերմունքն է, որ ոգեշնչում է ժամանակակից հայ տեռորիստներին՝ թուրք դիվանագետներին սպանելու գործում»: Ջանալով արդարացնել նկարի պատմական հենքի բացակայությունը, իսկ ավելի ճիշտ պատմական փաստերի, դեպքերի ու դեմքերի կոպիտ աղավաղումը, գլխիվայր մատուցումը, սցենարի հեղինակը հայտարարեց. «Ֆիլմը մենք դիտում ենք ներկայի տեսանկյունով: Մենք աշխատել ենք ներկայացնել ոչ թե այնպես, ինչպես եղել է, այլ այնպես, ինչպես որ օբյեկտիվորեն պետք է լիներ», այսինքն, ըստ նրա, Թեհլերյանը պետք է դատապարտվեր, իսկ Թալեաթը արդարացվեր, մինչդեռ Բեռլինի դատարանը արդարացրեց և ազատ արձակեց հենց Թեհլերյանին:

Հնարավորություն չունենալով մի հոդվածի շրջանակներում անդրադառնալու նկարում թույլ տրված աղավաղումներին, նշենք միայն, որ ամբողջությամբ վերցված ֆիլմը հայ ժողովրդի նոր շրջանի և, մասնավորապես, 1915-ի եղեռնի պատմության անընդող ենթգափոխումն է, որն իրականացվել է տարբեր եղանակներով.

1. Լռության մատնելով, ամբողջովին շրջանցելով, անգամ մի քանի խոսքով չհիշատակելով գոյություն ունեցող աներեի քանակությամբ փաստաթղթերը, օտար ականատեսների վկայությունները, այդ թվում և թուրքական պաշտոնական փաստաթղթերը:

2. Հիշատակելու դեպքում պարզապես հայտարարելով, որ դրանք կեղծ են, օրինակ, թուրք պաշտոնյա Նայիմ բեյի հուշերը, որտեղ հրատարակված են Թալեաթ փաշայի գաղտնի հեռագրերը արևմտահայերին ոչնչացնելու վերաբերյալ:

3. Այն դեպքում, երբ անհնար է ժխտել կատարվածը, բարդել այն ուրիշների վրա՝ իրենց իսկ զոհերի վրա, ռուսների վրա, գերմանացիների վրա և այլն:

Այսպես, անկարող լինելով շրջանցել հայերի զանգվածային բռնագաղթի փաստը, որի մեջ մեղադրվում էր Թալեաթը, վկայակոչվում է գերմանական գեներալ Լիման ֆոն

Սանդերսը, որն իսկապես վկայություն է տվել Բեռլինում կայացած դատավարության ժամանակ: Եվ ահա, դույզն իսկ չխորշելով այն փաստից, որ Լիման ֆոն Սանդերսի վկայությունը, ի թիվս մյուսների, ամբողջությամբ հրատարակվել և վերահրատարակվել է գերմաներեն 1921-ին և 1980-ին, իսկ ֆրանսերեն՝ 1981-ին[3], հեռուստանկարի հեղինակները հորինել են շինծու տեսարան՝ Լիման ֆոն Սանդերսը հանդես է գալիս դատարանում «իր մեղքի» խոստովանությամբ, հայտարարելով, որ իբր «Թալեաթը կողմնակից չէր տեղահանության: Թեև նա Էնվեր փաշայից անընդհատ հեռագրեր էր ստանում հայերին տեղահանելու վերաբերյալ, սակայն Թալեաթը, ի նկատի ունենալով տեղահանության անմարդկային կողմը, հրաժարվում էր նման քայլից և ինքը ֆոն Սանդերսն է, որ մեծ դժվարությամբ կարողանում է համոզել նրան, որ հայերին չտեղահանելով Թալեաթը ինքն է կնքում Օսմանյան կայսրության մահկանացուն»: «Հետագա սերունդները, իբր ասել է Սանդերսը,— Ձեզ կանիծեն դրա համար: Որպես գործիչ, դուք իրավունք չունեք անտեսելու կայսրության շահերը՝ ելնելով մարդասիրական զգացումներից»: Այստեղ է ասված՝ ստի՛ր, բայց չափն իմացիր:

Եվ այսպես, ստացվում է, որ իբր Թալեաթը և երիտթուրքական մյուս ղեկավարները մեղավոր չեն հայկական ջարդերում: Իսկ ո՞վ է մեղավոր: Մեղավոր են, ըստ թուրքական վարկածի, գերմանացիները, որ Թալեաթին հուշել են հայերին տեղահանելու գաղափարը, և մեղավոր են իրենք հայերը, որոնք «լրտեսել են իրենց օրինական պետության դեմ՝ հօգուտ ռուսների և այն պահին, երբ վերջիններս մահացու կերպով սպառնում էին այդ պետությանը»: Զարգացնելով 70 տարվա վաղեմություն ունեցող թուրքական պաշտոնական տեսակետը, հեռուստանկարը ստեղծողներն ամենևին մտահոգված չեն այն իրողությամբ, որ այդ շինծու վարկածը վաղուց ի վեր մերկացվել է ու մերժվել 1915-ի եղեռնի անթիվ-անհամար ականատեսների, դեպքերի անաչառ հետազոտողների կողմից: Նրանց ձեռնտու չէ նույնիսկ հիշատակել թուրքական պաշտոնական փաստաթղթերը, օրինակ, 1919-ի մարտ-հուլիսին Կ.

Պոլսում կայացած երիտթուրքերի հայտնի դատավարությունը, որի ամբողջական սղագրությունը ժամանակին հրապարակվել է «Թաքվիմի վաքայի» պաշտոնաթերթում, որպես հավելված և, բարեբախտաբար, պահպանվել Թուրքիայի տաճմաններից դուրս: Հիշյալ փաստաթղթերի մի մասը՝ մեղադրական ակտը և դատավճիռը թարգմանվել է արաբատառ թուրքերենից ֆրանսերեն և հրատարակվել Փարիզում 1981-ին «Հայկական ցեղասպանության արդարադատը» խորագիրը կրող գրքում՝ Բեռլինի դատավարության նյութերի հետ մեկտեղ:

Բավարարվենք մեջբերելով մեկական հատված Կ. Պոլսի թուրքական արտակարգ ռազմական ատյանի 1919-ի ապրիլի 12-ի մեղադրական եզրակացությունից և 1919-ի հուլիսի 5-ին արձակված դատավճռից:

Մեղադրական եզրակացությունից.

«Ներկա հետաքննության գլխավոր հարցն այն է, որ հայերի տեղահանության ընթացքում, տարբեր ժամանակներում և զանազան վայրերում տեղի ունեցած հանցագործությունները և, հատկապես, յուրաքանչյուր հանցագործության նկատմամբ օրենքի հիման վրա կատարված քննությունները ցույց են տալիս, որ դրանք ոչ թե սահմանափակ կամ տեղական բնույթ են ունեցել, այլ կանխամտածված իրականացվել են վերոհիշյալ անձերից բաղկացած և **միասնական ուժ հանդիսացող «հատուկ կենտրոնի»** բանավոր հրահանգներով և գաղտնի հրամաններով» (ընդգծումն իմն է—Ռ.Ս.):

Դատավճռից.

«Հետաքննությունը ցույց տվեց, որ օսմանյան տիրապետության օրենքները ստեղծվել են «երեքի զորությամբ» (խոսքը Թալեաթի, Էնվերի ու Ջեմալի մասին է — Ռ. Ս.), և այդ օրինազանցությունը կատարվել է ահաբեկչական ուժ գործադրելու միջոցով: Այսպիսով, վերոհիշյալ հանցագործ արարքների անմիջական հեղինակներն են «Միություն և առաջադիմություն» կուսակցության իրավական դեմքն արտահայտող պարագլուխներն ու ընդհանուր մեջլիսի ան-

դամները: Այդ թվում՝ փախուստի մեջ գտնվող նախկին մեծ վեզիր Թալեաթ փաշան, նախկին ռազմական մինիստր, այժմ զինվորական շարքերից վտարված Էնվեր էֆենդին, նախկին ծովային մինիստր, նույնպես զինվորական շարքերից վտարված Ջեմալ էֆենդին և նախկին հանրակրթական մինիստր դոկտոր Նազըմ էֆենդին, որոնց անմիջական հեղինակությամբ են կատարվել այդ հանցագործությունները»:

Ելնելով այս դատավճռից, Կ. Պոլսի ռազմական արտակարգ ատյանը՝ գեներալ-լեյտենանտ Մուստաֆա Նազըմ փաշայի նախագահությամբ օսմանյան քրեական օրենսգրքի 45-րդ հոդվածի առաջին կետի համաձայն մահվան դատապարտեց փախուստի մեջ գտնվող Թալեաթին, Էնվերին, Ջեմալին և դոկտոր Նազըմին[4]:

Հարկ է հիշատակել նաև երիտթուրքերի երրորդ, այս անգամ միջազգային դատավարությունը, որն ընթացավ 1984-ի ապրիլի 13—16-ը Փարիզում Սորբոնի համալսարանի դահլիճում Ժողովուրդների մշտական դատարանի (Tribunal permanent des peuples) նիստերում: Հիշյալ ատյանը հիմնվել է 1979-ին իտալացի նախկին ծերակուտական, իրավաբան Լելիո Բասսոյի կողմից: Նրա կազմում ընդգրկված են միջազգային այնպիսի հեղինակություններ, ինչպես խաղաղության լենինյան և նոբելյան մրցանակների դափնեկիր իռլանդացի իրավաբան Շյոն Մաքբրայտը, ամերիկյան հայտնի կենսաբան նոբելյան մրցանակի դափնեկիր Ջորջ Վալդը և ուրիշներ: Ատյանը, որը նախագահում էր բելգիացի պրոֆեսոր Ֆրանսուա Ռիգոն, երեք օրվա դատաքննությունից հետո, լսելով տարբեր երկրներից ժամանած ցեղասպանության հարցերով զբաղվող գիտնականների, ինչպես նաև 1915-ի եղեռնը վերապրած չորս ականատեսների, կայացրեց որոշում, որտեղ ասված էր, որ հայ բնակչության ոչնչացումը՝ տեղահանության ու ջարդերի միջոցով ներկայացնում է ցեղասպանության անժամանցելի հանցագործություն՝ գենոցիդի հանցագործությունը կանխելու մասին 1948-ի դեկտեմբերի 9-ին ընդունված ՄԱԿ-ի կոնվենցիայի լույսի ներքո, որ այդ հանցագործությունը վաղե-

մության իրավունք չի ճանաչում, և որ երիտթուրքական կառավարությունը մեղավոր է 1915—1917 թթ. գործադրված ցեղասպանության համար...[5]

Նշենք նաև, որ հիշյալ դատավարությունը, ինչպես և նախորդները, լայն արձագանք գտավ ֆրանսիական մամուլում և հասարակական քաղաքական տարբեր շրջաններում:

Կարելի՞ է արդյոք հավատալ, որ թուրքական հետուստանկարի հեղինակները պարզապես տեղյակ չեն վերը բերված և հարյուրավոր այլ անհերքելի փաստերին:

Դա բացառվում է: Ճշմարտությունն այն է, որ ինչպես ընդգծում է «Նեմեզիսի օպերացիան» գրքի հեղինակ Ժակ Դերոժին, «Թուրքիայում ցեղասպանության ժխտումը դարձել է պետական իրողություն»[6]: Ֆրանսիական մի այլ հեղինակ՝ Մարկյուս Ֆիշը, որը գերմաներենից ֆրանսերենի է թարգմանել 1921-ի Բեռլինի դատավարության տպագրությունը, ավելացնում է. «Ազատ արձակելով Թեհլերյանին, չնայած կանխամտածված սպանության ակնհայտությանը, Բեռլինի երդվյալները դատապարտեցին Թալեաթին, Հայաստանի դահճին, ինչպես նաև ցեղասպանության այդ քաղաքականությունը, որը կիրառվում էր թուրքական կառավարության ղեկավարությամբ:

Այս հիմունքով Բեռլինի դատավարությունը, դուրս գալով լրատվական նեղ շրջանակներից, ընդունում է միջազգային չափանիշ...»[7]:

Ավելին, հեղինակը բացահայտում է այն կապը, որ գոյություն ունի անցյալի ու ներկայի ցեղասպան ակտերի միջև. «Թալեաթ փաշայի դատավարությունը,— եզրակացնում է նա,— կանխագուշակեց Նյուրնբերգի մեծ դատավարությունը: Նրա դատավճիռը պատմության իսկ դատավճիռն էր»[8]:

1987

ԵՂԵՌՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՆԵՆԳԱՓՈԽՈՒՄԸ ԹՈՒՐՔ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

Հետպատերազմյան տարիներին և, հատկապես, 1960—1980-ական թվականներին լույս տեսած թուրքական պատմագիտական գրականության մեջ զգալի տեղ է հատ-

կացված Հայաստանի, հայ ժողովրդի և, մասնավորապես, Հայկական հարցի ու եղեռնի պատմությանը: Առաջին ծավալուն գիրքը, վերնագրված «Հայերը պատմության մեջ և հայկական հարցը»[1], լույս տեսավ 1950-ին, սակայն սիստեմատիկ ու նպատակասլաց կերպով թուրք պատմաբանները Հայաստանի և հայ ժողովրդի XIX—XX դարերի պատմության հարցերին նվիրված գործեր սկսեցին հրատարակել 1960-ական թվականներից:

Հայ ժողովրդի պատմության նկատմամբ ժամանակակից թուրք պատմագրության կողմից ցուցաբերվող առանձնահատուկ հետաքրքրությունը մեր կարծիքով բացատրվում է այն բանով, որ 1965-ի ապրիլին աշխարհի 23 երկրներում հայերի ցեղասպանության 50-ամյակը նշելու կապակցությամբ համաշխարհային հասարակայնությունը, նոր սերունդները տեղեկացան արդեն իսկ մոռացված դեպքերին և փորձեցին հասկանալ, թե ի՞նչ է այնուամենայնիվ տեղի ունեցել հայ ժողովրդի հետ Թուրքիայում 1915-ին: Այդ ձգտումը բնականաբար մղում էր մարդկանց ծանոթանալու բազմաթիվ այն նյութերին, որոնք տպագրվում էին այդ օրերին ԱՄՆ-ի, Ֆրանսիայի, Անգլիայի, Իտալիայի, Շվեյցարիայի, Արևմտյան Գերմանիայի, Արգենտինայի, Ուրուգվայի, Բրազիլիայի, Լիբանանի, Եգիպտոսի, Սիրիայի, Իրանի և այլ երկրների պարբերական մամուլում, ինչպես նաև հրատարակվում առանձին բրոշյուրներով և գրքերով: Կարճ ժամանակում վերահրատարակվեցին հայկական ջարդերի, 1915-ի գաղափածային ցեղասպանության, էթնիկական ու ազգային հողի վրա հայերին ոչնչացնելու թուրքական ավանդական քաղաքականությունը մերկացնող առավել հավաստի փաստագրական աղբյուրները, ականատեսների ու դեպքերի ժամանակակիցների հուշերը: Տեղի ունեցավ Հայաստանի, նրա հերոսական և նույնքան ողբերգական անցյալի, հայ ժողովրդի դարավոր ինքնատիպ մշակույթի երկրորդ հայտնագործումը: Օտարերկրյա ընթերցողները սկսեցին հասկանալ, որ աշխարհացրիվ հայերը սոսկ այն ժողովրդի մնացորդներն են, որոնց բռնի կերպով արտաքսել են իրենց պատմական հայրենիքից՝ Արևմտյան Հայաստանից: Պատմական ճշմարտությունը դառնում էր լայն հա-

սարակայնության սեփականություն, որը սկսեց առաջ քաշել Թուրքիայի նախկին կառավարողների կողմից կիրառված հայերի զանգվածային ցեղասպանության ճանաչման և դատապարտման հարցը:

Նման իրադրության մեջ թուրք կառավարող շրջանները միջոցներ ձեռնարկեցին իրենց երկրի միջազգային հեղինակությունը փրկելու համար: Կարճ ժամանակում հրապարակ եկան տարբեր մակարդակի պատմագիտական աշխատություններ, նվիրված Հայկական հարցին ու նրա ժամանակակից միտումներին: Սակայն պատմական ճշմարտության վերհանման մեթոդը մնաց նույնը՝ թուրք պատմաբանները գնացին իրեն արդեն վարկաբեկած ճանապարհով՝ ամեն ինչ ներկայացնել գլխիվայր, ապացուցել, որ Հայաստանը, որպես ինքնուրույն պետություն, երբե՛ք գոյություն չի ունեցել, իսկ իրենք հայերը եկվոր ժողովուրդ են, զուրկ իրենց սեփական մշակույթից, և որ իբր նրանք միշտ էլ փոքրամասնություն են կազմել իրենց բնակված վայրերում, այդ թվում և Արևմտյան Հայաստանում: Ինչ վերաբերում է հայերի ոչնչացման փաստին, ապա դա, ըստ թուրք հեղինակների, լոկ հակաթուրքական պրոպագանդի արդյունք է: Պարզապես հայերը որոշ կորուստներ կրեցին իրենց, «ժամանակավոր բնակության» վայրերը տեղափոխվելու ընթացքում: Իսկ այդ քայլին էլ, նրանց պնդմամբ, թուրքական իշխանությունները ստիպված էին դիմել ի նկատի ունենալով հայերի ոչ լոյալ վարքագիծը այն պահին, երբ Թուրքիան մահու-կենաց կռիվ էր մղում իր դարավոր թշնամու՝ Ռուսաստանի դեմ:

Ահա այս կոնցեպցիոն բնույթ ունեցող պաշտոնական վարկածը շրջանառության մեջ դրվեց նշված ժամանակաշրջանում լույս տեսած բազմաթիվ ու բազմաբնույթ հրատարակություններում:

Նշենք նաև, որ հայերի տեղահանության հարկադրված բնույթի, հայերի «համընդհանուր ապստամբության», «հայրենիքի դավաճանության» և այլ զրպարտություններ պարունակող պաշտոնական վարկածները հիմնականում կրկնվում են մինչև 1970-ական թվականների վերջը լույս տեսած աշխատություններում: 1980-ական թվականների

սկզբից, ինչպես նշում են գենոցիդի պատմության ֆրանսիական հետազոտողներ Իվ Տերնոնը և պրոֆ. Պիեռ Վիդալ-Նակեն, թուրք պատմագրությունը, լինելով պետական պատմագրություն, իրենից ներկայացնում է «ժխտման պատմագրություն»[2]:

«Հայկական ցեղասպանություն տեղի չի ունեցել, որովհետև, եթե այն տեղի ունեցած լիներ, ապա թուրքական պատմությունը հարկ կլիներ վերաշարադրել»[3],— բացատրում է իր միտքը Իվ Տերնոնը:

Ժխտելով, սակայն, գենոցիդի բուն իսկ փաստը, թուրք պատմաբանների մի մասը միաժամանակ ընդունում է, որ առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Օսմանյան կայսրությունում որոշ քանակությամբ հայեր «մահացել են»: Սակայն այդ հայերին, նրանց կարծիքով, ո՛չ մի դեպքում չի կարելի համարել գենոցիդի քաղաքականության զոհ, քանի որ երիտթուրքական կառավարությունը երբեք չի նպատակադրվել ոչնչացնել հայերին, չի՛ եղել բնաջնջման նախապես մշակված ծրագիր և կառավարող շրջանակները մեղավոր չեն այն բանում, որ տեղական իշխանությունների, առանձին անբարեխիղճ ու անպատասխանատու ներկայացուցիչներ չեն կատարել հայերի «անվտանգ տեղափոխման» վերաբերյալ հրամանը:

Իտալական պրոֆեսոր Ֆելիքս Էրմակորան, անդրադառնալով թուրք պատմաբանների կողմից առաջ քաշվող փաստարկներին, գտնում է, որ դրանք ի վիճակի չեն հերքելու փաստերը: Նա նշում է, որ «հայերը տեղահանվեցին իրենց հայրենիքից կառավարության հրամանով, և նրանք ստիպված էին մարդկային կյանքի գնով ծանր տուրք տալ զանգվածային տեղահանությանը: Ընդ որում, վերջին շրջանի հրապարակումներում թուրք հեղինակները չեն ժխտում այդ փաստը: Սակայն նրանք փորձում են զարգացնել մի տեսություն՝ այդ բանը արդարացնելու համար: Նրանք փնտրում են մեղավորներին, առաջին պլանի վրա են առաջ քաշում երկրի դրությունը պատերազմի պայմաններում, քանի որ Թուրքիան այդ ժամանակ ներքաշված էր պատերազմի մեջ եվրոպական հզորագույն տերությունների

հետ մեկտեղ: «Կարելի է համաձայնվել, որ այս փաստարկներից որևէ մեկը համապատասխանում է իրականությանը,— գրում է հեղինակը,— սակայն նրանցից և ո՛չ մեկը ո՛չ մի չափով չի շոշափում իրերի այն սկզբունքը, որն առնչվում է ժողովուրդների իրավունքի հետ»[4]:

1967-ին լույս տեսավ նախկին սենատոր Սադի Քոչաշի «Հայերը պատմության ընթացքում և թուրք-հայկական փոխհարաբերությունները» խորագիրը կրող գիրքը[5]: Դրան հետևեցին թուրքերեն, ինչպես նաև անգլերեն ու ֆրանսերեն տպագրված մի շարք գրքեր, որոնց վերնագրերը ինքնին խոսում են իրենց մասին. Ինալչեթուլլա Ջեմալ Օզքայա՝ «Հայ ժողովուրդը և թուրքերին ստրկացնելու փորձեր»[6], Ալթան Դելիորման՝ «Հայկական կոմիտեները թուրքերի դեմ»[7], Էնվեր Զիյա Կարալ՝ «Հայկական հարց»[8], Այհան Յալչընը՝ «Թուրք-հայկական պրոբլեմի էությունը փաստաթղթերի լույսի տակ»[9], Ահմեդ Վեֆա՝ «Ճշմարտություն հայերի մասին»[10], Վեյսել Էրօղլու՝ «Հայկական բռնությունը»[11], Նեշիդե Քեռեմ Դեմիր՝ «Հայկական հարցը Թուրքիայում»[12], Մեհմեդ Հոջաօղլու՝ «Հայկական բռնությունը փաստաթղթերի հիման վրա և հայերը»[13], Սալյահի Ռամզդան Սոնիել՝ «Հայերի տեղահանությունը և փաստաթղթեր», Նույնի՝ «Օսմանյան հայերը մեծ տերությունների դիվանագիտության զոհ»[14], Իսմեթ Փարմաքսըզօղլու՝ «Հայկական կոմիտեների ապստամբական շարժումները և նրանց կողմից փայփայվող նպատակները»[15], «Հայկական հարցը ինը հարցերում և պատասխաններում» (Թուրքիայի արտաքին գործերի մինիստրության հրատարակություն)[16], Ջեմալ Անադոլ՝ «Հայկական թղթապանակը պատմության լույսի ներքո»[17], Բիլլալ Շիմշիր՝ «Բրիտանական փաստաթղթերը օսմանյան հայերի մասին», Նույնի՝ «Հայկական հարցի գենեզիսը», Նույնի՝ «Մալթա աքսորվածները և հայկական հարցը»[18], Քյամուրան Գյուրյուն՝ «Հայկական թղթապանակ»[19], Շինասի Օրել, Սյուրեյա Յուջա՝ «Թալեաթ փաշային հայերի կողմից վերագրվող հեռագրերի իսկությունը»[20], Թյուրքքայա

Աթայով՝ «Հիտլերը և հայկական հարցը», նույնի՝ «Թուրքիկ հայացք հայկական հարցի վրա», նույնի՝ «Հիվանդությունների հետևանքով կորուստները հայկական հարցի առընչությամբ»[21], Հալիճ Քեմալ Թյուրքոգլու՝ «Հայկական գազանությունները օսմանյան և ռուսական փաստաթղթերի համաձայն»[22] և այլն:

Թվարկված և մի շարք այլ գործերում թուրք հեղինակները աղավաղված և ծայրահեղ միտումնավոր ձևով են ներկայացնում Հայաստանի նոր շրջանի և, մասնավորապես, հայկական ջարդերի ու 1915-ի ցեղասպանության պատմությունը:

Ի տարբերություն նախկին հրատարակությունների, նորն այստեղ այն է, որ ձգտելով արդարացնել Հայաստանի օսմանյան նվաճումը, նախկին կառավարողների անօրինություններն ու հանցագործությունները, ժամանակակից թուրք հեղինակները առաջ են քաշում մինչև վերջը անհիմն և նույնիսկ անհեթեթ մեղադրանքներ արևմտահայ ողջ ազգաբնակչության նկատմամբ: Հպատակ ժողովուրդների ազատագրական բոլոր շարժումներն ինչպես անցյալում, այնպես էլ մեր ժամանակներում նրանց աշխատություններում ներկայացվում են որպես «սեպարատիստական», «հակաօրինական», «հանցագործ» և նույնիսկ «տեռորիստական»:

Շարադրելով թուրքական նվաճումների պատմությունը ինչպես Եվրոպայում, այնպես էլ Ասիայում, թուրք պատմաբան Ցոլմազ Օզթյունան, օրինակ, պնդում է, որ «... թուրքերը իրենց գրաված հողերը բերում էին խաղաղություն և հանգստություն, բացարձակ կարգ ու կանոն: Բնակչությունը ձեռք էր բերում հանգստության հետ կապված բոլոր բարիքները, որ նա մոռացել էր դարերի ընթացքում»[23]: «Քանի որ թուրքերը իրենց հետ բերում էին բացարձակ հստակ կազմակերպություն,— եզրակացնում է հեղինակը,— քրիստոնյաները, որոնց զզվեցրել էր հանգստությունից զուրկ նախկին կառավարումը, **հաճախ դիմավորում էին մահմեդական նվաճողներին, որպես իրենց ազատարարների**»[24] (ընդգծումն իմն է— Ռ. Ս.):

Մեկ այլ պատմաբան՝ Ալի Քեմալ Մերամը իր «Թուրք-ռուս փոխհարաբերությունների պատմության» մեջ պնդում

է, որ թեև Օսմանյան կայսրության հպատակները բաժանվում էին մահմեդականների ու քրիստոնյաների, «պետական օրենքները թույլ չէին տալիս, որ քրիստոնյա ժողովուրդներն ապրեն ազատությունից, խղճից, ունեցվածքից ու պատվից զուրկ»[25]:

«Թուրքական պետության մեջ,— ավարտում է իր միտքը հեղինակը,— միշտ էլ հարգվել են մարդկային իրավունքներն ու ազատությունը»: Նման, մեղմ ասած, փաստարկներից հետո պարզ է դառնում, թե ինչո՞ւ հեղինակին անհասկանալի են քրիստոնյա ժողովուրդների ձգտումները անկախության՝ ազատագրական պայքարի ճանապարհով[26]:

«Թուրքիայի պատմությունը XX դարում» գրքի հեղինակ Ֆահրի Բելենը գրում է. «... Մենք չենք կարող քննադատել օսմանյան պետությունը, քանի որ նա ազգայնական քաղաքականություն չէր վարում: Հատկապես հավանության արժանի է քրիստոնյաների նկատմամբ նրա կողմից դրսևորած հանդուրժողականությունը»[27]:

«Թուրքական նացիոնալիզմը երբեք շովինիզմի բնույթ չի ընդունել»,— եզրակացնում է հեղինակը[28]:

Հպատակ ժողովուրդների դեմ թուրք կառավարող շրջանների կողմից կիրառված ամեն կարգի բռնությունների արդարացումը բնորոշ է ժամանակակից թուրք հեղինակների մեծամասնության համար:

Թուրք հեղինակների մի այլ խումբ ճգնում է ապացուցել, առանց հիմնավոր փաստերի, որ հայերը իբր «լավ էին ապրում» և «նույնիսկ ինքնավարությունից էին օգտվում», որ նրանց ապահովված էին կյանքի լավ պայմաններ, որ շատերը կառավարության մեջ բարձր պաշտոններ էին զբաղեցնում: «Հայ ժողովուրդը երջանիկ էր ապրում Թուրքիայում[29],— այսպես է սկսում, օրինակ, իր գիրքը Ջեմալ Օզքայան: Մյուսները հայտարարում են, թե իբր օսմանյան հասարակությունը առավել քաղաքակրթված, ամենառաջավոր և հումանիստական հասարակություն էր, այդ իսկ պատճառով Արևմտյան Եվրոպայի, ներառյալ Գերմանիայի, ճորտացված գյուղացիական զանգվածները սպասում էին օսմաններին, որպես իրենց ազատարարների:

Վերը բերված թուրք պատմաբանների պնդումները թուրքերի հանդուրժողականության մասին, քրիստոնյա և, մասնավորապես, հայ ազգաբնակչության բարվոք վիճակի վերաբերյալ միանգամայն անհիմն են և նպատակ ունեն կայսրության քրիստոնյա հպատակներին ներկայացնել, որպես մահմեդականների և, առաջին հերթին, թուրքերի նկատմամբ գերիշխող դիրք գրաված ժողովուրդների: Ընդորում, արհեստականորեն ընդգծելով քաղաքային բնակչության, մասնավորապես Կոստանդնուպոլսում հաստատված հայ մեծահարուստների՝ դրամատերերի, վաշխառու-ամիրաների դերը Օսմանյան կայսրության մեջ, թուրք պատմաբանները գիտակցորեն անտեսում են հիմնական զանգվածի՝ հայ աշխատավորության իրական վիճակը, թաքցնում այն ճշմարտությունը, որ արևմտահայությունը իր հիմնական զանգվածով մի քանի դար հեծում էր սուլթանական բիրտ լծի տակ իր սեփական հայրենիքում՝ Արևմտյան Հայաստանում:

«Ղուրանը և նրա վրա հիմնված մահմեդական օրենսդրությունը,— գրում էր Կ. Մարքսը,— տարբեր ժողովուրդների աշխարհագրությունն ու ազգագրությունը հանգեցնում են պարզ ու հարմար մի բանաձևի՝ նրանց բաժանումը երկու երկրի և երկու ազգության. ուղղահավատների և անհավատների: Անհավատը դա «հարբի» է, թշնամի: Իսլամը անհավատներին օրենքից դուրս է համարում և ստեղծում է անընդմեջ թշնամանքի վիճակ մահմեդականների և անհավատների միջև»[30]:

Ինչ վերաբերում է կայսրության քրիստոնյա ազգաբնակչության կյանքի «լավ պայմաններին», նրանց «արտոնյալ վիճակին», այդ առթիվ տեղին է հիշել Ֆ. Էնգելսի հայտնի ասույթը, որ «թուրքական, ինչպես և ամեն մի այլ արևելյան տիրապետություն անհամատեղելի է կապիտալիստական հասարակության հետ. ձեռք բերված հավելյալ արժեքը ոչնչով չի երաշխավորված սատրապների ու փաշաների գիշատիչ ձեռքերից. բացակայում է բուրժուական ձեռներեցության առաջին հիմնական պայմանը՝ վաճառականի անձի ու նրա սեփականության անվտանգությունը»[31]:

Մի շարք թուրք պատմաբաններ, համեմատելով մահմե-

դականների ու քրիստոնյաների տնտեսական, քաղաքական, և իրավական դրությունը, փորձում են ապացուցել, որ վերջիններս, այսինքն՝ քրիստոնյաները, առաջինների համեմատությամբ գտնվում էին ավելի լավ պայմաններում այնքան ժամանակ, քանի դեռ մեծ տերությունները, միջամտելով Թուրքիայի գործերին, չփչացրեցին տարբեր ժողովուրդների փոխհարաբերությունները:

Այս միտքը առավել հստակ կերպով արծարծվում է պրոֆեսոր Բիլլալ Շիմշիրի կողմից, որը մասնագիտանում է անգլիական արխիվային փաստաթղթեր հրատարակելով՝ նշված վարկածը «հիմնավորելու» նպատակով: Իր հետազոտական աշխատանքների արդյունքը հեղինակն ամփոփել է անգլերենով լույս տեսած գրքույկում՝ «Հայկական հարցի գենեզիսը» վերնագրով[32]:

«Սուլթանի ոչ մահմեդական հպատակները,— գրում է հեղինակը,— որպես կանոն ապրում էին ավելի լավ, քան սովորական թուրքերը»[33]: «Կարճ ասած,— եզրակացնում է նա,— թուրք-մահմեդական ազգաբնակչությունը, որը ներկայացնում էր ջախջախիչ մեծամասնություն Փոքր Ասիայի բոլոր մասերում և, հետևաբար, երկրի իրական ուժը, արհամարհվում էր, շահագործվում և նույնիսկ խտրականության մեջ գտնվում քրիստոնյա փոքրամասնության օգտին»[34]:

Վերը հիշատակված Սադի Քոչաշը նույնպես փորձում է այն միտքն անցկացնել, որ հայերն Օսմանյան կայսրությունում ոչ միայն բարվոք վիճակում էին, այլև նրանց կյանքի պայմանները առավել բարենպաստ էին քան իրենց՝ թուրքերինը: Ընդ որում նա փորձում է վկայակոչել եվրոպական այնպիսի «հեղինակությունների», ինչպես 1890-ական թվականներին Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստր Գաբրիել Անոտոն[35], որն իր թուրքասիրության համար արժանացել էր Անոտո փաշա մականվանը:

Այս ոչ լուրջ, անհիմն վարկածը լայնորեն օգտագործում է Ի. Ջ. Օզքայան «Հայ ժողովուրդը և թուրքերին ստրկացնելու փորձեր» խորագրով իր գրքում: Հեղինակը պնդում է, որ «հայ ժողովուրդը Թուրքիայում ապրում էր երջանիկ»[36] և որ իբր «ո՛չ մի պարտված ժողովուրդ, ո՛չ մի հպատակեց-

ված ազգ, էթնիկական կամ կրոնական փոքրամասնություն չի ունեցել նման արտոնություններ աշխարհի և ո՛չ մի երկրում»: Նույն կեղծիքը հնչում է մի շարք թուրք այլ հեղինակների շուրթերին:

«Մենք,— կատեգորիկ կերպով հայտարարում է Իսմեթ Ալփասլանը,— ինչպես օսմանյան, այնպես էլ Թուրքիայի հանրապետական շրջանում հայերի նկատմամբ եղել ենք լայնախոհ, արդարամիտ և քաղաքավարի, ինչպիսին չի եղել և ո՛չ մի պետություն իր իշխանության տակ ապրող փոքրամասնությունների նկատմամբ»[37] (ընդգծումն իմն է— Ռ.Ս.):

Ուրեմն, ի՞նչ է տեղի ունեցել: Ինչո՞ւ հայերը սկսեցին պայքարել թուրքական լուծը թոթափելու համար, եթե նրանք բարեկեցիկ պայմաններում էին գտնվում և ապրում էին ազատ ու անհոգ կյանքով, նույնիսկ ավելի լավ, քան իրենք՝ թուրքերը: Այս հարցի ուղղակի, հիմնավորված պատասխանը զուր է փնտրել թուրք հեղինակների աշխատություններում: Առավել բնորոշ է այն «բացատրությունը», որը բերվում է վերը նշված Օզքայայի գրքում. «Այն ժամանակ, երբ օսմանյան կառավարությունը հոգ էր տանում հայ ժողովրդի **ծաղկման ու բարեկեցության մասին** զանազան վարչական միջոցներ ձեռնարկելով..., հայ ժողովուրդը կազմակերպվում էր և պատրաստվում կատաղի պայքարի այդ պետության գոյության իսկ դեմ»[38] (ընդգծումն իմն է— Ռ.Ս.):

«Հիրավի,— շարունակում է հեղինակը,— հայերի դրությունը մինչև 1876 թվականը վատ չէր և չկար այնպիսի մի բան, որը կարող էր արդարացնել նրանց ելույթները»[39]: Մեղավորը, ըստ հեղինակի, Կ. Պոլսի հայոց պատրիարք, ապագայում Ամենայն հայոց կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանն էր (Խրիմյան Հայրիկ), որը, ըստ նրա, աչքի էր ընկնում իր ատելությամբ հանդեպ թուրքական իշխանությունները[40]:

Նման պնդումների անհեթեթությունն ակներև է և հերքման կարիք չունի: Նշենք միայն, որ նույնիսկ հայտնի պատմաբան Էնվեր Զիյա Կարալը, որը հայ ժողովրդի նոր շրջանի պատմության մի շարք հարցեր լուսաբանում է աչա-

ոու դիրքերից, խոստովանել է հայերի և քրիստոնյա մյուս ժողովուրդների դժգոհության բուն պատճառները. «Կայսրության ներքին իրադրությունը,— գրում է նա,— Աբդուլ Ազիզի կառավարման շրջանում խաղաղ չէր: Քրիստոնյաների կողմից բնակեցված օսմանյան վիլայեթներում ապստամբությունները հետևում էին մեկը մյուսին, և դրանք կրում էին քաղաքացիական պատերազմների բնույթ: Դրանց գլխավոր պատճառն այն էր, որ քրիստոնյա բնակչությունը չէր ցանկանում ապրել թուրք-մահմեդական գերիշխանության ներքո»[41]:

Ընդհանրապես, պետք է նշել, որ թուրք հեղինակների մի զգալի մասը հայկական հարցի ծագումը փորձում է բացատրել բացառապես եվրոպական մեծ տերությունների, հիմնականում Անգլիայի ու Ռուսաստանի միջամտությամբ, փաստորեն կրկնելով սուլթան Աբդուլ Համիդի այն արտահայտությունը, թե «հայկական հարցը դա հայերի հարցը չէ»[42]: Ընդ որում, եթե թուրք պատմաբանների մի մասը մեղադրում է Ռուսաստանին Թուրքիայում տերիտորիալ զավթումների նպատակով հայկական հարցը բարձրացնելու մեջ, ապա մյուսները գտնում են, որ այդ հարցը անգլո-ռուսական հայտնագործություն է, կամ հետևանք նրանց ինտրիգների, Թուրքիայի ներքին գործերին իրենց մատը խառնելու արդյունք: Այս վարկածը համառորեն պաշտպանվում է Ի. Ջ. Օզքայայի, պրոֆ. Ս. Սոնմեզլեի, պրոֆ. Ֆահիր Արմաօղլուի, Միմքեմալ Էքեի և մյուսների կողմից: Իսկ արդեն հիշատակված Մեհմեդ Հոջաօղլուն պարծենալով, որ ինքը տարիներ շարունակ անց է կացրել պետական արխիվներում, ուսումնասիրելով սուլթանական ու եվրոպական դիվանագիտական փաստաթղթերը, համերաշխություն հայտնելով Ֆ. Արմաօղլուի հետ, գրում է, որ «հայկական հարցը դա հայերի հարցը չէ», որ այն «երկու մեծ տերությունների՝ Անգլիայի ու Ռուսաստանի հարցն է, պետությունների, որոնք պայքարում էին Օսմանյան կայսրությունում իրենց շահերի համար»[43]:

Հալյուկ Ֆ. Գյուրսելը նույնպես գտնում է, որ հայկական հարցի ծագումը կապ չունի հայերի հետ: Դա հետևանք է Անգլիայի և Ռուսաստանի հակամարտության[44]:

Պրոֆ. Է. Զ. Կարալը, հակասելով ինքն իրեն, նույնպես փորձում է հիմնավորել արտաքին գործոնի դերը հայկական հարցի ծագման մեջ՝ բացատրելով այն հիմնականում Ռուսաստանի հրահրիչ դերով: Նա գրում է. «Այսպես կոչված հայկական հարցը ծագեց այն պատճառով, որ 1877—1878 թթ. օսմանա-ռուսական պատերազմի ժամանակ Ռուսաստանը, գրավելով Անատոլիայի մի շարք թուրքական քաղաքներ, այնտեղ բնակվող հայերին հրահրում էր անկախության»[45]:

Ինչ վերաբերում է Սան-Ստեֆանոյի և Բեռլինի պայմանագրերին, որոնցում հայկական հարցը միջազգային-պայմանագրական բնույթ ստացավ, ապա այստեղ ևս թուրք հեղինակները շրջանցում են անժխտելի փաստերը:

Իրականում, ինչպե՞ս եղավ, որ հայկական հարցը ստացավ միջազգային-իրավական ստատուս, քննարկման առարկա դառնալով մեծ տերությունների համաժողովներում: Սկսվեց նրանից, որ 1870-ական թվականներին Բալկանյան թերակղզու սլավոնական ժողովուրդները ակտիվացրին իրենց դարավոր պայքարը սուլթանական բռնապետության դեմ, որին Աբդուլ Համիդը պատասխանեց դաժան ռեպրեսիաներով: Հենց նոր գահ բարձրացած, նա 1876-ի ապրիլին արյան մեջ խեղդեց բուլղար ժողովրդի հերոսական ապստամբությունը: Դրան ի պատասխան ցարական Ռուսաստանը պահանջեց վերջ դնել քրիստոնյաների ջարդերին և, մերժում ստանալով, սկսեց ռազմական գործողությունները Թուրքիայի դեմ, բնականաբար ելնելով իր սեփական արտաքին-քաղաքական շահերից: Միանգամայն բնական էր, որ ինչպես Բալկանների, այնպես էլ Ասիական Թուրքիայի ճնշված ժողովուրդները օգտվեցին ստեղծված իրադրությունից իրենց ազգային ազատագրական պայքարը շարունակելու համար: Մասնավորապես, բուլղարների օրինակով ոգեշնչված, հայ ժողովուրդը նույնպես սկսեց կազմակերպվել՝ սուլթանական դարավոր լուծը թոթափելու համար: Սակայն հայկական հարցը դառնալով միջազգային իրավունքի օբյեկտ, օգտագործվեց մեծ տերությունների կողմից, որպես միջոց իրենց դիվանագիտական խաղերի համար: 1878-ի Բեռլինի պայմանագրի համաձայն

հայկական հարցը փաստորեն թողնվեց ճակատագրի քմահաճույքին, ինչից և չհապաղեց օգտվել սուլթան Աբդուլ Համիդը։

Թուրքական կառավարությունը սկսեց նրանից, որ «Հայաստան» բառը փոխարինեց «Քուրդստանով» կամ «Անատոլիայով»։ 1880-ի օգոստոսի 30-ի հրամանով պաշտոնական փաստաթղթերում արգելվում էր օգտագործել Հայաստան բառը։ Դրանով իսկ Բարձր Դուռը հասկացնել էր տալիս մեծ տերություններին, որ հայկական հարց գոյություն չունի։ Սուլթանական կառավարությունը ջանք չէր խնայում հայերով բնակեցված հողերի զանգվածային զավթումների ճանապարհով արևմտահայ աշխատավոր գյուղացիությանը տնտեսապես քայքայելու և հարազատ վայրերը լքել տալու համար։ Մյուս կողմից, կառավարությունը մշտապես թշնա.. .ք էր սերմանում հայերի, թուրքերի, քրդերի ու չերքեզների միջև, թույլ չտալով նրանց միավորվել օսմանյան լծի դեմ մղած պայքարում։ Այս պայմաններում հայերը, ինչպես և կայսրության բոլոր քրիստոնյաները, զրկված լինելով զենք կրելու իրավունքից, ենթարկվում էին պարբերական հարձակումների զինված մահմեդականների կողմից։

Այդ նույն շրջանում թուրք կառավարողները վերցրել էին հայ ժողովրդի պատմամշակութային օջախները ոչնչացնելու, հայկական մշակույթի զարգացումը խիստ սահմանափակելու և խափանելու ուղղությունն։ Կառավարությունը հսկողություն էր սահմանել հայկական լուսավորչական հիմնարկների, մասնավորապես դպրոցների վրա, փակել այն դպրոցները, որոնք բացվել էին առանց սուլթանի ֆիրմանի (հրամանի)։ Հայկական բոլոր եկեղեցիները հիմնավորապես խուզարկվել էին ոստիկանության կողմից՝ զենք գտնելու նպատակով։

Կոստանդնուպոլսում և Արևմտյան Հայաստանի քաղաքներում փակվել էին մի շարք հայկական թերթեր, թատրոններ, հասարակական կազմակերպություններ, հրատարակչություններ և այլն։ Արգելվել էին Հայաստանի պատմության դասավանդումը, ժողովները, դասախոսությունները և այլն։

Կ. Պոլսի հայոց պատրիարքը դիմում էր Բեռլինի պայմանագիրը ստորագրած տերություններին, խնդրելով հանդես գալ սուլթանական կամայականությունների դեմ։ 1880-ի հունիսի 11-ին և սեպտեմբերի 7-ին եվրոպական վեց տերություններ Բարձր Դռանը դիմեցին հուշագրերով, որոնցում նշվում էր, որ եթե Բեռլինի պայմանագրով նախատեսված բարեփոխումները չանցկացվեն, ապա իրենք ստիպված կլինեն միջամտել հայերի օգտին[55]։ Ի պատասխան, սուլթանական կառավարությունը հայտարարեց, որ ինքն արդեն մշակել է բարեփոխումների նախագիծը և շուտով այն կգործադրվի։ Այդ հավաստիացումները, սակայն, բացահայտ կեղծիք էին և նպատակ ունեին հանգստացնել եվրոպական հասարակական կարծիքը։

Հատկանշական է, որ իրենք թուրք պատմաբանները խոստովանում են, որ Աբդուլ Համիդը պարզապես խաղ էր խաղում մեծ տերությունների ներկայացուցիչների հետ, ամենևին նպատակ չունենալով որևէ չափով կատարելու Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածի պահանջները։ Այսպես, Է. Զ. Կարալը նշում է, որ սուլթանական կառավարությունը քննիչներ ուղարկելով արևելյան վիլայեթները տպավորություն էր ստեղծում, թե իբր ինքը զբաղվում է բարեփոխումների հարցով[46]։ Նույնը խոստովանում է Ի. Օզթյուրան։ «Բեռլինի պայմանագիրը ստորագրած տերությունները,— գրում է նա,— ժամանակ առ ժամանակ ճնշում են գործադրում Բարձր Դռան վրա, չկիրառելով, սակայն, ոչ մի սանկցիա։ Բայց ի՞նչ նշանակություն կարող էր դա ունենալ, եթե Աբդուլ Համիդը հայտարարել էր գերմանական դեսպանին, որ ինքը գերադասում է մեռնել, քան թե իրականացնել այդ հոդվածը»։ Ավելին, սուլթանը գիտեր,— շարունակում է հեղինակը,— որ Գերմանիան և Ավստրո-Հունգարիան Թուրքիայի նկատմամբ բարեկամական քաղաքականություն են վարում, և որ մյուս տերությունները չէին կարողանում իրար միջև համաձայնության գալ, և նրանցից յուրաքանչյուրը առանձին, ինքնուրույն կերպով չէր համարձակվում օգտագործել Թուրքիայի վրա ճնշում գործադրելու քաղաքականություն[47]։

Բերված և թուրք պատմաբանների մի շարք այլ խոստո-

վանությունները լրացուցիչ ապացույց են այն անժխտելի ճշմարտության, որ արևմտահայ ազգային ազատագրական շարժումը սկսեց ծավալվել և թափ առնել այն բանից հետո, երբ հայերը սեփական դառը փորձով համոզվեցին, որ տերությունների էպիզոդիկ միջամտությունը հայկական հարցում նպատակ չի հետապնդում Հայաստանը ազատագրելու թուրքական լծից: Հիմնականում դրանով պիտի բացատրել հայ իրականության մեջ ազգային քաղաքական կուսակցությունների երևան գալը, որոնք նպատակ էին հետապնդում հասնել ազգային ինքնավարության Արևմտյան Հայաստանում՝ հայ ազգը կոնսոլիդացնելու և հետագայում հայկական պետականությունը վերականգնելու նպատակով: Այդ իսկ պատճառով սուլթանական կառավարությունը հայկական հարցը «փակելու» համար ձեռնամուխ է լինում իր ջարդարարական քաղաքականության մշակմանը: Օսմանյան կառավարողների ծրագրերը առավել որոշակի շարադրել է թուրք հայտնի պետական գործիչ Ջյամիլ փաշան, որն Աբդուլ Համիդի օրոք երկար տարիներ զբաղեցնում էր մեծ վեզիրի պաշտոնը: Ջյամիլ փաշայի կառավարության կողմից մշակված հայ ժողովրդի ոչնչացման ծրագիրը սկսեց իրականացվել 1890-ական թվականներից, երբ սուլթան Աբդուլ Համիդը ձեռնամուխ եղավ զանգվածային մի շարք ջարդերի Արևմտյան Հայաստանում և այլուր: 90-ական թվականների հայկական ջարդերի մասին գոյություն ունի հսկայական քանակությամբ արխիվային նյութ և պատմագիտական գրականություն, այդ թվում Ռուսաստանի ու եվրոպական տերությունների դեսպանների զեկույցները, դիվանագիտական այլ փաստաթղթեր, դեպքերի ականատեսների ու ժամանակակիցների հուշեր, Կ. Պոլսի հայ պատրիարքի բազմաթիվ աղերսագրեր սուլթանին և դիմումներ մեծ տերություններին և այլն: Ժամանակի պարբերական մամուլը լեցուն է արյունարբու սուլթան Աբդուլ Համիդի նողկալի գազանություններն ու չարագործությունների նկարագրությամբ: Այդ ջարդերի մասին անհերքելի փաստաթղթեր են պարունակվում ֆրանսիական արտաքին գործերի մինիստրության կողմից հրատարակված «Դեղին գրքում»[48]:

Թուրք պատմաբանները գիտակցորեն լռության են մատնում այն արձագանքը, որ համիդյան ջարդերը գտան ռուսական և եվրոպական հասարակայնության մեջ:

Ռուսաստանի առաջավոր մարդիկ իրենց բողոքի ձայնը բարձրացրին Թուրքիայում տիրող հակահայ բռնությունների դեմ: Գիտության ու մշակույթի գործիչների ջանքերով 1897-ին Մոսկվայում լույս տեսավ, իսկ 1898-ին վերահրատարակվեց «Եղբայրական օգնություն Թուրքիայում տուժած հայերին»[49] խորագիրը կրող մեծածավալ ժողովածուն: Իսկ մինչ այդ՝ 1896-ին Մոսկվայում լույս տեսավ ռուսերեն «Հայերի դրությունը Թուրքիայում տերությունների 1895-ի միջամտությունից առաջ»[50] գիրքը, որտեղ տպագրված էին թուրքական գազանությունները դատապարտող արտասահմանյան գիտնականների, հրապարակախոսների ու հասարակական գործիչների հոդվածներն ու ճառերը:

Իրենց կարեկցանքն ու համակրանքը համիդյան բռնությունների զոհերի նկատմամբ արտահայտեցին Լ. Ն. Տոլստոյը, Վալերի Բրյուսովը, Յուրի Վեսելովսկին, Կոնստանտին Բալմոնտը, Ա. Պ. Չեխովը, Դ. Մ. Մամին-Սիբիրյակը, պրոֆ. Մ. Մ. Կովալևսկին և շատ ուրիշներ:

Արևմտյան Հայաստանում ու Կոստանդնուպոլսում տեղի ունեցած ջարդերը լայն արձագանք գտան ֆրանսիական հասարակայնության մեջ: Քաղաքական ու հասարակական գործիչներ, գիտնականներ ու գրողներ, նկարիչներ ու հրապարակախոսներ, ֆրանսիական պառլամենտի անդամներ զայրույթով հանդես եկան ու դատապարտեցին «կարմիր սուլթան» Աբդուլ Համիդի անմարդկային, բարբարոսական արարքները: Նշենք նրանցից մի քանիսի անունները. Անատոլ Ֆրանս, Ֆրանսիս դը Պրեսանսե, Պիեռ Կիյար, Անատոլ Լրրուա-Բոլիո, Վիկտոր Բերար, Դընի Քոշեն, Ալբեր Վանդալ, Պոլ Դումեր, հայր Շարմըտան, Ալբեր դը Մուն և այլն:

Թերթերում ու ամսագրերում տպագրվում էին Թուրքիայում ֆրանսիական դիվանագիտական ներկայացուցիչների զեկույցները, ջարդերի անմիջական ականատեսների վկայությունները, մշակույթի ականավոր գործիչների բողոքները: Ֆրանսիական մեծ գրող Անատոլ Ֆրանսը նախաձեռ-

ներ մի շարք միջոցառումներ, որոնք նպատակ ունեին լայն հասարակայնությանը ծանոթացնելու Արևմտյան Հայաստանում ջարդերից հետո տիրող իրավիճակի հետ: Նա կազմակերպեց և անձնական մասնակցություն ունեցավ հայ որբերի օգտին հանգանակությունների անցկացման մեջ: Ժան Ժորեսի և Ֆրանսիս դը Պրեսանսեի հետ մեկտեղ մաս կազմելով «Pro Armenia» ամսագրի խմբագրությանը և «Ի պաշտպանություն Հայաստանի և Մակեդոնիայի» կոմիտեին, նա գործուն մասնակցություն ունեցավ ինչպես Ֆրանսիայում, այնպես էլ Իտալիայում ու Շվեյցարիայում անցկացվող հայապաշտպան ցույցերին:

«Սուլթան Աբդուլ Համիդ II-ը,— ասել էր նա իր ճառերից մեկում,— դա մի հրեշ է, որը մշտապես դողում է իր ողորմելի ամենազորության մեջ և սարսափած իր հանցագործություններից իրեն հանգստացնում է նրանով, որ նոր հանցագործություններ է կատարում: 1893-ից մինչև 1896 թիվը նա կախել և կենդանի այրել է 300 հազար հայերի և սկսած այդ ժամանակից նողկալի զգուշավորությամբ զբաղվում է որբացած ժողովրդի մեթոդիկ ոչնչացմամբ...»[51]:

1890-ական թվականների ջարդերը լայն արձագանք գտան նաև Անգլիայում, հասարակայնության ցասումնալի բողոք առաջ բերին: Բազմաթիվ հաղորդումներ, հոդվածներ, բողոքի նամակներ տպագրվեցին պարբերական մամուլում: Առանձին հրատարակությամբ լույս տեսան մի շարք բրոշյուրներ ու գրքեր՝ նվիրված արևմտահայերի վիճակին ջարդերի տեսարաններին: Տպագրվեցին աշխատություններ, հիմնված Թուրքիայում անգլիական դիվանագիտական ներկայացուցիչների զեկույցների ու հաղորդումների վրա[52]:

1894—1896 թվականների դեպքերին արձագանքեց նաև Գերմանիայի հասարակայնությունը չնայած Աբդուլ Համիդի մտերիմ բարեկամ կայզեր Վիլհելմ II-ի ձեռք առած խիստ միջոցներին: Գերմանական քահանա և հասարակական գործիչ Յոհաննես Լեպսիուսը հանդես եկավ «Հայաստանը և Եվրոպան. մեղադրանք մեծ տերությունների դեմ և կոչ քրիստոնեական Գերմանիային» խորագրով գրքով, որն անմիջապես թարգմանվեց ֆրանսերեն ու անգլերեն: Հենվելով հավաստի փաստագրական աղբյուրների վրա (դես-

պանների զեկույցներ, հյուպատոսների հաղորդումներ, ջարդերի ականատեսների վկայություններ և այլն), հեղինակը ցույց էր տալիս այն անմիջական կապը, որ գոյություն ուներ արևմտահայ ազգաբնակչության դեմ ձեռնարկված բարբարոսությունների և բարձրաստիճան անձանց, սուլթանական պաշտոնյաների միջև:

«Երբ որևէ մի սպա խրախուսում է ամբոխին գոռալով «մահ հայերին, դա սուլթանի կամքն է», կամ երբ որ վալին (նահանգապետը) նրանց ոգևորում է ասելով. «Ակտիվ եղեք, մի դադարեք կոտորել, թալանել և աղոթել սուլթանի համար», ապա ինչո՞ւ նրանք պետք է խուլ մնան նման հրահրանքների նկատմամբ[53]: Գրքի հատուկ բաժնում դոկտոր Լեպսիուսը քննում էր հայկական ջարդերի կազմակերպման գործում քաղաքացիական ու զինվորական իշխանությունների մասնակցության հարցը[54]: Լեպսիուսը հերքում էր այն ժամանակ տարածվող այն կեղծիքը, որ իբր թուրքական իշխանություններն անզոր էին որևէ բան ձեռնարկել խուժանի, քրդական ավազակախմբերի դեմ և այլն[55]:

Մի շարք գործեր տպագրվեցին Ամերիկայի Միացյալ Նահանգներում: 1895 թվականին Նյու Յորքում լույս տեսավ Վանում ամերիկյան միսիոներ Ֆրիդրիկ Դեյվիս Գրինի «Հայկական ճգնաժամը և թուրքերի տիրապետությունը» վերնագրով գիրքը, ձոնված 1894-ի Սասունի ջարդի զոհերի հիշատակին: Գրքում զետեղված էին Արևմտյան Հայաստանի վեց տարբեր քաղաքներում երկար տարիներ բնակվող ամերիկյան քաղաքացիների համակ-հաշվետվությունները, որոնցում նկարագրվում էին թուրքական կառնավոր զորքերի վայրագությունները[56]:

Պետք է նշել, որ անցյալում թուրք առանձին գործիչներ, այդ թվում նրանք, ովքեր բարձր պաշտոններ են գրավել Աբդուլ Համիդի կամ երիտթուրքերի օրոք, որոշ վերապահումներով խոստովանում են, որ 1894—1896 թվականների կոտորածների իսկական պատասխանատուն ինքը Աբդուլ Համիդն էր: Այսպես, Օսման Նուրին գրում էր, որ այդ ջարդը բոլոր պարագաներում «անարկու եղեռն էր մարդկության դեմ», իսկ այս եղեռնի պատճառ հանդիսացողը, անկասկած, նույն Աբդուլ Համիդ II-ն էր, որը ղեկավարում էր

Ցլդըզի այդ հրոսակախումբը և կոտորում էր ո՛չ միայն հայերին, այլև դեպի կործանում էր տանում ամբողջ հայրենիքը[57]: Դեպքերի մի այլ ժամանակակից, Սադըք Շահիդը նշում էր. «Հայերի վերջին կոտորածը նախապես մտածված էր, ծրագրված ու կարգադրված սուլթանի կողմից»[58]:

Բերված փաստերը վկայում են ժամանակակից թուրք հեղինակների միտումնավորությունն ու կողմնակալությունը, որոնք անզուսպ կերպով փառաբանում են Աբդուլ Համիդ II-ի՝ թուրքական առավել արյունարբու սուլթաններից մեկի կյանքն ու չարագործությունները:

1894—1896 թվականների դեպքերը աղավաղված տեսքով է ներկայացնում Իսմեթ Ալփասլանը՝ կոտորածների մեղքը բարդելով հենց իրենց՝ զոհերի վրա:

«Ինչպես այսօր, այնպես էլ անցյալում,— գրում է հեղինակը,— հայերի հետ չէին վարվում որպես ազգային փոքրամասնության, այլ նրանք օգտվում էին թուրքերի հետ հավասար իրավունքներից: Սակայն աներախտապարտ հայերը արժանի չէին նման մարդկային վերաբերմունքի: Նրանք գազանաբար ու բարբարոսաբար էին վերաբերվում ժողովրդի (ի նկատի ունի թուրքերին— Ռ.Ս.) հետ: Այդ բոլորը չկարողանալով տանել, ժողովուրդը պետության օգնությամբ ստեղծեց «Համիդիե» խմբերը»[59]:

Իսկ Ի. Ջ. Օզքայան բացականչում է. «Ինչպե՞ս կարելի է լրջորեն մտածել այն մասին, որ Աբդուլ Համիդը հայերի ոչնչացման հրամաններ է արձակել, և որ թուրք մահմեդականները կատարել են այդ հրամանները»[60]: Ի մի բերելով իր խեղաթյուրումները, հեղինակը եզրակացնում է, որ ընդհուպ մինչև այն պահը, երբ «հայերը դիմեցին զինված խռովության Օսմանյան կայսրության դեմ», երբեք նախկինում, Թուրքիայի և ո՛չ մի մասում չի եղել հայ ժողովրդի հալածանք ու կեղեքում: Ուրեմն, եզրակացնում է հեղինակը, հայերը չունեին ոչ միայն որևէ լուրջ պատճառ, որևէ արդարացնող շարժառիթ՝ երկրում տիրապետող իշխանության դեմ հանդես գալու համար, այլև չունեին որևէ քիչ թե շատ լուրջ պատճառ իրենց ճակատագրից բողոքելու համար[61]:

Թյուրքքայա Աթայովը նույնպես արդարացնում է Աբդուլ Համիդի ջարդարարական քաղաքականությունը հայկական

կոտորածները ներկայացնելով որպես քաղաքացիական պատերազմ:

«Մի՞թե կոռեկտ է նկարագրել այս դեպքերը, որպես «ջարդեր» այն դեպքում, երբ դրանք համընդհանուր խռովություն էին, որոնք սպառնում էին վերածել «քաղաքացիական պատերազմի»,— բացականչում է հեղինակը:— Սա խաղաղ քաղաքացիական բնակչության միակողմանի ոչնչացման դեպք չէր,— շարունակում է նա:— Եվ գրեթե բոլոր դեպքերում միջադեպերը հրահրվում էին հայ մարտիկների փոքրաթիվ խմբերի կողմից»[62]:

Համարյա նույն «բացատրությունն» է տալիս Օզքայան՝ հայերին մեղադրելով տեռորիզմի մեջ: «Ճշմարիտ է,— գրում է նա,— որ 1894-ից մինչև 1896 թվականը Թուրքիայում տեղի են ունեցել հուզումներ, և որ այդ հուզումների ժամանակ եղել են սպանվածներ և վիրավորներ ինչպես հայերի, այնպես էլ թուրք-մահմեդականների կողմից: Սակայն ո՛չ մի հուզում չի հրահրվել թուրքերի կողմից, ընդհակառակը, դրանք բոլորը ծրագրվել, նախապես որոշվել և կանխամտածված ձևով իրականացվել են հայ անհաբեկչական կոմիտեների կողմից»[63]: Առանձին թուրք հեղինակներ աղավաղելով, պատմական ճշմարտությունը, ավելի դեռ են գնում, մեղադրելով Աբդուլ Համիդին այն բանում, որ նա «չափազանց մեղմ էր վարվում հայերի հետ»[64]:

Ժամանակակից թուրք պատմաբանների աշխատություններում աղավաղված տեսքով է ներկայացվում հայ-թուրքական հարաբերությունների պատմությունը նաև երիտթուրքերի իշխանության ժամանակաշրջանում:

Այսպես, անդրադառնալով 1909-ի մարտ-ապրիլյան դեպքերին, երբ Աբդուլ Համիդի կողմից կազմակերպված հետադիմական հեղաշրջումը ձախողվեց և երիտթուրքերը, տապալելով նրան, անցան իշխանության, թուրք պատմաբանները, շրջանցելով անհերքելի փաստերը, փորձում են ժխտել նրանց մեղսակցությունը Սիլիկիայում ձեռնարկված հայկական ջարդերում, կամ կատարվածի ողջ պատասխանատվությունը բարդել հենց զոհերի վրա, մեղադրելով հայերին այն բանում, որ իբր նրանք փորձում էին Կիլիկիայում ստեղծել «ազգային օջախ, որը հետագայում հիմք պի-

տի հանդիսանար Մեծ Հայաստանի ստեղծման համար...»: Այս միտքը կրկնում են Օզքայաճ[65], Ֆահրի Բելենը[66], Ցղլմազ Օզթյուրան[67] և ուրիշներ: Պրոֆեսոր Թ. Աթայովը Ադանայի կոտորածը, ինչպես 1890-ական թվականների ջարդերը, դիտում է որպես քաղաքացիական պատերազմի մի դրվագ.

«1909 թվականի ապրիլի 14-ի դեպքերը հարավային Ադանա քաղաքում իսկապես մի «փորձ» էին մահմեդականների և հայերի միջև քաղաքացիական այն փոքր պատերազմում, որը տևեց երեք օր և հրահրվեց հետագայում հանգեցնելով փոխադարձ արյունահեղության»[68]:

Ինչպես տեսնում ենք, այս հեղինակը ևս ո՛չ մի խոսք չի արտասանում կիլիկյան ջարդերի իրական կազմակերպիչների հասցեին: Արդեն հիշատակված Ֆահրի Բելենը ավելի դեն է գնում և մի փոքր այլ մեկնաբանություն տալիս՝ բոլոր դեպքերում լռության մատնելով կառավարող վերնախավի հրահրիչ գործողությունները: Այս հեղինակը հիմնական պատասխանատու է համարում Կիլիկիո հայոց առաջնորդ Մուշեղ արքեպիսկոպոսին, մեղադրելով նրան հայերին գրգռելու մեջ, ինչը և իբր հանգեցրեց փոխադարձ ջարդի: Միաժամանակ նշված հեղինակը թերևս միակն է թուրք պատմաբանների, որն այնուամենայնիվ խոստովանում է, որ հայերը 17 հազար զոհ են տվել, մինչդեռ թուրքերը կորցրել են 1850 հոգի, արդարացնելով, սակայն, այս հանգամանքը նրանով, որ թուրքերը հայերի նկատմամբ թվական գերակշռություն ունեին[69]: Մի փոքր այլ ձևով Այթան Դելիորմանը[70], Ջեմալ Անադոլը[71], Այհան Ցալչընը[72], Սադի Քոչաշը[73] արյունահեղության մեղքը բարդում են Կիլիկիայի հայերի վրա: Պրոֆ. Է. Զ. Կարալը գրում է, թե իբր սուլթանական կառավարությունը, ինչպես Զեյթունի ու Վանի 1895 և 1897 թվականների ապստամբությունների ժամանակ «ստիպված էր դիմել ուժի 1909-ի Ադանայի խռովության դեպքում, որի պատճառով հավասարապես տուժեցին հայերն ու մահմեդականները»[74] (ընդգծումն իմն է— Ռ.Ս.): Նկատենք, որ նման պնդումներ եղել են և ժամանակին, սակայն դրանք մերկացվել են բազմաթիվ ականատեսների ու դեպքերի անաչառ հետազոտողների կողմից:

«Հորինելով հայկական հեղափոխության մասին հեքիա-

թը, երիտթուրքական կառավարությունը փորձում էր իր վրայից գցել պատասխանատվությունը, սակայն փաստերի առաջ նա ստիպված էր հրաժարվել այդ վարկածից»[75],— գրում էր Թուրքիայում լավատեղյակ դիվանագետ Ա. Ն. Մանդելշտամը:

«Հայաստանը և երիտթուրքերը. ջարդերը Կիլիկիայում» փաստալից ու լավ հիմնավորված գրքի հեղինակ Ա. Ադոսիդեսը, մեջբերելով օտարերկրյա հյուպատոսների բազմաթիվ զեկույցներ և միսիոներների վկայություններ, եզրակացնում էր. «Այն, ինչ որ ընդհանրապես ցնցում է Կիլիկիայում տեղի ունեցող իրադարձություններում, դա այն դաժանությունն ու աներևակայելի ցինիզմն է, որոնցով ոչնչացվում է ամբողջ մի ժողովուրդ»[76]:

Այսպիսով, 1909-ի կիլիկյան դեպքերի լուսաբանությունը թուրք հեղինակների կողմից ակնհայտորեն վեր է հանում նրանց կողմնակալությունը ինչպես համիդյան, այնպես էլ իշխանության հասած երիտթուրքական պարագլուխների քաղաքականությունը գնահատելու հարցում:

Ժամանակակից թուրք պատմաբանները առանձնահատուկ տեղ են հատկացնում առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Թուրքիայի ներքին կյանքում տեղի ունեցած ահավոր դեպքերի քննությանը, մասնավորապես 1915-ի բռնագաղթի ու զանգվածային ցեղասպանության պատմությանը: Ծգնելով հերքել հայ ժողովրդի ցեղասպանության բուն իսկ փաստը, նրանք դիմում են բազմապիսի մեթոդների՝ կատարվածը կեղծ հայելու մեջ ներկայացնելու, թվական տվյալները խեղաթյուրելու, Արևմտյան Հայաստանի հայ ազգաբնակչության նախապատերազմյան վիճակը աղավաղված ձևով ներկայացնելու և այդ բոլորի հետևանքով թուրք կառավարողների ձեռնարկած հակահայկական միջոցառումները արդարացնելու նպատակով: Արհամարհելով օտարերկրյա աղբյուրների տվյալները հայերի թվաքանակի վերաբերյալ և բացառապես հենվելով թուրք պաշտոնական վիճակագրության վրա, որը քաղաքա-

կան նպատակներից ելնելով խիստ նվազեցնում էր արևմտահայության թիվը, թուրք հեղինակները, վկայակոչելով 1911—1912 թվականների տվյալները, պնդում են, որ հայերի թիվը ամբողջ Օսմանյան կայսրությունում կազմել է ընդամենը 1 միլիոն 161 հազար, 1 միլիոն 193 հազար, կամ լավագույն դեպքում 1 միլիոն 294 հազար 800 մարդ:

Թուրք պատմաբան Թայիբ Գյոքբիլգինը, օրինակ, պընդում է, որ «Պատմության ողջ ընթացքում թուրքերի հայրենիքը հանդիսացող արևելյան վիլայեթներում հայերը շատ վաղուց աննշան փոքրամասնություն են կազմել»[77]: Առանց հղումներ տալու, ստույգ աղբյուրներ մատնանշելու, նա գրում է. «Նախքան պատերազմը այնտեղ (արևելյան վիլայեթներում— Ռ.Ս.) 4 միլիոն մահմեդական բնակչության դիմաց կար ընդամենը 600 հազար քրիստոնյա»[78]: Թուրք ազգաբնակչության թիվը մահմեդական ողջ ազգաբնակչության ընդհանուր թվաքանակում ներկայացնելու միտումը բնորոշ է թուրք պատմաբանների մեծամասնության համար, որոնք դրանով նպատակ են հետապնդում թաքցնել միայն մահմեդական թուրքերի թիվը յուրաքանչյուր վիլայեթում, մի բան, որ ակներևորեն կարող էր ցույց տալ, որ թուրքերը միշտ էլ փոքրամասնություն են կազմել: Այդպես է վարվում, օրինակ, Այհան Ծալչընը գրելով, որ արևելյան վիլայեթներում 1 միլիոն հայերի դիմաց կար 6 միլիոն մահմեդական[79]: Բերված թվերը հորինված են, միանգամայն անհիմն: Բերենք մի քանի փաստ: Ֆրանսիական պատմաբան Ժակ դը Մորգանի կողմից բերված տվյալներով Օսմանյան կայսրությունում պատերազմի նախօրյակին բնակվում էին 2 միլիոն 380 հազար հայեր[80]: Ֆրանսիական պատմաբան Մորիս Պեռնոյի տվյալներով հայերի ընդհանուր թիվը Թուրքիայում հասնում էր 2,5 միլիոնի[81], իսկ բելգիական իրավաբան Մ. Գ. Ռոլեն Ժեկմենի տվյալներով՝ 2 միլիոն 400 հազարի[82]: Ռուսական աշխարհագրական ընկերության կովկասյան բաժանմունքի հրապարակած թվերից երևում է, որ այդ նույն ժամանակաշրջանում Օսմանյան կայսրությունում բնակվում էին 2 միլիոն 300 հազար հայեր, որոնցից 1,5 միլիոնը Արևմտյան Հայաստանում, մնացածները՝ Կիլիկիա-

յում, կենտրոնական և արևմտյան Անատոլիայում ու Կոստանդնուպոլսում[83]:

Անգլիական հետազոտող, ճանապարհորդ Լինչը Հայաստանին նվիրված իր մեծարժեք երկհատորյակում նշում էր, որ, օրինակ, Վանի վիլայեթում «մահմեդական ազգաբնակչության համեմատությամբ հայերը մեծ ուժ էին կազմում»[84]: «Խորհրդային պատմական հանրագիտարանի» տվյալներով մինչև 1915—1916-ի ջարդերը Թուրքիայում բնակվում էր 2,5 միլիոն հայ[85]:

Ինչ վերաբերում է հայկական վեց վիլայեթների ազգաբնակչության թվաքանակին ըստ ազգային կազմի, ապա տվյալները հետևյալն են: Վանի վիլայեթում հայերի թիվը էր 185 հազար, թուրքերինը՝ 47 հազար, Բիթլիսի վիլայեթում համապատասխանորեն 180 հազար և 40 հազար, Խարբերդի վիլայեթում հայեր՝ 168 հազար, թուրքեր՝ 102 հազար, Դիարբեքիրում հայեր՝ 105 հազար, թուրքեր 45 հազար[86]: Մնացած մահմեդականները, որոնց ազգությունը թուրք պատմաբանները գիտակցորեն լռության են մատնում, դրանք քրդեր էին, չերքեզներ, թուրքմեններ, արաբներ և որոշ թվով պարսիկներ:

Այսպիսով, թուրք պատմաբանների պնդումը, որ իբր հայերը Արևմտյան Հայաստանում և Կիլիկիայում չնչին փոքրամասնություն էին կազմում և ընդհանրապես Օսմանյան կայսրությունում հայերի ընդհանուր թիվը նվազեցնելու նրանց ձգտումները նպատակ ունեն ժխտելու այն փաստը, որ մոտ 2 միլիոն 300 հազար հայերից շուրջ մեկ միլիոն 300 հազարը զոհ է գնացել ցեղասպանության քաղաքականությանը: Ժխտելով այդ քաղաքականությունը, թուրք հեղինակները ամեն կերպ ջանում են պատճառաբանել ու հիմնավորել հայերի բռնի արտաքսումը իրենց պապենական հողերից: Հայտնի պատմաբան Յուսուֆ Հիքմեթ Բայուրն, օրինակ, հայերի տեղահանությունը որակում է որպես «բացառապես ստիպողական միջոց, որը նպատակ ուներ ապահովել թուրքական բանակի թիկունքը հնարկական ապստամբության» պահին:

«Մեր նպատակն է,— գրում է նա,— ցույց տալ, որ մեր այն ժամանակվա թշնամիների կողմից առաջ քաշված

պնդումներն այն մասին, որ թուրքերը հայերին առանց որևէ հիմքի տեղահանում էին և նույնիսկ ոչնչացնում, կեղծ են։ Հայկական ապստամբությունը իրական փաստ էր և ամենածանր պահին առավել վտանգավոր ձևով անհանգստացնում էր թուրքական ղեկավարությունն ու թուրքական բանակը արևելքում»[87]։ Հեղինակը համառորեն այն միտքն է անցկացնում, որ երիտթուրքերի կողմից ձեռնարկված պատժիչ միջոցառումները լոկ հետևանք էին այն խռովությունների, որոնք ծագել էին հայկական վիլայեթներում, և որ կառավարությունը առաջինը չի ձեռնարկել և չի մշակել ջարդի ծրագիր, այլ միայն ստիպված է եղել դիմելու որոշ պաշտպանական քայլերի[88]։

«Ո՞վ է առաջինը սկսել գործը,— հարցնում է Բայուրը։— Մեր այն ժամանակվա հակառակորդների պրոպագանդը,— բացատրում է հեղինակը,— հանգում էր այն բանին, որ մենք առանց որևէ պատճառի ձեռնամուխ ենք եղել հայերին իրենց տեղերից արտաքսելուն և նրանց ոչնչացնելուն... Այդ եղանակով փորձեր էին արվում թուրքերին խիստ կերպով վարկաբեկել...»[89]։

Ջանալով ներկայանալ անաչառ՝ դեպքերի շարադրման մեջ, պրոֆեսոր Բայուրը մեջբերումներ է անում իր իսկ կարծիքով թուրքասիրաբար տրամադրված ֆրանսիական ռազմական պատմաբան Լարշեի գրքից, որտեղ նա գրում էր հետևյալը. «Հայ ազգաբնակչությունը ամբողջությամբ տեղահանվում է Հալեպի ու Դիարբեքիրի կողմերը։ Հայերն իրենք պիտի հոգային իրենց սնունդը։ Մոտ մեկ միլիոն մարդ ճանապարհ է ընկնում։ Զինվորական իշխանությունները և թուրք բնակչությունը թվում են շատ թե քիչ կոռեկտ նրանց նկատմամբ։ Դժբախտաբար, ներքին գոտում դրությունը այդպիսին չէր։ Այնտեղ ջարդը, որը կատարվել էր օժանդակ ժանդարմերիայի ու քրդերի կողմից, ճանապարհի դժվարությունը, վարակիչ հիվանդությունները և թերությունները արժեցել էին մոտ կես միլիոն մարդկանց կյանք...»[90]։

Այս մեջբերումով հեղինակը փաստորեն ընդունում է մեկ միլիոն հայերի բռնի տեղահանությունը ռազմական գործողությունների գոտուց, այսինքն՝ Արևմտյան Հայաստանից, և այն, որ այդ հայերի կեսը ճանապարհին զոհվել է։ Թուրք

պատմաբանի այս խոստովանությունը հատկանշական է այն իմաստով, որ նրա գործընկերներից և ոչ մեկը չի ճանաչում ոչ այս թիվը, ո՛չ էլ հայերի իրական կորուստները առաջին համաշխարհային պատերազմի տարիներին:

«Պաշտպանական գործողությունների» շարքին է դասում Բայուրը 1915 թվականի մայիսի 14 (27)-ին ներքին գործերի մինիստրության արձակած օրենքը «Պատերազմական շրջանում կառավարական գործողությունների դեմ հանդես եկող անձանց ենթատմամբ ռազմական իշխանությունների կողմից կիրառվելիք միջոցառումների մասին»*, որը հրապարակվել էր թուրքական պաշտոնական «Թաքվիմի վաքայի» թերթում 1915-ի մայիսի 29-ին (հունիսի 11-ին): Հետաքրքիր է նշել, որ այդ զարհուրելի փաստաթղթի հեղինակը՝ ներքին գործերի մինիստր Թալեաթը, Բայուրի խոստովանությամբ իսկ կասկածում էր, որ մինիստրների խորհրդի հաստատմանը ներկայացվող այդ օրինագիծը կարող էր անմիջապես հաստատվել:

---

* Այս օրենքի հիմնական հոդվածները հանգում էին հետևյալին.

[1] Երբ պատերազմական ժամանակում բանակի հրամանատարները, կորպուսների և դիվիզիաների հրամանատարներն ու նրանց տեղակալները, ինչպես նաև առանձին շրջանների ղեկավարները ենթատեն քննակչության կողմից որևէ ձևով կատարվող հակազդեցություն, զինված հարձակում և դիմադրություն կառավարության կարգադրություններին, երկրի պաշտպանությանը և հասարակական կարգի պահպանմանը, վերջիններս իրավունք ունեն և պարտավոր են անմիջապես ձեռնարկել պատժի ամենախիստ միջոցներ՝ ռազմական ուժի օգտագործմամբ և վճռականորեն ճնշել այդ հարձակումներն ու դիմադրությունը:

[2] Բանակների, կորպուսների ու դիվիզիաների հրամանատարները կարող են ուղարկել այլ շրջաններ և այնտեղ բնակեցնել գյուղերի ու ավանների առանձին բնակիչներին կամ ամբողջ բնակչությունը, ելնելով ռազմական ենթատեումներից կամ այն դեպքում, երբ նրանք կենթատեն լրտեսության ու դավաճանության քայլեր նրանց կողմից:

Հիշյալ օրենքը ներքին գործերի մինիստրից պահանջում էր բանակին հանձնել իր կողմից սկսված ինքնուրույն գործը կամ այն իրականացնել բանակի հետ համատեղ:

Ներքին գործերի մինիստրության պահանջած այս որոշումը ընդունվեց մինիստրների խորհրդի կողմից 1915-ի մայիսի 17 (30)-ին: Տե՛ս **Yusuf Hikmet Bayur.** Türkiye inkilabi tarihi. Cilt III. Ankara, 1959. s. 40.

«Թալեաթը,— գրում է Բայուրը,— երկյուղ էր կրում, թե արդյո՞ք հնարավոր կլինի ստանալ, առավել ևս կարճ ժամանակում, իրեն անհրաժեշտ որոշումը, վախենում էր, որ նա ժամանակ կկորցնի ամբողջ մի շարք առարկությունների պատճառով»[91]:

«Ինչպես տեսնում ենք,— եզրակացնում է հեղինակը,— ներքին գործերի մինիստրությունը (այսինքն Թալեաթը— Ռ.Ս.) հրամայել էր ձեռնամուխ լինել հայերի տեղահանությանը, տակավին չստանալով մինիստրների խորհրդի թույլտվությունը և դրա հետ կապված ժամանակավոր օրենքը, չէր վարանում իր վրա վերցնելու «ծանր պատասխանատվությունը»»[92]:

Այսպես ուրեմն, հայտնի թուրք պատմաբանը քողարկված ձևով արդարացնում է Թալեաթի կողմից արված «պատասխանատու քայլը» և փորձում այս կամ այն կերպ «հիմնավորել» հայերի բռնի տեղահանման անհրաժեշտությունը՝ պատճառաբանելով այն ռուսների հետ նրանց համագործակցությամբ:

Հայերի բռնի տեղահանության թուրքական այս պատճառաբանությունը (որը կրկնվում է նաև մեր օրերում), ներքելուց առաջ բերենք թուրք այլ պատմաբանների նմանօրինակ փաստարկները:

Ահա թե ինչ է գրում թուրք հայտնի պատմաբան, պրոֆ. Էնվեր Զիա Կարալը. «Դաշնակից տերությունների հետ համագործակցելով, հայերը թուրքերի դեմ քաղաքացիական պատերազմի ճակատ բացեցին: Դաշնակիցները շահագրգռված էին այդ բանում, քանի որ հայկական հարցը նրանց համար առիթ էր ծառայում հայերին զինելու և թուրքերին թիկունքից հարվածելու, և այդ եղանակով կարճ ժամանակում պատերազմն ավարտելու համար: Թուրքերը ձգտում էին պաշտպանել պետության գոյությունը, կանխել հայերի համագործակցությունը դաշնակից տերությունների հետ՝ հայերին էվակուացնելով ռուսմական գոտիներից»[93]:

Ինչպես տեսնում ենք, այս պատմաբանն էլ գործածության մեջ է դնում երիցս հերքված թուրք պաշտոնական վարկածը հայերի, այդ թվում կանանց, մանուկների ու ծերերի «վտանգավորության» մասին: Բերելով այս փաստարկը՝

հիմնավորելու համար հայ ազգաբնակչության տեղահանությունը դեպի Սիրիական անապատը, Բայուրը, Կարալը և մյուսները գիտակցորեն լռության են մատնում իրենց քաջ հայտնի այն փաստը, որ «Դեպորտացիայի մասին օրենքի» համաձայն բռնի տեղահանության էր ենթարկվում **ամբողջ** Օսմանյան կայսրության **ամբողջ** հայ ազգաբնակչությունը, բացառությամբ երկու քաղաքների՝ Կ. Պոլսի և Իզմիրի, որտեղ գտնվում էին չեզոք կամ տակավին պատերազմի մեջ չմտած օտար պետությունների դիվանագիտական ու հյուպատոսական ներկայացուցչությունները: Քանզի քաջ հայտնի է, որ Անկարայի, Սըվասի (Սեբաստիա), Կեսարիայի ու Մալաթիայի վիլայեթները երբեք էլ պատերազմական գոտի չեն դիտվել: Թվական ստույգ տվյալները, որ բերված են դոկտոր Լեպսիուսի հայտնի «Զեկույցում», վկայում են, որ հիշյալ և մի քանի այլ վիլայեթների ու նահանգների մի քանի հարյուր հազար հայ ազգաբնակչություն նույնպես տեղահանվել և սպանվել է 1915—16 թթ.[94]:

Փորձելով արդարացնել հայերի տեղահանությունը, պրոֆեսոր Կարալը «մեղմացնում է» կատարվածը:

«Բացարձակորեն ճշմարիտ է այն,— գրում է նա,— որ երկու կողմերից էլ թափվել է շատ արյուն այն պատճառով, որ հայերի կողմից ցույց է տրվել զինված դիմադրություն, իսկ զգալի թվով հայեր զրկվել են կյանքից՝ հիվանդությունների, ցրտի և նաև այն պատճառով, որ նրանք դիմել են ոճաշրի գործողությունների, մի բան, որ չէր կարող հավանության արժանանալ թուրք ժողովրդի կողմից»[95]:

Շարունակենք հետևել հեղինակի մտքին: Նա հայտարարում է, որ իր կողմից բերված փաստերը «օգնում են հաստատելու, թե ինչո՞ւ ցավալի նախաձեռնությունները չեն կարող մեկնաբանվել, որպես հայ ազգի սպանություն»[96]: Որո՞նք են այդ փաստերը: Պարզվում է, որ դա հնչակյան կոմիտեի փարիզյան կենտրոնի կողմից ընդունած այն որոշման նախագիծն է, որն ավարտվում էր «Կեցցե՛ Հայաստանը» խոսքերով և մի կոչով, որտեղ ասված էր, որ «հասել է ժամը, երբ հայերը պետք է ազատվեն օսմանյան կեղեքումից»[97]:

Այնուհետև թուրք պրոֆեսորը փորձում է հերքել հայերի տեղահանության հետ կապված հանգամանքներն ու փաստերը: «Որտե՞ղ, ինչո՞ւ և ե՞րբ է գործադրվել տեղահանությունը»,— հարցնում է հեղինակը: «Այս հարցերի պատասխանները,— շարունակում է նա,— տրվել են հայերի և նրանց պաշտպանների կողմից փաստերի աղավաղման ճանապարհով և պրոպագանդիստական նպատակներով: Ինչպես հայ դավադիրները, այնպես էլ նրանց պատմաբանները խուսափում են նշելու տեղահանության ստույգ ժամանակը: Նույնիսկ Ժնևի համալսարանի պրոֆեսոր Պաստրմաջյանը անհայտորեն ցույց է տվել 1964 թվականին, որ բոնի տեղահանությունը կիրառվել է 1915-ի առաջին ամիսների ընթացքում, բայց ո՞ր ամսի և ո՞ր օրը: Ո՛չ մի մանրամասներ չեն բերվում: Պատմությունը,— փորձում է դաս տալ հեղինակը,— ինչպես հայտնի է, ամենից առաջ ժամանակագրության հարց է: Պատմության մեջ անհնարին է հասնել պարզության առանց հաստատելու իրադարձությունների միջև եղած կապը: Այստեղ պետք է նշել, որ անախորոնիկ ձևով տեղահանությունների հարց առաջ քաշելու փորձերն արվում են ճշմարտությունը թաքցնելու հույսով...»[98]:

Ջանալով հաստատել «տեղահանության ժամանակագրությունը», հեղինակը էվակուացիայի (այսպես է նա անվանում հայերի բռնագաղթը), սկիզբ է համարում 1915-ի ապրիլի երկրորդ շաբաթը, թեև քաջ հայտնի է, որ կիլիկիահայերի տեղահանությունը սկսվել է ավելի շուտ՝ 1915 թվականի մարտի վերջին:

Լսենք նաև թուրք այն պատմաբաններին, ովքեր հատուկ քննության են առնում հայերի բռնագաղթի պատճառները:

Ի. Ջ. Օզքայան անդրադառնալով այս հարցին, որպես հիմնական փաստարկ է բերում «ողջ հայ ազգաբնակչության խոովարար վարքագիծը, որը հրահրվում էր Ռուսաստանի կոմիտեների կողմից Թուրքիային պատերազմ հայտարարելու առաջին իսկ օրերից».

«Երբ, ցավոք, պատերազմական իրավիճակ հայտարարվեց Օսմանյան կայսրության և այն երկրների խմբի միջև, որին պատկանում էր իմպերիալիստական Ռուսական կայս-

րությունը, հայկական կոմիտեները, առանց որևէ պատճառի և հակառակ ամեն մի քաղաքականության և ողջամտության, գտան, որ իրենք պատերազմի վիճակի մեջ են այդ պետության հետ, որին իրենք պատկանում էին»[99]: «Այդ իսկ պատճառով,— շարունակում է հեղինակը,— կայսերական կառավարությունը որոշում ընդունեց ոչնչացնել հայկական այս կոմիտեները և ցրել նրանց ղեկավարներին, որոշում, որն ի կատար ածվեց սկսած 1915 թվականի ապրիլի 25-ից՝ զորակոչ հայտարարելուց գրեթե 9 ամիս հետո»[100]:

Այս մեջբերումներից պարզորոշ կերպով երևում է թուրք պատմաբանի հեղհեղուկ դիրքը: Այստեղ և ոչ մի խոսք չկա այն մասին, որ նշված ժամանակաշրջանում հայ տղամարդկանց մի զգալի մասը գտնվելով զինվորական ծառայության մեջ, զինաթափվել էր, ընդգրկվել աշխատանքային գումարտակներում, որոշ ժամանակ օգտագործվել էր որպես քարշուժ, իսկ այնուհետև տմարդի կերպով ոչնչացվել: Ահա թե ինչ է գրում այդ առիթով դեպքերի ականատես, ամերիկյան հայտնի իրավաբան, պրոֆեսոր Հերբերտ Ադամս Գիբոնսը «Ժամանակակից պատմության ամենասև էջը» խորագիրը կրող իր գրքում:

«Թուրքական կանոնավոր ամբողջ գնդեր, որոնք նախատեսված էին «հայկական հեղափոխությունը խաղաղեցնելու համար», անսպասելիորեն արշավում էին այդ դրուժինաների վրա, որոնք խաղաղ աշխատում էին քլունգներով, բահերով և լինգերով, և նրանց ուշքի գալու ժամանակ չտալով, գնդակահարում էին բոլորին: Եթե որևէ մեկը փորձում էր փախուստի դիմել, նրա ետևից ընկնում էին հեծյալ թուրքերը և խողխողում կամ գնդակահարում»[101]:

Թուրք պատմաբանն այնուհետև թույլ է տալիս բացահայտ խեղաթյուրում, գրելով, թե իբր ապրիլի 25-ին «ցրվել են» լոկ հայկական կոմիտեներն ու նրանց ղեկավարները, այն դեպքում, երբ ամբողջ աշխարհին հայտնի է, որ սարսափելի այդ գիշերը և նրան հաջորդած մի քանի օրերին անօրինական կերպով ձերբակալվել էին և առանց դատ ու դատաստանի արտաքսվել ու բարբարոսաբար ոչնչացվել Թուրքիայի հայ մտավորականության 600-ից ավելի ներկա-

յացուցիչներ, այդ թվում գրողներ, երաժիշտներ, նկարիչներ, փաստաբաններ, բժիշկներ, մանկավարժներ, լրագրողներ, գործարար շրջանների ներկայացուցիչներ և այլն, այդ թվում օսմանյան պառլամենտի բոլոր հայ դեպուտատները:

Մի այլ հեղինակ՝ Ալթան Դելիորմանը, վկայակոչելով 1915-ի մայիսի 14 (27)-ի «Տեղահանման մասին» օրենքը, փորձում է հայերի բռնագաղթն արդարացնել այն սպառնալիքով, որ իբր ստեղծվել էր Թուրքիայի անվտանգությանը՝ Ռուսաստանի սահմանակից մարզերում, մի վարկած, որը կրկնվում է ահա 70 տարի: Ավելին, նա պնդում է, որ հայերի հետ չափազանց մեղմ վարվեցին, «ընդունելով օրենք տեղահանության մասին, փոխանակ ընդունելու օրենք՝ մահապատիժների մասին»[102]:

Ֆահրի Բելենը նույնպես կրկնում է թուրքական պաշտոնական վարկածը.

«Թուրքական բանակի թիկունքում ծայր առած հայկական ապստամբության կապակցությամբ կառավարությունը հրամայեց արձակեց հայերին ճակատային գծից հեռացնելու և նրանց Սիրիա ու Իրաք ուղարկելու մասին»[103]:

Այնուհետև նա գրում է, որ խոսելով հայերի տեղահանության մասին, «մոռանում են, որ ավելի մեծ թվով մահմեդականներ են սպանվել»: Այստեղ հեղինակը ինքն է «մոռանում» ասել այն մասին, որ այդ մահմեդականները սպանվել են ոչ թե հայերի կողմից, այլ պատերազմի դաշտում[104]:

Վերջին տարիներին լույս տեսած գործերից նշենք պրոֆեսոր Թ. Աթայովի անգլերեն լույս տեսած «Թուրքիկ հայացք հայկական հարցի վրա» վերնագրով գրքույկը, որտեղ հեղինակը ամբողջովին աղավաղում է 1915 թ. դեպքերը, դրանք ներկայացնելով ծայրահեղ աչառու դիրքերից: Հեղինակի մոտ նկատվում է երկու ելակետ. 1. Հայերը փաստորեն հանդես էին գալիս, որպես պատերազմող կողմ՝ Ռուսաստանի կողքին, ուստի նրանց հարկ էր հեռացնել սահմանից, հետևաբար «տեղափոխումը», ինչպես նա անվանում է բռնագաղթը, պատերազմի հանգամանքով ծագած անհրաժեշտություն էր[105]: 2. Արամ Անտոնյանի կողմից հրապարակված փաստաթղթերը շինծու են [106]:

Առանց որևէ փաստարկման պնդելով իր ասածի վրա, հեղինակը նույնիսկ չի հիշատակում մերկացուցիչ այն փաստաթղթերը, որոնք ժամանակին բերվել են Յոհաննես Լեպսիուսի ու Ջեյմս Բրայսի հայտնի ժողովածուներում, Առնոլդ Թոյնբիի, Անդրեյ Մանդելշտամի, Հենրի Մորգենթաուի, Ժակ դը Մորգանի և եվրոպական ու ամերիկյան մի շարք այլ հեղինակների աշխատություններում: Նա միայն հենվում է ամերիկյան պատմաբան Ջասթին Մաքարթիի «Մահմեդականները և փոքրամասնությունները» գրքում հայտնված այն կարծիքի վրա, որ իբր թուրքերը և էթնիկական մյուս խմբերը Օսմանյան կայսրությունում գտնվում էին միատեսակ և հավասար վիճակում[107]:

Թուրքական զորքի թիկունքում հայկական երևակայական ապստամբությամբ են փորձում բացատրել «Տեղահանության մասին ժամանակավոր օրենքը» թուրք մի շարք այլ հեղինակներ՝ Ս. Ռ. Սոնիելը,[108], Այհան Ցալչընը[109], Իսմայիլ Ալփասլանը[110], Ն. Դեմիրը[111]:

Առավել հանգամանորեն է մեկնաբանում այս հարցը Թուրքական պատմական ընկերության անդամ, նախկին դիվանագետ Քյամուրան Գյուրյունը «Հայկական թղթապանակ» խորագրով լույս տեսած իր գրքում, որ նա տպագրել է, բացի թուրքերենից, նաև ֆրանսերեն՝ եվրոպական ընթերցողին ևս շփոթության մեջ գցելու նպատակով: Հենց այդ միտումով է հեղինակը մեջբերումներ անում միակողմանի ընտրված թուրքական գլխավոր շտաբի փաստաթղթերից: Այսպես, ի ապացույց հայերին ռազմական գոտուց հեռացնելու անհրաժեշտության, նա վկայակոչում է 1915-ի 2-ը մայիսի թվակիր Էնվեր փաշայի նամակը, հասցեագրված ներքին գործերի մինիստր Թալեաթին, որտեղ Էնվերը, տեղեկացնելով «Վանա լճի շրջանում ծագած հայերի խռովության մասին», հարցնում էր Թալեաթի կարծիքը. ինչպե՞ս վարվել, արդյո՞ք արտաքսել նրանց ռուսական սահմաններըը, թե՞ ուղարկել Անատոլիայի խորքը՝ հայաբնակ վայրերը տեղափոխելով կայսրության այլ շրջանների մահմեդական ազգաբնակչությունը [112]:

Մեջբերելով իր կարծիքով չափազանց կարևոր այս փաստաթուղթը, Ք. Գյուրյունը պնդում է, որ իբր հենց այս

փաստաթղթում է առաջին անգամ հիշատակվում բնակչության հնարավոր տեղափոխման մասին, այսինքն, որ իբր մինչև 1915-ի մայիսի 2-ը ոչ մի խոսք չի եղել հայերի տեղահանության մասին:

Ի մի բերելով վերը նշված կարծիքները, փաստարկումները, պնդումները, կարելի է եզրակացնել, որ թուրք հեղինակների հիմնական դրույթները հանգում են հետևյալին.

1. Թուրքիայի պատերազմի մեջ մտնելու հենց սկզբից թուրքահայերը ամենուրեք սկսել են պատրաստվել «համընդհանուր ապստամբության՝ թուրքերին թիկունքից հարված հասցնելու և Օսմանյան կայսրությունից անջատվելու նպատակով:

2. Սարիղամիշի տակ 1915-ի հունվարին թուրքական զորքերի կրած պարտության մեջ գլխավոր մեղավորները հայերն են:

3. «Հայկական ապստամբությունը» միաժամանակ նպատակ ուներ աջակցություն ցույց տալ հարձակվող ռուսական զորքերին:

4. Հայերը մերժեցին թուրքական կողմի առաջարկը՝ ապստամբություն բարձրացնել ռուսական կովկասյան բանակի թիկունքում:

5. Հայերը թրով ու սրով ոչնչացնում էին մահմեդական գյուղերը՝ նրանց խաղաղ ազգաբնակչության հետ միասին:

6. Մինչև «հայերի խռովությունը» Վանում, որը սկսվեց 1915-ի ապրիլի 20-ին և, հատկապես, հայկական կամավորական խմբերի և ռուսական զորքերի Վան մտնելը՝ 1915-ի մայիսի 19-ին, թուրքական իշխանությունների կողմից ո՛չ մի պատժիչ միջոցառում չի ձեռնարկվել և չի՛ եղել նախապես մշակված պլան Թուրքիայի ողջ հայ ազգաբնակչության տեղահանության ու ոչնչացման վերաբերյալ:

7. Կենտրոնական կառավարությունը և երիտթուրքական «Իթթիհաթ վե թերաքքի» կուսակցությունը ոչ մի պատասխանատվություն չի կրում հայերի զանգվածային տեղահանության ու ջարդերի համար:

Այդպե՞ս է արդյոք:

Դիմենք փաստերին, բերենք մի քանի առավել հավաստի

փաստագրական տվյալներ պաշտոնական տարբեր, այդ թվում և թուրքական, աղբյուրներից:

Քննենք այսպես կոչված հայկական համընդհանուր ապստամբության վարկածը: Ահա թե ինչ էր գրում այդ կապակցությամբ Թուրքիային լավատեղյակ իրավաբան-միջազգայնագետ, պրոֆեսոր Ա. Ն. Մանդելշտամը «Օսմանյան կայսրության ճակատագիրը» ֆունդամենտալ հետազոտության մեջ.

«Հակառակ թուրքական կառավարության կեղծ հայտարարությունների, չի եղել հայկական ո՛չ մի խռովություն, կամ հեղափոխություն: Հայերը զենքի դիմեցին միայն այն ժամանակ, երբ տեսան ջարդի սպառնալիքը և ենթարկվելով իրենց կյանքը որքան հնարավոր է թանկ ծախելու բնական ձգտմանը... Եվ այսպես, զինված դիմադրության բոլոր դեպքերում մենք տեսնում ենք ոչ թե հեղափոխականների, այլ դժբախտ մարդկանց, որոնք ինչ-որ զենքեր են պահել և գերադասում են կռվել մինչև մահ, քան տանել դանդաղ չարչարանքները կամ տեղահանության տառապանքները... Այսպիսով, հայերին չի կարելի մեղադրել այն բանում, որ նրանք պաշտպանում էին իրենց կյանքը: Սակայն չպետք է մոռանալ, որ միայն չնչին փոքրամասնությունը կարող էր այդ բանն անել: Հայերի մեծամասնությունը արդեն պատերազմի սկզբին զենքը հանձնել էր իշխանություններին, և այդ պատճառով ստիպված էր առանց նվազագույն իսկ դիմադրության ընդունել այն դաժան ճակատագիրը, որ կառավարությունը պատրաստել էր նրանց համար»[113]:

Բերենք մեկ այլ լավատեղյակ անձնավորության, 1913—1916 թթ. Թուրքիայում ԱՄՆ-ի դեսպան Հենրի Մորգենթաուի վկայությունները.

«Որպեսզի ազգի ոչնչացման պլանը հաջողություն ունենար, պիտի արվեր երկու նախնական քայլ. անհրաժեշտ էր բոլոր մեծ և ոչ խոշոր քաղաքներում հայ բոլոր զինվորներին զրկել պաշտպանության միջոցներից և բռնագրավել արդեն նրանց մոտ եղած զենքը: Նախքան հայերին ոչընչացնելը պետք էր նրանց զինաթափել»[114]:

«Թուրքական կայսրության տարածքով մեկ,— շարունակում է հեղինակը,— փորձ արվեց պլանաչափորեն բնա-

ջնջել բոլոր առողջ տղամարդկանց ոչ միայն այն նպատակով, որ ոչնչացվի հայերի նոր սերունդ վերարտադրող ողջ արու բնակչությունը, այլև այն բանի համար, որպեսզի մնացած բնակչության առավել թույլ մասը հեշտությամբ զոհ դառնա»[115]:

Գերմանական արևելագետ և հումանիստ Յոհաննես Լեպսիուսը նույնպես հերքել է «ռազմական անհրաժեշտության» փաստարկը, ցույց տալով, թե ի՞նչ նպատակի են ծառայել անսպասելի կերպով իրենց պաշտոններից հայ գործիչների ազատումը, նրանց ձերբակալությունը և բռնի տեղահանությունը: «Դա համընդհանուր մի միջոցառում էր,— գրում էր Լեպսիուսը,— որը նպատակ ուներ զրկել հայ ժողովուրդը իր ղեկավարներից և իր օրգաններից այն հաշվով, որ դեպորտացիան կարելի լիներ անցկացնել առանց աղմուկի և առանց դիմադրության»[116]: Խոսելով երևելի հայերի, այդ թվում օսմանյան պառլամենտի դեպուտատների, գրողների, հրապարակախոսների, փաստաբանների ձերբակալության մասին, Լեպսիուսը ընդգծում էր այն փաստը, որ այդ բոլորը կատարվել է առանց որևէ դատաքննության, որը կարող էր նախորդել կամ հետևել այդ ձերբակալություններին[117]:

Նույն ձևով էին վարվում հայ երևելիների, հայկական համայնքների ներկայացուցիչների հետ նաև Արևմտյան Հայաստանի բոլոր գավառներում: Յոհաննես Լեպսիուսը բերում է հավաստի փաստեր դիվանագիտական ներկայացուցիչների ու հյուպատոսների զեկուցագրերից, որոնցում դեռ այն ժամանակ այն միտքն էր հայտնվում, որ տեղահանությունների իսկական նպատակը դա հայ ժողովրդի ոչնչացումն է Թուրքիայում:

Այսպես, ամերիկյան հյուպատոս Օսքար Կայզերը իր 1915-ի հուլիսի 28-ի թվակիր զեկուցագրում տեղեկացնելով Տրապիզոնի հայերի բռնագաղթի մասին, նշում էր. «Գերմանական դեսպանն ասաց ինձ, որ ինքը չի կարծում, որ հայերը կարող են վերադառնալ Տրապիզոն նույնիսկ պատերազմի ավարտից հետո»[118]:

Խարբերդի ամերիկյան հյուպատոսը Կ. Պոլսի իր դեսպանին տեղեկացնելով հայերի բռնի արտաքսման մասին,

բերում էր փաստեր, թե ինչպես էին թուրք ոստիկանները խարբերդից ոչ հեռու գազանաբար ոչնչացրել 800-ից ավելի հայերի, այդ թվում երեխի անձանց: «Երբեք այդ մարդկանց դեմ որևէ մեղադրանք առաջ չի քաշվել,— ավելացնում էր հյուպատոսը:— Նրանք բոլորը ձերբակալվել էին և սպանվեցին սոսկ այն պատճառով, որ կառավարության գլխավոր պլանի համաձայն պետք էր ազատվել հայ ազգից»[119]:

Դոկտոր Լեպսիուսը հանգամանորեն ներկայացրել է հայերի տեղահանության պատկերը ըստ առանձին վիլայեթների: Հեղինակի կողմից բերված փաստերը, տվյալներն ու կոնկրետ թվերը չեն կորցրել իրենց արժեքը շնորհիվ դրանց հավաստիության ու ճշգրտության:

Չափազանց այժմեական է առաջին անգամ դոկտոր Լեպսիուսի կողմից բարձրացված այսպես կոչված հայկական համընդհանուր ապստամբության հարցի քննարկումը, մի բան, որով թուրքական կառավարությունը փորձում էր հիմնավորել տեղահանության անհրաժեշտությունը: Թուրքական այս պաշտոնական վարկածը, որը տարածվում էր այն ժամանակ, նպատակ ուներ ապակողմնորոշել մարդկանց: Դոկտոր Լեպսիուսը համոզիչ կերպով ցույց է տալիս այդ տեսակետի ողջ սնանկությունը, հայերի «դավաճանության» վերաբերյալ թուրքական պնդման հրահրիչ բնույթը:

«Այսպես կոչված, խռովությունը Վանում,— գրում էր Լեպսիուսը,— օրինական պաշտպանության մի քայլ էր և մի դրվագ ջարդերի պատմության մեջ, բայց ո՛չ մի դեպքում՝ դավաճանություն: Այդ բանը հաստատում են պաշարմանը ներկա գերմանացիները»[120]: Հեղինակը ցույց է տալիս, որ Վանի հայ ազգաբնակչությունը կազմակերպել էր ինքնապաշտպանություն խուսափելու համար այն ճակատագրից, որը բաժին ընկավ թուրքական խոստումներին հավատացած իրենց հայրենակիցներին, որոնք այդ բանի համար զրկվեցին կյանքից: Քննարկելով քաղաքի ապրուստամբ բնակիչներին ռուսական զորքերի օգնության գալու հարցը, հեղինակն ընդգծում է. «Երկու իրադարձություն՝ Վանի հայերի օրինական ինքնապաշտպանությունը նրանց սպառնացող ջարդի դեմ հանդիման և ռուսների հարձա-

կումը իրար հետ ո՛չ մի կապ չունեն և չեն կարող դիտվել որպես պատճառ և հետևանք... Իրենց ինքնապաշտպանությամբ Վանի հայերը միայն նպատակ էին հետապնդում փրկել իրենց մերձավորների կյանքը»[121]:

Հարցը առավել լայն քննարկելով՝ համաթուրքական մասշտաբով, Լեպսիուսը հանգում էր այն եզրակացության, որ կառավարության դեմ ուղղված որևէ կանխամտածված շարժում չի եղել, այլ «կանխամտածված են եղել այն հետապնդումները, որոնք կիրառվում էին մեթոդիկ կերպով»: Ընդհանրացնելով իր կողմից բերված փաստագրական բոլոր տվյալները, Լեպսիուսն ընդգծում էր, որ չի կարելի լուրջ համարել այն փաստարկները, որոնք բերվում են տեղահանությունը հիմնավորելու համար: Բացառությամբ Վանի շրջանի, որը խուսափեց տեղահանությունից, քանի որ այն գրավվել էր ռուսական զորքերի կողմից, երկու-երեք այլ վայրերի, ուր հայերը դիմադրություն էին ցույց տվել (Զեյթուն, Ծապին—Կարահիսար), մնացածները այնքան հեռու էին ճակատային գոտուց, որ կայսրության բոլոր մասերում ցրված մեկնկես միլիոն ազգաբնակչության տեղահանությունը, առավել ևս պատերազմական թատերաբեմից ամենամեծ հեռավորության վրա գտնվող վայրերից, ոչ մի կերպ չի կարելի արդարացնել ռազմական նկատառումներով: «Միակ բացատրությունը, որը հիմք չի տալիս կառավարության այդ միջոցառման մեջ տեսնել խելացնոր մի ակտ, դա այն է, որ կառավարությունը գործում էր ներքաղաքական մի պլանի համաձայն և սառնասիրտ հաշվարկով նախապես մտածված դիտավորությամբ իր առջև խնդիր էր դրել ոչնչացնել հայ էթնիկական տարրը...»[122]:

Բերված անաչառ գնահատականները, ջարդերի անմիջական ականատեսների ու ժամանակակիցների աներերքելի վկայությունները մերժում են թուրքական շինծու վարկածը Օսմանյան կայսրության ողջ հայ ազգաբնակչության բռնագաղթի անհրաժեշտության վերաբերյալ: Ավելին. նշված և օտար այլ հեղինակներ, մերժելով «ռազմական նկատառումների» մտացածին փաստարկը, միաժամանակ ցույց են տալիս, որ հայ ժողովրդի բնաջնջումը մանրակրկիտ կեր-

պով մշակված մի օպերացիա էր, իսկ տեղահանությունը՝ սոսկ դրա իրականացման եղանակը:

Հետաքրքրական է, որ այդ մասին իրենց կառավարությանը ժամանակին տեղեկացրել են գերմանական դիվանագիտական գործակալները, այն պետության ներկայացուցիչները, որը սուլթանական Թուրքիայի դաշնակիցն ու պաշտպանն էր առաջին համաշխարհային պատերազմի սկզբից մինչև վերջ: Բերենք դրանցից մի քանիսը միայն:

Էրզրումում գերմանական հյուպատոս Ցոյբներ-Ռիխտերը 1915-ի հունիսի 2-ին տեղեկացնում էր Կ. Պոլսի իր դեսպանությանը. «Իմ բանակցությունները գլխավոր հրամանատարի հետ հայերի տեղահանության վերաբերյալ դրական արդյունքի չհանգեցրին: Հայ ազգաբնակչությունը դաշտային բոլոր շրջաններից, հավանական է և Էրզրումից, պետք է արտաքսվի Դեր Զորի կողմերը: **Մեծ մասշտաբի այս տեղահանությունը հավասարազոր է զանգվածային սպանության,** քանի որ փոխադրական լրիվ միջոցների բացակայության պատճառով տեղահանվածների հազիվ կեսը ողջ կհասնի նշանակված վայրերը և, հավանական է, այս տեղահանությունը իր հետ կբերի ո՛չ միայն հայերի, այլև ամբողջ երկրի քայքայում: Ռազմական բնույթի հիմքեր չեն կարող բերվել այդ գործողությունների համար, քանի որ տեղի հայերի ապստամբության հնարավորությունը բացառվում է, որովհետև տեղահանվողները ծերունիներ, կանայք ու երեխաներ են...»[123] (ընդգծումն իմն է— Ռ.Ս.):

15 օր հետո, 1915-ի հունիսի 17-ին, Կ. Պոլսում գերմանական դեսպան Հանս Վանգենհայմը, որը, ի միջի այլոց, հայտնի էր իր թուրքասիրությամբ, կանցներ Բետման-Հոլվեգին ուղարկած իր զեկուցագրում մատնանշում էր. «Միանգամայն ակներև է, որ հայերի տեղահանությունը ոչ միայն ռազմական միջոցառումների հետևանք է: Ներքին գործերի մինիստր Թալեաթ բեյը վերջերս անկեղծորեն հայտարարեց կայսերական դեսպանությունում ներկայումս հավատարմագրված դոկտոր Մորդտմանին, որ «Բարձր Դուռը ցանկանում է համաշխարհային պատերազմն օգտագործել վերջնականապես հաշվեհարդար տեսնելու համար ներքին թշնամիների (տեղական քրիստոնյաների) հետ՝ ընդամին

չնեղվելով արտասահմանից եկող դիվանագիտական միջամտությունից»[124]:

Ավելի ուշ, 1915-ի հուլիսի 7-ին, այդ նույն Վանգենհայմը կանցլերին տեղեկացնում էր տեղահանության իսկական նպատակների մասին.

«Դեռ 14 օր սրանից առաջ հայ ազգաբնակչության արտաքսումը սահմանափակվում էր մոտավորապես այն գավառներով, որոնք մոտ են գտնվում ռազմական գործողությունների արևելյան թատերաբեմին, ինչպես նաև Ադանայի նահանգի առանձին շրջաններին: Դրանից հետո Բարձր Դուռը որոշում ընդունեց այդ գործողությունները տարածել Տրապիզոնի, Մամուրեթ-ուլ-Ազիզի (Խարբերդ— Ռ. Ս.) և Սըվասի նահանգների վրա, և արդեն ձեռնամուխ է եղել վերը ասվածի իրականացմանը, թեև երկրի այդ մասերը չեն գտնվում թշնամական որևէ ներխուժման սպառնալիքի տակ:

Այդ գործողությունները և այն եղանակը, որով իրականացվում է տեղահանությունը, վկայում են, որ կառավարությունը իսկապես նպատակ ունի ոչնչացնել հայ ազգը թուրքական պետության մեջ»[125] (ընդգծումն իմն է— Ռ. Ս.):

Վերը հիշատակված Շոյբներ-Ռիխտերը իր նախկին զեկուցագրերը լրացնում էր թուրք պաշտոնական անձանց և նրանց կողմնակիցների անկեղծ խոստովանություններով. «Տեղական վալի Թահսին բեյի կողմնակիցները անկեղծորեն խոստովանում են, որ իրենց գործունեության վերջնական նպատակն է լրիվ ոչնչացնել Թուրքիայի հայերին: Պատերազմից հետո «մեզ մոտ՝ Թուրքիայում հայեր այլևս չեն լինի»— բառացիորեն այսպիսին է հեղինակավոր մի անձի արտահայտությունը: Քանի որ այդ նպատակին հնարավոր չէ հասնել տարբեր բնույթի ջարդերի օգնությամբ,— շարունակում .ր հյուպատոսը,— այստեղ հույս են դնում, որ մինչև Միջագետք տևող երկար ճանապարհի ընթացքում կրած զրկանքները և անսովոր կլիման կամբողջացնեն գործը: Հայկական հարցի այս «լուծումը» թվում է իդեալական՝ ծայրահեղ ուղղության բոլոր կողմնակիցներին, որոնց թվին են պատկանում գրեթե բոլոր զինվորական և կառավարական պաշտոնյաները: Ինքը՝ թուրք ժողովուրդը ոչ մի չափով համաձայն չէ հայկական հարցի նման լուծման հետ և

արդեն հիմա ծանրորեն զգում է տնտեսական այն կարիքը, որը ծագել է երկրի այս մասում՝ հայերի արտաքսման հետևանքով»[126]:

Այն ժամանակ դեռ չեզոք տերության՝ Ամերիկայի Միացյալ Նահանգների դեսպան Հենրի Մորգենթաուն պետական քարտուղարին ուղղված իր հեռագրում տեղեկացնում էր 1915-ի ապրիլի 30-ին, որ «չեն դադարում ստացվել զեկուցագրեր կայսրության մի քանի շրջաններում հայերի հետապնդումների, թալանի և ջարդերի վերաբերյալ: Հայ պատրիարքը, Իտալիայի դեսպանը, Բուլղարիայի դեսպանորդը և ես եռանդուն կերպով միջամտեցինք... Ակներև է,— եզրակացնում էր նա,— որ այս միջոցառումները ոչ թուրք տարրերի ու կազմակերպությունների դեմ ուղղված կամպանիայի մի մասն են կազմում, նրանց դեմ, ովքեր չեն պատկանում «Միության և առաջադիմության»[127]:

Այնուհետև ասվում էր, որ նույն օրը Հալեպի ամերիկյան հյուպատոսից ստացված զեկուցագրից հայտնի էր դարձել, որ «թուրքական իշխանությունները անհավատալի դաժանությամբ են վարվում Զեյթունի ու Մարաշի հայ ազգաբնակչության հետ. հենվելով առանձին դասալիքների գործողությունների վրա, նրանք տեղահանում և ցրում են ամեն բնակչության մեծ մասին»[128]:

Մի այլ հեռագրում (1915-ի մայիսի 25-ին) ամերիկյան դեսպանը գրում էր.

«Պատիվ ունեմ տեղեկացնելու Ձեզ այն քաղաքականության մի քանի ասպեկտների մասին, որին հետևում է ներկա կառավարությունը հայ համայնքի նկատմամբ: Նրա հետ վարվելակերպը, որն արդեն իսկ նկատվում էր իր կոպիտ շեղումներով թուրքական հեղափոխության ժամանակներից, պատերազմի հետևանքով ընդունել է բացահայտորեն անբարենպաստ ընթացք: Եվ դա ճիշտ է, որ ներկա օսմանյան կառավարությունը հայերին այլևս չի համարում իր օրինական հպատակներ»[129]: Այնուհետև նա տեղեկացնում էր, որ «կառավարությունը անփոփոխ կերպով ժխտում է փաստերը կամ դրանք ամբողջությամբ աղավաղում»[130]: Վերջում դեսպանը երկյուղ էր հայտնում, որ ստեղծված իրադրու-

թյունը «հեշտությամբ կարող է հանգեցնել ամենածանր և ամենատխուր հետևանքների»[131]։

Եվ իսկապես, շուտով՝ 1915-ի հուլիսի 10-ին Հենրի Մորգենթաուն հենվելով ամերիկյան հյուպատոսների զեկուցագրերի վրա, պետական դեպարտամենտ է ուղարկում հետևյալ բովանդակությամբ խիստ գաղտնի հեռագիրը.

«Հայերի հետապնդումը կրում է անհամատեղելի մասշտաբներ։ Ամենատարբեր շրջաններից ստացվող զեկուցագրերը վկայում են սիստեմատիկ փորձերի մասին, որոնց նպատակն է խաղաղ հայ ազգաբնակչությունը արմատախիլ անել կամայական ձերբակալությունների, սարսափելի խոշտանգումների, զանգվածային տեղահանությունների, կայսրության մի տեղից մեկ ուրիշը բռնի տեղափոխման ճանապարհով, որոնք ուղեկցվում են բռնությամբ, թալանով ու սպանություններով և որոնք ընդունում են ջարդի մասշտաբներ, հանգեցնում են հայերի ոչնչացմանը։ Այդ միջոցառումները,— ասվում էր այնուհետև,— չեն ելնում ժողովրդական կամ որևէ մոլեռանդ պահանջից, դրանք զուտ կամայական բնույթի են և ղեկավարվում են Կոստանդնուպոլսից, իբրև թե ելնելով ռազմական հանգամանքներից, բայց հաճախ ընդգրկելով այնպիսի շրջաններ, որտեղ ռազմական ոչ մի գործողություն չի կարող տեղի ունենալ»[132]։

Թուրքական կառավարողների հետապնդած վերջնական նպատակների, հայ ժողովրդի վերացման գոյություն ունեցող պլանի մասին հաղորդում էին իրենց զեկուցագրերում Օսմանյան կայսրության տարբեր շրջաններում գտնվող ԱՄՆ-ի հյուպատոսական ներկայացուցիչները։ Այսպես, Հալեպում ամերիկյան հյուպատոս Ջ. Ջեքսոնը, զեկուցելով Սիրիա հասած տեղահանված հայերի շարասյուների աղետալի վիճակի մասին, եզրակացնում էր. «Անկասկած է, որ խոսքը գնում է մանրակրկիտ կերպով մշակված պլանի մասին, որը նպատակ ունի հայ ցեղի լրիվ բնաջնջումը»[133]։

Պետք է ավելացնել, որ հայկական տեղահանությունների հարցին Հենրի Մորգենթաուն առավել հանգամանորեն անդրադարձել է 1918-ին լույս տեսած իր հուշերում, որտեղ նա մասնավորապես նշում էր.

«Եթե նույնիսկ նա (թուրքական կառավարությունը— Ռ.Ս.) ձեռնարկած լիներ նման մի տեղահանություն բարի նկատառումներով, ապա դա էլ կլիներ դաժանության ու անարդարության գագաթնակետ, բայց հարցը նրանում է, որ թուրքերը երբեք էլ չէին մտածում այն մասին, որ հայերին թույլ տան իրենց համար նոր կյանք ստեղծելու այդ նոր երկրում: Նրանք գիտեին, որ հայերի ճնշող մեծամասնությունը ոչ մի դեպքում չի հասնի նշանակված կետին, իսկ նրանք՝ ովքեր կհասնեն, կամ կմեռնեն ծարավից ու քաղցից, կամ կսպանվեն անապատը բնակեցնող մահմեդական վայրենի ցեղերի կողմից: Տեղահանության իսկական նպատակն էր թալանն ու ոչնչացումը. դա իսկապես ջարդի նոր մեթոդ է հանդիսանում: Երբ թուրքական իշխանությունները հրաման էին արձակում այդ տեղահանությունների մասին, նրանք դա հիանալի կերպով հասկանում էին և ինձ հետ ունեցած խոսակցության ժամանակ առանձնապես փորձ չէին անում թաքցնել այդ փաստը»[134]:

Ամերիկյան դեսպանը եզրակացնում էր. «Թուրքական կառավարության հավաստիացումներն այն մասին, որ իբր ինքը լրջորեն նպատակադրվել էր «հայերին տեղափոխել իրենց նոր վայրերը», անհեթեթություն են: Ուղեկցող պահակներով շարասյուների նկատմամբ վերաբերմունքը հստակ կերպով ցույց է տալիս, որ Էնվերի ու Թալեաթի իսկական նպատակն էր ոչնչացնել հայերին: Ինչքա՞ն մարդ հարավ տեղահանվածներից հասավ իր վերջնակետին՝ նման զարհուրելի պայմաններում: Մի քարավանի օրինակը ցույց է տալիս, թե որքան մտածված ձևով տեղահանության այդ պլանը վերածվեց ոչնչացման պլանի: Հաղորդումներ այն մարդամասների մասին, որոնց մասին գնում է խոսքը, իմ կողմից ստացվել էին անմիջականորեն Հալեպում ամերիկյան հյուպատոսից և այդ փաստաթղթերը ներկայումս գտնվում են Վաշինգտոնի պետական դեպարտամենտում»[135]:

Հայերի տեղահանության հարցը շոշափել է նաև դոկտոր Լեպսիուսը 1921-ի հունիսի 2—3-ին Բեռլինում կայացած դատավարության ժամանակ, որը քննում էր հայ ժողովրդական վրիժառու Սողոմոն Թեհլերյանի կողմից արյունար-

բու դահիճ Թալեաթի սպանության հարցը: Հանդես գալով դատարանում իր վկայություններով, դոկտոր Լեպսիուսը մասնավորապես հայտարարեց հետևյալը. «Համընդհանուր տեղահանության մասին որոշումը կայացրեց երիտթուրքական կոմիտեն, այդ մասին հրամանը արձակել էր ներքին գործերի մինիստր Թալեաթ փաշան (ռազմական մինիստր Էնվեր փաշայի հետ համատեղ): Հայերի տեղահանությունը իրականացվեց երիտթուրքերի հատուկ կազմակերպության օգնությամբ...

Ի՞նչ էր նշանակում այդ տեղահանությունը:

Թալեաթ փաշայի կողմից ստորագրված հրամանում կան հետևյալ խոսքերը. «Տեղահանությունը դա ոչնչացում է»:

Ամեն ինչ տեղի էր ունենում այդ հրամանի համաձայն...

Պաշտոնապես հայտարարվում էր, որ այդ տեղահանությունները սոսկ նախազգուշական միջոցներ են, սակայն առանձին հեղինակավոր անձինք միանգամայն բացեիբաց խոստովանում էին, որ տեղահանության նպատակը հայ ազգի ոչնչացումն է...»[136]:

Եվ այսպես, վերը մեջբերված հավաստի, ոչ մի լուրջ պատմաբանի կողմից չհերքված փաստաթղթերը մերկացնում են հայկական ցեղասպանության պատմության կեղծարարների փաստազուրկ պնդումները և անառարկելիորեն վկայում, որ հայերի զանգվածային տեղահանությունը ամբողջ մի ժողովրդի ոչնչացման քողարկված եղանակն էր:

Կարող է հարց ծագել. ի՞նչ նկատառումներով և ի՞նչ հույսով են ժամանակակից թուրք պատմաբանները լության մատնում պատմության փաստերը կամ փորձում վիճարկել դրանց հավաստիությունը: Հավանաբար նրանք իրենց հույսը դնում են ընթերցողի անտեղյակության վրա, այն սերնդի, որը լսել է հիտլերականների կողմից երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին հրեաների, լեհերի, սլավոնական և այլ ժողովուրդների դեմ կիրառված ցեղասպանության մասին, բայց որը ոչինչ չգիտի այն մասին, թե ի՞նչ է տեղի ունեցել Թուրքիայում առաջին համաշխարհային պատերազմի տարիներին: Նաև, որ այդ պատմաբանները հույսեր են կապում փաստերի կեղծման, միտումնավոր ընտրության և դրանք ներկայանալի ձևով մա-

տուցման հետ: Այդ տեսակետից հարկ է նշել Ս. Ռ. Սոնիեի՝ պատմաբանին անհարիր գործունեության մասին, ինչպես Անգլիայում, ուր նա դասավանդում է, նույնպես էլ Թուրքիայում: Ջանալով իր հակահայկական գործունեությանը գիտական տեսք տալու, նա դեռ 1972 թ. «Թուրքական պատմական ընկերության» կողմից հրատարակվող «Բելլեթեն» ամսագրում թուրքերեն և անգլերեն հրատարակեց Ֆորին օֆիսի արխիվում պահվող Թալեա,ֆ փաշայի գաղտնի հեռագրերը, հայտնի դահճին ներկայացնելով, որպես հայ ժողովրդի բարեկամ[137]: Զբավարարվելով պատմական պարբերականի նեղ շրջանակներով, նա որոշեց այդ «գոհարները» միջազգային ընթերցողին ներկայացնել երեք լեզվով՝ իր փարիսեցիական առաջաբանով հանդերձ: Սակայն հիշյալ գրքում բերված գաղտնի հեռագրերն իսկ, ուշադիր ընթերցանության դեպքում, մերկացնում են այդ հրապարակման հեղինակին: Բերենք, նախ, Ս. Սոնիեի առաջաբանն ամբողջությամբ.

«Մեր հայ հայրենակիցները, որոնք դարերի ընթացքում իրենց համար օրինապաշտ քաղաքացիների անուն են վաստակել այն ժամանակ, երբ մենք ապրում էինք միասին Օսմանյան կայսրությունում՝ լավ հարաբերությունների մեջ գտնվելով, և նրանք, ովքեր առավել բարձր պաշտոններ էին գրավում, առարկա դարձան անարդարացի ու դաժան այն պրոպագանդի, որը մղվում էր որոշ մոլեռանդ շրջանների կողմից, որոնց բռնությունը բազմապատկվեց այս վերջին տարիներին:

Մենք ուզում ենք խոսել գենոցիդի մեջ մեղադրելու մասին:

Երկրում, ուր պատերազմը կենաց ու մահվան հարց էր, մեր հայ հայրենակիցներից **ոմանք** դրսից հրահրվելու հետևանքով և այդ մոլեռանդ շրջանների պրովոկացիաների պատճառով, որոշեցին շարունակել խռովարար գործունեությունը պատերազմի ողջ ընթացքում:

Այդ իրադրության դեմ հանդիման օսմանյան պետությունը երկրի թիկունքում, տարբեր ճակատներում մարտնչող իր բանակների անվտանգությունը ապահովելու համար որոշեց, ուրիշ երկրների օրինակին հետևելով, որոնք նման

միջոցներ էին ընդունել պատմության տարբեր դարաշրջաններում, ժամանակավորապես մեր որոշ հայ հայրենակիցներին ուղարկել երկրի այլ մասերում, և դա անելով մա (կառավարությունը— Ռ.Ս.) չհապաղեց անհրաժեշտ մարդասիրական միջոցառումներ ձեռնարկելու։ Ի դիմաց պատմական այս իրականության, նրանք ովքեր այդ իրադարձությունը ցանկանում են ներկայացնել որպես գենոցիդ, զուրկ են ողջամտությունից և սոսկ նպատակ են հետապնդում խանգարել համընդհանուր խաղաղությունը, փորձելով մասնավորապես Մերձավոր և Միջին Արևելքում ստեղծել խառնակչության օջախ։

Ինչ վերաբերվում է մեզ, մենք ցանկանում ենք պատասխանել այդ ինտրիգներին և ղեկավարվող պրոպագանդին՝ միայն փաստաթղթերի հրապարակումով, թողնելով, այսպիսով, ընթերցողին հարցի էությունն անձամբ պարզաբանելու հոգսը։

Ահա այդ փաստաթղթերը, որոնց բնագրերը պահպանվում են Անգլիայի արտաքին գործերի մինիստրության պետական արխիվներում № 9158 5523 թղթապանակում, և որոնց տակ դրված է այն ժամանակվա ներքին գործերի մինիստր Թալեաթ բեյի ստորագրությունը, որը մոլեռանդ հայի կողմից արձակված գնդակի զոհ էր դարձել»[138] (ընդգծումներն իմն են— Ռ.Ս.)։

Ինչպես տեսնում ենք, պրոֆեսոր Սոնիելը օրիգինալ չէ այն բանում, ինչ վերաբերում է տեղահանության շարժառիթներին, նա կրկնում է պատմաբանների կողմից վաղուց հերքված թուրքական պաշտոնական վարկածը ռազմական գոտում, ռուս-թուրքական սահմանից ոչ հեռու, հայերի մնալու վտանգավորության մասին, «հայկական խռովությունները կանխելու», տեղահանության «ժամանակավոր» բնույթի մասին և այլն։ Նա հավասարապես օրիգինալ չէ իր այն պնդման մեջ, որ օսմանյան կառավարությունը այլ շրջաններ է տեղափոխել միայն որոշ թվով հայ հայրենակիցների, քանի որ քաջ հայտնի է, որ տեղահանվել է գրեթե ողջ հայ ազգաբնակչությունը։ Սակայն նա օրիգինալ է, երբ փորձում է ցեղասպանության փաստը ժխտել հրապարակելով Թալեաթի այն ձեռագրերը, որոնք իբր վկայում են տեղա-

հանված հայերի մասին նրա «հոգատարությունը»: Այստեղ հետաքրքրական է այն, որ Սոնիելի կողմից երեք լեզվով հրապարակված Թալեաթի հեռագրերն ինքնին մերկացնում են ինչպես դրանց հեղինակին, այնպես էլ այդ հեռագրերի հրապարակման հեղինակին, այսինքն, հենց իրեն պրոֆեսոր Սոնիելին: Բերենք դրանցից մի քանիսը:

«Ձեր վիլայեթի սահմաններում գտնվող հայերին ուղարկեք նրանց համար նախատեսված շրջանները: Կաթոլիկները պետք է դուրս մնան տեղափոխման այդ պրոցեսից»[139],— ցուցում էր տալիս Թալեաթը 1915-ի հուլիսի 23-ի հեռագրում: Այս հեռագրից չի երևում, ո՞ր վիլայեթի մասին է խոսքը, և այդ մասին ոչինչ չի ասում ինքը՝ Սոնիելը, միաժամանակ թաքցնելով ընթերցողից այն փաստը, որ կաթոլիկ հայերը չնչին փոքրամասնություն էին կազմում:

«Արգելվում է տեղափոխել հայ դեպուտատներին և նրանց ընտանիքներին»[140],— հրահանգում էր Թալեաթը 1915-ի օգոստոսի 2-ի իր հեռագրում, այսինքն այն ժամանակ, երբ օսմանյան պառլամենտի բոլոր հայ դեպուտատները, առանց դատ ու դատաստանի, գազանաբար սպանվել էին, այդ թվում ականավոր հայ գրող, փաստաբան ու հասարակական գործիչ Գրիգոր Զոհրապը:

Այդ նույն թվակիր հետևյալ հեռագրում ասվում էր.

«Այն հայերի մեջ, որոնք պետք է փոխեն իրենց բնակության վայրը, բացառություն պետք է արվի զինվորների, սպաների ու զինվորական բժիշկների ընտանիքների համար, որոնք կարող են մնալ իրենց տեղերում»[141], կարգադրում էր Թալեաթը այն ժամանակ, երբ զինաթափ արված զինվորներն ու սպաները (հայկական ծագում ունեցող) արդեն գնդակահարվել էին, իսկ նրանց ընտանիքները՝ աքսորվել:

Մի այլ հեռագիր, դարձյալ 1915-ի օգոստոսի 2-ին ուղարկված.

«Հրաժարվեք բողոքական հայերին աքսորելուց, ովքեր դեռ տեղահանված չեն, և տեղեկացրեք մեզ աքսորվածների թվի վերաբերյալ և նրանց մասին, ովքեր դեռ մնացել են վիլայեթում»[142]:

Այս հեռագիրը ևս ի վիճակի չէ փրկելու թուրք պրոֆի-

սորին նրա անշնորհակալ առաքելության մեջ՝ ապացուցել հակառակն այն բանի, ինչ որ արդեն հայտնի է ամբողջ աշխարհին, այն է, հայերի տեղահանությունը կրում էր համընդհանուր բնույթ և որ այդ տեղահանությունը վերածվեց մեկ միլիոնից ավելի մարդկանց ոչնչացման, իսկ այդ թվի մեջ բողոքական հայերը կազմում էին շատ չնչին փոքրամասնություն: Սակայն գլխավորը դա չէ: Թուրք պրոֆեսորի միտումնավորությունը և պատմական իրականության ենթագիտումը կայանում է այն բանում, որ նա ընթերցողից թաքցնում է Թալեաթի տասնյակ այլ հեռագրեր, որոնցում աներկիմաստ կերպով բացահայտված են ինչպես տեղահանության բուն նպատակը, այնպես էլ ամբողջ մի ազգի ոչնչացման դիտավորությունը: Բերենք այդ հեռագրերից մի քանիսը, որոնք 1920-ին տրամադրվել էին հայ մտավորական Արամ Անտոնյանին աքսորված հայերի Հալեպի կոմիտեի քարտուղար, թուրք պաշտոնյա Նայիմ բեյի կողմից և նույն տարին հրապարակվել Լոնդոնում անգլերեն, իսկ Փարիզում՝ ֆրանսերեն[143]: Այդ հեռագրերից մի քանիսը հրապարակվել էին նաև 1921-ին՝ Բեռլինի դատավարության ժամանակ:

Ահա, Հալեպի նահանգապետին հասցեագրված 1915-ի սեպտեմբերի 9-ի թվակիր հեռագիրը.

«Թուրքական հողի վրա ապրելու ու աշխատելու հայերի բոլոր իրավունքները լրիվ վերացված են և համաձայն դրա կառավարությունն իր վրա է վերցնում ողջ պատասխանատվությունը, կարգադրելով չխնայել նույնիսկ ծծկեր երեխաներին: Այդ հրամանի հետևանքներն հայտնի են մի քանի նահանգներում: Չնայած դրան, մեզ անհասկանալի պատճառներով բացառություններ են արվում «հայտնի մարդկանց» նկատմամբ. փոխանակ այդ մարդկանց ուղարկելու նրանց աքսորի վայրերը, նրանց թողնում են Հալեպում, ինչը կառավարության համար լրացուցիչ դժվարություններ է ստեղծում: Չունկնդրելով նրանց փաստարկներին, քշեք կանանց ու երեխաներին, որտեղ էլ նրանք լինեն, եթե նույնիսկ ի վիճակի չեն շարժվելու, և թույլ մի տաք մարդկանց նրանց հովանավորելու, քանի որ իրենց տգիտության պատճառով նրանք նյութական օգուտը բարձր են

դասում հայրենասիրական զգացմունքներից և չեն կարողանում հասկանալ կառավարության բարձր քաղաքականությունը: Այլ վայրերում կիրառված ոչնչացման անուղղակի ձևերի փոխարեն՝ դաժանություն, շտապողականություն (տեղահանումը իրականացնելիս), ճանապարհի դժվարություններ, թշվառություն, ազատ կերպով կարելի է կիրառել ուղղակի միջոցներ ժամանակ չկորցնելով:

Բանակի բոլոր հրամանատարներին հայտնվել է ռազմական մինիստրության ընդհանուր հրամանը այն մասին, որ նրանք չպետք է միջամտեն տեղահանման գործին:

Այս խնդիրը լուծելու համար նշանակված պաշտոնյաներին ասացեք, որ նրանք պետք է կյանքում իրականացնեն մեր իսկական նպատակը, առանց վախենալու պատասխանատվությունից: Խնդրում եմ ամեն շաբաթ ծածկագիր տեղեկագրեր ուղարկել մեզ ձեր գործունեության արդյունքների մասին»[144]:

Եվս մի հետագիր.

«Վերջերս Կ. Պոլսում ամերիկյան դեսպանի՝ իր կառավարության անունից ձեռնարկված միջամտությունից հետո ակներև դարձավ, որ ամերիկյան հյուպատոսները գաղտնի եղանակով ինֆորմացիա են ձեռք բերել: Չնայած մեր հավաստիացումներին, որ տեղահանությունը կկատարվի անվտանգության և հանգստի պայմաններում, նրանք տակավին համոզված չեն դրանում: Հետևեք այն բանին, որ չլինեն իրենց վրա ուշադրություն հրավիրող դեպքեր, կապված նրանց (հայերի) հետ, որոնք գտնվում են քաղաքներին և այլ կենտրոններին մոտ: Ներկա քաղաքականության տեսանկյունից առավել կարևոր է, որ այդ շրջաններում գտնվող օտարերկրացիները հավատացած լինեն այն բանում, որ աքսորը իսկապես սոսկ մի տեղափոխություն է: Ուստի կարևոր է, որ առժամանակ պահպանվի քաղաքավարի վարվելակերպի տեսքը և որ սովորական միջոցները կիրառվեն համապատասխան տեղերում: Որպես խիստ անհրաժեշտ միջոց, խորհուրդ եմ տալիս ձերբակալել այն անձանց, ովքեր նման տեղեկություններ են հաղորդում և նրանց գործը հանձնել զինվորական իշխանություններին՝ ռազմական ատյանում քննելու համար»[145]:

Հետևյալ հեռագիրը վերաբերում է հայ հոգևորականությանը: 1915-ի դեկտեմբերի 1-ին Թալեաթը կարգադրում էր. «Չնայած այն փաստին, որ առաջին հերթին անհրաժեշտ է ոչնչացնել հայ հոգևորականությանը, մեզ հայտնի է դարձել, որ նրանց ուղարկել են այնպիսի կասկածելի տեղեր, ինչպես Սիրիան և Երուսաղեմը: Այդ որոշումը աններելի բացթողում է: Նման խռովարար անձանց աքսորի տեղը՝ ոչնչացումն է: Ես խորհուրդ եմ տալիս Ձեզ գործել համաձայն դրա»[146]:

1915-ի դեկտեմբերի 29-ի հեռագիրը վկայում էր Թալեաթի զգուշավորությունը. «Մեզ հայտնի է դարձել, որ օտարերկրյա շատ սպաներ տեսել են ճանապարհներին վերոհիշյալ մարդկանց [հայերի] դիակները և լուսանկարել դրանք: Խորհուրդ է տրվում, որ այդ դիակներն անմիջապես ծածկվեն և ոչ թե ցուցադրվեն»[147]:

Բերենք ևս մի հեռագիր, այս անգամ 1916-ի հունվարի 15-ի թվակիր. «Մենք լսել ենք, որ բացված որբանոցներից մի քանիսը ընդունում են նաև հայերի երեխաների: Այդ բանը արվում է մեր իսկական նպատակի անգիտությունից, թե՛ դրան հակառակ, այս կամ այն դեպքում էլ այդպիսի երեխաներին օգնելը և ընդհանրապես նրանց կյանքը երկարացնելու ամեն մի փորձ կառավարության կողմից կդիտվի որպես մի ակտ, ամբողջովին հակառակ նրա մտադրությանը, որովհետև նա այդ երեխաների գոյությունը անցանկալի է համարում: Խորհուրդ եմ տալիս նման երեխաներին որբանոց չընդունել և փորձեր չանել նրանց համար հատուկ որբանոցներ բացելու»[148]:

Բերված փաստաթղթերը (ընդամենը հայտնաբերվել է նման բովանդակությամբ Թալեաթի 30 հեռագիր), թվում է, կասկած չեն թողնում, թե ի՞նչ աստիճանի անբարեխիղճ են Ս. Սոնիելը և թուրք այն հեղինակները, որոնք թաքցնում կամ վիճարկում են ինչպես Թալեաթի ծածկագիր հեռագրերը, այնպես էլ գերմանական, ամերիկյան, ավստրիական և այլ դիվանագիտական փաստաթղթերը հայկական ցեղասպանության վերաբերյալ: Թուրք պատմաբանները լռության են մատնում կամ անգլիացիների «մատն» են տեսնում նաև 1919-ին Կ. Պոլսում կազմակերպված երիտթուրքերի

աղմկալի դատավարության մեջ: Ինչպես հայտնի է, 1919-ի ապրիլից մինչև հուլիսը թուրքական դատարանը քննության առավ երիտթուրքական նախկին պարագլուխների պատասխանատվության հարցը ինչպես Թուրքիան համաշխարհային պատերազմի մեջ ներգրավվելու, այնպես էլ հայկական ջարդեր կազմակերպելու համար: Ռազմական ատյանը նշանակված էր սուլթանի կողմից, նրա նախագահն էր գեներալ Մուստաֆա Նազըմ փաշան, իսկ անդամները՝ թուրք չորս բարձրաստիճան զինվորականներ: 1919-ի հուլիսի 5-ի դատավճռով փախուստի մեջ գտնվող Թալեաթը, Էնվերը, Ջեմալը, դոկտոր Նազըմը, հետևակ կարգով մահվան էին դատապարտվել, իսկ գեներալ Էսատ փաշայի նախագահությամբ թուրքական զինվորական ատյանը 1920-ի հունվարի 13-ի դատավճռով մահվան էր դատապարտել մի այլ դահճի՝ դոկտոր Բեհաեդդին Շաքիրին՝ իթթիհատական կուսակցության գաղափարախոսին և «հատուկ կազմակերպության» (Teçkilâti Mahsusse) ղեկավարին[149]:

Նշված և դատական այլ պրոցեսների նյութերը տպագրվել են կառավարական «Թաքվիմի վաքայի պաշտոնաթերթում 1919—1920 թթ.: Պատահական չէ, որ թուրք պատմաբանները գիտակցորեն շրջանցում են նաև այդ փաստաթղթերը: Բերենք մի քաղվածք հիշված դատավարության մեղադրական ակտից.

«Դատական փաստաթղթերը վկայում են, որ «Միություն և առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեն միաժամանակ բաղկացած է եղել երկու հատուկ կազմակերպություններից, որոնցից մեկը գործել է հրապարակայնորեն՝ կուսակցության ներքին կանոնադրության և ծրագրի համաձայն, իսկ մյուսը՝ ընդհատակյա և գաղտնի հրահանգներով...

Ներկա հետաքննության գլխավոր հարցն այն է, որ հայերի տեղահանության ընթացքում, տարբեր ժամանակներում և զանազան վայրերում տեղի ունեցած հանցագործությունները և հատկապես յուրաքանչյուր հանցագործության նկատմամբ օրենքի հիման վրա կատարված քննությունները ցույց են տալիս, որ դրանք ոչ թե սահմանափակ կամ տեղական բնույթ են ունեցել, այլ կանխամտածված իրա-

կանացվել են վերոհիշյալ անձերից բաղկացած և միասնական ուժ հանդիսացող «հատուկ կենտրոնի» բանավոր հրահանգներով և գաղտնի հրամաններով»[150]:

Այնուհետև մեղադրական ակտում խոսվում էր Թալեաթի և երիտթուրքական այլ պարագլուխների ուղղակի պատասխանատվության մասին.

«Լիովին ապացուցված է, որ այդ կոտորածները տեղի էին ունենում Թալեաթ, Էնվեր և Ջեմալ բեյերի անմիջական հրամաններով և գիտությամբ (գործ 11): 1331 (1915) հուլիսի 21-ի թվագրությունը կրող Թալեաթ բեյի ծածկագիր հեռագիրը, որն ուղղված է Դիարբեքիրի, Խարբերդի, Ուրֆայի ու Դեր Զորի վալիներին և մութասարիֆներին, հրահանգում է ճանապարհներին մնացած դիակները թաղելու, լքյալ գույքը վառելու և ընդհանրապես դիակները ձորերը, գետերը և լճերը չգցելու մասին»[151]:

Այդ նույն մեղադրական եզրակացությունից բացորոշ կերպով երևում է, թե ինչ խիստ պատիժների կարող էին ենթարկվել հայերին օգնող անձինք.

«Երրորդ բանակի հրամանատար Մահմուդ Քյամիլի ստորագրությունը կրող հեռագրում նշված է, որ հայերից որևէ մեկին հովանավորող մահմեդականը մահապատժի է ենթարկվելու իր բնակավայրում, և տունն էլ հրդեհվելու է: Եթե հովանավորողը պետական պաշտոնյա լինի, ապա գործից վտարվելով՝ դատվելու է զինվորական դատարանով: Իսկ եթե զինվորական լինի, ապա որպես հանցագործ՝ կանգնելու է ռազմական բարձր ատյանի առաջ (գործ 13, փաստաթուղթ № 1): Այս խստությունները ցույց են տալիս, թե ինչո՞ւ տվյալ վայրի մահմեդականները և մանր պաշտոնյաները չէին կարողանում տեղի ունեցող գազանությունների առաջն առնել»[152]:

Բնականաբար, ժամանակակից թուրք պատմաբաններին և երիտթուրքերի ջատագովներին բոլորովին ձեռնտու չէ մեջբերել կամ սուկ հիշատակել իթթիհատականների Կ. Պոլսի դատավարության հետ կապված փաստաթղթերը:

Իր չափերով նախադեպը չունեցող արևմտահայության ոչնչացումը բողոքի լայն ալիք առաջ բերեց Ֆրանսիայի, Ռուսաստանի, Անգլիայի, ԱՄՆ-ի, Շվեյցարիայի, Դանիայի, Ուրուգվայի և այլ երկրների հասարակայնության մեջ: Երիտթուրքական կառավարող կլիկի հանցագործությունների դատապարտմամբ հանդես եկան պառլամենտի դեպուտատներ, լրագրողներ, գիտնականներ, մշակույթի գործիչներ[153]:

Ռուսաստանում մարդասիրությամբ ու կարեկցանքով լի հոդվածներով հանդես եկան Ս. Մ. Կիրովը, Վալերի Բրյուսովը, պրոֆեսոր Մաքսիմ Կովալևսկին, թուրքագետ Վ. Ա. Գորդլևսկին, Լ. Յա. Օշերովսկին և շատ ուրիշներ[154]:

Ֆրանսիայի առաջադեմ հասարակայնությունը, որը ցասումնալի կերպով դատապարտել էր 1894—96 թթ. աբդուլ-համիդյան ջարդերը, այս անգամ էլ բողոքի իր ձայնը բարձրացրեց: Անատոլ Ֆրանսը հանդես եկավ Փարիզի համալսարանում՝ Սորբոնում, իր հայտնի ճառով[155]: Աշխարհահռչակ արևելագետ Ժակ դը Մորգանը գրեց «Արևելքի բարբարոսների դեմ» գիրքը[156], ճանաչված պատմաբան ու հրապարակախոս Ռընե Պինոնը իր գիրքը վերնագրեց «Հայերի բնաջնջումը. մեթոդը գերմանական, գործը՝ թուրքական»[157]:

Բողոքեց նաև Անգլիայի, Շվեյցարիայի, այն ժամանակ չեզոք Ամերիկայի Միացյալ Նահանգների հասարակայնությունը: Բավական է նշել, որ միայն 1915—17 թթ. ամերիկյան «Նյու Յորք Թայմս», «Քարենթ Հիսթըրի», «Աթլանթիկ մանֆլի», «Ինդիփենդենթ», «Դը Նյու Րիփաբլիք», «Դը Լիթըրըրի Դայջեսթ», «Դը Նեյշըն» և այլ թերթերում ու ամսագրերում տպագրվել է մի քանի հարյուր հոդված, տեղեկություն, թղթակցություն հայ ժողովրդի ողբերգության մասին: Այդ նյութերի վերնագրերն իսկ խոսում են դրանց բովանդակության մասին. «Թուրքերը գնդակահարում են կանանց ու երեխաներին», «Ջարդերը Հայաստանում», «Հայերի ողբերգությունը ուժգնանում է», «Հայերը քշվել են անապատներ՝ մահվան», «Հայաստանի կործանումը», «Ջանգ-

վածային սպանությունները Հայաստանում», «Հայերի ողբերգական վախճանը», «Հայկական ճամբարների սարսափները», «Պե՞տք է արդյոք մահանա Հայաստանը», «Մի ազգի գողգոթան» և այլն[158]:

Համաշխարհային հասարակայնությունը, դատապարտելով հայերի զանգվածային սպանությունները, հանդես էր գալիս երիտթուրքական եղյակին և իթթիհատական մյուս ղեկավարներին, որպես այդ հանցագործությունների գլխավոր մեղավորների, պատասխանատվության ենթարկելու պահանջով:

«Հենց ինքը երիտթուրքական կառավարությունն է կանխամտածված և սառնասրտորեն դեկրետավորել հայ ժողովրդի ոչնչացումը, գրում էր Ա. Մանդելշտամը: Թուրքական կառավարությունը անխնա խստությամբ արգելում էր և մերժում երկրում գտնվող եվրոպացիների որևիցե գթասիրտ միջամտություն, նաև ամերիկյան կառավարության, որին նա նույնիսկ թույլ չտվեց հայերին տեղափոխելու Ամերիկա: Առավել դաժան, քան Աբդուլ Համիդը, նա մահապատժի էր ենթարկում սակավաթիվ այն թուրքերին, որոնք հանդգնում էին օգնել հայերին»[159]:

Կ. Պոլսում գերմանական զինվորական միսիայի անդամ փոխգնդապետ Շտանգեն գրում էր իր զեկույցում 1915-ի օգոստոսի 23-ին.

«... Կատարվածից հետո կարելի է վստահությամբ խոստովանել հետևյալը.

Հայերին աքսորելու և ոչնչացնելու մասին որոշումն ընդունվել է Կ. Պոլսում երիտթուրքական կոմիտեի կողմից: Հավանաբար, նրա կողմից էլ հենց կազմակերպվել ու իրականացվել է դա՝ ռազմական իշխանությունների ու զանազան հրոսակների օգնությամբ: Այդ նպատակով, բացի տեղական վարչությունից և ոստիկանության պետ Հուլուսի բեյից, ինչպես նաև գլխավոր հրամանատար Մահմուդ Քյամիլ փաշայից, տեղերում գտնվում էին կոմիտեի անդամներ Հիլմի բեյը, Էրզրումի դեպուտատ Շաքիր բեյը, Սեյֆուլա բեյը»[160]:

Անգլիական պատմաբան, լորդերի պալատի անդամ Ջեյմս Բրայսը ևս ամենկիմաստ արտահայտվում էր երիտ-

թուրքական կառավարության մեղսակցության վերաբերյալ. «... Դա քրիստոնյա հայերի դեմ ուղղված մահմեդականների ցասման մի բռնկում չէր: **Ամեն ինչ արվում էր կառավարության կամքի համաձայն** և դա հետևանք էր ո՛չ թե կրոնական մոլեռանդության, այլ քաղաքական նկատառումների. կառավարությունը ցանկանում էր ձերբազատվել ոչ մահմեդական ժողովուրդներից, որոնք խանգարում էին կայսրության միատարրությանը, կազմելով մի տարր, որը ոչ միշտ էր պատրաստ ենթարկվելու կեղեքմանը... Կենտրոնական կառավարությունը ճնշում էր գործադրում և վերահսկում էր ծրագրի իրականացումը, որը ելնում էր միայն իրենից: Երիտթուրքական մինիստրները և նրանց Կ. Պոլսի գործընկերները անմիջականորեն և անձամբ լրիվ պատասխանատվություն են կրում այն վիթխարի հանցագործության համար, որը քայքայեց Մերձավոր Արևելքը 1915-ին»[161] (ընդգծումն իմն է— Ռ. Ս.):

